

ԼԵՎՈՆ ՆՈՐԱԾԻՄԱՐՀՅԱՆ

ԶԵՅԹՈՒՆԸ

1914-1921 թթ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ЛЕВОН НОРАШХАРЯН

Յ Ե Ի Թ Ո Ւ Ն Ը

В 1914-1921 гг.

(ВОСПОМИНАНИЯ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1984

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)
Կ-93

ԼԵՎՈՆ ՆՈՐԱՇԽԱՐՀՅԱՆ

Յ Ե Ի Թ Ո Ւ Ն Ը

1914-1921 թթ.

(ՀՈՒՅԵՐ)

2080

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1984



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտ. դոկտոր Հ. Մ. Պոզոսյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտ. թեկնածուներ է. Ա. Կոստանդյանը և Դ. Ա. Մաւադյանը

Նորաշխարհյան Լ.

Ն 930 Զեյթունը 1914—1921 թթ.: (Հուլիս) |պատ. խմբ.՝ Հ. Մ. Պո-
զոսյան:— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 272 էջ, 2 թերթ նկ.:
Վե՛րնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Պատմ. ին-տ.

Գրքի հեղինակը ականատես է Զեյթունի հերոսական ինքնապաշտպանության և
արհավիրքներով լի պատմության: Մանրամասնորեն նկարագրված են երիտթուրքերի
վարած հայահալած քաղաքականությունը, հայ ժողովրդի տեղահանման և նրա մի մա-
սի ոչնչացման արհավիրքները, զեյթունահայերի ճակատագիրը 1914—1921 թթ.: Գիրքն
արժեքավոր փաստեր է պարունակում նաև Զեյթունի բնակչության սոցիալ-տնտեսական
կյանքի, կենցաղի վերաբերյալ:

Նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

Ն 0505040000
703(02)—84 20—83

ԳՄԴ 63.3(22)

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ընթերցողի ուշադրությանը հանձնվող սույն հուշագրությունն ընդ-
գրկում է Զեյթունում 1914-ից մինչև 1921 թվականները տեղի ունեցած
իրադարձությունները: Հեղինակը ծնվել ու մեծացել է Զեյթունում, աղա-
նատես է եղել դեպքերին ու թղթին է տվել դրանք: Հուշագրությունը
սրտի տրոփյունով շարադրված պատմական եղելություններ են, Զեյ-
թուն գավառակի ու քաղաքի մասին աշխարհագրական ու վիճակագրա-
կան տեղեկություններ, բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի հա-
րադատ նկարագիր: Նրա մեջ իր ամբողջ հասակով վեր է խոյանում
խրոխտ զեյթունցին իր առնական, հպարտ, սակայն բարի ու վեհ նայ-
վածքով, ինքնապաշտպանական կռիվների ժամանակ ցուցաբերած
արիության օրինակներով:

Լևոն Նորաշխարհյանը (Ենի Դունյայան) ծնվել է 1894 թ. Զեյթու-
նում, վախճանվել 1968 թ. Բեյրութում: Նա Զեյթունի շորս իշխանական
սոցմեներից մեկի շառավիղներից է և որդին ազատագրական շարժման
առաջնորդներից Նազարեթ Չավուշի (Նազարեթ Նորաշխարհյան): 1912 թ.
ավարտելով ծննդավայրի բարձրագույն վարժարանը, ուսուցչական
պաշտոնի է կոչվում նույն կրթարանում: 1915 թ. տեղահանվելով՝ նա
իր հայրենակիցների հետ քշվում է դեպի սիրիական անապատները, ուր
և ճաշակում է Եղեռնի բոլոր սարսափներն ու դառնությունները: 1919 թ.
վերապրող մոտ հազար հայրենակիցների հետ վերադառնում է ծննդա-
վայրը և լծվում վերաշինական աշխատանքների: 1919—1921 թթ.
նա վարչական անդամ է Զեյթունի «Ազգային միություն», որը տնօրի-
նում էր վերապրողների կյանքը: 1921 թ. շտակալով թուրքական ուժերի
տեղական ճնշումներին և սպառնալիքներին, զեյթունցիք որոշեցին դա-
տարկել Զեյթունը և նահանջել ֆրանսիական գոտի: Լևոն Նորաշխարհ-
յանը եղել է նահանջի ղեկավարներից մեկը: 1921-ից նա հաստատվում
է Հալեպում, 1923—37 թթ.՝ Մուսա լեռում, ուր զբաղվում է ուսուցչու-
թյամբ: 1928 թ. նա Մուսա լեռան շրջանում հիմնում է Նոր-Զեյթուն

ավանը և ձեռնահասորեն ղեկավարում այն: 1937—48 թթ. ապրում է Հալեպում, իսկ 1948 թ. մինչև իր մահը՝ 1968 թ. Բեյրութում: 1962 թ. նա հրավիրվել է Սովետական Հայաստան իբրև սփյուռքահայ գեյթուն-ցիներին ներկայացուցիչներից մեկը և մասնակցել ՀՍՍՀ ԳԱ կողմից կազմակերպված Զեյթունի 1862 թ. ապստամբության հարյուրամյակին նվիրված միջոցառումներին:

Հրատարակվող գիրքը բաղկացած է 2 մասից, առաջինում գունագեղ նկարազրույթուններ կան հայրենի Զեյթունի և նրա գյուղերի մասին: Նա հարազատորեն ներկայացրել է պատերազմը սկսվելուց հետո Զեյթունի բնակիչների նկատմամբ երիտթուրքական իշխանությունների կազմակերպած խորամանկ գործողությունները և նրանց բռնի տեղահանությունը: Լինելով անհայտություն գնացող քարավաններից մեկում, հեղինակը նկարագրում է այն սոսկալի վիճակը, որի մեջ էին գտնվում աքսորական հայերը և, մասնավորապես, գեյթունցիները:

Այս բաժնում հեղինակը մեզ ծանոթացնում է նաև Զեյթունի փոքրաթիվ մարդկանց մաքառումներին, որոնք, չենթարկվելով թուրքական իշխանությունների կամքին, թողեցին տուն ու տեղ, իրենց ընտանիքն ու զավակներին և զենքը ձեռքին բարձրացան Տավրոսյան անմատչելի լեռները, օրհասական պայքար մղելով թուրքական շարզարարների դեմ: Այդ խմբերից գլխավորը Եղիա Նորաշխարհյանի խումբն էր, որի մարտիկները տարիներ շարունակ արիաբար կռվեցին հայրենի լեռներում: Խմբի մղած մաքառումների պատմությունը հեղինակը գրի է առել հատուկ կենդանի մնացածներից և կռիվներին ակնատես թուրք Իբրահիմից ու Ահմեդից: Իր հայրենի ծննդավայրի նկատմամբ անհուն սիրով լցված, հեղինակը գրի է առել նրա լեռներում կռվի ելած մի քանի տասնյակ լեռնականների մղած կռիվների և նրանց նահատակվելու պատմությունը: Գրքի այդ մասում իրար են հաջորդում թուրքական ուժերի դեմ մաքառող վրիժառուների պայքարի դրվագները: Հեղինակը հիացմունքով է արձանագրել այդ փոքրաթիվ մարդկանց կռիվները: Չափազանց հուզիչ է անապատներից Զեյթուն վերադարձած Եղիայի հարսի՝ Զմրուխտի, ամուսնուն որոնելու, նրան գտնելու, ապա նորից կորցնելու, ողիսականը: Լեռնցի կինը, միանալով հայրենի լեռներում մարտնչող խմբին, կռվում էր թշնամու դեմ: Պատահաբար գերի ընկնելով, նա չի ցանկանում ենթարկվել բռնակալի քմահաճույթին և ժայռից վայր է նետվում՝ վերջ տալով իր կյանքին:

Մի անսովոր սարսուռ է՝ զգում մարդ, երբ ընթերցում է հուշերի այն բաժինը, որտեղ շարան-շարան իրար են հաջորդում Զեյթունի լեռ-

ներում մաքառող մարտիկների կյանքի դրվագները: Պայքարի ելածներին խորթ է ժողովուրդների նկատմամբ ատելությունը, նրանք ատում են երիտասարդ թուրքերի կառավարությունը և համարյա բոլորն էլ ընկան թշնամու դեմ մղվող անհավասար կռվում:

Հուշագրության երկրորդ մասը վերաբերում է 1919—1921 թթ. ընկած ժամանակաշրջանում Զեյթուն ապստանած վերապրողների կյանքին: Մինչև պատերազմը այդ գավառակում ապրում էին մոտ 30 հազար մարդ, որոնց մեծ մասը զոհ գնաց տեղահանության ժամանակ. նրանցից միայն շատ քչերին, մի փոքր հատվածի հաջողվեց վերադառնալ՝ նպատակ ունենալով վերահենդանացնել հայրենի քաղաքն ու գյուղերը: Սակայն շուտով թուրքական իշխանությունները պահանջեցին նրանցից զենքը վայր դնել և ազատել Զեյթունը: Լեռնականների մի մասը ծերերի, կանանց և երեխաների հետ ստիպված անցան Մարաշ, իսկ մյուս մասը, որոնց թվում նաև հուշերի հեղինակը՝ զենքը ձեռքին երկար ճանապարհ կտրեցին և բազմաթիվ կռիվների ու տառապանքի գնով հասան Ֆրանսիացիների ձեռքում գտնվող Քիլիս քաղաքը: Այսպիսով, Կիլիկիայի հայկական թագավորության կործանումից հետո Տավրոսյան լեռներում դարեր շարունակ ազատ ու կիսանկախ ապրած մի բուռ քաղերի վերջին բեկորները ևս վերջնականապես դուրս շարտվեցին իրենց հայրենի բնակավայրից:

Այս դեպքերից հետո թուրքական իշխանությունները Զեյթունը նախ անվանեցին Ենի Շեհիր, ապա՝ 1915 թ. Զեյթունի վանքի կռիվների ժամանակ զոհված թուրքական սպա Սուլեյմանի անունով՝ Սուլեյմանլը: Լեռնաքաղաքը այժմ ավերակների մի կույտ է, որտեղ բնակիչներ չկան: Հերոսական Զեյթունի դարավոր ազատագրական և ինքնապաշտպանական կռիվները վերջացան նրա ամայացմամբ:

Լ. Նորաշխարհյանի գրքի ձեռագիրը ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտին է ներկայացրել նրա որդին՝ հայրենադարձ գրող Հ. Նորունին: Հուշագրության մեջ բերված փաստերը և դեպքերը իրական են, հավաստի: Ամենայն հավանականությամբ հուշերի հեղինակը օրագիր է պահել, որի հիման վրա էլ շարադրել է իր այս հուշագրություն-պատմությունը: Հրատարակվող գիրքը կարևոր է Զեյթունի 1914—1921 թթ. պատմության ուսումնասիրության համար: Այն խմբագրելիս, նպատակահարմարությունից ելնելով, որոշ կրճատումներ ենք կատարել, աշխատելով հարազատ մնալ ձեռագրին և պահպանել հեղինակի ոճը:

ԱՌՍՁԻՆ ՄՍՍ

1914—1919 ԹՎԱԿԱՆՆԵՐ

1914 թ. հուլիսի 21-ին ընդհանուր զորաշարժ կհռչակվին Թուրքիո մեջ: Ամեն կողմ իրարանցում, եռուզեռ, երեակայական և անհեթեթ տարածայնություններ: Ըստ պետական հրահանգի ամեն ոք ստիպված էր «Զինվորական մարմնո» ներկայանալ և արձանագրվիլ: Կառավարությունը հարմար նկատած էր արձանագրության կայան նշանակել Զեյթունը, որով Ալպիսթանի, Կոկիսոնի, Անտրունի և այլ շրջակա վայրերու զինվորական տարիք ունեցող այրերը սկսան Զեյթուն գալ: Ամենուրեք բազմություն ու խճողում: Զեյթունը պանդոկ, իջևան կամ հասարակաց որևէ հաստատություն չունենր՝ օտարներ պատսպարելու համար. այնպես որ յուրաքանչյուր տան մեջ առնվազն 20—30 հոգի կհյուրընկալվիր: Ասով հանդերձ, դարձյալ շատեր ծառերու ու ժայռերու տակ, փողոցներու անկյունը, հոս հոն նոթի ու թշվառ, օրերով հերթի կսպասեին: Զեյթունի «Տիկնանց միությունը» նկատի ունենալով այս պարագան, հանուն մարդասիրության, հանգանակիչ հանձնախումբեր կազմակերպեց էր և թաղեթաղ, տունետուն պտտելով կզոյացներ գումար մը, քաղաքին չորս կողմը կամուրջներու վրա շարժական խոհանոցներ հաստատելու համար: Տիկիններ և օրիորդներ հաց կթխեին և կերակուր կպատրաստեին: 20—25 օր ամբողջ շարունակվեցավ այս մարդասիրական արարքը:

Այդ օրերուն Կարս-Պազարի հյուսիս-արևելակողմը, Կապան բերդին մոտ նշանավոր հանդիսացած Թեք Պըլըզ անունով թուրք ավազակապետը երկու հաճընցիներ կխոշտանգե: Զեյթունի երիտասարդությունը, երբ կլսե այս վայրագությունը, կորոշե վրեժ լուծել: Անմիջապես չորս հոգի բաղկացած խումբ մը, Սողոմոն Թրվանտյան երիտասարդին ղեկավարությամբ, Ռուբեն Քենտիպյանի ուղեկցությամբ կփութան դեպքին վայրը, ուր կպաշարեն ավազակապետին բնակարանը, սակայն զայն հոն չգտնելով կվերադառնան ձեռնունայն:

Ընդհանուր զորավարժին Անտրունի թուրքերը ևս, կառավարության կողին ընդառաջելով, կփութան Զեյթուն՝ իրենց պարտականությունը կատարելու: Զեյթունի երիտասարդությունը կկասկածի, թե Անտրունեն եկած խումբին մեջ կրնա թագնված ըլլալ նաև Թեք Պըլըզ ուճրագործը: Խաչեր Թյոպեյան հինգ հոգիով կպաշարե անտրունցի երիտասարդները և կստիպե, որ անոնք իրենց ընկերակցող Թեք Պըլըզը հանձնեն: Երբ կհամառին, Խաչեր կստիպվի սպառնալիքներու դիմել՝ նույնիսկ անոնցմե մի քանիին «նվիրական մորուքները» ածիլել կուտա: Անտրունցիք Մարաշի կառավարության կբողոքեն:

Մարաշի թուրք երևելիները իրենց երիտասարդությունը զինվորագրութենե ազատելու համար ամեն միջոցի կդիմեն: Անոնք անմիջապես հետևյալ բովանդակությամբ հանրագրություն մը կպատրաստեն՝ Բ. Դուան՝ ուղղված. Աղգային սուրբ պատերազմի կողին պատրաստ ենք ընդառաջելու, բայց մեր ընտանեկան սրբությունը պաշտպանելը մեր նվիրական պարտականությունը համարելով, կուզանք օգոստոսի 1-ին կայսեր ուշադրությանը հանձնել մեր հարևան ապստամբ Զեյթունի պարագան. առանց Զեյթունի հպատակեցման՝ մեր կյանքը, պատիվն ու ինչքը վտանգի տակ են:

Անոնք կհիշեն նաև Անտրունի միջադեպը: Իթթիհատ կուսակցության համար լավագույն առիթն էր «Արծվեբույնը» քանդելու: Ան Մարաշի նոր կառավարիչ կնշանակե թունդ ազգայնամուլ, հայատյաց Ալի Հայտար անունով մեկը՝ միմիայն Զեյթունը կործանելու նպատակով:

Ալի Հայտար օգոստոսի սկիզբը Մարաշ գալով ժողովի կկանչե թուրք և հայ երևելիները և կառավարությանն ուղարկված հանրագրության մասին խոսելով, անոնց աջակցությունը կխնդրե: Ալի Հայտարի Զեյթուն երթալը որոշված էր: Մարաշի Աղգային առաջնորդարանը կփութա Զեյթունի Աղգային առաջնորդարանին տեղեկագրել Ալի Հայտար կառավարիչ Զեյթուն այցելությունը, վստահեցնելով անոր բարեսիրական և ազնիվ նպատակներուն մասին, իբրև ծանոթ հայասեր մը և թելադրելով անոնց, որ կարելի հարգանքն ու պատիվը շինայեն:

Զեյթունի թրքական պաշտոնեությունը ևս փոխված էր: Գայմազամին տեղ եկած էր արյունարբու մը՝ Հյուսեյին Հյուսեյու անունով, իսկ ոստիկանապետ ընտրված էր հարյուրապետ Միտհաթը:

1914 թ. օգոստոսի 30-ին Զեյթունի Աղգային առաջնորդարանին մեջ արտակարգ իրարանցում մը, եռուզեռ մը կար: Վառվառներ իրտա-

1 Բարձրագույն դուր օսմանյան կայսրության կառավարության պաշտոնատեղին էր:

սարդներ մեյմեկ ձիու սանձե բռնած անհամբեր հրամանի կապսեին: Զեյթունի երեւելիները կորոշեն բարի գալուստի երթալ նորընտիր կառավարիչին:

Առաջնորդ սրբազան հայրը՝ Հովհաննէս վարդապետ Գարանֆիլյան, Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանէն վկայալ պատկառազգու կղերական մը, վեղարը զխուն, ոսկի խաչը կուրծքին, ձյունաթույր արաբական նժույզը հեծած կզխավորե պատվիրակութիւնը: Իրեն կհետեին քաղաքապետ Նազարեթ Չավուշ Նորաշխարհյանը (Յնի-Գյունյայան), քաղաքական ժողովի ատենապետ Հաճի պապա աղա Սուրենյանը (Բասիլոսյան) և ուրիշներ, ընդամենը՝ 40 ձիավոր: Հեծելախումբը երբ Զերմուկի դաշտը կհասնի, Հովնան Սալաթյանը պատվիրակ կըրկվի՝ Զեյթունի երեւելիներուն գալուստը Հայտար փաշային տեղեկացնելու: Հովնան երբ Ախվախ կհասնի, անակնկալի կհանդիպի. ան մացառուտներու մեջ դարանակալ զինվորներ կնշմարե: Քիչ վերջ կերևի Ալի Հայտարը՝ երկայնահասակ զինվորականը, արաբական նժույզի մը վրա նստած, շրջապատված հազարավոր զինվորներով, թնդանոթներով և ուղմամթերքով, ընկերակցութեամբ մարաշցի երեւելի երկու հայերու՝ Մելքոն աղա Հազարապետյանին և Կարապետ Նալաճյանին: Առաջինը ծանոթ էր իբրև խղճամիտ և բարի վաճառական, իսկ երկրորդը՝ փաստաբան էր և Ազգային ժողովի անդամ:

Ալի Հայտար, թրքական պաշտոնյային հատուկ քմծիծաղով, հարկ եղած ձևակերպութիւնները կատարելե վերջ կսկսի հարցումներ ուղղել առաջնորդ հոր և իրեն ընկերակցողներուն: Մերիները անմիջապես կկասկածին նենգամիտ կառավարիչին թաքուն նպատակներուն վրա: Հետո՝ բանակին ընկերակցող մարաշցի ջորեպանները և բանակին մեջ իբրև զինվոր աշխատող հայերը գաղտնորեն հայտնեցին Զեյթունի ղեկավարներուն՝ փաշային խարդախ դիտավորութիւններու մասին:

Վերոհիշյալ հանդիպումեն ետք Ալի Հայտար Զեյթունի գորանոցը քաշված, իբրև թե հիվանդ՝ ոչ մեկ այցելութիւն կընդունի, իսկ իրեն ընկերակցող երկու հայ պատվիրակները քաղաք կհչուրընկալվին: Այս վերջինները վատաբար կսկսին խլրդային աշխատանք տանիլ, ամեն օր այցելելով գորանոց՝ փաշային: Անոնք կհաջողին որոշ խավ մը համոզել, ստելով թե՛ «կառավարութիւնը ընդհանուր ներում շնորհած է բոլոր դատապարտյալներուն, երիտասարդութիւնը ազատ պիտի մնա զինվորազրութենէ, իսկ եթե պետութիւնը ստիպողականորեն պետք ունենա զինվորի, կիսատանա Զեյթունի երիտասարդութենէն գունդ մը կազմել զԶեյթունցի հրամանատարներով»: Անոնք այդպիսի խոստումներով կձգ-

տեին խաբել ժողովուրդը. պետական զենքերով զինված բանակի մը առասպելը կզինուցնէր շատերը: Զուգահեռաբար Ազգային վերին իշխանութեանց՝ Սիսի կաթողիկոսարանի և Կոստանդնուպոլսո պատրիարքարանի կողմէ տեղացող հեռագիրները ժողովուրդը հնազանդութեան կհրավիրեին, զգուշացնելով թե՛ Զեյթունի կողմէ արված որևէ անխոհեմ քայլ ազգին փշացումին պատճառ կրնար ըլլալ:

Զեյթունի երիտասարդութեան փորձառու և վարժ խմբապետները, նախատեսելով ապագա զուլումն ու ջարդը, կխնդրեն իշխան Նազարեթ Նորաշխարհյանէն, որպէսզի թրքական նենգ խոստումներուն և թաքուն ծրագիրներուն զոհ չերթա ու ձգելով պաշտոնը՝ լծվի ապստամբութիւնը կազմակերպելու գործին: Առաջնորդ սրբազան հայրը, Նազարեթ Չավուշի առաջարկով, ժողովի կհրավիրե Զեյթունի կրօնական և քաղաքական պետերը՝ ներկա հրատապ կացութեան շուրջ խորհրդակցելու համար:

Ազգային առաջնորդարանը Զեյթունի ճիշտ կեղերնը՝ Սուրենյան, Շորլօղլույան և Յաղուպյան թաղերու միացման կետին վրա կգտնվէր. ան Կեղրոնական դպրոցին կից, պետական պալատին դիմաց երկհարկանի, քարաշէն նոր շէնք մըն էր: Առաջնորդ հոր շրջաբերականը շուտով փութացուցած էր հրավիրյալները առաջնորդարան: Քաղաքական ժողովի անդամներն էին՝ Հաճի Պապա աղա Սուրենյան-Բասիլոսյանը, Հայկ Ասմընյանը, Կարապետ Պալճյանը, Նազարեթ և Նշան Նորաշխարհյանները, Կարապետ Մարկանյանը, Խաչիկ Յաղուպյանը (Նազարեթ Կյուլվանեսյանն ու Ասատուր Անդրեասյանը վախճանած ըլլալով տեղերինն բաց կմնար, իսկ Սարգիս Պալճյանին կփոխանորդեր Կարապետ Պալճյանը): Առաջնորդարանի դահլիճը հրավիրյալներով լեցված էր: Բացի լուսավորչական համայնքեն ներկա էին նաև կաթողիկոսներու առաջնորդը՝ Տեր Հովսեփ վարդապետ Ազրապյանը, բողոքական համայնքի պետը՝ Անդրեաս Գուլումճյանը, իրենց ժողովականներով:

Առաջնորդ հոր նախագահութեամբ, քաղաքական ժողովի ատենապետ Հաճի Պապա աղա Սուրենյանը ժողովը բանալով կներկայացնէ կացութիւնը ծանր մտատանջութիւններու մեջ ինկած ժողովականներուն, որոնց զենքերուն վրա որքան ալ խաղաղութիւն արտացոլար, ներսեն՝ փոթորիկ, ամպրոպ կտիրեր. բոլորը իրենց մտածումներուն, խոկումներուն եզրակացութիւնը վստահած էին այս ժողովի որոշումին:

Զեյթունի քաղաքապետը՝ Նազարեթ Չավուշ, նախագահ հոր թուլտրվութեամբ, խոսք կառնէ և մասնավորաբար կըսէ հետևյալը.

Գերաշնորհ հայր և հարգելի հայրենակիցներ, գիտեք թե այսօր թուրքը՝ մեր դարավոր ստիք, մեր դոնները ափ առած է և կուզէ ժա-

մանակի ընթացքին իր ներսիդին կուտակված վրեժը լուծել: Ալի Հայտար 15 օրե իվեր 6—7000 հոգինոց բանակով մը լուռ ու մունջ զորանոցը նստած դիվային ծրագիրներ կմշակե՝ մեզ ծուղակը ձգելու համար: Հայտարը վստահ է, որ եվրոպական միջամտությունը անզոր է ներկայիս, իսկ եվրոպացիներու սնանկացած և երկդիմի քաղաքականությունն պտուղը մենք անցյալին ճաշակած ենք արդեն:

Ազգային վերին իշխանությունները՝ Կաթողիկոսարան, Պատրիարքարան, հաջորդական նամակներով և հեռագիրներով մեզ զգաստություն, հնազանդության կհրավիրեն: Եթե հակառակինք, անոնք մեզ «դավաճան» պիտի որակեն և նախատինք պիտի կարդան մեր պապերուն, որոնք իրենց արյան գնով դարերու ընթացքին կրցեր են իրենց ազգային իրավունքը պաշտպանել և հաղթանակի հասնիլ: Ներկա պայմանները խիստ աննպաստ են մեզի համար, բոլոր ժողովուրդը դուրսն է՝ ամառանոցները, կալերն ու հունձքերը դաշտերուն վրա, շունինք ապրելու որևէ միջոց, սակայն, այնուամենայնիվ, վստահ եմ, թե նախընտրելի է անոնց գազանային կիրքերուն հագուելու տալու փոխարեն պայքարիլ մինչև վերջին վայրկյանը, քանզի թուրքը անխնա պիտի հարվածե մեր ծաղիկ երիտասարդությունը, պիտի կոտրե մեր բարոյական կորովը, պիտի պղծե մեր սրբությունները, և մենք զնդաններու մեջ մեր պապերուն նման պիտի տառապինք ու նախատվինք: Կարծիքս և հավատքս այս ըլլալով հանդերձ կհիշեմ 1895-ի ապստամբությունը, որուն դուք զիս պատասխանատու նկատեցիք: Այժմ, պատվակա՞ն հայրենակիցներս, դո՛ւք տվեք ձեր որոշումը, և ես պատրաստ եմ ենթարկվելու ձեր կամքին ամեն գնով...

Նազարեթ Չավուշի խոսքերեն ծանր դառնություն մը կհոսեր, սակայն ան ինքնավստահ, կշռված բառերով իր մտածումները կուտար, միաժամանակ հայտնելով իր պատրաստակամությունը ենթարկվելու ժողովի որոշումներուն: Ժողովը երկար խորհրդակցելի վերջ միաձայնությունով կորոշե տեղի տալ Ազգային իշխանության հորդորներուն:

Հետևյալ առտու Նազարեթ Չավուշ, քար դրած սրտին և հոգիին վրա, հակառակ իր կամքին, հակառակ հորեղբորորդույն՝ Նդիայի և իր որդույն՝ Հակոբի խնդրանքներուն, ենթարկվելով ժողովի որոշումներուն, Ջեյթունի կարգ մը ըմբոստ երիտասարդները կհանձնե կառավարության՝ վերջինին ստիպումներուն ընդառաջելով: Շաբաթվա մը ընթացքին, բոլորը զինաթափ, գացեր հանձնվեր էին ոստիկանատուն:

Կառավարական պալատը Ջեյթունի կեդրոնը քարաշեն, երեք հարկնոց բավական մեծ շենք մըն էր, իսկ բանտը, երկրորդ հարկին վրա՝

ոստիկանատան կից, հաստ երկաթ ձողերով հատուկ բաժին մըն էր. հանձնվողները ազատ համարձակ կրնային դուրս ելլել և նույնիսկ սեղանակից ըլլալ ոստիկանապետ Սյուլեյմանին: Այս վերջինը հաղթ կազմով, երկայնահասակ ալբանացի մըն էր: Ան հանձնվողներուն հանդեպ կեղծ հարգանք մը կցուցաբերեր:

Նազարեթ Չավուշ խոր մտատանջության ենթարկված էր: Մարաշեն եկող հայ պատվիրակներուն ստոր պրոպագանդը, կառավարության շուռված խոստումները ոստիկան-զինվոր արձանագրելու համար, Ազգային վերին իշխանության հաջորդական հեռագիրները, Առաջնորդարանի ընդհանուր խառն ժողովին տված որոշումը, ազգականներու և բարեկամներու թախանձանքը անել կացության մատնած էին զինքը:

Ջեյթունի որդեգրելիք դիրքը կարևոր էր բովանդակ հայ ժողովուրդի լինելության տեսակետեն ալ, այդ պատճառով կարելի չէր մակերեսային քննությամբ մը որոշում տալ: Անձնատուր ըլլալ թշնամիին, անոր թուրին ու մուրին ենթարկվիլ և հագեցնել թշնամիին կիրքը՝ ամոթալի էր. իսկ ապստամբելը, ամբողջ ազգը թո՛հ ու բո՛հի մատնելը աղետալի պիտի չըլլա՞ր արդյոք: Նման մտածումներով, գիշերն ի բուն, ամառանոցի պատմական քարայրներուն առջև, զուլալ ու կենսատու աղբյուրին քովիկը, կապույտ երկնակամարին տակ ան նստած կտառապեր և կտանջվեր, վերհիշելով 1895-ը, երբ այդ միևնույն աղբյուրին քով, հնչակյան գործիչ Աղասիի հետ գլուխ գլխի, կազմակերպած էր Ջեյթունի մեծ ապստամբությունը: Ազգային ժողովը իր կարծիքը տված էր, սակայն պետք էր գործել և կանխել գալիք դժբախտությունները: Առաջնորդ սրբազան հայրը և իշխաններ Նորաշխարհյան ու Սուրենյան գաղտնորեն կորոշեն վերջին փորձ մըն ալ կատարել, մասնավոր նամակ մը հղելով Տանն Կիլիկիո վեհափառ Սահակ կաթողիկոսին, հայտնելով անոր կառավարության դիվային ծրագիրը, որ կկայանար Ջեյթունը կործանելու մեջ: Տվյալ կացության մեջ անոնք կուզեին իմանալ, թե ի՞նչ պիտի ըլլար վեհափառին անձնական կարծիքը: Անոնք Սուրենյան թաղեն կընտրեն հանդուգն երիտասարդ Ավետիս Ահարոնյանը, որ նման թղթատարական գործերու մեջ հմտություն և փորձառություններ և զայն նամակով մը կղրկեն Սիս: Ավետիս չորս օրեն ապահով կվերադառնա Ջեյթուն, վեհափառ հայրապետին պատասխան նամակովը, որուն պարունակությունը հետևյալն էր.

«Սիրելի Գարանֆիլյան, նամակդ ստացա և ամեն ինչ հասկցա. պատերազմի շրջանին նման դժվարությունները սովորական են: Կառավարությունը բարյացակամ է. 4-րդ բանակի ընդհանուր հրամանա-

տար և ծովային նախարար ազնվաշուք Զեմալ փաշան անձամբ խոստացած է ինձ հնազանդ և անմեղ ժողովրդին հանգստութեան և բարօրութեան համար ոչ մեկ բան խնայել. ջանացեք համակերպիլ և պետական ամեն պահանջի զոհացում տալ. ունէ խլրտում ու աննշան միջադեպ կրնա ամբողջ ազգին, նամանավանդ Կիլիկիո հայութեան տապանաբարը կնքել:

Զեյթունը թող մնա իր փառքին մեջ, քանզի ունէ դեպքի պարագային ապագա պատմագիրը «դավաճան» պիտի որակէ Զեյթունը:

Կօրհնեմ սիրելի ժողովուրդս և Զեզ՝ ժողովդ, Սահակ»:

Կիլիկիո կաթողիկոսը սուչն նամակով անգամ մը ևս կհաստատէր իր դիրքավորումը և կուգար պատասխանատվութեան մեծ բաժին վերցնելու ապագա հավանական դեպքերուն մեջ:

Մեր կողմէ կզգուշանանք վախճանյալ կաթողիկոսի մասին մեր տեսակետները հայտնել, որպէսզի ընթերցողը ազատ մտածողութեան մեջ կատարէ իր դատումները, անկախ մեր համոզումներէն:

Նազարեթ Չավուշ և կարգ մը իշխաններ, Առաջնորդարանին մեջ հանդիպում մը ունենալով, կխորհրդակցին Սահակ կաթողիկոսին պատասխանին շուրջ և վերջին անգամ, 4 սեպտեմբեր 1914-ին, կեսօրէ վերջ ժամը 4-ին, տրտում, տխուր, հուսալքված դուրս կելլեն առաջնորդարանէն: Դժբախտաբար անոնք անգամ մըն ալ սուչն ազգային հաստատութիւնը պիտի շտեմնէին: Նազարեթ Չավուշ, իր արաբական նժույզը նստած, հարազատ որդիներուն՝ Հակոբին և Ռուբենին հետ և մի քանի զինված ոստիկան զինվորներով կուղևորվի դեպի ամառանոց: Անցնելով խաչքարը, անոնք կհասնին Անբանի Քայտոկ, ապա՝ Գրբան տերեսի (Կոտորածի ձորը), ուր 1862-ին հազարավոր ներխուժողների կյանքին վերջ տրված էր, և կսկսին մագլցիլ վանքի զառիվերէն՝ Քեշլիմոտէն դեպի վանք: Իրիկնամուտ էր. արևը իր պայծառութիւնը կորսնցուցած էր, կարծես իր վերջին մնաք բարովը կըսէր: Հազիվ վանքի սեմին հասած անոնք իրենց առջև կգտնեն իշխան Եղիան, որ վաթսուն տարին թևակոխած հայ հերոսի իսկական տիպար մըն էր, որուն մինչև այդ օրը թրքական նենգ ուժը չէր հաջողած ձեռք անցնել և զգետնել: Անկախ և ազատ լեռներու մեջ մեծցած՝ ան տակավին չէր ըմպած թրքական բռնակալութեան դառն բաժակը:

Վանքը կառուցված էր Զեյթունէն կես ժամ հեռու՝ հյուսիս-արևելք, Պերզնկա լեռան ստորոտը, ըստ ավանդութեան՝ Բարթողիմեոս Առաքյալի ձեռամբ: Ան եղած էր Զեյթունի միջնաբերդը՝ պատերազմի պահերուն. ունէր մատուռ մը՝ Մայր Աստվածածինին նվիրված: Արևմտյան

կողմը կար ձորակ մը՝ որմէ անդին 75 տնվոր գլուղ մը: Հյուսիսային կողմը կբարձրանար Փիսիր լեռը: Վանքէն 40—50 կանգուն հյուսիս կվազեր Նահատակ աղբյուրը, որուն շուրջ գտնվող մշտադալար ծառերու տերևներով իրենց մարմինը կծածկէին ուխտավորները, ցավերուն բժշկութիւն գտնելու հույսով: Հարավ-արևելեան կողմը կգտնվեր զորանոցը, որ կբաժնէր Պուշագճենց մտտը բլուրը, իսկ հարավային կողմը՝ Նորաշխարհյան թաղի ամառանոցը. հոն կվազեր Պղուկ Կենչ աղբյուրը՝ Թեթև աղբյուր անունով: Վանքը ուխտավորներու հատուկ 125 սենյակ ունէր: Իսկ Ս. Աստվածածնա մատուռին վրա կառուցված էր վեհարանը՝ վանահոր դահլիճը, կոկիկ, գմբեթավոր մասնաշէնք մը, որ կիշխեր ամբողջ հաստատութեանը:

Վանքին մուտքը գրավիչ էր. դռան երկու կողմը նստելու համար բազմոցներ տեղավորած էին, ուր հոգնած և պարտասած աշխատավորներ կամ Կիլիկիո այլ և այլ շրջաններէն եկած ուխտավորներ կնստէին և օրվա անցուդարձերուն մասին կզրուցէին:

Երկու հորեղբորորդիները՝ Եղիա և Նազարեթ դահլիճ կառաջնորդվին, ուր ներկա էին արդէն Զեյթունի ռազմական ղեկավարները: Եղիայի կողմէ ժողովի հրավիրված էին Նշան Նորաշխարհյան (Աստվածատուր իշխանի թոռը), որ 1895-ի պատերազմին Անտրոնի արշավանքն էր ղեկավարած և իր քաջագործութիւններովը անվանի էր դարձած, Փանոս Չազրյան՝ նույնպէս 95-ի պատերազմին Անտրոնի արշավանքի մասնակիցներէն, Հաճի Մարկանյան՝ Պապիկ փաշայի զինակիցներէն, Կարապետ Սուրենյան՝ իշխան Նազարեթ Սուրենյանի որդին՝ նույնպէս 95-ին հայտնի դարձած, Փանոս Չուլազյան՝ զինագործ, Անտրոնի արշավանքին նշանավոր դարձած և թուրքական լուծին երբեք չենթարկված, Հակոբ Պոյամյան՝ դարձյալ 95-ի պատերազմի ռազմիկներէն, Ասատուր Յաղուպյան՝ իշխան Մկրտիչ Յաղուպյանի որդին և, վերջապէս, վանքի քահանան՝ Տեր Սահակ Գալաճյան, որ մասնակցեր էր 1895-ի Բերդիվ Չայի կռիվին:

Սահակ քահանայի օրհնութիւններէն վերջ ժողովը կբացվի իշխան Եղիայի նախագահութեամբ:

Պահն ու հավաքատեղին լի էին խորհրդավոր մտածումներով. ցեղին սիրտն էր, որ կխոռովէր մի առ մի ժողովականներու հոգին ու միտքը. ներկաներու դեմքերուն վրա վճռակամութիւն և ինքնավստահութիւն կար և իրենց խոսքերուն մեջ՝ բողոք ու ընդվզում: Հնագույն օրերու զեյթունցիի հերոսական ոգին էր, որ կիշխէր բոլոր ներկաներուն մեջ. անոնցմէ յուրաքանչյուրը հերոսապատում մը ունէր իր հաշիւուն:

արձանագրած: Անցյալ մը ունեին, զոր հպարտությամբ պիտի հիշեին հաջորդ սերունդները:

Ժողովականները շատ մը անցյալի դեպքեր պատմելի և նկարագրելի վերջ կթելադրեն Նազարեթ Զավուշին, որ իրենց համակերպի, որովհետև կըսեն անոնք՝ «Պատրիարքարան, Կաթողիկոսարան, Մարաշի հայ պատգամավորները՝ բոլորը, բոլորը ծախված, եսասեր մարդիկ են»: Անոնք կհիշեն Տեր Առնոյ քահանա Նահապետյանի և ընկերներուն 1895-ի մեծ ապստամբութեան նախօրյակին խոստովանադրութ ըլլալը: (1895-ի նախօրյակին Նազարեթ Զավուշ Մարաշ կերթաւ և Մկրտիչ Ամիրալյանի տունը՝ Առնոյ քահանա Նահապետյանի նախագահութեամբ, հնչակյան մասնաճյուղը ժողով մը կուսենա, ուր կորոշվի ապստամբութեանը սկսելուն պես 800 երիտասարդ ուղարկել Զեյթուն՝ կռուելու: Երբ զորանոցը կգրավվի, զեյթունցիք Հովհաննես Գերմանիկյան քաջասիրտ զեյթունցիներ կըրկեն Մարաշ՝ նամակով մը սուլն խոստովան հիշեցնող: Տեր Առնոյ քահանան սուրհանդակին կպատասխանէ. «Զեյթունը թող կռուի, եթէ հաջողի բոլոր ազգը կօգտվի, իսկ եթէ պարտվի՝ խեղճ օւթշվառ ժողովուրդ մը կազատի տանջանքէ»: Այսպիսով՝ Մարաշեն մեկ հոգի անգամ Զեյթուն չէր եկած կռուելու): Ատոնք բոլորը ազգի դավաճաններ, շահամուլներ են, կեղարկացնեն ժողովականները, որոնք եսասիրտբար կուղեն մեզ զոհել. վստահինք միայն աստծուն և ապա՝ մեր բազուկներուն, ինչպես ըրեր են մեր նախահայրերը: Մենք երբ փաշային խոստովաներուն կամ ազգային մարմիններուն խրատներուն անսատով վիզ ծռենք, խոշոր սխալ մը գործած կըլլանք:

Նազարեթ Զավուշ իրավունք տված էր իր սիրելի զինակիցներու ըսածներուն: Իր համոզումն ալ նույնն էր. ուրիշ ելք չկար, բայց ապագայի պատասխանատվութեանը զինքը կկաշկանդեր: Բոլոր անցուդարձերը մի առ մի անոնց պատմելի վերջ, ան երկրորդ խորհրդակցութեան մը պետքը շեշտեց և ապա մտածումներով լի, այդ սխալիւր և ջերմ մթնոլորտեն բաժնվեցաւ:

Վերահաս վտանգի մը մղձավանջը տարածված էր արդեն զեյթունցիներու հոգիեն ներս: Հին օրերու կռիվներու հիշատակները բոլոր զեյթունցի ընտանիքներուն մեջ խոսակցութեան նյութ դարձած էր: Տարեցները նոր սերունդին կպատմեին, թէ ինչպես կռուեցան իրենք և որքան սիրած էին Զեյթունն ու ազատութեանը, մինչ երիտասարդութեանը, հավետ սիրահար նոր սխրանքներու, ուրախութեամբ կպատասխանէին...

Նազարեթ Զավուշի այդ երկու օրվա հոգեկան դրութեանը ծանր էր:

280

Ան ոչ ոք ընդունելու կամ հետը խոսելու տրամադրութեան չունէր: Տիկնոջը՝ տիկին Կատարի և զավակներուն հարցումները անպատասխան կմնային: Երիտասարդութեանը զինված, դուրսը իր հրամանին կպատասխան, հոգ չէր թէ 10—15 ռազմիկներ գերված կգտնվեին զորանոցը:

1914 թ. սեպտեմբեր 6-ին Նազարեթ քաղաք պիտի իջներ, ուր ամեն ոք անհամբեր իրեն կպատասխանէր: Լուռ էր ան, դիմագիծին վրա տարօրինակ և տխուր արտահայտութեան մը կնշմարվէր: Զինված՝ քարայրեն դուրս ելաւ, ապա ետ դառնալով ներս մտաւ, զենքերը վար դրաւ և երկրորդ անգամ դուրս ելլելով անմիջապէս ձի նստաւ՝ առանց բռն մը խոսելու: Հազիվ քանի մը քայլ առաջացած էր, երբ ան կանչեց զիս մեկուտի և ըսաւ (մյուս եղբայրներս շատոնց քաղաք իջած էին). «Լուր դրկելուս պես պահված զենքերը չունեցողներուն կուտասա»: Ուրիշ ոչ մեկ խոսք, ոչ իսկ հրածեշտի բռն մը: Վանքին քով հասնելուն պես ան կկանչէ իր սրտակից հորեղբորորդին՝ Նղիան և կթելադրէ անոր. «Այսօր վանք բերել տուր քաղաքը գտնվող վառոցը և մյուս ռազմամթերքը և դուն գնա Արեգին՝ ժողովուրդը կազմակերպելու. երեկոյան՝ վերադարձիս հոս պատրաստ եղիր»: Եվ անոր ևս առանց մնաք բարով ըսելու ան կմեկնի: (Հոս հիշենք, թէ Արեգինը լավ պատերազմողներ հայթայթելուն համար կոչված է Ալապաշ, այսինքն՝ հառաջապահ):

Նղիա, հորեղբորորդույն կարգադրութեաններեն ուրախացած, վազելով կմտնէ վանք, տրված հրահանգները ժամ առաջ կատարելու համար: Բնիկ զեյթունցի, բայց տյորթյուլաբնակ Հաշի Փանոս Գարաւասիլյանը, որ քանի մը ամիս իվեր Նղիային հյուրընկալվելով վանքը կգտնվէր, վայելելով անոր բարիքները, ի տես Նղիայի անսովոր խանդավառութեան, կհաջողի իրազեկ ըլլալ խնդրույն: Նղիա ամեն ինչ կարգադրելի վերջ կմեկնի Արեգինի գյուղերը:

Հաշի Փանոս խոր մտածումի մեջ կընկղմի: Զեյթունի անել կացութեանն օգտվելով, ինքզինքը ազատելու մասին կխորհի, որովհետև կառավարութեան կոչին հնազանդ ըլլալով ան կվախնար Տյորթյուլ վերադառնալու ան շարունակ ինքզինքն արդարացնելու առիթ մը կփնտրեր: Հետեւաբար, ան կփութա զորանոց և զեյթունցիներուն ապստամբելու մտադրութեան մասին Ալի Հայտարին կպատմէ:

Հայ ցեղի այս հավիտենական ցեղերը միշտ ալ գտնված են ամեն տեղ: Անոնք, նվիրական շարժումներու ընթացքին իրենց անձին ազտութեաններով՝ վարկաբեկած են շարժումը և չլատած՝ վեր սլացող խոյանքները: Մարաշեն եկող երկու հայ պատվիրակները, մինչ այդ, համոզած էին Հայտարը, թէ՛ Նազարեթ Զավուշը ձերբակալու հարմար



բագույն պահը շարաթ օրն էր, որովհետև քաղաքին ժողովուրդը կիրակ-
նօրյա պատրաստութեան համար կմեկնէր այգի, պարտեզ, գյուղ կամ
լեռ և ամբողջ քաղաքը գրեթէ ամալի կդառնար:

Ալի Հայտար կրցած էր Զեյթունի շորս կամուրջներուն վրա հսկիչ
զինվորներ տեղավորել և ապա հրահանգել Զեյթունի նորեկ ոստիկա-
նապետ Միտհաթին, որ Նազարեթ Չավուշը ձերբակալելով զորանոց
դրկե: Երբ քաղաքապետը ձինն կիջնէ իր նորաշեն պալատին առջև,
անակնկալորեն հոն կգտնէ թուրք դապիթին (ոստիկան), որմե կիմա-
նա թե նորեկ գայմագամը խորհրդակցութեան համար պալատ կհրավիրե
զինքը: Նազարեթ կհետևի դապիթին: Ճամփան կհանդիպի իր անդրա-
նիկ տղուն՝ Հակոբին, որ նեղված ու հուզված կըսէ. «Գայմագամը զիս
կանչեց և հրահանգեց, որ անձամբ երթամ և հետամնաց տուրքերու
գանձումը կատարեմ: Առարկութեաններս շքնուրուցեց. «Բանակը դրամի
պետք ունի, փաշան դրամ կուզէ» ըսավ (Հակոբ Զեյթունի ելեմտական
ընդհանուր քննիչն էր): Հայրը կթելադրե տղուն տուն երթալ և երկու-
շաբթի վերադառնալ: Հակոբ, հորը պատվերին համաձայն, դատարանի
անդամ Ասատուր Կյուլվանեսյանի ընկերակցութեամբ վանք կելլէ:

Նազարեթ Չավուշ կերթա պալատ, կտեսակցի գայմագամին հետ,
բանակի պետքերուն համար կարգադրութեաններ կընէ, որովհետև Զեյ-
թունն էր, որ բանակին պահանջները կհոգար ամեն օր: Գայմագամեն
բաժնվելով ան երբ պալատեն դուրս կելլեր, ոստիկան մը դարձալ ետ
կկանչէ զինքը: Պալատին դռան սեմին կանգնած կտեսնէ հարցուրապետ
Միթար բեյը (բնիկ քիլիսցի, նախկին փոխանորդը գայմագամին), որ
հաղիվ կփսփսա. «Քեզ ձերբակալելու հրաման տրվեցավ, ճարդ նայե՛»:

Ակնթարթ մը ետք, ոստիկանապետ Միտհաթ, շարք մը սվինավոր
զինվորներով կներկայանա Նազարեթ Չավուշին և կըսէ. «Հրամանատարը
զորանոցնքն քեզ կուզէ»: Առանց սպասելու, որ ձին բերվի, հետիոտն զո-
րանոց կտանին գայն և կառաջնորդեն բանտ: Նույն պահուն քաղաքին
ամեն կողմերը զինվորներ կտեղավորվին: Երթևեկը կարգիլի: Ալի Հայ-
տար Զեյթունի երևելիները զորանոց կկանչէ:

Այս կերպով կրացվի ողբերգութեանց սև վարագույրը, որուն ետին
ծածկված էր Զեյթունը բնաջնջելու հրեշտիչն ծրագիրը: Այլևս երիտա-
սարդ թուրքերու խենչ ուղղամարտութեանը հրապարակ կիջներ, վար
առնելու իր կեղծ դիմակը:

Նազարեթ Չավուշի ձերբակալութեանը այսպիսով սկիզբը պիտի
ըլլար իթթիհատականներու բարբարոս և ահավոր քաղաքականութեան
իրագործումին: Նետը արձակված էր իր կապարճեն, որ կերթար հարվա-

ծելու նախ քաղաքապետը և անոր հետ՝ ըմբոստացումի շարժումը:

Առաջնորդ հայրը և իշխան Սուրենյան, լսելով Նազարեթ Չավուշի
ձերբակալութեան լուրը, սուտ հիվանդ կձեռնան, մինչ Զեյթունի երե-
վելիներեն մաս մը Մարաշի հայ պատվիրակներուն հետ կներկայանան
կառավարիչին, Չավուշի բանտարկութեան պարագան իմանալու համար:
Ալի Հայտար, այլևս ինքնավստահ, ամբարտավանորեն կհայտարարե
իր մոտ եկող պատվիրակութեան. «Ձեր վստահած կուսակցապետ Նա-
զարեթ Չավուշը նկուղ նետեցի, ամբողջ քաղաքը պաշարված է, հարա-
բերութեանները խզված են, ոչ ոք կրնա ներսն դուրս և դուրսն ներս
մտնել, եթէ 12 ժամեն ձեր բոլոր զենքերը չհանձնեք, քաղաքը պիտի
ոմբակոծեմ»:

Պատվիրակութեանը, մեկ ժամ վերջ գլխիկոր, լուռումունջ կվերա-
դառնար քաղաք հետևյալ մտածումներով տարված. ինչպե՞ս ներկայա-
նալ ժողովուրդին, զոր մեծամեծ խոստումներով խաբած էին: Մարաշի
երկու հայ պատվիրակները ուղղակի Մարաշ կմեկնին, առանց Զեյթուն
իջնելու: Ալի Հայտարեն հրահանգ ստացողները ստիպված ժողովի
կկանչեն քաղաքին բոլոր ծանոթ դեմքերը և անոնց կփոխանցեն կառա-
վարիչին բանավոր հրահանգը: Լուրը կայծակի արագութեամբ ամեն
կողմ կտարածվի, բայց ի՞նչ օգուտ. ժողովուրդը թևաթափ եղած էր ար-
դեն, հարաբերութեանները դուրսի հետ բոլորովին խզված: Գործի բե-
րումով քաղաք եկածներ, նույնիսկ ստատու մայրեր չէին կրնար տուն
վերադառնալ:

Պատվիրակութեան անդամները կացութեանը նկատի ունենալով՝
խումբ խումբ, տունն տուն կպատեին և կհրավիրեին ժողովուրդը հնա-
զանդութեան. «Այլապես Զեյթունը կրնա մոխրակույտի վերածվիլ»,—
կըսեին անոնք:

Կառավարութեանը սկսավ ամեն ժամ Զեյթունի երևելիներու նոր
ցանկ մը ներկայացնել ժողովականներուն: Զենք կպահանջվեր և կանչ-
վողները գավազանի հարվածներու տակ կստիպվեին ամեն գնով զենք
մը հայթայթել և հանձնել կառավարութեան: Պատիժներն էին՝ բիրտ գա-
վազանը և մութ զնդանը՝ երկաթե կապանքներով:

Հակոբ Նորաշխարհյանն ու Ասատուր Կյուլվանեսյանը, երբ քաղա-
քեն վանք կհասնին, Եղիան հոն չեն գտներ: Միևուրտը նեղացուցիչ
կղառնա Հակոբին, վատ նախազգացում մը զինք կպատե և ան կորոշե
ամեն գնով քաղաք վերադառնալ: Կյուլվանեսյան կընդունի առաջարկը և
երկուքը միասին կվերադառնան Զեյթուն: Կացութեանն բոլորովին ան-
տեղյակ, երբ անոնք Անբանի Քայտոկ կհասնին, հոն կգտնեն հրացան-

ներով և գնդացիներով զինված թրքական զինվորներ, որոնք պատենշ կազմած էին և երթևեկը դադրեցուցած:

Զինվորներուն պետը խնդիրը կհայտնե կյուվանեսյանին և ապա կթուլլատրե երկուքին մուտքը քաղաք, նկատի ունենալով անոնց պետական պաշտոնյա ըլլալու հանգամանքը: Ասատուր կզոլաշարեն Հակոբը, որ պաղարյունութունը չկորսնցնե և սխալ ընթացքի մեջ չգտնվի: Հակոբ անմիջապես տուն կփութա և հոն կգտնե վառոդ, փամփուշտ և այլ ռազմամթերք: Խորհելով թե տունը կրնա խուզարկության ենթարկվիլ, ան անմիջապես կաշխատի զանոնք տեղավորել թաղին մեջ ապահով տեղ մը՝ Պարսումյան Փանոս քեռիին միջոցով: Քաղաքը կարծես թե ամալի էր, մեջտեղը մարդ չկար:

Իշխան Եղիա, հորեղբորորդվույն՝ Նազարեթ Չավուշի հրամանները կատարելու համար հազիվ Զերմուկի դաշտը հասած էր, երբ բանակի հեծելազորքին կողմե կհետապնդվի, բայց, բարեբախտաբար, օձիքը ձեռք չի տար: Այդ կողմերը օրն ի բուն պետք եղած կարգադրութունները ընելի վերջ ան կորոշե վերադառնալ Փիսիք, օրվա կացության մասին խորհրդակցելու համար: Ան հորեղբորորդվույն՝ Նազարեթի ձերբակալութունը և քաղաքին պաշարյալ վիճակը լսած էր և առանց հուսահատության կճգնեք այդ բոլորին ելք մը գտնել: Արեգինի գյուղերեն միայն 16-ին լուր դրկած էր, որպեսզի անոնց պետերը Նազարեթ Չավուշի հովոցը գան խորհրդակցության համար, մինչ ինքը լեռնային արահետներե միայն նույն տեղը հասած էր: Ան ճամփան կհանդիպի Հայկ Ասմընյանին՝ քաղաքական ժողովի ատենադպիր և քաղաքապետարանի անդամ, որ Փիսիքեն քանի մը քայլ անդին, իրենց ազարակը ընտանիքով ամառանոց ելած էր: Հայկ Ասմընյան փեսան էր Նազարեթ Չավուշի եղբորը՝ Սարգիսին և անոր շնորհիվ հասած էր ներկա դիրքին. ան ևս իր շրջապատին մեջ քիչ շատ հեղինակութուն և ազդեցութուն ուներ:

Ասմընյան Նազարեթ Չավուշի ձերբակալութունը լսելով տխուր մտածումի մեջ ինկած ելք մը կփնտրեր, որովհետև քաջ գիտեր թե անոր անկումը ի՞ր ալ անկումը պիտի ըլլար: Ան չէր կրնար իր տիկնոջ հայտնել հորեղբորը ձերբակալութունը: Ահա, երբ ան նման կացության մեջ կմտատանջվեր, կտեսնե Եղիան, որ կհառաջանար նժույգին վրա նըստած, դաշույնը մեջքին, հրացանը ուսին: Անմիջապես կզիմավորե զայն և կխնդրե անկե, որ քիչ մը հանգստանա: Եղիա ավելի որոշ և հստակ տեղեկութուն քաղելու համար թե՛ Նազարեթի և թե՛ Զեյթունի մասին, կորոշե քանի մը վայրկյան հանգչիլ: Հայկ մանրամասն կպատ-

մե Չավուշին ձերբակալության, Զեյթունի ցավալի կացության և Ալի Հայտարի մտադրությանց մասին:

Վեհօգի Եղիա, ազնիվ և անկեղծ, իր բոլոր խորհուրդները կհայտնե Հայկին, ավելցնելով նաև, թե արդեն իսկ իր ծրագիրները հաջողցնելու և իրագործելու համար հարկ եղած կարգադրութունները ըրած էր. Կերթամ Հակոբին քով, — կհայտնե ան. անշուշտ զինքը պիտի գտնեմ տունը: Վստահ եմ թե համակարծիք պիտի ըլլա ինձի: Արդեն բոլոր Արեգինի գյուղերուն լուր ձգած եմ, որ այս գիշեր Քարայր գան՝ ժողովի: Եթե հաջողիմ իմ ծրագրիս մեջ, անմիջապես գորանոցը կպաշարեմ և չեմ թողուր, որ նախնայցս անունը արատավորվի, որոնք դարերու ընթացքին իրենց արյան գնով կրցեր են պաշտպանել Զեյթունը: Հուսահատութունը վատութուն է:

Պահ մը ետք ան ձին հեծած կշարունակե ճամփան, խորհելով իր ծրագրի իրագործման շուրջ:

Զորանոցը պաշարել, 8—10 հազար պետական զենքերով օժտված բանակի մը վրա հարձակիլ, քաղաքին մեջ գտնվող իշխանության կողմնակիցները անվնաս դարձնել, ներքին ճակատը ամրապնդել, իրապե՛ս դժվար և անլուծելի էր: Եղիա անմիջապես կվերհիշե 1895-ի փառավոր ապստամբութունը և կշարունակե իր խորհրդածութունը:

Զէ, չէ... հուսահատութունը վատութուն է: 1895-ի ըմբոստութունը ասկե շատ ավելի վատթար պայմաններու մեջ ծնունդ առած էր: Հնչակյան գործիչներ՝ Աղասի և Հրաչ երբ Զեյթուն հասան, ամբողջ Արեւիկյան Թուրքիան և նույնիսկ Պոլիսը արյան մեջ կլողար, Սասունը չարաչար պարտված էր ու համիտիե գունդերու հարձակումներուն նշավակ դարձած: Սուլթան Համիտ հայուն կորովը ջլատած, ամեն կողմ ահ ու սարսափ, սուգ ու արյուն սփռած էր: Աղասի և Հրաչ, ամիսներով, մերթ Արեգինի այգիի հյուղակներուն մեջ, մերթ Պապիկ փաշայի քարայրին առջևի աղբյուրին մոտ, մեր Նազարեթին հետ գլուխ գլխի տված գիմադրության ծրագիրներ մշակած էին, մինչ զեյթունցիք բոլորովին անտեղյակ կմնային իրականության:

Այն ատեն կառավարութունը կրցած էր Զեյթունի բնակչութունը հարստահարել, չգանձված տուրքերու փոխարեն նույնիսկ ծախած էր ժողովրդի գույքերուն մեկ մասը, չնչին գիներով:

Բայց այն ժամանակ Նազարեթ մյուս հեղափոխականներուն հետ կրցած էր այդ բոլորը հաղթահարելով ապստամբության դրոշը բարձրացնել Բերդիզ Չայեն և անկե ուղղակի Զեյթուն արշավելով՝ գորանոցը պաշարել: Զեյթունի պահպանողական խավը անզոր եղած էր երիտա-

սարգությունը զսպել, որ զենքերը առած միացած էր թուրք բռնակալության դեմ պայքարող ըմբոստներուն:

Նղիայեն առաջ Փիսիր կգտնվեին արդեն Չավուշի որդիներեն երկուքը՝ Հակոբն ու Ռուբենը: Հոն խոնված էր հարյուրներով զինված երիտասարդութուն մը: Բոլորը լուռուժունջ կապասեին: Առվակի կարկաչն իսկ կարծես լռած էր: Ոչ ոք կհանդգներ բառ մը, խոսք մը արտասանել: Զիտ խրխնջոց մը լավեցավ. Նղիան էր եկողը: Բոլորը ոտքի կանգնած դիմավորեցին զայն: Ան եկավ տրտում տխուր, բազմեցավ իրեն առաջարկված բազմոցին վրա:

Գարձյալ լուռութուն տիրեց: Այդ պահուն մեջտեղ եկավ Նազարեթ Չավուշի տիկինը՝ Կատար, որ խրոխտ ու հուզիչ ձայնով մը հայտարարեց.

«Միրելի Նղիա, ամուսինս՝ Նազարեթ այսօր թուրք զազանին ձեռքին տակ, մութ նկուղի մը մեջ, երկաթե կապանքով կշարշարվի: Կայպանե՛մ ես այդ անարգ կյանքը և կնախընտրեմ փոխան այդ նախատինքին կեր դառնալ լեռներու և ձորերու մեջ գիշատիչ թռչուններու և վայրի գաղաններու: Պատրաստ եմ այս վայրկյանին իսկ քեզ հետ գործի լծվելու և ամուսնույս վրեժը լուծելու: Քե՛զ կհանձնեմ այս նվիրական գործը, որովհետև զավակներս տակավին անփորձ են. դո՛ւն կրնաս միայն իմ և ժողովուրդիս շարչարանքին վերջ տալ»:

Նղիա կաշխատի հանգստացնել Կատարը, խոստանալով ամեն զնով անոր փափագը իրականացնել: Ապա ան ոտքի կանգնելով կպատմե անցյալի նշանակալի դեպքերը: Ան կնկարագրե, թե 1877 թ. իր հորեղբորորդին՝ Պապիկ փաշան ինչպե՛ս հաջողած էր լուր ափ մը կտրիճներով կտրծք ցցել բռնակալության դեմ, ինչպե՛ս կրցած էր 60 երիտասարդներով Պողոտուղան ցեղի հազարյակ մը բարբարոս կովոդները ծունկի բերել և անոնց ամբողջ հարստությունը Զեյթուն բերելով հավասարապես բաժնել ժողովուրդին, ինչպե՛ս ան ձիհան գետը թափած էր Նիտիրլի ցեղի ասպատակները՝ Կարս-Պաղարի եկեղեցին կողոպտած ըլլալուն համար, ինչպե՛ս յոթը փաշաները հազարավոր զինվորներով եկած էին Զեյթուն, բայց չկրնալով Պապիկը բռնել, ձեռնունայն վերադարձած էին, և թե վերջապես, ինչպե՛ս ան պալատի պաշտոնյաները ձերբակալելով վանք բերած, բանտարկած էր, ու 250 շերքեզ կընվողները ջարդած: Նղիա կհիշատակե նաև Սալիհ փաշային Զեյթուն գալը, Շամքեշիշյան Փանոսին քաջագործությունը, և այլն: Ան կպատմե 1895-ի մասին, երբ իր հորեղբորորդին՝ Նազարեթը կրցած էր ինչ-ինչ դժվարին պայմաններու մեջ հաղթանակ տանիլ: Հուսկ սպա. ան կհայ-

տարարե, թե ներկայիս ավելի՛ մեծ թիվով երիտասարդութուն մը պատրաստ կսպասե իր մասնակցութունը բերելու ապստամբական ուժ ձեռնարկի:

Բոլորը կձայնակցին իրենց պետին՝ Նղիային և միաձայնությամբ կորոշեն հաջորդ օրը, այսինքն կիրակի գիշերը, բոլորը կաղմ ու պատրաստ ներկա ըլլալ՝ զորանոցը պաշարելու համար, նույնիսկ եթե Նազարեթի կյանքն ալ վտանգի: Նղիայի հրահանգով բոլորը կցրվին, հաջորդ իրիկուն նույն տեղը հավաքվելու խոստումով: Որովհետև նույն օրը մարտական բոլոր ղեկավարներուն լուր պետք է տրվեր:

Իր կարգին Ալի Հայտար կղզար և գիտեր թե ինչպիսի՛ ժողովուրդի մը հետ էր իր գործը: Իրմե առաջ քանիներ ձախողած և նահանջած էին: Ան այդ՝ ան սկսած էր լուրջ աշխատանքի: Զորանոցին մեջ միշտ գործի վրա էր: Սպայակույտն ալ տևական ժողովներով հրեշային նոր ծրագիրներ կորոճար, ամեն զնով ապստամբությունը իր սաղմին մեջ խեղդելու վճռականությամբ տոգորված:

Կտրուկ հրահանգներ կտրվեին, իսկ զորանոցի պաշտպանությունը ինքը՝ Ալի Հայտարը ստանձնած ըլլալով, գիշերն ի բուն, դիրքե դիրք, պահակե պահակ կայցեկեր և արթուն կհսկեր, ավելի վճռական միջոցներու գիմելով անհրաժեշտ կարգադրություններ կըներ և նորանոց հրամաններ կարձակեր:

Ասմընյան Հայկ Նղիայեն բաժնվելեն հետո մտամտուքի մեջ ինկավ: Անոր մեջ ծնունդ կառներ փառամոլությունը: Նրկարորեն լուռ ու անխոս մտածելե հետո, ան առիթը հարմար նկատեց թուրքին վստահությունն ու համակրանքը շահիլ, կարենալ ազատելու համար նախ իր օձիքը, ապա տիրանալու հույսով Նազարեթ Չավուշի աթոռին: Ժամանակը սուղ էր, պե՛տք էր գործել:

Այդ կացության մեջ, վերջնական որոշում տված ըլլալով դավելու, ան կսլանա զորանոց, որ հազիվ քառորդ ժամ հեռու էր: Ներկայանալով Ալի Հայտարին, ան կհաղորդե Նղիայի ապստամբության ծրագիրը:

Հաջորդ առտու, արշալույսին, քաղաքին ամեն կողմը կվխտային սվինավոր զինվորներ. բոլոր «կասկածելի» անձերը շղթայակապ բանտ առաջնորդված էին: Զերբակավածներուն մեջ էին Հակոբը՝ Նազարեթ Չավուշի տղան, հորեղբորորդիները՝ Նղիան և Նշանը, Փանոս Չագրյանը, Ավետիս Պոյամյանը, Խաչիկ Յաղուպյանը, Նշան Եզեկիեյանը և առաջնորդ հայրը՝ Հովհաննես Գարանֆիլյանը:

Ահավոր ողբերգությունը իր բովանդակ հասակը ցցած, սկսած էր շոշափելի դառնալ: Զեյթուն դարձած էր անդրանիկ նոխազը մեծ ջար-

դին, Գարավոր սարսափը թուրք խաժամուժին՝ ան այդ օրերուն իր ողբերգութեան նախամուտը կապեր: Քաղաքը աներևակայելիորեն եղբրական դրութեան մեջ էր: Թուրք զինվորներուն առջև ամեն դուռ բացված էր, անոնք կրնային ամեն տունն ներս մտնել, նախատել, հայհոյել, ծեծել և կողոպտել:

Ժողով, ժողովական, առաջնորդարան, ամեն ինչ լուծված, քայքայված էր: Իբրև ազդեցիկ դեմք կմնար միայն Իշխան Սուրենյանը՝ Հաճի Պապա աղան, քաղաքական ժողովի ատենապետը, որ ակամա քանի մը նորերելուներու՝ Ասմընյան-Ահարոնյան խմբակին ձեռքը խամաճիկ դարձած էր: Հայկ Ասմընյան, հաջորդ օրն իսկ, իբր վարձատրութիւն իր կատարած մատնութեան, գրաված էր քաղաքապետի աթոռը և դարձած օրվան գլխավոր դեմքը Միացյալ ընկերութեան դպրոցներու տնտերն Հովհաննես Ահարոնյանին հետ: Խեղճ Պապա աղան, հակառակ իր կամքին, իր ազնվական տոհմին, իր նկարագրին, անոնց ակամա գործիքը դարձած էր, այլապէս իրեն ևս բանտ ու գավազան բաժին պիտի իյնային:

Չորանոցուն մեջ բանտարկվածներու վիճակը սարսափելի էր: Մարաշն, Ալախիսթանն, Կոկիսոնն եկած մոլեռանդ թուրքեր, իրենց հրեշալին կիրքերուն հագուրդ տալու համար, ըստ Ալի Հայտարի հրամանին, ուզած ատեննին, կալանավորներուն մեկն ու մեկը շղթայակապ դուրս կհանեին, կպակեցնեին, բերնին վրա բարձ մը կդնեին, հուակապ իրենցմե ամենավայրագը, ամենահուժկուն, և ամենե՛ն հավատացյալը անոր վրա կնստեցնեին. մունետիկը կսկսեր պոռալ ենթակային անունը և տավուլ զուռնայով կսկսեր գավազանին շառաչը, մինչ Ալի Հայտար, վերը իր արբանյակներով պատշգամբ նստած, բաժակներ կպարպեր և քահաբաններով կքաջալերեր խուժանը:

Առաջին առթիվ սվինավոր զինվորները մեջտեղ բերին շղթայակապ Եղիան, որ երբեք հուսահատած չէր կյանքին մեջ: Ի տես այդ մոլեռանդ ամբոխին, ան մոլեղանած էր ու ընկճված, մինչ մունետիկը հեգնորեն կկանչեր, Եղիա նորաշխարհյան մեկ կողմեն հարձակեցավ, աստվածաստված ըսելով բազում զինվորներ կոտորեց: Ան իբր կհրավիրեր ամբոխը, որ Եղիայի քաջագործութեան համար տրվելիք պատվանշանին առթիվ գան և ներկա ըլլան... Նախատինք, հայհոյանք, թուրք ու մուր աննկարագրելի էր: Վերջը, Եղիան ավազանին քովի սալերուն վրա պակեցնելով բերնին բարձ մը դրին, որուն վրա նստավ էլախիսթանցի Մուհամմետ Զեքի գատը կոչված կրոնապետը: Եղիա հոգեկան վերջին ճիգով մը գլխու մեկ ցնցումով թեպետ կրցավ վատագի գատըն գետին

տապալել, բայց ամբոխը ավելի կատղած ու մոլեղանած՝ իր վրա խուժեց և գավազանով, աքացիով ու հրացանի կոթով խելակորույս դարձուց զայն, որմե հտք անոր ոտքերեն քաշելով նետեցին զնդան:

Կարգը եկած էր Հակոբին. միևնույն արարողութիւնը, միևնույն ձեւակերպութիւնները ընելն վերջ, Մարաշի ելևմտական տնորենը Զեյթունի զինամթերքի բանալին կպահանջեր անկե: Այս ձևով, ամեն օր մեկը մեջտեղ բերելով կնետեին զայն մութ զնդանը՝ շղթայակապ, իրարմե բոլորովին հեռու և մեկուսացած: Միայն առաջնորդ հոր, Նազարեթ Չավուշին և Խաչիկ Յաղուպյանին հարցնող չկար:

Մյուս կողմե բարձրաբերձ սարերու լանջին թառած հայ գյուղերը, կլանված իրենց գութանով և ձմեռնամուտի աշխատանքներով, անակնկալորեն կընդունեին թուրք բարբարոս հյուրերու այցելութիւնը... որոնք գյուղ մտնելով կթալլեին ու կշարշարեին հայ գյուղացիութիւնը:

Զեյթունի մեջ սկսած ողբերգութեան կրկնութիւնը տեղի կունենար նաև գյուղերուն մեջ, ջլատելու համար ինքնավստահութիւնը շինական գեյթունցիին և հպարտութիւնը՝ չնահանջող ժողովրդին:

Թուրք զինվորներ տունետուն, խրճիթխրճիթ մտնելով գոյութիւն շունեցող բաներ կպահանջեին: Անոնք հաջողած էին ձեռքակալել գլխավոր ղեկավարները և զորանոց բերելով նույն խոշտանգումին ենթարկել:

Ոստիկանապետ ալբանացի Սյուլեյմանի անունը ամեն կողմ ահ ու սարսափ սփռած էր: Գյուղացիք երբ կսեին անոր անունը, իրենց տունն ու տեղը ձգած, ընտանիքով լեռ կապաստանեին: Սյուլեյմանը, իր գազանաբարո ընթացքով, ամենակատաղին էր, ան բոլոր շրջանը զինաթափ ընելն վերջ կհասնի Տոնուզ, որ կհավաքե պետերը և կսկսի գանակոծումը:

Տոնուզի ազդեցիկ ղեմքերեն Գևորգ Պլտըրյան մեռած էր: Նիկողոս եպիսկոպոսը չկար այլևս: Օրվան ղեկավարներն էին Փանոս և Եփրեմ Ալաճաճյանները՝ Գոշող գյուղեն. իսկ իրենց նախկին հեղինակութիւնը կպահեին Մանվել աղա Ալաճաճյանը, Հաճի աղա Չինիկոյանը և Գեվորգ Մարգարյանը: Մանվել և Հաչի աղաները անցյալի պատմական դեմքեր էին: Անոնք Չուզուր Հիսարի, Անտրունի, Կապանի, Կոկիսոնի արշավանքներուն մասնակցած և մեծ դեր խաղացած էին:

Տոնուզցիք կորոշեն ամեն զնով ուրանալ թե զենք ունին: Անոնք արիորեն կդիմադրեն ամեն նախատինքի, շարշարանքի և ծեծի: Բայց ցավալի է ըսել, որ երբ կարգը կուզա վանահոր՝ Բարթողիմեոս վարդապետ Քազաճյանի՝ 1895-ի Զեյթունի «վեղարավոր հերոսին», ան գավազանի հարվածներուն շտկալով կստիպվի խոստովանիլ: Տոնուզի

ղեկավարները սակայն կհաջողին կոկիկ գումարով մը կաշառել Մյու-
լեյմանը և քանի մը տեղական հին զենք և զինվորացու երիտասարդներ
հանձնելով անոր՝ հեռացնել վտանգը: Մյուլեյմանը իր հետ շղթայակապ
բերած էր Ռուբեն Քենտիպեյան անուն երիտասարդը, որ, իբրև հըն-
չակյան գործիչ, 1914 թ. Կարս-Պաղարի մոտ երկու հաճնցի հայեր սպա-
նող նշանավոր ավազակապետ Թեք Պըլըզի տունը պաշարած էր՝ քանի
մը զեյթունցի ընկերներով և զայն հոն չգտնելով այրած էր անոր տունը:

Ողբերգության առաջին արարը իջած էր:

Ի՞նչ կմնար արծվեբույն Զեյթունեն...

Հուսալքված ամբոխ մը միայն... Ինչպե՞ս պատահած էր, սակայն,
որ հերոսածին քաղաքը դարձած էր խաղալիք բարբարոսներուն ձեռքը:
Կրկին մատնությունովը, ավաղ, դավաճան իր մեկ զավկին՝ Հայկ
Ասմընյանի: Այլապես, Եղիայի գլխավորությունամբ սկսած շարժումը հա-
վանական էր, որ տարբեր ձևով ընթանար:

Ֆեպտեմբեր 10-ին ամեն ինչ լրացած էր: Զեյթունը իր շրջակայքով
զինաթափ եղած էր ու բոլոր ղեկավարները ձերբակալված: Ոչ ոք կրնար
իրիկունները ժամը վեցեն վերջ տունեն դուրս ելլել և ապահով վերա-
դառնալ: Մեպտեմբեր 11-ին Ալի Հայտար իր քով բերել կուտա Նորաշ-
խարհյան Հակոբը, որ գավազանի հարվածներուն տակ ուժաթափ, եր-
կաթյա շղթաներու ծանրութենեն չէր կարող ոտքի կայնիլ և կըսե անոր
սպառնական շեշտով. «Գնա՛, խոսե հորդ հետ. իրեն հարցում մը ունինք,
եթե ճիշտը խոսի, զինքը ազատ պիտի արձակենք, եթե ոչ՝ հրաման
եկած է, որ զինքը պիտի կախենք զորանոցի դռնեն»:

Հակոբ հորը այդպիսի խոսք մը ըսելը անկարելի կգտնե իրեն հա-
մար: Այն ատեն Հայտար, կատրած ու մոլեգնած, կխոսանա շղթայակապ
Հակոբին վրա և քանի մը աքացի տալի վերջ՝ կհրամայե սվինավոր զին-
վորներու հրամանատարին, որ զայն տանին հորը քով, իրեն տրված
հրամանը հաղորդելու: Խեղճ Հակոբը ընկճված, արտասուքով կմոտենա
հորը, կսկսի հեկեկալ առանց բառ մը, խոսք մը կարենալ ըսելու: Նա-
զարեթ Չավուշ, երկաթյա գառագեղին մեջ փակված, երբ կտեսնե իր
գավազանի հոգեկան ու ֆիզիքական ծանր վիճակը, բարկացայտ աչքե-
րով որդվույն ընկերակցող հիսնապետին կըսե. «Գնա՛, խոսե այդ իժի
ծնունդին, տղաս երբեք հանցանք մը չունի, եթե ըսելիք մը ունի, թող
զիս կանչե: Ապա տղուն դառնալով կըսե,— Զիդ պիտի կախեն, երբեք
մի մտածեք... աշխարհը անիվ մըն է, ես ասկե 20 տարիներ առաջ այս
զորանոցին դռնեն իրեն պես քանիները կախեցի. այսօր անիվը դարձած

է, այս մահը ինձի պարծանք մըն է, ազգը ինձի պես շատ շատեր ծնած
է և պիտի ծնի. գնա՛, քաջ եղեք»:

Սպան կվերադառնա Հակոբին հետ և ամեն ինչ նույնությամբ կհա-
ղորդե փաշային: Մինչև այդ օրը որևէ հարցում կատարված չէր Նազա-
րեթ Չավուշին: Նույն իրիկունը, զինվորական ճաշեն վերջ փողը կհնչե,
դժուր զուտնան կսկսի նվագել, բանակը կարգով կհամախմբվի հրապա-
րակը: Թուրք մոլեռանդ հոջան կսկսի գովաբանական մաղթանքներ
ընել սուլթանին: Ալի Հայտարի կողմե հրավիրված պաշտոնյաները, նո-
րեկ գայմագամ հայատյաց Հյուսեին Հյուսեինի առաջնորդությամբ կփու-
թան զորանոց: Բոլորը կելլեն պատշգամբ: Նազարեթ Չավուշ, սվինավոր
զինվորներով շրջապատված, զնդանեն դուրս կհանվի շղթայակապ և
գազանային ծեծի կենթարկվի: Կպառկեցնեն զայն զորանոցին առջևի
ավազանին սալերուն վրա և մոռնետիկը կսկսի կանչել. «Զեյթունի բար-
ձունքը յոթը հարյուր հոգի, մոնչելով նստած է առյուծներու պետը,
Նազարեթ Չավուշն է անոնց պետը»: Այս անգամ բարձին վրա նստելը
աճուրդի կդնեն. նստելու պատիվը կվիճակվի Ալի Հայտարին: Ան հե-
րոսի բերնին դրված բարձին վրա նստելով մեկ կողմե կսկսի գավազանի
հարվածներ տեղացնել, մյուս կողմե ծաղրական և անարգական բացա-
կանչություններ ընել, ինչպես՝ «Հայոց թագավորը, առյուծներու պետը,
Զեյթունի ղեկավարը, 20 տարի առաջ մեր հավատացյալ եղբայրները
այս դռնեն կախողը, մահը արհամարհողը» և այլն: Ի վերջո, ծափերու
և հուռոտաներու մեջ, ոտքերեն քաշկոտելով, ուշակորույս՝ զայն կտանին
ու կնետեն իր նկուղը, ուր կգտնվեր նաև իշխանագուն Խաչիկ Յաղուպ-
յանը:

Մյուս կողմե խուզարկությունները սկսած էին: Թուրք իշխանություն-
ներ լավ գիտեր, թե ղեկավարությունը ձերբակալելով և չեղքացնելով
չէր կարող բոլորովին հաշվեհարդարի ենթարկված նկատել Զեյթունը,
ուստի ան անհրաժեշտ նկատած էր նաև՝ զինաթափ ընել ողջ ժողո-
վուրդը: Այս մարդին մեջ ևս անոնք հաջողեցան դժբախտաբար կրկին
օրվան գավաճաններուն աշակցությունները:

Նազարեթ Չավուշի նորաշեն տան պատին մեջ գտնվեցան քսան-
հինգ հատ «մավզեր» հրացան: Անոնցմե հինգ հատը Ներսես եպիսկո-
պոս Դանիելյանը՝ Հալեպի առաջնորդ եղած ժամանակը, Մարկանյան
Հաճիի միջոցով հորս զրկած էր: Այդ զենքերեն մեկը հայրս Մարկան-
յանին տված էր, որ իր կարգին, Հայկ Ասմընյանի գիտությունամբ, նվի-
րած էր Նշան Եղեկիելյանին: Հայկ, անձնական նկատումներով, կմատնե
Հաճի Մարկանյանը, տեղեկացնելով որ ան պահած զենք ունի: Այս վեր-

շինը կձերբակալվի և գավազանի հարվածներու տակ կխոստովանի, թե Եզեկիելյանն ստացած է այդ զենքը. խուզարկութուններն հետո զենքը կգտնվի: Թիվեն կճշտվի, որ Հալեպի զինվորական բերդեն գողցված 75 զենքերեն մեկն է ան: Մարկանյան կստիպվի իրողութունը պատմել՝ երբ բոլոր ուրացումները անօգուտ կդառնան: Մեր տան պատին մեջն գրտնրվածները ևս նույն զենքերն էին, զոր հայրս ստացած էր ժամանակին: Այս խոստովանութունը պատճառ կդառնա, որ Դանիելյան եպիսկոպոսը և թողատի առաջնորդը ձերբակալվին և կախազան բարձրացվին, որպես պետական զենքերու մաքսանենդներ:

Սեպտեմբեր 29-ին, հինգշաբթի առավոտյան, Մարաշի ճամփուն երկայնքը, մինչև Ճիհանի ափերը, զինվորական պահակներ սպասողական դիրք գրաված էին: Մինչ զինվորները զույգ կարգի վրա շարված կսպասեին, փողի մը խուլ ձայնը կտարածվի միջոցին մեջ: Ամեն ոք դուրս կելլե սրտադող և գլխահակ: Փշաքաղիչ տողանցք մը պիտի կատարվեր այդ օրը: Յուրաքանչյուր զեյթունցիի սրտեն մաս մը պիտի բաժնվեր և բանտարկյալներուն հետ պիտի հեռանար հույսը՝ վրեժի և պայքարի: Արտասուքներու տաք կայլակներեն շիկացած աչքեր անհամբեր կսպասեին դժոխքի տան՝ զորանոցի դռներու բացումին: Փողի ձայնն վերջ կբացվին դռները և կը լսվին շղթաներու ձայները ու զինվորականներու կտրուկ հրամանները:

Թափորը կշարժի, և ահա կտողանցեն տխուր, մռայլ դեմքերը ազատատենչ կալանավորներուն: Անոթութունն ու անքնութունը բացահայտ կերևեին անոնց դիմագիծերեն և նայվածքներեն:

Բանտարկյալները շղթայակապ ու մեկիկ-մեկիկ դուրս կհանվին: Նազարեթ Չավուշ կիսամեռ, կապերտի մը մեջ դրված, դուրս կհանվի և կբեռցվի իշու մը վրա: Կարավանը տակավ կհառաջանա: Առաջնորդ վարդապետ Գարանֆիլյան կալանավորներուն առաջինն էր. անոր ետեվեն կբալեին Եղիա և Նշան Նորաշխարհյանները, Խաչիկ Յողուպյանը, Նշան Եզեկիելյանը, Փանոս Չաբրյանը, Ավետիս Պոյամյանը, Փանոս Չոլագյանը՝ իր երկու որդիներով, ապա այլ վաթսուն հայտնի կալանավորներ, որոնցմե վերջ երկու հարյուր հիսուն երիտասարդներ, բոլորը շղթայակապ: Կփոխադրվեին նաև կենդանիներու վրա բեռցված 250 պետական և 1150 տեղական զենք, բոլորը զեյթունցիներեն գրավված:

Մինչ կալանավորները կտարվեին, անդին՝ Մարաշի մեջ, թուրքերը կպատրաստվեին «հարսնիք» ընելու: Անոնց նախապես հայտարարված էր հերոսներուն շղթայակապ ճամփա ելլելը և քաղաքին մոտենալը: Մարաշի թուրք խուժանը խանդավառութենե գինուցած, անհամբեր կըս-

պասեր զեյթունցիներուն տառապանքն ու խաչելութունը դիտելու:

Չեյթունցիներու պատկառելի կարավանին առջևն հոխորտանքով կբալեր Ալի Հայտար փաշան՝ շրջապատված իր սպայակույտով: Կալանավորներու թափորը կհառաջանար ոստիկաններու հսկողության տակ: Հայտարը, հաղթանակեն գինով, դիվային նոր ծրագիրներ կորոճար: Անոր կհետևեին երկու ստորին դավաճանները՝ Մելքոն և Կարապետ, որոնք նույնպես գոհ իրենց մատնության արդյունքեն, մեծամեծ պատիվներու արժանանալու հույսով, կընկերակցեին թափորին:

Չեյթունի բանտարկված զավակները, գլխահակ և տխուր, արյունոտ աչքերով, անզոր, կտանեին անմարդկային նախատինքներն ու տառապանքը:

Կալանավորներեն 25-ամյա քաջակորով երիտասարդ մը՝ Մինաս Աբարդյան, գառագեղի մեջ բանտարկված առյուծի մը նման, ի տես իր սիրելիներուն ողբին ու լացին, մոռցած իր տառապանքը, կերգե իր բովանդակ սրտի մաղձով. «Մի հպարտանար, մի հպարտանար, բեյս, քեզմե բարձր աստված կա. եթե աշխարհ մնար, Սողոմոն իմաստունին կմնար» երգը:

Կարավանը նույն օրը ժամը չորսին իջևանեցավ այն վայրը, ուր քսան տարիներ առաջ հայրս բարձրացուցած էր ապստամբութեան դրոշմ թուրք իշխանութեան դեմ՝ «Ազատութուն կամ մահ» պոռալով. Բերդիզ Չայը, որ բազմաթիվ հիշատակներ ուներ իր ծոցը պահած, ահա, իջևանը կդառնար օրվա կալանավորներուն: Բնութունն ալ կարծես կամբողջացներ հայուն տառապանքը: Անձրևի հորդ տեղատարափ մը առավել ևս թշվառացուց խլյակ դարձած հերոսները: Բանակը պատսպարվեցավ վրաններու ներքև, մինչ կալանավորները, մինչև արևածագ, մնացին անձրևի տակ:

Ալի Հայտար իր վայրագ կիրքը գոհացնելու համար կմոտենա Նազարեթ Չավուշին, որ կզառանցեր իր տառապանքներուն մեջ ու կըսե.

— Բերդիզ Չային մեջ թնդանոթները գոռացին, Նազարեթ Չավուշ... — Ապա կշարունակե. — Մոտ օրեն եվրոպացիները Կիլիկիո մեջ հայ իշխանութուն պիտի հայտարարեն եղբր...

Հաջորդ օրը, արևածագին, կարավանը կշարունակե իր գողգոթան Գափու Չայի զառիվերեն: Ժամը 13-ին Ախլըր Տաղի ծանոթ ճամփայն, Մասլախի քովն կմոտենան Մարաշին:

Նախօրոք հայտարարության համաձայն, Մարաշի շրջակայքի թուրք բնակչութունը խուժած էր քաղաք տեսնելու համար զեյթունցի կալանավորները: Նվագ, պար, հրաձգութուն, ձիարշավ... Կարավանը երբ

մոտեցավ ամբոխին, Ալի Հայտար կալանավորները զուգ շարքի վրա կայնեցնելով, զանոնք մի առ մի կներկայացնեն վայրագ խուժանին.

— Ահա եկավ... այսինչը...

Խոճաններ և մոլլաներ բարձրաձայն գովաբանական մաղթանքներ կհայտնեին սուլթանին կենացը: Պատկերը կփոխվի հանկարծ: Հրահանգ կտրվի վերեն, որ յուրաքանչյուր թուրք մոտենա կալանավորներուն ու անոնց երեսին թքնելէ հետո հայհոյե ու անցնի: Սուլն լրբենի արատողությունը կավարտի Ալի Հայտարի կողմե խմբանկար մը առնել տալէ վերջ: Հրեշը, կալանավորներուն մոտը կանգնած, հիշատակ մը կուզե ունենալ իր այս հաջողության համար: Պահ մը ետք ան կհրահանգե ձեցնել կալանավորները Մարաշի բանտը:

Հաջորդ առավոտ դարձյալ կկրկնվի սուլն արարողությունը: Վաղ առավոտեն մունեհտիկ մը քաղաքին մեջ կհայտարարե, թե կալանավորները պիտի պտտցվին քաղաքի փողոցներուն մեջ, ուստի ժողովուրդը կհրավիրվի ներկա գտնվիլ «հաղթանակի տողանցքին»:

Գհոլն ու զուռնան կգոռան հրապարակին վրա:

Ահա թափորը: Ալի Հայտար կառաջնորդե խումբը: Իր ետևեն կուգան առաջնորդ հայր Գարանֆիլյանը լանջախաչը կուրծքին և ապա՝ շորս մոլլաներ, յուրաքանչյուրը կապերտի մը մեկ ծայրեն բռնած, որուն մեջ անգլած էր Նազարեթ Չավուշի կիսամեռ մարմինը, զոր կտանին քաշաշելով:

Յուրաքանչյուր թուրք հանդիսատես կմոտենա գերված առյուծին, ձեռքն ու կհայհոյե և ապա իր կարգը կուտա հաջորդին:

Բոլոր կալանավորներն ալ նույն արհամարհանքին ու նախատինքին կենթարկվին, մինչ մունեհտիկը կպոռա. «Ահա զեյթունցի անհավատները և անոնց զզվելի պետ Չավուշը: Աստված մեր թագավորին և Ալի Հայտար փաշային երկար կյանք շնորհե»:

Բանտին սենյակները կալանավորներու ողբեն ու կոծեն, անոնց անտճառված շարչարանքներու վայնասունեն, գավազանի շառանքներն արժուխային դարձած էին: Մինչ անդին, իթթիհատի ակումբին մեջ Ալի Հայտար, երեսփոխան Ճին Գատիրը, ղեղազորձ Լուսթֆին և Հասան Ղազատե Զիյան զիվային նոր ծրագիրներ կորոճային: Այն մտավախուհամբ, թե Նազարեթ Չավուշ կապաքինի կամ քաղաքական անակնկալ զազաշրջումով մը կազատվի, անոնք կորոշեն իսկույն անոր կյանքին վերջ տալ:

Չորրորդ գիշերը Ալի Հայտար և ղեղազորձ Լուսթֆի այցելության պատրվակով բանտարկյալներուն մոտ կերթան. կես գիշերին կմտնեն Նա-

զարեթ Չավուշի նկուղը: Լուսթֆին կմոտենա ընկճված և վերավոր իշխանին և գավազանի հարվածներեն բացված վերքերուն մեջ թուլն կներարկե: Կես ժամ վերջ «վրեժ, վրեժ» մրմնջելով կավանդե իր հոգին անզուգական մեծ հերոսը, իր զինակից կալանավորներու հորդ արտասուքին մեջ:

* * *

Արևը տակավին հորիզոնեն չէր բարձրացած, երբ լուր կտրվի Մարաշի առաջնորդարանին, որ անմիջապես քահանա մը զրկեն, թաղելու համար Նազարեթ Չավուշը: Բոթը կտարածվի և ժողովուրդը կփութա առաջնորդարան, խնդրելով առաջնորդեն, որ թաղումը հետաձգել տա, սակայն այդ անկարելի կըլլա: Նույն գիշերն իսկ, Ալի Հայտարի հրամանով ու Տեր Հակոբ քահանայի ձեռամբ, հերոսը կթաղվի 15 զինվորներու հսկողության տակ, ազգային գերեզմանատան մեջ, հեռու իր սրտահատորներեն, իր հողեն, որոնց ազատության և երջանկության համար տարիներ անընդհատ տառապած ու խաչված էր:

Ալի Հայտար 40 օր հսկողության տակ կառնե գերեզմանը, որպեսզի ղրկալը շառեվանգվի իր հայրենակիցներուն կողմե:

Կալանավորներեն առաջնորդ հայր սուրբը, Նշան Եզեկիեյանը և Խաչիկ Յաղուպյանը Հալեպ կղրկվին դատվելու, իսկ մյուս կալանավորները Մարաշ կպահվին: Նազարեթ Չավուշի երեք որդիները— Ռուբեն, Հակոբ և Լեոն— Ալի Հայտարի Զեյթունեն մեկնելեն հետո ազատ կարձակվին և կվերադառնան տուն: Բայց քանի մը օր հետո կրկին ձերբակալվելով Մարաշ կտարվին:

Զեյթունի մեջ պետական-վարչական նոր փոփոխություններ կկատարվին: Հակոբ Նորաշխարհյանին տեղ ելեմտական քննիչ կնշանակվի մարաշցի թուրք մը Մոհամմետ Զեքի անունով: Հարյուրապետ-ոստիկանապետ Միթարի տեղ կնշանակվի Սյուլեյման անունով թուրք մը:

Զեյթունցիներուն կյանքը հետզհետե ավելի անտանելի կդառնա: Խոշտանգում, ծեծ, հալածանք աներևակայելի թափով կշատնան և կտարածվին բոլոր շրջանակներուն մեջ: Ոչ ոք կհամարձակի նույնիսկ բառ մը արտասանել օրվա կացության շուրջ: Ամեն ոք ստիպված էր երեկոյան ժամը հինգեն հետո քաշվիլ իր տունը: Կամայանան քաղաքն ու գյուղերը: Խավարին հետ ամեն օր կիջնե սարսափն ու վիշտը՝ հայ տուններեն ներս: Փողոց մնացողները ձերբակալվելով կտարվին՝ ծեծի տակ

քավելու համար իրենց ուշացումի մեղքը: Ողջերը երանի կուտան մեռնողներուն: Դժբխտ անակնկալները դամոկլյան սուրի նման կախված կմնան ամբողջ Զեյթունի վրա:

Կաթողիկոսական նոր փոխանորդ մը, նշանակված Սիսի կաթողիկոսարանեն, կհասնի Զեյթուն: Խաչատուր վարդապետ Տեր Ղազարյան հազիվ Զեյթուն հասած կտեղեկագրե Սիս, տեղվուն կացութիւնը պարզաբանելով, խնդրելով միաժամանակ, որ վերջ տրվի անհանդուրժելի կացութեան: Սահակ կաթողիկոս Խաչատուրյան տեղեկագրի ստացումեն անմիջապէս հետո կմեկնի Հալեպ և կդիմե կուսակալին, որ իր կարգին կհեռագրե Պոլիս Բ. Դոան և կրոնապետին՝ Շեյխ-ուլ-իսլամին: Սույն դիմումնագիրը կունենա իր բարերար արդունքը: Հայր Գարանֆիլյան, Եզնիկեցի, Եղիա և Նշան Նորաշխարհյանները, Փանոս Չազրյան, Ավետիս Պոյամյան և Նազարեթ Չավուշի երեք որդիները ազատ կարձակվին:

Հայր սուրբը, սակայն, երեք ամիս հետո կրկին ձերբակալվելով կտարվի Տեր-էլ-Չոր (Դեյր էզ-Չոր), ուր ամբողջ տարի մը իր հոտին հետ անլուր տառապանքներ կրելի հետո կվախճանի:

Թուրքիա պատերազմի մեջ էր Գերմանիո կողքին: Ամենուրեք ահ ու սարսափ կտիրեր: Հակակառավարական որևէ պզտիկ դիտողութիւն մ'ընողը խստիվ կպատժվեր: Պատերազմական ատյաններ կազմված ըլլալով երկրին բոլոր կողմերը, հանցավորները կհանձնվէին զինվորական ատյանին: Զեյթուն արյուն-արցունքի մեջ կտվայտեր: Ոչ ոք կհամարձակեր կառավարութեան մասին կարծիք հայտնել: Շատերը կբանտարկվէին փոքրիկ կասկածի մը վրա:

Քաղաքապետ Հայկ Ասմընյան, իր խիղճն ու զգացմունքը ծախած, թուրք վանտալներուն գործակիցը եղած էր: Հյուսիսի Հյուսիս և ուտիկանապետ Սյուլեյման ձեռք ձեռքի տված նոր ոճիներ կպատրաստեին, անոնք քմահաճ կերպով կբանտարկեին, կծեծեին և կհալածեին: Մարաշի բանտեն ազատված կալանավորներեն մաս մը վերադարձած էր Զեյթուն, որոնք ի տես այդ դժոխային վիճակին արցունքոտ աչքերով կողբային իրենց պետին՝ Նազարեթ Չավուշի մահը և ակամա կհանդուրժեին օրվա կացութեան:

1 հունվար 1915-ին, Նոր տարվան առթիվ բանտեն ազատվածներեն Եղիա և Նշան Նորաշխարհյան, Խաչիկ Յաղուպյան, Փանոս Չազրյան կայցելեն ողբացալ Նազարեթ Նորաշխարհյանի տունը: Եղիա, տիրող անել կացութենեն միակ ելք կնկատե ապստամբելը՝ Զեյթունի ճակատին քսված արատը մաքրելու համար: Թեր ու թեմ վիճաբանութիւններ

ետքը բոլորն ալ համամիտ կգտնվին. և այդպէս կորոշվի Խաչեր Միքայել Նորաշխարհյանը Տյորթյուլ, Մանվել Ղարիպյանը Հաճըն ուղարկել՝ սույն քաղաքներու հայրենակիցներուն տրամադրութիւնը հասկնալու համար, այն պարագային երբ Զեյթուն ապստամբի:

Սուրհանդակները ճամփա ելլելեն վերջ, մինչև անոնցմե պատասխան մը գալը, Մարաշեն դաշնակցութեան ներկայացուցիչ Մարտիրոս Թերզյան լուր կղրկե, խոստանալով, ի պահանջել հարկին, 4—500 երկտասարդ փութացնել Զեյթուն, բայց զեյթունցիք նման խոստումներու հենելով չէ, որ որոշում պիտի տային: Անոնք որոշած էին մահը արհամարհել «Մահ իմացեալ անմահութիւն է» սկզբունքին հետեւելով:

1915 փետրվար 14-ին, Տյառնընդառաջի օրը լուր տարածվեցավ, թե կառավարութիւնը հրահանգած է բոլոր զինվորական զենքերը փոխադրել պատերազմական ճակատ, որոնց փոխարեն պահակ ոստիկաններուն պիտի տար ավստրիական զենք:

Փանոս Չազրյան, որուն տունը պալատին կից էր, անմիջապէս ժողովի կկանչե Մեսրոպ Չոլագյանը և Խաչիկ Յաղուպյանը: Անոնք միասնաբար կորոշեն այդ զենքերը գրավելով ժողովուրդը զինել: Յաղուպյան և Չոլագյան կփութան իրենց տունները՝ համակիրներ պատրաստելու համար: Երջանիկ Տիրացույան՝ Յաղուպյան թաղեն, կկոհհե նման շարժում մը և անմիջապէս կփութա կրթական տներն Հովհաննես Ահարոնյանի քով: Քիչ հետո երկուքով անոնք կփութան բերդ, Հաճի Պապա աղայի քով, խնդիրը անոր տեղեկացնելու: Այս վերջինը, քաղաքական ժողովի ատենապետի հանգամանքով, անմիջապէս ս. Աստվածածնա վեհարանին մեջ ժողովի կհրավիրե առաջնորդ Խաչատուր վարդապետը և ժողովականները: Ժողովը կորոշե մասնավոր պատվիրակներ զրկել Չազրյան և Չոլագյան զեկավարներուն, զանոնք զգաստութեան հրավիրելու համար, իսկ հայր Խաչատուր և Հայկ Ասմընյան կղրկվին պալատ, առ ի զգուշութիւն լուր տալու համար կառավարութեան: Հաջորդ առտուն կանուխ, գայմագամ Հյուսիսի Հյուսիս և ոստիկանապետ Սուլեյման գործի լծված էին: Զորանոցն բերված 200—300 զինվորներով անոնք լեցուցած էին կառավարչատունը: Գիշերվա հսկողութիւնը խստացված էր, որպէսզի ոչ ոք կարենար տունե տուն անցնիլ: Առաջին անգամ կառավարչատուն կանչվեցան Փանոս Չազրյանը և Մեսրոպ Չոլագյանը, որոնք իրենց օձիքը ձեռք չտալու համար քաղաքն հեռացան: Ապա կանչվեցան Եղիա և Նշան Նորաշխարհյանները, որոնք ևս մերժեցին ներկայանալ:

Սույն միջոցին զինվորական փախստականները բավական շատցած

էին և լեցվեր էին լեռները: Փանոս Չագրրյան և Մեսրոպ Չոլագյան, Զեյթունի հարավ-արեւելքը գտնվող Ալապոզան գյուղը կայցելեն ամսույն 17-ին և հոն կիմանան, թէ 15—20 զինվոր, Մարաշէն բերվելիք հրացաններու հսկողութեան համար, մինչև Կյուրյուտիւնի կիրճը եկած են և այդ գիշեր Ալապոզան գյուղը պիտի գիշերեն: Գյուղին վիճակը աներևակայելի էր. զինվորները նույնիսկ հանդգնած էին ընտանեկան սրբութիւնները պղծել:

Փանոս և Մեսրոպ, ի լուր նմանօրինակ ճիվաղային արարքներու, անմիջապէս կորոշեն անոնց հեղինակներուն արժանի դասը տալ: Հագիվ գետեղերք՝ Զեյթիք իջած, անոնք կհանդիպին այդ զինվորներուն, որոնք գիշերը գործած խենեշուխանաց մասին կխոսեին պարծանքով: Կայծակնասիրտ Փանոս անշարժութեան կհրապարակէր զանոնք: Հրացանները կգոռան և անմեղ ու անզեն խեղճ գյուղացիները խոշտանգողները թաքստոց կփնտրեն: Մեծ մասը առաջին իսկ համազարկին կսպանվին, երեք հոգի ջուրի հոսանքէն կխեղդվին, իսկ երկու հոգի ալ մացառուտներու մեջ կպահպտին: Անձնազոհ երիտասարդները անմիջապէս սպանվածներու քովէն 13 «մավգեր» հրացանները առնելով կմեկնին: Իշխան Եղիա, երբ կլսէ Չագրրյան-Չոլագյանի ընդհարումը, անմիջապէս օգնութեան կղրկէ իր հորեղբորորդիներէն Նշանը, Խաչերը և տղան Պապիկը՝ խումբ մը երիտասարդներով, որոնք դեռ կոփվի վայրը չհասած կտեսնեն թէ ամեն ինչ բարեբախտաբար վերջացած է: Քիչ ժամանակ ետք Եղիա ևս իր զինակիցներով կմիանա այս վերջիններուն և Սյումբբուլ Գայայի մեջ իր նախագահութեամբ ժողով մը կգումարէ, ուր ներկա կըլլան Նազարեթ Չավուշի որդիներէն Հակոբը և Ռուբինը: Ժողովը կորոշէ հեռագրաթելերը անմիջապէս կտրել, հարաբերութեան միջոցները խզել, հուսկ ապա վանքը իրենց կեդրոն ընտրելով՝ բարձրացնել ապստամբութեան դրոշմ:

Երիտասարդութիւնը ղեկավարութեան որոշումները կդիմավորէ մեծ ուրախութեամբ: Խաչեր Միքայել Նորաշխարհյանի կողմէ Հայկ Ասմընյանը մահափորձի ենթարկելու փորձի մը կձեռնարկվի, բայց, դժբախտաբար, կձախտղի: Նույնիսկ ընդդիմադիր տարրերը կփութան միանալ ազատագրական շարժումին. օրինակ՝ Հայկ Ասմընյանի պղտիկ եղբայրը ևս՝ Փանոսը, որ Այնթապի Կիլիկյան ձեմարանի ուսանող էր, կփութա վանք միանալու համար ապստամբներու խումբին:

Գայմագամ Հյուսիսի Էյուսնյու և ոստիկանապետ Սյուլեյման, սարսափահար, կքծնէին ասոր անոր առջև: Գայմագամ մեկ կողմէ կհեռագրէ Բ. Դոան, ներում խնդրելով բանտարկյալներուն համար, որոնցմէ 60 կալանավորներ կգտնվէին տակավին Օսմանիէի բանտը, մյուս կողմէ

Ս. Աստվածածնա վեհարանին մեջ՝ Եղիայի և Հակոբի ոտքերուն փարած՝ «մեր կյանքը ձեզմէ կախում ունի» աղերսը կընէր: Ոստիկանապետ Սյուլեյման ևս Ռուբին Նորաշխարհյանի ոտքերուն ինկած կպաղատի: Մուսուհի գաղըն՝ էլպիսթանցի Մուհամմետ Զեքին փախած, զորանոց ապաստանած էր: Դատախազն ու դատարանի նախագահը՝ Կուլմանեսյան Ասատուր էֆենդիին տունը, իսկ մնացյալ թուրք պաշտոնեութիւնը կառավարական շենքին մեջ փակված իրենց ճակատագրին կսպասէին:

Զեյթունի կրօնական և աշխարհական պետերը ս. Աստվածածնա Մայր եկեղեցիին մեջ Տիրամոր պատկերին առջև պատվո խոստում կուտային Եղիային, որ այսուհետև անկեղծ գործակիցներ պիտի դառնան՝ բարոյապես և նյութապես օգնելով իրեն: Զեյթունը՝ իբրև մեկ սիրտ ու մեկ հոգի, վճռած էր այլևս գործել միասնական ճակատով:

Փետրվարի 21-ին, հինգշաբթի երեկոյան, Մարաշի կառավարիչ Մուսթաֆա Ահմետ Մյումթազ, Ալի Հայտարի փոխանորդ, 2—3000 զինվորներով կհասնի Զեյթուն: Լեռնականները կորոշեն անոնց զորանոց մուտքը արգիլել, մինչ առաջնորդ հայր Տեր Ղազարյան և ազգային իշխանութիւնը կընդդիմանան, առարկելով, թէ հարկ չկա մտահոգվիլ նման փոքր ուժէ մը, ավելցնելով նույն ատեն, թէ. արդէն մեր փափաքն էր ժողովուրդը զինել, ասիկա աստվածատուր բարիք մըն է մեզ համար: Հաջորդ առավոտ, կառավարիչ Մուսթաֆա Մյումթազ, 500 զինվոր կիջեցնէ քաղաք և պալատին մեջ կզետեղէ: Անմիջապէս անոր կմիանան նախկին դավադիրներ և կխոստանան ամեն գնով օգնել պետական բանակին: Քաղաքին մեջ երկպառակութիւնը նորէն կսկսի: Դավադիրները, թշնամիին միացած, պահակներ կտեղավորեն քաղաքին այլ և այլ անկյունները: Կացութիւնը վտանգավոր կդառնա: Ազգային իշխանութիւնը պատրիարքարանին և կաթողիկոսարանին հնազանդութիւն թելադրող հեռագիրները բառ առ բառ գործադրելու միջոցներ կսկսի ձեռք առնել:

Փետրվարի 25-ին ապստամբութիւնն նախապատրաստելու կողմնակիցները, ինքզինքնին խաբված նկատելով, կորոշեն քաղաք իջնել և քաղաքապահ զինվորները զինաթափ ընել: Անոնք կհրահանգեն երիտասարդութեան, որ ժամը 11—12-ին եկեղեցիներուն կոչնակի ղողանջը լսելուն պէս մտնեն մոտակա պահականոցը և պահակ զինվորներուն հետ զինաթափ ընեն նաև դավադիրները: Ամբողջ երիտասարդութիւնը կազմ ու պատրաստ կսպասէր ազդանշանին՝ կոչնակի ղողանջին:

Նորաշխարհյան Խաչեր Միքայելը քաղաք իջնելով, իր քեռայրին՝ Ասատուր Կյուլմանեսյանին կպատմէ հեղափոխականներու ծրագիրը: Այս

վերջինը իր կարգին սույն ծրագրի մասին կտեղեկագրե առաջնորդ Ղազարյանին, որը անմիջապես ժողովի կկանչե կրոնական և քաղաքական պետերը: Ժողովին մեջ կորոշվի՝ առ ի զգուշություն կառավարութեան տեղեկացնել իրողությունը: Հետևանքն ա՛յն կըլլա, որ կառավարութեանը պահակներուն թիվը կկրկնապատկե, իսկ ժողովականները կորոշեն երիտասարդներուն մուտքը արգիլելու համար լրիվ կազմով դիմավորել զիրենք:

Ամբողջ քաղաքը շարժման մեջ էր: Դավադիրները լապտերներով, ջահերով, հոծ բազմութեամբ մը վանք կերթային, արգիլելու համար քաղաքին վրա կատարվելիք հարձակումը: Մեր տան դռան առաջ հոծ բազմություն մը կերևար: Եղբայրս՝ Հակոբ, երբ նկատեց դավադիրներու քայլը և իրենց ծրագրին հայտնվիլը, շափազանց նեղված ու վրդովված, գուշակեց ապագա դժբախտ պատահարները, որովհետև լուսահոգի հայրս միշտ կըսեր. «Հովիվը շարթնցուցած շունը արթնցնելու զգուշացեք. շունը երբ արթննա, կուգա բոլորիդ բզիկ բզիկ կրնե»:

Այդտեղ, մեր դռան առջևը, ժողովականներուն կողմն պատվիրակություն մը կղրկվի վանք, զգաստութեան հրավիրելու համար այնտեղ գտնվողները:

Պատգամավորներն էին՝ իշխան Նշանի եղբայր Կարապետ Նորաշխարհյանը, Փանոս Չազրյանի եղբայրը և էմանվելի հայրը՝ Պետրոսը (էմանվել Չազրյանը զինվորական քսանապետ էր և Մարաշի պահեստներուն հսկիչը: Երբ լսեր էր իր հայրենակիցներուն վրա ի գործ դրված խժոժությունները, արհամարհեր էր իր պաշտոնը և զենքը ձեռքին միացեր հորեղբորը՝ Փանոսին) և Մեսրոպ Չուլագյանի հորեղբայրը՝ Վարդավառը:

Ապա, ժողովական և ժողովուրդ կղիմեն Ս. Աստվածածնա եկեղեցիի իրենց ժողովատեղին, սպասելով այնտեղ պատվիրակներու վերադարձին: Ժողովականներուն տված որոշումը անսպասելի էր. անոնք այդպիսով թե՛ իրենց խոստումը կգրժեին և թե՛ դավադրություն կսարքեին: Վանք հավաքվածները, արհամարհելով իրենց դիմող պատվիրակությունը, անհապաղ կփութան Զեյթուն, իրենց հեղափոխական ծրագիրը իրագործելու համար, բայց ավա՛ղ... Կացությունը շրջված էր. զինվորները կրկնապատկված էին և դավադիրներուն հետ միասին աչալըջութեամբ կհսկեին: Երիտասարդները թեպետ կգործակցեին ապրստամբութեան կողմնակիցներուն, սակայն այդ բավական չէր:

Հակառակ այդ վիճակին, Գևորգ Ֆինկյան հանդուգն երիտասարդը դաշույնը ձեռքին կհարձակի առաջին պահականոցին վրա և շորս զին-

վոր գետին կփռե, հինգերորդին ալ, դաշույնը կտարած ըլլալուն, ակռայովը մեկուն քիթը կխածնե, կփրցնե, բայց ինքն ալ, դժբախտաբար, անոր գնդակին զոհ կերթա:

Զորանոցին մեջ զինվորները օրըստօրե կշատնան: 5-րդ բանակի ընդհանուր հրամանատար Խուրշիտը 7—8000 հոգիե բաղկացալ բանակի մը գլուխը անցած Գամասկոսեն, իսկ Ղալիպ բեյն ալ նույնչափ բանակով մը Ատանայեն դեպի Զեյթուն կհառաջանան: Մինչև Պուլազ-ձենց բլուրը զինվորական խիստ հսկողութեան տակ էր, և զինվորները օրն ի բուն պատենչ շինելով, խրամ բանալով հանդերձ մարզանք կընեին: Իսկ մերինները զբաղված էին վանքին շուրջը ամրացնելով: Այսպես՝ մինչև մարտի 10-ը, երկուստեք, դեմ առ դեմ կպատրաստվեին: Մեկ կողմն արդիական զենքերով կազմակերպված բանակ մը կար, մյուս կողմն՝ 40 անձնազոհ քաջեր միայն քանի մը «մավղեր» և շազմազլը հրացաններով:

Զեյթունցիք, դժբախտաբար, որեւէ միջոց չունեին նոր ռազմամթերք ապահովելու: Այն թուրք պատասխանատուները, որոնք մի քանի օր առաջ իրենց գարշապարները կլիղեին, այսօր դաղաններ դարձած, կձրգտեին զիրենք բնաջնջել՝ իբրև խոռովարար և անբաղձալի տարր:

Քաղաքն ու վանքը իրարմե անջատված էին: Ժողովուրդը համակերպած էր տեղական ազգային իշխանութեան հորդորներուն, կաթողիկոսարանի և պատրիարքարանի կողմն տեղացող հեռագիրներուն, զինվորական հրամանատարին առատ խոստումներուն:

Մարտի 9-ին, անձրևոտ իրիկուն մը, զերմանացի մըստըր Պլանքի նախագահութեամբ, Մարաշեն Զեյթուն կհասնի պատվիրակություն մը, բաղկացած հայ լուսավորչական համայնքեն՝ Տեր Սահակ քահանայեն և Կոստան Վարժապետյանեն, հայ կաթողիկ համայնքեն՝ Տ. Խորեն վարդապետ Կապուտյանեն և հայ բողոքական համայնքեն՝ վերապատվելի Ահարոն Շիրաճյանեն:

Պատվիրակությունը անմիջապես քաղաքին կրոնական և քաղաքական պետերը ժողովի կկանչե և կառաջարկե անոնց հանձնել վանքը գտնվողները: Հրավիրյալները իրենց անկարողությունը խոստովանելով, կխնդրեն որ պատվիրակությունը անձամբ երթա վանք ու հարկ եղածը տնօրինե:

Հաջորդ առտու, պատվիրակությունը, հրամանատար Խուրշիտ բեյի արտոնութեամբ, վանք կփութա քաղաքապետարանի բժիշկ՝ դոկտոր Երվանդ էլմաճյանի ընկերակցութեամբ: Եղիա, Նշան, Փանոս և Մեսրոպ վեհարանին մեջ սիրով կընդունին պատվիրակները: Վիճաբանությունը

տուր հանգամանք կստանա: Նշան և Մեսրոպ կհայտարարեն. «Ցավալի է, որ Գերմանիոս պես քրիստոնյա պետութիւն: մը թրքական ուժրագործութիւնը կքաջալերե. հայերու դժբախտութիւնն պատճառը ինքը՝ Գերմանիոսն է»:

Երկար վիճաբանութիւնէ վերջ վանքը գտնվողները պատվիրակներուն կպատասխանեն. «Մեր նշանաբանն է՝ մահ կամ ազատութիւն, ամոթ քրիստոնյա պետութիւններուն, մանավանդ Գերմանիոս: Մենք որնէ խոստումի չենք վստահիր, որովհետեւ թրքական պաշտոնյան լավ կճանչնանք: Կիսնդրենք ձեզմէ վանքեն հեռանալ: Տակալին թարմ են Ալի Հայտարի և անոր ընկերացող դավաճաններ Մելքոնի ու Կարապետի նենգ խոստումները: Գացեք և հայտնեցեք ուր որ անկ է, որ Հայտարի բացած վերքերը տակալին չեն սպիացած. թուրքերը մեզ ոչ թէ կենդանի, այլ նույնիսկ մեր դիակները շպիտի կրնան վայելել: Գիտցեք, թէ մեր կյանքը աժան պիտի չծախենք»:

Հրամանատար Խորշիտ նման պատասխան մը լսելով շանթահար կըլլա: Ան կհրամայե պատվիրակութիւն, իսկույն, առանց ժամանակ կորսնցնելու հեռանա Զեյթունէն, որովհետեւ ինք պիտի ուժեղանայ ամբողջ քաղաքը:

Նույն պահուն, վանքին հյուսիս-արեւելքը, զորանոցի հյուսիսը գրտնրվող Փիսիրի բլուրը կտեսնվին մեծ թիվով զինվորներ, որոնք ուղղափորձի կսկսին, իսկ այլ զինվորներ ալ քաղաք իջնելով զորանոց կփոխադրեն պետական գանձն ու գույքերը պաշտոնեւորութիւն հետ:

Ժողովուրդը հոգեկան նոպաներու, տվախանքներու մեջ կգալարի, շատ շատեր կուզեն քաղաք իջած զորքին վրա հարձակելով անոնց զենքերն ու գանձը գրավել, բայց...

Մարաշի պատվիրակները, հրամանատարի հրահանգին համաձայն, Զեյթուն իջնելով գույքերնին կտեղավորեն ձիերու վրա, որպէսզի վայրկյան առաջ քաղաքեն դուրս ելլելով ազատին: Առաջնորդին և ժողովականներուն հարցումները անպատասխան կմնան: Միայն ձի հեծած պահուն լուսահոգի Կոստան Վարժապետյան կըսե. «Փաշային բարկութիւնը չկրցանք զսպել, թույն ու մաղձ կժայթքե. մնաք բարով, աստված հետերնիդ ըլլա»:

Մարտի 11-ի հինգշաբթի օրը, արշալուստին, ամբողջ քաղաքին մեջ մեռելային լուսթիւն կտիրեր, ամեն ոք անհամբեր անակնկալի մը կսպասեր, վայրկյանները հոյ էին: Առտուն կոշնակներու զողանջը տըրտում-տխուր կարծես քաղաքին մահազգր կգուժեր: Անդին, վանքին մեջ, Եղիա իր հորեղբորորդույն՝ Նշանի, Փանոս Չագրոյանի և Մեսրոպ Չո-

լազյանի հետ ինքնապաշտպանութիւնը կկազմակերպեր: Վանքի քահանան՝ Տեր Սահակ Գալայճյան, նման Ղևոնդ Երեցին, զիշերն ի բուն հսկում կատարելով, սկիհը ձեռքին, հաղորդութիւն կուտար մարտիկներուն և քաջալերական մաղթանքներով զանոնք ճամփու կղներ:

Եղիայի անդրանիկ որդին՝ Պապիկ, 30 տարեկան երիտասարդը, հաղորդվելով, նախ կհամբուրէ քահանային ձեռքը և ապա հորը հրածեշտ տալով իր զինակիցներուն ընկերակցութեամբ, ճարպիկ զինագործ խմբապետ Մեսրոպի և 15 անվեհեր մարտիկներու հետ կհառաջանա դեպի Քարթղըքոր (Մողեսի քար)՝ վանքին հյուսիս-արևմուտքը, ամենավտանգավոր պատնէշը, ուրկէ հնարավոր էր վանքը ամեն կողմէ պաշտպանելու համար: Վանքեն պզտիկ ձորով մը բաժնված գլուղին պաշտպանութիւնը կհանձնվի Եղիայի երկրորդ և երրորդ տղաներուն՝ Խաչերին և Տիգրանին. իսկ Եղիան՝ ինքը, Նշանին և Փանոսին հետ կմնան վանքը:

Զորանոցը ևս եռուզեոյ մեջ էր: Ամեն կողմ վաշտ առ վաշտ զինվորներ կառաքվէին՝ Զեյթունի լեռներուն ծանոթ թուրքերու առաջնորդութեամբ:

Երկուստեք կազմ ու պատրաստ, պզտիկ ազդարարութիւն մը կըսպասվէր, որ շուշացավ. Պշազճենց բլուրին թնդանոթի առաջին հարվածը բախումի մը հայտարարութիւնը եղավ: Ռուսքը ճիշտ վանքին բակը ինկած էր: Ամեն կողմէ տեղատարափ ոտմբ կտեղար և գնդակ կտեղար վանքին վրա: Ոչմեկ պատասխան մերիներուն կողմէ: Կես ժամ վերջ, թշնամի հրամանատարութիւնը զարմացած վանքին անտարբերութենէն, կամ խորհելով թէ բոլորը փախուստ տված են և ներսը մարդ չկա, հրամայեց հարձակողականով մը գրավել վանքը: Թշնամին բավական մոտեցած էր վանքին, երբ մերիները պատասխանեցին և քաղաքի վրա դիակներ գետին փռեցին:

Կոնվը սաստիկ էր: Թուրք հրամանատարութիւնը, որ ստանձնած էր Սյուլեյմանը անձնապես, ի տես գերմարդկային պաշտպանութիւն ավելի կատաղած ու բորբոքած, հարձակումի հրամանները կսաստկացնէր: Ան նույնիսկ գնդակահարեց նահանջող հիսնապետ մը: Սպաները «հառաջ, հառաջ» գոռալով բանակին առջևն անցած կխոյանային դեպի վանք:

Ճգնաժամային վիճակի մատնված էին վանքի մարտիկները: Ռազմամթերքը սպառած, պաշարման շղթան հետզհետե կնեղնար, ոտմբերու տեղատարափին տակ վանքին հաստ պատերը գրեթէ կիսավեր դարձած էին, և սակայն կոնվը ահեղ թափով կշարունակվէր:

Հարյուրապետ Սյուլեյմանի սպանալից հրահանգներն սարսափած, շարք մը թուրք զինվորներ հաշողած էին վանքի արտաքին պատերուն քովի լուսանցներուն մոտենալ վանքը քարյուղով հրդեհելու համար: Այլևս ոչ մեկ հույս. մահվան տխուր ստվերը իջած էր, ահավոր խարույկահանդեսի մը կրակներուն մեջ մոխրանալու վերահաս սարսափը խորապես կհուզեր հայ հերոսներու հոգին:

Հուսահատական այս կացութեան մեջ ահա զեթունցիի խիզախ ոգին կրկին վեր կհաններ: Զեթունի պատմական անընկճելի հանդգնութիւնն ու քաջութիւնը կրկին կվերահայտնվի իր ամբողջ հասակով մեկ:

Իրավամբ ալ, Տեհրիկ կոչեցյալ Կարապետ Մելիտոնյան ու քսանապետ Մանվել Չափրջանը, առանց սպասելու զառն բացումին, որպեսզի պաշարվածները իրենց բախտը փորձեն, կնետվին հառաջ և սվիններով կհարձակին թշնամի զինվորներու վրա: Մինչ այդ, Եղիա, Նշան և Փանոս, իրենց զինակիցներով (Հարութիւն Շեֆթալյան, Համբարձում Մկրտչյան, էմմանուէլ Ղարիպյան, Պետրոս Նորաշխարհյան, Արամ Չուլագյան) արյունակալած աչքերով և անմար վրեժը իրենց հոգիներուն մեջ, կբանան մեծ դուռը թշնամիին առջև և հերոսաբար կխուժեն թուրք զինվորներուն վրա:

Ահարեկ թշնամին կնահանջե կովի դաշտին վրա թողնելով զիակները Սյուլեյմանի և տասնյակ մը զինվորներու, ինչպես նաև մեծ ավար մը ռազմամթերքի:

Նույն պահուն, Պըշագճենց բլուրեն արձակված թնդանոթի ռումբ մը բանակի զինվորներուն վրա իյնալով ծանր կորուստներ կպատճառե: Հետագային, այս կովի ընթացքին մեռնող հազարապետ Սյուլեյմանի հիշատակը հավերժացնելու նպատակով էր, որ Զեթունի անունը փոխեցին Սյուլեյմանլը, կառավարութեան հատուկ հրամանով (մինչև օրս Զեթունի անունը թրքական քարտեզներուն վրա Սյուլեյմանլը է):

Հայ մարտիկները սակայն չեն գոհանար այդ արդյունքով: Անոնք ալ ավելի խանդավառ, կնետվին հառաջ, թուրք բանակը հալածելու համար մինչև դորանոց, սակայն խմբապետները նկատի առնելով պայմանները, կարգիլեն նման արկածախնդրութիւն մը:

Զեթունցիք զիտելով թուրք բանակին խուճապահար փախուստը, կլեցվին նոր և խանդավառ հույսով մը: Մահվան սարսափը տեղի կուտա հաղթանակի երազին և հրճվանքին: Միաժամանակ, Եղիայի երրորդ զավակը՝ Նշան, վանքին արևմտյան կողմեն բացված դռնէն ներս սահելով, կհաշողի հասնիլ Զեթուն՝ գնդակի տեղատարափին տակ, «Օգնութիւն, օգնութիւն» պոռալով:

Երկրորդ սուրհանդակ մը ևս՝ Տիգրան Մարուգյան, կպատմե վանքին մեջ պաշարված հայրենակիցներուն դժնդակ վիճակը: Քաղաքի ողջ ժողովուրդը կուզեր ամեն զնով օգնութեան հասնիլ, հակառակ անջիղ և ստրկացած հոգիներու հարուցած արգելքներուն: Բայց ազդակ մը կարգիլեր զիրենք օգնութեան հասնելի: Օրը ցերեկ էր, որուն հետեանքով կարելի չէր վանք հասնիլ առանց ջարդվելու: Ամեն ոք անհամբեր արևմուտին կսպասեր:

Սակայն ավաղ... վանքին հաստ պատերը քանդված էին դորանոցն տեղացող ռումբերեն: Խումբ մը ռազմիկներ, մուխի և ծուխի մեջ անճանաչելի դարձած, գերմարդկային ճիգով մը կղիմադրեին իրենցմեջ շատ ավելի մեծ ուժի դեմ:

Միայն 40 հոգի էին զեթունցիք, որոնցմե 15-ն ալ վանքէն դուրս, Քարթոշքոր՝ Մողեսի Քար կոչված Պերզնկա լեռան ստորոտը ճամբան կպաշտպանեին: Վանքին մեջ կմնային միայն 25 հոգի, բազմահարյուր հարձակվողներուն դեմ:

Գրգռաբ Իպրահիմի առաջնորդութեամբ, հանդիպակաց բլուր էրօցն (այրած լեռ) ալ գրավելով, թշնամին արգելք կլլար որ 15 քաջերը իրենց օժանդակութիւնը բերեին վանքի կովողներուն: Սակայն վանքի թաղին բնակչութիւնը, թեպետ անգնէ, իր պարտքը լիովին կատարած էր, օժանդակելով մարտիկներուն, անոնց միջոցով պաշտպանելու համար իրենց պատիվն ու սրբավայրը:

Իրիկնամուտին, քաղաքի երիտասարդութիւնը, արհամարհելով ամեն արգելք ու հորդոր, իրենց ունեցած զենքերը գրկած, տասնյակներով կղիմեին դեպի վանք, վանքի պաշտպանութեան ի խնդիր... Դարձյալ ավաղ... Այլևս վանքը ոչինչ ուներ պաշտպանվելիք: Ռումբերուն տակ քանդված պատերով, խարխլած սյուներով, վանքը այլևս հսկա մոխրակուլտի մը տպավորութիւնը կձգեր: Երիտասարդութիւնը արյունը սրտին ու արտասուքը աչքերուն վերջին համբույրը տալով անոր ավերակներուն, կվերադառնա քաղաք:

Մույն անվեհեր մարտիկները զարմանք և հիացմունք պատճառեցին նույնիսկ թուրքերուն, իրենց հերոսական դիմադրութեամբ: Ալբանացի ոստիկանապետ Սյուլեյմանը, ի տես այդ գերմարդկային մաքառումներուն գոչած է. «Ամբողջ Պալքանյան պատերազմին այս կռիվին համահավասար ոչ մեկ մաքառում տեսած եմ»:

Արևը վաղուց հեռացած էր հորիզոնէն, մութը իր սև և տխուր թևերը տարածած էր բնութեան վրա, օրվան խոնջենքն ու ավերը հարկադրած

էր բոլորին՝ մտածել հանգստութեան մասին: Պաշարման շղթան վերց-
ված էր վանքին շուրջը:

Խմբապետական ժողովը հարկադրաբար որոշած էր նահանջել,
որով մարտիկները տխրորեն բաժնվեցան ս. Աստվածածնա վանքեն,
պաշտելի և նվիրական այն սրբատեղիեն, որուն յուրաքանչյուր քարը
սրբութուն-սրբոց էր իրենց համար:

1895-ի կռիվներուն իշխան Եղիա, իր հորեղբորորդի Նազարեթ Չա-
վուշի կողքին, ամիսներով պաշտպանած էր վանքը թուրք հորդաներուն
դեմ: Նույն այդ սրբատեղիեն էր, որ ինքը 350 երիտասարդներ առաջ-
նորդելով, Պերզնկայի կողմն թուրք բանակը կոնակեն հարվածած էր,
մեկ գիշերվան մեջ հազարավոր թուրք զինվորներու կյանքին վերջ տված
էր: 350 հոգիեն միայն երկու մարտիկներ զոհված էին՝ Գասպար Կու-
ջուկյանն ու Մինաս Ղարտանըզյանը: Ինչպես չհիշատակել 18-ամյա հե-
րոս պատանի Մինաս Ղարտանըզյանի անմահներու վայել խոյանքը,
որ միս մինակը հաջողած էր մտնել թուրք բանակին ծոցը և խուճապ
ստեղծել հոն. թուրքերը «հայերը եկա՛ն, եկա՛ն» ըսելով իրար էին
ջարդեր:

Աստվածածնա վանքեն բաժնվող հերոսները իրենց հետ բերած վան-
քի սուրբ անոթները կորկեն Զեյթունի առաջնորդարանը: Եղիա կմեկնի
վանքապատկան գյուղի իր տունը, ուր կբնակեր: Հոն ևս կխրախուսե,
կքաջալերե ժողովուրդը և կթելադրե անոնց Զեյթուն իջնել: Ապա կվե-
րադառնա կրկին վանք, կմտնե ներս, ուր մոմի մը լույսին տակ կանգ-
ներ էր Սահակ քահանան: Եղիա արցունքով իր աղոթքը կմատուցանե
Տիրոջը:

Տեր Սահակ քահանա ևս արցունքով կողողե վանքին խորանին քա-
րերը և կհետևի իր հոտին, աղոթելով. «Տեր, ուղղյա զգնացն»:

Եղիա և տեր Սահակ դուրս կելլեն վանքին դռան առջև, ուր մար-
տիկները կսպասեին իրենց պետին: Վանքապատկան գյուղի բնակիչները
հոն են, լացով կօժեն իրարու դեմքերը և հրաժեշտ կուտան մեռնողնե-
րուն: Հրաժեշտը կերկարի, Եղիա և տեր Սահակ հայրը հուզմունքով կող-
ջագուրվին իրենց սիրելիներուն հետ, սակայն ոչ ոք կարծես բաժանվիլ
կուզեր:

Իշխան Եղիային տիկինը՝ Հեղինեն, տիպարը V դարու «Հայ տիկ-
նանց» ի տես ամուսնույն մոռալ դեմքին ու տխուր նայվածքներուն, կմո-
տենա անոր և ճակտեն համբուրելով կբսե. «Միրելի և պաշտելի ամու-
սինս, 40 տարիներ կողք կողքի տառապեցանք, պայքարեցանք և հինգ
մանչ և նույնքան աղջիկներու ծնողք ըլլալով կրցանք մեծցնել զանոնք

ազգային վեհ իդեալով: Քառասուն հոգիե բաղկացած մեր նահապե-
տական ընտանիքը ահա կբանդվի: Նախախնամությունը շուգեց կերևի,
որ շարունակվի մեր միասնական կյանքը. դազան թշնամին, ինչպես
ամենուրեք, հո՛ս ևս իր անողոք ճիրանները երկարեց:

Այսօր վաթսուն հայ կտրիճներ կշարշարվին, կտանջվին զնդաննե-
րու մեջ: Որքա՛ն տխուր է ինձի համար տեսնել Զեյթունեն միայն խումբ
մը անձնագոհ հայրենասերներ՝ ազապագրական ոգիով տոգորված. դուք
ջանացիք մեր վեհ իդեալը, նվիրական սրբությունը վառ պահել:

Ահա՛ 30 տարվան մեր սրտահատորները, որոնց հասցուցիկը այս
օրերուն, քեզի՛ կհանձնեմ. իմ սիրելագույն Պապիկը, Խաչերը, Նշանը,
Տիգրանը, որոնք ամուսնացած են և զավակներու տեր»:

Տիկինը մոտենալով կհամբուրե անոնց ճակատեն ու կբսե յուրա-
քանչյուրին զատ-զատ. «Հալա՛լ ըլլա կաթս ձեզի...»:

Տիկին Հեղինե իր շուրջը կհավաքե ընտանիքին բոլոր անդամները
և կուղղվի Զեյթուն, շորս զավակները թողնելով իրենց հորը՝ Եղիայի
հրամանին տակ: Իդուր հարսները կուզեն հետևիլ իրենց ամուսիննե-
րուն: Եղիա բոլորին կստիպե երթալ քաղաք, ազատ թողնելու համար
իրենց մարտիկ ամուսինները: Բաժանումը տեղի կունենա, ամբոխը կքա-
լե դեպի Զեյթուն, լեռան բարձունքին մինակ ձգելով քառասուն մար-
տիկները:

Անոնց մեկնումեն հետո այս վերջինները կրկին ծունկի կուգան,
վերջին անգամ մը ևս կհամբուրեն վանքին վիմաքարը, ապա կհեռանան
նույն այն դռնեն, ուրկե հազարավոր երիտասարդներ, տարիներ առաջ,
սալմանը իրենց ուսին, շագմազլըն ու դաշույնը ձեռքերնին, օդը կթըն-
դացնեին իրենց երգերով, խրոխտ ու հպարտ:

Իսկ այսօ՞ր— հայը գաղթական էր, թուրքը՝ տիրակալ: Թուրքական
իշխանություններու դարավոր երազը վերջապես մարմին կառներ: Վան-
քին քանդումով Զեյթունը կվերածվեր որբացած քաղաքի մը:

* * *

Վանքին ժողովուրդը կես գիշերեն հետո քաղաք կհասնի և կտեղա-
վորվի Նորաշխարհյան թաղի տուններուն մեջ, իրենց ազգական-բարե-
կամներուն մոտ: Իսկ մարտիկները շորս թևերու բաժնված կհետևին
անոնց:

Եղիա, մոտ 15 ընկերներով, քաղաքեն դուրս, դիրք կբռնե, մինչ

մնացյալները հրաժեշտ կառնեն իրենց ընտանիքներեն: Նշան Նորաշխարհյան իր Կարապետ եղբորը հետ կվերադառնա տուն, ուր իրենց կսպասեն մայրն ու տիկիները: Անոնք կզիմավորվին արտասուքներով: Կիները կնետվին նշանին և Կարապետին վրա և անհուն կարոտով կողջագուրվին անոնց հետ, գովքը կընեն անոնց հերոսության, կիսանդավառվին ու կբաջալերեն, միաժամանակ կնախատեն թուլամորթները:

Բաժանումը տխուր ու դժնդակ կդառնա: Նշան, համբուրելով իր որդիները՝ Հարությունը, Վաղարշակը, Փանոսը կըսե անոնց. «Մի՛ մոռնաք թուրքին դուլումն ու ջարդը: Միրեցեք ձեր հայրենիքը, ձեր ազգը՝ ձեր անձեն ավելի»:

Հետո դառնացած սրտով կբաժնվի իր հարազատներեն:

Այս ընտանիքին վերապրեցան Փանոսը, որ ներգաղթի առաջին կարավանով՝ 1946-ին Հայաստան մեկնեցավ և ուր վախճանեցավ 1955-ին, ինչպես նաև Կատարը՝ այս տողերը գրողին կինը:

Ուրիշ խմբապետ մը ևս՝ Փանոս Չագըրյան, իր Հարություն և Հակոբ եղբայրներուն հետ կիջնե քաղաք. ան իր կարգին հրաժեշտ կառնե իր ընտանիքեն, գիրկին կսեղմե իր սրտահատոր պատանի Հրանտը և կըսե, խոսքը ուղղելով բոլոր տնեցիներուն. «Աշխատեցե՛ք ազգին և հայրենիքին համար, մեռնիլ գիտցեք ազգին համար: Մահը երբեք թող ձեզ չխոտվե»:

Խմբապետներ Մեսրոպ և Արամ եղբայրները, իրենց Քոր՝ վարպետ Արթիմին և մոր ձեռքերը համբուրելով, անոնց քաջալերության խոսքերը լսել և վերջ կվերադառնան:

Նրկու ժամ վերջ քաղաք իջնող մարտիկները կրկին համախմբված էին Զեյթունի հյուսիս-արևմուտքը, Պապիկ փաշայի քարայրը:

12 մարտ 1915, ուրբաթ առավոտ: Տեր Խաչատուր վարդապետ Ղազարյան և քաղաքապետ Հայկ Ասմընյան, ժողով գումարելու հետո, կորոշեն իրենց համակիր բարեկամներով տեղեկացնել կառավարության՝ վանքին պարպումը մարտիկներուն կողմե: Բանակը անմիջապես կատաղի հարձակողականի կանցնի, թնդանոթները կգոռան, կպաշարեն վանքը և երեկվան երկչոտ նապաստակները, առյուծի հովեր առնելով, կվազեն դեպի վանք:

Առաջնորդ հայրը և քաղաքապետը կհամարձակին հայտնելու, թե իզո՞ւր է այս հարձակումը, երբ վանքը պարապ է այլևս. սակայն անօգուտ, բանակը կարծես ավելի կատղած առավոտյան ժամը 10-ին կհասնի վանքին արտաքին դուռը և կրակի կուտա: Ժողովուրդը, ի տես այդ տմարդի հարձակումին, կանիծե առաջնորդն ու կառավարությունը, մինչ

առաջինը կբողոքե գայմագամին մոտ, առարկելով որ սրբապղծություն է սրբատեղի մը ումբակոծելը:

Պայմագամ Հյուանի կապահովցնե թրքական լիբր քմծիծաղով մը, թե զինվորական հրամանատարությունը նման հրահանգ չէ տված: Հայր սուրբը կհարկադրվի ցույց տալ վանքեն բարձրացող մուխն ու ծուխը:

— Ի՛նչ ընեմ, առաջնորդ հայր, ձեր հելուզակները կրակի տալով փախած են:

— Այս առտու ես և քաղաքապետը ձեզի տեղեկացուցած էինք վանքին երեկվրեն պարպված ըլլալը՝ առանց վառված ըլլալու, — կպատասխանե առաջնորդը:

— Հանգի՛ստ եղեք, հրամանատարը հիմա հեռաձայնեց ու անմիջապես մարել պիտի տա կրակը, — կըսե նենգամիտ գայմագամը:

Ժամ մը հետո պատմական և նվիրական դարավոր վանքեն միայն ու միայն փլատակներ մնացած էին:

«Վեղարավոր հերոս» Բարթողիմեոս վարդապետ Թագաճյան, երբ կհասնի Զեյթուն և կիմանա վանքին այրվիլը, կհեծեծե դառնագին ու կանիծե ժողովականներն ու եկեղեցականները: Պարտվողականությունն ու թուլամորթությունը թափանցած էին բոլորին սրտերը: Նույն այն ժողովականները, որոնք կմտածեին նախապես, թե առանց ապստամբելու կրնային ճողոպրիլ ջարդեն, անգամ ալ կմտածեին, թե վանքին ավերումովը և մարտիկներու հեռացումովը, Զեյթունը կընա փրկվիլ...

Մի քանի օր վերջ քաղաքը պաշարված էր ամեն կողմե: Հառաչապահ թրքական ուժեր դրացի թուրքերու առաջնորդությամբ հասած էին մինչև Զեյթունի հյուսիսային կողմը, Քերձեր կոչված թաղը: Վտանգը դոները ափ առած էր և ժողովուրդը դարձյալ ահ ու գողի մատնված: Բանակի հրամանատար Խուրշիտ բեյը, մարտ 16-ին ժողովուրդին ուղղված հրամանագրով մը, անձնատվության կհրավիրե բոլոր դասալիքներն ու փախստականները: Ի պատասխան իրեն եղած դիմումին, ձեմալ փաշան, օսմանյան բանակի 5-րդ զորաբաժինի ընդհանուր հրամանատարը, Սահակ վեհափառի միջոցով Զեյթունի հայ ժողովուրդին ուղղված հետևյալ հեռագիրը կըրկե.

«Անմեղ և խեղճ ժողովուրդին որևէ հալածանք պիտի չըլլա: Ես զինվորական հրամանատարության հրահանգած եմ, որպեսզի ժողովուրդին կյանքին և պատվին չդպչին. ամեն մարդ իր տունը, իր գյուղը թող վերադառնա և իր անձնական գործերովը զբաղի. ժողովուրդը ապահով և հանգիստ թող ապրի»:

Մինչդեռ մյուս կողմն Գալուսեանց գյուղին լուր կուգա, թե դրացի թուրքեր կողոպտած են հայ գյուղին արջառնները: Առաջնորդ հայրը երբ դեպքը կհաղորդե հրամանատարին, անկե կստանա հետևյալ պատասխանը. «Անպայման քանի մը պազակներու գործ է»:

Հրամանատարին պահանջքին վրա ամեն թաղ կներկայացնե իր փախստականներուն և ապստամբներուն ցանկը: Դավադիր գործակալներ, աննկարագիր անհատներ առիթեն օգտվելով, դասալիք եղողները ևս կմատնեն հրամանատարութեան՝ իբրև ապստամբներ:

Փոքր դրվագ մը հիշեմ: Մարտի 18-ի առավոտը երբ դպրոց գացի դասավանդութեան, ուսուցչական կազմը դպրոցի պատշգամբը, առաջնորդարանին դիմաց հավաքված կխոսեին օրվան կացութեան մասին. երբ հաղիվ դռնն մտա, տնորեն Ն. Ահարոնյան ինձ դռնալով ըսավ.

— Միշտ ճշմարտութիւնը կծածկեք: Ձեր թաղեցիք բոլորն ալ իբրև դասալիք ներկայացված են կառավարութեան, մինչդեռ ապստամբներուն մեծամասնութիւնը ձեր թաղին են: Մեր թաղեցիներն ալ կուզէին դասալիք ներկայացնել ապստամբները, բայց ես ընդդիմացա, որովհետև կուզեմ, որ խռովարարները պատժվին: Ահա, նայեցեք սա Կարապետ Գալիշյանին, զոր ոստիկանները ձերբակալած կտանին,— ըսավ ան, ցույց տալով նույն պահուն անցնող ոստիկանները,— ան երեկ վանքին մեջ կկուվեր, իսկ այսօր իբր դասալիք կառավարութիւն կերթա: Ինչո՞ւ իրականութիւնը կծածկեք:

Այս դեպքը վերհիշեցի, ցույց տալու համար, թե որքան տարածված էր պարտվողականութեան ոգին: Իրողութեան մեջ հիշյալ Կարապետ Գալիշյանը Ահարոնյանին նման մարդոց զոհերն են կն էր, որովհետև նույն անձը, ձերբակալութենէն քանի մը օր հետո, կախաղան բարձրացվեցավ իբր ապստամբ:

Քանի մը օրվան մեջ բազմաթիվ երիտասարդներ անձնատուր եղան իբրև դասալիք և ձեռնակապերով փոխադրվեցան Մարաշ: Ոչ ոք գիտցավ թե ուր դրկվեցան անոնք: Այսպիսով, մոտ 450 զեյթունցի հայորդիներ մահվան գիրկը գացին: Ահաբեկած գյուղացիները վերադարձան իրենց գյուղերը և ամեն ոք իր տունը քաշվեցավ:

Բոլորը կսպասեին պայթելիք անակնկալ, անխուսափելի փոթորիկին: Ոչ ոք կրնար քաղաքն դուրս ելլել առանց արտոնութեան: Գյուղերը խզված էին Զեյթունէն, երթեկը վերջ գտած էր:

Կիլիկիո կաթողիկոսարանն ու պատրիարքարանը լսելով հանդերձ սույն բարբարոսութիւնները և հայ ժողովուրդին տառապանքը, դարձյալ հնազանդելու կհրավիրեին խեղճ ժողովուրդը: Անոնք, առաջնորդա-

րանին միջոցով, զեյթունցիին կհաղորդեին սուլթանին կողմն շնորհված ներումները... առ ի քաջալերութիւն: Մյուս կողմն, սակայն զինվորական և այլ տուրքերու գանձումով, կառավարութիւնը կհափշտակեր խեղճ ժողովուրդին խնայած գումարները:

Վերջապես կբացվեր վերջին վարագույրը... զաղթն ու աքսորը:

Ժողովուրդը կողոպտված էր: Ըմբոստացած խումբը արդեն հեռացած էր քաղաքէն: Մնացյալ երիտասարդութիւնը իբրև «դասալիք» ձերբակալված և բանտարկված էր: Թշվառութիւնն ու հուսահատութիւնը իրենց մահասարսուտ թեւերը տարածած էին քաղաքին վրա:

1915 թ. մարտ 25-ին առավոտյան կոչնակները ժողովուրդը եկեղեցի կհրավիրեին: Փողոցներու երկայնքին և անկյունները կվխտային զինվորական պահակներ, որոնց թիվը տասնապատկված էր. Անոնք կերթեկեին խոժոռ դեմքերով: Ժողովուրդին մտքին մեջ նոր հուզում մը ծայր տվավ: Երբ ամեն ոք կոչնակի հրավերին վրա կասկածներու մեջ մտալկված կսպասեր, անդին ոստիկան Ասատուր Ղուկասյանը անվանացանկ մը ձեռքին, տունետուն մտնելով, իր մոտ գտնվող ցանկին մեջ արձանագրված անձերը կառավարչատուն կհրավիրեր:

Այդ ցանկին մեջ էր նաև մեծ եղբայրս՝ Հակոբ Նորաշխարհյանը, որ մաս կկազմեր հրավիրված 27 անձերու: Փոխ-գայմագամ ալիսթանցի դատավորը՝ Մուհամմետ Զեքի (Հյուսեյին Հյուսեյին պաշտոնանկ եղած էր) զանոնք իր մոտ կկանչեր, ըստ իրեն՝ «կարևոր խորհրդակցութեան» մը համար: Մերինները կառավարչատուն հանդիպելով կիմանան, թե պետք է ներկայանան զորանոց՝ ընդհանուր հրամանատարին, որ Զեյթունէն մեկնելէ առաջ կուզեր Զեյթունի մեծերուն հետ կարևոր նյութի մը շուրջ խորհրդակցութիւն ունենալ:

Եղբայրս հուզված վերադարձավ տուն և տնեցիներուն հաղորդեց Մուհամմետ Զեքիի հայտարարութիւնը: Ան որոշած էր զորանոց չերթալ, վերհիշելով ճիվաղ Ալի Հայտարի նախընթաց արարքը: Անոր աչքին առջև էին տակավին զնդանն ու գանակոծումները և բանտարկութեան տառապանքները:

Հորեղբայրս՝ Սարգիս Նորաշխարհյան, իբրև փորձառու և հեռատես մարդ, համոզեց եղբայրս, որ հնազանդի, քանի որ այլևս ուշ էր... Եղբայրս համբուրեց իր երկու սիրասուն գավակները և հրածեղտ առնելով մեզմե մեկնեցավ:

Կանչվողները շորս թաղերէն գալով՝ զորանոցի ճամփուն վրա, գերեզմանատան մոտ բարձրացած թթենիին տակ խմբվեցան: Ո՞վ կրնար

գուշակել հիշյալ 27 անձնավորութեանց մտածումներն ու տառապանքները: Անոնք խմբովին իրենց վերջին հարգանքը մատուցանելն վերջ գերեզմանատան մեջ ննջողներու հիշատակին, գլխահակ շարունակեցին իրենց ճամփան, հեռուն ձեռքի շարժումներով հրաժեշտ տալով տանիքներու վրայն իրենց հեռու սիրելիներուն:

Խումբը հագիվ թե զորանոցին դուան մոտեցած էր, երբ նույն ուտիկանը եկավ զիս և փոքր եղբայրս Ռուբենն ալ ոստիկանապետ Սյուլեյմանի մոտ հրավիրելու:

Ռուբենը ինձմե անաջ մեկնեցավ Ասատուրին հետ: Մայրս, փորձառու և հեռատես կին, թելադրեց, որ հետս թանկարժեք առարկաներ չտանիմ՝ ժամացույց, մատանի և այլն: Հաղիվ թե տունեն դուրս ելած էի, երբ Ասատուր կրկին դեմս ելավ և հայտնեց թե ոստիկանապետ Սյուլեյմանը զիս ալ կսպասե: Մեկնեցանք միասին: Դուան առջև տեսա ոստիկանապետը. իր առջև ոտքի վրա կանգնած էին լուսահոգի եղբայրս Ռուբենը, Նշան Եղեկիելյանը և Միսաք Խըլըբորդյանը:

Եղբայրս կիսդրեր ոստիկանապետեն.

— Սյուլեյման բեյ, խնդրեմ, անհանգիստ եմ, այսօր չեմ կրնար երթալ, եթե կարելի է վաղվան հետաձգե:

— Հա, հա, — պատասխանեց Սյուլեյմանը ամբարտավանորեն, — ընդհանուր հրամանատարին նման խնդրանք մը կարելի՞ է ներկայացնել... Կես ժամեն կվերադառնաս, շարժե խնդրել:

— Ի՞նչ կա, Սյուլեյման բեյ, ինչո՞ւ պիտի երթանք, — հարցուց Ռուբեն:

— Ոչինչ, հրամանատարը աղաներուն հետ տեսնվիլ կուզե:

— Ես աղա չեմ: Եղբայրս Հակոբը գնաց, անո՞ր թող խոսին, ես չեմ երթար:

Սյուլեյման քաղաքավարորեն և նենգ քմծիծաղով մը ըսավ.

— Իմ ձեռքս չէ, հրամանատարին հրամանն է, բան մը չկա, մեկ ժամեն կվերադառնաք:

Բաժնվելու պահուն Ռուբեն սպառնալի ըսավ ոստիկանապետին.

— Ձեր խոսքերուն վստահելով կերթամ, եթե իրիկունը հոն մնամ, վերջը դուք գիտեք:

— Երբեք հոն մնալու պատճառ չկա, կես ժամեն կվերադառնաք: Ձեր հանգուցյալ հոր նման քաջ եղեք...

Երկու եղբայրներս, ես, Ն. Եղեկիելյանն ու Մ. Խըլըբորդյանը լուռ և անխոս կառավարչատունեն վար իջանք, անցանք Պող Պայլը՝ Շորվօղլյան թաղի ճամփով և քաղաքեն դուրս ելանք: Փողոցներու անկյուն-

ները, պատերու տակ, մայթերու վրա նստած խեղճ ծերունիներ, մեր խումբին երթը դիտելով «Աստված հետերնիդ ըլլա» մրմնջալով մաղթանքներ կընեին:

Եղբայրս՝ Ռուբենը անընդհատ կնխատեր կաթողիկոսարանն ու պատրիարքարանը, որոնք պատճառ եղած էին մեր դժբախտութեանը:

Քաղաքին հարավ-արեւելյան կամուրջն անցանք և կանգ առինք Պաղ աղբյուրին առջև, հոն՝ ուր շորս ծորակներեն լեռներու սառնորակ և զուլալ ջուրը կթափեր վար: Աղբյուրին քարե կամարին վրա առյուծ մը քանդակված էր իր կորյունով, Պոյաճյան անունով հայու մը կողմէ. սույն քանդակը զեյթունցիներուն համար քաջութեան և խիզախութեան խորհրդանիշ մըն էր եղած: Հղի հարսներ այդ աղբյուրեն ջուր տանելու կուգային և կղիտեին առյուծն ու իր կորյունը, անոնց նման անվախ և հերոս որդիներ ունենալու երազով: Բոլորս ալ լվացվեցանք ու խմեցինք անկե և ապա շարունակելով մեր ճամփան, մազլեցեցանք զառիվերեն վեր և հասանք հայ գերեզմանատան մոտ գտնվող թթենիի ծառին. հող ևս կանգ առինք պահ մը, մի քիչ հանգստանալու համար: Ն. Եղեկիելյան իր ծոցեն հանեց հաց ու պանիր, և եղբորս հետ սկսան ուտել: Մինչ անոնք կնխաճաշեին, մենք կսպասեինք իրենց:

Եղբայրս լուռ խորհրդածելն վերջ ըսավ. «Անցյալը անցած է: Մենք շորս հողի ենք, վերը՝ Աստված, վարը՝ մեր նախնիքներու գերեզմանները: Քաջ գիտենք թե այսօր մեր վերջին օրն է: Ինչպես հայրս, նույնպես մենք, գավազանի հարվածներու տակ շանսատակ պիտի ըլլանք: Փոխանակ զորանոց երթալու, թուրքին նախատինքին ենթարկվելու ավելի լավ չէ՞ կեր դառնալ վայրի գազաններու: Եկե՛ք հեռանանք, մահը մահ է ուր որ ալ պատահի, սակայն «իմացյալ մահը անմահություն է»: Եթե քաղաքը մեզ մոռցավ, կան գյուղերը, հո՛ն երթանք, անոնց միանանք, գուցե կարենանք բան մը ընել, նվազագույնը՝ կովինք և մեր սուրբ հողին տակ թաղվինք...»:

Ռուբեն, Նշան և Միսաք բավական տաք վիճաբանություն ունեցան: Մինչ ես լուռ կհետեւի անոնց վեճին: Վերջապես որոշվեցավ հետեւիլ ճակատագրին:

Զորանոցին ընդարձակ մարզարանին եզերքները բարձրացած ծառերուն տակ գտանք մեղմե առաջ հոն հասած 27 հողին. երիտասարդ թուրք սպա մը մեր հասնելեն քիչ հետո մոտենալով ըսավ բոլորիս.

— Հրամանատար բեյը ձեզի հետ խորհրդակցիլ կուզե. ներեցեք, որ համաձայն օրենքին, ձեզ խուզարկեմ: Հետ խուզարկութեան, 31 հողի խմբովին առաջնորդվեցանք զորանոցի հեռագրատունը, որ շինված էր

արևելյան ձորակին կողմը: Հոն մեզի միացան Լ. Նորաշխարհյանը՝ Շիլ Փանոս փաշայի թոռը, և Հարություն Յաղուպյանը:

Սվինավոր զինվորներով լեցուն էր շորս կողմը: Թավ բեղերով, երկարահասակ զինվորական մը, ձեռքը անվանացանկով մը դուրս գալով, հեռագրատան սենյակին առջևն սկսավ բարձրաձայն կարգալ: Գամասկոսի ընդհանուր հրամանատար, ոստիկանապետ Խուրշիտ բեյն էր ան, ժանոթ՝ անցյալին իր գործած անհամար ոճիրներով և վայրագություններով:

Ան բարձրաձայն կարգաց ինը հոգիի անունները և հրահանգեց անոնց զատվիլ խումբեն: Անոնք էին՝ Տեր Հովսեփ վարդապետ Ագրապյան՝ հայ կաթողիկ, Տեր Սահակ քահանա Մարկանյան, դոկտոր Երվանդ էլմաճյան՝ Մարաշի քաղաքապետարանի պետական բժիշկը, Խաչեր Նորաշխարհյան՝ Շիլ Փանոս փաշայի թոռը, Կեղրոնական վարժարանի ուսուցիչ Նշան Եղեկիելյան, Կարապետ Պալճյան՝ վաճառական, պետական պաշտոնյա Հակոբ Թաշճյան, կառավարչատան ժողովի անդամ Կարապետ Չոփուրյան և առևտրական Հովհաննես Տեր Նշանյան:

Այս իննյակի մեր խումբեն բաժանվելեն վերջ, Խուրշիտ բեյ շարունակեց ընթերցումը 14 ուրիշ անուններու, որոնք էին՝ տեր Եզնիկ քահանա Տիրացույան, Տյովլեթ և Աբգար Մարկանյան, Ստեփան և Լևոն Նորաշխարհյաններ, Գրիգոր, Մինաս և Հաճի Կյուլվանեսյաններ, Վարդավառ Նոխուտյան, Խաչիկ և Հարություն Յաղուպյաններ, Ավետիս Խըլըբորդյան և Հովհաննես Ահարոնյան:

Մնացյալ յոթը հոգին հրամանատարը կանչեց իր սենյակը: Մացակ Սուրենյան (Մեճլիսի իտարեի անդամ), քաղաքապետ Հայկ Ասմընյան, վարդան Վարդանյան, Միսաք Խըլըբորդյան և երեք եղբայրներս՝ Հակոբ, Ռուբեն և ես: Մեր անունները ստուգելի հետո զինվոր մը կանչեց ներս ու անոր պատվիրեց ըսելով.

— Այս երեք եղբայրները տար դիմացի սենյակը, իրենց հետ տեսնելիլ կուգեմ:

Մեզ հանդիպակաց սենյակը առաջնորդելի հետո մեր քով բերին նաև Միսաք Խըլըբորդյանը, որուն հետևանքով մեր մեջ ծանր մտահոգություն տիրեց: Նույն սենյակի պատուհանեն դիտեցինք առաջին անգամ զատված ինը հոգինոց խումբը, որ սվինավոր զինվորներու հսկողության տակ կհեռանար: Այս խումբին մեկնումեն հետո, սվինավոր այլ զինվորներու խումբ մը, սպայի մը առաջնորդությամբ, մեզ առաջնորդեց մուտք ու խոնավ նկուղ մը, ուր ոչ նստելու և ոչ ալ ոտքի կանգնելու տեղ կար: Նկուղեն ներս, երկու սվինավոր զինվորներ մեր վրա

կհսկեին, իսկ շորս զինվոր ալ դուռն առջև կանգնած պահապանություն կընեին:

Նկուղին մեջ կային ջորիներ, որոնք իրենց աքացիներով մեզ կհարվածեին: Երեք եղբայրներու հարստությունը 12 մեթալիք էր միայն այդ պահուն: Հոս կանգ կառնեմ նկարագրելու մեր վիճակը, երբ կըգամ թե գրիչս անդոր է նկարագրելու մեր հոգեկան դրությունը. նույնիսկ շեմ հիշեր, թե սրբա՛ն ժամանակ մնացինք հոն: Ուշ ատեն էր, երբ դուրսեն ձայն մը՝ «դուրս հանեցեք» գոչեց: Մեզ առաջնորդեցին սպասման սրահը, ուրկե նոր դուրս կելլեր ընդհանուր հրամանատար Խուրշիտը: Ան մեզի դառնալով ըսավ.

— Գացե՛ք, ձեր ընկերները ձեզի թող ըսեն...

Սենյակին մեջ գտանք 14 հոգինոց երկրորդ խումբը: Հրամանատարը անոնց հայտարարած էր.

— Զեյթունի մեջ ձեր բնակությունը կառավարության կողմն հարմար չի նկատվիր: Այսօր, մայրամուտեն առաջ, ընտանյոք Մարաշ պիտի երթաք:

Պաղատանք, լաց, ամեն կարգի խնդրանք անօգուտ եղած էր: Որոշումը անբեկանելի էր:

Տասնութը դժբախտներս, զորանոցի պատիկ խցիկին մեջ, կխորհեինք մեր վիճակի մասին, երբ մեր բախտակիցներեն մին, պատուհանեն դուրս դիտելով, Զեյթունի բարբառով բարձրաձայն գոչեց.

— Վա՛խ... տանվընաս բողով... (Ավա՛ղ... տուներնիս փլավ):

Ամենքս մեկ դեպի պատուհան խուժեցինք ու տեսանք, որ զեյթունցի ընտանիքներ, զորանոցի դիմացը, արևելյան ձորակին եզերքը, Թահսին բեյի գերեզմանին մոտ հավաքված էին:

Նույն պահուն, հարյուրավոր սվինավոր զինվորներ կազմ ու պատրաստ եկան, շարվեցան մեր խցիկին առջև: Դուռը բացվեցավ և ոստիկանապետ Սյուլեյման դուռն առջև կանգնած, մեր անունները կարդալով մեկ առ մեկ դուրս կանչեց: Ապա խմբովին մեզ առաջնորդեց մեր ընտանիքներուն մոտ:

Գաղթականներուն մեջ էին Եղիայի, հորեղբորս՝ Սարգիսին, Նշան և Կարապետ Նորաշխարհյաններու ընտանիքները, Փանոս Չազըրյանի եղբայրներուն՝ Պետրոսի, Հարությունի ու Հակոբի և հորեղբորորդւյն՝ Նազարեթի ընտանիքները, Մեսրոպ Չուպգյանի կինը, ծնողքը, հորեղբայրը Վարդեվառ Խոճան՝ իրենց ընտանիքներով: Անոնց մեջ էին նաև Պարսում Պարսումյանը և Մարտիրոսյան Գևորգը, որոնք Եղիայի հարսներուն ազգականներն էին. ընդամենը 22 ընտանիք՝ 96 հոգի:

Մեր ընտանիքեն միայն բույրս՝ Սրբուհին մնացած էր Զեյթուն՝ հորեղբորս բով: 96 հոգին ալ իրենց հետ շունեին ոչ հագուստ, ոչ սննդեղեն. խեղճերը կերևակային, թե Մարաշեն պիտի վերադառնային քանի մը օրեն: Հազիվ թե միացած էինք անոնց, երբ փողահարը հնչեցուց փողը՝ ճամփա ելլելու համար:

Կարավանը շարժեցավ: Արեւ զենիթեն վար կիջներ: Ճամփու երկայնքին ամեն քայլափոխի, Սյունպոյ Գայայի և Շենպեքի կատարներուն և կիրճերուն վրա թուրքական զինվորական խումբեր պահակ կեցած էին: Կարավանը շատ դանդաղ կհառաջանար: Մանուկները հազիվ թե կհաջողեին հասնիլ խումբին: Հետզհետե անցանք Սաղըրի բլուրեն, իջանք Զերմուկի դաշտը: Ամեն կողմ լուսթյուն էր: Իրիկնամուտին հազիվ հասանք Ղլավուզ Տերե կոչված ձորը: Բլուրներու կատարներուն վրա վառվեցան խարուկները: Թուրք զինվորները ուրախութեան խնջույքներ կսարքեին: Կես գիշերին մոտ հասանք Համիտին՝ Վարդապետին կամուրջը ձիահան գետին վրա: Կամուրջին վրա տակավին կանգուն կմնար այն պատը, որը թուրքերու կողմե կառուցված էր զեյթունցիներու հարձակումներուն դիմադրելու ծրագիրով: Զինվորներու մեկ ժամվա աշխատանքը հազիվ թե կրցավ փլցնել այս պատը, որմե ետք առաջնորդվեցանք զինվորական կայան մը:

Կարավանին ընկերացող հարյուրապետ Ֆեվզիի կարգադրությամբ այր մարդիկը առաջնորդվեցան ախոռ մը, զինվորներու հսկողությամբ, իսկ կիները՝ առանձին տուն մը: Մեր խումբին կրկերակցեր Փանոս Զաքրըյանի եղբայրը՝ Պետրոս և անոր որդիները՝ Վարդիվառ և Մարտիրոս: Վերջինս ազատեցավ՝ հաջորդ օրը ինքզինքը ձիահան գետի հորձանքին մեջ նետելով...

Հաջորդ օրը մեզ կրկին հավաքեցին և շղթայակապ ձեռքերով անցանք Բերդիզ Չայը, ուրկե մազլեցեցանք Գափու Չամի վերելքը և կեսօրվան մոտ հասանք Ախըրտաղի բարձունքը:

Ոստիկան Մեվլուտ սրարշավ հասավ մեր կարավանին և նամակ մը հանձնեց մեզ առաջնորդող հարյուրապետ Ֆեվզիին: Վերջինս հրամայեց զենքերը անմիջապես լեցնել փամփուշտներով: Ախըրտաղի ստորոտը հասած էինք, երբ մեզի մոտեցան Մարաշի թուրք բնակիչները, պահանջելով որ մեզ՝ գաղթականներին հանձնեն իրենց:

Կառավարությունը խիստ միջոցներու դիմելով, նոր զինվորական ուժերու օգնությամբ ցրվեց թուրք ամբոխը և ապա մեզ առաջնորդեցին թրքական զորանոցին ետեվը: Հոն հանձնվեցանք զինվորական, վայրագութեան տիպար Գարա Պինպաշին: Ան բացավ հարյուրապետին մոտ

եղող նամակը և սկսավ հեզելով կարդալ. «Տյուհ... (Տյուվեթ ըսել կուզեր) Մարկանյան, հրամայեցեք... վար իջի՛ր, սրիկա՛, կառավարութեան հացը աչքդ կուրցնես»:

Բոլորս ահաբեկ, մեկիկ-մեկիկ ձիերեն վար իջանք:

Այրերը կրկին զատվեցան: Մենք առաջնորդվեցանք Թաշխան: Փողոցներու մեջ, պատշգամբներեն թուրք բնակչությունը թուրք, մուր և հազար ու մեկ նախատինքներ կթափեր մեր վրա: Քիչ հետո մեր կիներն ալ եկան Թաշխան:

Մուկեզնած ամբոխ մը հարձակեցավ մեր գտնված խանին վրա, սակայն զինվորները արգիլեցին անոնց մեզի մոտենալը:

Պետրոս Զաքրըյանի ընկերները բանտ առաջնորդվեցան: Արտաքին աշխարհեն բոլորովին զրկված էինք, ունէ մեկը չէր կրնար ներս մտնել:

Կիրակի օր մը գերմանուհիներու խումբի մը՝ Յամայրզը խանրմի առաջնորդությամբ այցելությունը ընդունեցինք, բացառաբար կրցած էին անոնք գաղթականներուն այցելելու հրաման ստանալ: Այս վերջինները ուզեցին ծանոթություններ քաղել Զեյթունի մասին, սակայն, գաղտնի ոստիկաններու ներկայութեան պատճառով, չկրցան որևէ բան իմանալ:

Երկուշաբթի, մարտի 30-ի արևածագին՝ պատրաստ ըլլալու հրահանգը ստացանք: Ճամփա ելանք և Մարաշի հարավ-արևելքի կողմը, Շըխըրտըր թրքական գերեզմանատան մոտ, հսկա ամբոխի մը կողմե դիմավորվեցանք: Թմբուկի ձայնը կկորսվեր ներկաներուն ազմուկին մեջ: Գաղթականներս՝ շրջապատված սվինավոր զինվորներու կողմե, կենթարկվեինք ամենեն աղտոտ հայհոյանքներու և նախատինքներու: Հանկարծ մեր մոտ երևցավ ծանոթ հրեշը՝ Գարա Պինպաշին: Գաղթականները մի առ մի համբուլե հետո, ան հանձնեց մեզ իրեն ընկերացող հարյուրապետին, պատվիրելով.

— Ինձի՛ նայե, հարյուրապետ, ասոնք Զեյթունի ծանոթ ըմբոստներն են, նամանավանդ այս երեքը նազարեթ Չավուշի տղաքներն են: Զեյթունի լեռը պիտի փախին եղեր... Հե՛յ կիտի... Ահա՛ քեզի կհանձնեմ զիրենք, Քյազը՛մ էֆենդի, ուշադրություն ըրե՛ որ չփախչին:

Հարյուրապետը անմիջապես մեզ երեքս հրամայեց շղթայել ձիու պախուրցով և ապա ձիերու պոչին կապել: Խեղճ մայրս, որ երբեք հուսահատիլ չէր գիտեր, երբ տեսավ հրամանին գործադրությունը, փղձկեցավ և ապա փորձեց մեզ քաջալերել.

— Հոգ մի ընեք, սիրելի գավակներս, կյանքի մեջ այս կարգի բաներ շատ կպատահին, մի՛ վհատիք...

Տեր եզնիկ քահանա Երեցյանի, Գրիգոր Կուլվանեսյանի և Հ. Ահա-

րոնյանի պաղատանքներուն շնորհիւ, մոտ երկու ժամ ձիու պոչին քաշ-կրուովէն հետո, թուլատրվեցավ մեզի կապված վիճակի մեջ ձի նստիլ: Երեկոյան հասանք էլ-Օղլու կողմած վայրը՝ Մարաշի հարավ-արևմուտքը, ուր կրկին ոստիկանապետի մը հսկողութեան հանձնեցին մեզ՝ երեքս, իսկ գաղթականներու խումբը լեցուցին էլ-Օղլու խանը: Քիչ հետո արշույնով վիճակի մեջ մեր մոտ բերին Վարդավառ Նոխուտյանը և սկսան ոտքով, գավազանով, հրացանի կոթով հարվածել զայն: Հիշյալը կմեղադրվեր զինվոր մը կաշառել փորձած ըլլալուն համար: Սրտաճմլիկ տեսարանը դիտեցինք արտասուքի կաթիլներով: Հարվածներէն խեղճին մարմնին բոլոր կողմերէն արշույն կծայթբեր: Ան կորսնցուցած էր իր գիտակցութիւնը և զառանցանքի մեջ ինկած: «Ակո՛ր էֆենդի, օգնէ ինձի» կաղաղակեր, եղբորս, մինչդեռ մենք՝ երեք եղբայրներս, մեր կարգին շղթաներու լուծին տակ կտվայտեինք, անոթի ու ծարավ գետին երկարած:

Տեր Եզնիկ քահանա կրկին միջամտեց և խնդրեց հարցուրապետէն, որ իրեն հանձնվի նվազած Նոխուտյանի մարմինը: Կիսամեռ, արշան ճապաղիքներու մեջ անձանաչելի դարձած խեղճը փոխադրեցին խան:

Տեղվույն պոշնակցի Օսման ոստիկանապետը, իբրև թէ Զեյթունի ոստիկանատունը ներկա եղած է, մեր մասին աներևակայելի զրպարտութիւններ ըրավ մեր ներկայութեան, մեզ դիտող թուրք ամբոխը գըր-գըրելու համար: Հարցուրապետ Քյազըմ միջամտեց և արգիլեց զայն գրգռել ամբոխը, որ պատրաստ էր մեզ սպանելու:

Սակայն, միաժամանակ, Քյազըմ հրամայեց մեր երեքին բթամատները իրարու կապել շղթայով: Եղբորս մատները ատեն մը վերջ սկսան ուռիլ և անտանելի ցավեր պատճառել: Գիշեր մը ևս անցուցինք այս պայմաններու տակ: Հաջորդ առտու, մասնավոր հսկողութեամբ, կրկին շարունակեցինք ճամփան ու հասանք Պուլանըգ Պաղչէ, ուր տեղացի հայերը իրենց կարելի օգնութիւնը հասցուցին գաղթականներու: Շարունակելով ճամփան հասանք Օսմանիէ: Ըմբոխը ընթացքին հանդիպեցանք տրոթոյցի հայ երիտասարդ բանակային զինվորներու, որոնք քար կկոտրեին նոր ճամփու մը շինութեան համար:

Օսմանիէի մեջ մեր ընկերները տեղավորեցին տեղվույն հայ վարժարանը: Իսկ մեր երեքը առաջնորդեցին բանտ, դարձյալ հսկողութեան տակ:

Մարտ 26-ին Զեյթունէն տեղահան եղած էինք: Ութ օր վերջ, ապրիլի 2-ին մեզի միացան Զեյթունէն եկած երկու նոր կարավաններ: Նո-

րեկներէն իմացանք, թէ մեր մեկնումէն հետո, մարտի 29-ին ձերբակալված էին իրենք ևս և մեր ճամփով տարագրված:

Այս խումբին մաս կկազմէին Հաճի Պապա աղա Սուրենյանը՝ քաղաքական ժողովի ատենապետը, եղբայրը՝ Սարգիս էֆենդի Սուրենյանը՝ պետական դրամատան տնօրեն, հորեղբայրս՝ Ս. Նորաշխարհյանը, Գասապյան Գրիգորը և Հարութիւնը՝ պաշտոնյա և ուսուցիչ, Արթին և Հակոբ Պոյամյանները և Հակոբ Եզնիկեցիները, իրենց ընտանիքներով:

Օսմանիէ հասնելէն հինգ օր հետո, երկու կարավաններս միատեղ, երկաթուղիով ճամփա ելանք դեպի Տարսոն: Օսմանիէի բանտին մեջ հանդիպեցանք Նազարեթ Չավուշի հետ ձերբակալված ղեկավարներուն, որոնք իրենց վիզերէն և ձեռքերէն շղթայակապ կհեծէին բանտին մեջ: Ալի Հայտարի հավատարիմ հայ մատնիչը՝ Գալաթիայի Փանոսն ալ հոն էր:

Մեր Օսմանիէ գտնված միջոցին հիշյալ խումբը Մարաշ ղրկվեցավ:

5 ապրիլ 1915-ին, երկուշաբթի օրը, Սիհան և Ճիհան գետերը կրտրելով իրիկնամուտին հասանք Տարսոն, երբեմնի Ռուբինյան իշխանութեան ծանոթ ոստանը: Քաղաքին մոլեռանդ թուրք ամբոխը լեցված էր կայարանը: Հազիվ թէ վար իջած էինք շոգեկառքէն, անոնք ահաւոր աղմուկ մը հանելով սկսան մեզ նախատել: Քշմեցանք ազգային դպրոցը և լեցվեցանք հոն: Տարսոնաբնակ հայերը իրենց կարելի օգնութիւնը ըրին մեզի, մեր դժբախտութիւնը մեղմելու համար: Մենք երախտագիտութեամբ կվերհիշենք անոնց ջանքերն ու զոհողութիւնները: Հակոբ Կանիմյան և Խորեն Գույումճյան արտակարգ կերպով օժանդակեցին գաղթականներուն: Տարսոնի մեջ ազատ արձակվեցանք, որովհետև Հաճի Կյուլվանեսյանը կաշառելով մեզ ընկերացող ոստիկան զինվորը, հաջողած էր մեր մասին տրված ամբաստանագիրը պատուել տալ: Մինչ այդ Հալեպէն Տարսոն հասավ Սահակ կաթողիկոսին կողմէ ղրկված Տեր Հարութիւն քահանա Եսայանը, տեղեկանալու համար կացութեան և տեղահանութեան մանրամասնութիւններուն:

Սահակ կաթողիկոսը խզճի խայթէ կտառապետ և ապագա պատասխանատուութենէ խուսափելու համար կուզեր օգնութեան հասնիլ մեզի, սակայն, իզուր: Մեղքը քաղելու համար նպատան ու մխիթարանքի բանի մը խոսքերը անզոր էին: Վեհափառին պատգամաւորը՝ Եսայան քահանան իր կարելին ըրավ մեզի օգնելու համար: Զեյթունցի գաղթականը, սակայն, քաջութիւնը ունեցավ մերժելու վեհափառ հայրապետին կողմէ գալիք որևէ օգնութիւն:

Ապրիլի 7-ին հազիվ թէ հանգստացած էինք, երբ կրկին սայլերու և

կառքերու մեջ լեցնելով մեղ, ճամփա հանեցին: Արևի տոթին, ծարավ ու հոգնած, անցանք մի առ մի այն ճամփաներեն, ուր ցանցնված էին հիշատակարանները Ռուբինյան իշխանության: Հսկա ժայռեր, փլատակ տուններ, ավերված բերդեր մեր ճամփուն երկայնքին վերհիշել տվին հայ ժողովուրդի պատմական անցյալը:

Հանդիպեցանք հայ երիտասարդներու խումբերու, որոնք քար կկոտրեին: Ապրիլի 8-ին հասանք զինվորական կայան մը՝ Պողանթի, ուր վրաններու տակ մնացինք տասներեք օր, զանազան նեղություններու ենթակա:

Գաղթականներու նոր խումբեր միացան մեզի Պողանթիի մեջ: Այլևս հստակ էր, որ իթթիհատի կառավարիչները միանգամընդմիշտ պարպել որոշած էին Զեյթունը զեյթունցիեն: Արեգին, Արապոզան, Ֆենկ, Ղուրա, Ավագկալ, Կոսճուղաս, Գոշոզ, Հաճիտերե, Սյունե, Քյումե Սյոյուտ, Յասթը Փունար գյուղերեն և Զեյթունի քաղաքացիներեն մոտ 500 անձ արգեն հասած էին Պողանթի, կազմելու համար 7 հազար հոգինոց գաղթականական խումբ մը: Ֆոնուզեն միայն Բարթողիմեոս վարդապետ Թագաճյանը և տասը ծանոթ ազգայիններ իրենց կիներով մաս կկազմեին վերջին եկողներուն (էմմանվել, Հովհաննես, Հակոբ Արաճաճյանները, Գևորգ և Գալուստ Մարգարյանները, Սարգիս Քեշիշյանը, Սարգիս և Մինաս Քեռիկերյանները, Մինաս Մխիթարյանը, Առաքել Պլտըրյանը): Գյուղացիներուն թույլատրված էր իրենց արջառներն ու գրաստները միասին տանելու: Ապրիլի 22-ին, զինվորական պետին հրահանգին համաձայն, գրաստ ունեցողները առանձին և փոխադրվելու միջոցներ շունեցողները շոգեկառքով՝ կրկին ճամփա դրվեցան:

Զեյթունցի գաղթականներով ծանրաբեռնված շոգեկառքը անցավ Ուլու Գըշլա, էրեմյլի, Գարաման կայարանները և կանգ առավ Գոնիա ծանոթ քաղաքը, որուն կայարանը լուսավորված էր էլեկտրական լույսերով:

Տեղացի թուրքերեն կազմված ոհմակ մը մեղ զիմավորեց և հարյուրավոր ոստիկաններ մեզ շրջապատեցին: Հազիվ թե վար իջած էինք վագոններեն, մտրակի ու փայտի հարվածներով մեր խումբը առաջնորդեցին դեպի քաղաք: Զեյթունի ծանոթ մտավորականներեն Կարապետ Գասապյան, ոստիկաններու հարվածներուն տակ շնչահեղձ մահացավ:

Մոտ մեկ ժամ քալելեն հետո հասանք մեծ շենքի մը առջև, ուր լեցուցին մեզ: Քիչ հետո նկատեցինք, որ գաղթականներու մեկ մասը տարված էր այլ տեղ մը: Տեսարանը անպատմելի էր... մայրեր՝ գատված իրենց որդիներեն, տղամարդիկ իրենց կիներեն և այլն: Արգիլվեցավ հայերեն խոսիլը:

Թուրք բարբարոսները արտաքին դուռն զարնելով, հարսնցու աղջիկ կպահանջեին: Անկարելի էր դիմանալ այդ անպատվության: Թեսմեքերյան եղբայրները՝ Միսաք և Կարապետ, չհանդուրժելով կատարվածին հարձակեցան թուրքերուն վրա, սակայն արյունվա ետ վերագարձան:

Գոնիա հասնելեն երեք օր հետո քաղաքին հայ առաջնորդը՝ Գուրգեն վարդապետ և հայ ոստիկանապետ Վաղարշակ, թեև այցելեցին մեզի, սակայն ոստիկանությունը արգելք եղավ, որ օգնեն:

Մինչև մայիսի 7-ը անլուր շարչարանքներ, նախատինքներ կրել հետո հրաման ստացանք կրկին ճամփա ելլելու: Նույն օրը մեզի լեցուցին դարձյալ սաչլերու մեջ: Ոմանք հետիոտն ճամփա ելան: Կարավանին ընկերակցող ոստիկանապետը, արյունարբու գազան մը, իր հրամանին տակ գտնվող 15 զինվորներուն հրամայեց ետ մնացողները մտրակել, որպեսզի քայլ պահեն քառասմբակ արշավող ձիերուն հետ:

Ղազար Թրվանտյան, 1895-ի վանքի հուշակավոր կոփներու հերոսներեն, հայրը յոթ աննման կորչուններու, ճամփան, ձիերու սմբակներուն տակ իր մահը գտավ: Փանոս Արապոզանյան, Արեգինի գյուղեն, ինկավ ճամփան ու մեռավ՝ աչքերը հառած հեռացող իր սրտահատորներուն:

Կարավանը հասավ Սըզյաթան գյուղը: Ոստիկան զինվորներ հոս ևս փորձեցին հայ հարսներն ու աղջիկները առևանգել, սակայն այր մարդիկ չթույլատրեցին այս նախատինքը: Հրամանատարը, խուսափելու համար ապագա անախորժություններե, հրամայեց չմտենալ գաղթականներուն:

Մայիսի 10-ին մեր կարավանը հասավ Գարա-Փունար, Սուլթանիյե կոչված գյուղաքաղաքը՝ 150 տունե բաղկացած: Տեղացիները՝ զուտ թուրքեր, ամառանոցները ելած էին, ուստի պատառ մը հաց իսկ կարելի չէր գտնել: Հոս հանդիպեցանք 205 հայ արքայազաններու, որոնք մեզմե առաջ հասած էին: Անոնք մեծ մասամբ երիտասարդներ և մտավորականներ էին: Այս հայերը մեծ օժանդակություններ բերին գաղթականներուն: Անոնք տունե տուն զիմելով իրենց կարելին ըրին մեր դժվարությունները մեղմելու համար: Այլևս ազատ էինք:

Զեյթունցիներս նորեն լծվեցանք աշխատաճքի: Դիմեցինք տեղացի ժողովուրդին, գործ խնդրեցինք և այսպես ամեն ոք կրցավ իր օրական հացը գտնել, հոգ չէ թե պատառ մը փայտացած հաց...

Մայիսի 30-ին Սուլթանիյե հասավ զեյթունցի վերջին գաղթականը՝ Ասատուր Կյուլվանեսյանը: Անոր հետ տարագրված էին նաև Ասատուր, Մացակ և Արթին Սուրենյանները և մատնիչ Հայկ Ասմընյանը:

րը: Կորոշեն, որ իրենցմե հինգ հոգի՝ Եղիա և Նշան Նորաշխարհյաննե-
րը, Հակոբ և Հարություն Քեփիտիրյանները և Մկրտիչ Գևորգյանը գյու-
ղի պարտեզներեն՝ լավաշ հաց եփելու համար սաճ բերեն: Չորս հոգի
ալ՝ Աբել Ավալտանյանը, Կարապետ Նորաշխարհյանը, Ավետիս Պար-
դուշյանը և Թորոս Տոտնայանը կուղարկվին ծխախոտ ճարելու համար:
Վերջին խումբը կմեկնի Սուլազ Տետե:

Գուցե հայ մարտիկներուն մաքառումները իրենց լրիվ բացատրու-
թյունը չգտնեն, եթե շներկայացնենք Զեյթունի լեռները, որոնք մեծ դեր
են ունեցեր տարված բազմաթիվ հաղթանակներուն մեջ:

Զեյթուն քաղաքը կտարածվի հսկա լեռներու միջև գտնվող հովի-
տի մը մեջ: Արևելյան կողմը Պերզնկա լեռն է, որ կերկարի մինչև Ավազ-
Կետիկի: Սուլն լեռան կողին վրա կառուցված էին Նորաշխարհյան գեր-
դաստանի ամառանոցները: Անոնց տերերը հոն կապրեին ամռան երեք
ամիսները միայն, մշակելով պտղատու ծառեր, այգիներ. ձմեռնամու-
տին, ցորեն ցանելէ հետո, կվերադառնային քաղաք: Ամբողջ ձմեռը ձյու-
նի թանձր խավով ծածկված կմնային ամառանոցները: Պերզնկայի
ստորոտը կգտնվեր Ս. Աստվածածնա վանքը, զոր այս պատմության
ընթացքին հաճախ հիշեցինք:

Քաղաքին հյուսիսային կողմը կբարձրանա Չայազ լեռնագագաթը,
որ կերկարի մինչև Պերիզ լեռը: Այս լեռնալանջին վրա կգտնվեին Պո-
լամյաններու, Աթմալյաններու, Մարկանյաններու, Մուճուգյաններու
ամառանոցները: Այդտեղ բնակվիլ կարելի էր միայն երկու ամիս վա-
ղահաս ցուրտին հետևանքով: Հոս կգտնվեին Զեյթունի հայտնի երկա-
թահանքերը, որոնք զեյթունցիներու կողմե նախնական ձեռքով կշա-
հագործվեին դարերու ընթացքին: Այս երկաթահանքեն կպատրաստվեին
զեյթունցիներու բոլոր զենքերը: Սակայն, այս շրջանը զուրկ էր պար-
տեզներե, պտղատու ծառերե. այն միայն ուներ ցանքի հարմար հողեր:

Զեյթունի արևմտյան կողմը կբարձրանա Սուլազ-Տետեն, իր Տոզ
լեռնագագաթով: Լեռնաշղթան կերկարի մինչև Յոթնեղբայր Չավտարի
լեռները: Օզդայասարի կիրճեն կանցնի էլպիսթանի ծանոթ ճամփան, որուն
ընթացքին վրա կհանդիպինք Շրջըրի, Ալա Չաջըրի ամառանոցներուն:
Սուլազ-Տետեյի արևելյան լեռնալանջին վրա կգտնվին Յաղուպյան-
ներու և Սուրենյաններու ամառանոցները, որոնք հարուստ էին գեղեցիկ
պարտեզներով, անմահական զուլալ ջուրերով և աղբյուրներով: Իսկ
արևմտյան լանջին վրա կբացվեր Մովթի հովիտը, որ ամենեն շատ աղ-
բյուրները ուներ և որոնց եղերքին կբարձրանային բազմապիսի ծառեր:
Զեյթունի երիտասարդութունը հոն կհավաքվեր Զատիկին հաջորդող կի-

րակին՝ հրացանաձգութուն ընելու և անվարժներուն ալ զենք գործա-
ծել սորվեցնելու համար: Գազաթին վրա կար քարայր մը, որուն մեջ
շթաքարերու սլուներ կային, և ուր կերևեր խորունկ խոտոշ մը: Կհավա-
տային, թե հոն իշնողը չէր մեռներ...

Քաղաքին հարավկողմը, մոտ երկու ժամ հեռավորության վրա,
կբարձրանային Ղազախի և Շեմպեթի լեռները՝ խիտ անտառներով
ծածկված: Այս շրջագծին մեջ կգտնվեին Արեգինի 16 գյուղերը, իսկ
Ավազկալ, Ղոշուղազ, Հաճիտերե, Ալաճըզ, Ղուրա հայ գյուղերը կգրտ-
նըվեին Շեմպեթի ստորոտը: Չայազ և Սուլազ-Տետեի լեռնագագաթնե-
րուն միջև կհոսեր Ղուսուր գետակը, որ կուգար Յոթնեղբայրի շրջանն:
Չայազ և Պերզնկայի լեռներուն միջև, Զեյթունի արևելյան կողմը, կհո-
սեր Վանքի գետը, որ քաղաքին հարավկողմեն կմիանար Ղուսուր գե-
տին, ապա երկուքը միացած կշարունակեին իրենց ընթացքը, թափելու
համար ձիհան գետին մեջ:

Մարտիկներու մնացած խումբը կղիմե Սուլազ-Տետեյի գագաթը,
ուր իրենց պիտի միանային ծխախոտ և հաց հայթայթելու համար բաժ-
նըվող մյուս երկու խումբերը: Նույն օրը բնիկ վահկացի Մելքոն անու-
նով երիտասարդը, որ թրքական բանակեն փախած միացած էր մար-
տիկներուն, իրենցմե հեռանալով կձերբակալվի թուրք զինվորներու կող-
մե: Մելքոն, ծեծի ազդեցության տակ վախցած, զինքը ձերբակալողնե-
րուն կհայտնե խումբին գաղտնիքները: Ի միջի աչոց ան կհայտնե, թե
նույն օրը մարտիկներու խումբը ժամադրված է Սուլազ-Տետեի մոտ,
որով նույն զիշերն իսկ թուրք զինվորները կհասնին հիշյալ վայրը և
դարանակալ կսպասեն:

Հայ մարտիկները լեռան բարձունքը հասնելու համար երբ կիրճեն
կանցնին, կենթարկվին թուրք դարանակալ զինվորներու կրակին: Կա-
տաղի բախումե մը վերջ, մարտիկները կհարկադրվին նահանջել և կա-
պատանին դիմացի Շեմպեթ լեռը: Այս կովի ընթացքին կմեռնի Ասա-
տուր Սաթյանը: Քանի մը օր հոն կղեկերին, փնտրելով իրենց ինը ըն-
կերները, որոնք հաց և ծխախոտ բերելու գացած էին, բայց զանոնք
չգտնելով կհուսահատին:

Վերջապես՝ երկրորդ խումբը կմիանա իրենց մեկ անձի կորուստով,
որ Աբելն էր: Մյուս հինգ հոգիներ խումբեն լուր չկար. մարտիկներու
խումբին պետք՝ Եղիան, իր երկու զավակները գտնելու համար կորու-
շե ժամանակ մը ևս մնալ այս շրջանը: Խումբը սակայն կմեկնի Ֆընտը-
ճագ: Եղիա կխոստանա միանալ իրենց, երբ առաջին խումբի տղաքը գտնե:

Խումբեն բաժնվողներն էին Եղիան՝ իր երկու զավակներովը՝ Պա-

պիկ և Խաչեր, հորեղբորորդիներեն՝ Խաչերը (Միքայելի թոռը), Գրիգորը և անոր որդին Տաճատը (Մըխսը Արթինի թոռը): Կորսվածներուն հետ միասին անոնք ընդամենը տասներմեկ հոգի կըլլային, որոնք կմնային տակավին Զեյթունի լեռներուն վրա: Արթին Չագըրջան և Հաճի Հակոբ Թեյեկյան Ֆրնտըճագ գացող խումբեն զատվելով Մարաշ կերթան, հոն բանտարկված իրենց հայրենակիցները ազատելու ծրագրով, սակայն, Մարաշի մեջ ձերբակալվելով, կախաղան կրարձարացվին:

Յոնուգի լեռներուն վրա կմնան Համբարձում Գարակոչյանն ու Պետրոս Աշըգյանը՝ իրենց ընտանիքներով: Ֆրնտըճագ մեկնող խումբը բաղկացած էր հետևյալներեն— Նշան, Կարապետ և Պետրոս Նորաշխարհյաններ, Փանոս, Հակոբ և Էմանվել Չագըրջաններ, Մեսրոպ, Արամ և Գարեգին Չուլագյաններ, Հովհաննես Ղարիպյան, Խաչո Աղզըպեկյան, Կարապետ Մելիտոնյան, Ավետիք և Լևոն Խուլմանյաններ, Արթին Աթալարյան, Հարություն Շեֆթալյան, Թորոս Տուռնայան, Ստեփան Պարոնյան, Նազարեթ Ֆելլահյան, Փանոս և Անտոն Հաճընյաններ, Համբարձում Մկրջան և Ավետիս Պուրղուլյան:

Ահա այսպես, յուրաքանչյուր մարտիկ կզիմեր իր ճակատագրին, երբ խմբովին փախչելու փորձը ի դերև ելած էր դեպքերու պատճառով: Բասանրիկու մարտիկներու խումբը՝ Փանոսի և Նշանի ղեկավարութեամբ, արտասովխառն հրաժեշտ կառնեն իրենց սիրական հողեն և կանցնին Ճիհան գետը, ուղղվելով դեպի Ֆրնտըճագ, իրենք զիրենք հանձնելով անստուգութեան և ճակատագրի խաղերուն: Խումբը կհառաջանա հետիոտն, զինված ոտից ցզուլս, վրեժի և ատելութեան ոգիով: Անձանոթ լեռներե, ձորերե; արահետներե անցնելով, անոնք վերջապես կհասնին Տավշան լեռան ստորոտը, Բազարճըզի հովիտին վրա տարածված Ֆրնտըճագ հայաբնակ գյուղաքաղաքը:

Ֆրնտըճագցի հայը, ի տես այս անակնկալ խումբի ժամանումին, կհավաքվի, կշրջապատե զայն և սիրով կհյուրընկալի: Միևնույն օրերուն հրապարակված էր նաև Ֆրնտըճագի գաղթի հրամանը, որով ֆրնտըճագցիք մատնված էին հուսահատութեան: Ամեն ոք իր ունեցած գույքը ծախելու մասին կմտածեր շրջակա թուրք բնակչութեանը: Զեյթունցի մարտիկներուն անակնկալ ժամանումը սակայն, պատճառ կըլլա, որ փոխեն իրենց մտադրութիւնը: Անոնք կխնդրեն խումբեն, որ իրենց հետ մնան, իրենց կողքին, միասին մաքառելու համար թշնամիին դեմ: Բազմաթիվ ֆրնտըճագցիներ, Չուքուր Օվայեն վերադարձին, ականատես եղած էին զեյթունցի ժողովուրդի գաղթին և թշվառութեան: Մարտիկները նախ կմերժեն ժողովուրդին խնդրանքը, առարկելով, թե չեն կր-

նար՝ ոչ իրենք և ոչ ալ ֆրնտըճագցիները՝ դիմադրել պետական ուժերուն և նման արկածախնդրութիւն մը կրնար աղետաբեր հետևանք ունենալ. նույնիսկ անմեղ մանուկներ կրնային զոհը դառնալ թուրքական վայրագութեան: Սակայն ժողովուրդին թախանձանքը ի վերջո կպարտադրե իրենց համակերպիլ: Անոնք կվերսկսին կազմակերպվիլ: Խմբապետական ժողովը կորոշե Մարաշի հայոց մեջ համախոհներ գտնել և անոնց օգնութեամբ ազատել Մարաշի մոտ 200 հայ բանտարկյալները, զանոնք եվս իրենց միացնելու համար:

Ֆրնտըճագի գյուղապետը՝ Մինաս Քեհչյան, հիշյալ ծրագրի հաջողութեան համար Մարաշ կըրկվի: Ան կմեկնի հոն բարեբախտաբար կգտնե բազմաթիվ համախոհներ, որոնք կխոստանան օգնել ֆրնտըճագցիներուն: Երբ վերջինները հարձակումի սկսեին Մարաշի վրա, իրենք ևս ներսեն կոխվին պիտի մասնակցեին, ազատելով բանտարկյալները: Դժբախտաբար այդ հանդուգն ծրագիրը կունենա աղետալի հետևանք, որովհետև կառավարութիւնը օրը օրին կիմանա կատարված անցուղարձերուն մասին:

1915 թ. հունիսի 15-ին Մարաշեն ջոկատ մը թուրք զինվորներ Ֆրնտըճագ կուգան գաղթի հրամանը գործադրելու համար: Ֆրնտըճագցիք կձերբակալեն զինվորները և կզբազան անոնց զենքերը: Մարաշի կառավարիչը՝ Մյումթազ, Կարապետ Պիլեզիկճյանի նախագահութեամբ պատվիրակութիւն մը կըրկե Ֆրնտըճագ, պահանջելով հայ մարտիկներուն հանձնումը և ժողովուրդին հնազանդութիւնը: Պիլեզիկճյանի պատվիրակութիւնը կճգնի համոզել ժողովուրդը, որ գործադրե կառավարութեան պահանջները, սակայն տեղացիները կմերժեն ամեն առաջարկ: Պատվիրակութիւնը ձեռնունայն կվերադառնա Մարաշ:

Մինչ կառավարութիւնը կմտածե Ֆրնտըճագի տեղահանութիւնը իրագործել, մարտիկներու խումբը կարևոր ծրագիրներ կմշակե բանտարկյալներն ազատելու մասին: Անոնք կորոշեն արշավել Մարաշի վրա, կրակի տալ քաղաքին կարգ մը մասերը, խուճապ հառաջացնել և պատեհութենեն օգտվելով հարձակիլ բանտին վրան:

Մարտիկները համոզված էին, թե կովելու համար բացարձակ անհրաժեշտութիւն էր բանտարկյալներուն ազատութիւնը և անոնց իրենց հետ գործակցութիւնը: Ասոնց վրա կրնային ավելնալ նաև Մարաշեն կարգ մը հայ երիտասարդներ, ու այդպիսով կրնար կազմիլ նկատառելի կովողներու թիւ մը, ճակատելու համար թրքական սովարաթիւ զինվորներուն դեմ:

Այս երկրորդ ծրագրի գործադրութիւնը կհանձնեն Անտոն Փանոսին՝

որը 1895-ի կոիվներուն վանքի գյուղի շրջակայքը մեծ անուն հանած էր: Սակայն այս վերջինը ևս, դժբախտաբար, կճախողի իր առաքելութեան մեջ. հաղիվ Մարաշի հարավային կողմը՝ Նախըր Յոնյու հասած, կձերբակալվի՝ քարյուղի թիթեղը, մարխն ու լուցկին ձեռքը, թուրք դարանակալ զինվորներու կողմէ և հաջորդ օրն իսկ առանց հարցաքննութեան կախաղան կբարձրացվի:

15 հուլիս 1915-ին, Յընտըճագի մոտ, Տաւլան լեռան ստորոտը, Պազարճըզ հովիտին մեջ կտեսնվին թուրքական զինվորական վրաններ: Հալեպի և Ատանայի կուսակալները, բանակին զուխը անցած, կորոշեն անձամբ փշացնել այդ հայ գյուղը ևս: Հինգ հազար հոգիէ բաղկացած կանոնավոր բանակ մը, նույնքան թվով թուրք խուժանի մը հետ միասին կմտնեն Յընտըճագին և կպահանջեն ըմբոստներու հանձնումը կառավարութեան:

Ձեյթունցի հերոսներ՝ Նշանը, Փանոսը, Մեսրոպը իրենց զինակիցներով կլծվին տենգոտ գործունեութեան: Անոնք գիշեր ու ցերեկ կճգնին և կընեն ռազմական անհրաժեշտ կարգադրութիւնները: Խմբապետները երեք մասի կբաժնեն կովողները. առաջին խումբը՝ Նշանի և Փանոսի ղեկավարութեամբ զիրք կբռնեն եկեղեցիին ու դպրոցին մեջը՝ Մարաշի ճամփուն ուղղութեամբ: Երկրորդ խումբը զիրք կբռնեն քաղաքին հյուսիսային կողմը՝ Մեսրոպ Չոլագյանի զխավորութեամբ լրտեսելու համար թրքական ուժերուն շարժումները: Այս խումբին հետ էին Նազարեթ, Հովսեփ և Քեհայայի միակ որդին Նազարը: Իսկ արևմտյան ճակատ՝ Ատանայի ճամբուն պաշտպանութիւնը կստանձնէ Յընտըճագի ամբողջ ժողովուրդը:

Հուլիսի 26-ի առավոտն է: Արևի ճառագայթները կխավարին թրքական թնդանոթներու ծուխէն ու մուխէն: Թրքական հարձակողականը շղթայազերծված է արդեն: Հայ մարտիկները անվախ՝ աջէն ու ձախէն եկած ահալոր հարձակումներուն կդիմադրեն և բազմաթիվ թուրք զինվորներու մահ կպատճառեն: Կոիվը ահալոր և անհավասար էր: Տեսարանը սարսափ կազդեր դիտողին: Թրքական զինվորական սպայակույտը և անոր հրամանատարը՝ Ղալեպ, որ Կիլիկիո հայութեանը տեղահան քրած էր, ի տես Յընտըճագի ժողովուրդին գերմարդկային զիմադրութեան, կատղած, մոլեգնած, սվինավոր հարձակումի հրաման կարձակէ: Կոիվը կհասնի իր գագաթնակետին: Մահը անխուսափելի էր այլևս: Ինչպե՞ս կարելի էր որ բոլո մը խեղճ ժողովուրդ զիմազրավեր հազարներէ կազմված արդիական բանակ մը և պարտութեան մատներ գայն: Սարսափն ու խուճապը մեծ համեմատութեան հասած էին ժողո-

վուրդին մեջ: Մանուկներ կողբային, կիներ կճչային: Վերջապես քանի մը ժամերու անհավասար կռիվէն հետո, նահանջի հրամանը կտրվի: Թրքական բանակը շղթայի տակ կառնէ կովողները և բոլորը միասին անձնատուր ըլլալու կստիպի:

Իր մարտիկներովը հյուսիսային կողմը դիրք բռնած Մեսրոպը, երբ կտեսնէ ժողովուրդին անձնատուրութիւնը, կորոշէ նահանջել և ապաստանիլ Յընտըճագէն դուրս՝ լեռները: Այդ ընթացքին մթութեան մեջ մարտիկները իրարու հետքը կկորսնցնեն: Մեսրոպ կիյնա Վարժապետյանի Պազարճըզի ագարակին քուրդ պահապաններուն ձեռքը և կսպանվի: Անոնք զուխը կկտրեն և Մարաշ կտանին: Մարտիկներէն Ստեփան Պարոնյան Մարաշի շրջակայքը կձերբակալվի և կգնդակահարվի: Արամ Չոլագյան և Լեոն Խուշմանյան Մարաշ կմտնեն ու կխառնվին տարագիրներու կարավանին:

Թրքական բանակը, մոլեռանդ խուժանին օգնութեամբ, գյուղը գրավելէն վերջ, մոլեգնորեն կհարձակի դպրոցին և եկեղեցիին վրա, ուր ապաստանած էին կովողներու մյուս խումբը՝ Նշանի և Փանոսի ղեկավարութեան տակ: Փոքրաթիվ հերոսները քանիցս կհաջողին բանակը փախուստի մատնել, մեծ քանակութեամբ թուրք զինվորներ սպանելով և զանոնք սարսափի մատնելով: Կարապետ Մելիտոնյան, Տեվետիկ կոչված հերոսը, ծանրապես կվիրավորվի այս կռիվի ընթացքին: Ան հմուտ զինագործ և միանգամայն հանդուգն կովող մըն էր: Վիրավորված ըլլալով հանդերձ ան կոիվը կշարունակէ դյուցազնաբար:

Պաշարման օղակը կսեղմվի դպրոցին և եկեղեցիին շուրջը: Թուրքերը կմտնեն ան և ամբողջապես կշրջապատեն: Մելիտոնյան, որպեսզի ձեռք չիյնա թշնամիին, կխնդրէ ընկերներէն որ զինքը սպաննեն, բայց անոնք կմերժեն: Ապա ճարահատ ան կորոշէ անձնասպան ըլլալ, սակայն իր պարպած գնդակները կվրիպին: Ի վերջո, մերկացնելով դաշույնը, ան կխրէ իր սրտին: Մարտիկները Կարապետին անձնասպանութեան այս ահալոր պատկերէն հուզված, կրկին կանցնին գրոհի: Նշանի և Փանոսի պատնեշէ պատնեշ ցատկելով տված խրախուսանքները կբարձրացնեն կովողներու ոգին և օրհասական մարտը կշարունակվի նոր զոհեր պատճառելով թուրք խուժանին և զինվորներուն: Երկուքն ալ փորձառու կովողներ և ծանոթ իրենց քաջ անցյալով, անոնք ամեն հնարք կգործադրեն փրկութեան միջոց մը գտնելու համար, սակայն իզուր:

Կպրոցն ու եկեղեցին կբանդվին թշնամիէն արձակված թնդանոթ-

ներու ումբերին, Դիմադրութեան կարելիութիւնը հետզհետե կնվազի: Ընկալաւորական ժամը քայլ առ քայլ կմոտենայ:

Քրքական սպայակույտը կատղած իր զինվորներուն կորուստեն, նոր ծրագիր կմշակե բուռ մը հայ երիտասարդները փշացնելու համար: Երկար գավազաններու ծայրը քուրջի կտորներ կապել տալով, քարյուղ սրսկել կուտան շենքերուն վրա և ապա կհրդեհեն:

Ընտիր փայտե շինված երկու շենքերը կծարձատին կրակի լեզվակներեն և անողոք բոցը գոցելով ամեն պատուհան ու դուռ, կարգիլե հայ մարտիկներուն դուրս ելքը: Հայտրդիները, մահը աչքերնին առած, կփորձեն դուրս խոյանալ, բայց բոցը կարգիլե և կմոխրացնե բոլորը: Ահա նման եղերական պայմաններու մեջ կմարտիրոսանան զեյթունցի քսան քաջերը:

Քրքական վայրագ հրամանատարութիւնը, իր կրած անհաջողութենեն մոլեգնած, բոլոր ֆրնտըճագիները տեղահան կընե: Նույն գիշերն իսկ ան կհարձակի Մարաշի բանտը գտնվող զեյթունցի բանտարկյալներուն վրա և անոնցմե 60 հոգին կառաջնորդե Մարաշի Քիրաճ օջախը կոչված տեղը, ուր ողջ ողջ զանոնք կայրե կիրի հնոցներուն մեջ:

Այս վաթսուն նահատակներուն մեջն էին Փանոս Զուրաբյանը իր երկու կորյուններով՝ Հովսեփ և Աբրահամ, Պապիկ փաշայի անդրանիկ որդին՝ Ավետիս Նորաշխարհյանը, Միքայել, Փանոս և Վարդան Նորաշխարհյանները, Գալուստ և Սեդրակ Չազրբայանները, Խաչեր Թյոպեյանը, Թազվոր Գուսպուսյանը, Արթին և Գրիգոր Մխճանները, Փանոս Գալաճյանը, Սողոմոն Քրվանտյանը, Հայկ Քրվանտյանը, Ասատուր Աթալյանը, Մինաս Աբարթյանը, Գրիգոր Եղենկիելյանը, Եղիա Գալաճյանը, Վանես Թումպուլյանը, Ռուբեն Քենտիպեյանը և ուրիշներ:

Այս աղետեն ետքը առաջնորդ հայր Գարանֆիլյան, Հովսեփ վարդապետ Ագրապյան, Տեր Սահակ քահանա Մարկանյան Դեյր էզ-Ձոր կաքսորվին, ուր և կսպանվին: Կարապետ Պալճյան, Հակոբ Թաճյան, Խ. Նորաշխարհյան, Կ. Զոփուրյան, Հովհաննես Տեր Նշանյան կախաղան կբարձրացվին: Դոկտոր էլմաճյան ազատ կարձակվի: Նազարեթ Եղենկիելյան Գանլը Տերեի մեջ նույնպես կախաղան կբարձրացվի: Ան, նախքան իր մահը, հինգ վայրկյան տևողութեամբ հետեյալ խոսքերը կուղղե թուրք խուժանին.

— Իսլամ հայրենակիցներ, արյունոտը պաշտոնյաներ, այս հուվաքույթը հարսանեկան թափոր մը չէ: Անմեղ ժողովուրդի մը, ձեզ հետ ապրած, ձեր երկրին լույսն ու հույսը եղող ազգին հուղարկավորութեան թափորն է: Այսօր մենք հոս կախաղանի ցիցերուն վրա պատրաստ ենք

մահվան՝ սպանդանոց տարվող զանուկի մը պես: Մեր ազգային և մարդկային պարտքը վճարած ենք. բայց կցավիմ, որ տգետ ու վայրագ ամբոխի մը անասական կիրքերուն գոհացում կուտաք...

— Լո՛ւ, լո՛ւ, — կզոռան շրջապատողները և կից մը կուտան աթոռին, որուն վրա կանգնած էր Նշան Եղենկիելյանը: Այդպիսով կնահատակվի Զեյթունի արժանավոր զավակներեն մին ևս:

Այսպես, Մարաշի բանտը 198 հայ բանտարկյալներու գերեզմանը կդառնա: Անոնք կսպանվին ամենեն վայրագ ձևով ու նախատինքով: Մարաշի բանտին մեջ մնացած զեյթունցի երկու երիտասարդները ևս կորոշվի սպանել: Չեռքերնին շղթայակապ, շրջապատված զապթիչենեքով, զանոնք կտանին Գանլը Տերեի կախաղանը: Այնտեղ, բանտարկյալներեն Պարսումը, հուժկու և հաղթանդամ երիտասարդ ժը, կախաղանին կմոտենա հպարտութեամբ և շվանին օղակը կանցընե վիզին: Սակայն, չվանը կկտրվի ու Պարսում կհարձակի իր շուրջը գտնվող թուրքերուն վրա, որոնք սվիններով կբիմավորեն կախաղանի զոհը և կխոշտանգեն զայն:

Համբարձում, Պարսումի ընկերը, կօգտվի առիթեն և ինքզինքը վարկենտե Գանլը Տերեի կամուրջեն, շղթայված ձեռքերով ու կհաջողի փախչիլ և ազատվիլ: Ան օրերով կթափառի լեռներու վրա, ապա կհասնի Այնթապի շրջակայքը, ուր ծերունի թուրք մը կացինով մը կկտրե Համբարձումի երկաթյա շղթայակապերը: Ան, իր հետքը կորսնցնելու համար, զինվոր կարձանագրվի Այնթապի թրքական գորանոցը և թուրքական բանակին հետ կղրկվի Սվեզի ջրանցքը անկե ալ Պիր Սապա փախչելով կմիանա անգլիական բանակին:

Երկու հարյուր զեյթունցիներու ողիսականը վերջ գտավ այս ձևով: Թուրքերը, ամենավայրագ միջոցներով, Զեյթունի և շրջակա գյուղերու հայ բնակչութիւնը անապատե անապատ քշելե վերջ, անոնց ստացվածքը, տնային բոլոր առարկաներն ու իրերը թալանեցին: Թուրք բանակին հետ միասին գործող խուժանը, իր ավարի բաժինը առնելե վերջ, տեղավորվեցավ կարգ մը գյուղերու մեջ: Անոնք փոխանակ աշխատանքով ապրելու, սնվեցան հայերու ձգած ունեցվածքով, քար ու քանդ ընելով բոլոր շենքերն ու օջախները:

Անվեհեր մարտիկ խաչեր նորաշխարհյան՝ մահտեսի Միքայելի թո-
ռը, որ ահանատես միակ վիան եղած էր Զեյթուն քաղաքի ամբողջական
հրդեհումին, հետևյալ ծանոթությունները տվավ մեզի: Հրդեհը տեղի
ունեցած էր 1915 թ. օգոստոս 13-ին:

Զորեքշաբթի կեսօրին էր. խումբով կգտնվեինք Պերզնկա լեռան կա-
տարին Պապիկ փաշայի ծանոթ քարայրը: Հանկարծ օդին մեջ հրդեհի
ծուխեր սկսան երևիլ: Հետաքրքրութենե մղված քարայրեն դուրս ելանք
և վազելով հասանք Պերզնկա լեռան այն մասը, որ կբացվի վանքին
դիմացը և ուրկե կերևար քաղաքին մեծ մասը: Սուրենյան թաղեն նզե-
կիկենց տունը կրակի բոցերու մեջ կորսված էր. ծուխի ալիքները քու-
լա քուլա կբարձրանային դեպի վեր: Մեզի համար տակավին անբացատ-
րելի էր այս հրդեհին պատճառը: Կես ժամ հետո Շուլթոյուլյան թաղեն
ևս սկսավ նոր հրդեհ մը, որ անմիջապես տարածվեցավ թաղին մեջ:
Քարացած, կղիտեինք այս տխուր պատկերը հրդեհին, որ կծավալեր ու
քիչ հետո կընդգրկեր Զեյթուն քաղաքը ամբողջութեամբ:

Քաղաքին շուրջը հավաքված էր թուրք նորեկ գաղթական բնակչու-
թյունը, որ ի տես պատմական Զեյթունի հրկիզումին ուրախութեան
ցուցցեր կկատարեր: Քանի մը ժամ վերջ Զեյթունի մոտավորապես 1500
տուններն միայն մոխիր կմնար իբրև հիշատակ:

Հրդեհներու բոցերուն հետ պայթումներ ևս կլավեին հաճախ, որոնք
վստահորեն պայթուցիկ նյութերու պատճառով էին, որոնք կրակին հետ
դուրս կխուժեին մեծ աղմուկով:

Մայրամուտին Զեյթունը ոչ ևս էր:

Նույն գիշերը, լուսնի լուսին տակ, քաղաք մը ամբողջ կնիրհեր
մահվան բունին մեջ և տխուր ամայություն մը մոխիրներով ծածկված
կտարածվեր երեք լեռներուն միջև: Զեյթունի հրկիզումին հետ միաժա-
մանակ կհրդեհվեր Փռնուզը ուրիշ շատ մը հայ գյուղերով միատեղ, ու
անոնց բոցերն ու մուխերը ևս, տարածվելով անհուն միջոցին մեջ,
կմիանային երկնակամարին վրա: Ու այսպես, պատմական Զեյթունը
իր շրջակայքով բոլորովին կսրվեր քարտեղեն: Ա՛հ, որ եղած էր խոր-
հրդանիշներեն մեկը հայ Ազատագրութեան: Ազատութեան շքեղ բոցը
տասը դարեր վառվելե ետք իր սրբազան բարձունքներուն վրա ահա ի
վերջո կշիջեր թշնամիներու նենգ հարվածներուն տակ...:

1915 հուլիս 24-ին, Սուլթանիյեի գայմազամը կհայտարարե, թե
Ք. Գոնեն հրահանգ ստացած է, որ հայերը իրենց քաղաքները վերադառ-
նան: Գյուղերը ցրված շոր հաց մը գտնելու համար աշխատող զեյթուն-
ցիներուն կհրահանգվի վերադառնալ Սուլթանիյե, Զեյթուն երթալու
համար:

Ժողովուրդը կրկին կհավաքվի, բայց դարձյալ գավազաններու հար-
վածներու տակ ճամփու կդրվի: Գաղթականները, որ առաջին առթիվ
խանդավառված էին հայրենի տուն վերադառնալու հույսով, տեսնելով
թուրքական գավազանն ու մտրակը կապրին նոր հուսախաբություն մը ևս:

Գաղթականներու կարավանը, փոխանակ հայրենի տան ճամփան
բռնելու, կուղարկվի Թուրքիո խորերը՝ հետիոտն, առանց պաշարի ու
ջուրի: Տեր Մեսրոպ քահանա Գրքալուտյան, շրիմանալով տառապանքին,
կմեռնի ճամփան: Անոր դիակը վաչրի կենդանիներու կեր կդառնա...

Կհասնինք էրեյլի: Կայարանը նոր օրերու Բաբելոն մը կդառնա:
Այստեղ են հայութեան բոլոր խավերուն ներկայացուցիչները, զանազան
շրջաններե հավաքված: Գաղթականներու այս խումբերը օրն ի բուն
կտվալտեին գիշերելու, պատսպարվելու տեղ մը գտնելու հույսով, որ-
պեսզի խուսափեին թուրք ոստիկաններու հարվածներեն ու շարժարանք-
ներեն: Մեր խումբին մեջ թշվառությունը իր ահավոր ավերները գոր-
ծել սկսած էր: Բարեբախտաբար միջոց ունեցողներ, օգտվելով շոգե-
կառքի երթեկեկեն, մաս առ մաս փախչիլ սկսան, հեռանալով դեպի Պո-
զանթը: Կաշառակերությունը իր դերին մեջ էր: Ոմանք հաջողեցան
էրեյլի մտնել, հոն պատսպարվելու համար, իսկ մնացած մեծամաս-
նությունը մնացին անպատսպար և անթի՛ կայարանին շուրջը:

Հորեղբորս՝ Սարգիսի, Արթին Պոյամյանի, Հաճի վանես Մարկան-
յանի հետ խումբ մը կազմելով, ընտանյոք հետիոտն ճամփա կելլենք
դեպի Տարսոն, հետեւելով կարավանի մը, սակայն, մութ խավարին
պատճառով կկորսնցնենք մեր ուղեկիցները և կմոլորինք, ենթարկվե-
լով ավելի դժուրակ պայմաններու: Չորս օր ճամփորդելե հետո կհանդի-
պինք թուրք կառապաններու, որոնք գումարի մը փոխարեն մեր խումբը
կառաջնորդեն և անվտանգ կհասցնեն Պոզանթը, ապա մեր ճամփան
շարունակելով կհասնինք Տարսոն քաղաքը: Կուղղվինք ուղղակի հայոց
եկեղեցին, ուր կարժանանանք մեր ազգակիցներուն վեհանձն ընդու-
նելութեան, սակայն, այդտեղ ևս արտագաղթը սկսած էր:

Մի քանի օր հազիվ կրցանք մնալ Տարսոնի մեջ, հետո կրկին ճամ-

փա ելանք դեպի Հալեպ, այս անգամ շոգեկառքով: Հետևյալ օրը հասանք Օսմանիյե, որ գարձած էր հայ խլյակներե կազմված գաղթական մը:

Թուրք կառավարութեան հրահանգին համաձայն ճամփա կորովինք դեպի Հալեպ, այս անգամ եղան սալլերու վրա տեղավորված: Ամեն ոք կ'մտածեր իր հետքը կորսնցնել: Մենք Հալեպ մեկնող տարսոնցիներուն կարավանին մեջ խառնված էինք, բաժնվելով զեյթունցիներու խումբեն, Օսմանիյեի մեջ մեր ընտանիքը ճանչցողներու հանդիպած էինք, որոնց տեսողութենեն հեռանալը մեզի համար հարկադրանք էր: Գրիգոր Կյուլվանեսյանի, բրոշս՝ Սրբուհիին նշանած Կարապետին հոր պահանջին համաձայն, բաժանումի պահուն, բացօթյա ծառերու տակ, արտասուքներով կատարեցինք հարսանեկան արարողությունը, Հալեպի մեջ կրկին իրարու հանդիպելու հուշով:

Վեցօրյա տառապալի ճամփորդութենե ետք հասանք քրդաբնակ Ռաճո գյուղը, ուր քուրդ հելուգակներու խումբի մը կողմե հարձակումի ենթարկվեցանք: Տարսոնցի ընտանիքներու շնորհիվ կարավանին ընկերացող ոստիկանները կաշառեցինք, որմե ետք կրցանք ապահով հասնիլ Գաթմա: Տարսոնեն մինչև Գաթմա մեր զեյթունցի ըլլալը գաղտնի պահեցինք ոչ միայն ոստիկաններեն, այլ նաև մեզի ընկերացող հայերեն, որպեսզի մեր պատճառով անոնք ալ դժբախտություն չմատնվին: Գաթմա՝... հայր՝ սպանդանոց:

Փոքր գյուղ մը, ավելի ճիշտ պիտի ըլլար ըսել՝ շոգեկառքի կայարան մը, շրջապատված տասնյակ մը քրդական տուներով: Այս կայարանը Ազեզ անունով ծանոթ գյուղին արևելյան կողմը կիցնա, ընդարձակ դաշտագետիսի մը բլուրին վրա, այգիներով և ձիթաստաններով շրջապատված: Հարավակողմը կերկարի Մարաշ—Զեյթուն ճամփան, իսկ նույն գիծը կերկարի դեպի Քիլիս—Այնթապ: Գաղթականներ՝ Մարաշեն, Զեյթունեն և զանազան տեղերե՝ հավաքված էին հոն, խեղճ ու մաշած վրաններու տակ: Զուրի և հացի տագնապը ահավոր էր:

Թուրք ոստիկանները և քուրդերեն ոմանք հայ կույսեր և կիներ առևանգելով զբաղած էին: Համաճարակ հիվանդություն մը սկսած էր իր ահավոր սարսափը պտտցնել բոլոր հայ վրաններեն ներս: Ամեն օր տասնյակ մը հայեր քաշկոտվելով կտարվեին ու կղիզվեին փոսերու մեջ: Կաթիլ մը ջուր ունենալու համար կիներու և այրերու բազմություն մը կարգի կսպասեր: Եղկելի կացությունը մեզ կմղեր ժամ առաջ ազատվիլ այս միջավայրեն: Տիգրանակերտցի Տիգրան անունով հայ կառապան մը մեզ նույն գիշերն իսկ Հալեպ հասցուց, ամեն վտանգ աչք առնելով:

Հալեպի մեջ տեղավորվեցանք Ս. Աստվածածին եկեղեցիին մեջ:

Քաղաքի Պապ-էլ-Տարաճի հրապարակեն մինչև Սալիպե՝ եկեղեցվո փողոցները կհոտեին հարյուրավոր հայ դիակներու գարշահոտութենեն: Հոս ու հոն, փողոցներու երկայնքին դիակներով, կիսամեռ հայորդիներով լեցված էր: Հալեպի բնիկ հայ երիտասարդությունը, ղեկավարությամբ Գուրգեն Սերայտարյանի, Հայկ Պոյաճյանի, Օննիկ Մուրատյանի, Իսա Քեմալի և կարգ մը սասունցի հայորդիներու, կորոշեն Մուսա-լերան և Զեյթունի հայ հայդուկներուն զենք և օգնություն փութացնել:

Իկիթ անունով տալվորիկցի երիտասարդի մը խմբապետությամբ 23 երիտասարդներ ճամբու կորովին, որոնց մեջ էին զեյթունցիներեն Փանոս Զոլազյանի որդի Սեդրակը, Գանիել Գապիշյանը, Սարգիս Մելիտոնյանը, Մանուկ Ճելլաթյանը, Լեոն Խուշմանյանը. մյուսները մշեցիներ և սասունցիներ էին: Խումբը հաղիվ Այնթապի լեռները հասած, կռիվի կրոնվի թուրք պաշտպոտութենե՝ ինչպես նաև բանակի զինվորներու հետ: Մշեցի Տիգրան գերի կիցնա: Զեյթունցիները կփախչին և կհասնին Զեյթուն, մինչ խումբին մնացած անդամները կնահատակվին տեղվույն վրա:

Տիգրան շարշարանքին շղիմանալով կխոստովանի ամեն բան, որուն հետևանքով Հալեպի մեջ անմիջապես կձեռքակալվին Տեր Հարություն ավագ քահանա Եսայանը, Վահան Գավաֆյանը, Շավարշ Շիշմանյանը, Օննիկ Մուրատյանը, Իսա Քեմալը, Գուրգեն Սերայտարյանը և կարգ մը սասունցիներ:

Հալեպեն Զեյթունի լեռները վերադարձող զեյթունցիները իզուր կթափառին որոնելու իրենց սիրելի պետը՝ Եղիա Նորաշխարհյանը: Անոնք իրենց թափառումներու ընթացքին բախում մը կունենան Ալաշայի մեջ, ուր կնահատակվի Դանիել Գապիշյանը: Ապա անոնք դիպվածով կհանդիպին Գրիգոր և Տաճատ Նորաշխարհյաններուն, որոնք զատված էին Խաչերեն: Զիրար թշնամի կարծելով երկու կողմերը կռիվի կրոնվին անմըտորեն, ու իրարմ կհեռանան 12 ժամ կովելե հետո միայն:

Ամիս մը վերջ անոնք կհանդիպին Եղիայի խումբին ու կմիանան անոր: Մոտ 15 օր միասին կմնան, սակայն քաջ գիտնալով, որ ձմեռը այդ կողմերը անտանելի կդառնա, ձմեռնամուտին կվերադառնան Հալեպ: Մինչ Եղիայի խումբը Խունիսի լեռները կմնա՝ պաշարնին հետը առած:

Մեր Հալեպ հասնելեն հետո, Մուլթանիյեի զեյթունցի գաղթականները, խումբ առ խումբ, խիստ թշվառ պայմաններու տակ, միացան

մեզի: Տեր Հովսեփ քահանա Խուշմանյանի և Ավետիս Խըլըբողյանի խումբը ճամփան կենթարկվի ավազակներու հարձակումին և զոհ մը տալի հետո կհասնի Հալեպ:

Գաղթականներու կարավանները Ամանոս լեռան ճամփուն վրա կմտադրեն վերադառնալ հայրենի լեռները: Շորվոզլույան ընտանիքեն քանի մը անձեր կանցնին Ճիհան գետեն՝ Զեյթուն հասնելու համար, սակայն կձերբակալվին և կկախվին: Հալեպեն դուրս գտնվող գաղթական զեյթունցիներ կտեղավորվին Ինթիլի և կզբաղին ճամփու շինութեամբ:

Հալեպ հասնողներուն մեկ մասը Դեյր էզ-Ջոր, ուրիշ մաս մըն ալ Գամասկոս և Հավրան աքսորվեցան: Մեզ ևս հանգիստ չձգելով առաջնորդեցին Կյուսուքիսան, ուր հավաքված էին մեզմե առաջ Այնթապեն և Մարաշեն ծանոթ ընտանիքներ:

Արեւածագին Ֆրանսիական հիվանդանոցեն ճամփու դրվեցանք ոստիկաններու հսկողութեան տակ: Այս հիվանդանոցն ալ մեռելատունի մը վերածված էր: Հոն էին զեյթունցի Պարութեյան և Եզեկիեյան ընտանիքները, որոնցմե մաս մը Հալեպի արվարձաններեն Սիպիլ աքսորվեցան:

Մորեղբայրս ևս, մեզ Սիպիլ կարծելով, կմեկնի այնտեղ: Հաջորդ օրը քանհինգ զեյթունցի ընտանիքներ երկաթուղիով ղրկվեցանք Դամասկոս: Մեզմե քանիներ մեռան ճամփու ընթացքին: Գնացքը չէր շարժվեր և մենք յուրաքանչյուր զառիվերեն վար իջնելով կհրեինք զայն, միեւն որ հասանք Ռայագ: Իրիկնամուտին հետիտոն ճամփա հանվեցանք զեպի Դամասկոս:

Սվինավոր զինվորներու հսկողութեամբ ճամփա ինկանք: Եղբայրս՝ Հակոբ, որ հիվանդ էր, խնդրեց Ռայագ մնալ, բայց խարազանի հարվածներով դիմավորվեցավ: 500—600 հոգինոց գաղթականներու խումբըս, օրական միայն երեք ժամ քայլելով, հինգ օրվա մեջ հասանք Դամասկոս: Հիվանդ եղբայրս փոխադրելու համար ջորի մը գտնել անկարելի եղավ: Արդեն եղբորս տիկինն ու որդին կորսնցուցած էինք Հալեպի մեջ:

Գողգոթայի ճամփուն վրա, հաջորդ օրը հասանք Տրաա գավառակը, անապատային ճամփու վրա անջրդի կայան մը, ուր գավաթ մը ջուր գտնելը օրհնութիւն մըն էր: Հակառակ կեսարացի հայ բժիշկի մը խնամքին և հոգածութեան եղբայրս մահացավ Տրաայի կայարանը, ութօրյա տառապանքի վերջ:

Եղբորս թաղումին հաջորդ օրն իսկ, մտրակի հարվածներու տակ, կրկին ճամփա ինկանք և կես գիշերին հասանք Նիսիլ գյուղը: Շրջանի

մյուսյուրին միջոցով մնացինք հոն մոտ մեկ ամիս, ուրկե քվեցանք Պալ կոշված տեղը, ուր պատսպարվեցանք ագարակի մը մեջ: Այս ճամփորդութեան ընթացքին կորսնցուցինք Գասապյան Արթինի տիկինը, իր միամյա զավակով Տիգրանիկով:

Պալ մնացինք տարի մը: Հորեղբայրս Պիր Սապայի զինվորական կայարանեն փախչելով միացավ մեր խումբին, բայց շուտով մեռավ, ինչպես նաև ուրիշներ:

Անտանելի էր կյանքը Պալի մեջ: Տաք օդը մեզ կշարշարեր, հիվանդութիւնը անպակաս էր և ուտելիք ու վառելիք գտնելը՝ անկարելի:

Պալի գաղթականները սկսան մաս առ մաս փախչիլ, ոմանք Դամասկոս, ոմանք Հավրան գացին: Միայն երկու ընտանիքներ շարունակեցին մնալ տարի մը այս շրջանին մեջ, իսկ մենք ձիրեյտիե կոշված քրիստոնեաբնակ գյուղը հաստատվեցանք, ուր գաղթականները համեմատաբար ավելի լավ դիրք մը գրաված էին: Մենք ալ սկսանք առևտուրի կրպակ մը բանալ ու աշխատիլ: Հիվանդութիւնը, սակայն, նոր դժբախտութիւններու դուռ կբանար: Երկարապատում շարշարանքներ վերջ, Մոստիշյան էֆենդիի միջնորդութեամբ, Մարկարյան Գևորգի կողմե գործի կանչվեցանք՝ Դամասկոսի շրջակայքի ագարակներեն մեկուն մեջ պատսպարված երկու հարյուր որբուհիներու հոգատարութիւնը ստանձնելու համար:

1917-ին, հայակեր Թալեաթը նոր ջարդի հրաման տված էր: Ոստիկանները կրկին գործի սկսան հավաքելու համար հայ գաղթական խլայկները, որոնք ոստիկանատուններու, խաներու և մզկիթներու բակերը լեցվեցան: Մեր գտնված ագարակին մեջ մեզմե գատ ոչ մեկ հայ կար: Բոլորը տարագրված և կամ սպանված էին: Այս տխուր բույնն ալ ալլես անտանելի եղած էր, ուստի որոշեցինք ձեպել-Տրյուզ անցնիլ և իբրև թուրք առևտրական հասանք Սվեդյա: Հոն բազմաթիվ հայեր խրոնրված էին, հուսալով թե անկե դյուրին է անգլիական գոտի անցնիլ, քանի Յոթնեղբայրյան պատվիրակութիւնը Ագապայեն եկած կաշխատեր հայերը փախցնել: Ապահ Պետրոսյան ևս, 1895-ի Զեյթունի զեկավարներեն, Բարեգործականի կողմե Ագապա եկած էր և գաղթականներու փոխադրութեամբ կզբաղվեր: Ան ուզեց օգտակար ըլլալ հատկապես մեզ, իբրև Նորաշխարհյան սերունդի մնացորդներ, սակայն չհաջողեցավ: Ոստիկան զինվորները անակնկալորեն ագարակ եկան և մեզ ձերբակալելով բանտ տարին:

Եղբայրս՝ Մարկոսը, երկու օր առաջ ձեպել-Տրյուզի սահմանին վրա գտնվող Խապապ քրիստոնեաբնակ գյուղը ղրկած էինք՝ պատրաստու-

թյան համար, իսկ պզտիկ եղբայրս՝ Ավետիքը, տասնմեկ տարեկան, ավելի առաջ ղրկած էինք, պաշարի պատրաստութուն տեսնելու և նաև կարավան մը գտնելու, որպեսզի գիշերանց գար և մեզ իր հետ տաներ:

Ժամը 9-ին Դամասկոսեն մեկ ժամ հեռու գտնվող Տրապի պահականոցը բանտարկված էինք և հաղորդակցութենն խզված: Եղբայրս՝ Ավետիք, Դամասկոսեն վերադարձին, երբ կիմանա մեր ձերբակալութունը, անմիջապես մեզ փնտրելու կելլե: Իրեն կընկերանա Եզեկիել Պարութճյանը, որ ագարակին մեջ մեզ մոտ կընակեր:

Այդ շրջանի կալվածատեր շերքեզ Հասան բեյը լսելով մեր ձերբակալութունը և տեսնելով, թե այդ պատճառով թե՛ մայրս և թե՛ իրեն հոմանուհի եղող երկու իզմիրցի հայ օրիորդները խոռված դրության մատնված են, խղճի խայթ կզգա և շատ հավանաբար հայ օրիորդներուն հաճոյանալու միտումով, կստիպե թուրք հարյուրապետին, որ կեսօրին ճաշի մնա իր մոտ, կարգադրելու համար մեր ազատ արձակումը: Մինչև ժամը 4-ը, հարյուրապետը Հասան բեյի զոյակին մեջ, հիշյալ երկու հայ օրիորդներուն ներկայութեամբ, ժամանակ կանցնե: Ապա ժամը 5-ին ան մեր խցիկը գալով ըսավ. «Փացե՛ք բեյին բարև խոսեցեք, առտու կանուխ իրեն կսպասեմ»: Ավետիք եղբայրս և Եզեկիել Պարութճյանը դուրսը ծառերու տակ անկյուն մը կծկտած կհետևեին մեզի: Չերքեզ բեյին միջամտության շնորհիվ, ուրեմն, հարյուրապետը մեզ բանտեն ազատեց:

Մենք՝ երեք եղբայրներս և Եզեկիել Պարութճյանը, ուրախ ու զվարթ ճամփա ինկանք ագարակի մեր բնակարանը երթալու համար: Ռուբեն եղբայրս խորհուրդ տվավ մեզ առանց ագարակ երթալու անցնիլ ձեպել-Տրյուզ: Ես և Եզեկիելը հակառակեցանք. պետք չէր կասկած արթնցնել:

Ագարակի դռան առջև նստած էր մեր բարեկամ շերքեզ Հասան բեյը, իսկ անոր հետ ապրող երկու անմեղ հայ օրիորդները վերը՝ վիլլայի դռան առջև կանգնած մեր գալիք ճամփան կդիտեին: Հասան բեյ մեզ տեսնելով ծպտեցավ ու ըսավ. «Ձավակներս, ի՞նչ հարկ կա ներկա պայմաններուն մեջ հեղափոխութուն կազմակերպելու»: Երբ ըսինք, թե՛ «Զրպարտութուն է», «Ինչ որ է,— ըսավ,— շո՛ւտ դացեք, տիկին մայրիկը թող հանգստանա, մեղք է, շատ կտառապի»:

Հասան բեյ՝ հարյուրապետը իր զոյակին մեջ ճաշի հրավիրելով համոզած էր զայն, որ ցերեկով մեզ քաղաք շտանի և հանրության ուշադրութունը չհրավիրե, որովհետև թե՛ իրեն (որ ծովային մըն էր) և թե՛ քեռիին (որ Զեմալ փաշան էր) համար մեծ հանցանք պիտի նկատվեր մեզ նման անբաղձալի տարրերու հանդեպ հանդուրժողութունը: Մյուս

կողմն ան խոստացած էր, սակայն, առտու կանուխ, արշալույսին ի՞նք իր ձեռքով տանիլ տղաքը և հանձնել հարյուրապետին: Արդեն օրն ալ իրիկուն ըլլալով, հրամանատար խորշիտը իր պաշտոնատեղին մեկնած ըլլալու էր: Հարյուրապետը հոժարած էր Հասան բեյի վերոհիշյալ առաջարկին՝ այն հաստատ համոզումով, թե հաջորդ առտու բեյը մեզի պիտի հանձներ Դամասկոսի ոստիկանատունը: Ուրեմն, ժամանակավոր կերպով միայն ազատ արձակած էին մեզ:

Գիշերը ամեն ոք խոր քունի մեջ ընկղմած էր. միայն ագարակի ազբերակին ջուրին կարկաչները կլավեին, մինչ քանի մը քայլ անդին խարխուլ հյուղակի մը մեջ վեց հոգի (երեք եղբայրներս՝ Լևոն, Ռուբեն, Ավետիք, մայրս, տիկինս և Եզեկիել Պարութճյանը), գլուխ գլխի տված կխորհրդակցեինք սուույզ վտանգեն խուսափելու մասին: Այլևս անկարելի էր ընտանյոք փախչիլը, քանի պահակներ շորս աչքով կհսկեին մեր վրա. ժամանակը կսահեր, պետք էր որոշում մը տայինք: Մայրս խորհուրդ կուտար երկու երեց եղբայրներուս վայրկյան առաջ հեռացումը: Խիղախ և անվեհեր կինը կխրախուսեր և կհորդորեր, որ շուտով անցնինք սահմանը: Ավետիք և տիկինս՝ սակայն չէին ուզեր մեզմե բաժնվիլ, բայց մորս ստիպումին վրա, համբույրներով և արցունքներով բաժնվեցանք իրարմե, անորոշ ճակատագրին հանձնած ինքզինքնիս: Մեզ կընկերանար Եզեկիել Պարութճյանը՝ հանդուգն և փորձառու մեր դրացին:

Տունեն շմեկնած երկտող մը գրեցի ու հանձնեցի մորս՝ Հասան բեյին ուղղված.

«Սիրելի և հարգելի բեյ, մեզի հանդեպ ձեր ցույց տված մարդասիրական վերաբերմունքին համար հազիտ երախտապարտ ենք, բայց ինչպես ամեն մարդ իր անձի ապահովությունը ամեն բանե գերիվեր կնկատե, մենք ալ կհարկազրվինք հեռանալ: Ներողամիտ եղեք ձեր հովանավորության տակ ապրող մեր հարազատներուն: Կմեկնինք անորոշ ուղղութեամբ, մնաք բարով»:

Մորս պատվիրած էինք, որ առտուն կանուխ, իբր թե բարձին տակեն գտած այդ երկտողը տանի ու հանձնե բեյին: Գիշերվա ժամը 11 էր, ամեն ոք խոր քունի մեջ ընկղմած էր, երբ Տյուրզի կարավանին ուղտերու զանգակներուն զողանչը սկսավ լսվիլ: Սակարկութունը լմընցած էր, մինչև սահման 5-ական օսմանյան հնչուն ոսկի պիտի վճարեինք: Մայոված ու զինված՝ ուղտերու վրան նստանք ու ճամփա ելանք: Առտուն արևածագին հասած էինք Հապապ՝ քրիստոնեաբնակ գյուղ մը, ձեպել Տրյուզի սահմանագլուխը, ուր անհամբեր մեզ կսպասեին եղ-

բայրս՝ Մարկոսը, հորեղբորորդիս՝ Խաչերը և ուրիշ մոտ 50 հայեր: Ժամ մը հետո սահմանը անցած էինք արդեն:

Առավոտյան մայրս լացով կհանձնե նամակը Հասան բեյին, որ անմիջապես Դամասկոս կփութա հարյուրապետին քով և ցավով կհայտնեն անոր՝ մեր գիշերանց փախուստի մասին: Կսկսին մեզ հետապնդել, բայց իզուր. մենք սահմանն անցած էինք արդեն:

Շաբաթ մը վերջ Հապապեն քրիստոնյա արաբ մը Սելիմ անունով ղրկեցինք Դամասկոս, որ ապահով կերպով մեզի հասցուց մեր և Պարոթճյանի ընտանիքները: Ապա բոլորս ուղտերու վրա նստած հասանք Ղրաթա, ձեպել Տրյուզ, Սուլթան Աթրաշի գյուղը:

Թուրքական կառավարությունը ամեն դիվալին ծրագիր ի գործ դրավ ձեպել Տրյուզ համախմբվող հայերը ձեռք անցնելու համար: Նույնիսկ Պզտիկ Զեմալ փաշա անձամբ եկավ Սուլթան Աթրաշի քով, մեծամեծ խոստումներով, որպեսզի հայերը իրեն վերադարձնեն: Սակայն այս վերջինը ամեն պատիվ, դիրք, աստիճան մերժեց և ճամփու դրավ վատագի Զեմալը:

Յո մը, երբ խմբովին իրեն մոտ գացինք, Սուլթան Աթրաշ ասպետական եղանակով մը մեզի ըսավ. «Մի վախճաք և երբեք մի կասկածիք. ամբողջ ձեպել Տրյուզը կփշացնեմ, բայց ձեզմե որեւէ մեկուն նույնիսկ մագին թելը չեմ հանձնեք վատ թուրքին»: Իրապես, այդ ազնւրկական և համակրելի տյուրզի պետին հայերու շնորհած բարիքը անմոռանալի է: Միշտ հարգանքով կհիշենք անոր անունը: Օրինակ մը տված ըլլալու համար Սուլթանին վեհանձնութենեն, հիշենք հետեյալ փոքր դեպքը:

Հայու մը ժամացույցը գողցված էր տրյուզի մը կողմե: Սուլթանը ամբողջ գյուղը գավազանի հարվածներու տակ առավ, մինչև որ ժամացույցը բերին հանձնեցին հայ տիրոջը:

Մոտ երկու ամիս, այդտեղ, 3000 հայերս, այդ բարձրագի Տրյուզ գյուղին մեջ հանգիստ ապրեցանք, հուսալով թե Ագապա, անգլիական գոտի կանցնինք շուտով: Կարավանով պիտի մեկնեինք, երբ դաշնակից բանակները հաղթանակով մուտք գործեցին Տրաա գավառը, ձեպել Տրյուզի հարավակողմեն:

Ֆրանսիական բանակի հրամանատար հազարապետը նամակ գրած էր տրյուզ պետին, որպեսզի իր գինձորներուն հետ միանա իրեն և հարձակի Դամասկոսի վրա: Սուլթան Աթրաշ կոչ մը ուղղեց և իր շուրջը համախմբելով մոտ 5—6000 երիտասարդներ միացավ ֆրանսիական բանակին:

15 օր վերջ, տրյուզ պետի կարգադրութեամբ, բոլոր հայ գաղթականներս Տրաա իջած ու կառավարական պալատին առջև տեղավորված էինք: Պալատին շրջա կողմը, հոս ու հոն կերեկին ուռած և հոտած թուրքերու դիակներ: Թնդանոթներու հարվածներեն ամբողջ պալատը կիսաբանդ վիճակ մը ստացած էր: 15 օր վերջ ամբողջ գաղթականութունը երկաթուղիով Դամասկոս փոխադրված էր՝ անգլիական հովանավորութեան տակ, Գատեմի կայանին մոտ:

Հոս կանգ կառնե պատմությունը այն զեյթունցի գաղթականներուն, որոնք Դամասկոս և Հավրանի կողմերը քշված էին:

* * *

Հակառակ բազմապիսի շարշարանքներու և ահավոր թշվառություններու, Զեյթունի ժողովուրդին մեկ մասը հաջողած էր ազատիլ մահվան ճիրաններեն և հասնիլ Դեյր էզ-Ջոր: Քաղաքին մյուսասարքի պաշտոնատարը թույլատրած էր գաղթական հայերուն, որ տեղավորվին Դեյր էզ-Ջորի և շրջակայքի գյուղերուն մեջ: Հայ գաղթականությունը, կարճ ժամանակի ընթացքին, մոռնալ ջանալով իր անպատմելի վիշտը, իր գոյությունը պահելու համար բացած էր փոքր աշխատանոցներ, կրթապահներ: Զեյթունցի գաղթականներ կգրեին Դեյր էզ-Ջորեն, թե՛ «հիմա խաղաղ է կյանքը, կապրինք»: Մեր փեսան, իր կարգին կհաղորդեր, թե առևտուրի փոքրիկ կրպակ մը բացած էր: Սակայն այդ հանդարտությունն ալ ժամանակավոր եղավ, նման ահուկի մրրիկեն առաջ տիրող խաղաղության: Քիչ ժամանակ անց դադրեցան նամակները, երթեկողները, մինչ մյուս կողմե սկսան լավիլ նոր, ահավոր պատմություններ:

Դեյր էզ-Ջորի մյուսասարքը (կառավարիչ) պաշտոնանկ եղած էր և անոր հաջորդած էր վայրագ պաշտոնատար մը՝ Զեքի անունով, որուն առաջին գործը կըլլա հայ գաղթականները մաս առ մաս ուղարկել անապատի խորքերը:

Զեյթունի առաջնորդ Հովհաննես վարդապետ Գարանֆիլյան, որ Միսի մեջ ձեռքակալվելով Մարաշ, անկե ալ Դեյր էզ-Ջոր քշված էր, տեսնելով իր հոտին քստմնելի տառապանքը, անապատի կիզիչ ավազներուն մեջ հանկարծամահ կըլլա: Գաղթական հայեր հայր սուրբին դիակը կձգեն Եփրատ գետի հոսանքին մեջ: Հայությունը մեծ արիությանմբ կըրցած էր դիմազրավել տեղահանություն բոլոր տառապանքները, ինչ որ չէր նախատեսած իթիհատի ոճրագործ կառավարությունը: Երբ այս

վերջինին կհաղորդվի, թե՛ տակավին հայ գաղթականներ կապրին, ան գազազած՝ ոճրային նորանոր ծրագրերն կմշակեն...

Դեյր էզ-Ջորի արաբ ժողովուրդը շէր երկարած իր ձեռքը հայ մանուկներու, կիներու և ծեղերու կյանքին վրա: Կար այլ վայրագ ցեղ մը սակայն՝ չեչենները, որոնք իրենց սպարուտը կշահեն կողոպտուտով, ջարդով, թալանով: Կապրեին անոնք թափառելով, վայրի կենդանիներու նման անապատին մեջ որսեր որոնելով:

Ձեքին, չեչեններն կազմված խումբով մը անլուր սպանդի կձեռնարկէ: Նախ այր գաղթականները հավաքելով, իբրև թե բանվոր-զինվոր, դանոնք խապուր գետի ամայի եզերքները կուղարկէ խումբ-խումբ: Մեկնող առաջին կարավանը դարձյալ գեթունցիներն կկազմվի և կսկսի ահավոր մարդկային սպանդը:

Մեր հուշագրությունը գրական գործի մը վերածելու շնորհքը կպակսի մեզի: Մենք աշխատած ենք դեպքերը իրենց հարազատ ճշմարտության մեջ ներկայացնել, պատմության փոխանցելու համար ահավոր եղեռնեն դրվագներ միայն, որպեսզի մեր նոր սերունդը լիովին ըմբռնէ, թե ի՞նչ էր 1915-ին սկսած տեղահանությունը և թե ինչպիսի՞ պայմաններու տակ գործադրվեցավ հայ գաղթականներուն ջարդը: Առ այդ թողունք, որ նույնինքն մահվան երախեն ճողոպրած և հրաշքով ազատած Մինաս Տեմիրճյանը և Փանոս Պոյամյանը պատմեն, թե ինչպէ՞ս ջարդվեցան հարյուր հազարները՝ Դեյր էզ-Ջորի մեջ:

«5—600 հոգի, բոլորս այր մարդիկ, խապուր գետին եզերքը իջևանած էինք, ուր պաշարած էին մեզ չեչեն ոստիկան-զինվորները: Ութ օր այդտեղ, գետին եզերքը՝ անոթի, թշվառ, այլազան տանջանքներու ենթարկվելով ապրեցանք: Ամեն առտու չեչենները մեր վրաններն ներս մտնելով խումբ մը կզատեին և կտանեին գետին մյուս կողմը: Չէինք գիտեր, թե ո՞ր կտանէին զանոնք: Գացողը շէր վերադառնար այլևս:

Ամեն ոք կխուսափեր չեչեններեն: Վերջին օրը մենք գետը անցանք խմբովին: Հագիվ մեկ ժամ քալեցինք, ընդարձակ տարածության մը վրա, ապա բլրակի մը ստորոտը կանգ առինք: Այդտեղ, անապատի ժողովուրդը, հսկա լախտեր իրենց ձեռքերուն, ծովի պես կծփար: Ամեն կողմ խոնաված էր մարդկային հրեշներով, որոնք հրամանի կսպասեին մեզ բոլորս փշացնելու և կուլ տալու համար:

Մեզի ընկերացող սվիսավոր չեչենները մեր քով գտնված վերջին զարդեղենները ևս կողոպտելն վերջ մեզ կտանեին բլուրին կատարը: Ի՞նչ տեսնենք... Բլուրին մյուս կողմը, դահիճները՝ անգույթ լախտերը ձեռքերին՝ շարքով հայերու զգեստները հանելն վերջ, քանի մը լախտի

հարվածներով կնետեին զանոնք՝ այդտեղ բացված խորունկ փոսի մը մեջ:

Հագուստներու դեզը բլուր մըն էր կազմած: Տեսարանը աննկարագրելի էր: Ոչ մեկ գրիչ կարող է իսկական պատկերը տալ այդ աննախընթաց տեսարանին:

Մահվան փոսը 3—4 կիլոմետր երկարությամբ քարայրանման տարածություն մըն էր, որ լեցված էր մարդկային դիակներով և վիրավոր ու խելագարված խլյակներով: Դիակներու գարշահոտությունը ամբողջ քարայրը անշնչելի դարձուցած էր: Կենդանի գերեզման մը, որուն նմանը կարելի չէ գտնել այլուր:

Այս փոսը բլուրի կողին բնականեն բացված քարայրի մը ձևը ուներ, և որուն մեկ կողմը կերկարեր դեպի բլուրին տակը: Մենք ևս մահացու հարվածներ ստանալով նետված էինք մեռելներու կողքին: Չենք գիտեր որքա՞ն ժամանակ մարած մնացինք: Երբ սթափեցանք, մենք մեզ քարայրին մեջ թաքցնելու համար կրցանք ապաստանիլ անոր մութ կողմերը: Խավարին մեջ մեռելի պես կպառկեինք, ամեն անգամ որ դահիճները վար իջնեին՝ կիսամեռ եղողներուն ևս հաշիվը տեսնելու համար:

Երեկոյան, երբ սպանդը կվերջանար, խարույկ մը կվառեին, որպեսզի կենդանի մնացողները շնահեղձ ըլլային: Այսպես, երեք օր ապրեցանք այդ գեհենային պայմաններուն մեջ:

Դուրսեն որևէ ձայն չէր լսվեր: Կուզեինք անպայման՝ դուրս ելլել այդ գարշահոտ տխուր դամբարանն: Քարայրը երկու երեք մետր խորունկ էր գետնեն: Վերջապես խորհեցանք դիակներով աստիճան կազմել, բարձրանալ վեր և ապա դուրս նետվիլ, բայց ուռած մարմինները իրարու վրա շարել կարելի չէր: Վերջապես մեզմե մեկը հաջողեցավ դուրս գալ պատեն մագլցելով և հոն իր գտած հազուատի կտորները իրարու կպակելով մեզ մեկիկ մեկիկ դուրս հանել:

Առտուն բոլորս ալ մերկ, անոթի և ծարավ սկսանք խումբով թափառիլ կաթիլ մը ջուր գտնելու համար: Այդ թափառումի ընթացքին խուժան մը անակնկալորեն մեզ պաշարեց և սկսավ լախտի հարվածներ տեղացնել մեր խումբին վրա: Կրցա փախչիլ և հետքս կորսնցնել եղեգնուտի մը մեջ, որուն դիմացը գաղթականներու վրաններ կտեսնեմք: Գետն անդին: Այդ գիշեր հաջողեցա անցնիլ գետակը և երթալ երևցող վրաններուն մոտ, որոնք հայերն բնակված էին: Մայրս և բույրերս ալ հոն էին: Այր մարդիկը ջարդելն վերջ, գազան Ձեքին կիները և անշափահաս մանուկները ևս քշելով բերած, տեղավորած էր միևնույն

գետակին զիմացի ամբ: Այդտեղ՝ սովն ու անթությունը ավերներ կտրծեին:

Ես ծպտված կապրեի հոն: Ոչ ոք կկուսներ իմ ներկայութունը: Մայրս և քույրս գորգորանքով զիս կալահին: Ինչպես այրերուն, իզական սեռին հետ ալ նույն ձևով վարվեցան մարդասպանները: Ես, ուրեմն, իբրև ծպտյալ կին, ականատես եղա կիներու սպանդին ալ:

Երեք ժամ վերջ հասած էինք սպանդանոց, բայց ոչ նույն վայրը, թեև ճիշտ նախկին ձևերը, դրությունը կիրարկվեցավ: Բլուրին կատարը հասած, նշմարեցի նույն տեսարանը: Որպես փորձառու, հազիվ քարայրին մոտեցած, օգտվելով տիրող շփոթութենեն, նետվեցա այնտեղ: Ընդարձակ տարածություն մըն էր, լեցված դարձյալ զիակներով: Դիակ՝ ամեն կողմ, ապականված և գարշահոտ մթնոլորտ, որ սոսկում կազդեր միայն...

Երեք օր հետո կհաջողինք դուրս ելլել՝ նախկին պայմաններով: Ամբողջ զիշերը անապատին մեջ պտտելի հետո առտուն մենք մեզ կզբտենք Խապուր գետին եզերքը: Հազիվ քիչ մը հանգստացած, մեր պապակը հագեցուցած, խումբ մը մարդիկ գավազաններով սկսեցան մեզ հալածել: Ծնչասպառ, հաջողեցանք մոտակա վրանները ապաստանիլ, ուր արաբներ կապրեին և որոնք մեզի անմիջապես պաշտպան կանգնեցան: Ես անոնց քով ծառայեցի մինչև զինադադար:

Սիրանուշ Քասիմյանը, իր կարգին, այսպես կպատմե իր հուշերը.

«Տեր-Չոր էինք, հազիվ կրցած էինք ապրուստ մը ճարել և քիչ մը շունչ առնել, երբ քաղաքին անկյունները, պատերուն վրա փակցված ազդերով հայտարարվեցավ, որ բոլոր հայ այր մարդիկ պատրաստ պետք է ըլլան՝ երթալու և բանակին մեջ աշխատելու: Եվ ահավասիկ թուրք ոստիկաններ դռնե դուռ պտտելով, գավազաններու հարվածներու տակ այր մարդիկը հավաքեցին ու դրկեցին:

Տասնյակ մը օրեր վերջ երկրորդ ազգով մը հայտարարվեցավ, որ բոլոր հայերը պիտի փոխադրվին Իրաքի կողմերը՝ Պաղտատ, Մուսուլ և Քերթուք: Ամեն ոք պատրաստ էր անխուսափելի մահը դիմավորելու: Բիրտ զապթիկներու գավազաններուն շառաչը սարսափ կազդեր բուրբիս: Հայ գաղթականները՝ կին, աղջիկ, թե անչափահաս մանուկներ, Տեր-Չոր քաղաքին մոտ, կամուրջին վրա համախմբված կսպասեինք հրամանի:

Տիկին Սրբուհի Կյուլմանեսյան՝ Նազարեթ Չավուշի աղջիկը, բազմության մեջեն գատվելով հառաջացավ Եփրատի եզերքը գտնվող կամուրջին վրա, և այնտեղ թեկադրեց իր շուրջը գտնվող հայուհիներուն,

որ փոխանակ անապատի վայրենիներուն վավաշտ կիրքին գերի դառնալու և անոնց աղտոտ հարեմները շենցնելու, նետվին գետին մեջ և վերջ տան իրենց կյանքին:

Ան թվեց նախնայաց՝ հերոս զեթունցիներու պատվախնդրությունը, քաջագործությունը, անոնց ազգի ու հայրենիքի վեհ իրեալին համար տարած անթիվ մաքառումները: Ապա քանի մը անգամ խաշակնքելե վերջ, ինքզինքը հանձնեց Եփրատի ալիքներուն: Շատեր՝ ականատես Սրբուհիի անձնուրաց արարքին՝ հետևեցան անոր օրինակին և գետամույն եղան:

Հասած էինք Խապուր գետին եզերքը, ուր մեր լաթերու կտորներին հարմարեցված վրաններուն տակ տեղավորվեցանք: Հեծյալ շենցներու խումբերը և գազանաբարո ամբոխը մեր մեջ մտնելով կգատեին իրենց հավնած հարսներն ու աղջիկները՝ իրենց հարեմները տանելու համար: Լաց, կոծ, պաղատանք անօգուտ էր: Մահը նախընտրելի էր քան այդ ամոթալի վիճակը: Ստիպված էինք գավազաններու հարվածներուն տակ հետևիլ ճիվաղ արարածներուն: Ընտրությունը վերջացած էր. չհավնված կիները՝ պաշարված շենցն բարբարոսներու կողմե՝ սպանդանոց առաջնորդվեցան: Միայն արաբ ազնիվ ընտանիքներու մոտ, կամ քարայրներու, աղբանոցներու, այլ և այլ տեղերու մեջ պահվող կիներն ու մանուկները կրցած էին ջարդեն ազատվիլ:

Թուրքական կառավարությունը իբրև թե անգիտակ և դժգոհ այդ ջարդեն, կհրահանգե պատսպարան-որբանոց մը բանալ և բոլոր վերապրող մանուկները այնտեղ պահել ու խնամել՝ իսլամացնելով զանոնք: Տեղացի քրիստոնյա արաբներ բավական որբ ու որբուհիներ հավաքած կինամեին:

Ձեքի թե՛ ջարդեն ազատվողները և թե՛ որբանոցներու մեջ համախմբված որբ ու որբուհիները, բոլորը իսպառ ոչնչացնելու համար հրահանգեց զանոնք միատեղ հավաքել: Ան ամփիթատրոնի նման փայտե բարձրավանդակ մը շինել տալի ետք՝ հրամայեց որբուհիներուն փայտակույտին վրա ելլելու և խաղալու: Խեղճ, անմեղ արարածները փութացին բարձրանալ փայտակույտին վրա, ուր նախապես քարյուղ սրբակված էր և ահա շորս կողմեն կրակը տրվեցավ, մինչ ոճրագործ Ձեքի, աթոռի մը վրա նստած. անմեղ երեխաներուն բոցերուն մեջ տապալումը վիլը դիտելով զվարճացավ: Բու՛րբ հոն հրոճարակ դարձան:

Ֆոնուզցի ծանոթ ընտանիքի մը զավակը՝ Մինաս Մարգարյան, իր կարգին կպատմե.

1916-ի զարնան՝ կառավարությունը հրահանգած էր Իրաքի կողմը

գաղթել: Տեր-Ջորեն Մուսուլ հասնիլը երկուքուկես ամիս տևած էր: Անարգանք, խոշտանգում, բռնաբարում՝ ամեն ինչ կատարյալ էր: Բոլոր այլ մարդիկը իբրև զինվորացու հավաքեցին, տարին և անհայտացուցին: 120 հոգիե բաղկացյալ ամբողջ դերդաստանս՝ հայր, մայր, եղբայր, հորեղբայր և հորեղբորդիներու թոռներ, ջարդված էին:

Կինս և զավակներս ևս մեռած էին, միայն երկու աղջիկներս՝ վեց և ութ տարեկան կմնային մոտս, երբ զիս ալ սպանելու տարին, բայց հրաշքով մը աղատեցա Քերբուկի գյուղերեն մեկուն մոտ, ինքզինքս աղբանոցի մը մեջ թաքցնելով: Իզմիրցի հայ տիկին մը ամեն օր ինձի ուտելիք կբերեր և այդպես կապրեի: Հրաշքը պիտի կրկնվեր կարծես. ուրիշ օր մը, զիշերանց դուրս ելած էի հացագործեն հաց առնելու համար, երբ տեսա երկու պղտիկներս, որոնք աղբանոցի մը քով նստած աղբին մեջեն ուտելիք կփնտրեին և գտածին անհագաբար կուտեին: Երբ տեսան զիս, առանց ճանչնալու, վազեցին քովս և աղաչանքով ու պաղատանքով կտոր մը հաց խնդրեցին: Ճանչցա զանոնք... սրտահատորեն՝ րս էին»:

Տակավին ինչ-ինչ բարբարոս և անմարդկային պատմություններու ծնունդ տվավ Եղեռնը: Ոչ երկիր, ոչ ալ երկինք իրենց ստեղծագործութենեն իվեր այսպիսի անպատմելի նախճիր տեսած չեն: Ոչ թե իմ գրչիս նման տկար գրիչ մը, այլ նույնիսկ ամենագորավոր գրիչներն անգամ կարող չեն թուրք խժոժությունը իր ամբողջական դիմագիծով պատկերացնելու: Զինադադարին, Հավրանի կողմը աքսորված ղեյթունցիներեն մաս մը փրկվելով վերագործավ Ձեյթուն, իսկ Տեր-Ջոր քված գեյթունցիներեն՝ մնացած էին լոկ տասնյակ մը խլյակներ:

Հնձվեցան ավելի քան մեկուկես միլիոն հայորդիներ...

Մեծ ու փոքր, ծեր և երեխա անխնա կոտորվեցան մարդակերպ հրեշներու սադայելական հղացումներով: Սերունդներ ամբողջ բնաջնջվեցան անապատներու խորն ու անծանոթ ճամփաներու վրա: Արյունն սու արցունքը ցամաքած աչքերու մեջ, լքված աշխարհեն, կարավանները կբալեին անընդհատ գիշերվան մութին մեջեն կամ արևի կիզիչ ճառագայթներուն տակ, պատառ մը հացի ու կաթիլ մը ջուրի կարոտով առչորուն:

Եվ սակայն սպանդին կողքին ղեյթունցիներն արձանագրեցին պատվավոր և մխիթարական էջեր ալ: Գտնվեցան ափ մը հայրենակիցներ, որոնք արհամարհելով թուրքին կողմե հրամցված դառն բաժակը, վրեժխնդրությամբ լեցված, քաշվեցան Ձեյթունի անառիկ լեռները, զեն ի ձեռին պատվով մեռնելու պատրաստ: Նախորդող էջերուն մեջ ընթերցողները արդեն իրազեկ եղան Եղիայի գլխավորությամբ Ձեյթունի բարձունքները ապաստանած մարտիկներուն, ապա՝ Հալեպեն մեկնած խումբին մասին: Այժմ կներկայացնենք այդ քաջարի ռազմիկներուն մաքառամներուն պատմությունը, որ կընդգրկե երեք տարվան ժամանակաշրջան մը՝ մինչև զինադադար (1918):

1915-ի աշունն էր իջեր Ձեյթունի լեռներուն վրա և ցուրտն ու ձյունը իրենց զալուստը կզգացնեին հետզհետե:

Եղիայի խումբին մեկ մասին Ֆոնուզ մեկնելեն վերջը, ներկա էին միայն 17 երիտասարդներ, որոնք ապահովելիս ետք ձմռան պարենը, 15 դեկտեմբերին կքաշվին Ձեյթունի արևմուտքը գտնվող Խանոս անառիկ լեռան բարձունքը: Տակավ առ տակավ ցուրտ քամին ճամփա կբանար ձյուներու բուքին, կգոցվեին լեռներու ճամփաները:

Խանոս լեռան շուրջ տարածված երեկի հայ գյուղերեն՝ Ալագ-Կալեն, Հաճի Տերեյեն, Անտուբեն ծուխը կբարձրանար դեպի երկինք: Անոնք տխրությամբ կմտածեին, թե սույն վայրերը այսօր թուրք գաղթականներե բնակված էր, մինչ անոնց իսկական տերերը կբնաջնջվեին անապատներուն խորերը: Լեռան գագառներն իսկ պիտի չհամարձակվեին նման ցուրտին, բուքին ու ձյունին դուրս գալ իրենց որջերեն, մինչդեռ հայ մարտիկները շաբաթը անգամ մը դուրս գալով իրենց պատասպարաններեն. գիշերվան խավարին մեջ կհարձակեին սույն գյուղերու պահպաններուն վրա ու մասամբ կլուծեին վրեժը իրենց հայրենակիցներուն:

Այսպես կսահին ամիսներ: Անոնք, մինչև 1916 թվականի փետրվար ամսի վերջերը, լեռան բարձունքին թառած կանցնեն իրենց օրերը: Մարտ ամսվան հետ կսկսի ձյունհալը: Բնությունը դուրս կուգա իր սպիտակ սավանին տակեն և ճամփաները կբացվին ուղևորներու համար:

Այդ օրերուն արևածագի առաջին ճառագայթներուն հետ, լավեցավ խմբապետին հրամանը, որ պատրաստ գտնվելու կկոչեր խումբը: Ժամ մը հետո անոնք ճամփա ելան դեպի Ֆոնուզի լեռները, նախ կորսըն-

ցրնելու համար իրենց հետքը, ապա շարունակելու հայ մարտիկի սրբազան առաքելութունը: Անոնք կիջնեն Գարա գյուղի կողմեն և անցնելով Անանիկենց ձորը կմագլցին դեպի Ֆոնուզի Ս. Կարապետ վանքը: Արշավանքի կեդրոնը այս անգամ հայ վանքն էր, որ շրջապատված էր հայկական գյուղերով՝ Հինգեղ, Տարենց գյուղ, Գոշող գյուղ: Ֆոնուզ գյուղաքաղաքը ամայի ու անմարդաբնակ էր դարձեր ու ընդարձակ մեռելատունի մը տպավորությունը կձգեր: Միայն Գոշող գյուղին մեջ թուրք գաղթականներ կային, որոնք կվայելեին հայերեն թալանված գույքերն ու պարենները:

Ս. Կարապետի վանքը մոխրացած էր 1895-ի մեծ պատերազմին, երբ անոր պատերուն տակ դիրք բռնած էին Բարթողիմեոս վարդապետ Թագաճյանը և հնչակյան գործիչ Հրաչը: 1909-ին, հիշյալ վարդապետը, եգիպտոսեն վերադարձին, կրցած էր նորոգել այս մենաստանը և անոր քանի մը սենյակներն ալ բնակելի վիճակի մը հասցնել:

Եղիայի խումբը երեք օր կթափառի Ֆոնուզի շրջակայքը հայ մը գտնելու նպատակով, սակայն իզուր: Ոչ մեկ հայ մնացած էր ամբողջ շրջանին մեջ:

Չորրորդ օրը, խմբապետը հուսահատած հայու մը հանդիպելու միտքեն, կհրահանգե վերջին անգամ ըլլալով այցելել վանքին մատուռը: Մինչ այդ, խումբին պահակները կնկատեն մարդկային ստվերի մը անցքը վանքի պատին տակեն: Կհաղորդեն Եղիային, որ անմիջապես դուրս գալով մատուռն երկու հոգի կզրկե ստվերը հետապնդելու համար:

Երևույթը տարօրինակ էր: Խումբը, զենքերը պատրաստ վիճակի մեջ, անհամբերությամբ կսպասեր հետախույզներու վերադարձին: Այս վերջինները կնկատեն, որ ստվերը կիջնե գյուղին մեջ և քան մը կորոնե: Անոր քայլերուն հետևելով անոնք համոզում կգոյացնեն, թե թշնամի չէ ան: Իսկույն ձայն կուտան անոր, որ անձնատուր ըլլա: Անձանոթը, փոխանակ փախչելու ձեռքերը վեր կբարձրացնե: Մարտիկները մեծ զարմանքով կնկատեն, որ Ֆոնուզի Գոշող գյուղեն Պետրոս Աշրգյանն է ան, որ բոլորին ծանոթ մարդ մըն էր և շրջանի թուրք գյուղացիութունը կհարգեր զինքը: Երկու մարտիկները իրենց հետ առնելի հետո Պետրոսը, կվերադառնան խումբին մոտ. տեսնելով զայն, բոլորը մի առ մի կողջագործվին: Ան կպատմե, թե 1915-ի դեպքեն վերջ, երբ կառավարութունը շրջակա գյուղերուն արքայի հրաման կուտա, Գոշող գյուղի գյուղապետ Համբարձում Գարակչոյանը կառաջարկե շրջանի գյուղացիության ըմբոստանալ կառավարության դեմ և շենթարկվիլ հրամանին: Գյուղապետը կհայտնե գյուղացիներուն և շրջանի հայ գյուղերու պատերուն, թե

հողը լքել՝ մեռնիլ կնշանակե, հետևաբար, նախընտրելի է կուլիլ և մեռնիլ, քան թե ստրկանալ և կորսվիլ օտար հորիզոններու տակ: Գժբախտաբար գյուղապետին այդ առաջարկը շարդյունավորվիր: Գյուղացիները կպատասխանեն, թե ըմբոստացումը փրկութուն չի բերեր, ընդհակառակը՝ մահ և ավեր: Հուսահատ իրերու այդ կացութենեն, Համբարձում կորոշե լեռ քաշվիլ առանձինն, իր ընտանիքի հինգ անդամներուն հետ: Պետրոսը միայն կմիանա Համբարձումին: Անոնք երկուքը միասին իրենց ընտանիքներով լեռ կապաստանին:

«Տարի մըն է, որ այս լեռներուն վրա ապաստանած կապրինք,— կպատմե ան,— գիշերները դուրս կելլենք մեր թաքստոցներեն, երբեմն առանձինն, երբեմն երկուքս և մեր ընտանիքներուն ուտեստեղենը կապահովենք:

Երբեմն հաջող, երբեմն ձախող կվերադառնանք, առանց մեր հետքերը հայտնի ընելու մեր թշնամիներուն: Տակավին քանի մը օր առաջ հաջողեցանք Սու-Չաթրի մեծ ճամփուն վրա թրքական կարավանի մը հետ կովի բոնվելով անոնց ունեցած զենքերն ու դինամիթերը, ինչպես նաև պաշարը գրավելով մեր թաքստոցը փոխադրել: Կարավանը բաղկացած էր մի քանի տասնյակ հոգիներե, որոնք բեռները իջեցուցած գետին եզերքը կհանգստանային: Նախ ավարը փոխադրեցինք մաս առ մաս, գաղտագողի, հեռու տեղ մը պահեցինք, առանց հայտնի ընելու կարավանի մարդոց, ապա երկուքս միասին վերադարձանք և դաշույնները մերկացուցած հանկարծակի հարձակում գործեցինք կարավանի մարդոց վրա, որոնք օրվան խոնջները առնելու համար, քունի մեջ մտած էին:

Մի քանի հոգի դաշունահարելով խուճապ ստեղծելի վերջ, դուրս ելանք կարավանին մեջեն և մոտակա ժայռերուն վրա դիրք բռնելով, խուճապի մատնված ամբոխին վրա սկսանք կրակել: Կես ժամ հետո ոչ ոք մնացած էր կարավանի թուրքերեն, բոլորն ալ փախած էին, գետին եզերքը ձգելով տասներհինգ դիակներ»:

Պետրոսին այս պատմութունը խանդավառութուն ստեղծեց խումբի մարտիկներուն մեջ: Պետրոս թախանձեց, որ Եղիայի մարտիկները այցելեն իրենց թաքստոցը, տեսնվին իր ընկերոջ Համբարձումին հետ և զայն ևս ուրախացնեն: Խմբապետը ընթացք տալով այդ խնդրանքին, փոխեց մեկնումի ծրագիրը: Խումբը ուղղվեցավ Պետրոսի և Համբարձումի թաքստոց ծառայող քարայրը: Ան սկսավ մազլիլ սեպ ժայռերու կողքին բացված նեղ արահետներու մեջեն. բազմաթիվ անառիկ ժայռեր և բարձունքներ անցնելով, քարայրի մը բացվածքին վրա, հսկա

ժայռի մը կատարը նշմարվեցաւ Համբարձումի երկարահասակ ստվերը: Գյուղապետ Համբարձում հազիւ քառասուն տարիներու կյանք մը ապրած էր: Ան, 1895-ին, տակալին առույզ և կտրիճ երիտասարդ էր, Կոկիսոնի և Անտրուսի արշավանքներուն հռչակ հանած էր: Անկարելի էր բացատրել Համբարձումին ուրախութիւնը, երբ ան, այս անմարդաբնակ լեռներու գագաթին հանդիպելու երջանկութիւնը ունեցաւ Զեյթունի հերոսներուն հետ: Ան մի առ մի ողջագուրելով խումբի մարտիկները, արտասուքի կաթիլներով օծեց իր բախտակիցներուն այտերը, որոնք արևի և ձյունի հետքեր ունեին իրենց վրա:

Համբարձում խումբը առաջնորդեց իրենց թաքստոցը, որ այդտեղէն կես ժամ հեռավորութեան վրա կգտնուէր: Վայրի գագաթներուն իսկ անմտաշելի այդ բարձունքին վրա գտնվող ժայռերու երկու հսկա խոռոչներ իբրև բնակարան կգործածուէին Համբարձումի և Պետրոսի զույգ ընտանիքներուն:

Քիչ անդին, քարե բացված խոռոչի մը մեջ ջուր լեցված էր տնազուրկ երկու ընտանիքներուն առտնին գործածութեան համար: Հարյուր քայլ հեռավորութեան վրա, քանի մը մսացու կենդանիներ կարածեին փոքր մարգագետնի մը վրա: Համբարձում և Պետրոս անոնցմէ մին մորթելով փառավոր ճաշ մը պատրաստեցին խումբին համար: Սու-Չաթրի ավարեն անոնք ձեռք անցուցած էին նույնիսկ սուրճ և շաքար:

Խումբը շորս օր հյուրասիրվեցաւ այս լեռան բարձունքին վրա: Անոնք գլուխ գլխի վերհիշեցին շեն անցյալը և տխուր ներկան: Իրարու պատմեցին իրենց գործունեութեան մասին: Համբարձումն ու Պետրոսը փափաք հայտնեցին միանալ Եղիայի խումբին, սակայն, նկատի առնելով անոնց ընտանեկան պարագաները, մերժվեցան: Չորս օրվան հյուրասիրութենէն ետք բաժանումը դժնդակ եղաւ: Կրկին ու կրկին ողջագուրվեցան կրկին հանդիպելու խոստումով... հինգերորդ օրը, արշալուստին հետ խումբը ճամփա ինկաւ: Տխուր է հիշել, որ այդ օրը առաջին և վերջին հանդիպումը պիտի ըլլար Համբարձումին և Պետրոսին՝ Եղիայի խումբին հետ:

Եղիայի զինակիցները թուրք զինվորներէն իմացած էին հայ գաղթականներու ճակատագրին մասին: Մանր մտահոգութիւններ և մտատանջութիւններ հիմա կլարչարեր անոնց հոգին: Յուրաքանչյուրը կուզեր ծանոթութիւն մը քաղել իր սրտահատորներու մասին: Կմտածեին ուղղվիլ Հաճնո հայաբնակ շրջանները, որպէսզի կարենային հայ գաղթականներու հանդիպիլ:

Խումբը կես գիշերին ուղղվեցաւ Յոնուզի Վերի թաղը, ուր ֆոնուզ-

ցին ամռան տոթին կբարձրանար այգիներուն մեջէն հոսող ջուրերու քզերը անցնելու համար իր օրը: Խումբը հոն մնաց ամբողջ օր մը, հետո երեկոյան, արեամուտին հետ դարձյալ ճամփա ելաւ դեպի Կոկիսոնի սահմանները:

Պունտուք հայաբնակ գյուղը, հեռուն, բլուրի մը վրա կառուցված, դիմավորեց հայ մարտիկները: Գյուղին կոնակի կողմը կտարածուէին դաշտագետնները: Գյուղը բնակված էր թուրք գաղթականներու կողմէ: Դաշտագետնի հյուսիս արեւելքը, բարձր բլուրներու վրա, կերևար Շիվիլիի հայ գյուղը, որուն կեդրոնը բարձրացող հայ եկեղեցվո գմբեթը և էշնակատունը վեր կմնային գյուղի տանիքներուն բարձրութենէն: Անկե քանի մը կիլոմետր հեռավորութեան վրա կհոսեր Գարասու գետակը:

Խումբը Պունտուքի գյուղէն անցնելով հասաւ Շիվիլիի, որ ավերակի մը տպավորութիւնը գործեց հայ մարտիկներուն վրա: Անոնք նույնիսկ թռչունի մը ձայնը շառին, երբ անցան փողոցներէն: Ամայութիւնն ու ահավոր ավերակները կուգային անգամ մը ևս փաստելու, թէ որքա՛ն վայրագ ձեռք մը իջած էր հայ գյուղերուն վրա և մոխրացուցած ամեն գոյութիւն:

Խումբը քանի մը օր մնաց Կոկիսոնի հայ գյուղերը, ապա ուղևորվեցաւ դեպի Կապանի բերդը՝ Լեոն Զ-ի պատմական ամրոցը: Ընդարձակ դաշտագետնը ևս անունը կկրեր սեպ ժայռի մը գագաթը թառած այդ հայկական բերդին: Որքա՛ն հուզիչ էր տեսարանը հայ մարտիկներուն համար: Անոնք, հեռուն, լեռան ծերպերուն մոտ նստած, անհագորեն դիտեցին պատմական բերդը: Հոն՝ խմբապետ Եղիա պատմեց անոնց, թէ ինչպե՛ս Հայը ունեցած էր իր պատմական շքեղ անցյալը, երբ հայ թագավորներ և իշխաններ հրամաններ արձակած են նույն բերդին անմատուց կատարեն: Թե ինչպէս Գունդատապլ Սմբատներ այս բերդին և Կոկիսոնի անցքին վրա կոված էին իրենցմէ տասնապատիկ ավելի զորավոր բանակներու դեմ և թէ ինչպէս կրցած էր Հայը իր անունը բարձր պահել դարեր շարունակ, երբ շատ ու շատ ազգեր եկած և կորսված էին փոշիներուն տակ:

Կապանի պատմական բերդը անմիջականորեն կապված էր նաև Եղիայի գերդաստանի պատմութեան հետ: Ան օրորանն էր եղած Նորաշխարհյան իշխանական ընտանիքին, որն այն ժամանակ կոչվեր է Վասիլյան:

Հայ մարտիկներուն խումբը մթնշաղին ճամփա կելլէ: Հազիւ Կապան բերդէն մի քանի կիլոմետր հեռացած, անոնք կհանդիպին շորս-

հինգ տունն բաղկացած ագարակի մը, որուն շրջապատի անտառը կրակի կուտան:

Եղիայի խումբին կողմն հաճախակիորեն զինվորներ ջարդվելուն պատճառով, իշխանությունը գաղտնիքը լուծելու համար կսկսի խիստ հսկողություն սահմանել: Զոկատ մը թուրք զինվորներու պարտականություն կարվի հետապնդել զեյթունցիներու խումբը՝ տեղացի թուրք գյուղացիներու օժանդակությամբ: Մարտախումբը, մեկուկես ամիս այս շրջանին մեջ գործելն հետո, կհարկադրվի վերադառնալ իր նախկին թաքստոցը՝ Զեյթունի լեռները: Անոնք վերադարձին կփափաքին այցելել Համբարձումին ու Պետրոսին թաքստոցը, սակայն խիստ հետապնդումներու և տևական բախտումներու պատճառով կարելի չըլլար իրականացնել այդ հանդիպումը:

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին, Թուրքիան պատերազմի մասնակցած ըլլալով ընդդեմ դաշնակիցներուն, լավագույն առիթը գտած էր մոտ մեկ և կես միլիոն թրքահայոց բնաջնջումը գլուխ հանել՝ տեղահանությամբ, մասնակի ջարդերով, արաբական անապատներուն մեջ կոտորածներով, իսկ մնացյալն ալ սովի և հիվանդության մատնելով:

Թուրքիո զանազան կողմերն տեղահանված հայերն մաս մը, այլ և այլ միջոցներով իրենց կաշին փրկելու համար հաստատված էին Ինթիլիի շրջանը: Անոնք մասամբ շոգեկառքի ճամփուն վրա կաշխատեին, մասամբ ալ լեռան տակնն բացվող Ինթիլիի փապուղիին վրա: Շոգեկառքի գիծը գերմանացիներու կողմն շինվելով, փապուղիի շինության և գերմանները կհսկեին: Ատկե՛ էր որ պիտի անցներ Բեռլինն ուղղակի Պաղտատ ընթանալիք ձեպընթացը, Մերձավոր Արևելքի զինվորական կեդրոններուն հետ կապ պահպանելու համար: Գերմանացի երկրաչափները կմտածեին ժամ առաջ վերջացնել փապուղիին շինությունը: Ամեն ոք գործ մը ուներ: Թեև կյանքը հաճելի չէր, սակայն տանելի, որովհետև աշխատող ձեռքերու համար գործ ու վարձատրություն կար: Բազմաթիվ զեյթունցի ընտանիքներ ևս հաջողած էին Ինթիլիի հաստատվիլ և հոն աշխատանք գտնել:

1916-ի գարնանը կյանքը կրկին կսկսի շրջվիլ, երբ օսմանյան պատերազմական նախարար և բանակի սպարապետ էնվերը, Սվեդի

ջրանցքի շրջանին մեջ հաստատված թրքական բանակի քննություն մեկնած պահուն՝ կտեսնե հայ գաղթականներու տեղավորումը այդ շրջանին մեջ և ճանապարհի շինության մեջ հայերու մեծ աշխատանքն ու դերը: Նամանավանդ, երբ ան կլսե ֆրնտըճագի Հովսեփ Քեհյայի որդի Նազարի մասին, որ խումբի մը գլուխն անցած գործողություններ կվարեր, կկատրի և կհրամայե հայերուն հեռացումը երկաթուղագիծի ճամփուն վրայն, ապագա դժվարություններու առաջըր առնելու մտահոգությամբ:

Ամանոսի շրջանի Քելլեր գյուղեն ծանոթ հայուկ Թոփալ Հակոբը ևս կմիանա Նազարի խումբին: Դժբախտաբար, կարճ ժամանակ հետո, անմիաբանությունը իր գլուխը հոս ալ կցցե և Թոփալ Հակոբ կզատվի Նազարեն: Այս վերջինին խումբը Ֆրնտըճագ փախչելն հետո, տարի մը ամբողջ թափառած էր Ամանոսի բարձունքներուն վրա և իր ջարդված աղգակիցներուն վրեժը կլուծեր թուրք զինվորներ սպանելով: Դժբախտաբար Նազարի հայրուկներուն մասին հետագային ոչինչ չլսեցինք և անոնց ճակատագիրը մինչև այսօր ալ մութ կմնա մեզի:

Դեպքերու զարգացումը նոր հերոսներու հայտնաբերման պատճառ կգտնա: Զեյթունցի Հովհաննես Սիմոնյան՝ Շովրոզուլույան թաղեն, որ արհեստով ոստանանկ էր և ճանչցված էր իբրև ազնիվ և պարկեշտ հայ մը, կհաջողի Սուլթանիյեյեն վերադարձին հաստատվիլ Ինթիլի և գործ գտնել երկաթուղագիծի աշխատանքներուն մեջ: Կարճ ժամանակի ընթացքին ան կծանոթանա Թոփալ Հակոբին և կգործակցի անոր հետ: Երկաթուղիի գիծով բանակին հատկացված զենքերու փոխադրությանց պահուն Սիմոնյան հարձակում կգործե ու կզրավե հրացաններ, որոնք կնետե ճամփուն վրա, ուր Նազարի և Թոփալ Հակոբի մարտիկները դարանակալ կսպասեին: Դժբախտաբար թուրք մը կնկատե այս գործողությունները, որոնց պատճառով Սիմոնյան կհարկադրվի թողուլ Ինթիլիին և միանալ Թոփալ Հակոբի խումբին: Ան հոն կսիրվի բոլորն շնորհիվ իր անաշուռ, անխարդախ նկարագրին և զոհողության բարձր ոգիին. շատ շանցած ան կնշանակվի խումբին պարենի և ռազմամթերքի սպասախանատուն:

Երբ էնվերի հրահանգով Ինթիլիի հայությունը կտեղահանվի, անոնց մեջն զեյթունցի Չուլագյան Արամը, որ եղբայրն էր վանքի և Ֆրնտըճագի կոիվներու խմբապետներն Մեսրոպի, կմիանա իր կարգին հայ մարտիկներուն:

Արամ ծնած էր 1891-ին: Վալելլա կազմ, գեղատեսիլ, թավ բեղերով երիտասարդ մըն էր: Ան իր նախնական ուսումը ստացած էր Զեյթունի

բողոքականց նախակրթարանին մեջ: Արհեստով երկաթագործ-զինագործ էր: Իր հորը նման ան ևս սիրված և հարգված էր բոլորեն: Անոր դավանած սկզբունքն էր՝ ոչ ոք չվշտացնել:

1909-ին, Մեսրոպ Պոլիս դրկվեցավ՝ պետական զինարանին մեջ իբարհեստը կատարելագործելու համար, բայց թրքական կառավարության հարուցած արգելքին վրա ան վերադարձավ Զեյթուն: 1915-ին՝ Արամ զինվորագրվելու կհանվի, երբ Մեսրոպ հետապնդումի ենթարկված էր, Փանոս Չազըրյանի հետ ըմբոստություն մը կազմակերպելու ամբաստանությամբ: Արամ կ'ընկերանա իր եղբորը՝ Մեսրոպին և կմասնակցի Գարա-Չաթիի թուրք ոստիկաններու շարդին, հետո Վանքի պաշտպանության մեջ գործոն դեր կկատարե: Հետագային ան կրկին եղբորը հետ կմասնակցի Ֆրնտըճագի կռիվին: Ինչպես հիշած ենք վերը, երբ գեշերանց խումբին մարտիկները զիրար կկորսնցնեն, Մեսրոպ փախչելով կիյնա Վարժապետյանի ագարակը և հոն քուրդերու կողմն կսպանվի: Նազարի խումբը լեռ ապաստանած էր, իսկ Մեսրոպի խումբեն կեռնե խուճանյան Զեյթուն հասնելով Եղիայի խումբին միացած էր և ապա Ս. Չուրազյանին հետ Հալեպ վերադարձած: Ստեփան Պարոնյան Մարաշի եղերքը սպանված էր: Մեսրոպի մարտիկներու խումբին վերջինը՝ Արամ կհաջողի Մարաշ հասնիլ և ապաստանիլ բնիկ արաբկիրցի Հովսեփ խոճայի քով: Այս վերջինը Մարաշի գաղթին իր հետ կտանի Արամը՝ ծպտված վիճակի մեջ, մինչև Համաշի գաղթականը: Երկուքն ալ, այնտեղի դժնդակ պայմաններեն հուսահատած, կորոշեն Ինթիլի երթալ գերմանացիներուն մոտ աշխատելու, որովհետև Հովսեփ խոճա քաջ գերմանագետ էր, իսկ Արամ՝ լավ երկաթագործ, որով վստահորեն կըրնային հարմար գործ մը գտնել:

Իրենց ծրագիրը գործադրության դնելով անոնք կհաջողին Ինթիլի հասնիլ և գործ գտնել: Հովսեփ խոճա գրասենյակի մը մեջ թարգմանի պաշտոն կստանան, իսկ Արամ, խուսափելու համար դիտող աչքերե, փապուղիին մեջ երկաթագործի աշխատանք մը կճարե: Անոնք հաճախակի կայցելեն իրարու, և օրվան կացության շուրջ կխոսին: Արամ կտեղեկանա նազարի խումբին գոյությանը, ինչպես նաև Սիմոնյան Հովհաննեսի զենք փախցնելու աշխատանքին:

Կառավարությունը կկասկածի Հովսեփ խոճայի վրա և իբրև Թոփալ Հակոբի մեղսակից՝ կորոշե ձերբակալել զայն, բայց այս վերջինը, առաջվրեն տեղեկանալով իր մասին տրված որոշումին, կհաջողի խուսա տալ և միանալ Թոփալ Հակոբի խումբին: Հովսեփ խոճա լեռ ապաստանելն հետո հաճախ կայցելե անգլիացիներեն գերված հնդիկ զին-

վորներուն, և անոնցմե ծանոթություններ կբաղե օրվան կացության մասին: Սակայն, դժբախտ օր մը, ան ճամփան թուրք ոստիկաններու կհանդիպի և ձերբակալվելով, առանց այլ և այլի կախաղան կբարձրացվի:

Այսպես վերջ կգտնե պատմությունը հերոսի մը ևս, որ իր բովանդակ գոյության ընթացքին ապրած էր մարդավայել կյանք մը և հանուն իր հայրենասիրության զոհ կդառնար թուրք զինվորներու մոլուցքին:

Արամ առանձին մնացած էր, երբ Ինթիլիի հալածանքները կվերսկսին: Ան կհարկադրվի լեռ բարձրանալ իր բարերար բարեկամին օրինակին հետևելով: Կմիանա Թոփալ Հակոբի մարտիկներու խումբին, ուր՝ իբրև վարպետ զինագործ շուտով բոլորին սերն ու համակրանքը կշահի:

Բախումի մը ընթացքին խմբապետ Թոփալ Հակոբ կձերբակալվի և կսպանվի: Մարտիկներուն ղեկավարությունը կստանան Հասան-Պեյլի-ցի Ավետիս Չավուշը:

Թրքական բանակին մեջ զինվորագրված երեք զեյթունցի հայեր, որոնք Շանագ-Գալենն Սվեզ կուղարկվեին, երբ կտեղեկանան Ամանոս լեռան վրա հայկական խումբի մը գոյության մասին, և նաև երբ կտեսնեն հայ գաղթականներու սրտակեղեք կացությունը, կորոշեն լքել թուրք բանակը և միանալ հայ խումբին: Այս երեք զեյթունցիներն են՝ Կարապետ Տեմիրճյան, Մանուկ Ավագյան, Համբարձում Մուճուգյան: Այսպիսով, Ամանոսի հայ խումբին մեջ զեյթունցիներու թիվը կբարձրանա հինգի, որոնք իրենց գործունեությամբ և գերմարդկային զոհողություններով բոլորին սերն ու հարգանքը կվայելեն:

Արամ խմբապետ կընտրվի՝ Ավետիս Չավուշի համահավասար աստիճանով: Արամ և Ավետիս սերտ և անկեղծ գործակցությամբ մը կհաջողին սարսափ ազդել շրջանի թուրք կառավարողներուն:

Փակագիծի մեջ բացված այս հերոսապատումը ամբողջացնելու համար ավելցնենք նաև, թե Ամանոսի հայ խումբը, օր մը արշալույսին, կհարձակի թրքական Յորտեք գյուղին վրա: Այս կռիվի ընթացքին Արամ զիստեն կվիրավորվի և ընկերներուն կողմն կփոխադրվի քուրդի մը մոտ, ուր ամիս մը դարմանվելն հետո կմիանա խումբին: Արամ ճանշված էր թուրք բնակչության կողմն «Սաբրի բեյ» անունով:

Պարտք կզգանք հոս արձանագրել, թե այս հայդուկային խումբը երկար ատեն սարսափը դարձավ իր գտնված շրջանի թուրք կառավարողներուն համար և կրցավ իր գոյությունը ոչ միայն պահել, այլև լիովին արժեցնել՝ մինչև դաշնակից բանակներու մուտքը Հալեպ, 1918-ին:

Զինագրագրին մեծ էր եղած զարմանքը Հալեպի բնակչության, երբ Ամանոսի հայ խումբին 36 մարտիկները քաղաք ժամանելով իրենց զենքերը վար դրին, տարիներու համառ և դժնդակ պայքարներեն հետո: Ինթիլիի նոր տեղահանությունով կյանքը կրկին անտանելի կզառնար: Թուրքական բռնակալությունը նոր սարսափ էր ստեղծած և հայ խլայկներու ժամանակավոր հանգիստը դարձյալ խանդարած: Ամեն ոք կփնտրեր տեղ մը, ուր կարենար իր գլուխը պահել:

Շիլ փաշա Նորաշխարհյանի թոռը՝ Ստեփան, որ ընտանիքով Հալեպ հասած էր, իր եղբոր Խաչերի աքսորվելը և իր ընտանիքի անդամներուն դառն կորուստը լսելով կմտածե Ինթիլի՝ իր հորեղբորորդիներեն Անոնի և Գրիգորի քով մեկնիլ, հուսալով որ հոն խաղաղ կյանք մը կգտնե: Հաղիվ Ինթիլի հասած պայմանները կփոխվին: Կառավարության հալածանքը վերսկսած էր և գաղթականներու թշվառությունը ավելի ահավոր դարձած:

Ստեփան և Գրիգոր կորոշեն երթալ Զեյթուն՝ միանալու համար իրենց հորեղբորորդի Եղիայի խումբին: Անոնք կհաջողին համողել 14 մշեցիներ ևս և խումբ մը կազմելով կմեկնին դեպի Զեյթուն, Անտրուսցի Արթինի առաջնորդությամբ:

Վերջինս Խաչերի մերձակայքեն կհաջողի խումբը ապահով կերպով ձիահան գետն անցնել և հասնիլ Կապան: Խումբը շուներ իր հետ ոչ զենք, ոչ ալ պաշտպանության որևէ միջոց: Անոնք, ճամփու ընթացքին, Կապանի մոտերը կհալածվին թուրքերն:

Այս 17 հոգիեն միայն հինգը կազատին՝ Ստեփան, Գրիգոր, Արթին և մշեցի երկու երիտասարդներ: Անոնք կհասնին Զեյթունի լեռները, իսկ տասներկուքը կսպանվին ճանապարհին:

Հինգ երիտասարդները ամբողջ ամիս մը տառապալի փնտրտուքներե վերջ կգտնեն Եղիայի խումբը Կյուպեք լեռան մոտ: Ինչպես հիշած էինք, Եղիայի խումբը Կապանեն վերադառնալե հետո ապաստանած էր Զեյթունի լեռները և կշարունակեր իր մաքառումները, երբ անակնկալորեն կհանդիպի այս հինգ երիտասարդներուն:

Տեսարանը խիստ տխուր պատկեր մը կստանա: Անդադրում համբույրներով անոնք կողողեն գիրար. լայն ծանոթություններ կստացվին իրենց սրտահատորներու մասին: Նորեկներեն Ստեփան, հաղթանդամ և գեթ, չի կրնար ընկերանալ Եղիայի խումբին և կորոշե երթալ Սարը Կյուպեք՝ իրենց պապենական ազարակը և հոն ապաստանիլ, իրենց երկրագործ գյուղացիներուն մոտ: Խմբապետ Եղիայի ստիպումներն ու հորդորները ապարդյուն կանցնին: Ստեփան կհամառի և կբաժնվի: Թուրք

գյուղացիներ, տեսնելով իրենց հողատերը, մեծ հարգանքով կընդունին զայն, միաժամանակ լուր կդրկեն ոստիկանատուն, ուրկե եկած ոստիկաններ կձերբակալեն Ստեփանը և կտանին Զեյթուն, ապա՝ Սարաշ, ուրկե Հալեպ ճամփա հանվելով՝ կսպանվի քաղաքին շրջակայքը:

Եղիայի խումբը կորոշե երթալ Գաֆգըրտի կողմերը: Հաղիվ թե Պերզնկա լեռան ստորոտը հասած, Եղիայի երրորդ որդին՝ Նշան կհիվանդանա: Ստեփանին հաղորդած տխուր լուրը ցնցած էին զայն:

Նշան Եղիայի որդիներեն ամենեն զգայունն էր ու զարգացածը և մանավանդ բուրբեն ավելի կապված էր իր ընտանիքին:

Խումբը կհասնի Պերզնկայի ստորոտը՝ Զաթալ աղբյուր: Նշան կխնդրե խմբապետեն արտոնել իրեն, որ երթա Քասմենց պարտեզները, թթվաշ պտուղ ուտելու համար: Կխոստանա վերադառնալ անմիջապես նույն գիշերն իսկ Կյուրետինի ժամադրավայր-բերդը: Նշան կբաժնվի խումբեն, սակայն կրտսեր եղբայրը Տիգրան կուզե հետևիլ եղբորը, անքոր անհանգստության պատճառով: Եղիա կհամբուրե իր երկու որդիները և կբաժնվին: Անոնք կմեկնին Քասմենց պարտեզները, իսկ խումբը կիջնե Վանքին թաղը՝ Էլեճունց, ապա կբարձրանա մինչև Բալթա Փունար կոշված աղբյուրը, խմելու համար անոր անմահական ջուրեն, որ դուրս կժայթքեր ժայռերու ծերպերեն:

Խումբը կշարունակե իր ճանապարհը: Կանցնին Եղիայի երեկի շեն և գեղեցիկ տան առջևեն, որ հիմա քարուքանդ ավերակույտի էր վերածված: Տխրությունը կդիտեն զանոնք՝ սև մտածումներով: Ապա կանցնին՝ ձորակը և կանգ կառնեն պատմական հայ վանքի ավերակներուն առջև: Ներս կմտնեն և կուղղվին դեպի անոր փլատակ խորանը: Խումբը կայցելեն վանքի գավիթին մեջ հավիտենորեն հանգող Աստվածատուր իշխանի, Պապիկ փաշայի, Եղիայի հոր՝ Ավետիսի և բոլոր Նորաշխարհյան ընտանիքի դամբաններուն:

Վանքի ավազանին քով, տապանաքարերու մոտ, զանազան խոկումներու և մտածումներու մեջ թաղված, անոնք կոգեկոշեն հիշատակը անմահ հանգողներուն, ապա ճամփան կշարունակեն՝ հասնելու համար կանխորոշված թաքստոցը՝ Կյուրետին, Գաֆգըրտ: Արևածագի շողերուն հետ խումբը կհասնի Նորաշխարհյաններու այգին և անմիջապես դիրքեր գրավելով կմտածե հանգստի մասին:

Հաջորդ օրը մթնշաղին կանցնին Զեյթունի գետակը և կհասնին հայկական ավերակ գյուղ մը՝ Գուրա, անկե Կյուրետին հասնելու համար: Տիգրանի և Նշանի բաժանումեն հետո խումբը կբաղկանար 19 հոգիե:

Նույն օրը, երբ Կյուրեատինի բերդը հասած էին, խմբապետ Նզդիա կվերհիշեցնեն խումբին, թե Զեյթունի հրդեհումին տարելիցն է:

Մարտիկները ծունկի կուգան այդ բարձունքին վրա և կուխտեն անգամ մը ևս շարունակելու պայքարը ընդդեմ թուրքական բռնակալության, լի վրեժի զգացումներով:

Խումբը կհասնի Կյուրեատինի ժամադրավայրը: Ոչ ոք կար հոն: Խըմբապետ Նզդիա կհուսար հոն գտնել իր երկու սրտահատորները, որոնք երբ շատավ, ան ծանր մտահոգություններու մատնվեցավ: Արդյոք ինչո՞ւ ուշացած էին: Ինչո՞ւ չէին հարգած իրենց խոստումը: Արդյոք փորձանքի՞ մը մատնված էին: Օրեր անցան, ոչ մեկ լուր, ոչ մեկ ձայն՝ իր երկու զավակներեն: Տխրությամբ և վիշտով լի օրերը կհաջորդեին իրարու: Մոտավորապես ութ-տասը օր հետո միայն, երբ Իպոյնց օժարը գերի կբռնեն, անկե կիմանա իր որդիներուն վերջին սխրանքներն ու նահատակությունները, որ տեղի ունեցած էր հետևյալ պայմաններու տակ: Մեր ընթերցողները կհիշեն թե Ստեփան Սարը թրքական գլուղը ձերբակալվելով առաջնորդվեր էր Զեյթուն: Ճամփու ընթացքին Պերզբընկայի ստորոտը, զապթիյեները կստիպեն Ստեփանին, որ ցույց տա Նզդիայի խումբի գույքերուն թաքստոցը: Ստեփան, բոլորովին անգիտակ նման թաքստոցի մը գոյություն, նախ կբսե, թե չի գիտեր, ապա երբ կխոշտանգվի, ան իբր փրկության միջոց՝ ըստ բախտի մի քանի անուններ կուտա:

Ստեփան վստահ էր, թե իր հիշած կողմերը ոչ մեկ մարդ կար և հանգարտ սիրտով կուտա անունները այդ շրջանին: Զապթիյեները Ստեփանը Զեյթունի զորանոցը հանձնելե հետո կվերադառնան անոր հիշած տեղերը՝ Քասմենց պարտեզները, պահված գույքերը գտնելու հույսով:

Նշան և Տիգրան խումբեն բաժնվելեն հետո, թթվաշ ուտելու իջած էին Մորուք-աղբյուր, և անկից՝ գացած Քասմենց պարտեզները: Նրբ կպատրաստվեին վերադառնալ խումբին մոտ, նշան ջերմության նոպաչի մը կենթարկվի և չի կրնար տեղեն շարժիլ, որով Տիգրան կհարկադրվի շալկել իր եղբայրը և պարտեզներու մոտ Բուխերիկ քարայրը տանիլ հանգստացնելու համար: Չուլք լեռան հարավ-արևելքը բարձրացող Քասմենց պարտեզներուն հյուսիսը, սրածայր գագաթի մը վրա քարայր մըն էր Բուխերիկ կոչված խոռոչը: Լեռան գագաթը բացված ծակը նմանություն ունենալով բուխերիկի մը, նույն անունով կոչված էր ան ժողովուրդին կողմե:

Հոն հասնելե հետո նշանի տաքությունը կբարձրանա և զառանցան-

քի նոպաներ կուսենա: Տիգրան կհարկադրվի անոր քովեն շհեռանալ: Եվ երկու եղբայրները երեք օր առանձին կմնան: Ամեն օր վար իջնելով Բուխերիկի քարայրեն Տիգրան պաղ ջուր կբերե ջերմի մեջ տվալսող իր եղբորը:

Այս ժամանակաշրջանին կզուգադիպի Ստեփանին ձերբակալությունն ու խոստովանությունները: Զապթիյեները կուգան Քասմենց պարտեզ, պահված գույքեր գտնելու հույսով:

Տիգրան Քարայրի դռան մոտ նշանի սնարին մոտ հսկած պահուն կնշմարե «Անբան քարին» մոտեն հառաջացող ամբոխ մը, որ դեպի իրենց կողմը կուղղվեր: Ան կզգա մոտալուտ վտանգը, սակայն ինչպե՞ս թողուր եղբայրը առանձին, հիվանդ և անհույս ու մեկներ:

Տիգրան նկատելով որ խումբը հասած է արդեն լեռան ստորոտը մեծ աղմուկով սանդուխ մը կերկարե դեպի ժայռին բարձունքը: Դառն ծիծաղով կդիտե վեր բարձրանալու աճապարանքը թուրքերուն, որոնք կերևի՞ մեծ ավար մը կակնկալեին՝ քարայրին մեջ պահված:

Նախապատվությունը զապթիյեներուն կտրվի. չորսը անոնցմե հաջորդական կարգով վեր կբարձրանան, սակայն հազիվ քարայրին մուտքը ոտք դրած, Տիգրանի հրացանին հաջորդական զարկերեն չորսն աչ անկենդան վար կզլտորին: Կոխվը կշարունակվի. ժայռին տակ կեցող ութը թուրք երիտասարդներ ևս կմիանան անդենականին մեջ իրենց նախորդող զապթիյեներուն: Ամբոխը անակնկալի եկած այս հրացանաձգութենեն, փախուստ կուտա և դիրքեր կզրավե ժայռերու ետին: Արևը հետզհետե կշառագունի ու իրիկնամուտի ցուլքերը կտարածվին ժայռին վրա, երբ Տիգրան առանձինն կշարունակե օրհասական գոտեմարտը:

Հրացանի ձայնի առնելով Զեյթունեն խումբ մը զինվորներ օգնություն կհասնին թուրք կավոդներուն: Նշան, հիվանդ պառկած, ծանր տառապանքներու և ջերմության ալիքներու մեջ կզառանցեր, մինչ դուրսեն կորոտար թշնամի գնդակներուն սուլոցը:

Այսպես, ժամեր շարունակ մաքառեցավ Տիգրան, մինչև որ արևածագը իր ճառագայթներով լեցուց նախ հորիզոնը ապա բլուրները, Զեյթունը և իր ամրոց-քարայրը: Հարձակող թուրք ոհմակը կսեղմե պաշարման օղակը և գնդակներու տարափը կտեղա զարնվելով ժայռերուն, բայց անոնցմե ոչ մեկը կհասնի Տիգրանին:

Հիվանդ նշանը, առավան զով օդեն սթափած և անոթության տառապանքեն արթնցած, կտեսնե, որ Տիգրան հրացանը ձեռքին և դաշույնը կողքին, արյան քրտինքի մեջ կլողա. ան կփորձե օգնության հասնիլ իր եղբորը, բայց, ավա՛ղ, թեևս թոշունի նման կզարնվի քարե

քար ու կիչնա գետին. պահ մը վերջ կբարձրանա կրկին և տատանվող քայլերով կվերցնեն իր հրացանը և կհասնի եղբորը՝ Տիգրանի մոտ:

Երկու կորյունները՝ ուս ուսի կշարունակեն անհավասար կռիվը, սակայն ավա՞ղ... զինամթերքը կսպառի: Թուրք հարձակվողները կփորձեն ծակեն ներս մտնել այլ ճանապարհով, սակայն շորս թուրքեր ևս վար նետված էին դաշունահար ըլլալե վերջ: Առանց զինամթերքի պայքարիլն անհուսալի էր: Սպառած էր նաև ուտելիքն ու ջուրը: Անոնք իզուր փնտրեցին կապարի կտոր մը, որ բերաննին դնելով լորձունք բերեին՝ թրջելու համար իրենց պապակած շրթները:

Ժամերը կհաջորդեին իրարու՝ ահռելի և ծանր: Երկու հերոս եղբայրները կսպասեին օրհասական ժամերու վախճանին:

Երկրորդ օրվա ժամերը ևս այդպես անցան: Երեկոյան, լուսինը կրկին եկավ ողջունելու տարաբախտ զույգը, որ տակավին կհամառեր հույսով դիմավորելու արշալույսը: Մինչ բարբարոս խուժանը հուսահատած հերոսները սպանելու կամ ողջ բռնելու ծրագրեն, փայտի դեղեր կլեցնե ժայռին շորս կողմերը, ու քարյուղ սրսկելով ահավոր բոցով և մուխով կողողե ողջ քարայրը:

Հրդեհին բոցե լեզուները երկինք կբարձրանան հսկա սյուներու նման: Տիգրան և Նշան, գառագեղի մեջ բանտարկված առյուծներու պես հոս ու հոն կզարնվին օրհասական ճիգերով, բայց ավա՞ղ... իր լրո՞ւմին կհասնեի ճակատագիրը: Նշան՝ անկարող դիմագրելու խեղդող ծուխի գուլաներուն՝ կիչնա իր եղբոր կուրծքին և կավանդե հոգին: Տիգրան, կկանգնի վեր, կդիտե իր եղբայրը և խելագարի նման մերկացնելով իր դաշույնը, ինքզինքը վար կնետե ժայռին բարձունքեն:

Եվ այսպես երկու անզուգական եղբայրները կզոհվին՝ տասնվեց թուրքերու դիակները փռելե վերջ:

Նղիա, Իպոննց Օմարին չհանդիպած, Կյուրեատինի բերդը չգտնելով իր երկու որդիները, խիստ կմտահոգվի և կասկածելով, որ անոնց անպայման վտանգ մը պատահած է, կդիմե հոն, ուր գատված էին իրարմե, բաժանումեն վեց օր հետո: Առաջին օրը կհասնի Ավագկալ գյուղին առջև Անտուլի կռված բլուրը և հոն հաղիվ հանգստացած կնկատե անգուստներու թափառումը Քասմենց պարտեզներուն կողմը: Սև նախագագուստով մը ան անհամբեր կսպասե արևամուտին, որպեսզի փութա պարտեզները, հոն՝ ուր իր հիվանդ որդին դացած էր պտուղներ քաղելով իր ջերմը զովացնելու:

Մութին մեջ խումբը կքալե: Ամեն կողմ լուսթյունն ու ամալուսթյունը կիշխեր, միայն աստղերը կփայլեին երկնակամարին վրա: Խումբը

դանդաղորեն կիջնե Անտուլ, Չապենց ընտանիքին ագարակը և գետակին եզերքը հանգչելե հետո, կմազլցի Հըզհըզի զառիվերը, ապա կանցնի Հարեմ աղբյուրին առջևեն, Յաղուպյան գերդաստանի այգիներեն դեպի գերեզմանատուն, ուր կլսվեր ուռիներու և սոսիներու հեշտորոր մրմունջը, ուր լուսնի ճառագայթներուն տակ հանգչող հերոսներու դիակները կարծեք իրենց անդրշիրիմյան խաղաղութենեն դուրս գալով կողջունեին մարտիկները...

Խումբը կհասնի Զեյթունի Շուղուր կամուրջը, ուր 1895-ի կռիվներուն՝ զեյթունցի կանայք հարյուրավոր թուրք գերիներ ջարդած էին: Այս վերջինները իրենց վրա այր պահակներու շոգութենեն օգտվելով և դուրսեն հարձակող թուրք զինվորներուն օգնելու նպատակով կփորձեին քաղաքը կրակի տալ, երբ զեյթունցի կիներ կխուժեն անոնց վրա, ու զանոնք բզբտելե հետո կացիներով ու դանակներով, դիակները կնետեն Շուղուրի կամուրջեն վար հոսող ջուրերու ալիքներուն մեջ, քանի մը հարյուր մետր բարձրութենեն:

Խումբը կմտնե Զեյթուն քաղաքը, որ ավերակույտի էր վերածված: Ծամփաները խճողված էին քանդված տուներու քարերով: Ոչ մեկ շունչ, ոչ մեկ ձայն: Կարծես նույնիսկ Զեյթունի գետակը լռած էր: Միայն արևմտյան կողմը քանի մը տնակներու աղոտ լույսերը կպլպլային Նահատակ աղբյուրի շրջակայքը, ուր քանի մը թուրք գաղթական ընտանիքներ հաստատված էին:

Անոնք կհասնին Քասմենց պարտեզները, ուր բազմաթիվ ոտքի հետքեր կերևային տակավին՝ լուսնի լույսին տակ: Մարտիկները կհետախուզեն ամեն կողմ՝ ծառերու և ժայռերու ետին, սակայն ոչ մեկ հետք կգտնեն: Ի վերջո կստիպվին Բուխերիկ քար ելլել: Երբ կհասնին քարայրին առջև, գարշահոտություն մը կդիմավորե խումբին մարտիկները:

Նղիա, սև նախագագուստ մղված, առաջինը կըլլա ներս մտնողը և երբ ընկերները կհասնին անոր մոտ, կտեսնեն իրենց սիրելի խմբապետը, գետին ծռած, գրկին մեջ դիակ մը, որ իր որդիույն՝ Նշանինն էր...

Մարտիկները կհավաքվին դիակին շուրջը. ծնկաչոք, կփակվին բուրիներին աչքերը և աղոթքի մրմունջ մը կտարածվի, որ միևնույն ատեն հոգեհանգստյան և թաղման արարողությունն էր անզուգական հերոսին: Ապա, բոլորը մեկ ոտքի՝ կզառնան Տիրամոր վանքի ավերակներուն, կխաշակնքեն երեք անգամ, մինչ հերոսներու հայր Նղիան, պահ մը արտասվելե վերջ, կզառնա իր շրջապատին, ու անոնց մեջ կփնտրե իր երկրորդ սրտահատորը՝ Տիգրանը...

Տիգրան... Ո՞վ տեսած է, ո՞վ կրնա պատմել... Սակայն, հագուստի

կտոր մը զիրենք կառաջնորդե... և անոնք շուտով կպատկերացնեն Տիգրանին վար նետված ըլլալը այդ բարձունքեն... բայց թե ինչպես և ինչու — չէին կարող գուշակել:

Երբ Իպոնոնց Օմարը գերի կրոնվի, կլուծվի առեղծվածը: Այս վերջինը կպատմե մանրամասնորեն երկու կորյուններուն սխրանքը, ինչպես որ վերը պատմեցինք: Այլ կարելի չէր զսպել այն ահեղ փոթորիկը, որ լեռնացած էր Եղիայի հոգիին խորը... Ան կպայթի շանթի նման, կգոռա վիրավորված աւուծի պես՝ վրե՛ժ... վրե՛ժ... Բառերն անզո՛ր էին թարգման հանդիսանալ հերոս խմբապետին հոգեկան խռովքին և հուզումին: Տակավ առ տակավ կմարի անոր ձայնը, շուտով վերածվելու համար ահավոր և սրտակեղեք ողբի մը...

* * *

Կանգ առնենք պահ մը:

Հերոսուհիի՛ մը պատմութիւնն է այս, որ հանուն հայ Պատիվին մղեց կռիվներուն ամենե՛ն ահավորը: Ան պայքարեցաւ միանալու համար իր ամուսնին, և ի վերջո, ժայռերեն վար, մահվան մեջ որոնելով հայ կնոջ պատվին փառքը...

Զմրո՛ւխտ...

Զինար հասակով, հազիւ 28 տարեկան, հուժկու և հպարտ՝ իր երկրի լեռներուն պես: Ան գաղթական էր ինկած Գոնիա և ապա՝ Ինթիլի: Զմրուխտ խմբապետ Եղիայի երկրորդ տղուն՝ Խաչերի կինն էր և աղջիկը Հաճի Թեյեկյանի: Իր կեսորջ հետ աքսորված և հաստատված էր Ինթիլի, ուր մայր Հեղինե, իր կրտսեր որդւոյն՝ Ավետիսի, աղջկան՝ Սիրանուշի և չորս հարսներուն հետ ձևով մը քարշ կուտար իր տխուր կյանքը:

Մինչև 1916-ի ձմեռը, այս հսկա գերդաստանեն մահացան բազմաթիվ երեխաներ, ինչպես նաև մայր Հեղինեն: Հարսներեն ողջ մնացած էին միայն Օվսաննան (Պապիկին կինը) և Զմրուխտը: Վերջին շրջանին մեռած էր նաև Օվսաննան, որով Եղիայի ընտանիքեն ողջ կմնար միայն Զմրուխտը՝ իր փոքրիկ տղուն՝ Անդրանիկին հետ:

Այլ ի՞նչ ուներ Զմրուխտ զինքը կյանքին կապող... Ոչինչ: Եվ հայ տիկինը ահա դուրս կուգար իր ավանդական կապերեն, դառնալով ներկայացուցիչը հայ իգական սեռի հոգիին խորը հանգչող սրբութեան արտահայտութեան: Ան կդիմե զինք հասկցող, իր մտածումներուն հաղորդ

զեյթունցիներուն, և անոնցմե կկազմե 14 հոգինոց անօրինակ մարտախումբ մը:

Խումբին կմասնակցին՝ Ասատուր և Գարեգին Նորաշխարհյանները՝ իշխան Աստվածատուրի թոռնորդները, Ա. Պատանյանը, Պ. Շեֆթելյանը, Ս. Գալայճյանը, Ս. Սուպենյանը, Մ. Պեհեսնեկյանը, Ա. Սարգսյանը, Ֆրնտրճագի Հովհաննեսը և պիթլիսցի երկու երիտասարդներ՝ Հակոբ և Հովհաննես, ինքը և իր դեռատի որդին: Խումբին համար խմբապետուհի Զմրուխտ կճարե երկու շաքմազը հրացան, մեկ ատրճանակ, երկու դաշույն և... գավազաններ:

Անոնք, հավատքով և վրեժով լեցված, աշնան օրերեն մին կհավաքվին Ինթիլիեն դուրս, կանխորոշված տեղ մը և կսկսին իրենց մաքառումներուն, նպատակ ունենալով հասնելու Եղիայի խումբին: Առաջնորդութեամբը Զմրուխտին, խումբը կքալե անընդհատ՝ զիշերները ամայի դաշտերեն, լեռներեն, ձորերեն: Անոնք կհասնին Ճիհան գետը, կանցնին Տերին Կեչիտեն, Յունկոթջու կամուրջին մոտեն, Ինսյուր գյուղի սահմանեն և իրենք զիրենք կգտնեն Սալաթյաններու ագարակը, Արեգինի մոտ և ապա Ալապոզանենց գյուղը՝ Շեմպեք լեռան ստորոտը՝ Ալա Գայասը:

Աշունը իջած էր այգիներուն վրա, դաշտերուն այգեկութքը վերջ գտած էր: Ծառերը թափած էին իրենց վերջին տերևները: Զմրուխտի խումբը կհանգստանար Շեմպեքի ստորոտը: Նույն ժամանակ, Շեմպեքի մյուս կողմը, Եղիայի մարտիկները, կմտածեն ուղևորվիլ, իրենց կարգին, այլ շրջաններ:

Խմբապետ Եղիա, վշտահար՝ իր որդիներուն Տիգրանի և Նշանի մահով, մեկ կողմ կբաշխի, առանձնութեան մեջ ողբալու համար իր սրբտին ցավը: Այդ պահուն ան վարը, այգիներուն մեջ կնշմարե խումբ մը, որ կեռեկփի: Անմիջապես կհրամայե իր մարտիկներուն իջնել այգիները և իմանալ, թե ովքե՞ր էին այնտեղ նստած օտարականները:

Խումբը կիջնե վար և երբ կպատրաստվի կազմել պաշարման օղակը, կլսե Զեյթունի գավառաբարբառի հնչյուններ: Քիչ վերջ, պաշարող հայ մարտիկներեն Խաչեր կնշմարե կին մը, որ մեջքին դաշույն և ձեռքը հրացան, հրամաններ կարձակե հայերեն լեզվով, իր մոտ գտնվող մարդոց: Ան զայն անմիջապես կճանչնա:

Իր կի՞նն էր... Զմրո՛ւխտը... Այլ ո՞վ կրնար զսպել Խաչերը, երբ ան իր դեմ կտեսնե դյուցազնորեն կանգնած իր կողակիցը, որմե ամիսներե իվեր ոչ մեկ լուր ստացած էր: Հուզիչ ողջագուրում մը տեղի կուներ և այր և կնոջ միջև: Մարտիկներն ալ նույնքան կհուզվին: Քայլ մը

հեռուեն անոնք կղիտեն ու կմտածեն. երազի մե՞ջ են, թե՞ հրաշքի մը ականատես կըլլան:

Փոքրիկն Անդրանիկ, անակնկալորեն տեսնելով իր հայրը, կվազե «հայրիկ, հայրիկ» գոչելով: Խաչեր հրճվանքեն հեկեկալով կգրկե իր սիրասուն զավակը և զայն կհամբուրե անհագորեն:

Խումբը պահ մը կխորասուզվի ծանր խոհերու մեջ: Իրենցմե յուրաքանչյուրն ալ ունեի իր ընտանիքը, որ կորսված էր և որոնցմե ոչ մեկ լուր կար: Այս ուրախ ողբերգությունը իր լրումը կգտնե, երբ սարի կատարեն վար կիջնե խմբապետ Եղիան ևս: Հսկան ընկճված էր: Ահա՛ վոր լուսվունը իր կնիքը դրած էր անոր շրթներուն վրա: Ան բուրբուրվին կերպարանափոխված էր իր երկու զավակներուն մահեն ետք: Հանդարտ քայլերով ան սարի գագաթեն կիջնե և երբ կհասնի խումբին, զարմանքով կտեսնե իր հարսը՝ Զմրուխտը և թողը՝ Անդրանիկը, որոնք կեցած էին Խաչերի քով:

Համբուրի և ողջագուրումի, խոկումի և վշտակցություն հուզիչ արարողությունեն հետո խումբը կհավաքվի, իսկ Եղիա իր ընտանիքի դժբախտ ճակատագրի մասին լայն տեղեկություններ կստանա Զմրուխտեն և անոր ընկերակցող մարտիկներեն: Հարսը կուզե Եղիային հագուստները լվալ: Հակառակ խմբապետին մերժումներուն, ան անմիջապես կտաքցնե ջուրի կաթսան, մինչ խմբապետը իր թոռնիկը գրկին մեջ առած կղիտե զայն անհագորեն, անոր անմեղ աչքերուն մեջ տեսնելով շեն և ուրախ անցյալը...

Մինչ այդ, պահակներեն մին կհայտնե թշնամիի երևումը: Թուրք հետախույզ ջոկատ մը՝ Բերդիզեն, հայ մարտիկներու կողմե գրավված եզներուն հետքերուն հետևելով, երևան հանած էր Եղիայի մարտախումբին թաքստոցը: Մարտիկներուն գտնված տեղը Շեմպեք բլրաշարքեն կազմված էր և մացառուներ կծածկեին անոր ամբողջ տարածությունը: Ոչ մեկ կարելիություն կար հոն հայդուկային կռիվի:

Պահակի հայտնությունեն մի քանի վայրկյան հետո հրացաններու որոտը կլեցնե մթնշաղկաբուր: Փախուստի ոչ մեկ ճամփա կար, պետք էր ամբանալ գտնված տեղը. երբ տեղվույն անհարմարության վրա ավելցունք նորեկներուն զենքե զուրկ ըլլալը, կարելի է այլևս երևակայել տիրող խուճապը խումբին մեջ:

Զմրուխտ մեկ կողմ նետելով լվացքի ամանն ու թիթեղը, կփութա հասնիլ իր ամուսինին մոտ, սակայն մացառուներն ու զնդակներու տեղատարափը արգելք կհանդիսանան:

Ժամ մը հետո, թուրք զինվորներու կրակոցներուն արձագանքելով,

դաշտը կլեցվի թուրք խուճանով և զինվորներով: Թրքական հարձակողականը հետզհետե կգորանա ու կվերածվի կատաղի արշավանքի մը, որուն առջև հայ մարտիկները հարկադրաբար նահանջի կղիմեն: Նորեկ մարտիկները խուճապահար կփախչին: Անոնք իրենց սարսափին մեջ կբայքայեն Եղիայի խումբին փորձառու կովոզներուն եռանդն ալ:

Օրը կհասնի իր վախճանին:

Խմբապետը կհրամայե նահանջել, թուրք կովոզներուն մեջեն ճամփա բանալով: Հայ մարտիկները մերկացնելով իրենց երկսայրի դաշտունները կհարձակին հարձակող թուրքերուն վրա ու կհաջողին ճամփա բանալով հեռանալ: Անոնք այս գուպարին մեջ կկորսնցնեն յոթը կովոզներ, որոնցմե մին էր Շիլ փաշայի թողը՝ Գրիգոր Նորաշխարհյանը:

Խումբը երբ բավական կհեռանա կովի դաշտեն, կհավաքվի և ցավով կնկատե, թե Զմրուխտը ևս կպակսեր ներկաներուն մեջ: Հերոսուհին իզուր փորձած էր մոտենալ իր ամուսնույն Խաչերի, բայց իր ջանքերը միշտ ալ ապարդյուն եղած էին: Ի վերջո ան հարկադրվեր էր խիտ մացառուներուն մեջ պահվտիլ և մտածել իր փրկության մասին: Երեկոյան ուշ ատեն կդադրի հրացաններուն որոտը: Թուրք խուճանը տեսնելով հայ մարտիկներուն նահանջը, կթողու կովի դաշտը, իսկ սև խավարը կրկին ահավոր լուսվունով մը կըրջապատե միջավայրը:

Զմրուխտ, դուրս գալով մացառուտեն, կսկսի փնտրել իր որդին, ամուսինը և մարտիկներու խումբը: Բլուրներու կողին, ձորերու մեջ, ծառերու ետին, լեռնե լեռ թափառելով ան կորոնե իր սիրելիները: Ժամերը կվերջանան, կուգան նորեր, մինչև որ արևը կբացվի լեռներու կատարեն ու հոգնատանջ և տխուր Զմրուխտը կպահվտի անձանոթ լեռան մը մեկ խոռոչին մեջ:

Արևը իր ճառագայթներով կողողե շորս դին, ապա հոգնած, կհեռանա հորիզոնեն, տեղը տալով լուսինին: Զմրուխտ կրկին կսկսի որոնումի, կրկին կիյնա լեռնե լեռ, բլուրե բլուր ու այսպես իյնալով մացառուտներու մեջ, գլտորվելով լեռներու ծերպերեն, տխրորեն դիտելով ժպտող լուսինը, կողբա իր անմխիթար առանձնությունն ու սև ճակատագիրը, առանց սակայն հուսահատելու և ընկրկելու:

Եվ այսպես թափառելով կսահին երեք օրեր: Վերջին անգամ ան կորոշե իր ամուսինը փնտրել այն տեղերն ու վայրերը, որոնց անունները գեռ թարմ էին իր հիշողության մեջ, որոնց թվումը ըրած էր իր ամուսինը, այգիի հանդիպման ատեն:

Ան Շեմպեքեն կիջնե ս. Փրկիչ գետակը ու հոն պապակը անցնելի հետո կշարունակե իր թափառումները Տյունյուքենց գյուղին առջևեն,

կբարձրանա Ջերմուկի դաշտը՝ առաջին կայանը, ուր կհուսար գտնել Եղիայի խումբը:

Ոչ ոք կար հոն ևս, ո՛չ իսկ վայրի կենդանիներ. այլ միայն հեռուն, խավարին մեջ կպլպլային Սյուսպյու-Գայայի Ավագյան գյուղին մեջ վարվող լապտերները: Կշարունակե ճամփան, խուսափելով գյուղը հանդիպելու, և կհասնի Ջերմուկի տաք ջուրի բաղնիքին մոտ:

Զմրուխտ նախ քան ճամփա ելլելը կմտածեք Ջերմուկ իջնել և հոգնած ու վիրավոր ոտքերը հանգչեցնել տաք ջուրին մեջ, երբ անակնկալորեն կնկատե թրքական նոր կարավան մը, որ իջևանած էր իր գտնված վայրին մոտ: Ան առիթը հարմար կնկատե պատառ մը հաց ձեռք ձգելու, որքան որ նման փորձ մը վտանգավոր ըլլալը: Անոթությունը ուժ կուտա Զմրուխտին: Ան գաղտագողի կխառնվի կարավանին և բուռ մը կերակուր ապահովելով կվերադառնա:

Ժամ մը հետո Զմրուխտ ազատած էր անոթության ծանր մղձավանջին: Իր այդ հաջողութենէն գոտեպնդված, ան նոր թափով մը կնետվի առաջ, հասնելու համար իր սիրելի ամուսինին: Ծամփան զինքը կառաջնորդե Զեյթունի ուղիով դեպի Սաղըրի բլուրը: Անցնելով զորանոցին քովն ան կհասնի վանք: Մտնելով անոր ավերակներուն մեջ, կծնրադրե քանդված խորանին առջև, կուտա իր աղոթքի բաժինը վանքին պաշտպան Փրկչուհիին, ապա դուրս ելլելով կդիտե վանքին դիմացը, ձորակին մյուս կողմը, հազիվ հարյուր քայլ հեռավորության վրա քանդված իր տունը, ուր հարսնության երջանկությունը վայելած էր:

Վերջին անգամ կհամբուրե սրբատաշ քարերը և կշարունակե իր ճամփան դեպի հյուսիս-արևելք: Առանց շունչ քաշելու, արագ քայլերով, քաշկոտվելով քարերու մեջ, ան արշալույսին կհասնի Պերզնկայի ստորոտը՝ Չաթալ աղբյուր, ուր կստիպվի մեծ ծառի մը ետին խոռոչ մը գտնել, թաքնվելու համար: Զմրուխտ ինքզինքը բախտավոր կզգա իր մոտ գտնվող հրացանով: Ան կնմաներ մատակ առյուծի մը, որ մորնչելով կորոներ լեռներուն մեջ կորանցուցած իր կորյունը:

Հաջորդ գիշեր ան կսկսի տաժանելի վերելքի մը, հասնելու համար երկրորդ կայանին: Կհասնի Ալմալը՝ գետակներուն միացման կետը, ուր լուսնի լույսով կհանդիպի ճամփուն եզերքը այլանդակ կույտի մը, որուն ինչ ըլլալը կարելի չէր հասկնալ:

Հետաքրքրված կմոտենա և կնկատե, որ դիակ մը նետված է հոն: Երբ կծռի նայելու համար, կտեսնե որ մարդկային մեռել մըն է ան, նոր սպանված: Ավելի ուշի ուշով նայելով դիակին, կձանչնա լուսնի լույսին տակ հանգող մարտիկը: Գարեգին Նորաշխարհյանն էր ան, Աստվածա-

տուր իշխանի թոռնորդին, Ինթիլիի մեջ իր կազմած խումբին անդամներէն մին, որուն վիզին խրված դաշույնի հարվածները ամեն ինչ կպատմեին: Երևույթը անսովոր չէր Զմրուխտին համար: Ան սեղմեց իր ակունքերը և ափ մը հող նետելի հետո նահատակ Գարեգինի դիակին վրա, շարունակեց իր գողգոթան:

Կհասնի Իշխանոք, Հյուպեք լեռան ստորոտը, իրենց վաղեմի ամառանոցը: Ոչ ոք կար... իզուր անցած էր այս խաշելությունն ալ... Ահավասիկ տասնհինգ օրե ի վեր ան կթափառեք միայնակ, բայց տակավին չէր կրցած գտնել իր ամուսինը և ոչ ալ հայ մարտիկներու խումբը: Այլևս ո՛ւր կրնար երթալ, ո՛ւր պետք էր որոնել, ո՛ր հասցեին պետք է դիմեր գտնելու համար իր սիրելիները:

Հյուպեք, Չայաք, Ալա-Չաթը, Տաղաղոչ շունեին իրենց մոտ Զրմուխտին որոնածը: Լաթի կտոր մը հոս, խաշի նշան մը հոն կզետեղեր հոգնաբեկ հերոսուհին, խորհելով թե գուցե անոնց հանդիպեր իր սիրելին և իմանար, թե ողջ է ինքը:

Զմրուխտ հազարներէն մեկն էր այն կիներուն, որոնք ոչ միայն ողբացին իրենց սիրելի ամուսիններուն կորուստը, այլ հերոսուհիներու նման ինկան սարերու և անապատներու անծանոթ խորքերը, այգպիսով փրկելով հայ կնոջ պատիվը և անմար պահելով հայ ժողովուրդին ազատության ջահը:

Անոթությունը կրկին գլուխ կցցե: Ի՞նչ ուտել, ուրտեղե՞ն ձեռք բերել պատառ մը շոր հաց: Սակայն՝ պե՛տք էր դիմանալ, պայքարիլ և շարունակել: Գուցե կարենար գտնել իր ամուսինը՝ Սարը Կյուզելի Աղճունց տունը, հոն ուր կհանդիպեր Խաշի շատ հաղվադեպորեն:

Զմրուխտ գիշերանց կիջնե լեռան բարձունքին ու խարխափելով ուշ գիշերին կհասնի Սարը Կյուզել, ուր կտեսնե աղոտ լույսեր մի քանի տնակներու մեջ: Կմոտենա դողողալով, կբանա տնակներէն մեկուն: դռնակը, ուր կհուսա գտնել իրենց ծանոթ թուրք ընտանիքը: Սակայն ավա՛ղ... Թուրք բոքենի մըն է, որ կդիմավորե զինքը: Գուռը սխալ զարնըված էր: Անոր դեմ ցցվող թուրքը ալպիսթանցի հարկահավաք Ահմետն էր, որ կսարսափի, երբ իր դեմ կգտնե, գիշերվան այդ ուշ ժամուն, վայելչակազմ կին մը, որ մեջքին կկրեր դաշույն և ուսին՝ հրացան, լեռնական մարտիկի տարազով: Զմրուխտի անվախ կեցվածքը հիացում կպատճառե Ահմետին, մինչ անոր ընկերակցող թուրք զինվորները կհարձակին դռան առջև կանգնած հերոսուհիին վրա և զինաթափ կընեն զայն:

Սարը Կյուզելի տեղացի թուրք գյուղացիները կձանչնան իրենց եր-

բեմնի տիրուհին, որուն առատ բարիքները վայելած էին ժամանակին. անոնք իրար-միացած կփորձեն ազատել զայն բորենիին ձեռքեն, սակայն իզո՛ր: Հարկահավաք Ահմետի մեջ արթնցած էր վայրագ կիրքին հետ հիացմունքի զգացումն ալ: Ան կխոստանա երջանիկ և փարթամ կյանք մը Զմրուխտին, պայմանով որ ան իրեն կին ըլլա: Սակայն հայուհին կնախատե Ահմետը, կարհամարհե զայն, մերժելով անոր բոլոր առաջարկները, որմե ետք ջղայնացած հարկահավաքը կհարձակի անոր վրա:

Բարձրացած աղմուկին հետեանքով կհավաքվին գյուղացիները. կմիջամտեն գյուղապետ Փախունց Ահմետը և եղբայրը՝ կրոնապետ Զոբախըն. անոնք արգելք կհանդիսանան Ահմետի վայրագ մոլուցքի իրագործումին և կորոշեն Զմրուխտը դրկել Զեյթուն՝ դատվելու, ինչպես ըրած էին Ստեփանին համար, երբ ան իրենց ձեռքն էր ինկած ատենին: Ահմետը կհոժարի այդ կարգադրության, հուսալով թե կրնա ճամփու ընթացքին որևէ ձևով սիրաշահիլ Զմրուխտը: Հաջորդ օրը, առավոտյան, գյուղը ողջերթ կմաղթե հերոսուհիին: Հարկահավաքը, իր կարգին, թուղթ մը ստորագրելով, գյուղապետին կխոստանա Զմրուխտը նույնութեամբ հանձնել Զեյթունի մյուսյուրութեան:

Հարկահավաքը իր զապթիկներով կհեռանա գյուղեն, Զմրուխտը հետը առած: Որքան դժնակ էր հերոսուհիին համար, երկար տառապանքներն վերջ մահվան հետ կողք կողքի քայլել և արհամարհել հետո բոլոր սարսափները, գերի դառնալ այդպիսի վայրագ զազանի մը: Սակայն ան լուռ և անխոս կքալե խումբին հետ, միշտ հպարտ, հանդուգն, հուսալի:

Հազիվ գյուղեն մեկ ժամ հեռացած, հարկահավաքը իրենց ընկերացող զապթիկները հոս-հոն կղրկե ու ինք առանձին կմնա Զմրուխտին հետ, ամայի լեռան լանջին: Վար իջնելով ձիեն ան կառաջարկե Զմրուխտին տեղի տալ և իր կինը ըլլալ: Վերջինը դարձյալ կմերժե, որմե կատուղած, Ահմետ զայն կկապե ձիուն պոչին և կրկին բարձրանալե հետո ձիուն գավակը, կպարտադրե Զմրուխտին քաշկոտվելով հասնիլ ձիուն քայլերուն: Պահ մը դադարեցնելով իր վայրագ խաղը վերստին կսկսի աղվեսի խոստումները շոայլել, բայց՝ դարձյալ իզուր:

Վերջին փորձ մը ևս:

Ահմետ կիջնե ձիեն, կկապե Զմրուխտի ձեռքն ու ոտքը և բերանին լաթի կտոր մը թխմելով գետին կնետե զայն: Զմրուխտ վհատված չէ սակայն: Ան խորամանկութեան կղիմե և կըսե. «Ծա քու կինդ կըլլամ,

թող զիս»: Հինգ վայրկյան հետո Զմրուխտին ձեռքերն ու ոտքերը քակված էին: Հազիվ քանի մը քայլ հեռացած, մատակ առյուծի մը նման Զմրուխտ կսուրա Բամպուճագի հակա և վիթխարի ժայռին կատարը, կղիտե պահ մը վարը բացվող ահալոր անդունդը և ինքզինքը վար կնետե:

Այս պատմութիւնը, իր բովանդակ մանրամասնութեամբ, մեզ անձամբ պատմած է Սարը Կյուզելի վերևը հիշված գյուղապետը՝ Փախունց Ահմետը, 1919-ին, երբ Զեյթուն վերադարձած էինք 1915-ի Գաղթեն մազապուրծ ազատած ափ մը զեյթունցիներս:

1915-ի Եղեռնին գտնվեցան Զմրուխտի օրինակին հետևող բազմաթիվ հայ աղջիկներ ու կիներ, որոնք խուժանի կիրքին շենթարկվելու համար, ինքզինքնին հանձնեցին Եփրատի ալիքներուն, օրինակը տալով հայ կնոջ համբավվոր Պատվախնդրության:

Զմրուխտի եղբրական և հերոսական դրվագները նկարագրելու համար պահ մը ընդմիջեցինք Եղիայի խումբին պատմութիւնը:

Շեմպեքի լեռան կռիվներեն հետո Եղիան ու իր զինակիցները կհամախմբվին Արեգինի մոտ, Կյուրետինի բերդին զիմացը՝ Ալա-Գայասը: Նախ կենթադրվեր, թե Շեմպեքի կռիվին զոհերը յոթը հոգի էին, սակայն ետքեն ստուգվեցավ, որ տասը հոգի կպակսեր, որոնց մեջ էին Զմրուխտն ու փոքրիկ Անդրանիկը:

Անշուշտ կարելի չէր ստուգել, թե տասը հոգիին բոլորն ալ մահացած էին կռիւ ընթացքին, թե ոչ: Մարտախումբը կհարկադրվի վերադառնալ Շեմպեքի կռվադաշտը, ուր կգտնեն յոթը մարտիկներուն դիակները:

Թաղման տխուր և կարճ արարողութիւններեն ետքը, յոթը նահատակներուն դիակները կհավաքեն և անոնց բոլորին վրա քարե բլուր մը կաղմելով, ծառի տերևներով և ճյուղերով կզարդարեն, ապա՝ գլխահակ և տխուր, հրաժեշտ կուտան անոնց:

Սակայն ո՛ր էին պակսող մյուս երեքը, ո՞ր պետք էր որոնել Գարեգինը, Զմրուխտը և փոքրիկ Անդրանիկը: Կարճ խորհրդակցութենե մը հետո, Եղիա խումբը կբաժնե երեքի, որոնց յուրաքանչյուրին պարտականութիւն կուտա առանձին շրջագիծերու մեջ որոնել կորսվածները: Շրջելով Զեյթունի լեռներուն վրա, անոնք կգտնեն Զմրուխտի կողմն դրված նշանները, որոնք կհաստատեն թե՛ ան անցած էր այդ տեղերեն: Եղիա և իր որդին խաչերը անդուլ անդադար կփնտրեն առանց հանգչելու: Անոնք չեն կրնար ըմբռնել, թե ինչո՛ւ պիտի շկարենային գտնել Զմրուխտին հետքը, երբ գտած էին օրինակ՝ Գարեգինի դիակը: Զէի՛ն կընար

հաշտվիլ այն դառն իրականութեան հետ, թե Զմրուխտ փրկվելիս ետք գաղթի և լեռներու թափառումներեն, ահա միանգամընդմիշտ կանհետանար վերջին պահուն:

Այդպես, գիշերներ շարունակ, մարտիկներու խումբը հանդիպելիս հետո, կթափառին դարձյալ սար ու ձոր: Խմբապետին երկու որդիներուն աղետալի մահը Բուխերիկի քարայրին վրա կմոռցվի Զմրուխտի կորուստով: Տարտամութեան և կասկածի ծանր դատակնիքով մը կհարվածվի մարտիկներու հոգին: Ամիս մը անընդհատ որոնելիս հետո խումբերը կմիանան իրարու Շեմպեքի ժամադրավայրը: Ամբողջ խումբը կհասնի Սանտոխ քար՝ Գալունենց գյուղի հյուսիս-արևմուտքը և հոն, ճամփուն վրա, աղբյուրին եզերքը կհանդիպին անծանոթի մը, գոր կձերբակալեն:

Իպոյննց Օմարն էր անծանոթը, Պեշեն թուրք գյուղեն: Անկե լայն ծանոթութուններ կքաղեն Շեմպեքի կոհիվներուն, Զմրուխտի եղբրական մահվան, Գարեգինի սպանութեան՝ Քերթմենի թուրք գյուղացիներուն կողմե, և փոքրիկն Անդրանիկի ողջ ողջ հրկիզման շուրջ:

Խումբը առանց նույնիսկ խորհրդակցութեան կուղղվի Սարը Կյուզել գյուղը: Երեք ժամ անընդհատ քալելիս հետո Խաչեր կբախն դուռը Ֆախունց Ահմետին: Անոր մոտ ժամ մը հանգչելիս հետո կտեսնեն գյուղապետին անկեղծ ու դառն վիշտը, որ շէր կրցած Զմրուխտը հարկահավաք Ահմետի ճիրաններեն փրկել:

Գիշերով խումբը կուղղվի Բամպունակենց լեռը և լուսնի լուսսին տակ, մարտիկները գլխահակ և արտասովոր, կբարձրանան այն բարձունքը, ուրկե Զմրուխտ ինքզինքը վար նետած էր, դիակն անգամ չհանձնելու համար թշնամիին: Իր հագուստեն ծվեն մը գտնված էր ժայռի մը վրա, որուն ի տես Խաչեր իր ահեղ ողբովը կլեցնեն մթնոլորտը: Գյուղապետ Ահմետ, որ հանձն առած էր ցույց տալ Զմրուխտի նահատակութեան վայրը, կփղձկի իր կարգին և կարտասվել: Ոչ ոք կուզե բաժնրվիլ այդ սրբազան նահատակութեան խորան-ժայռեն, երբ արևածագը տակավ կլուսավորեն բնութիւնն ամբողջ: Խումբը կիջնեն սարեն, և կուղղվի դեպի Զեյթունի լեռները:

Գյուղապետ Ահմետ երբ կպատրաստվեր բաժնվիլ մարտիկներու խումբեն, դիմացեն եկող երեք զապթիյներու երևումը պատճառ կդառնա, որ ինք ևս պահվախ խումբին հետ: Հազիվ տասը վայրկյան անց, Ահմետ Եղիային մոտենալով կհայտնե, թե եկողներեն մեկը նույնինքն հարկահավաք Ահմետն է: Խումբին մեջ անկարագրելի ուրախութուն

մը ծայր կուտա, ամեն ոք կուզեր ինքը մաքրել անոր հաշիվը, բայց խմբապետը կմիջամտե և կհրահանգե ողջ բռնել զայն և ապա միատեղ պատժել: Կես ժամ հետո Ահմետ արդեն ձերբակալված էր:

Ինչպե՞ս լուծել վրեժը սակայն...
Երկու հոգի, Եղիայի հրահանգով, հազիվ կհաջողին զսպել Խաչերը: Հետ խորհրդակցութեան, կորոշվի անոր Բամպունակենց ժայռը փոխադրել՝ Զմրուխտի նահատակութեան վայրը և նետել ժայռն ի վար: Որոշումը նույնութեամբ կգործադրվի և Զմրուխտի վրեժը կլուծվի:

* * *

1916, դեկտեմբեր: Տարի մը ևս, լոկ մահասարսուռ հիշատակներով, կհասնի իր վախճանին:

Ճյուներ ծածկած էր լեռ ու ձոր: Ոչ ճամփա կար, ոչ ալ արահետ: Մարտիկներու խումբը պատասպարված էր Պալենց կոշված քարայրին մեջ՝ Զեյթունի հյուսիս-արևմտյան կողմը, մեկուկես ժամ հեռավորութեան վրա, Քյոմե Սյոյուտի ճանապարհի մերձակայքը: Ապահովված էր խումբին ձմեռվան պաշարը: Փայտն ու ուտելիքները առատ էին: Սակայն վերջին կորուստները ծանրորեն անդրադարձած էին մարտիկներու վրա: Անոնք գիշերները մինչև լույս կհավաքվեին ճարճատող կրակին շուրջը և երկարորեն կունկնդրեին իրենց խմբապետին հուշերը: Ի՞նչ եղած էր իրենց մաքառումներուն հաշվեկշիռը՝ վերջին տարվա ընթացքին: Ոչ ևս էին Նշանը, Տիգրանը, Զմրուխտը, որոնք նախորդ տարվա ձմեռային հանգիստին, ի բաց առյալ Զմրուխտեն, Խանոս լեռան քարայրին մեջ, իրենց հետ նստած էին բոցավառվող խարույկներուն մոտ: Խումբին համար անկարելի եղած էր մոռնալ այդ տարվա ընթացքին եղած գոհերը:

Օրերը կանցնեին վերածվելով շաբաթներու և ամիսներու: Մինչ ձյունը կբարձրանար տակավ և կգոցեր ամեն ճամփա: Գարնան ամիսներուն կսկսեր ձյունհալը և բնութիւնը դարձյալ ճամփա կուտար մարդոց:

1917 մարտ: Նոր տարի, նոր արշավանքներ, նոր մաքառումներ:

Մարտախումբի գործունեութեան շրջանը սկսած է արդեն: Պետք է դուրս գալ և գործել: Դեպի Զեյթուն ուղղվող ճամփաները անանցանելի էին, սակայն, հարավային կողմերը՝ Սուշաթը, Գաֆգըրտ՝ ձյունհալը սկսած էր և կարելի էր երթնել: Մարտի 20-ին խումբը դուրս կուգար իր թաքստոցեն և կհասներ Պալենց գերեզմանատունը:

Նույն օրը Ավագկալի առջևն խումբը կանցնի Անանիկենց ձորը, Ֆոնուզի գետակին մոլեգնոտ հորձանքը կտրելով, որ ձյունհալեն հորդած էր ու կհասնի Ղարա գյուղը:

Հաջորդ առավոտ անոնք Գաֆգրտի ճամփուն վրա դարանակալ կապասեին, երբ Մարաշի կողմեն երեք ձիավորներ կհասնին նույն ճամփուն վրա երկարող խճուղիեն: Երեքն ալ թուրք զապթիյաններ էին:

Խմբապետը իր դիրքեն կհրավիրե զանոնք անձնատուր ըլլալ: Անոնք ձիերեն վար նետվելով կովելու պատրաստութուն կտեսնեն, սակայն դիմացի կողմի դիրքերեն (ուր կգտնվեին Խաչեր Նորաշխարհչան (Միքայելի թոռը), Հ. Քեփետրյան, Կ. Հաճի-Կարապետյան, Ա. Նորաշխարհչան և Ճափոն Արթին) բացված համազարկին տակ վայրկենապես կոչընչանան անոնք: Կռիվին ավարը՝ երեք մոսին և փամփուշտներ կըլլան: Հազիվ ժամ մը անցած այս բախումեն, երբ խումբը կվերադառնա իր դիրքերը, նոր մարդիկ՝ թիվով ինը հոգի, Քյուրտեղեն Թեքիրի ճամփուն վրա կերևին: Քիչ առաջվա գործողութունը կկրկնվի:

Այլևս կարելի չէր ուշանալ այս կողմերը, հետևաբար, մարտախումբը կշարունակե իր երթը դեպի Չուզուր Հիսարի կողմը, Կանչի բերդին մոտ՝ Ս. Ստեփաննոսի ավերակ վանքը:

Պաշարի տազնապը ծայր կուտա:

Պապիկ, Խաչեր, Մանուկ, Արթին, Վանես կզատվին խումբեն և կիջնեն Չուզուր Հիսարի թրքական գյուղը, ուր հինգ եղներ ձեռք անցընելով կվերադառնան ավերակները: Այս ավարը բավականաչափ ապահովութուն կուտա մարտիկներուն: Անոնք ուտելիքի պատրաստութունը ամբողջացնելէ հետո կշարունակեն իրենց առաքելութունը դեպի Կապանի լեռները:

Ճամփու ընթացքին անոնք կվերհիշեն Համբարձում Գարակոչյանը, որ ապաստանած էր Գրախտոկ լեռը՝ Ֆոնուզի մոտ և կփափաքին այցելել անոր, սակայն ձյունը ճամփան գոցած ըլլալով, կհարկադրվին հրաժարիլ այդ մտադրութենեն: Հաջորդ օրը կհասնին և կդիրքավորվին Անտրոնի հուշակավոր ավատապետ Յայիճ Օղլուի գյուղին մոտ: Այս շրջանը ևս ապահով թաքստոց մըն էր, անտառներով շրջապատված: Խումբեն մաս մը ամեն օր կիջներ սարեն և իր առաքելութունը կատարելէ հետո, ավարներով կվերադառնար թաքստոց:

Շրջանի թուրք գյուղացիութունը այս ամենօրյա այցելութուններեն սարսափած և մարդկային կորուստներեն մտահոգ, լուր կուտա կառավարութեան: Հայդուկներուն համար այլևս անկարելի կըլլա երկարել բնակութունը այդ խիստ վտանգավոր շրջանին մեջ: Տասնհինգ

օր ետք խումբը կվերադառնա իր նախկին վայրը՝ Զեյթունի լեռները: Ճամփու ընթացքին մարտիկները կհանդիպին Կեսարիայեն Մարաշ գացող մեծ կարավանի մը, որ ամբողջ գետեզրը լեցուցած էր: Կարավանը իր բեռները իջեցուցած էր և կհանգստանար: Անոնցմե ոմանք կրակ վառած, կերակուր կպատրաստեին, երիտասարդները ձիերու թամբերը և ծրարները կքննեին, իսկ խումբ մըն ալ՝ մաքրակրոնները, իրենց կրոնական պարտավորութունները կկատարեին:

Խմբապետը շորս մասի կբաժնե իր մարտիկները, որոնք շորս տարբեր դիրքերու վրա տարածված, պիտի թուլատրեին, որ խումբերեն մեկը հարձակի, իսկ մյուս երեքը, ստեղծված շփոթության մեջ, պիտի գործեին: Առաջին խումբը կհանձնվի Պապիկին՝ ընկեր ունենալով Ս. Ճելլաթյանը, Հ. Քեփետրյանը, Կ. Հաճի Կարապետյանը, Ա. Սարգիսյանը, որոնք պետք է հարձակուձի անցնեին: Երկրորդ խումբը կհանձնվի խմբապետի երկրորդ զավկին՝ Խաչերին, որ պիտի պաշտպաներ արևմտյան կողմը և կարավանի նահանջի դիժը պիտի փակեր. Խաչերին կընկերակցեին Ա. Նորաշխարհչանը, Ա. Հանեսյանը, Հ. Սատանիկյանը, Թ. Ալապաշյանը:

Երրորդ խումբը՝ գլխավորութեամբ Խաչեր-Միքայել Նորաշխարհչանի և ընկերակցութեամբ Գ. և Տ. Նորաշխարհչաններուն, Ա. Քեփետրյանին, Վ. Գասպարյանին և Ս. Սուրենյանին դիրք պիտի բռնեին հյուսիս-արևելյան կողմը:

Հարավային կողմի պաշտպանութունը խմբապետն ինք անձամբ կատանձնե, խորհելով որ այդ կողմեն կկատարվի կարավանի մարդոց նահանջը: Խմբապետին կողքին էին՝ Ճափոն Արթին, Պապիկ Շեֆթալյան, Մ. Պեհեսնլյան, Հ. Գատեմյան, մշեցի և ֆրնտըճագի հինգ երիտասարդներ:

Կարգադրութունները կամբողջանան: Յուրաքանչյուր խումբ կզբավե իրեն հատկացված դիրքը, և ապա՝ սուր սուլոց մը կտարածվի դիրքե դիրք: Պապիկի խումբին մարտիկները կրակե ալիքի մը նման կիջնեն կարավանին վրա, իրենց դաշույնները օդի մեջ ձոճելով: Կարավանը աննկարագրելի խուճապի մը կմատնվի, տեսնելով կատաղած կորյուններու նման իրենց վրա արշավող հայ մարտիկները, երբ զնդակներու տեղատարափ մը կթնդացնե օդը: Կարավանի ժողովուրդը խուճապահար թաքստոցներ կփնտրե: Բայց թե ո՛ւր փախչեին, երբ մեկ կողմե գետը կփակեր իրենց ճամփան և հարթ դաշտագետին մը պաշտպանվելու կարելիութուն չէր տար իրենց: Շատեր սարսափահար և խելակո-

րույս գետ կնեավին: Մինչ անակնկալորեն քսանյակ մը զինված շերքեզ ձիավորներ կհասնին, և միանալով կարավանին կոհիվին կմիջամտեն:

Պապիկ կանխատեսելով հավանական վտանգը, չի խորհիր նույնիսկ դուրս գալ կարավանեն, մինչև որ չվերջացնե գործը: Սակայն, խմբապետին կողմն տրված կրկնակի ազդարարության նշանները կհարկադրեն, որ ան վերադառնա իր նախկին դիրքը: Հրացանաձգութունը կշարունակվի կատաղի ալիքով մը: Զարդե ազատված կարավանի ժողովուրդը, իրեն փրկութեան հասնող շերքեզներուն միանալով, կշարունակե դիմադրութունը:

Հայդուկներուն երկու դիրքերը վտանգավոր կդառնան և անոնք կփոխեն իրենց տեղերը: Կոհիվը կշարունակվի ամբողջ օրը: Իրիկնամուտին շոկատ մը թուրք զինվորներ օգնութեան կհասնին՝ թուրք գյուղացիներն կազմված խուժանի մը ընկերակցութեամբ: Խումբը, այլևս անկարող կովելու, կթողու կոհիվի դաշտը և կհեռանա նոր դիրքեր: Գծախտաբար այս անհավասար կոհիվին մեջ կիյնան՝ Պապիկ Շեֆթելյանը, Մ. Պեհեսլյանը, Ս. Սուրենյանը և երկու երիտասարդներ, մինչ կարավանը, համաձայն մշեցի գյուղացիներու վկայութեան, կունենա 33 մեռյալ և բազմաթիվ վիրավորներ:

Խումբը կհասնի Փյունյուրի լեռները, Սու Չաթըյեն մոտ վեց ժամ հեռավորութեան վրա: Գարձյալ պաշարի և պարենի տագնապը կստիպե, որ երեք մարտիկներ արշավի մը ելլեն և սնունդ ապահովեն:

Զեյթունի կառավարութունը փութով զինվոր կիւնդրե Մարաշեն և Չարտաքեն: Մի քանի ժամ հետո բոլոր ճամփաներուն, լեռներուն վրա բազմաթիվ զինվորական ուժեր, տեղացի թուրք գյուղացիներու առաջնորդութեամբ որոնելու կսկսին հայ խումբը:

Եղիա և իր ընկերները բուրդովին անտեղյակ սոյն վերահաս փոթորիկեն, մի քանի օր հանգստանալէ հետո Չայաքի բարձունքը, ճամփա կ'ելլեն: Հազիվ Օգգայասըի, Թըրպիի վայրը հասած, Զեյթունեն մեկուկես ժամ հեռավորութեան վրա, խումբը կհանդիպի դարանակալ թուրք զինվորներու: Կոհիվը անխուսափելի էր և մահվան վտանգով լի:

Գնդակներու սուլոցը կարճազանքե և փամփուռներու տեղատարափ մը կփոխանակվի անընդհատ երկու կողմերին. լեռները կարծեք կզղբողան փամփուռներու արձակումեն:

Ու այսպէս շորս ժամ շարունակ:

Գիշերվա խավարեն օգտվելով, Եղիա խումբը կառաջնորդե նահանջի: Անոնք երբ բավական կհեռանան բախումի վայրեն, ցավով կնկատեն, թե շորս պատվական երիտասարդներ կպակսին իրենցմէ՝ Վանես

Գուպարյանը, Ա. Աթեշյանը և երկու այլ մարտիկներ: Մահտեսի Արթինի թոռնորդիներն Գրիգոր և որդին Տաճատ Նորաշխարհյանները նահանջի պահուն առանձին գտնված էին, տարբեր փախուստի ճամփու մը վրա:

Թշնամիին կորուստը եղած էր 12 զինվոր:

Գրիգոր և Տաճատ, խումբին միանալու ծրագրով, կմեկնին Փիսիր: Երբ անոնք կհասնին Պերզնկայի աղբյուրը, կուզեն հանգստանալ: Այդ պահուն արևելյան կողմեն կհանդիպին թուրք հետախույզներու, որոնց հետ կհարկադրվին կովի բռնվելու:

Անոնք կհաջողին տասներեք թշնամիներու կյանքին վերջ տալ, սակայն երբ կսպառին փամփուռները, անոնք կհարկադրվին դիմել դաշույններուն: Կիյնա նախ հայրը՝ Գրիգորը, ապա որդին՝ Տաճատը՝ հերոսներու վայել մաքառումներն վերջ:

Ու այսպէս, աշնանային տերեւթափի նման, կիյնան հայ մարտիկները, լեռներու լանջին, աղբյուրներու մոտ և իրենց արյունով կսրբեն զեյթունցիի ճակատին քսված մուրը՝ Ազգ. իշխանութեանց կողմէ: Մինչ այդ, մինչ այս, Եղիայի խումբը տակալ կհյուծվի: Կնոսրանար անոր մարտիկներուն թիվը և տարիներ տևող ու շարունակվող մաքառումները հետզհետե ուժաթափ կընեն զայն:

Եղիայի մարտախումբին Թըրպըի տակ տեղի ունեցող գուպարը ճակատագրական կդառնա:

Ամբողջ խումբը նահանջի գիծին կքայքայվի և յուրաքանչյուր մարտիկ տեղ մը կիյնա: Եղիայի մոտ կմնան Նորաշխարհյան Ասատուրը, Ճելլատ Մանուկը, Հակոբ Քեփետիրյանը և իր երկու որդիները՝ Պապիկն ու Խաչերը:

Եղիա կլծվի խումբին վերակազմութեան, փնտրելով կորսված մարտիկները: Զննելէ ետք Զեյթունի բոլոր լեռնագագաթները, խումբը կուղղվի Շեմպեքի կողմերը, Արեգին, Ալագայասը, Կյուրեստին, Գազըրոս, սակայն չեն հաջողիր դժբախտաբար ոչ մեկ մարտիկի հետք գտնել:

Վերջապէս, փոքրացած խումբը, ընդամենը 6 հոգի, կհասնի Ալագուզանենց հայ գյուղը, ուրկէ նույն գիշերն իսկ կուղևորվի և Զեյթունի մեծ ճամփուն վրա դիրք կգրավի: Տխուր ամայութեան մեջ Զեյթունի Շուղուր գետակի կարկաչը կլեցնե մթնոլորտը իր ուրբապտույտ ընթացքին մեջ: Կարճ ժամանակ մը հանգչելէ հետո խումբը կշարունակե իր ուղևորութունը՝ ճամփու երկայնքին տարածված այգիներուն մեջեն, երբ հանկարծ «կարգախոս» թվացող ձայն մը տիրող լռութեան վերջ կուտա:

Խումբը պաշարումի շղթայի մը մեջ ինկած էր:

Վեց մարտիկները կփորձեն պահել թուփերու ետին, երբ գնդակներու տեղատարափ մը կիջնեն իրենց շուրջը: Պաշտպանվելու, պատըսպարվելու ոչ մեկ միջոց կարելի էր գտնել այլևս, իսկ ամենեն ահավորը՝ փախուստի ճամփա ալ չկար: Թուրք զինվորներու մեծ թիվ մը շորս կողմեն պաշարած էր հայ մարտիկները: Խմբապետը, սույն ճգնաժամային դրության մեջ, վերագտնելով ինքզինքը, ցավով կնկատե, թե խումբին փրկությունը անհուսալի է և մահը՝ անխուսափելի:

Ան, գերագույն ճիգ մը ընելու վճռակամությամբ, կհրամայե հարձակիլ և գրավել գետակի դիմացի ափին վրա գտնվող բլրակը, զայն ինքնապաշտպանության միջոց դարձնելու համար:

Դաշույնները կմերկացվին, և փոթորիկի ուժգնությամբ հայ կրովողները կհաջողին նետվիլ գետակը և անցնիլ հանդիպակաց կողմը, բայց, ավազ... Եղիան վիրավորված էր թշնամիին հարձակումեն: Վիրավոր խմբապետը կհաջողի գետին եզերքը հասնիլ և կիյնա մացառուտներուն մեջ, շարունակելու համար այնտեղ օրհասական կոփվը:

Հինգ մարտիկներ, բարձրանալիս հետո բլուրին գագաթը, կրակե սյունով մը կփորձեն պաշտպանել վիրավորված խմբապետը, որ իր կարգին, գերագույն ճիգերով կփորձեր ոտքի ելլել և հասնիլ իր ընկերներուն: Բայց իզուր, ոտքերը կզավաճանեն և գնդակի նոր հարվածներ կուզան նոր վերքեր բանալու իր մարմնին վրա: Իբրև լրացումը դժբախտության, գնդակ մը ևս կուզա և կփշրե անոր հրացանը: Հուսահատ և մոլեգնած, ան արյունաթաթախ ձեռքը կերկարե դաշույնին և ատրճանակին, բայց թևերն ալ կզավաճանեն... հո՛ն ևս թշնամի զընդակները ավերներ գործած էին...

Թշնամին կսեղմե օդակը և կմոտենա վիրավոր հերոսին, որ մացառներու վրա ինկած, արյան մեջ կլողար: Եղիա երբ կզգա մահվան մոտեցումը, իր մատներուն ծայրովը լուցկիի տուփը կհանե գրպանեն, և մեծ ճիգերե վերջ կհաջողի կրակ տալ իր շուրջը տարածված մացառներուն:

Հայ մարտիկները բլուրին գագաթեն կտեսնեն կատղած բոցը, որ կաճի և կծավալի խմբապետին մարմնին շուրջը: Ողջ ողջ կայրի ու կմոխրանա դուրացազնատիպ հերոսը՝ Զեյթունի վերջին մեծ հեղինակությունը:

Հայ մարտիկները պահ մը կմոռնան իրենց գեներն ու կոփվը և զամված կմնան իրենց դիրքերուն վրա: Եղիայի մարմնին բոլորտիքը բոցավառող կրակե լեզուները կծծեն, իբրև սրբազան մյուռոն օրհնյալ ծաղիկի, պանծալի հայուն անարատ արյունը...

Եղիա ծնած էր 1853-ին: Որդին էր Նորաշխարհյան Աստվածատուր իշխանի եղբոր՝ Ավետիսին: Անոր միակ ուսումնարանը հանդիսացեր էին բաց դաշտերն ու լեռները, իսկ մեծագույն սերը՝ ձիավարությունն ու գեների գործածությունը: 1862-ին, Ազիզ փաշայի Զեյթունի վրա հարձակման օրերուն, ան հաղիվ ինը տարեկան պատանյակ, իր հորեղբայրներուն հետ կմասնակցի Վանքի պաշտպանության կոփվին: 1866—1867 թվականներուն մահացած իր հորեղբայրների՝ Աստվածատուրի և Եիլ Փանոս փաշայի օրինակին հետևելով, ան կդառնա ուխտյալ զինվոր մը հայրենիքի պաշտպանության: 1877—78-ին կմասնակցի Պոզտուղանի հռչակավոր արշավախումբին՝ իր հորեղբորորդիներեն Պապիկ փաշայի առաջնորդությամբ: 1890-ին, ծառանալով Սալեհ թուրք փաշայի անիրավություններուն դեմ, կաջակցի ըմբոստ Շամքեշիշյանի խումբին: 1895-ին, Զեյթունի մեծ ապստամբության ան պատասխանատու դեր կստանձնե Վանքի պաշտպանության մեջ և կգործակցի Նազարեթ Զավուշին ու հնչակյան գործիչներուն: Սույն կոփվի ընթացքին ան մեծ հռչակի կտիրանա՝ իր 60 մարտիկներովը: Ան, Պերզնկայի ետևի կողմեն, թշնամիին վրա անակնկալ հարձակում գործելով, խուճապ կըստեղծե և կոչնչացնե մեծ քանակությամբ թուրք զինվորներ, որի հետեվանքով կցրվի թշնամի բանակը: 1914-ին, ինչպես տեսանք, գաղթեն ատաջ ան կփորձե ըմբոստության դրոշ պարզել, սակայն մատնվելով՝ Մարաշի բանտը կառաջնորդվի, Նազարեթ Զավուշի խումբին հետ:

1914-ի վերջերը, վերադառնալով Զեյթուն, ան կտեսնե թուրք բարբարոսներուն ոճիրները և կրկին ապստամբություն մը կազմակերպելու աշխատանքին կլծվի: Ապա՝ իր որդիներեն և ընկերներեն կազմված խումբ մը առաջնորդելով կղեկավարե գոտեմարտը: Եվ ինչպես հայտնի է, 1915—17-ին, անհողորդ կշարունակե պայքարը ազատագրության, Զեյթունի լեռներուն վրա, մինչև իր մահը:

Եղիա ամուսնացած էր Թրվանտյանց համեստ ընտանիքի դուստրերեն Հեղինեի հետ, որ կմեռնի գաղթին, Ինթիլիի մեջ, 1916-ին: Ունեցած էր հինգ մանչ և հինգ աղջիկ, որոնցմե շորս աղջիկները և շորս տղաները կամուսնանան: Ան կդառնա մեծ հայրը 42 հոգինոց նահապետական ընտանիքի մը: 1909-են սկսյալ, ան Ս. Աստվածածնա վանքին տեսակ մը աշխարհական վանահայրն էր: Այդ պատճառով խիստ կարգապահություն և բժախնդրություն կտիրեր վանքին մեջ: Վանքը հրկիզված էր 1895-ի կոփվներուն: Եղիա նպատակ ուներ վերաշինել զայն:

Զեյթունի բոլոր խավերեն սիրված և հարգված դեմք մըն էր ան, շնորհիվ իր ազնիվ հոգիին և անսակարկ հայրենասիրութեան:

Անոր ընտանիքին 42 անդամներեն ողջ կմնան միայն իր Մարթա աղջկան որդին՝ Գրիգոր Պոյամյանը և եղբոր՝ Սարգիսին թողը՝ Հակոբը: Զեյթունի մեջ առասպելական զրույցներ կպատմեին իր մասին: Ան, իբրև թե ձուլլ երկաթը իր ուզած ձևին կրնար վերածել, կամ՝ վազող ցուլը կեցնել և այլն, որոնք, անշուշտ, հետևանքն էին իրապես իր ունեցած ֆիզիքական մեծ ուժին: Միջահասակ կազմով, թիկնեղ, գեղադեմ անձ մըն էր ան, առնական դիմագիծերով, որ միայն պատկանանք կազդեր իր շուրջիններուն:

* * *

Եղիայի եղբրական մահով վերջ կգտնե՝ Շուղուրի գետակի եզերքին վրա մղվող Գարա-Չաթրի կոխը: Ողբացյալ Եղիայի որդիները՝ Պապիկ և Խաչեր, բլուրի գագաթեն անզոր մուկեզնութեամբ կդիտեն իրենց հոր մարմինին շուրջ տարածվող մացառներուն հրդեհը: Բոլոր մարտիկներն ալ, լուռ և անշուշտ, կողբան մահը իրենց խմբապետին:

Ժամ մը հետո, վերջ գտած էր ամեն արարողութիւն: Խումբը նոր առաջնորդի մը պետք ուներ: Ո՞վ ավելի արժանի էր ղեկը ձեռք առնելու, եթե ոչ իր անդրանիկ զավակը՝ Պապիկը: Եվ Պապիկ դարձավ նոր խումբապետը:

Պապիկ երկարահասակ, թիկնեղ, գեղատեսիլ, երեսուն տարեկան երիտասարդ մըն էր, որ իր կարգին, տարիներ իվեր սարսափն էր եղած թուրքերուն, իրեն հատուկ խիզախութեամբ և քաջութեամբ: Ժամանակին՝ Պապիկ հարձակելով նշանավոր թուրք ավազակապետի մը վրա, անոր ձեռքի զինքը խլած էր և զայն գետին տապալելով հավատարմութեան երդում ընելու ստիպած էր զայն, սակայն, հրեջր անզոր շափվելու Պապիկին հետ, նենգորեն վրեժ լուծած էր անոր փոքր եղբայրներեն՝ Տիգրանեն և Նշանեն, Բուխերիկի ծանոթ դեպքին:

Պապիկ նախ կորոշե, իր ողբացյալ հոր նման, ամեն գնով գտնել թրնրալի լեռան կոխվին կորսված հայ մարտիկները, այդ նպատակով ան կշարունակե թափառումները, իր հինգ ընկերներով:

Խմբապետին կորուստը թեև անկարելի կըլլա դարմանել, սակայն, Պապիկ բախտավորութիւնը կունենա, երկար փնտրութեան հետո:

գտնել Սուլազ Տեսեյի բարձունքին վրա կորսված ինը հայ մարտիկները, որով խումբը, նկատառելի ուժ կդառնա:

1917-ը արդեն կհասնէր իր վախճանին: Ցուրտն հետո ձյունը կուգա ծածկելու ամեն ճամփա և տուն: Համաձայն նախապես կատարված լուրջ կարգադրութիւններու, այդ տարվա համար ձմեռային թաքստոց նշանակված էր Սյունե հայաբնակ գյուղին ետեր, Կոկիտնի արևելյան կողին գտնվող Քեշ Տաղը, ուր արդեն պարենը կանխօրոք պատրաստված էր:

Անոնք կփութան Քեշ Տաղի անմարդաբնակ լեռան բարձունքը, ուր ահեղի ցուրտ մը սառեցուցած էր ամեն ինչ: Սակայն ուշ էր այլևս: Չէին կրնար խոռոչ մը կամ քարայր մը գտնել ապաստանելու, ձյունը ծածկած էր ամեն ինչ: Վերջին միջոցը տուն մը շինելն էր: Ուստի, անտառն փայտեր կտրելով անոնք կհաջողին տունի նման պատասպարան մը շինել լեռան բարձունքին վրա և զայն միացնել պարենի ամբար-քարայրին: Անոնք մաս առ մաս դուրս կհանեն ուտելիքը և խարուկներ վառելով կտաքցնեն իրենց սառած մարմնի անդամները:

Քեշ Տաղը խիստ բարձր, նույնիսկ վայրի գազաններու իսկ անմատչելի վայր մըն էր, որտեղ մեր մարտիկները ապահով կանցընեն իրենց օրերը:

1917 տարվան հաշվեկշիռը տխուր նիշեր արձանագրած էր:

1917-ի ձմեռնը, Պալենց գերեզմանի թաքստոցին մեջ ձմեռող մարտախումբի անդամներն ինը հոգի ևս մեռած էին: Խումբի ոգին և անսպառ եռանդը հանդիսացող խմբապետ Եղիայի հիշատակը ամեն վայրկյան կգալարեր մարտիկներու հոգին: Կոռնար քամին վիշապաձայն: Կրակի բոցերուն մոտ նստած մարտիկները կխմկային շարունակ: Ո՞ւր էին... ո՞ւր կերթային... և մինչև ե՞րբ...

Այս ահավոր հարցումներուն ոչ ոք կպատասխաներ, կամ կրնար պատասխանել:

Լուռ ձմեռը, տխուր ձմեռը՝ 1917—1918-ի...

Նրբեք այդքան չէին ընկճված մարտիկները:

Սակայն այժմ անոնք կզգային ավելի ուժգին մղիչ ուժ մը, որ կարծես խարազանի հարվածներով կմտրակեր իրենց հոգիները: Միրելի խմբապետին հիշատակն ու տեսիլն էր ան: Փրկութեան պահանջը կզգային անոնք իրենց մեջ ու գիտեին, թե կորսնցնելէ ետք հայրենիք, ընտանիք և նամանավանդ իրենց պետը՝ Եղիան, պարտ էին շարունակել առաքելութիւնը ավելի կատաղութեամբ, ավելի մեծ եռանդով ու նվիր-

րումով: Յուրաքանչյուր մարտիկ կզգար, թե ինք կոչված էր Եղիա մը դառնալու՝ պայքարի ճամփուն վրա:

Պե՛տք էր կռվիլ... պե՛տք էր... մինչև որ դպչեր անողորմ գնդակ մը, ու վերջ տար իրենցմե յուրաքանչյուրի կյանքին:

Պե՛տք էր կռվիլ:

Ի՛նչ փուլթ թե պիտի տառապեին տակավին:

Ի՛նչ փուլթ թե անշիրիմ՝ պիտի իյնային մի առ մի, լեռներու ծերպերուն մեջ, վտակներու հորձանքներեն քշված և կամ ժայռերու կողին և հասարակ գերեզմանաքար մը անգամ պիտի շունենային իրենց անթաղ մարմիններուն վրա...

Պե՛տք է կռվեին:

Այդպե՛ս կպահանջեր մարտիկներու ռազմական ոգին:

Այդպե՛ս կարձագանքեին Զեյթունի լեռները:

Այդպե՛ս կպահանջեր հայու աննվաճ և անկապտելի ոգին:

Պե՛տք է կռվեին:

Եվ՛ կռվեցա՛ն անոնք, Զեյթունի ազատագրական պայքարի վերջին մոհիկանները:

1918-ի սև տարին...

Մարտ ամիսը եկած էր ու իր հետ բերած որոշ ջերմություն:

Չյունը կիջներ լեռներեն ու սպիտակ սալանը կբարձրանար բնության վրային: Բուրավետ ծաղիկներ զլուփ կցցեին ձյունի փաթիլներու տակեն, ծառերը կրկին կհագնեին իրենց կանաչ հագուստը: Պապիկ և իր տասը մարտիկները, հետ խորհրդակցության, կորոշեն իջնել հարավային կողմերը, ուր արդեն տաքը մարդկանց դուրս կհաներ իրենց պատըսպարաններեն: Անոնք լքելով իրենց փայտաշեն գետնափոր պատըսպարանը կիջնեն Քեշ Տաղի բարձունքեն և կուղևորվին դեպի անորոշ հորիզոններ:

Խմբապետին հրահանգով, ութ-տաս օրվան պաշար վերցնելով, անոնք կիջնեն Կոկիսունի դաշտը: Առաջին գիշերն իսկ կհաջողին երկու շերքեզ թուրք զինվորներ հաշվեհարդարի ենթարկել և հասնիլ Քիրիշ հայկական գյուղը: Յոթ օր թափառելի հետո ութերորդ օրվան առավոտուն անոնք կհասնին Կարս Պազարի հյուսիսը և անմարդաբնակ անտառներու մեջ բնակություն կհաստատեն: Գարունը զարթնած էր իր բովանդակ գեղեցկությամբ: Խումբին մարտիկները մաս առ մաս դուրս կելլեն իրենց թաքստոցներեն և որոշ պաշարով կվերադառնան:

Քսան օր խումբը կապրի այս անտառին մեջ և երբ կնկատեն, թե սպանված թուրքերուն թիվը բարձրացած է, խուսափելու համար որևէ

տհաճ անակնկալե, կորոշեն վերադառնալ Զեյթունի լեռները: Վերադարձի ճամփուն վրա անոնք կհանդիպին Քիրեճի, Կապանի, Շիվիլիկի, Պունտուգի, Տաշ Օլուխի հայաբնակ գյուղերը, որոնք փլատակներու վերածված էին:

Ապրիլի սկիզբները մարտիկները կհասնին Ֆնուզի ս. Կարապետ վանքը: Մտնելով փլատակ եկեղեցիեն ներս անոնք կծնրադրեն քանդված խորանին առջև և իրենց կրոնական պարտքը կատարել վերջ կշարունակեն ճամփան, հասնելու համար Դրախտոկ լեռը, այցելելու նպատակով Համբարձում Գարակոչյանին և Պետրոս Աշրգյանին: Խումբը կմագլցի Դրախտոկ լեռան ցից բարձունքն ի վեր: Մտնելով ծանոթ քարայրեն ներս, դժբախտաբար ո՛չ ոք կգտնեն հոն, ո՛չ զույգ մարտիկները, ո՛չ էլ անոնց ընտանիքի անդամները:

Արդյոք ի՛նչ եղած էին անոնք... Արդյո՞ք դժբախտության մեջ կզբտնրվեին և օգնության կարիք ունեին: Խումբը վար կիջնե Դրախտոկ լեռնեն և կուղղվի դեպի Թանր թրքական գյուղը: Տակավին այնտեղ չհասած, կտեսնեն արաբական վրան մը: Անսպասմա՛ն Թանրի գյուղացիներն ըլլալու էին անոնք:

Ճելլատ Մանուկ մինակը խումբեն անշատվելով կհաջողի մտնել վրանը, ուր կհանդիպի պառավի մը, որ գյուղապետ Հասանի կինն էր:

Ան պառավեն կիմանա եղելությունը ու վերադառնալով խումբին մոտ կպատմե, թե Ահմետ Չավուշ, Համբարձումին ծանոթ բարեկամը ինչպե՛ս մատնած է Պետրոսն ու Համբարձումը, որոնք իրենց պաշարի կարիքը հոգալու համար մերթ կայցելեին իրեն: Համբարձում երբ ջաղացք կիջնե, Ահմետ Չավուշ լուր կուտա ոստիկանության: Ոստիկանները կհարձակին Համբարձումին վրա, երբ վերջինս խոսակցության մեջ էր Ահմետին հետ: Ոստիկանները ապա կուղղվին Դրախտոկ, ուր ձերբակալելով Պետրոսն ու երկու ընտանիքներու անդամները, զանոնք կտանին Մարաշ: Այնտեղեն ալ Հալեպ, սակայն ճամփու ընթացքին կսպանեն Համբարձումը:

Ճելլատ Մանուկ իր հետ առատ պաշար էր բերած: Թանր գյուղեն հեռանալի հետո, խումբը կուղղվի Չուգուր Հիսար և ապա Աղալը լեռը: Մայիսի սկիզբն էր:

Բնությունը կհորդեր վառ ծաղիկներով, և արևը կշողար սփռելով բաղդը ջերմություն մը: Պապիկ, խորհելով որ այսպիսի ժամանակ մը պարապ անցրնելը սխալ է, կհրահանգե շարունակել արշավանքը: Կարգ մը տեղեր հանդիպել վերջ կհասնին Գաֆզըրո՝ խումբին գործունեության կենտրոնական շրջագիծը: Քանի մը թուրք ձիավոր զինվորներ

սրարշավ կերևան մեծ ճամփուն վրա, որոնք Մարաշեն Կոկիսոնի կողմը կփութային:

Պետական թղթատարն էր:

Վտանգավոր էր հարձակիլ թղթատարին վրա, որովհետև անոնք ամեն պատահականության դեմ շատ լավ զինված կըլլային: Սակայն Պապիկ կուզե շափվիլ անոնց հետ: Հազիվ թե ձիավորները հայ խումբին պաշարման գիծեն ներս էին մտած, երբ Պապիկ ժայռի մը ետևեն հուժկու ձայնով մը զանոնք կհրավիրե անձնատուր ըլլալու: Թուրք հեծյալները կարծես անակնկալի եկած, իրենց հրացաններու փողերը կդարձնեն ձայնին կողմը, սակայն հայ մարտիկներուն կողմե արձակված զենդակները կտապալեն անոնցմե երկուքը: Խաչեր՝ Պապիկի եղբայրը, հերոսուհի Զմրուխտի ամուսինը, տարօրինակ հոգեկան դրության մը մատնըված, կնմաներ վայրագ ցուլի մը, որ կարմիր գույնը տեսնելով կատաղություն մը կզգար իր մեջ, ուստի ան շատ բնականորեն բոլորեն առաջ անցնելով, դաշույնով կհարձակի թուրքերեն ողջ մնացած երեքին վրա և տեղն ու տեղը կսպանն զանոնք:

Գնդակներու որոտը լսելով, բլուրին ետևեն ձիավորներու նոր խումբ մը կհասնի, որոնք Մարաշեն էլպիսթան գացող զինվորական բանակի մը հառաջապահներն էին: Թուրքական նոր խումբը հառաջանալով կհասնի հայ մարտիկներուն գտնված բլուրին մոտ՝ գնդակներու տեղատարափով մը: Խաչեր, որ երեք զապթիներու վրա հարձակելով զբաղած էր, երբ ետ կդառնա, շվարումի կմատնվի, որովհետև թշնամին զինք տեսած ըլլալով, հրացաններու համազարկերուն կենտրոնը իր վրա դարձուցած էր: Գնդակ մը կփշրե անոր աջ թևը, մինչ վիրավոր մարտիկը կվազե մոտակա ժայռի մը ետին ապաստան գտնելու հույսով: Իր ընկերները հեռուն հրացանաձգութեամբ կփորձեն պաշտպանել վիրավորը, սակայն անօգուտ: Խաչեր, հազիվ ժայռին ետևը հասած, կոնակեն կստանա մահացու գնդակ մը ևս: Ան կիյնա արյունաթաթախ, երեսի վրա, գալարվելով, մինչ հարյուրավոր գնդակներ կտեղան ու կծակծրկեն անոր դիակը: Այսպիսով Խաչերը ևս կերթա միանալու անմահներու հույլին: Մուկթը իջած ըլլալով, Պապիկ կհրամայե խումբին ունէ կերպով փրկել հերոս եղբոր դիակը, բայց այդ անհնար էր: Ի վերջո խումբը կնահանջե:

Այս կռիվին թուրքերը բավական զոհ կուտան:

Սակայն Պապիկին համար հարվածը շատ ծանր էր:

Ան, կորսնցնելէ հետո իր ընտանիքին մյուս անդամները՝ հայրը, եղբայրներեն Նշանն ու Տիգրանը՝ Բուխերիկի լեռան վրա, հիմա կկոր-

սրնցներ վերջինը՝ Խաչերը: Արևածագի առաջին ճառագայթներուն հետ մարտիկները կհասնին Դոշախ լեռան գագաթը, ուր հոգնաբեկ՝ կհանգրստանան աղբերակի մը մոտ:

Ապա հաջորդ գիշերը նորից ճամփա կելլեն, հասնելու համար Քյումե Սյոյուտ, Մուճուգյաններու գյուղը: Հայ գյուղի ավերակ տաճարի խորանին առջև հոգեհանգստյան արարողություն մը կկատարեն Խաչերի հոգվույն համար, լուռ և տխուր:

Այդ օրերուն աղի պակասին ծնած տազնապը հետզհետե մղձավանջ մը կդառնար:

Ճելլատ Մանուկ կղրկվի Սյուլյուբլյու Կյոլ՝ աղ ճարելու համար տեղացի քուրդերեն: Գյուղացիները լավ կճանչնային Մանուկը, որովհետև ան բնիկ Սյուլյուբլյու գյուղեն էր: Բարեբախտաբար կօժանդակեն անոր և առատ աղ կտրամադրեն:

Հազիվ թե կրկին սարերը կբարձրանային, պահակները լուր կուտան, թե մեծաթիվ խումբ մը կերևա Շանլըենց կողմը, որ կհառաջանա իրենց ուղղութեամբ: Մարտիկները շարժման կանցնին: Պապիկ նախ կհրահանգե պաշարել, ապա ոչնչացնել բոլորը: Տասնչորս ռազմիկները անակնկալ հարձակումով մը խուճապ կստեղծեն. հակառակ անոր որ թշնամին զինված էր, ան շիրջով դիմադրել և տեղի տվավ առաջին բախումին իսկ: Քսանհինգ կենդանիներ, իրենց ծանր բեռներով, ավար մնացին այս կռիվին: Այդ բոլորը տեղավորելն իսկ մեծ հարց էր: Հազիվ թե խումբը ճամփա կհանե կենդանիները, երբ նոր թուրքական թղթատար մը ևս կհասնի և նոր կռիվ մը պատճառ կհանդիսանա:

Հայդուկները կթողուն ավարը և կպաշարեն թղթատարին ընկերակցող հինգ զինվորները, սակայն նոր դժբախտություն մը վրա կհասնի:

Զեյթունեն Զարտաք մեկնող զինվորական ջոկատ մը կմոտենա կռիվի վայրը, երբ հայ մարտիկներու հաջողությունը ապահով դարձած կիջվե: Բարեբախտաբար հայդուկները տերն էին կացութեան և պաշտպանութեան համար լավ դիրքեր ունեին: Սակայն կռիվի վայրը զինվորական կենտրոններուն մոտ ըլլալով նորանոր ուժեր կհասնին: Պապիկ իր խմբապետի արժանիքը ցույց տալով կխանդավառե իր ընկերները: Հայդուկները կարծես առյուծներու վերածված, կաճապարեն դաշույններով կռիվի ձեռնարկել, բայց Պապիկ կհրամայե անոնց դուրս շփալ դիրքերեն, որովհետև անիմաստ կտեսնե բուռ մը քաջերով տասնյակներու վրա հարձակիլը: Խավարին հետ թշնամին կտարածե իր պաշարման օղակը: Զորս կողմը, բլուրներուն վրա խարուկները կվառնին, սպասելով, որ հաջորդ օրը գա իր լույսով, շարունակելու համար կռիվը:

հավարեն օգտվելով, Պապիկ կհաջողի ճեղքել պաշարման օղակը և նահանջել ավելի ապահով վայր մը: Թշնամիին կորուստը տասնյակներով եղած էր, մինչ հայ խումբեն սպանված էր միայն մեկ հոգի, Ջրմուխտի Ինթիլիի խումբի մարտիկներեն մին:

Գժբախտաբար առաջին կարավանեն գրավված ավարը կհարկադրվին թողուլ կովի դաշտը, ինչպես նաև նոր մորթված երեք եզներու միսերը:

Հաջորդ առավոտ մարտիկները կհանգստանան Պապիկ փաշայի ծանոթ քարայրին մոտ: Սակայն անոնք ոչինչ ունեին ուտելու: Խմբապետը կկարգադրե որ շորս հոգի երթան Ջերմուկի դաշտը Ջենի Զափան գյուղը և պաշար բերեն: Անոնք կվերադառնան երկու եզներով, տուպակ մը աղով և հացով: Պերզնկայի այս պատմական քարայրին մեջ խումբը կպատրաստե իր պաշարը և երեք օր կհանգստանա: Չորրորդ օրը խումբը կուղևորվի Փիսիր լեռան ճամփով, Շեմպեքի լեռան կողմը գտնվող Վարդանի այգին, ուր պեշենցի թուրք գյուղացիներ հաստատված էին:

Այս շրջանի բոլոր հայաբնակ գյուղերը՝ Սևուկենց, Իսիրենց, Զահալենց, Ջիլենց, Տարտանենց, Վարդանենց գրավված էին նորեկներու կողմե: Պեշենցի գյուղացիները ատենին տասանորդ կուտային հայերուն: Այժմ բախտի անիվը շրջված էր...

Կարճ ժամանակի ընթացքին Պապիկի մղած անդադրում կռիվները սարսափով կհամակեն շրջանի թուրքերը: Այս վերջիններս բազմաթիվ անգամներ կդիմեն թուրքական կառավարության, որ պաշտպանե զիրենք հայ խումբի հարձակումներուն դեմ: Կառավարությունը խիստ մտահոգված այդ իրողությունեն, ժողովներ կգումարե, և ապա՝ Գրվրագ Իպրահիմի նման ծանոթ ավազակապետի մը օժանդակությամբ կխրնդրե, որպեսզի ան առաջնորդե թուրք զինվորները՝ բնաջնջելու համար Պապիկի խումբը: Գրվրագ Իպրահիմ, որ նախապես պարտված էր և երդում քրած Պապիկի առջև՝ հավատարիմ մնալու, ահա առիթը հարմար կնկատե ընդունելու կառավարության առաջարկը: Ան 500—600 տեղացի թուրք երիտասարդներ առաջնորդելով, որոնք շատ լավ զիտեին շրջանի բոլոր թաքստոցները, կձեռնարկե հետապնդումի:

Այդ շրջանի բոլոր դիրքերը թուրք կռիվներով կլեցվին, մինչ Պապիկ կշարունակե իր հարձակումները: Սակայն, երբ կիմանա, թե հազարներու հասած է դարանակալ կռիվը թուրքերու թիվը, որոնց հանձնարարված էր միայն իր խումբը հետապնդելու, խոհեմությամբ կհամարե ժամանակ մը հեռանալ Ջեյթունի լեռներեն և փոխել կռիվի շրջագիծը: Մարտիկներու խումբը կմեկնի Սյունեի Քեշ Տաղի կողմերը: Այս շրջա-

նին մեջ ևս իրենք կրնային գործել, մինչև որ Գրվրագ Իպրահիմը հուսահատեր և կամ՝ կարենային զայն անակնկալի բերել ժամանակի ընթացքին: Այդ միջոցին ուտելիքի պակասը ավելի սուր բնույթ կստանա: Ճեղատ Մանուկ թրքաբնակ Կյուճյուկ գյուղը կուղարկվի խումբին պաշար ճարելու համար:

Մանուկ ծանոթ էր այդ գյուղին: Հոն կապրեր իր վաղեմի մեկ շերքեզ բարեկամը, որ հաճախ օգնած էր իրեն:

Մանուկին կհետևի խումբը և դարանի կնստի գյուղին շուրջը, մինչ ան, դաշտնը մերկացուցած, գիշեր ատեն գյուղ կմտնե:

Գյուղացիք քունի մեջ են և լուսթյուն կտիրե ամեն կողմ:

Շուներու հաշտցներն են, որ հաճախ կարձագանքեն ամայության մեջ, սակայն Մանուկին տեսքը զանոնք ևս սարսափեցնելու չափ զորավոր էր: Ան կհասնի ծանոթ բարեկամ շերքեզին տնակը և անոր դուռը զարնելե հետո կմտնե ներս, իր վաղեմի ընկերոջ մոտ:

Մանուկին ուրախությամբ անսահման կըլլա, երբ կիմանա շերքեզ բարեկամեն, թե թուրք բանակը քայքայված է և Սվեզի ջրանցքեն փախած, և թե արաբները Դամասկոսի Տումայի կիրճին մեջ ջարդած են թուրք զինվորները: Անհրաժեշտ ուտելիքը վերցնելե հետո Մանուկ փոթորիկի նման դուրս կնետվի, լուրը ժամ առաջ իր ընկերներուն ավետելու համար, մինչ շերքեզը կուզե ընկերակցիլ իրեն:

Մանուկի բերած լուրը կցնցե բոլորը...

Պապիկին խումբը կհեռանա գյուղեն:

Պապիկը, ինչպես իր հայրը, կմաքառեր առանց որևէ հստակ հեռանկարի՝ հանուն նվիրական հայրենասիրության, մինչդեռ դաշնակիցներու հաղթանակով, նոր կարելիությանց արշալույս մը ծնունդ կառնե հիմա: Թուրքական բանակը ջախջախված էր և կնահանջեր: Դաշնակիցները գրաված էին Հալեպը: Նոր հարց մը ծնած էր հիմա. արդյո՞ք պետք էր ձգել Ջեյթունի լեռները և միանալ դաշնակիցներու բանակին, թե՞ մնալ այս սեզ լեռներու վրա: Փրկության հույսը, ապրելու հավանականությունը կարծես տխրությունով մը կհամակեր Պապիկը: Անթեզված ցավերն ու վշտերը, կուտակված դառն մաղձը վերհանած էր մեկեն, որովհետև ան ուրախությամբ կերևակայեր դաշնակիցներուն մուտքը Ջեյթուն, անոր լեռներուն գրավումը հայ զինվորներու կողմե: Այս... Պիտի ծաղկեր Ջեյթունը կրկին, զեյթունցին պիտի վերագտներ իր շեն և ուրախ կյանքը, ինքը և իր մարտիկ խլայկները պիտի մնային հավիտ տխուր, հավիտ դժբախտ, իրենց սիրելիներուն անմեռ հիշատակներովը տվայտելով մինչև մահ: Մանր դժբախտությունե մը հետո հայտ-

նըվող միտքարութեան հոգեկան ցավն էր, որ սկսած էր խոռովել Պապի-
կի հոգին: Ան կտեսներ ծագող ապագան, վերսկսող ազատ ու նոր կյան-
քը, որուն մեջ ոչ մեկ մաս պիտի ունենար ինքը և որուն ճամփուն վրա
առհասարակ մեռած էին պաշտելի հայրն ու եղբայրները:

Պապիկը սակայն ավելի երանելի պիտի ըլլար քան իր հաջորդները,
որովհետև ինք չապրեցավ այն դառն հուսախաբութիւնները, որոնք բա-
ժին եղան իր հաջորդներուն: Դաշնակիցները պայքարած էին ոչ թե
ազատելու համար ջարդովու հայութիւնը, այլ սոսկ իրենց նյութական
շահերուն համար: Հայերը նպաստած էին անոնց հաղթանակին, առանց
դոշըն կասկածն ունենալու թե հետագային պիտի խաչվեր ու թաղվեր
իրենց սրբազան դատը...

Ու այս շատ ավելի դառն էր, քան մահը լեռներու վրա, սարերու
և ձորերու մեջ...

Երանելի էր Պապիկ...

Որովհետև ի՛նք ևս, նման բոլոր մարտնչողներուն, զոհվեցավ առանց
տեսնելու բարեկամներու ստոր մատնութիւնը և արդար հույսերու փլու-
զումը...

Որքա՛ն լավ է մեռնիլ պայքարի ճանապարհին վրա, քան ապրիլ
մատնութեանց և լքումի մեջ՝ բարեկամ նկատված եվրոպական պետու-
թիւններու կողմէ:

Խումբը ուրախութեամբ կհասնէր Քեշ Տաղը:

Ճամփու երկայնքին մարտիկները կունենան տաք խոսակցութիւն-
ներ իրարու հետ: Ամառը վերջացած աշունը սկսած էր. պաղ հովեր կու-
գային վար թափելու դեղնած տերևները: Խումբը կհասնէ Քեշ Տաղի
ստորոտը, անմահական աղբերակին մոտ, որուն ջուրերը ժայռերու ծեր-
պերեն դուրս կխոյանային շառաշով:

Ամբողջ գիշերը քալելեն հետո երբ կհանգստանան, Պապիկ ձայնը
բարձրացնելով խոսքը կուղղէ մարտիկներուն, մինչ հորիզոնը կկար-
մըրի արեւածագի առաջին ճառագայթներով:

— Պատվակա՛ն ընկերներ.

Չերքեզին տված լուրին համաձայն այլևս ազատված ենք: Թուրք
պետութիւնը, դարավոր մեր ոսոխը իր օրհասը կապրի, ազատութեան
արշալույսը մոտ է: Մենք ալ տարիներու պայքարեն վերջը կրնանք չորս
հինգ օրեն միանալ դաշնակից բանակներուն: Լուրջ հարց մը, սակայն,
կներկայանա մեզի և լուծում կպահանջէ: Կովեցանք չորս տարիներ
անընդհատ և բազմաթիւ զոհեր տվինք ու անոնց արյունով սրբացուցինք
մեր հողը:

Սակայն այսօր պայմանները կթուլատրեն մեզ մեկ կողմ թողու
մեր բոլոր ձգտումները, անթաղ նահատակներու աճյունները, հեռանալ
մեր սրբազան հողեն ու միանալ դաշնակից բանակներուն:

Բայց ես կհիշեմ հորս կտակը, որ հետեւայն էր.

«Թո՛ղ ձեր արյունը ձեր հայրենիքի հողը ներկէ, ձեր դիակները լեռ-
ներուն գագառները հողոտեն, միայն մի բաժնվիք ձեր նվիրական հո-
ղեն, մինչև որ ծածանի ազատութեան սրբազան դրոշը Զեյթունի լեռնե-
րուն վրա»:

Արդ, նկատի ունենալով մեր ներկա դժնդակ կացութիւնը, ես ան-
ձամբ ուխտած եմ չբաժնվիլ մեր պապենական լեռներեն և շունչս խառ-
նել իմ նահատակ սրտահատորներուս շունչին:

Խմբապետին այս խոսքերը ծանր լուրթեամբ մը դիմավորվեցան
հայ մարտիկներուն կողմէ: Սակայն, ժամ մը հետո, սուր վիճաբանու-
թիւն մը ծայր տվավ անոնց միջև:

Հեռանա՞լ, թե՞ մնալ ու կովիլ:

Մրտիկներեն մին վերհիշեցուց, թե ինք լսած էր չերքեզե մը, որ
զեյթունցի այլ խումբ մը ևս գոյութիւն ունէր Ամանոսի լեռներուն վրա,
Սաբրի բեյ անունով հայ հայրուկի մը ղեկավարութեան տակ: Վիճա-
բանող մարտիկներեն չորսը Զեյթունի գաղթեն առաջ իսկ լեռ ապաս-
տանած էին և լուր չունեին արտաքին աշխարհեն, իսկ մնացյալները՝
Տեր-Ջորեն, Պիր-Սապայեն, Դամասկոսեն, Ինթիլիյեն փախած հայեր
էին, որոնք տեսած էին գաղթը և հայերուն ջարդը ու համոզված էին, թե
ոչ մեկ հայ կրնար ազատիլ Եղեռնեն:

Խմբապետ Պապիկ, լայնախոհ ղեկավարի մը վայել լրջութեամբ մտիկ
ընելէ հետո բոլոր վիճաբանութիւններն ու առաջարկները, այսպես եզ-
րակացուց.

— Թողու Զեյթունի լեռները առժամապես և փոխանակ այս լեռ-
ներուն վրա ձմեռելու, երթալ Ամանոսի սարերը և հոն անցընել ձմեռը:

Եթե իրապես հայ խումբ մը գոյութիւն ունի հոն՝ միանալ անոր:
Հարկ էր միաժամանակ իմանալ, թե հայը կապրի՞ տակավին, գոյու-
թիւն ունի՞ հայութիւնը: Ի պահանջել հարկին, ձմեռելէ հետո հոն,
գարնան վերադառնալ Զեյթունի լեռները, շարունակելու կռիւլը, մինչև
ազատութեան պարզումը:

Մարտիկները այս բանաձևին համամտութիւն հայտնեցին և որո-
շեցին մեկնիլ Ամանոսի լեռները:

Խումբը մոտ տասներկու օր կթափառի սարի սար, ափ մը մոխիր
կառնէ յուրաբանչուր նահատակ մարմիններու աճյուններեն և զանոնք

կամփոփե Զեյթունի մայր վանքի փլատակ խորանին առջև: Յուրաքանչյուր նահատակութեան վայրի մոտ խումբը կկենա ժամ մը, և բոլորը մեկ իրենց գլխարկները վար առնելով և ի խորոց սրտի հանգստյան աղոթք մը արտասանելով կշարունակեն իրենց տաժանելի ճանապարհը:

Զեյթունի վանքին մոտ, ճամփու պաշարը ապահովելու համար խմբապետը կհրահանգե Հ. Քեփեսիւրյանին, Խ. Նորաշխարհյանին, Մ. Ճելլաթյանին և Կ. Հաճի Կարապետյանին որպեսզի անհրաժեշտը կատարեն:

Պարենի համար գացողներուն կհանձնարարվի վանքեն վեր, Չայաք լեռան մոտ բարձրացող ծանոթ ուռնիներուն աղբյուրին քով միանալ իրենց: Խումբը ժամանակին կհասնի որոշյալ ժամադրավայրը՝ Չայաք լեռը: Պաշարի համար մեկնողները կհաջողին երեք եզ հանել գյուղի մը ախոռներեն և քշել իրենց հետ: Անոնք հազիվ թե չորս օրվա ընթացքին կհասնին Չայաքի որոշյալ վայրը, մինչ Պապիկ մեծապես մտահոգ այդ ուշացումեն, ջրագրգիռ վիճակի մը ենթարկված էր:

Աղբյուրին մոտ խումբը կլրացնե իր պատրաստութունները և ապա ճամփա կելլե դեպի Ամանոս և երբ կհասնի Սուլաք Տետեի և Պերզնկայի քույր լեռները, խմբապետը կբարձրանա ժայռի մը վրա, կզիտե հորիզոնը և արտասվալից աչքերով մնաք բարեզ մը կուղղե հայրենի սարերուն, միշտ այն հույսով, թե պիտի վերադառնա կրկին, հաղթական և տիրական: Ան սրտառուչ ուխտ մը կկատարե.

— Պիտի շթող՞ւնք, որ մեր լեռները դերի մնան... կերդն՞ամ, որ պիտի վերադառնանք: Կերդն՞ամ, հանուն նահատակված հորս, եղբայրներուս և բոլոր անթաղ զինակիցներուս անունով, թե պիտի շմոռնամ զիրենք, պիտի դամ կրկին շարունակելու պայքարը:

Ճամփու ընթացքին անոնք դարձյալ կհանդիպին Զեյթունի վանքը: Սեւացած, փլատակ պատեր: Հսկա քարակույտի վերածված ավերակներուն մեջեն հառաջանալով խումբը կծնրադրե խորանին առջև և իր վերջին հոգեկան մխիթարանքի ու վրեժի մաղձը կհեղու լուռ պատերուն վրա: Մինչ Պապիկ, կարծես խորանի փլատակներուն տակեն կունկընդորե իր հերոս հոր ողբը. «Ինչպի՞ս, ո՞ր կերթաս, ինչո՞ւ կհեռանաս», մոռցա՞ր կտակս... արյունդ կեռա՞ տակավին երակներուդ մեջ, մինչ նահատակ հայրդ ու եղբայրներդ քեզմով կփնտրեն իրենց արդար վրեժին հատուցումը... Մինչ դուն կհեռանաս... ո՞ր կերթաս... ինչպե՞ս կբաժնվիս հայրենի հողեն, ինչպե՞ս կհեռանաս...»

Պապիկ կինյա քարերուն վրա, մինչ մարտիկները անզիտակ անոր խոռվքին, կշրջապատեն զայն ու կփորձեն զինք վեր բարձրացնել. ոչ ոք

կհամարձակի խոսք մը ուղղել անոր: Ողբը քարերուն տակեն կշարունակե իր հաճախանքը: Խեղճ Պապիկ... Վիրավոր վարազի մը նման կմոնչե մոլեգնած, ու ոչ ոք ոչինչ կհասկնա անոր մրմջած բառերեն:

Շատ դժվար էր Պապիկի համար նույնիսկ կարճ ժամանակով մը բաժնվիլ Զեյթունի լեռներեն: Ահավոր վրեժի ալիքը, անոր հոգիին խորը թաքնված, հրաժեշտի պահուն դուրս կպոռթկար մեծաղղորդ...

— Գուն չե՞ս կրնար բաժնվիլ մայր հողեն, — կըսեր խուլ, ներքին ձայն մը:

Մարտիկները շվարած կրկին կմոտենան Պապիկին ու զայն կվերցնեն քարերուն վրայեն, մինչ ան, մանուկի մը նման կհեկեկա, կողբա ու կհառաչե: Պապիկին համար բաժանումը նախատինք կհանդիսանար, և, սակայն, իբրև խմբապետ ան հարկադրված էր համակերպիլ, մարտիկ ընկերներուն խնայելու մտահոգութեամբ:

Ուշ գիշերին, մարտիկները մի առ մի վերջին անգամ համբուրելի հետո վանքին խաչքարը, կբաժնվին տխուր սրբատեղիեն:

Մինչև արշալույս անընդհատ քալելով խումբը կհասնի Գավըխկոնց այգիները և հոն կտեղավորվի: Հաջորդ գիշեր անոնք կհասնին Զերմուկ և անոր տաք ջուրին մեջ վերջին լուգանք մը առնելի հետո, հաջորդ օրը կժամանեն Գարա-Չաթր, ուր ինչպե՞ս էր խմբապետ Եղիան:

Հրդեհին հետքերը կերևային տակավին մացառներուն վրա, որոնց մեջ մոխրացած էր հերոսը: Վերջին հարգանքի արարողութենեն հետո, խումբը կհավաքվի Պապիկի շուրջը, կծնրադրե սուրբ աճյուններուն առջև և կերդնու շմոռնալ հայրենի լեռները և վերադառնալ, որքա՞ն ատեն որ ունենային տակավին շունչ մը իրենց մեջ: Ակամայորեն անոնք երկու օր կմնան Գարա-Չաթր, հերոսին հիշատակը ապրեցնելու համար իրենց սրտերուն խորը, ապա կշարունակեն իրենց ճանապարհը: Պապիկի առաջնորդութեամբ կանցնին Կյուրեստինի բերդին առջևեն և կհասնին Յեկենեց հայաբնակ ավերակ գյուղը:

Չորրորդ օրը, մարտիկները ձիհանի եզերքը՝ Յունկութի կամուրջին մոտ, Տերին Տերե կոչված վայրն են արդեն, հոն ուր կվերջանան Զեյթունի շրջանի լեռները: Նույն գիշերն իսկ անցնելով ձիհան գետը անոնք կհասնին Քիշիֆլի հայաբնակ ավերակ գյուղը, ուր կտեղավորվին:

Այլևս նոր և անծանոթ շրջանի մը մեջ են:

Հազիվ տեղավորված՝ հարձակման կենթարկվին դարանակալ մտած թուրքերու կողմ: Բախումը կսկսի ամենասաստիկ կերպով: Անվեհեր զեյթունցիք գերմարդկային ճիգով մը կջանան դուրս գալ պաշարումի օղակեն:

Ի տես հայ կտրիճներու հանդգնութեան խուժանը կկատողի և անոնց ղեկավարը կհրամայի զանգվածային հարձակումի անցնիլ: Երեք բուր- ներն ալ կպաշարվին և ամեն կողմն գնդակներու սաստիկ տեղատարափ մը ծայր կուտա: Արձակված գնդակներու հետեանքով հողի ու ժայռի փոքր կտորներ կտեղան պաշտպանվողներու գլխուն վրա:

Այս փոթորիկին մեջ Պապիկի ձայնը կհնչի որոտի մը ուժգնութեամբ.

— Մի վախեք, կպիցեք, ասպոժ միջ հիտն է...

(Մի վախնաք, զարկեք, աստված մեզ հետ է...)

Զեյթունի հարազատ բարբառով տրված այս հրամանն ետք, մարտիկները ավելի ոգևորված թափով մը կմարտնչին թշնամիին դեմ: Հազարներով արձակված գնդակներու սուլներն ու աղաղակները դժոխքի մը սարսափը կտարածեն շրջակայքը, մինչ հայ մարտիկներու յուրա- քանչյուր փամփուռը կերթա տեղավորվիլ թուրք կռվողի մը մարմինին մեջ: Խուժանը սարսափահար փոքր նահանջ մը կընէ: Դհուլ զուռնան կլուս և հուսահատութունը կըլատե թշնամին: Կռիվի սկսելեն ժամ մը վերջ հարյուր հիսուն զինվորներ կհասնին օգնութեան և կքաջալերեն խուժանը: Մյուս կողմն, ամեն կողմ լուր կտարածվի, թե հայ մարտիկ- ներու մեծ խումբի մը և թուրքերու միջև կռիվ մը ծայր տված է, և թե անպայման կյավորները պետք է ոչնչացվին:

Կռիվը կշարունակվի: Կեսօրն վերջ ժամը 3-ի մոտերը, թուրք զին- վորական հրամանատարութունը կվերակազմե իր շարքերը և նոր հար- ձակումի մը կձեռնարկի: Գնդակներու նոր տեղատարափ մը հայ կռվող- ներուն պատնեշները կսկսի քայքայել: Ժայռերը՝ այլևս անկարող դիմա- նալու կապարներու անդադրում կրակին՝ կփշրվին և կզաղրին որպես պատնեշ ծառայելու խելահեղորեն մարտնչող հայ մարտիկներուն: Եր- րորդ խմբակի պատնեշը տեղի կուտա և անոնց ետևը կռվող Համբար- ձում Քատեմյանն ու Հ. Քեփետիրյանը հոն կնահատակվին: Անոնք մինչև իրենց վերջին շունչը կռված ու մաքառած էին՝ հերոսավայել մեծ հանդգնութեամբ: Խմբակի մարտիկներեն Կ. Քեփետիրյան, Կ. Հաճի Կա- րապետյան և Ա. Պատանյան, սպառելի հետո իրենց փամփուռները, կհարձակին պատնեշին մոտեցող թշնամիներուն և դաշույնի հարվածով տասնյակ մը թուրքեր կփոսն գետին: Կ. Հաճի Կարապետյանը արյունա- թաթախ վիճակով կհաջողի միանալ Պապիկին: Վերջինս տեսնելով օր- հասական կռիվը, գնդակներու տարափով մը կհաջողի հարթել նահան- ջի ճամփան և օգնել Հաճի Կարապետյանին, որ հետևի իրենց: Հաճին կհասնի խմբապետին գտնված բլուրին ետևը և հոն նահատակված Մար-

տիկ Ա. Սարգիսյանի դիակը մեկ կողմ տանելով կշարունակե իր սըլս- րանքը:

Այսպես կսահին ըստենքը, անդադրում պայթյուններովը գնդակ- ներու: Բուռ մը քաջեր, անօրինակ և անպատմելի հանդգնութեամբ կշա- րունակեն դիմադրել՝ հնձելով թշնամի բազմաթիվ կռվողներ: Բլուրին վրա կարձագանքե շարունակ երիտասարդ խմբապետին որոտագոռ ձայնը.

— Կպիցեք, մի՛ վախեք, ասպոժ միջ հիտն է...

Մարտիկները շեն մտածեր ոչ աստժո և ոչ էլ սատանայի մասին, այլ ընկրված վրեժի անհագուրդ մոլուցքին մեջ, կխփեին այն թուրք զինվորներուն, որոնք կհանդգնեին մոտենալ: Այս ահավոր գուպարին մեջ զեյթունցի հայու անվախ և խիզախ հոգին կրկին կհառնե հպարտորեն:

Զկա՛ր օգնութեան որևէ հույս:

Այլ միա՛յն մահն էր, որ պիտի գար անտարակույս...

Ժամը 5-ի մոտերը խմբապետի պաշտպանութեան դիրքն ալ կխոր- տակվի: Ամբողջ բլուրը գնդակներու տարափեն խոցված էր, բայց խում- բը ինք իր մեջ կծկվելով հանդերձ կշարունակե կռիվը: Անվեհեր խմբա- պետը, մերկացնելով դաշույնը, կհրահանգե իր հետ կռվող ընկերնե- րուն հետևիլ իր օրինակին: Չորսն ալ, մերկացնելով իրենց դաշույնները, խմբովին կհարձակին թշնամիին վրա և գիրկընդխառն կռիվը կսկսի:

Սակայն դաշույնն ալ ի վերջո ստիպված էր կանգ առնել գործելի...

Այդ թուրք բազմութեան մեջ ի՞նչ արժեք ուներ տասնյակ մը մար- տիկներու սիրանքը: Սակայն՝ վերջին ճիգ մըն ալ:

— Մի՛ վախեք, կպիցե՛ք, էկոնվնուդ բզբտիցեք (ակոսներով բզբ- տեցեք), ասպոժ միջ հիտն է...

Խմբապետը կհամոզվի, թե անկարելի է այլևս դուրս գալ պաշար- ման շրթայն: Ան կհրահանգե վերջին փորձ մը ևս: Վերադառնալ իրենց նախկին դիրքը, կամ միանալ խաչերի խումբին, երրորդ բլուրի մը ետևը:

Երրորդ խումբի մարտիկները դեռ կդիմանան: Անոնք տեսնելով Պապիկի վատ դրութունը, գնդակներու համազարկը կկենտրոնացնեն իրենց ընկերներուն վրա հարձակվողներուն դեմ:

Խմբապետ Պապիկ առյուծի մը նման կխոյանա դեպի իր ընկերնե- րը, գոռալով իր հետը մարտնչողներուն.

— Մի՛ վախեք, իտիվես այկեք (ետիվես եկեք)...

Սակայն, ավաղ... անոր ձայնը ոչ մեկ արձագանք կգտնե... լռած են իրեն ընկերացող երեք մարտիկները:

Պապիկ, հակառակ վիրավորված ըլլալուն, արտակարգ ջանքերու

շնորհիւ, տքալով կմիանա խումբին, առանց սակայն կորսնցնելու իր հանդգնութիւնն ու եռանդը:

Անոր լեզուն կշարժի տակավին.

— Մի՛ վախե՛ք, կպիցե՛ք, ասպո՛ծ մի՛յ հիտն է...

Վերջապես խավարը կտարածվի և անտարբեր բնութիւնը կիջեցնէ իր սև վարագույրը: Աստղերը կարծեք կուշանան երկնակամարին վրա փայլելու, կարծեք անոնք ևս կխուսափին տխուր վկան ըլլալու այս խնկելի հերոսներու անպատմելի մաքառումներուն... Պապիկ կզգա, թե մահվան ժամը հնշած է, սակայն չի հուսահատիր և կուզե վերջին փորձ մըն ալ ընել:

Պապենական սրբազան պատգամ մը ուներ ան՝ իր դիակը շհանձնել թշնամիին: Ստացած վերքերուն պատճառով ցավերը սկսած էին զինքը շարշարել: Բայց հակառակ այդ վիճակին, ան նոր շունչ ու կենդանութիւն կներշնչեր մարտիկներուն: Կապելե հետո լայն վերքը իր մեջքի գոտիով, կհրահանգեր տակավին.

— Օ՛, սո՛ւրբ փյկիչ, մի՛յ պապիյոն տեյն ու պաշտպոնը (մեր պապերուն տերն ու պաշտպանը):

Եվ մերկ դաշույնը ափին մեջ պինդ սեղմած կհարձակի թշնամիին վրա:

Սև խավարին մեջ դաշույնները կբարձրանան ու կիջնեն և կյանքեր կհնձվին անդադրում: Գիրկընդխառն կոնիվը կսկսի կրկին. դեպի մահ կդիմեն հայ հերոսները, լուսաշող հայրենասերի ճակատով: Մահվան սեմին առջև համեցող այս ողբերգութիւնը կերկարաձգվի մոտ մեկ ժամ:

Ժամ մը հետո խաղաղութիւնը իջած էր շորս դին:

1918, նոյեմբերի 12:

Պապիկ ոչ ևս է...

Ան ևս իր վերջին շունչը կփչե անծանոթ բլուրներու բարձունքին, անհշուրընկալ ափերու վրա, իր պաշտելի Զեյթունի լեռներեն հեռու: Եվ այսպէս, անմահ Եղիայի արժանավոր որդին եվս կիյնա իր հոր նման, հերոս նախահայրերու ուղիով, հայ ազատագրութեան գողգոթային վրա: Նշան և Տիգրան՝ Բուխերիկի բարձունքին, Եղիա՝ Գարա-Չաթրի ափին, Խաչեր՝ Գաֆգըրտի կիրճը, ու ինք՝ էլ-Օղլու՝ կնահատակվին: Հարազատներու անմահ հոգիները այդ գիշեր կարծես կմիանան իրարու հայոց լուսավորչի կանթեղին շուրջը, դիտելու իրենց արյունով պլպլացող սըրբազան լույսը, որմե պիտի լուսավորվեր հայոց մութ ապագան, հասնելու համար այսօրվան Հաղթանակի ափերուն...

Պապիկի խումբին հերոսական պատմութիւնը, իր բովանդակ շքե-

ղութեան և հարազատութեան մեջ կվկայակոչվի նաև թուրքի մը կողմն.

«1918 թվականին էլ-Օղլուի ոստիկանապետն էի: Հայ խումբի մը գոյութիւնը լսեցինք Զեյթունի լեռներուն վրա, որուն մասին պաշտոնի բերումով տեղեկագրեցի Մարաշ: Մարաշի կառավարութիւնը ենթադրելով, որ երևացող խումբը դաշնակիցներուն հետ մուտք գործող կամավորներն են, հրահանգ դրկեց շրջանի բոլոր ոստիկանատուններուն, որ իրենց բոլոր տրամադրելի զինվորները օգնութեան փութացնեն հիշյալ վայրը:

Մարաշէն 50—60 հոգինոց խումբեր դրվկեցան կովողներուն հետքը գտնելու համար: Կոնիվը պատահած օրը էլ-Օղլու եկած էր սույն հետախույզ խումբերեն մեկը, 60 հոգիե բաղկացած: Մենք ևս, օրեր առաջ, շրջանի գյուղապետներուն մեր կարգին հրահանգեցինք, որ հետապնդեն մարտական խումբը և մեզ տեղյակ պահեն անցուղարձերեն:

Երեսուն տարի զինվորական ծառայութիւն ըրած եմ, բազմաթիւ մեծ կոնիվներու մասնակցած և հռչակավոր ավազակապետերու հետ շափված եմ, նույնիսկ էտհեմ փաշայի հետ շատ մը արշավանքներու մաս եմ կազմած, սակայն ո՛չ մեկ տեղ այս կարգի հերոսական կովի ակախատես եղած չեմ:

Գժվար է պատմել այս կոնիվին մանրամասնութիւնները և հայ կըրովողներուն հանդուգն մաքառումը: Քանի՛ անգամ սվինամերկ հարձակումներ գործեցին մեր զինվորները, սակայն անօգուտ:

Երբ գիշերը վրա հասավ, հայերը հարձակումի անցան: Կովի հաջորդ օրը, առավոտյան դեմ, աներևակայելի տեսարանի մը հանդիպեցանք, որ պատմութեան մեջ աննախընթաց է հավանաբար: Երկայնահասակ, վայելչակազմ երիտասարդի մը դիակը գտանք ձորակի մը մեջ, տարածված թուրք զինվորի մը վրա, որուն կոկորդին վրա կերևային զինքը խեղդող հայուն մատները:

Ապա ստուգեցինք, որ ան նույնինքն հայ կովողներուն պետը՝ Պապիկին դիակն էր, որուն աղիքները դուրս էին թափված...

Ես կվկայեմ ու բարձրաձայն կհաստատեմ, թե բոլոր ներկաներս, ըլլան ժողովուրդեն թե բանակեն, խոնարհեցանք այս դիակին առջև: Մենք բավական զոհեր տվինք այս կոնիվին, շատ ու շատ թուրք զինվորներ մեռան այդ օրը, հաջորդ օրն ամբողջ՝ դիակներ հավաքելով զբաղվեցանք: Սակայն մեզմե ոչ ոք լացավ, որովհետև իր նմանը չունեցող կովողներու հետ շափվելու պատիւն էինք ունեցած:

Մեր այս խոսքերը կեղծիք պիտի կարծվին, բայց վստահ եղեք, որ մինչև այսօր տակավին հիշողութեանս մեջ թարմ է էլ-Օղլուի կոնիվ:

Այս ահաւոր գուպարին մեջ Պապիկին հետ նահատակվեցան հե-
րոսներու ամբողջ փաղանգ մը՝ ազատագրութեան վեհ ճանապարհին:
Անոնք են.

Հակոբ և Արթին Քեփետիրյան եղբայրները՝ հաշիվ 20—25 տարե-
կան: Մնած Զեյթուն, անոնք մերժեցին էին իրենց հոր թելադրութունները,
ու միացած՝ Նղիայի խումբին, Սուլազ Տետեի բարձունքին վրա շորս
տարիներու համառ պայքարներու ընթացքին, կոխած էին աննման հե-
րոսութեամբ:

Կարապետ Հաճի Կարապետյանը՝ 22 տարեկան, ազնիվ և ծանոթ
ընտանիքի որդի, որ փախչելով Նապլուսի պաղեստինյան թրքական բա-
նակեն, եկած միացած էր խումբին: Որքան հանգուզն, նույնքան գի-
տակից և տրամաբանող, ան եղած է խումբին հառաջապահ մարտիկ-
ներեն մեկը: Թշնամի մը մեռցնելը եղած է իր միակ երջանկութունը,
որ լավապես կբացատրե անոր հոգիին մեջ գոյութուն ունեցող վրեժին
խորութունը:

Ասատուր Նորաշխարհյան 17 տարեկան ուսանող մըն էր՝ Զեյթունի
Կեդրոնական վարժարանի շորորդ դասարանեն. Վանքին կոնիկին կա-
պաստանի իր հորեղբոր՝ Նշանին մոտ: Ինթիլիի մեջ կորսնցնելէ հետո
իր բոլոր ազգականները, ան միացած էր Զմրուխտի խումբին և ապա
ընկերակցած իր հորեղբորը՝ Նղիային: Թեև անփորձ, սակայն ան կըր-
ցած էր մինչև վերջին կոնվը մաքառիլ և արժեցնել իր մատաղ կյանքը:

Արթին Պատանյան՝ հաշիվ 21 տարեկան: Ան ևս նախ իր ծնող-
քին հետ գաղթած էր Գոնիա, ապա՝ Ինթիլի, ուր միանալով Զմրուխտի
խումբին, հաջողած էր գտնել Նղիայի մարտիկները: Քաջարի այս երի-
տասարդեն իբր հիշատակ կմնա անոր սիրած մեկ հանկերգը.

«Ա՛խ, ե՞րբ տեսնեմ զիմ թագավոր...»

Արթին Ճափոնյան՝ 22 տարեկան, միջահասակ, եռանդուն և ճար-
պիկ կովող մը: Իբրև թրքական բանակի զինվոր ան գացած էր մինչև
Նապլուս, ապա Հալեպեն Զեյթուն մեկնող հայ խումբին խառնվելով,
միացած էր Նղիային: Յաղուպյան թաղը ծնած և լեռներու վրա հովի-
վութուն ըրած, զենքի գործածութեան խիստ ընտելացած այս երիտա-
սարդը, խումբին սյուններեն մեկը եղած էր, առանց նույնիսկ օր մը
թերանալու իր պարտականութեան մեջ:

Ասատուր Սարգիսյան, 23 տարեկան, Արեգին գյուղի համեստ զա-
վակ, վայելչակազմ երիտասարդ մըն էր: Ան ևս Ինթիլիեն փախած էր,
և մինչև իր վերջին վայրկյանը կատարած էր իր առաքելութունը, ազնու-

կալվածեն շատ ավելիով: Անոր լուռ ու հանդարտ կեցվածքին տակ պող-
պատայ սիրտ մը կտրոփեր:

Համբարձում Գատեմյան, 21 տարեկան երիտասարդ մը, Զեյթունի
Ավագկալ գյուղեն, որ իր կարգին ճաշակած էր գաղթի առաջին դժ-
բախտութունը, և ապա՝ ըմբոստանալով միացած էր Զմրուխտի խում-
բին, իսկ ավելի վերջ՝ Նղիայի մարտիկներուն: Գատեմյանի միակ հա-
ճուքն էր կոնվի երկար տևողութունը, իսկ նահանջը կամ փախուստը
ուղղակի վիշտ կպատճառեին անոր, որքան ալ անոնց հարկադրանքը
բացատրվեր իրեն:

Ափ մը հայրենի հո՛ղ՝ անոնց անթաղ մարմիններուն վրա:

Հավիտենական փա՛ռք՝ անոնց անմեռ հիշատակին:

Էլ-Օղլուի կոնվեն ողջ ազատվողները, որոնք կրցած էին մութին
շնորհիվ ճեղքել թշնամիին ճակատը, հետևյալներն են.

Միքայելի թոռը՝ Խաչեր Նորաշխարհյան, Մանուկ Ճելլաթյան, Հա-
կոբ Սատանիկյան, Թորոս Ալապաշյան, որը քանի մը տեղեն սվինի
հարվածներ ստացած էր: Այս շորս հայերը կհաջողին հաջորդ օրն իսկ
ապահով տեղ մը գտնել և ապա, ութ օրերու տաժանելի վազքեն հետո,
ողջ առողջ հասնիլ Հալեպ: Խաչեր Նորաշխարհյան վախճանեցավ Թեյրու-
թի մեջ, 1953-ին: Առաջին իսկ օրեն ան միացած էր Նղիայի խումբին
և եղած էր անոր աջ բազուկը: Խաչեր ունեցավ նաև հիշատակելի, հե-
րոսական գործունեություն մը 1919-ին, զեյթունցիներու հայրենիք վե-
րադարձին առիթով մղված ինքնապաշտպանութեան կոնվներու ատեն:

Մանուկ Ճելլաթյան Զեյթունի Ճելլաթենց գյուղեն համեստ ընտա-
նիքի մը զավակն էր, որ իբրև քաջ զինավարժ հուշակ հանած էր: 1915-ին
Հալեպեն Զեյթուն վերադարձողներու հետ միացած էր Նղիայի խումբին:
Ան եղած է խումբին Գորդյան հանգույց լուծողը: Միշտ պատրաստակամ,
ան հետևած է տրված հրամաններուն: Այս հերոսը, ազատելի հետո շորս
տարիներու ծանոթ պայքարներեն, զոհված է Զեյթունի ինքնապաշտ-
պանութեան կոնվներուն՝ 1919—1921-ին:

Հակոբ Սատանիկյան, Զեյթունի Վանքի գյուղեն, համեստ ընտա-
նիքի մը զավակն էր: Ճելլաթյանի հետ միասին Հալեպեն փախած մար-
տիկներեն էր, որ իբրև լավ նշանառու հուշակ ուներ, քանզի զենքի հետ
ընտելացած էր փոքր տարիքեն: Այս մարտիկն է, որ գերագույն երջան-
կութունը ունեցավ 1946-ին ընտանյոք ներգաղթել իր պաշտելի հայ-
րենիքը՝ Սովետական Հայաստան ու այսօր Երևանեն իր երջանկութեան
մասին կզրե նամակներ՝ այս տողերը գրողիս:

Թորոս Ալապաշյան, Արեգի գյուղեն, համեստ երկրագործի մը

զավակն էր: Ան Գամասկոսեն կփխսչի նախ Հալեպ, ապա կամավորագրվելով Ձեյթուն մեկնող խումբին, կմիանա Եղիային: Պարկեշտ և խոնարհ մարտիկի մը տիպարն էր ան, որ վիրավորվելով էլ-Օղլուն կփխսղրվի Հալեպի հիվանդանոցը: Տխուր պատահար մը վերջ կուտա անոր կյանքին: 1918 փետրվարի 28-ին, ան հիվանդանոցը եղած ատեն կլսե փողոցին մեջ առաջացող խուճապի մը աղմուկը. հետաքրքրութենե մղված դուրս կելլե, բայց անգլիական վրիպած գնդակե մը կիյնա գետին:

1915 թ.-ի հունիս ամսուն սկսած դիմադրութեան այս աննախընթաց պոթկումը իր վախճանը գտավ 12 նոյեմբեր 1918-ին, զինադադարեն ճիշտ մեկ օր ետք:

Չորս տարիներու ընթացքին Եղիայի խումբին ունեցած գործունեութունը աշխատեցանք ներկայացնել ականատեսներու վկայութեամբ, իրենց բացարձակ հարազատութեամբը: Խումբին մաս կազմող մարտիկներու թիվը հասած էր մինչև 60-ի: Անոնց մաքառումներուն միակ և կարևոր արդյունքը, կարելի է ըսել, եղավ նվիրական գաղափարներու հավերժացումը հայ հետագա սերունդներուն մեջ:

Այդ ոգիին շնորհիվ չէ՞, որ արդեն հայը կրցավ գոյատևել Սփյուռքի ժլատ պայմաններուն մեջ, կամ հայրենի հողին վրա՝ իբրև հպարտ ու զոհաբերող ժողովուրդ: Մեր մայր հայրենիքին ներկա լուսաշող իրականութունը նույնինքն ծնունդը չէ՞ այդ ոգիին, որ չէ՞ ճանչցած ստերկութունը բնավ, և որ պայքարած է վասն ազատութեան:

Մեր հայրուկային և հեղափոխական կռիվներուն մեջ Եղիայի խումբին հատկանիշն ու արժանիքը կմնան եզակի: Մեր հերոսները, Արևմտյան Հայաստանի ամբողջ տարածքին վրա, ուշ կամ կանուխ, վայելած են թիկունքի մը հոգածութունը, մինչ Եղիայի խումբին միակ ապավինը եղած է իր մարտիկներուն ուժն ու հավատքը:

Եղիայի խումբին մաքառումներուն արժանիքը կկազմե ոչ միայն սխրանքը սոսկ, այլ նաև՝ դիմադրութեան երկարատևութունը (3 տարի), որ բացառիկ երևույթ է նմանօրինակ պայքարներու մեջ:

Մառայութուն, զոհողութուն, հայրենանվիրում՝ առանց սակարկութեան, առանց որևէ ակնկալութեան: Ահա Եղիայի խումբին բացառիկ հատկանիշները, որոնցմով ան հավետ պիտի հիշատակվի Հայոց պատմութեան ոսկեմատյանին մեջ:

ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

1919—1921 ԹՎԱԿԱՆՆԵՐ

1918 թվականին դաշնակից բանակին հաղթական մուտքը Մերձավոր Արևելք առիթ ընծայեց հայկական մեծ սպանդեն մազապուրծ հայ բեկորներուն, որ համախմբվին հետևյալ մեծ քաղաքներուն՝ Գամասկոսի, Բաղդատի, Հալեպի, Բեյրութի մեջ: Անգլիական կառավարութունը մասնավոր գաղթականներ հաստատեց սուլյն վայրերուն մեջ և հոն հավաքեց անապատներեն՝ որբերն ու որբուհիները:

Վերապրող հայութունը գեհնեական քառսեն ազատված, սկսած էր լայն շունչ մը առնել: Մանավանդ իթթիհատականներու պարտութունը զինքը մասամբ կմխիթարեր: Բայց ան, օտար հորիզոններու տակ, կտառապեր սուր կարոտախտո:

Ժողովուրդին մեծագույն փափաքն էր երթալ հայրենիք և պապենական մոխրացած օջախը շնեցնել, հայ բարբառը իր բոսորագեղ ճաճանչներով համասփռել և, վերջապես, զգացնել, հասկցնել թշնամիին, թե հայը կենդանի է, թե դաճապետին սուրը ի զորու չեղավ հայուն կենսունակութունը, բնածին կենսունակութունը անդամահատելու, կացինահարելու: Անոր միակ ուշքն ու միտքը մտածումն էր՝ վերագտնել իր պաշտելի հայրենիքը, խառնել իր կարոտի արցունքը այդ սուրբ հողին, համբուրել անոր թուփն ու քարը և իբր մասունք՝ իր սրտահատորներուն աճյունները սրբատուփերու մեջ զնելով պահել իր սրտին մեջ:

«Հայկական բարեգործական ընդհանուր միութունը» գաղթականներու և որբահավաքի ծախսերուն մեկ մասը ապահոված էր: Երեմյան-Սեֆերյան պատվիրակութուն մը փութացած էր Գամասկոս՝ գաղթականներու բազում կարիքները մեղմացնելու համար:

1919 ապրիլին ներգաղթի մասնակի հրահանգ տրված էր, այսինքն՝ անգլիական կառավարութունը թույլատրած էր միայն զբաղման գոտիին մեջ ներգաղթելու՝ մինչև ներքին գաղառները. ուղբավյալ մասերուն մուտքը խստիվ արգելված էր, որովհետև, թեպետ թշնամին պարտ-

ված էր, բայց անոր հնդդուներ տակավին դարդրած չէր. ան կրնար, եթե ուզեր, նոր ավերներ ևս գործել:

Ժողովուրդին շարունակական աղերսները դաշնակիցներու հրամանատարութեանը, որ թուլատրվի իրեն մինչև Մարաշ՝ գրավյալ գոտի երթալ՝ դուր չանցան: Այսպիսով, զեյթունցիք ևս, իրենց կարգին, Գամասկոսի Ազգային միութեան ատենապետ Անդրանիկ Կենճյանի միջնորդութեամբ, կրցան ներգաղթի արտոնութիւն ստանալ:

1919 մայիսի 19-ին, Դամասկոս և շրջակայքը գտնվող Զեյթունցիք, մոտ 225 հոգի, համախմբված էին Զեյթունի գաղթականներ: Անոնք, իրենց ունեցած իրերը կոնակինին առած, փութացած էին Դամասկոսի կայարանը: «Դեպի հայրենիք» բացականչութիւնները, երգն ու պարը ամբողջ կայարանը կթնդացներ:

1919 մայիսի 21-ի առտուն մեր կարավանը հասավ Հալեպ, ուր խանդավառ ծափահարութիւններով դիմավորվեցավ: Եկող բազմութեան հետ էր նաև Ազգային միութեան պատվիրակութիւնը՝ նախագահութեամբ տիար Տաճատ Տազեայանի: Հալեպ գտնվող մեր հայրենակիցներուն հետ արտասովախառն ողջագործումներ և սրտաճմլիկ տեսարաններ վերջ կարավանը առաջնորդվեցավ Ռամատանիյեի թրքական զորանոցը, որ վերածված էր Հայկական գաղթականի և որը կգտնվեր քաղաքին հյուսիս-արևելքը՝ բարձունքի մը վրա: Զորանոցը խճճված էր այլևայլ շքուղաններ հավաքված որբ և որբուհիներով: Արգահատելի էր դրութիւնը. մանկտի օրիորդներու և դեռատի հարսներու իսլամ հարեմներու մեջ կրած ձևափոխութիւնը ակներև էր: Ծնոտ, քիթ, բերան, թև և ոտք՝ նախշուն իրերով, պճրկիկ-մճրկիկ գույներով ներկված էին և իրենց հայկական հմայքը կորսնցուցած. պզտիկներ՝ հազիվ հինգ-վեց տարեկան, ծնողական գուրգուրանք գուրկ թուրք ընտանիքներու մեջ՝ մոռցած էին հայերենը, և՛ «Ապի, ամի, ախի» բառերով կարտահայտվէին: Որդեկորույս մայրեր և տատիկներ, վերհիշելով իրենց սրտահատորները, կջանային կարելի հոգածութեամբ անոնց լացն ու կոծը դադրեցնել: Ամեն հայուն իր անգին կորուստը, անբուժելի վերքը: Դժբախտ հայութիւն և անիծյալ քաղաքակրթութիւն...

Այդտեղ, այդ բռնութեան բերդին՝ թրքական զորանոցին մեջ կմախացած, իմ տառապակոծ ազգի բեկորներուն քով, նորանոր հրեշտային և սարսուղողեցիկ պատմութիւններ լսելով, անզուսպ ցասումով լեցված էի մեր երկնավորին, և շահամուլ մեծ պետութեանց հանդէպ: Կա՞ր անհատ մը, որ իր սրտի խորքն արշուն չփռսխեր... Հիշեցի իմ սրտահատորները, իմ անմոռանալի հայրենա-

կիցները, իմ քանիցս գողգոթա բարձրացած ազգիս անգին և անհամար կորուստները, որոնք անապատներու մեջ գիշատիչներու կեր դարձան: Ամբողջ հինգ օր այդ բռնութեան բերդին՝ զորանոցին մեջ մնալի և Հալեպի գերեզմանատունը ծանոթ անձնավորութիւններու հողակույտերը այցելելի ետք, Ազգային միութեան կարգադրութեամբ ամսույն 27-ին ճամփա ելանք դեպի մեր պաշտելի հայրենիքը՝ Զեյթուն:

Մեր կարավանը կբաղկանար ընդամենը 1200 հոգի, որուն միայն 525-ը (Հալեպեն միացողներուն հետ միասին) զեյթունցի էին: Նույն գիշերը, առանց որևէ միջադեպի, ժամը 7-ին հասանք Գաթմա: Այստեղ հայութեան ա՛յն սպանդանոցներն էր, ուր մենք 1915-ի օգոստոսին, Գոնիայեն վերադարձի ճամփուն վրա, ականատես եղած էինք մեր անհամար արենակիցներու խաչելութեան: Զուլումի աշխարհն գերված նորափթիթ հարսներ և աղջիկներ, մամիկներ և պապիկներ, որոնք արևվաճար, շորցած, կմախացած, անշուք վրաններու տակ, ճանճերու արշավեն, ջուրի պակասն, թուրք խոժոռաղմ բիրտ զապթիյներու լախտերուն և հրացանի կոթերուն հարվածներուն տակ խելագարած անխուսափելի մահը կդիմավորեին, տասնյակներով դիակներ տակավին կիսամեռ՝ փոս կառաջնորդվէին... Տեսարան մը քստմնելի, որուն նմանը դարերու ընթացքին չե արձանագրված: Որևէ ականատես ոճրածին հրեշտանգամ նման եղե՞նի չէր կրնար հանդուրժել: Ահա՛ այդտեղ էր, որ հազարավոր հայ անմեղներու աճյուններուն վրա բարբարոս իթթիհատականներու փոխարեն հիմա անզլիական բանակի հնդիկ զինվորը հրացանը ձեռքին պահակ կեցած էր: Բռնութեան ծանր շղթան խորտակված և թուրք մուկեզին նայվածքը անհետացած էր: Բոլորին փափաքովը կարավանը այդտեղ իջևանեցավ: Կուզեինք պահ մը մեր սրտահատորներուն, նահատակներուն հարգանք ընծայել: Ամբողջ կարավանի մասնակիցները իրենց կառքերին վար իջան ու խոնարհեցան հողին վրա: Ամեն ոք լուռ ու մունչ՝ հոգեկան պոռթկում մը, վերհիշում մը ունեցավ անցյալի մոռալ օրերին: Անոնք բոլորն ալ ուխտեցին նահատակներու ոսկերտտիքին վրա, որ պիտի չթերանան իրենց ազգային պարտականութեանց մեջ: Կարավանը չէր կրնար շարժիլ, կարծես անդրերկրային ուժ մը արգելք կհանդիսանար և կստիպեր զիրենք, որ քանի մը ժամ ևս մնային այդտեղ... ամեն ոք էլքետրականացած, հեղ մը ևս կփութար իր սիրելիներուն հողակույտը գրկելու և արցունքի կաթիլներով թրջելու զայն: Պայծառ երկնակամարին վրա լուսինը, ի տես այս մեծ սուգին և քաղաքակիրթ մարդոց հրեշտային արարքներուն, կարծես դառնացած կզժկամակեր իր լույսը տալու: Նահատակներու աճյունները

վերակենդանացած, նոր շունչ, նոր ոգի ստացած, կարծեք կկաշկանդին մեզ, որ շերթանք ոճրածին զուլումի երկիրը, հո՛ն, ուր տակավին արյունոտ թշնամին կհոնդար: Ստիպված գիշերը հոն անցուցինք: Աստուն կանուխ, տխուր տպավորությամբ, այլ և այլ վերհիշումներով և խոկումներով լեցված, մեր կարավանը իր ճամփան շարունակեց: Անդանդադաքայլ կհառաջանար ձիթաստաններու և ալգիններու մեջեն, երբ նշմարեցինք Քիլիսի հայ եկեղեցվո գմբեթը, ի շարս բազմաթիվ մինարեններու: Ժամը 10-ին հասած էինք Քիլիս և իջևանած քաղաքի հարավարևելքը գտնվող ձիթաստաններուն մեջ:

Քիլիսը, հյուսիսեն և արևմուտքեն բլուրներով շրջապատված, ընդարձակ դաշտագետինի մը վրա, ձիթենիներով և ալգիններով ճոխ քաղաք մըն էր: Ան ուներ նեղ, խորզուրոզ փողոցներ և ժլատ շուկա մը: Ունեցած է 60 հազար բնակչություն, որուն 14 հազարը եղած են հայեր՝ նախքան պատերազմը: Ունեցած են իրենց ուրույն եկեղեցին, դըպրոցը, աղագյին բարեսիրական հաստատությունները և մշակութային ակումբները, բայց, դժբախտաբար, բոլորը ավերակ դարձած են պատերազմի ընթացքին: Ժողովուրդին շատ աննշան մեկ մասը միայն կրցած էր վերադառնալ: Իրենց հոգևոր պետը՝ Տեր Վահան քահանան և անոր որդին սպանված էին: Տեղացի իսլամ տարրը, նախքան պատերազմը, միշտ բարյացակամ վերաբերմունք ցույց տված էր հայերուն հանդեպ, բայց պատերազմի նախօրյակին, ոճրածին իթթիհատական խմբակը տեղացի իսլամ բնակչությունը գրգռած էր անոնց դեմ, որով քիլիսահայությունը ևս, որը մինչ այդ երբեք կասկածի տեղի չէր տված, ի շարս այլոց, ինք եվս ճաշակեց իր անխուսափելի բաժինը՝ հալածանքի, աքսորի և նույնիսկ կախաղանի: Վերապրող հայությունը շատ ազնիվ, մարդասիրական վերաբերմունք ցույց տվավ մեզի հանդեպ: Ժամը 11—12-ին այցելեցինք կիսախարխուղ հայոց եկեղեցին և հարակից փլված, ավերակ առաջնորդարանը, ուր գտանք մաշած թիկնաթոփ մը վրա, սեղանի մը ետին բազմած ալեհեր և պատկառելի անձնավորություն մը, քանի մը ներկայանալի անհատներն շրջապատված: Ան հնչակյան ծանոթ վեթերան, Մուսա-լերան 1893-ի շարժումներուն կազմակերպիչ Շավարշ Շիշմանյանն էր: Քիլիսի Աղագյին միության իբր ատենապետ, ան մեզի շատ սիրալիք ընդունելություն ցույց տվավ ու պատրաստակամություն հայտնեց կարավանին անհրաժեշտ պետքերը լրացնելու:

1919 մայիսի վերջերին մեր կարավանը շարժեցավ դարձյալ և հաջորդ օրը կեսօրվա ճիշտ ժամը 12-ին, առանց որևէ նեղություն, հա-

սավ Այնթապ, որը քանի մը զառթիվներու ընդարձակ տարածության վրա փռված, պիստակի, ձիթենիի ծառերով և որթատունկի թուփերով շրջապատված կոկիկ, քարաշեն քաղաք մըն էր մոտ 90 հազար բնակչությամբ: Թուրքիո արևելյան քաղաքներեն դեպի Հայկա ուղղվող ճանապարհին վրա կգտնվի ան: Անոր բնակչության մեկ երրորդը, նախքան պատերազմը, հայ էր: Ուներ եկեղեցիներ և դպրոցներ, բարեգործական հաստատություններ և, մանավանդ, «Կիլիկեան ճեմարանը», որ բավական մեծ թվով մտավորականներ հասցուցած էր: Հայ բնակչության մեկ երրորդը բողոքական դարձած էր՝ քաղաքին մեջ հաստատված ամերիկյան հիվանդանոցին և կոլեջին խողովակով: Պատերազմի շրջանին, բացի կարգ մը արհեստավորների, բոլորը տեղահան եղած էին: Հայկական սրբավայրերն ու բարեգործական և կրթական հաստատությունները ավերված, քայքայված էին, մտավորականության որոշ մեկ մասը անհետացած էր. միայն ամերիկյան հաստատությունները կանգուն կմնային, ուր ապաստան գտած էին կարգ մը հայ պաշտոնյաներ: Քաղաքին արևելակողմը, ծառերուն շուքերուն տակ իջևանեցանք: Այնթապի մեջ գտանք մի քանի զեյթունցի ընտանիք, որբայրիներ բոլորն ալ: Քաղաքին բնակչությունը, զեյթունցիներու դեպի Գեյր էզ-Ջուր աքսորի ճամփուն վրա՝ մարդասիրական մեծ ծառայություններ մատուցած էր զգալի թիվով մանուկներ որդեգրելով և խնամելով:

Կարավանը նույն օրը իրիկնամուտին ճամփա ելավ և գիշերը, Այնթապեն 6 ժամ հեռու լեռան մը կողքին՝ Գարապըլքը կռված թրքաբնակ գյուղը, աղբյուրի մը մոտիկ տեղավորվեցավ:

Նույն ամսու 31-ին, կեսօրը վերջ, կարավանը հասավ Պապարճը և տեղավորվեցավ Թուրխանի կամուրջի մոտ, որուն երկու ծայրերը կհսկեին անգլիական հնդիկ զինվորներ:

1919 հունիսի 1-ին, առտուն կանուխ, կարավանը ճամփա ելավ և արևածագին հասավ Մարաշեն 4 ժամ հեռու գտնվող Գում-Չամ ըսված վայրը, որուն երկայնքին բարձրացած էին հսկա ծառեր, որոնք կրնային մրցիլ իրենց դիմացը բարձրացող Ախըր-Տաղի ծառերուն հետ: Կարավանը համրաքայլ կհառաջանար, երբ հեռուեն, փողիններու մեջեն, ամպհովանիի մը շուքին տակ նշմարեցինք քառասմբակ սուրացող ձիակառք մը, երկու սպիտակ ձիավորներու ընկերակցությամբ: Ամբողջ կարավանը անշարժացած կսպասեր կառքին, որ արդեն մեզի մոտեցած էր. վրան բաց էր, իսկ կառապանի մտրակին յուրաքանչյուր շառաշեն ձիերուն պայտերեն կրակ, իսկ երախներեն փրփուր կժայթքեր: Կառապանին քով, երկնայրի դաշույնը և ատրճանակը մեջքին, արաբական փաթ-

թոցը գլխուն, նստած էր Հայկ Պաշլյանը՝ քառասունն անց, Դեյր էզ-
Ջորի սպանդան ազատած մեր քաջ հայրենակիցներեն մին: Իսկ կառքին
մեջ, բեհեզյա աթոռին վրա բազմած էր եղբայրս՝ Ռուբենը, արժանա-
վայել կերպարանքով, վրան հագած Մարաշի ոսկեթելերով բանված
ապան, շուխա շալվարը, մեջքին՝ աճեմ շալը, գլխուն ձյունասպիտակ
մետաքսյա արծաթ թելերով բանված շղարշը, վրան անցուցած արա-
բական արծաթ թելերով ափիլը, մեջքին՝ տասնոց ատրճանակ մը և
արծաթապատ երկսայրի դաշույն մը: Իրեն ընկերացող երկու ձիավոր-
ներն էին՝ Մարաշի հայ երեսփոխան Հակոբ աղա Խրլագյանի եղբորոր-
դի Կղեմես էֆենդին և քրոջորդին Կարապետ Գուլումճյանը, անգլիական
բանակի ընդհանուր պարենավորման հանձնառուները:

Ռուբեն Նորաշխարհյանը իմ գերդաստանի արժանավոր մեկ գա-
վակն էր, եղբայրներուս երրորդը: Ան, 1895-ին, գորանոցի գրավումին
օրը աշխարհ կուգա և կմկրտվի Աղասիի կնքահայրությանը: 24 տարե-
կան, միջահասակ, վայելչակազմ և հանդուգն երիտասարդ մըն էր: Հոր
եղբերական մահեն ետք ա՛ն ևս ճաշակած էր բանտի դառնությունները:
1919-ի սկիզբներուն, ան Եգիպտոսեն եկող Հայկական բարեգործական
ընդհանուր միությունի ներկայացուցիչներ Սեֆերյանի և Եփրեմյանի ստի-
պումներուն տեղի տալով, անոնց հետ միասին Հալեպ կերթա, ուր հայ-
րենակիցներ ու բարեկամներ իրմե իրենց կարոտը առնելու համար,
ժամանակ մը իրենց քովը կպահեն զայն: Ահա այդ շրջանին անգլիական
բանակը կորոշե Մարաշ մտնել: Բանակի հիշյալ հանձնառուները՝ Խըր-
լագյան և Գուլումճյան, կստիպեն Ռուբենը, որ իրենց հետ, առաջին
առթիվ, Մարաշ մտնե: Ռուբեն բարեկամներու առաջարկը սիրահոժար
կընդունի և անգլիական բանակին հետ մուտք կգործե Մարաշ: Տեղացի
թուրք երևելիները, եղերաբախտ հորս դահճապետները, կջանան նյու-
թական և բարոյական մեծամեծ նվերներով Ռուբենը սիրաշահիլ, բայց
ան կարհամարհե դանոնք:

Զեյթունի շրջակա թուրք երևելիները, ավազակապետ քերթմենցի
Գըվրագ Իպրահիմի առաջնորդությամբ, նվերներով Մարաշ կուգան և
պատրաստակամություն կհայտնեն իրենց կարելի ծառայությունը ընել
Ռուբենին: Նույնպես, Սինիմենլի քուրդ ցեղապետը թափո աղա, որ
Զեյթունի արևելքը էնկիզեք լեռը՝ Զեյթունեն 10 ժամ հեռու գտնվող
ամառանոցը կելլեր, Մարաշ այցելության կուգա, արաբական նժույգ
մը և թանկագին գորգեր նվեր բերելով:

Գափու-Չամ, Մարաշեն 4 ժամ հեռու, մայրիի ծառերուն տակ, ամ-
բողջ կարավանը խանդավառությամբ և հուռուներով կթնդար: Մոտ մեկ

ժամ տեկց ողջագուրումի արարողությունը, որմե հետո կարավանը
սկսավ հառաջանալ դեպի Մարաշ: Կեսօրե վերջ ժամը երկուքին կարա-
վանը կանգ առավ քաղաքին հարավակողմը՝ Շըխտըրըմ, ա՛յն պահակա-
նոցին առջև, ուր 1915-ին՝ զաղթականության նախօրյակին, Գարապին-
պաշը կոշվող թուրք զինվորականը ամբարտավանորեն ձիուն վրա նըս-
տած զեյթունցի 16 ընտանիքներ կհանձնեին հեծյալ զորքերու հրամա-
նատար հարյուրապետ Քյազըմին: Մեր կարավանը ի վերջո հասավ
Մարաշ:

Մարաշ կամ Գերմանիկ Ռուբինյան հարստության ծանոթ քաղաք-
ներեն է: Ախրրտաղի լանջին, քանի մը բլուրներու վրա կառուցված ան
աղյուսաշեն և փայտաշեն քաղաք մըն էր, մոտ հարյուր հիսուն հազար
բնակչությամբ, որուն մեկ երրորդը գրեթե հայ էր: Փողոցները նեղ և
անմաքուր էին ու շատ ելեէջներ ունեին. ամենաներկայանալի փողոցը
Պետսթենն էր՝ վրան տախտակե կամարներով ծածկված: Քաղաքին
մեջտեղեն կանցներ Գանլը Տերե կոշված գետակը, ուր պատերազմի
շրջանին շատ մը անմեղ զեյթունցիներու արյունը թափեցավ: Զրառատ
քաղաք էր: Իր առջև կբացվեր Պաղարճըզի ընդարձակ դաշտը: Ուներ
եկեղեցիներ, բարեսիրական հաստատություններ, հիվանդանոցներ և
այլն: Ամերիկացիք և գերմանացիք ունեին իրենց հիվանդանոցները,
դպրոցը և բարեգործական հաստատությունները: Մարաշի մեջ դավա-
նական վեճերը շատ լարված էին: Հայության երկու երրորդը լուսավոր-
չական էր, իսկ մնացյալը՝ կաթոլիկ և բողոքական: Կաթոլիկությունը
շատ զորացած էր շնորհիվ 1895-ի Զեյթունի պատերազմին, երբ կորոշվի
Մարաշի մեջ Ֆրանսական հյուպատոսարանի մը հաստատումը: Կաթո-
լիկացած էին, ի միջի այլոց, մեծահարուստ Խրլագյանները:

Մեզ ուղեկից մարաշցի ընտանիքները առաջնորդվեցան ուղղակի
իրենց կիսափուլ տները: Իսկ զեյթունցիք՝ ս. Քառասուն Մանկանց
եկեղեցին: Մեր ընտանիքը հյուրասիրվեցավ մեղ դիմավորող Կղեմես
Խրլագյանի բնակարանը՝ վուլումճազ թաղի մեջ: Այդտեղ, Մարաշի մեջ
գտանք վերապրող այլ հայրենակիցներ, մոտ 600 հոգի, որոնք ևս տե-
ղավորված էին ազգային հաստատություններու մեջ: Հոս էր Արամ Չո-
լագյանը՝ վարպետ Արթինի կրտսեր տղան, որ նախքան տեղահանու-
թյունը, իբրև զինվորական փախստական միացած էր 1915-ի հայ ապրս-
տամբներուն: Մարաշ կգտնվեր նաև Հովհաննես Սիմոնյանը:

Հաջորդ օրը առտուն կանուխ բախեցին մեր դուռը: Ի՛նչ անակըն-
կալ... հորեղբորորդիս՝ Խաչերն էր, Միքայելյան տունեն:

Դեռ մեր կարավանը Մարաշ չհասած հոն գտնվող մեր հայրենա-

կիցները ի մի գալով կորոշեն մարտական խումբ մը ղրկել Զեյթուն, հոն հաստատված Պոշնակ իսլամ գաղթականները դուրս հանելու նպատակով: Յոթը հոգիե բաղկացալ խումբ մը՝ Սեդրակ Զոլագյանի և Կարապետ Տեմիրճյանի խմբապետութեամբ կողղլի Զեյթուն: Խումբին մաս կկազմեն Մանուկ Գավագյան, Թորոս Մարկանյան, Գևորգ Սաթյան, մարաշցի Սաթճի Լեոնը և Բթի Հովհաննեսը: Խումբը գիշերանց Ճիհան գետեն կանցնի ու կհասնի Զեյթուն, ամեն կողմ լավապես ուսումնասիրելով: Զեյթունեն մեկ ժամ հեռու, հյուսիս-արևմուտքը, Օգգայսը կիրճին մեջ՝ էլպիսթանի ճամփուն վրա կհանդիպի երկու-երեք ոստիկաններու, որոնց կընկերանային թուրք ճամփորդներ: Անմիջապես շղթայի տակ կառնեն զանոնք և կարճ կոխվե մը հետո բոլորը կսպանեն: Ճամփորդներեն մեկը, վիրավորված, կհաջողի փախչիլ և շնչասպառ հասնիլ Զեյթուն: Ան սարսափահար կպոռա. «Աման, զեյթունցիները եկած են և բոլոր լեռները պաշարած...»:

Թուրք գաղթականությունը ահուդողի, խուճապի կմատնվի: Կառավարությունը անմիջապես կհրահանգե քերթմենցի ավազակապետ Գրվրազ Իպրահիմին, որ խումբ մը ոստիկան-զինվորներով հետապնդե զեյթունցիները: Գրվրազ ոստիկան-զորքով և թուրք ավազակներով կփութա ղեպքին վայրը, ուր բացի դիակներե ոչ ոք կգտնե: Զեյթունցիք շատոնց թանրրի մոտերը 3 ոստիկան և սպանելով վերադարձած էին Մարաշ: Սպանյալներուն թիվը բարձրացած էր 13-ի: Գրվրազ Իպրահիմ Մարաշ գալով կպեսակցի Զեյթունի ղեկավարներուն հետ և կխրնդրե անոնցմե, որ հանուն դրացնության, նման ղեպքեր չկրկնվին: Մարաշի մոլեռանդ թրքությունը, ամեն օր զեյթունցիներու ժամանումը տեսնելով, կափսոսար թե իր դիվային ծրագիրը՝ հայությունը բնաջնջելու, ճախողած էր:

Համբարձում Աթլարյան, Զեյթունի Ավագենց գյուղեն, լեգեոնական տարազով՝ գինքը Գանլը Տերե կառափնատ առաջնորդող Բեճեպ տասնապետին ներկայանալով, կհայտնե իր ինքնությունը: Համբարձում անվեհեր երիտասարդ մըն էր. ան կախաղանի օղակը կտրելով կրցած էր փախչիլ և ազատիլ: Նման զանազան առասպելներ, մանավանդ վերջին Օգգայսըրի միջադեպը, սարսափեցուցած էին թուրքերը: Թուրքների, Արամի և Հայ լեգեոնականներու գոյությունը մեծ ցավ էր անոնց համար: Ամեն միջադեպ կվերագրվեր զեյթունցիներուն:

Դեղազորժ Լուծֆի, հոգևարքի պահուն հայրս թունավորող իթֆի-հատական ճիվաղը, կրցած էր փախչիլ և էլպիսթան ապաստանիլ: Թրքությունը հոգևարքի հոնդյուններ կարձակեր: Ուլու-Ճամիի կրոնապետը՝

Տերենտելի Իպրահիմ, քրիստոնեությունը ընդունած, տունն ու տեղը, ընտանիքը ձգած, ապաստանած էր Պեյթ-Չալըմ գերմանական հաստատությունը: Ան, մեր հայրենակից Սեդրակ Մարկանյանի ամուսնության առիթով կփափաքի միանալ հարսնևորներու թափորին: Երբ կհասնի Քառասուն Մանկանց եկեղեցին, որը կգտնվեր Պեշերիթի շուկային կեդրոնը, ետ դառնալով հոն խոնված բազմությունը, կըսե. «Ո՛վ մուսուլման հայրենակիցներ, ձգեցե՛ք սա մեռած Մուհամմետը և կենդանի Քրիստոսին ետևեն գացեք»: Խրազյան Սեդրակ՝ հայ երեսփոխանին երկրորդ որդին, իթֆիհատի ազդեցիկ ղեկավարներեն Հասան Գատը զատե Հաճի էֆենդիեն 2 միլիոն օսմանյան հնչուն ոսկիի վնասուց հատուցում կպահանջեր: Նմանօրինակ ուրիշ երևույթներ և ղեպքեր մոլեռանդ թրքությունը իրապես կատղեցուցած էր: Թուրքերը կջանային իրենց համար ոչ բաղձալի այս կացութենեն ելք մը գտնելու: Մանավանդ զեյթունցիներու օրըստօրե ավելնալը և անոնց Մարաշի մեջ գոյությունը մեծ վտանգ մը կնկատեին: Զեյթունցի շատ մը երիտասարդներ, խումբ առ խումբ, այցելություն կուտային իրենց պաշտելի հայրենիքին, անոր ջուրին և օդին, քարին ու թուփին, մանավանդ իրենց սիրելիներու աճյուններուն: Զեյթուն հաստատված իսլամ պոշնաք գաղթականները սիրահոժար կվերադարձնեին իրենց ձեռքը գտնված կալվածները օրինական սեփականատերներուն: Որևէ ընդդիմություն տեղի ունեցած չէր, որով շատ մը ընտանիքներ, առանց անգլիական հրամանատարության գիտակցութեան իսկ, գացին և իրենց պապենական օջախին վրա բնակություն հաստատեցին:

Մեկ կողմե քաղաքական մութ և անորոշ անցուդարձերը, մյուս կողմե Մարաշի ազգային իշխանությանց կրկնակի ստիպումները՝ պարպելու համար ազգային հաստատությունները, պատճառ հանդիսացան, որ վերապրող զեյթունցի ղեկավարները ընդհանուր ժողովի մը հրավիրեին բոլոր հայրենակիցները՝ ս. Քառասուն Մանկանց եկեղեցիին մեջ՝ խորհրդակցության համար: Ընդհանուրի հավանությունը որոշվեցավ. ա) կարելի աշխատանք տանիլ հայրենիք վերադառնալու արտոնություն ստանալու համար, բ) ընտրել պատասխանատու մարմին մը՝ ազգային և քաղաքական գործերը վարելու համար:

Միաձայնությամբ ընտրվեցավ 11 հոգինոց ղեկավար մարմին մը, որ անմիջապես կազմեց իր դիվանը. Արամ Զոլագյան՝ ատենապետ, Հովհաննես Սիմոնյան՝ փոխ ատենապետ, Նազարեթ Զեյթունցյան՝ ատենադպիր, Վարդան Գասապյան՝ փոխ ատենադպիր, Ասատուր Կյուվանեսյան՝ գանձապահ, Լևոն Եղեկիելյան, Սեդրակ Մարկանյան, Վար-

դավառ Պալճյան, Պաղտասար Սալաթյան, Եգեկիել Պարութճյան և այս տողերը գրողը՝ խորհրդականներ: Բոլորս ալ անփորձ էինք ազգային գործերուն մեջ, բայց այդտեղ, ս. խորանին առջև, ուխտեցինք հայրենի օջախի վերաշինության և բարգավաճումին նվիրվիլ անշահախնդրորեն: Այդտեղ, նորընտիր Ազգային միությունը պաշտոն տվավ Արամ Չոլագյանին, Ռուբեն Նորաշխարհյանին և Վարդան Գասապյանին, որ արագացնեն ներգաղթի արտոնագրի հարցը: Իրապես, երկու օրվա մեջ անոնք հաջողեցան ձեռք բերել այդ արտոնագիրը: Անգլիական հրամանատարությունը հրահանգ տվավ տեղական թուրքական կառավարությանը, որ հարկ եղած ապահովության միջոցները առնե և փոխադրական ծախսերը հոգա:

Ամեն օր ներգաղթի կարավանները կմեկնեին դեպի հայրենիք: Հուլիսի 15-ին, Պելենի գյուղապետ Ահմետ աղան և փեսան՝ Պեքիրը, ութը ջորիով հասան Մարաշ, մեզ փոխադրելու համար: Թուրք աղաներ, որպեսզի հանգիստ ճամփորդենք, ամեն միջոց ձեռք առած էին: Ջորիներու թամբերուն վրա բուրդե բազմոցներ դրած էին, որպեսզի անհանգստություն չզգանք: Հաջորդ օրը, ամսուն 16-ին, մենք ևս հրաժեշտ տվինք Մարաշին, առանց կարենալու տարաբախտ հորս ու նաև Գանլը Տերեի նահատակներուն և Քիրեճ օջախի մեջ հրկիզվողներուն գերեզմանները այցելելու: Քաղաքական աննպաստ պայմանները արգելք հանդիսացած էին:

Իրիկնամուտին՝ ժամը 5-ին հասանք Յունկութ, Մարաշեն երկուբուկես ժամ հեռու թուրքաբնակ գյուղը, ուր կգտնվեր գերմանացի միսիոներ Սփինքերի ագարակը, այգիներով և պարտեզներով շրջապատված, իսկ վերը, բլուրին վրա, միսիոների երկհարկանի գեղակերտ տունն էր, որ կիշխեր ամբողջ Պազարճրզի և Քելիճի շրջաններուն վրա: Ան ուներ կենդանաբուժության դանազան բաժիններ: Այժմ Ագարակը սեփականությունը դարձած էր բնիկ եփեսոսցի Մարգար աղա Քեթենճյանի, որ բարի, հավատացյալ նահապետ մըն էր՝ իր զավակներով, հարսներով և թոռներով: Ան, Եղեռնի օրերին, այդ շրջանին մեջ մեծ ծառայություններ մատուցած էր իր ազգին՝ կրցած էր բավական թիվով որբեր և այրիներ հավաքել, խնամել, պահել մինչև զինադադար: Ան գերմանացի Սփինքերի միակ հավատարիմ մարդը եղած էր: Այդ գիշեր, իր ստիպումով իջևանեցանք իրենց մոտ: Իր հյուրասիրությունը կարելի չէ նկարագրել: Անտուն կանուխ, արշալույսին անցանք Վարդապետին կամուրջը՝ ձիհան գետի վրա, որուն արևելյան ափին բարձրացած էր թրքական պահա-

կանոցը: Կամուրջին տակեն օձապտույտ գալարումներով կհոսեր ձիհան գետը, Արեգինի ափերը քերելով:

Գետին արևմտյան ափը, Զեյթունի անմահական հողին վրա Արեգին գյուղաքաղաքն էր: Ոչ մեկ մարդկային հետք կար հոն: Ամեն կողմ ամայնություն, լուսթյուն կտիրեր: Ամբողջովին ավերակ ու քարուքանդ եղած էր քաղաքը: Ո՛ւր էր անոր քաջ երիտասարդությունը, որ տևաբար շրջանի թուրք իշխանություններուն սարսափ ազդած էր: Ո՛ւր են խաչեր և Կարապետ անվեհեր Քեհյանները: Ո՛ւր են, ո՛ւր մեր սրբավայրերը, մեր եկեղեցիները և անոնց կոշնակներու մեղամաղձոտ ղողանջը, որուն կարձագանքեին լեռներն ու ձորերը: ՅՁ գյուղ հաշվող Արեգինը այժմ ՅՁ ողջ մարդ անգամ չուներ. բոլորն ալ արյունոտը թուրքերուն վայրագ ախորժակին զոհ գացած էին:

Ականատես ըլլալի հոք այդ գագանային սպանդին և ավերին, լուռ ու մունջ հասանք Կյուրետինի բերդը, որ իր դիմացը գտնվող Ալա Գայասըի հետ մեզի կհիշեցնեին անցյալ փառքը հայության, որուն կենդանի վկան էր իրենց ընդերքեն հոսող Զեյթունի գետակը: Մեր ճամփուն երկայնքին գտնվող բոլոր հայկական գյուղերը ավերակ դարձած էին: Հասած էինք խախմա՝ Նոխուտյաններու այգիները, ուրկե կվազեր Զեյթունի գետակը, ուր իշխան Եղիա իր վերջին ճակատամարտը մղած և քաջաբար ինկած էր: Ջորիներեն վար իջնելով, քանի մը վայրկյան, ոտքի վրա մեր հարգանքի տուրքը տվինք անզուգական հերոսին:

Մեր դիմացը պարզվեցան աննվաճ լեռները Պերզնկայի, Սուլաք Տետեյի և Չրակի, որոնք ի տես հայ բազմաշարար բեկորներու վերադարձին, կարծես ժպիտը աչքերնուն, մեկդի շարտած էին իրենց շորս տարվա սուգի շղարշը:

Ամեն կողմ մոխրակույտ ու ավերակ էր սակայն: Լո՛ւ՛՛ էր այլևս սոխակներու դայլայլը, եկեղեցիներու կոշնակներուն ղողանջը, երիտասարդներու ղենքերուն շաշյունը, դեռատի դպրոցականներուն եռուզեռը, լո՛ւ՛՛՛ բովանդակ բնությունը: Կխոսեր միա՛յն անիծյալ բուն՝ իր վու՛-վու՛վն ու ագոավը՝ իր կոփնչներովը: Ամբողջ քաղաքեն, որպես բնակելի տուն, մնացած էին Նահատակ աղբյուրին կից Սուրենյան թաղեն 50—60 կիսախարխուլ տուներ, որոնք ծառայած էին պոշնակներուն իբրև ապաստանարան: Կանգուն կմնար նաև բողոքականներու որբանոցը, որ ծառայած էր իբրև կառավարական պալատ և հեռադատուն: Իշխանության գլխավոր ներկայացուցիչներն էին Զեյթունի մյուտյուրը՝ Ճեմիլ էֆենդին, որ Ֆոնուզի նախկին մյուտյուրն էր, ոստիկանապետ

Օսման Չավուշը՝ իր 20 ոստիկաններովը և հեռագրատան պաշտոնյա՝ էլպիսթանցի Ճեմիլ էֆենդին:

Վերապրող հայրենակիցներեն ոմանք սիրահոժար տեղավորվեցան Ջեյթունի խարխուլ տուներուն մեջ: Իսկ մնացյալները՝ վանքի առջևի Կարմատըրի պարտեզներուն մեջ հյուղակներ շինելով նստան: Գյուղացիք, ընտանյոք կամ առանձին, գացին իրենց գյուղերը հաստատվելու:

Ժողովուրդը տենդոտ շինարարության սկսած էր ամենուրեք: Ոգեվարություն մը, կենդանություն մը սկսած էր ծայր տալ: Քաղաքը ամբողջովին վերակենդանացած էր, ամեն անկյուն կլավեր հայ բարբառը: Եկեղեցվո զանգակը սկսած էր իր անուշ ղողանջը լսելի դարձնել շրջապատի հպարտ լեռներուն: Քահանաներու հսկա շքերթը չկար այլևս: Միայն Պալենց գյուղի քահանան՝ հայր Հովսեփ իտլմունյանը, բարի և անբասիր կղերականը ողջ մնացած էր, իսկ Ֆոնուզի շրջանեն՝ նշանավոր հայր Բարթողիմեոս Թագաճյանը: Անոնք, երկուքով, ժողովուրդին կրոնական կարիքները կգոհացնեին:

Ապրուստի միջոցները բավական ապահովված էին: Պոշնակ բնակչությունը աճապարանքով փախուստ տալով, իրենց ետին ձգած էին բավական ուտեստեղեն: Իսկ թուրք կառավարությունը եկեղեցվո մեջ ամբարված արմտիքը սկսավ բաշխել ժողովուրդին՝ անձ գլուխ 30 քիլոցորեն տալով: Բաշխումը այնքան անկանոն էր, որ շատ շատեր մեկի տեղ կրցան տասը առնել: Այդ տարի ավերակ-խուպան այգիներու բերքն ալ առատ էր, որմե կրցանք մեծապես օգտվիլ: Թրքական կառավարությունը խրտվիլակ իշխանություն մը դարձած էր: Ազգային միությունը կրցած էր իր անաշառ գործունեությամբ անխտիր բոլորին վստահությունը վայելել: Դրացի թուրք գյուղեր կփութային իրենց խնդրանքը ներկայացնել այդ Միության, նույնիսկ իրենց ներքին վեճերը կարգադրելու համար: Այսպես, ղեկավարություն և ժողովուրդ, ձեռք ձեռքի տված, սիրով և ուրախությամբ կտանեին հայրենիքի վերաշինության սուրբ գործը:

Այդ միջոցին՝ օգոստոս ամսուն, մեր մեջ ունեցանք Պոլսո Ազգային խնամատարության լիազոր ներկայացուցիչը՝ դոկտոր Քաջբերունին (Վարդան Թոփալյան բնիկ Կյուրինցի էր և նախքան պատերազմը էլպիսթանի բժիշկն էր: Ան հմուտ, փորձառու տիպար հայ մըն էր) և Հ. Բ. Ը. Միության ներկայացուցիչ տիար Ռուբեն էլագճյանը՝ խոհուն, դատող և տրամաբանող հայ մը: Այս երկու ներկայացուցիչները 500-ական օսմանյան ոսկի տրամադրելով միացյալ ֆոնդ մը կազմած էին Մարաշի մեջ, մասնակցությամբ Մերձավոր Արևելքի նպաստամատուցին, որը անգլիական կազմակերպություն մըն էր:

Վերոհիշյալ խառն մարմինն անձամբ ներկայացող յուրաքանչյուր քեյթունցիի 1,25 օսմանյան ոսկի վճարվեցավ, փոխան մուրհակի մը, որով գումարը ստացողը հանձնառու կըլլար կեսը տարիե մը և մնացյալը երկու տարիեն վճարելու: Վերադարձված գումարը պիտի գործածվեր ժողովուրդի ապրուստին և վերաշինության գործին:

Այդ միջոցին թրքական պարտյալ պետությունը երեսփոխանական ընտրություն ձեռնարկեց: Մինչև իսկ առաջարկվեցավ մեր մասնակցությունը բերելու, բայց Պոլսո պատրիարքարանը դոկտոր Քաջբերունիի ուղղած հեռագրով մը թեղադրեց, որ չգործակցինք: Այս հեռագիրը շատ վատ ազդեցություն ձգեց թե թուրք ժողովուրդին և թե պետական շրջանակներու վրա:

1919 օգոստոսի 14-ին Ազգային միությունը որոշեց, ըստ նախկին ավանդությանց, տոնել ս. Աստվածածնա տոնը, բայց այս անգամ ավերակներու վրա: Առ այդ, ան մասնավոր հրավիրագրով Ջեյթուն կանչեց Ֆոնուզի վանահայր Բարթողիմեոս վարդապետ Թագաճյանը:

Դոկտոր Քաջբերունի, մեր խնդրանքին տեղի տալով, խոստացած էր ուժ տալ ժողովուրդին սպառազինության, որովհետև մութ ձեռքեր կրկին սկսած էին խլրոխիլ, կացությունը սկսած էր հեղաշրջվիլ: Մուսթաֆա Քեմալ, որ նապուստի ճակատին վրա շարաշար պարտված էր, կրցած էր հասնիլ Սեբաստիա, ուր հաջողած էր կազմակերպել ազգային համագումար մը: Ան անմիջապես կենտրոնական կառավարությունն՝ Պոլսեն զատվելով անկախություն հռչակեց: Նապուստի բանակին փախըստական զորականը՝ Քեմալ սկսած էր վերակենդանանալ, ոգևորվիլ: Իր պրոպագանդիստները ամեն կողմ կվխտային և քարոզչություններ կընեին կյալուրներուն դեմ: Թուրք բնակչությունը ոտից ցզուխ զինված էր, որով մեր վերաշինական նվիրական ծրագիրը բոլորովին ջուրը ինկած, օղբ ցնդած էր: Պետք էր շատ զգուշություն, նուրբ քաղաքականություն, հնարամտություն, որպեսզի հուրեն ու սուրեն, թուրք յաթաղանեն մազապուրծ այս ափ մը ժողովուրդը անգամ մը ևս մոլեգնած կիրքերու խաղալիք չըլլար, արյան ճապաղիքներու մեջ չխեղդվեր: Անգլիացիներուն Մարաշեն քաշվիլը և անոնց տեղ ֆրանսացիներուն գալը շրջակա թուրքերը ավելի կատղած դրության մը մեջ դրավ:

Ամեն ոք կխորհեր միջոցներ ձեռք առնել մոտալուտ ձմեռը դիմագրավելու համար: Սուրենյան և Յաղուպյան թաղերու խարխուլ տուները վերանորոգված էին, մինչ նորաշխարհյան և Շորվօղլույան թաղեցիները ստիպվեցան մնալ թրքական զորանոցը: Հոկտեմբեր ամիսն էինք: Յուրտը սկսած էր մեզ խածնել: Պաղտասար Սալաթյան ընտա-

նիքով Մարաշ փոխադրված էր, իսկ Զեյթուն հասած էին Հարուսթյուն Գասապյան և Հարուսթյուն Յաղուպյանը: Ժողովը միաձայնութեամբ որոշեց Պ. Սալաթյանի տեղ իբրև ժողովական ընդունելի Հ. Յաղուպյանը, Հ. Գասապյանը և Սեղրակ Չոլապյանը:

Հոկտեմբերի վերջերը Զեյթուն հասած էր Ատանայի միջկուսակցական մարմնին կողմն դրված պատվիրակ մը՝ Պետրոս Ախիկյանը (վերակազմյալ հնչակյան կուսակցության անդամ), որուն ընկերակցած էր բնիկ զեյթունցի և հերոսապետ Անդրանիկի զինակիրներեն Հովնան Քերիկյանը, քառասունը անց պատկառելի անձ մը: Հովնան Քերիկյան կփորձե Զեյթունի մեջ կուսակցական մասնաճյուղ մը հիմնել, բայց Ազգային միությունը արգելք կհանդիսանա և կհանձնարարե իրեն, որ այդպիսի քայլ մը չառնե, ժողովուրդին մեջ գծտություն չցանկելու համար:

Ազգային միությունը հինգ հոգինոց միջկուսակցական հանձնախումբ մը կընտրե հետևյալ կազմով՝ Ռուբեն Նորաշխարհյան՝ ատենապետ, Արամ Չոլապյան՝ փոխ ատենապետ, Հարուսթյուն Յաղուպյան՝ ատենադպիր, Հարուսթյուն Գասապյան՝ փոխ ատենադպիր, Հովհաննես Սիմոնյան՝ խորհրդակալ: Պ. Ախիկյան սույն հանձնախումբին կհանձնե 300 օսմանյան հնչուն ոսկի, զենք գնելու համար: Հանձնախումբը անմիջապես, Ազգային միության հետ խորհրդակցաբար, հարմար կդատե Սիմոնյանը և Վարդան Գասապյանը Մարաշ դրկել, խորհրդակցելու համար Ազգային խնամատարութեան ներկայացուցիչ դոկտոր Քաջբերունիի հետ, որպեսզի թե՛ հիշյալ 300 օսմանյան ոսկին և թե՛ Պոլսո պատրիարքարանի Զեյթունի անվան պահ դրած գումարը տրամադրվին սպառազինության գործին: Գոկտորը խոստացած էր Հալեպ երթալ և իր կարելին ընել այդ կենսական գործը հաջողցնելու համար:

Այդ միջոցին Ֆրանսացիք Մարաշ մտած և այցելություն տված էին Զեյթուն: Կապիտան Ֆուրիեր և տեղակալ Մյուլթրիեր իրենց տասնյակ մը զինվորներով խանդավառ ընդունելութեան արժանացան: Անոնք խոստումներ շուսկեցին այս անբաղձալի կացութեան վերջ տալու համար:

Ֆոնուզ, Գոշոզ, Հին գեղ, Գարատութ, Վասապենց, Պուշուրենք, Թելեմելիք՝ մոտ 200 հոգի կային, որոնք ունեին իրենց Ազգային հատուկ մարմինը, Ֆոնուզի Ալաճաճյան և Մարգարյան ծանոթ ընտանիքներեն վերադարձած էին Մինասն ու Նդիան, որոնք իրենց խոհեմութեամբ կըրցան օգտվիլ շրջակա թուրք բնակչութենեն: Գոշոզ վերադարձած էին Գրիգոր Կարապետյանը և Մանուկ Օհանյանը, որ նախկին գյուղապետին անդրանիկ տղան էր: Զեյթունի դիմացը, մեկուկես ժամ հեռավորութեան վրա, Ավազ-Կալ գյուղեն միայն 25 ընտանիքի բեկորները վերադարձած էին: Տանուտեր Գրիգորի թոռը՝ Մարգիս, միշտ իր հեղ բնա-

վորութեամբ կըրցած էր սիրաշահիլ շրջակա թուրք բնակչությունը: Արեգինի վերապրող 15 ընտանիքներուն մեջ կային հաշեր Քեհայի տղան, բայց անոնց ամենագիտակիցը Մանուկ Հարուսթյունյանն էր (Գրիգոր), որ նույնպես խոհեմաբար վարվեցավ իր դրացիներուն հետ: Այսպիսով, ամեն գյուղ ուներ իր Ազգային մարմինը պատասխանատու՝ Զեյթունի կենտրոնին, որ միակ պատասխանատու մարմինն էր՝ ներքին և արտաքին բոլոր հարցերուն համար: Բայց, ինչպես հիշեցինք, ընդհանուր քաղաքական դրությունը ամեն ինչ հեղաշրջած, տակն ու վրա ըրած էր:

Ազգային խնամատարութեան ներկայացուցչությունը Զեյթունի մեջ բացած էր արհեստանոց մը՝ առանց Ազգային միութեան հավանութեան և առ այդ տրամադրած էր 1200 օսմանյան ոսկի: Սույն արարքը հետագային կարգ մը անհամաձայնություններու ծնունդ տվավ:

Քեմալական պրոպագանդը լայն ընդունելություն գտած էր թուրք բնակչության մոտ: Ապահովություն չկար. դրացի թուրքեր ամեն օր նոր լուրեր կհաղորդեին, զոր անմիջապես կփոխանցեինք Մարաշ՝ գրավման հրամանատարութեան: Նոյեմբերի սկիզբը զեյթունցի երկու նպարավաճառներ՝ Երեմիա Պերկերյան և Արթին Աչակյան, Գապագ Թեփեեն դառնալու ատեն Փամպաճըզ ըսված վայրը կսպանվին:

Ֆրանսացիներու մուտքով Մարաշի մեջ ևս քաղաքական կացությունը անորոշ կերպարանք առած էր: Անգլիացիք գծտութեան որոմ ցանկելե հոք մեկնեք էին: Անգլիական հրամանատարը ըսած էր թուրք երեվելիներուն. «Վառողի հոտը քիթիս պետք է հասնի»: Նոյեմբերի 6-ին, քաղաքիս մյուսյուրը՝ Խոլ ձեմիլ կհեռագրե միաժամանակ Սըվազ, Մարաշ և Չարտագ. «Մեր կյանքը վտանգի տակ է, օգնություն»: քսանապետ Օսմանը իր հետը 18 ոստիկան-զինվորները առած կմեկնի: Երբ իրմե կպահանջվի Երեմիայի և Արթինի ոճրագործները հետապնդել, «կերթամ» կըսե, սակայն չերթար: Ամսոյն 7-ին, Ազգային միությունը ժողով կգումարե օրվան հրատապ հարցերուն շուրջ խորհրդակցելու՝ ատենապետ Արամ Չոլապյանի բնակարանը:

Իրիկնամուտ էր, ժամը ճիշտ 5-ը և տակավին որոշումի մը չէինք կըրցած գալ, երբ դռնապանը՝ Հաճի Չոշոլույան ներս մտնելով հաղորդեց այս տողերը գրողին, որ Չարտագի գայմագամը՝ Խալիլ Շեհապ երկու ոստիկանի ընկերակցութեամբ ճամփան ինձի կըսպասե: Բոլորս անակնկալի եկած էինք: Արդյոք ի՞նչ նորութուն կար, որ գայմագամը այս խառնակ շրջանին մինչև հոս եկած էր: Գայմագամ Խալիլ Շեհապ բնիկ լիբանանցի, վաթսունը անց, փորձառու մարդ մըն էր: Ան Պոլիս հրատարակվող «էլ վաթան» արաբերեն թերթին խմբագրությունը վա-

րած էր և նախքան տեղահանութիւնը՝ երեսփոխանական ընտրութեան առիթով՝ Զեյթուն եկած և հորս քով 8—10 օր հյուրասիրված ծանոթ իթթիհատական մըն էր: Գայմագամը դեռ ձիուն վրա, քաղաքավարական ձևակերպութիւնները վերջփափաք հայտնեց, որ մեր տունը հյուրասիրվի: Անշուշտ առաջարկը սիրահոծար ընդունեցի: Ան քանի մը վայրկյան կառավարչատուն հանդիպիլ փափաքեցաւ: Ժողովը, ցրվեցաւ առանց որոշման մը գալու: Հարմար նկատված էր սպասել գայմագամին այցելութեան արդյունքին:

Ասատուր Կյուլվանեսյանի հետ կառավարչատուն գացինք, որ փոխադրված էր Տիրացույանենց տունը: Ոստիկանատունեն գայմագամը առնելով մեր տունը երթալու ատեն ավելի մեծ անակնկալի մը առջև գտնվեցանք: Մարաշեն Ահմետ Հիլմի անունով հարյուրապետ մը, 10 ոստիկան-զինվորներով հոն էր. ըստ իրեն, ան շրջանի այցելութեան և ոստիկանատուններու քննութեան ելած էր: Խալիլ Շեհապ, Ահմետ Հիլմի, Ասատուր Կյուլվանեսյան և ես, ձիերու վրա նստած բարձրացանք դեպի զորանոց:

Զորանոցի արևելյան մեծ դռան երկու կողմը, զին ի ձեռին, լեզենական տարազով երկու երիտասարդներ, Խալիլ Շեհապի մուտքին զինվորական բարևի կեցան. հրապարակին վրա ևս, հոս ու հոն, միևնույն տարազով զինված երիտասարդներ կերևային: Զորանոցին մեջտեղը, ավազանին քովը սև լաթով մը ծածկված զանգված մը կար, որ թընդանոթի տպավորութիւն կ'էր: Մեծ դռան վրա շինված էր զորանոցի հրամանատարին հատուկ հսկա հարկաբաժինը, ուր առաջնորդվեցան մեր հյուրերը: Մտանք դահլիճ, ուր պատերեն կախված էին զենքեր՝ առատ փամփուշտներով: Եղբայրս Ռուբեն, որնէ այցելուի վրա խոր ազդեցութիւն կ'էր: Նվագ, կերուխում ամեն ինչ առատ էր: Կաշխատեինք այն այցելութեան պատճառը, ինչպես նաև ներկա քաղաքական անցուդարձներն բան մը հասկնալ, բայց շատ վերապահ, զգուշ վերաբերմունք մը ցույց կուտային անոնք, մինչև որ օդիներու և զինիներու շուրջ վատնումը ակամա հարկադրեց զիրենք գաղտնիքը հայտնելու: Մյուստուր ձեմիլի հեռագիրը գայմագամին քովն էր ու նաև Սեբաստիային՝ Մուսթաֆա Քեմալեն եկած խիստ հրահանգը, որ կըսեր. «Հարկ եղած ուժերով գործողութեան սկսեցեք»:

Գայմագամ Խալիլ, որ 150 ոստիկան-զինվորով եկած էր Ալաշայիր, հրահանգած էր ամբողջ շրջանին, որ ընկերանան իրեն: Ահմետ Հիլմի ևս 150 հեծյալներով Մարաշեն ելած էր և Բերթիզ գալով բոլոր թուրք գյուղերը այցելած էր, որպեսզի թուրք բնակչութիւնը հրահանգին հա-

մաձայն կազմ ու պատրաստ ըլլա Զեյթունի վրա հարձակելու համար: Առտու կանուխ, գայմագամը և հարյուրապետը Զեյթուն՝ կառավարչատուն իջնելով քննութեան սկսան, և երբ անոնք համոզվեցան, թե շինծու, հերյուրածո է վերոհիշյալ հեռագիրը, քանի Զեյթուն խաղաղ էր և ամեն ոք իր գործերով զբաղած, անմիջապես մյուստուր ձեմիլը և հեռագրի պաշտոնյա ձեմիլը պաշտոնանկ ըրին, իսկ Օսման Չավուշը ձերբակալելու համար խստիվ հրահանգ տրվեցաւ: Ըստ մյուստուրին և հեռագրատան պաշտոնյային՝ Արամ և Զեյթունցյան պատասխանատու նկատվեցան և հարցաքննութեան կանչվեցան, բայց Ազգային միութիւնը բացարձակ զրպարտութիւն որակեց և պատասխանեց, թե անձնական գործի բերումով Մարաշ մեկնած էին անոնք: Հաջորդ իրիկնամուտին՝ Չարտագի ընդհանուր ոստիկանապետ Օսման Ազմին 10 հեծյալ ոստիկանով Զեյթուն հասաւ: Ան 1914-ին հայրս ձերբակալողը եղած էր. ինքն էր նաև այն բարբարոս գազաններն մեկը, որ հորս գանակոծման ժամանակ բերնին բարձ մը դրած, վրան նստած էր: Ան քանդած էր բազմաթիւ զեյթունցի հայերու օջախը: Որսը, ահա, իր ձեռքով ինկած էր մեր ձեռքը, պետք էր անոր արժանի պատիժը տրվեր: Երիտասարդութիւնը Ազմիի գալը լսելով խանդավառութեան մեջ էր և կպատրաստվեր պատժելու զայն: Բայց Ազգային միութիւնը երբեք իր պաղարշունութիւնը չկորսնցուց. ան, ընդհանուրին շահը ամեն բանն վեր դասելով, նկատեց թե նման անխոհեմ քայլ մը շատ մը անմեղներու կործանման պատճառ կրնար դառնալ: Ուստի մեկ կողմն երիտասարդութիւնը զգաստութեան հրավիրվեցաւ, մյուս կողմն երկու հոգի բաղկացալ պատվիրակութիւն մը (Ասատուր Կյուլվանեսյանը և այս տողերը գրողը) ուղարկվեց գայմագամին քով, որպեսզի Ազմին հեռացվի Զեյթունի սահմաններն: Գայմագամին զայն միայն զիշեր մը իբրև հյուր պահելու առաջարկը անընդունելի էր մեզ համար, որովհետև երիտասարդութեան կիրքերը բորբոքած էին, այլ կերպ մեղմացնել անհնար էր, որով, ի վերջո Ազմին ստիպվեցաւ շուտով դուրս ելլել քաղաքէն:

Գայմագամ Խալիլ մյուստուրը, հեռագրատան պաշտոնյա Ահմետ Հիլմին և Օսման Ազմին բոլորը միասին ձամփու դրավ: Ինք սակայն քանի մը օր ևս մնաց Զեյթուն, ուր աշխատեցաւ մթնոլորտը խաղաղեցնել, կիրքերը մեղմացնել. հետո ան խոստացաւ ամեն գնով ձերբակալել Արթինի և Երեմիայի ոճրագործները:

Կառավարիչ ձեմիլին փոխարինեց Մարաշի Պայազիտ գյուղէն Յահյա էֆենդին, քառասունը անց, երկայնահասակ, միջակ կարողութեան տեր, սակայն փորձառու և պերճախոս մարդ մը: Ան բոլոր զեյթունցի-

ներուն ծանոթ էր, որոնցմե լավ ընդունելութուն գտավ: Ան դատապարտեց նախկին կառավարական կազմը, Իթթիհատի թափթփուքները, որ երկիրը դեպի կորուստ առաջնորդած էին: Հետո, քանի մը օր վերջ, Երեմիայի և Արթինի ոճրագործներուն հետապնդումին համար ան գնաց շրջակա գյուղերը: Չորս օր հետո, Չարտագեն վերադարձին իրեն ընկերակցող զապթիյեն՝ էրիճեքցի Ալին կմերժե Զեյթուն երթալ և նույնիսկ կսպանա մյուստուրին՝ «կյավուրներուն քով պիտի չերթաս» ըսելով: Մյուստուր Յահյա, Պելեն գտնվող զեյթունցիներուն հետ Քենի-Յափան, Զերմուկի դաշտին վրա, Զեյթունեն մեկ ժամ հետո գտնվող հայաբնակ գյուղը կհասնի, անկե ալ զորանոց, ուր կպատմե եղելութունը:

Ազգային միությունը նման շատ մը տեղեկութուններ քաղելով ընդարձակ տեղեկագիր մը կպատրաստե և պատվիրակության մը միջոցով (Վարդան և Սարգիս Սանկիկյան) կղրկե Մարաշ՝ ֆրանսական հրամանատարության պետ Փաթրե Մանթերնոյին: Ազգային միությունը, իր տեղեկագիրներով և նամակներով կխնդրե տիրող անորոշ կացության դարման մը գտնել: Մարաշի ֆրանսական հրամանատարությունն ու Ազգային միությունը կապահովցնեն մեր պատվիրակները, որ քանի ֆրանսական բանակը հոս է, ոչ մեկ միջադեպ կրնա տեղի ունենալ: Այնուհանդերձ, կհրահանգվի ֆրանսացի սերժանտի մը՝ ընկերանալու իրենց և երթալու Զեյթուն, տեղվույն վրա ուսումնասիրելու համար հարցը: Նույն գիշերը, Զեյթունի հյուսիս-արևելքը, երկու ժամ հետո գտնվող գյուղին պետը՝ Ապու Օղլու Օմարը զորանոց կհասնի և կպատմե. «էլպիսթանի ոստիկանապետ Մխիթարը, բանտին դռները բանալով բոլոր ոճրագործները ազատ կձգե և կզինե և կհայտարարե իրենց, թե, ո՛ր որ կյավուր գտնեն, չխնայեն: Բոլոր շրջաններու թուրք գյուղապետները էլպիսթանեն, Մարաշեն զենք առնելով ժողովուրդին կբաժնեն: Օսման Չավուշ, կառավարության հրահանգով և խումբ մը ավազակներով Զեյթունի շրջականերեն չի հեռանար առիթեն օգտվելու համար: Քեմալական զինվորականներ ամեն կողմ կվխտան, կբարոզեն, կկազմակերպեն և կզինեն: Նույնիսկ այդ իրիկուն անոնք իր տան վրա հարձակեր են իբր կասկածելի տարր, և ինք հաջողեր է տան բուխերիկեն ելելով հասնիլ Զեյթուն»: Գիշերանց, զորանոցին մեջ պառկած ֆրանսացի սերժանտը արթնցնելով Օմարը քովը տարինք: Ան նույնությամբ պատմեց և Ն. Յաղուպյանն ալ թարգմանեց: Սերժանտը պատասխանեց. «Տեղական հարց է, Չարտագ գնա, գայմագամին»: Հաջորդ առտու, գայմագամ իսախլ լսելով ֆրանսացիին ժամանումը, փութացած էր Զեյթուն: Ան ամեն ինչ ուրացավ. «Զրպարտություն, բացարձակ զրպարտու-

թյուն է» գռչելով: Նույնիսկ ան ջերմուկցի քանի մը թուրք ընտանիքի փախուստը առանց որևէ պատճառի՝ հերքեց, որով ստիպվեցանք ֆրանսացիին և գայմագամին ընդերանալու համար Ազգային միութենեն երեք հոգի զրկել, տեղվույն վրա իրողությունը երևան բերելու համար: Արամ, Ռուբեն և Ն. Յաղուպյանը միասին գացին: Փաստվեցավ թե՛ խնդրո առարկա գյուղին մեջ 80 տարեկան ծերունիներ միայն մնացած էին: Գյուղը բոլորովին ամայացած էր:

Գայմագամ իսախլ, բացահայտ իրողության առջև նեղսրտած՝ դիտողություններ կրնե, իսկ սերժանտը, այդ շփացած ֆրանսացին, մերիններուն դառնալով կըսե. «Դուք մուկը ուղտ ընող, ամբաստանող, զրպարտող ազգ մըն եք արդեն»: Օմարը՝ Մարաշի ֆրանսական հրամանատարության և Ազգային միության ուղղալ խնդրագիրներով Մարաշ զրկեցինք, որտեղի ֆրանսացի հրամանատարը ևս խուսափողական պատասխան տված էր՝ խնդրագիրը պատռելով. «Գնա՛ կառավարիլն, մենք չենք խառնվիր»,— ըսելով: Խեղճ Օմարը ձեռնունայն կվերադառնա, բայց տուն չհասած, Պելենի մոտ կգնդակահարվի իր ազգակիցներուն կողմե:

Քեմալական զործակալները ամեն կողմ ցրված ժողովուրդը կկազմակերպեին: Երթեկը դադրած էր: Կառավարիչ Յահյա միշտ բարյացակամ վերաբերմունք ցույց կուտար և կաշխատեր ի նպաստ մեզի արտահայտվիլ: Մեր առջև միայն Մարաշի ճամփան՝ Վարդապետի կամուրջը բաց էր, որովհետև Մարաշեն մինչև կամուրջ ֆրանսական հեղինակությունը ի զորու էր, իսկ կամուրջեն ասդին՝ մեր հետախույզ խումբերը միշտ անպակաս էին:

Դեկտեմբերի 1-ին, ջորեպան Փարթոս Պուտագյանը, Մարաշ գրտնըված միջոցին Չարտագաբնակ Ութա-Գարայան եղբայրներու ստիպումով հանձն կառնե անոնց ապրանքը փոխադրել: Փարթոս, ըստ սովորության, կփորձե ինկիլթի կամուրջով գալ, բայց չերեզնեը Ախըրտաղի ճամփան ավելի մոտ է ըսելով, ամեն պատասխանատվություն իրենք ստանձնելով ճամփա կելին: Հազիվ Մասխրթենց խան Ճիհանի եղբրքը հասած, Զեյթունեն վեց ժամ հետո, բերդիզցի չեթեներու կողմե կպաշարվին, որոնք բոլոր բեռները վար կթափեն և կսկսին խուզարկության: Բացի մաս մը փամփուշտե անոնք ուրիշ զենք չեն կրնար գտնել. կուզեն բոլորը գրավել՝ վերեն տրված հրահանգին համաձայն, բայց չերեզնեներու ազդու միջամտությամբ կաղատին:

Հայ և թուրք գյուղերեն հասած խոովիլ լուրերը և Մարաշեն դուկտոր Քաջբերունիին ստացված նամակները ստիպեցին Ազգային միությունը,

որ պատվիրակություն մը ևս ուղարկե Մարաշ, արտաքին անցուղար-
ձերուն տեղակ ըլլալու համար: Հովհաննէս Միմոնյան և Վարդան Գա-
սապյան դեկտեմբերի 16-ին Մարաշ գացին և 19-ին վերադարձան: Իրենց
ընկերակցած էր դոկտոր Էլմաճյանը, իբրև բժիշկը Զեյթունի և շրջակա-
յից, Ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատուցցին և Հ. Բ. Ը.
Միութեան կողմէ կարգված: Գծաբխտաբար անկէ ետք շիրքանք ալևս
մեր կանոնավոր հարաբերութիւնները շարունակել արտաքին աշխար-
հին հետ:

Գոկտոր Էլմաճյան նույն գիշերը ժողովի կհրավիրվի Ազգային միու-
թեան կողմէ: Ան ժողովականներուն կհանձնէ Քաջբերունիի նամակը՝
ներկակալ քանի մը ստացագիրներով, որոնք ստորագրվելով օր առաջ
Մարաշ պիտի վերադարձվին, որպէսզի 1800 օսմանյան ոսկին որոշ-
ված սպառազինման նպատակին հատկացվեր:

Էլմաճյան որբեայրիներուն տալու համար Արևելյան նպաստամա-
տուցցեն բերած էր 150 օսմանյան ոսկի: Միմոնյան և Գասապյան Մա-
րաշի ֆրանսական հրամանատարութեան միջոցով հեռագրով կխոսակ-
ցին Ատանայի ընդհանուր ֆրանսական ներկայացուցիչ գորավար Պրի-
մոյի հետ, որուն պատասխանը կըլլա. «Ֆրանսական բանակը մարտին
իր դրոշը պիտի պարզե Տավրոսի բարձունքներուն վրա»: Փուշ խոսք,
որուն նպատակն էր անկասկած զսպել զԶեյթունցիներու խռովքը: Ազգա-
յին միութեանը մտահոգիչ կացութեան առջև կգտնվեր, որովհետև Մա-
րաշի թուրք երևելիներուն և քեմալական խմբակի գործոն ղեկավարնե-
րեն Հասան Գատը զատե Հաճին, երեսփոխան Ճին Գատիր և դոկտոր
Մուսթաֆա Մարաշեն փախուստ տալով Ալպիսթան հաստատվեր էին
և կաղմակերպչական գործով կզբաղէին, իրենց բոլոր հարստութեանը
սույն նպատակին ծառայեցնելով:

Գեկտեմբերի 22-ին, Ալպիսթանեն վերոհիշյալ անձնավորութիւն-
ները նամակ մը կհղեն Ասատուր Կյուլվանեսյանին և զայն Ալպիսթան
կհրավիրեն: Ազգային միութեան որոշումով Կյուլվանեսյան Ալպիսթան
մեկնեցավ, ուր Հաճի էֆենդիի նախագահութեամբ քեմալական կարգ մը
ղեկավար զինվորականներ կհայտարարեն. «Մենք որոշած ենք մեր ար-
ջան գնով ֆրանսացիները ոչ միայն մեր շրջաններեն, այլ նույնիսկ
Կիլիկիայեն դուրս վռնտել: Մեր առաջարկը ձեզի հետևյալն է. Պետք է
բացարձակ շեղքութիւն պահեք. ոչ մեզի ոչ ալ անոնց հետ: Կխոստա-
նանք ամեն դյուրութիւն և աջակցութիւն շինայել ձեզի»: Անոնք
կխնդրեն Կյուլվանեսյանեն նաև, որ հանուն դրացիութեան և հնամենի
բարեկամութեան երթա Մարաշ և Ազգային միութեան հայտնե իրենց

որոշումը: Կյուլվանեսյան երբ դիտողութիւններ կկատարե սպանու-
թեանց և կողոպուտներու մասին, քեմալական ներկայացուցիչները կպա-
տասխանեն. «Հեղափոխութեան շրջանին չորս ու թացը անկարելի է զա-
նազանել»:

Ուտելիքի և հազնելիքի պետքը շունեիք, միայն զինամթերքի և
աղի պակասը զգալի էր: Առ այդ, մեր շորեպանները շաբաթը մեկ եր-
կու անգամ Յունկյուլթի վրայով Մարաշ կերթային, ուրկէ իրենց հետ
քիչ շատ փամփուշտ կհաջողէին բերել: Միմոնյանի պատվիրակութեանը
թեպետ հաջողած էր 8 զենք ապահովել, բայց միայն 1500 փամփուշտ
կրցած էր ձեռք անցնել:

Գեկտեմբերի 26-ին մեր շորեպանները Մարաշ մեկնեցան կենսա-
կան պիտուլքներ բերելու համար: 29-ին՝ վերադարձին, անոնցմէ վեց
երիտասարդներ (Միսակ Փարթամյան, Միսակ Մումճօղլույան, Վարդա-
վառ Մուճուգյան, Փանոս Պատոյան, Ավետիս Քեթիլյան և Միհրան
Ապաշյան) իրենց կենդանիներով կանհետանան: Ոչ Զեյթունեն գացող-
ներ և ոչ ալ Մարաշեն եկողներ ճամփան չեն հանդիպիր այդ երիտա-
սարդներուն: Փարթոս Պուտագյան, և իրեն ընկերացող ու Պաղտատեն
եկող հայրենակիցները միասին կգիշերեն Կյուրեստիի քարայրը, ուր
իջևանած էին նաև Զեյթունեն եկող Փարթոս Մուկոփյանն ու ընկերները:
Անկանկալի կուգան անոնք, երբ իրենցմէ առաջ ճամփա ելած շորե-
պանները հոն չեն գտներ: Անմիջապէս իրենցմէ երկու հոգի Արեգինի
Զեկենլեր գյուղը կերթան: Երբ հոն ևս չեն գտներ, լրջորեն կկասկածին
տղոց կենդանութեան վրա, բայց դարձյալ իրենց ճամփան կշարունակեն
դեպի Զեյթուն:

Պուտագյան եղելութիւնը իմացուց Ազգային միութեան, որ անմի-
ջապէս Հ. Յաղուպյանի բնակարանը դռնփակ ժողով մը գումարեց:
Որոշվեցավ խումբ մը մինչև Արեգին ղրկել, թե կորսված վեց երիտա-
սարդներուն հետք գտնելու, և թե այնտեղի ժողովուրդը, ընդամենը 29
հոգի, Զեյթուն փոխադրելու համար: Երկրորդ խումբ մըն ալ ղրկվեցավ
Ֆոնուզ՝ նույն հրահանգով: Որոշվեցավ նաև, կառավարական պաշ-
տոնեութիւնը և իբր հյուր Զեյթուն գտնվող թուրքերը վար դնել՝ ցնոր
տնօրինութիւն:

Գեկտեմբերի 30-ին, առտուն կանուխ, երիտասարդութեանը կազմ ու
պատրաստ ոտքի էր: Եզեկիլի Պարութեան իր 15 ընկերներով մեկնե-
ցավ Ֆոնուզ, այդ շրջանի ժողովուրդը փոխադրելու համար Զեյթուն և
Սու Չաթը իջնելով ճամփորդներեն կարևոր տեղեկութիւններ ստանալու
նպատակով: Խաշեր Նորաշխարհյան և Սեղրակ Չուլագյան նույնպէս 15

ընկերներով մեկնեցան անհետացողներուն հետքը գտնելու և ժողովուրդը փոխադրելու համար:

Տեղական կառավարչատան պաշտոնյաները տրված որոշումներեն բոլորովին անգիտակ, առտուն արևածագին ճամփա կելլեն Չարտագ մեկնելու՝ Զերմուկի ճամփով, որովհետև Չավտարի ճամփան գոցված էր: Զորանոցի ժողովականները, ի տես անոնց մեկնումին, անմիջապես ի մի գալով հանձնարարեցին Հովհաննես Սիմոնյանին, որ երթա Տերին Տերե (խորունկ ձոր), Զեյթունեն մեկուկես ժամ հեռու՝ Պելեն թըրքաբնակ գյուղին սահմանը և անոնց հետքերը անհետացնե: Բայց ան, փոխանակ որոշված վայրը՝ Տերին Տերե երթալով իրեն հանձնված գործը կատարելու, հավարի կուտա՝ ամբողջ Զերմուկի դաշտին վրա գրտնըվող ժողովուրդը իրարանցումի մատնելով: Ասատուր Կյուլվանեսյան, իր պաշտպանության տակ առած Զեյթուն կեբեբ հարկահավաք Ահմետը, հեռագրատան նոր պաշտոնյա Իհսանը և երկու կյուլվանիցի շերքեզ: Բոլորը զինաթափ, գույքերը զրավված, անոնք ուղղակի կառավարչատուն առաջնորդվեցան և հսկողության տակ առնվեցան: Չերքեզները ապահով կերպով սահմանը անցած էին, բայց խնդիրը տարբեր գույն առավ: Զերմուկի դաշտը աշխատող թուրքերը իրենց լծկանները և գութանները ձգելով փախեր էին, իսկ այդ կողմի հայ բնակչությունը խուճապահար լեցվեցավ զորանոցը:

Իրիկնամուտին, մյուստյուր Յահյա, խնդրույն լրջութունը կուհեղով, զեյթունաբնակ ժողովականներուն կղիմե, որ թույլ տան իրեն երթա թըրքական գյուղերը, ալեկոծյալ մտքերը հանդարտեցնելու և նաև տեղեկանալու համար անհետացող վեց երիտասարդներու մասին: Անշուշտ բոլոր ժողովականներուն հավանությունը պետք էր ատոր համար:

Իրիկվան ժամը 9-ին մյուստյուրը զորանոց եկավ: Ան պարզեց իր առաջարկը, բայց ժողովականները թաքուն նպատակ մը կուհեղով, մերժեցին: Առտու կանուխ լուր եկավ զորանոցեն, թե՛ պաշտոնեություն և ոստիկանություն, բոլորը փախեր, գացեր են, իհարկե մեր պահակներուն անհոգության պատճառով: Յահյան արդեն կարգադրած ըլլալու էր, որով Զեյթուն մնացին միայն մյուստյուր Յահյան և Հաճի Իպրահիմի ընտանիքեն Հաճին և կինը:

Նրորող օրը երկու խումբեր վերադարձած էին առանց որևէ միջադեպի: Ֆոնուզ մերժած էր Զեյթուն տեղափոխվելու առաջարկը, իսկ Արեգին գացողները մինչև կամուրջ հասեր էին, ուր Միսակ Փարթամյանի արեխներեն մեկը գտեր և արյան հետքեր տեսեր էին: Հետագային, թուրք գյուղացիներեն առնված ստույգ տեղեկություններու համաձայն,

ջորեպան Փարթոսի կամուրջ հասած ժամանակ մեր վեց զեյթունցիները Օսման Չավուշի կողմե ձերբակալված, պահականոց տարված ու խոշտանգված են: Միայն Միսակ Փարթամյանը կրցեր էր դահիճներու ձեռքեն պրծիլ, և կես ժամ անդին տեղ մը հասնիլ, ուր գտնված էր տրեխը, բայց ան դժբախտաբար կրկին ոճրագործներուն կողմե բռնված և ճիհան գետը նետված էր: Արեգինեն 29 հոգի Զեյթուն տեղափոխվեցան:

Մարաշի հետ մեր հարաբերությունները բոլորովին խզված էին: Մեր ապրանքները հասած չէին, որով խորհեցանք Սանկիկյաններու քով աշխատող տաս-տասներկու տարեկան թուրք կովարածը Մարաշ զրկել, տեղեկություն մը առնելու նպատակով: Նամակներ պատրաստվեցան, որոնք տղեկին տրեխին մեջ տեղավորելով զրկվեցան: Բայց, դժբախտաբար, տղեկը կձերբակալվի և նամակները կզրավվին:

Մարաշի կացութունը խառնակ էր: Քաղաքը գոց էր: Ժողովուրդը անակնկալի առջև կգտնվեր՝ ահուղողով լեցված:

1920 հունվարի 10-ին, Պելենի գյուղապետ Ահմետ աղա և քերթմենցի երեկիններ՝ Գըվրագ Իպրահիմ Սըրբեմ Տուրտու և Սուլթան Ալի մասնավոր թղթատարով մը Զերմուկ կհրավիրեն կարևոր խորհրդակցության մը համար՝ Ասատուր Կյուլվանեսյանն ու այս տողերը գրողը: Ասատուր Կյուլվանեսյան ժողովին գիտակցութեամբ կընդունի հրավիրագիրը և Զերմուկի առջև, աղբյուրին քովի մարմանդին վրա կհանդիպի սույն երեկիններուն հետ: Անոնք կըսեն. «Ֆրանսական բանակը ամբողջ Մարաշին տեր դարձած է, օրըստորե հավելում կունենա. եկեղեցի, դպրոց, մզկիթ՝ ֆրանսական զինվորներով լեցված է: Քեմալական կառավարությունը թեև տենդոտ գործունեություն մեջ է ու կկազմակերպե, կզինե ժողովուրդը և կպատրաստվի Մարաշի վրա հարձակելու, բայց անօգուտ է, ժողովուրդը հուսահատ է և ընկճված: Օսմանիյեյի ոստիկանապետ Հրանտ Մալոյանը այս օրերս Սարըլար թուրք գյուղը եկած է ու բոլոր այն կողմի երեկինները շղթայակապ տարած է: Համառ զրույց կըրջի, թե մոտ օրեն այս կողմերը պիտի գրավվին, որով եկած ենք խնդրելու ձեզմե, որ մեր վաղեմի բարի դրացիությունը շարունակվի և թույլ չտաք, որ օտարներու ոտնաձգության ենթարկվինք. փոխադրաբար մենք պատրաստ ենք ձեզի հարկ եղածին պես ծառայելու»: Միրալի բաժանումով մը խոսակցությունը վերջ կգտնե:

Կառավարությունը իրեն կենտրոն ընտրած էր Գըլավուքը՝ Զեյթունեն երկու ժամ հեռու՝ դեպի արևելք, Տոն լեռան ստորոտը, Զերմուկի դաշտը: Մյուստյուրին քով տեղավորված էին 1500 թուրք չեթեներ՝ շըրքակա թուրք գյուղերեն համախմբված, որով մենք ևս ստիպված էինք

արթուն մնալ: Արևելյան կողմը բնակող հայերը եկած էին Ձեյթունի զորանոցը: Ավագկալցիք և ֆոնուզցիք իրենց տեղերը կմնային: Կոկիսոնի Տեյիրմեն Տերե, Թաշուլուզ, Քիրեճ-Կապան, Պունտուզ և մնացած գյուղերու վերապրող հայ բնակչությունը, բոլորը, Կոկիսոնի հսկողության տակ առնված էին. անոնց մեկ մասը արդեն խոշտանգված էին, իսկ քիչ թվով փախստականները ապաստանած էին Ֆոնուզ:

Ազգային միությունը 15—70 տարիքը ունեցող բոլոր հայրենակիցները զինվորագրվելու հրավիրեց: Ան նշանակեց խմբապետներ և անոնց օգնականները: Յուրաքանչյուր խմբապետ ամբողջ 24 ժամ պատասխանատու էր ներքին և արտաքին բոլոր անցուղարձներուն և պարտավոր էր տեղեկագիր մը ներկայացնել վերին մարմնին՝ Ազգային միության: Արևելյան ճակատը՝ Սյումպուլ Գայա և մինչև Շեմպեք մեր շրջուն խումբի արթուն հսկողության տակ էր, որևէ արտաքին ոտնձգություն արգելելու պատրաստ: Ամբողջ բնակչությունը 6 խումբի բաժնված էր, իսկ 15-են վար դեռատի տղաք և 70-են վեր ծերեր կհսկեին ներքին կարգապահություն: Խմբապետներն էին՝ Հովհաննես Սիմոնյանը, Սեդրակ Մարկանյանը, Սեդրակ Չուրազյանը, Ռուբեն Նորաշխարհյանը, Եզեկիել Պարութճյանը և Վարդավառ Պալճյանը: Օգնականները՝ Խաչեր Միքայելի Նորաշխարհյանը, Նազարեթ Պոյամյանը, Կարապետ Տեմիրճյանը, Հակոբ Եզեկիելյանը, Հովսեփ Ֆապրիզաճյանը և Փարթոս Մուճուզյանը: Որևէ դասալիք 48 ժամ կբանտարկվեր. զինվորը որևէ առարկության պարագային պարտավոր էր տեղեկացնել իր վերադասին, այն ալ իր կարգին՝ խմբապետին, իսկ խմբապետը վերին իշխանության՝ Ազգային միության, որ եթե պետքը տեսներ ընդհանուր ժողով կգումարեր: Որով, Ազգային միությունը արթուն պահապան էր. գիշեր-ցերեկ, զեն ի ձեռին, կհսկեին հրամանատար թե զինվոր հավասարապես:

Ազգային միությունը իր 16-րդ նիստին որոշեց վերապրող հայրենակիցները ի մի հավաքել, նույնիսկ քաղաքը բնակողները զորանոց տեղափոխել: Առ այդ, ան հարմար նկատեց անգամ մը ևս ֆոնուզցիներուն ազդարարել, որ անպայման Ձեյթուն տեղափոխվին: Ազգային միության անդամներ՝ Եզեկիել Պարութճյան և Սեդրակ Մարկանյան Ֆոնուզ ուղարկվեցան, թե ֆոնուզցիներուն հաղորդելու համար Միության որոշումը և թե Սու Չաթը իջնելով արտաքին աշխարհեն լուր մը առնելու ակնկալությամբ: Ֆոնուզցիք դարձյալ համառած էին:

1920 հունվարի 26-ին, Անվանակոչության նախօրյակին, հարավային սահմանապահ տղաները լուր բերին, թե Ֆոնուզի կողմեն կրակոցի ձայներ կլսվին: Չյունը կտեղար, իսկ բուքն ու մրրիկը կատղած,

մոլեգնած՝ կսպառնային բոլոր կենդանի էակները ոչնչացնել: Չորանոցի դուռը մորթված կենդանին նույնիսկ սառած էր և անկարելի կըլլար կրակի օգնության միսը կտրել: Ճնճուկներ, կաքավներ ճարահատ՝ ձյունեն ու բուքեն, սառնամանիքեն հալածված, թևաթափ կուզային մեզ մոտ կիյնային: Ժողովը ի լուր Ֆոնուզի վիճակին, անմիջապես որոշեց օգնություն հասցնել անոր, զայն հավանական վտանգե մը ազատելու համար: Խաչեր, Միքայել Նորաշխարհյան և Եզեկիել Պարության 15 զինակիրներով իրիկնամուտին ճամփա կելլեն Ֆոնուզ երթալու համար, որովհետև շատ հավանական էր, որ ճամբաները շեթեներու կողմե բռնված ըլլային:

Խումբը ճամփա ելալ ձյունին բուքին: Անոնք մինչև արշալույս հազիվ կրցած էին վեց ժամվա ճամփան կտրել և հասնիլ Ֆոնուզ, ուր իջևանած են տանուտեր Մինաս Մանրաբայանի տունը: Ֆոնուզեն՝ Ալաճաճյան Եղիա և Գոշողեն՝ Գրիգոր Գարակյոզյան և Մանուկ Օհանյան դեկտեմբերի 30-ին Մարաշ գացեր էին և չէին կրցեր վերադառնալ: Խումբի մարդկանց տրեխները սառած էին, բեղերու թելերեն սառցի կտորներ կախված, անճանաչելի վիճակ մը ստացած էին: Մինաս աղան անմիջապես վառարանը կվառե, տաք բան մը պատրաստել կուտա, որպեսզի հյուրեր կարենան մի քիչ կազդուրվիլ: Այդ պահուն Պետոն՝ 18 տարեկան պատանի մը, նվաղած ներս կիյնա, «աման ջարդեցին, աման ջարդեցին թուրքերը» գոչելով: Խմբապետներ Խաչեր և Եզեկիել անմիջապես դեպի Գոշող մեկնելու հրահանգ կուտան: Խումբը կսկսի սուրալ դեպի Գոշող ու կկտրե մեկուկես ժամ տևողությամբ զառիվեր մը: Չյունին բուքին երթը այնքան դժվար էր, որ հազիվ Յ ժամեն կըրցած էին հասնիլ եղենավայրը՝ Գոշող, որ Դրախտոկ լեռան կողին էր, ս. Կարապետ վանքեն ոչ այնքան հեռու: Չյունի ծվեններ՝ փաթիլներով ու մրրկախառն կիջնեին, երբ կհասնին գյուղին հյուսիսը՝ Թնրպի մշտագալար անտառը, ուր իրենց առջև կպարզվեր գյուղը: Այդտեղ, թուրք արյունոտ շտաբով ամբողջ շրջակայքի Թանըր, Տյոնկել, Չուգուր-Հիսարի հայ բնակիչները պաշարած, բոլորը սուրե անցուցած էին և սկսած գյուղին ավարը բաժնել: Անոնք քաջ գիտեին, որ Մանուկ և Գրիգոր Գարակյոզյանը քանի մը երիտասարդներով Մարաշ գացած էին և չէին կրցած վերադառնալ, իսկ ժողովուրդը քանի մը շագմազի հրացան միայն ուներ իր քովը: Խումբեն ընդամենը 14 հոգի (Հակոբ Եզեկիելյան Ֆրոնուզ մնացած էր) գրոհ տալով, միաբերան կգոչեն. «Սկողները զեյթունցիներ են, մի՛ փախչիք»:

Հայերու հրացանները կսկսին խոսիլ, գետին տապալելով շատ մը

ոճրագործներ, որոնք թաքստոց կփնտրեն զէթունցիներու գնդակներեն ազատելու համար: Մինչ այդ, միայն զենքի մը ձայնն էր, որ կլավեր այդ խառնիճաղանճին մեջեն: Միքայել Սեյրեքյան, առտուն կանուխ, երբ պաշարված կտեսնե գյուղը, առանց տուն երթալու և տեղյակ պահելու քունի մեջ մրափող անզեն ժողովուրդը, հուսահատ, ինքզինքը կնետն գյուղի աղբյուրին ետևի խոռոչը և կսկսի կովիլ:

Վայրկյանները ճակատագրական էին. փամփուշտը լմննալու վրա էր, երբ կհասնի զէթունցիներու խումբը: Խմբապետներու քաջալերանքը մարտիկներուն խանդավառությունը իր զենիթին հասած էր: Անոնք երբ կտեսնեն գյուղին առջևը ձյունին վրա արյան ճապաղիքներու մեջ ինկած 53 անմեղ դիակները, գյուղին հրդեհումը և ավարի բաշխումը, կդառնան անզսպելի, մոլեգին և անխնա:

Հարձակումը սոսկալի էր. հայ քաջերու գնդակները աչ ու ձախ ավերներ կգործեին, գյուղը ամայացած էր, ամբոխը փախուստ տված էր և դիմացի բլուրին վրա ինքնապաշտպանության անցած: Մոտակա գյուղերեն օգնություն փութացված էր: Խմբապետ Խաչեր, որ խումբին առաջնորդն էր, զիստեն վիրավորվեցավ թշնամիին գնդակին: Ան նույնիսկ իրեն քով կողք-կողքի կովող Ասատուր Չաքրյանին շէր զգացուցած իր վիրավորված ըլլալը, վախնալով որ գուցե անփորձ երիտասարդը իր հետսապահ ընկերներուն հայտնե և խումբին մեջ բարոյալքում առաջանա: Բայց այդ ահուկի ցուրտին ան սոսկալի արյունահոսում ունեցած էր, շէր կրցած որևէ ձևով կասեցնել արյունը, ոտքերը ընդարմացած էին, ջիղերը պրկված: Ան շէր կրցած տեղեն շարժիլ: Թուրք ամբոխը իրիկնամուտին նահանջի սկսավ: Մեր կովողները երբ կտեսնեն Խաչերի անշարժ վիճակը, առանց հուսահատելու, անձնը վիրաբար կորոշեն ազատել իրենց խմբապետը: Ձայն շալակնին առած, այդ սառնամանիքին, անոնք մեկ կողմե թշնամիին, մյուս կողմե բնության դեմ մաքառելով, մթնշաղին կհասնին Հին գեղ՝ Վանքին գյուղը, ուր քանի մը ընտանիքներ առանց օրվա դեպքերուն տեղյակ ըլլալու, կմրափեին տաքուկ օջախներուն քովը:

Գյուղին բնակչությունը՝ Սարգիս Գըլլըյան, Մանուկ Գափշույան, Մանվել Տատուրյան հանկարծակիի եկած, իրենց կարելին կտրամադրեն խումբին, և գյուղը պարպելով բոլորը միասին կիջնեն Ֆոնուզ, ուր երիտասարդությունը, տանուտեր Մինաս Մարգարյանի տան մեջ կազմ ու պատրաստ, անհամբեր կսպասեր:

Գոշող գյուղեն միայն 13 հոգի կրցած էին ազատիլ. 53 մանուկ, ծեր, կին, երիտասարդ՝ գյուղին առջևը անգթորեն խողխողված էին: Մի-

քայել Սեյրեքյան, որ օրն ի բուն քաջաբար կոված էր արյունկղակ ամբոխին դեմ, եկած միացած էր հաղթական խումբին: Երեք դեռատի կիներ և մեկ տղա մանուկ, շորս օր լեռները ձյունին բուքին մեջ թաքնվելի ետք եկած հասած էին Զէթուն, ոտքերնուն բոլոր մատները սառած, ընդարմացած վիճակով: Տանուտեր Մինաս և Զէթունի կովողները կորոշեն հանձն առնել ամեն զոհողություն՝ ազատելու համար իրենց արկածահար և դժբախտ արենակիցները:

Չորանոցին մեջ խումբապ մը, հուսահատություն մը ծայր տված էր: Ավագ-Կալեն եկած լուրերն ալ անորոշ էին: Անոնք ևս կհաստատեին Ֆոնուզեն եկած հրացանի ձայները: Ազգային միությունը խոր մտահոգության մեջ էր. անպայման պետք էր լուր մը առնել: Գիշերվան ժամը 8-ին, Ավագ-Կալեն Արթին Հարամանյանը մեր քով գալով Գոշողի ջարդի գոյժը բերավ: Անմիջապես խումբ մը զրկվեցավ խմբապետ Հովհաննես Միմոնյանի ղեկավարությամբ՝ որպես օգնություն: Բայց տակավին խումբը չմեկնած երկրորդ սուրհանդակ մը եկավ, հայտնելու համար, թե Ֆոնուզի ժողովուրդը ապահով կերպով Սու Չաթըլի կամուրջը անցնելով կհառաջանա դեպի Զէթուն: Տանուտեր Մինաս, որ քանի մը օր առաջ Մարկանյան-Պարութճյան պատվիրակներուն շանսալով կնախընտրեր մահը քան Զէթուն տեղափոխությունը, այժմ ամեն ինչ երեսի վրա ձգած, տան դռները բաց, վառարանը վառած վիճակի մեջ, միայն իր կնոջ և զավակներուն ձեռքեն բռնած, ժողովուրդին հետ դուրս կելլեր գյուղեն:

Երբ լուրը Զէթուն հասավ, ամեն ոք անխտիր դիմավորեց զիրենք: Ի՞նչ դաժան տեսարան... Ամեն կողմ ձյուն, բուք, սառնամանիք... Կատողած բնությունը մահ կսպառնար կարծես... Գիշերվան ձյունին փայլը խավարին մեջ կառաջնորդեր գաղթականները: Ֆոնուզի երիտասարդները ձյունածածկ ճամփան կմաքրեին, իսկ զինյալ խումբեն առջևեն և ետևեն գալով, անակնկալ հարձակումներ կպաշտպանեին կարավանը: Նորածին մանուկներ սառած՝ աղիողորմ ճիշեր կարձակեին, հարսներ և աղջիկներ օրվան խոնջներին տակ կքած նույնիսկ մահ կտենչային. անոնցմե շատերը անկարող էին հառաջանալու. «Ձգեցեք հոս մեռնինք» — կճչային խեղճերը շարունակ:

Գիշերանց, Զէթունի գրեթե ամբողջ ժողովուրդը, իրենց գրաստներուն վրա ուտելիք և խմելիք բեռցուցած, մեկ ժամ հեռու՝ դեպի հարավ, գետեզերքի ծառերուն տակ դիմավորեց իր տարաբախտ հայրենակիցները: Երբ Ֆոնուզիք Զէթուն հասան, զէթունցի տիկիները ինչ որ ունեին, առանց որևէ բան խնայելու տրամադրեցին մերկերուն, բո-

պիկներուն, անոթիներուն: Թշվառացած այդ ժողովուրդին մեջ, շորիկ մը վրան նստած էր խաչեր Նորաշխարհյանը՝ վերմակներով փաթթված: Ողջագործուններով դիմավորեցինք զինքը: Ան, իբրև միակ պատասխան, ժպիտով մը ըսավ «Բան մը չունիմ, թուրքին զնդակը չի կրնար անցնիլ ինձի... Խնչ լուր Մարաշեն...»:

Վերապրող բոլոր հայրենակիցները՝ ընդամենը 1059 հոգի— այր, կին, մանչ, աղջիկ— բոլորը հավաքված էին Զեյթունի զորանոցը և ամեն ժամ կսպասին անակնկալներու:

Օրվան քմահաճ տերերն էին՝ սահմակեցուցիչ քամին և սպիտակամորուք ձյունը: Ոչ ոք կարող էր դուրս ելլել:

Պահակներ, որոնք Մարաշի ճամփուն վրա դեպի հյուսիս-արևելք գտնվող Սյունայուլ Գայա կողմած վայրը հսկողութուն կկատարեին, օրական չորս անգամ կփոխվեին, քանի որ երկու երեք ժամեն ավելի ցուրտին դիմանալ կարելի չէր: Մարաշի կողմեն թնդանոթի ձայները հետզհետե ավելի արձագանք կուտային: Պելենի ճամփան ևս զոցված էր, ոչ ոք կրնար սահմանը անցնիլ: Արտաքին աշխարհեն տեղեկութուն մը ստանալու պետքը կզգար ժողովուրդը: Բայց ո՞վ կրնար ժողովուրդին այդ պահանջքին զոհացում տալ: Արդո՞ք Թոփալ Կարապետի և Աթաշ Արթինի նման անձնավերներ չկային...

Ազգային միությունը 1920 փետրվարի 1-ի իր նիստին որոշեց խումբ մը ղրկել Մարաշ, օրվա անցուդարձերու մասին լուր մը բերելու համար: Քանի մը անձնագոհ երիտասարդներ ճամփու դրվեցան զեպի Մարաշ:

Մեր սուրհանդակները հաջողած էին այնտեղի հայ կամավորներուն ինքզինքնին ծանոթացնել: Սերժանտ Գևորգ զիրենք կառաջնորդե ընդհանուր հրամանատարություն, ուր կհանձնվի Ազգային միության նամակը: Նմանօրինակ նամակներ կհանձնվին նաև Հիսուսյան միաբանության պետին, Մարաշի Ազգային միության, Առաջնորդարանին և նպաստամատուցի ներկայացուցիչ մըստըր կայմընին: Զորավար Քըրեթ, զինվորական ընդհանուր հրամանատարը, շատ սիրալիք ընդունելություն մը ցույց կուտա և կառաջարկե իրենց, որ Այնթապ երթան, Մարաշի կացությունը ֆրանսացիներուն տեղեկացնելու համար, որովհետև երկու քաղաքներուն միջև կապը խզված էր:

Նմբապետ Միքայել կմերժե, առարկելով, թե ամբողջ ժողովուրդը Նոյան աղավնիին պես իրենց կսպասե անհամբեր և կավելցնե. «Մենք առանց մեր Ազգային միության հրամանին չենք կրնար շարժիլ, եթե ան հոժարի սիրով կվերադառնանք ձեր հրամանը կատարելու»:

Զեյթունցի երիտասարդները երեք օր կհանգստանան այգտեղ, մինչև որ նամակներուն պատասխանները պատրաստվին: Տեղացի հայերու խնդրանքին տեղի տալով, Պեյթ Զալմի կից, անոնք թրքական առաջին դիրքին վրա կհարձակին և տունը կրակի տալով կհեռանան: Սարգիս Տեյիրմենճյան անունով երիտասարդը այտեն կվիրավորվի և անմիջապես հիվանդանոց կփոխադրվի: Փետրվարի 12-ի երեկոյան, զոհավար Քըրեթ կհանձնե մերիներուն չորս ծածկագիր նամակներ՝ դրված չորս պահարանի մեջ և ներփակ քարտեզը՝ Հաճընի գիծով ֆրանսական կայան հասցնելու համար:

Սակայն երբ զեյթունցիք ֆրանսիական զորավարներեն զենք և փամփուշտ կպահանջեն, կմերժվին: Մշեցի սերժանտ Գևորգը և մեր հայրենակիցներեն՝ Հարություն Տեմիրճյանն (Ափախ) և Հովհաննես Ավանյանը, այնուամենայնիվ, կհաջողին միասնաբար ձեռք գցել 10 հատ անգործածելի թրքական մավզեր, 9 հատ ումբ, 9 հազար փամփուշտ և քանի մը սվին: Մարաշի Ազգային միության ատենապետը՝ Արամ Պաղտիկյան կգրեր. «Վտանգի տակ ենք, Մարաշ արյան մեջ կլողա, մինչև այսօր 11 հազար կորուստ ունինք, թշվառությունը ծայր սված է, օգնության հասեր»: Պատվելի Վ. Սուլաքյանը Հաճըն գտնվող իր տիկնոջ շատ հուսահատական և սրտաղեք նամակ մը գրած էր, իսկ մեզմե կթախանձեր օգնություն և նամակ մը ղրկել Հաճըն: Ամերիկյան միսիոնարությունը ևս Հաճնո քույր միսիոնարության գրած էր նամակ մը, որուն մեջ ներփակված էր 20 ոսկիանոց չեք մը՝ բերողին վճարելի:

Վերադարձող խումբեն կպակսեր վիրավոր Սարգիս Տեյիրմենճյանը և հիվանդ Մանուկ Հարությունյանը, իսկ փոխարենը իրենց ընկերացած էին մարաշցի իրազյանն ու Դանիել Դանիելյանը: Բոլորն ալ Մարաշի կացության մասին սրտաճմլիկ դրվազներ կպատմեին, որոնք լսել և չհուզվիլ անկարելի էր:

Ս. Աստվածածին եկեղեցին, որ կգտնվեր Մարաշի արևմտյան կողմը, բարձունքին վրա և որ ֆրանսիական զինվորական ամենագորավոր դիրքն էր, թուրքերու կողմե գրավված էր և մեջը ապաստանող 800 հոգին՝ ձեր, պառավ, մանուկ ողջ ողջ այրված էին: Ֆրանսիական բանակը ոչ միայն չէր փութացած օգնելու անպաշտպան հայերը, այլ նաև չէր ձգած, որ Քառասուն Մանուկ եկեղեցվո մեջ գտնված հայերը երթան և ազատեն իրենց արենակիցները: Եվ, այդպես, բոլորը օր ցերեկով ֆրանսիական բանակին քիթին տակ ողջակիզված էին: Մարաշի երեք շորթորդ մասը կրակի բոցերուն կու գացած, հայ կիներ և կույսեր բռնաբարված, անմեղ երեխաներ խոշտանգված էին:

Ազգային միութիւնը որևէ հավանականութիւն չի մագրարվելու համար, հրահանգեց ժողովուրդին՝ զորանոցը հավաքվիլ և խումբերը խտացնել: Ամեն խումբ 48 ռազմիկներէ կբաղկանար, որոնց 16-ը արփիական զենք, 20-ը շագմազը տեղական հրացան ունեին, իսկ 12 հոգի ալ պահեստի ուժ պիտի ըլլային ու պիտի ծառայէին պատենշ շինելու, իրեր փոխադրելու և այլ ստիպողական աշխատանքներ կատարելու, ինչպես, օրինակ՝ զորանոցին շուրջ խրամատներ շինել, գլխավոր շորս դռները ամրացնել, միակ ջրհորը մաքրել և մեջը ջուր լեցնել և այլն: Ազգային միութիւնը սեփականութեան իրավունքը ջնջեց և ամեն ինչ համայնացուց: Որոշվեցավ նաև Մարաշ ուղղված նամակները անհասարակ դրկել իրենց հասցեներուն:

1920 փետրվարի 7-ին, Ասատուր Զագրյան կոչված երիտասարդին ղեկավարութեամբ հինգ հոգիէ բաղկացյալ խումբ մը, ձյունին բուքիս դեմ պաշտպանվելու ամեն նախապատրաստութեամբ, ճամփու դրվեցավ ղեպի Հաճըն, որ մեզմէ 24 ժամ հեռավորութեան վրա կգտնվէր: Ամեն մեկը իր հետը ուներ սահնակ մը՝ ձյունակուտերուն վրայէն կարենալ քայլելու համար: Բայց, դժբախտաբար, անոնք առանց Հաճըն հասնելու երեք օրեն վերադարձան, որովհետև մի քանիներու մատները սառած ըլլալով երկու օրվան մեջ հաղիվ 6 ժամ կրցած էին հառաջանալ: Զյունակուտերը լեռ, ձոր, ամեն տեղ հավասարեցուցած էին իրարու:

Ազգային միութիւնը վերջապես կրցավ Կոկիսոնի Քերթը գյուղէն երկու երիտասարդներ ճամփու դնել ղեպի Հաճըն: Անոնց տրվեցավ 12 օսմանյան ոսկի, որպես ճանապարհածախս: Սույն երիտասարդները հետո զոհվեցան Հաճընի մեջ: Ազգային միութիւնը իր կարելին չէր խնայեր ժողովուրդի բարօրութեան համար: Շրջուն խումբ մը միշտ կհսկէր Զեյթունի սահմաններուն շրջակայքը: Զորանոցեն դուրս ամենեն կարևոր դիրքը կես ժամ հեռու գտնվող Սյումայու-Գայայի դիրքն էր, Գրլավուզի բանակատեղիին ճիշտ դիմացը, որտեղէն որևէ պզտիկ շարժում մը կրնար նշմարվիլ:

1920 փետրվարի 10-ին Թնդանոթի որոտը ավելի սաստկացած էր: Սյումայու-Գայայի պահակախումբը կենտրոն տեղեկացուց, թէ Գրլավուզի մեջ թուրք շեթեական խումբը արտակարգ խանդավառութեան, խրախճանքի մեջ է և թէ դժուր զուռնան, հրացանաձգութիւնները անպակաս էին: Ազգային միութիւնը անմիջապէս հրահանգեց խմբապետներուն, որ իրենց դիրքերը ամրացնեն: Խառն ժողով մը զումարվեցավ, ուր ներկա էին բացի Ազգային միութեան անդամներէն, այլ գիտակից ու փորձառու անձնավորութիւններ:

Ժողովէն հետո, Թորոս Մարկանյանի ղեկավարութեամբ 18 հոգիներ խումբ մը ճամփա ելավ, մեկ մասը անդէն, այն հուլիսով թէ վերադարձին ձևով մը յուրաքանչյուրը զենք մը ապահոված կըլլա: Բայց անոնք դժբախտաբար ամբողջ ճամփու ընթացքին հանդիպած չէին ոչ շեթեյի և ոչ ալ վրանի: Առտուն կանուխ Մարաշ հասնելով, անոնք հիասթափութեամբ և զարմանքով տեսած են ֆրանսական բանակատեղիին վրա թրքական դրոշին ծածանումը: Վայրկենապէս հրահանգ կտրվի Արամ Արախճանյանին, որպէսզի երթա քաղաքի հյուսիսակողմը և Պեյթ Զալմի ամերիկյան հաստատութենէն տեղեկութիւններ բերէ: Սույն պահուն, Գևորգ Սեթյան, ցուրտեն պաշտպանվելու համար օդի խմած ըլլալով, շվարած՝ ընկերները կկորսնցնէ և ուղղակի քաղաքին հյուսիսը թրքական պահականոցին առջև կհասնի: Այնտեղ թուրք պահակին «կեցիր» հրահանգը անսաստելով կհաջողի կանխել և զայն տեղն ու տեղը սպանել: Սույն արարքէն ետք, երբ գինովութենէն մասամբ կսթափի, ան կհաջողի փախուստ տալ և քաղաքին մեջ բաց դուռնէ մը ներս մտնել, որ մեզի ծանոթ ամերիկյան միսիոնար Լայմընի ձիու ախոռն էր:

Արամ Արախճյան անգէն կհասնի Պեյթ Զալմ: Երբ ժողովուրդը կտեսնէ ղեյթունցի մը, հանկարծակիի կուգա և սարսափած կթեւազրէ Արամին, որ անմիջապէս հեռանա: Մարդոց աչքը վախցած է, ֆրանսական բանակը երկու օր առաջ փախած է և քրիստոնեութիւնը անխնայարողված: Արամ հեիհե կվազէ և խումբին նշան կընէ, որ չսպասեն իրեն և վերադառնան: Հոգնած և սրտաբեկ խումբը կսկսի Ախրը Տաղի վերելքը: Մարաշէն թուրք ոստիկաններ կհետապնդեն զանոնք մինչև Ախրը Տաղի փեշերը, բայց հայ խումբը շատոնց Մուսուզ հասնելով դիրք կըռնէ:

1920 փետրվարի 13-ի պայծառ օրը, երբ խմբապետները զորանոցին մարզարանը ղինական փորձեր կկատարեին, Ազգային միութեան անդամ Հարութիւն Յաղուպյան, ոգևորված երիտասարդներու հաջող փորձերէն, բեմ բարձրացավ և սկսավ պատմութիւնը ընել սպարտացիներուն: Ան բացատրեց, թէ Լևոնիդան իր սակավաթիվ բանակով ինչպէ՛ս հաղթեց ահեղ բանակներուն: Ապա բեմ հրավիրվեցավ Հարութիւն Դասապյանը: Ան հակիրճ պատմութիւնը ըրավ հայ դուրացաներգութեան, հիշեց բարբարոս ազգերու կողմէ կատարված հայկական կոտորածները, մանավանդ մեր ժամանակներու հայկական մեծ, աննախընթաց սպանող Դեր-Զորի մեջ և ձաղկեց արևմուտքի նենգ քաղաքականութիւնը:

Վերջին խոսքը կիյնար հայր Բաթողիմեոսին, որ վեղարը մեկդի նետած ծունկի եկավ և իր օրհնությունը տվավ: Խմբապետները երկսայրի դաշույնները մերկացուցած հրահանգեցին իրենց մարտիկներուն, որ Զեյթունի քայլերգով ներս անցնին: Հանկարծ, Խախմաչի կողմեն քանի մը հրացանի խուլ ձայներ լսվեցան: Վտանգի ահազանգ մըն էր: Մարաշի մեր խումբին վերադարձը հավանական չէր. խումբերը շարժման մեջ մտան և բավական հառաջացան դեպի հարավ, երբ հանկարծ նշմարվեցան մեր հերոսները, որոնք վշտաբեկ և թևաթափ կղթկամակեին հառաջանալ: Անոնք հավաստեցին թե ֆրանսացիք երկու օր առաջ Մարաշեն փախած են, քրիստոնեությունը հոգևարքի նոպաներ կանցընեն, թրքական մահիկը դարձյալ կծածանի պաշտոնական հաստատություններու վրա և քաղաքը գրեթե մոխրակույտ մը դարձած է: Գևորգ Սեթյան կբացակայեր: Անոնք պահեստատան առջև տեսած էին Գևորգը և լսած հրացանի մը ձայնը. այդ էր միայն իրենց տեղեկությունը անոր մասին, իսկ իրենք բախում ունեցած էին թուրք չեթեական խումբի մը հետ:

Ամեն ոք կսգար Գևորգը: Ժողովուրդին հույսերը բոլորովին ի դերև ելած էին: Ազգային միությունը խառն ժողովի հրավիրեց ժողովուրդը օրվա կացության շուրջ խորհրդակցելու: Օրակարգի վրա էին երեք կարելություններ.

- ա) Մնալ զորանոց և օգտագործել մինչև վերջին փամփուշտը:
- բ) Կյուրեախի բերդը տեղափոխվիլ, ուր ավելի հարմարություններ կային. ան կտրատված էր ամեն կողմ և միայն մեկ անցք ուներ, որով հեշտ կդառնար պաշտպանությունը: Այնտեղ երիտասարդությունը կրնար հարկ եղած միջոցները հայթայթել՝ ժողովուրդը ապրեցնելու համար. ջուրը, փայտը և այլն առատ էր:
- գ) Գրոհել՝ դեռ թուրքը ինքզինքը չվերադարձ և հասնիլ ազատ գոտի՝ Ատանա:

Որոշում չկրցանք տալ, որովհետև թշնամին ոչ միայն թուրքն էր, այլ գուցե նույնքան դաժան՝ բնությունը: Տակավին թարմ էր Ֆոնուզի տեղափոխությունը, որը միայն 6 ժամ հեռու էր: Ինչպե՞ս կարելի էր ամբողջ բնակչությունը՝ 1058 հոգի, 3—4 օրվա ճամփա տեղափոխել: Երբ խառն ժողովը խորհրդակցության մեջ էր և չէր կրնար որևէ եզրակացության գալ, դուրսը իրարանցում մը, խուճապ մը լսվեցավ.— Դեպի՞ պատենշ, դեպի՞ պատենշ,— կլսվեր խմբապետներուն ձայնը: Պահակներ, լուսնի ցոլքին տակ, դիմացի բլուրին վրա մարդկային ստվեր մը նշմարած էին: Ժողովը կիսատ ձգած էր նիստը: Ամեն մարդ, գեն ի

ձեռին, իր դիրքին վրա՝ խմբապետներուն հրամանին կսպասեր, երբ հառաջապահ խումբը ավետեց Գևորգ Սեթյանին գալը: Բլուրին վրա նշմարված ստվերը Գևորգն էր: Իսկապես, ան ընկերները կորսնցնելեն ետք, ինքզինքը գտած էր պահեստատան առջևը. կանխելով թուրք պահակը ան հաջողած էր գայն զգեստնել և ապաստանիլ ախոռին մեջ, ուր ձի մը կար: Քիչ վերջ մեկը ախոռ կմտնե և ձիուն կեր կբերե: Երբ այս վերջինը կտեսնե, թե ոտից ցզուլս զինված մեկը կա այնտեղ, լեղապատառ կփորձե փախուստ տալ: Գևորգ սակայն ակնթարթի մը մեջ կհաջողի բռնել մարդուն օձիքեն և կսպառնա, որ եթե շարժի կամ ձայն հանե, իսկույն զինքը կսպանե տեղն ու տեղը: Բայց ի՞նչ բախտ... այդ մարդը ձիապանն էր ամերիկյան միսիոնարությունների կայացուցիչ մատրը Լայմբերին: Մանրթանալե վերջ՝ մարդը կսկսի Մարաշի անցուդարձերուն մասին տալ հետևյալ մանրամասն տեղեկությունները.

Հակոբ աղա Խրլագյանը կսպանեն և գլուխը ցիցի մը վրա անցուցած քաղաքին մեջ կպտտցնեն: Ֆրանսական բանակը, առանց ժողովուրդին լուր տալու, կբաշվի: Քեմալական պետ՝ բժիշկ Մուսթաֆան, ժողովուրդին կողմն պատրաստված հանրագրությունը ձեռքին, կներկայանա ֆրանսական հրամանատարության և անձնատվություն կպահանջե: Հրամանատարին պատասխանը կըլլա. «Գնա՛, ըսե ժողովուրդին, վաղը մենք՝ ֆրանսացիներս, պիտի պարպենք Մարաշը»: Դոկտոր Մուսթաֆա և ընկերները, երբ ուրախ գվարթ կվերադառնան՝ ժողովուրդին հաղորդելու ֆրանսական հրամանատարին խոստումը, վաղը՝ այս վերջինին զեյթունցի պահակները՝ Լուտեր Սալթյանը, Մինաս Տեր Մկրտիչյանն ու Սարգիս Մելիտոսյանը կհաջողին տեղն ու տեղը Մուսթաֆան գնդակահարել: Մարաշի մեջ թրքավայել խժժությունները՝ սպանություն, բռնաբարում, առևանգում, խռշտանգումներ՝ անպակաս էին: Հայության գրեթե երկու երրորդը ոչնչացված և քաղաքը մոխրակույտի վերածված էր, իսկ մնացյալ բեկորները մասնավոր հաստատություններու մեջ հսկողության տակ առնված էին: Ի՞նչ ողբերգություն, ի՞նչ ահռելի ճակատագիր: Մարդկային ուղեղը սահմուկած՝ ի զորու չէր մտածելու և որևէ ելքի հանգելու...

Երեկվան զինաթափ, հոգեվարքի հանդուներ արձակող թուրքը, այսօր, XX դարու քաղաքակիրթ քրիստոնյա պետություններու ներկայության, իր արյունոտ ժանիքը սրած, անպաշտպան, անմեղ հայերու վրա կհարձակեր, անխնա և անխտիր ջարդելով, լլկելով և սրբատեղիները աղբանոցներու վերածելով:

Զեյթունցիին, այդ ծանրակշիռ կացութեան առջև, իր դիրքը աստի-
ճան մը ևս դժվարացած կնկատե: Իր աչքին առջև կպատկերանա զեյ-
թունցի մատաղ ու խոստումնալից սերունդին մութ ապագան: Այդ բո-
լորը երկար մտածել կուտան՝ որևէ շարժում հղանալէ և որոշելէ առաջ:
Ազգային միութիւնը ներքին և արտաքին կնճոտ հարցերու առջև
կգտնվեր, որոնց պարտավոր էր խիզախորեն կուրծք տալու, որպեսզի
կարողանար շարունակել իր գոյապայքարը: Այլևս մեզ համար ամեն
հուշի նշույլ մարած կթվեր: Կմնար միայն քաջաբար զոհվիլ մեր պա-
պենական սուրբ հողին վրա:

1920 թվականի մարտի 9-ին, Սյունայու-Գայայի մեր պահակները
կտեսնեն ճերմակ դրոշակով մեկուն սահմանազուլի մոտենալը: Սահ-
մանազուլիներ հաստատած էինք արևելքեն՝ Զերմուկի գետակը, իսկ
հարավեն և հյուսիս-արևմուտքեն՝ նախկին սահմանները: Ըստ կենտ-
րոնի հրահանգին, երկու պահակներ կընդառաջեն եկողին, ան պէկնցի
թուրք մըն էր, որ բերած էր նամակ մը Չարտազի գայմազամ խալիլ
Շեհապէն: Այս վերջինը եկած էր թրքաբնակ Պելեն գյուղը, մեզի հետ-
տեսակցելու փափաքով: Ան ժամադրավայր ընտրած էր սահմանա-
զուլի Զերմուկը, մարտի 10-ին, ժամը 9-ին: Գայմազամին առաջար-
կը ընդունվեցավ պաշտոնական գրութեամբ մը:

Ազգային միութիւնը, բացառիկ նիստե մը ետք, որոշեց չորս հո-
գինոց պատվիրակութիւն մը ղրկել, բաղակացած հետևյալներեն՝ Ասա-
տուր Կյուլվանեսյան, Լևոն Եզեկիեւլյան, Հարութիւն Գասապյան և
Սարգիս Սանկիկյան: Գիշերանց 90 երիտասարդներ դիրք բռնած էին
Զերմուկի մոտակա բլուրները, որևէ հավանական պատահականութեան
առաջքն առնելու համար: Առտուն, որոշյալ ժամուն, մեր պատվիրա-
կութեան անդամները իրենց զինյալ թիկնապահներով հասան ժամա-
զրավայր, ու արդեն իրենց կպասեր գայմազամ խալիլ Շեհապէլ՝
տասնյակ մը հեծյալներով:

Ընկալյալ ձևակերպութիւններէ վերջ, գայմազամը ամբարտավան
տոնով մը կսկսի խոսիլ. «Ստոր ֆրանսացիները խայտառակ կերպով
մեր հողերեն վճնտեցինք և մոտերս ծով պիտի թափենք: Այլևս օսման-
յան սրբազան հողը պիտի ազատի օտարներու ոտքի կոխան ըլլալէ:
Քանի որ դուք ալ օսմանյան հողին վրա կգտնվիք և այս հողին զավակ-
ներն եք, պե՛տք է հնազանդիք օսմանյան պետութեան»:

Հարութիւն Գասապյան քաղաքավարորեն հաջողութիւն կմաղթե
օսմանյան պետութեան և կհաստատե գայմազամին հայտարարութիւն-

ները: Այն ատեն, այս վերջինը ավելի քաջալերված կշարունակե հոխոր-
տաբար խոսիլ, առաջարկելով հետևյալ պայմանները.

Հանձնել վար դրված մյուսյուր Յահյա էֆենդին և Հաճի Իպրա-
հիմի ընտանիքը: Հանձնել Զեյթունի մեջ գտնվող կառավարական պա-
րենը՝ ամբողջութեամբ: Նորոգել հրամանատար Թահսին բեյի զորանո-
ցին մոտ գտնվող գերեզմանատունը: Վերադարձնել ձերբակալված Ահ-
մետ էֆենդին և իր զենքերն ու ինչքերը: Վերադարձնել Զեյթուն բնակող
հայ գյուղացիները՝ իրենց ծննդավայրերը: Վերանորոգել քանդված հե-
ռագիր-հեռախոսի թելերը: Կրիվ վճարել հետնյալ տուրքերը: Զենքերը
անմիջապէս հանձնել և պարպել զորանոցը:

Նախ՝ մյուսյուր Յահյա սպանված էր: Ինչպէս ծանոթ է, ան հանձ-
նրված էր Սիմոնյանի հսկողութեան: Մարաշեն վերադարձին, երբ Սի-
մոնյան կլսե իրազայանի դառնադետ մահը, այնքան գեշ կազդվի, որ
առանց Ազգային միութեան գիտակցութեան, Կարապետ Տեմիրճյանի և
Մանուկ Գավազյանի հետ Յահյան կտանին զորանոցին հարավը գրտ-
նրվող մոտակա Մուխալ աղբջուրը և այնտեղ կդաշունահարեն: Հետո՝
կառավարական պարենը արդեն բաշխված էր Զեյթուն վերադարձող նո-
րեկներուն: Ահմետ էֆենդին և իր պարագաները ձերբակալութեան գի-
շերն իսկ փախած էին: Շրջակա գյուղերեն Զեյթուն ապաստանած հայ
գյուղացիներուն ծննդավայրերը հրկիզված էին թուրք չեթեներու կողմէ:
Այս բոլոր եղելութիւններն ու իրողութիւնները նկատի առնելով, Զեյ-
թունի պատվիրակները կհայտնեն, թե իրենք լիազորված չեն վերոյիշյալ
պահանջ-հողովածներուն պատասխանելու:

Գայմազամը իր տված վերջնագրին տրվելիք պատասխանին հա-
մար երեք օր պայմանաժամ կուտա: Պատվիրակները վերջնագիրը կառ-
նեն և իրենց ընկերացող զինյալներուն հետ կվերադառնան զորանոց:
Գայմազամը հանդիպակաց բլուրները 4—500 չեթե տեղավորած էր:

Մարտ 11-ին, խումբ մը զեյթունցիներ, Զերմուկի հարավակողմը
գտնվող Տյունյուքներ թրքաբնակ գյուղը՝ Չագրյան ընտանիքին ազարա-
կը գացին հարդ բերելու համար: Խըրլավուխաբնակ թուրք չեթեներ, ի
տես հայերու Տյունյուքներ երթալուն, կփորձեն առիթեն օգտվիլ: Անոնք
հանդիպակաց բլուրներեն կրակ կբանան հայերուն վրա: Վերեն՝ Սյուն-
այուլ Գայայի պահակախումբը անմիջապէս կփոխադարձե, կռիվը կըս-
կըսի երկուստեք. արձակվող գնդակներու սուլոցին լեռները արձագանք
կուտան: Անմիջապէս զորանոցին երկու խումբ օգնութեան կփութան:
Կռիվը սոսկալի էր և մեր հաղթանակը անխուսափելի: Զեյթունցիք
պատնեշե պատնեշ ցատկելով այնքան հառաջացան, որ թշնամին ստիպ-

վեցյալ նահանջել: Մենք որևէ կորուստ չունեցանք, մինչ թշնամին, համաձայն իրենցմե քաղված տեղեկությունց, 5 մեռյալ և 16 վիրավոր կունենա: Որով գայմագամին պատասխանը տրված եղավ, թեպետ որոշված էր անպատասխան թողուլ:

Ազգային միությունը գումարեց խառն ժողով մը, ուր որոշեց ներկա տագնապալի կացության ելք մը գտնելու հույսով տեղեկագրել Ատանա: Թղթատար տղաքներն էին Պապա Ասմընյան, Կարապետ Սալաբեկյան և կապանցի Նուրի Գրճըլյան: Անոնք հազիվ Անի ձորը իջած էին, երբ կոխվը կսկսի կրկին, բայց անոնք ճամփան կշարունակեն: Նամակներ գրված էին Կարս-Պազարի, Ատանայի և Սիսի Ազգային միությանց, Վեհափառ կաթողիկոսին, Ազգային պատվիրակության ներկայացուցիչ Միհրան Տամատյանին և Ֆրանսական հրամանատարության: Գրված այս կարևոր նամակներուն մեջ մենք կպարզեինք մեր աղետալի կացությունը և շոտափույթ օգնություն կխնդրեինք: Հակառակ պարագային մեր ապագա գործունեության մասին կխնդրեինք հարկ եղած թելադրանքները բանաձևել ու մեզ տեղեկացնել:

Թղթատար տղաքը մինչև Կարս-Պազար ապահով կհասնին, բայց քաղաքը ֆրանսացիներեն և հայերեն պարաված ըլլալով, անոնք կձերբակալվին քեմալական գործակալներեն: Բարեբախտաբար չերքեզ Նուրիի աջակցությամբ անոնք կհանձնվին ֆրանսական հրամանատարության, իսկ թղթածրարները գրավվելով կղրկվին Մարաշ: Մեր սուրհանդակները թեպետ որևէ գրություն չունեին հետերին, բայց բերանացի խոսած էին ամեն ինչ, առ որ անկ էր:

1920 ապրիլ 5: Ջերմուկի սահմանագլխին վրա կերևի ճերմակ դրոշակակիր մը, որ սահմանապահ խումբին կհանձնե նամակներ՝ փոխանցվելու համար Ազգային իշխանության: Նամակներ ուղարկված էին Մարաշի մյուսթեսարըֆ Յուրճան բեյեն, Ամերիկյան միսիոնարութենեն և Ազգային առաջնորդարանեն, որոնք բոլորն ալ պատրաստակամ ոգի և բարյացակամություն կհայտնեին մեզի: Բացի հիշյալ նամակներեն, ուղարկած էին նաև երկու նամակ՝ մին ուղղված դոկտոր Ծ. Էլմաճյանին, մյուսը՝ Ասատուր Կյուվանեսյանին, ստորագրված մին՝ մատրը կայմընեն և մյուսը՝ Հասան Գազը Զադե Հաճի էֆենդիեն, որպեսզի հիշյալ անձերը իրենց հետ տեսակցելու համար երթան Պեշեն թրքաբնակ գյուղը:

1920 թվականի ապրիլի 6-ին դոկտոր Էլմաճյան, Ասատուր Կյուվանեսյան և Սեդրակ Մարկանյան մեկնեցան Պեշեն՝ հիշյալ անձերուն

հետ տեսակցելու համար: Մեր նպատակն ու փափաքն էր հասկացողության մը գալ՝ ներկա դժնդակ դրության վերջ տալու համար:

Քեմալական կառավարությունը կուզեր սիրաշահիլ Զեյթունը, որովհետև ան ամեն կողմե զբաղած, չէր ուզեր մեզ հետ ալ գործ ունենալ: Կայմընի գլխավորած պատվիրակությունը կբաղկանար Հասան Գազը Զատե Հաճի էֆենդիեն և երեք հայեր (Աբրահամ Հարությունյան, Հովնան Վարժապետյան, Հակոբ Մոմճյան, իբրև ներկայացուցիչները երեք հայ կրոնական գավանանքներու): Անոնց կրնկերանար նաև քսանապետ մը՝ Պայազիտ Զատե Սյուլեյման բեյ անունով: Պեշենի մեջ իրար հանդիպել վերջ մերինները առաջնորդեցին պատվիրակությունը Զեյթուն: Ժողովիս որոշումով, հաջորդ օրը Մարաշի պատվիրակությունը մեծ շուքով ընդունվեցավ: Բանակցությունները երեք օր տևեցին: Շատ մը հարցեր սիրալիք և փոխադարձ դիջումներով լուծվեցավ: Ուղղակի Մուսթաֆա Քեմալի հետ հեռագրով բանակցության մտավ Ազգային միությունը: Մուսթաֆա Քեմալ լիազորություն տվավ ներկայացող պատվիրակության՝ ամեն գնով զեյթունցիներուն հետ հասկացողության գալ: Ի վերջո համաձայնություն կայացավ հետևյալ կետերուն շուրջը.

1. Զեյթունը կճանչնա քեմալական իշխանությունը իբրև թուրք անկախ պետություն:

2. Զեյթուն որևէ ոտնձգություն պիտի չգործե իր թուրք դրացիներուն վրա:

3. Քեմալական կառավարությունը պիտի պաշտպանե զեյթունցիներուն կյանքը, ինչքը, պատիվը:

4. Քեմալական կառավարությունը Զեյթունի պարենավորումը պիտի երաշխավորե:

5. Քանի դրացի թուրք բնակչությունը զինաթափված չէ, Զեյթուն իր զենքը պահելու իրավասություն պիտի ունենա՝ սահմանեն ներս կամ դուրս:

6. Զեյթունի զորանոցը՝ Քեմալական կառավարության հրահանգով իբրև բնակչության վայր մը պիտի ծառայե:

7. Զեյթուն գտնվող Հաճի Իպրահիմ Ուշազը Հաճի աղան ընտանյոք պիտի վերադարձվի:

8. Հարկահավաք Հաճի Ահմետի և ընկերներուն գույքերը պիտի վերադարձվին:

9. Զեյթունցիներու երթևեկը ազատ է:

Վերոհիշյալ հողվածներեն բաղկացած դաշնագիրը երկուստեք ստորագրվեցավ և իրարու փոխանցվեցավ ի ներկայության ամերիկյան մի-

սիրնարութեան և Մերձավոր Արևելքի նպաստամատուցի լիազոր ներկայացուցիչ մը ստոր կայմընի, որուն տրվեցավ համաձայնագրի օրինակներն մին: Քսանապետ Սյուլեյման բեյ շրջանին մյուտյուր նշանակվեցավ: Ան պիտի գնար Գրլավուզ: Կառավարութեան հրահանգով անմիջապես ճամփաները բացվեցան, երթեկը սկսավ: Առիթնն օգտվելով Ազգային միութիւնը կրցած էր թուրքերու միջոցով ռազմամթերք՝ կապար, վառոդ, կապտոն, նույնիսկ փամփուշտ հայթայթել: Գրեթե երեք ամիս որևէ միջնադեպ տեղի չունեցավ: Գյուղացիք շատ ազատորեն մեր սահմաններն ներս կրնային երթալ-գալ, իսկ մենք որևէ տեղ երթալու ատեն, ըստ մեր պահանջքին, Գրլավուզեն զապթիե կուզար և մենք անոր ընկերակցութեամբ կճամփորդեինք, որով երբեք վտանգ չկար:

Առ ի քաղաքավարութիւն, Ազգային միութիւնը հարմար նկատեց փոխայցելութիւն մը տալ Մարաշ՝ Յուրճան բեյին և այդ առիթով կարգ մը անլուծ հարցեր ալ կարգադրել: Պատվիրակութիւնը բաղկացած էր Ասատուր Կյուլվանեսյանէն և Սարգիս Սանկիկյանէն: Յուրճան բեյ շատ սիրալիր ընդունելութիւն ցույց տված էր մեր պատվիրակութեան և խոստացած բոլոր պահանջմունքներուն գոհացում տալ:

Մյուտյուր Սուլեյման բեյի վարած քաղաքականութիւնը մեզի շատ նպաստավոր եղավ: Շաբաթը մեկ երկու անգամ ան մեզի կայցելեր և մեր բոլոր պահանջներուն սիրով կրնդառաջեր, որով թուրք զրացիներուն նախանձը կհրավիրեր իր վրա: Զինքը ամբաստանող հանրագրութիւններ կպատրաստվեին և կտրվեին Մարաշի կառավարութեան, իբրև Քեմալական կառավարութեան ընդդիմադիր և կաշառակեր:

Սյուլեյման բեյի քանի մը ամսվան պաշտոնավարութեան ժամանակամիջոցին զեյթունցի լայն շունչ մը առավ: Ան կրցավ զապթիեներու հսկողութեամբ հաճախակիորեն Մարաշ, Չարտագ, Ֆոնուզ և այլ տեղեր այցելել և իր ուզածը ապահովել: Բայց կառավարութիւնը թուրք ժողովուրդին հանրագրութեան ընթացք տալով Սյուլեյմանը հեռացուց՝ իբրև հայասեր, կաշառակեր և ընդդիմադիր, մինչդեռ Սյուլեյման՝ Պայազիտ մեծ գերդաստանի զավակն ըլլալով չէր կրնար իրական հպարենասեր մը և տիպար զինվորական մը ըլլալ: Իր պաշտոնավարութեան ընթացքին ան շատ օգտակար դեր խաղաց մեր և կառավարութեան միջև: Իր հաճախակի այցելութիւններուն առիթով, ան երախտագիտութեամբ կհիշեր զեյթունցի 500 քաջամարտիկներու Մարաշ՝ իր հոր ճգնաժամային օրերուն օգնութեան հասնիլը՝ Զուլ Գատեր բեյերու դեմ: Զեյթունցի քաջերը այն ժամանակ կրցած էին իր գերդաստանը այդ նեղ կացութենէն ազատել և իր դիրքին արժանի բարձրութեան վրա դնել:

Այժմ ան երախտագիտութեամբ և հանուն վաղեմի բարեկամութեան, պատրաստ էր զեյթունցիներուն օգտակար ըլլալ: 1920 հունիսի վերջերը Սյուլեյմանին տեղ Զեյթուն եկավ շերքեզ Սաատեթթին, խորամանկ թուրք պաշտոնյա մը, 30-ը անց, արտաքինով անաշառ և մարդամոտ, բայց խորքին մեջ հաշատյաց, զեղծարար և կաշառակեր: Ան եթե հանուն մարդկութեան քիչ մը անկեղծութիւն ունենար, զեյթունցի նախկին քաղաքի քաղաքականութիւնը տարիներով կրնար շարունակել, որովհետև մեր փրկութիւնը մեր վարած քաղաքականութենէն կախում ունէր: Պետք էր ժամանակ շահելնք, թեպետ արտաքին աշխարհը մեր առջև իր դռները փակած էր և ոչ մեկ տեղե օտույզ լուր կրնայինք առնել: Եթե կիսկատար բաներ մըն ալ լսելու բարեբախտութիւնը ունենայինք, անոր աղբյուրը դժբախտաբար միայն թրքական կ'ըլլար:

Այդ ժամանակամիջոցին ժողովուրդը տենդոտ աշխատանքի լծված էր: Պետք էր առիթնն օգտվելնք և ապահովելնք անհրաժեշտ զենքերը: Մեր ջորեպանները հաճախակի կերթային Մարաշ և շրջակա թուրք գյուղերը, և բավական թվով զենք ճարելով կրերեին:

1920 հուլիսի 28-ին Ազգային միութեան անդամ Եզեկիել Պարութեան, ընկերակցութեամբ Սարգիս Սանկիկյանի և Արամ Արասխանյանի, իրենց անձնական գործերուն համար կերթան շերքեզաբնակ Չարտագ գյուղը, որը կառավարական կենտրոն էր և ուր կգտնվեր նաև կառավարիչ Սաատեթթինը: Անոնք իրարու հետ կժամադրվին Զեյթունէն չորս, իսկ Չարտագն մեկ ժամ հեռու՝ էրիճեք կոչված թրքաբնակ գյուղը, որպեսզի միասին գան: Եզեկիել և ընկերները էրիճեք կհասնին վարձքերը գանձելու համար: Այդտեղ կապրեին թուրքեր, որոնք ամառը կելլեին մեր լեռները՝ իրենց կենդանիները արածելու, իսկ ձմեռը դարձյալ մեր մշտագալար թնրպիներէն կհայթայթեին իրենց կենդանիներու կերը: Կառավարիչ Սաատեթթին ևս երեք ոստիկաններով կհասնի մյուտիբենց գյուղը, ուրկե միասին ճամփա կելլեն: Ճամփան դարանակալ շեթեներ կձերբակալեն մեր երեք հայրենակիցները և ոստիկաններուն ներկայութեան կխոշտանգեն:

Սաատեթթին ոստիկանով մը կհասնի Գայայի կամուրջը, ուր Արամին հետ մի քանի զեյթունցիներ զետեղերը նստած ժամանակ կանցնեն: Զեյթունցիները կառաջարկեն մյուտյուրին, որ հանգստանա: Ապա անոնք կհարցնեն Եզեկիելի և ընկերներուն մասին: Նեղ մյուտյուրը կպատասխանե. «Միասին ճամփա ելանք, մյուտիբենց գյուղը գործ ունեցեր են, հոն ելան, շատ հավանական է, որ այսօր գան»: Հակառակ մերիններուն պնդումին, մյուտյուր շուգեր մնալ այն առարկութեամբ, թե օրը կտարա-

ժամի և իրենք պետք է Գրլավուզ հասնին: Այդպիսով ան անմիջապես կհեռանա ժանդարմին հետ:

Հաջորդ օրը, Աբրահամ Գշպուտյան իր ընկերներով Չարապեն եկավ և հայտնեց, որ նախորդ օրը Եղեկիելն ու ընկերները մեկնած էին: Այլևս գաղտնիք մը չէր թե սպանված էին մերիկները: Շրջուն խումբը այդ օրը չէր հանդիպած ինքն Աղբյուր: Անմիջապես խումբ մը մարտիկներ ճամփա կելլեն Եղեկիելի և ընկերներուն հետքը գտնելու համար և կհասնին մինչև մյուստիրենց գյուղը: Տեղվույն հայերը կհաստատեն, թե իրոք նախորդ օրը ճամփա ելած էին անոնք: Վերջապես, վերադարձին, կհաջողվի Ալա Չալըր՝ ինքն Աղբյուրի մոտիկ ձորակի մը մեջ գտնել երեք զեյթունցիներուն դիակները՝ քով քովի խոշտանգված վիճակի մեջ: Տխուր իրողությունը պարզված էր, անակնկալի մը առջև չէր սակայն որ զեյթունցին կգտնվեր: Այնքան ատեն որ եվրոպական պետություններու շահամուլ քաղաքականությունը շարունակվեր, ստիպված պիտի ըլլայինք հոս հոն սպանվիլ, սպանել և ի վերջո վերջակետ մը դնել մեր բազմահալած, գծիսեմ կյանքին...

Հետախույզ խումբը իրիկնամուտին Զեյթուն վերադառնալով պատմեց խոսուր եղելությունը: Այդ օրը զուգադիպությամբ Մարաշէն վերադարձող 17 թուրքեր՝ ծեր, կին, երիտասարդ Զեյթունի մեջ կդիշերեին. առի՞թն էր մեր կտրիճներուն՝ փոխվրեժի դիմելու համար: Թուրքերը, սարսափահար, կզգային իրենց գլխուն գալիքը, բայց վեհոգի զեյթունցին չզիջեցավ անզեն մարդոց վրա ձեռք վերցնելու, իր ասպետական ոգիին դավաճանած չըլլալու համար: Զոհերուն դիակները Զեյթուն փոխադրելու համար նշանակված խումբին հանձնվեցան սույն տասնյոթ թուրքերը, որպեսզի ապահով անցնին սահմանը: Կառավարությունը և թուրք ժողովուրդը, ի տես զեյթունցիներու այդ վեհանձնությանը, իրապես զարմացան: Ինչպե՞ս կըլլար որ երեք զեյթունցիներ անիրավաբար խոշտանգվին, սպանվին և անոնց փոխարեն տասնյոթ թուրքերը ազատ արձակվին...

Երեք զոհերեն՝ Եղեկիելը քառասունհինգը անց, կատակասեր, հուժկու և հանդուգն տղամարդ էր: Նախքան պատերազմը ան տասնհինգ տարի անընդհատ պետական հարկահավաք եղած էր: Աշխատած էր միշտ ժողովուրդին պահանջներուն զոհացում տալ և արժանանալ բուլտրի գնահատանքին: Տարագրության դառը բաժակը ցմրուր քամած, ան մեծ հույսերով վերադարձած էր իր պապենական քարուքանդ օջախը վերաշինելու համար: Անդամակցած էր Ազգային միության, ուր ունեցած էր բեղուն գործունեություն մը:

Սարգիս, գրեթե Եղեկիելին տարեկից, պերճախոս, կայտառ, արհեստով մտագործ, առևտուրի մեջ մեծցած, նույն նպատակով վերադարձած էր հայրենիք:

Արամ կարճահասակ, գործունյա, նույն տարիքով, արհեստով ջորեպան, Մարաշ զրկված երկրորդ խումբին մասնակցած էր և իր գործոն բաժինը բերած:

1920 օգոստոսի 3-ին երեք զոհերու դիակները ջորիներու վրա բեռցած բերին գերեզմանատուն: Ամբողջ ժողովուրդը մեծ սուգով դիմավորեց իր հարազատ զավակները՝ արցունքը աչքերուն և վրեժը սրբտերուն: Դիակները սառած, փայտացած էին: Սիրելիներուն լացն ու կոծը և ժողովուրդին սուգը անմխիթար էր: Ամեն ոք խոր մտածումի մեջ էր. «Յո մը չէ օր մը, այսօր կամ վաղը, բոլորիս ալ բաժինը նույնը պիտի չըլլա՞ր արդյոք...» Հայր Բարթողիմեոս, Տեր Հովսեփ քահանային հետ, աղեխարշ արցունքներով հողին հանձնեց մեր սիրելի եղբայրները, անիծելով հայու սև ճակատագիրը և քրիստոնյա պետություններու վարած նենգ քաղաքականությունը:

Նկատի ունենալով առաջիկա անողոք ձմեռը, բուրբ կաշխատեին հնարավոր միջոցներով լրացնելու արմտիքի պակասը: Յանքերը փշացած էին՝ 1919—20-ի ձմռան աննախընթաց սաստկութիւններ: Ամեն ոք այն հաստատ համոզումը ուներ, որ կառավարությունը, հարգելով իր կրնջած դաշնագիրը, այգիներու բերքին փոխարեն մեզի արմտիք պիտի տար՝ առնելով դրացի թուրքերեն, ինչպես այդ կըլլար նախքան պատերազմը: Դժբախտաբար, սակայն, մեր հույսերը ի դերև ելան: Թուրք կառավարությունը, մեր դարավոր թշնամին, ամեն տեսակ արգելք կհարուցաներ, որ զեյթունցին նեղ դրության մատնվելով անձնատուր ըլլար: Ամեն կողմե պաշարված էինք, նեղ սահմանի մը մեջ ամփոփված, եղկելի կացության մը մատնված՝ կտվյալներ: Արտաքին հարաբերութենն բոլորովին զուրկ, շատ աղոտ կերպով լսած էինք Հաճընի ողբերգությունը՝ անշուշտ թուրքերե միայն: Բայց և այնպես Ազգային միությունը առանց հուսահատելու միջոցներ ստեղծեց քիչ թե շատ արմտիք ապահովելու՝ զայիք ձմռան համար: Ան մեծ ուշադրությամբ գործեց և հարմարագույնը տնօրինեց: Իր ունեցած արմտիքեն և կերակուրեն չբավորներուն բաժին հանեց: Արդեն ինչ որ արմտիք, կենդանի կար, Ազգային միությունը համայնացուց և հարկադրեց ժողովուրդը, որ ամեն առտու երթա գետակներու և աղբյուրներու մոտակայքը՝ կանաչեղենի տեսակներ՝ բազեղ, բանջար, քյոմեջ քաղե, մեկ երկու կենդանի

մորթե, որպեսզի քանի մը կիւո արմտիքով ճաշ պատրաստվի և տրվի շքավոր ժողովուրդին:

Այստեղ, ցալ ի սիրտ, և փակագծի մեջ պիտի հիշենք բժիշկ Ե. Էլմաճյանի այսպանելի մեկ արարքը: Մարաշի Ամերիկյան միսիոնարութեան Մերձավոր Արևելքի ներկայացուցիչ մատըր կայմընը 200 ոսկի դրամագլուխով բուրդի աշխատանոց մը բացած էր՝ որբեկայրիներուն գործ հայթայթելու և այդ ձևով անոնց օգնելու համար: Հ. Թ. Բ. Միությունը ևս ամեն ամիս կղրկեր 50 ոսկիի նպաստ մը: Էլմաճյան, Ազգային միութեան ատենապետ Արամ Չոլագյանի հետ համախորհուրդ, հիշյալ նպաստները բաշխեց լոկ քանի մը բողոքական ընտանիքներու, բողոքականութեան զարկ տալու համար: Երբ խնդիրը հաղորդվեցավ մատըր կայմընին, այս վերջինին պատասխանը եղավ. «Ես, զոկտորը և Արամը հայրը՝ վարպետ Արթինը լավ կճանչնամ, անոնք իրենց ուղած ձևով կրնան գործածել սույն նպաստները»: Այս պատճառով, դժբախտաբար, Ազգային միությունը երկուքի բաժնվեցավ: Երկպառակութեան որոմը ցանված էր. ատկե օգտվելով, կարգ մը երիտասարդներ հանդգնեցան ոչ միայն դուրսերը, այլ նույնիսկ զորանոցին մեջ ավազակութեամբ զբաղիլ և այս կամ այն հայրենակցին կովը, հորթը, աչծն ու ուլը զողանալ: Անոնց կենտրոնը զորանոցեն դուրս էր: Ազգային միությունը իր պատկառանքը, հեղինակութեանը դժբախտաբար կորսնցուցած էր: Ավազակախումբը իր ավերները ուզեց անխտիր ի գործ դնել, երբ Ազգային միությունը զգաստութեան գալով, ժողովի կանչեց բոլոր վերապրող ղեկավարները և որոշեց ի սպառ վերացնել բոլոր ավազակները: Այս վերջինները զինված, հազիվ գերեզմանատուն հասած, կրակ բացին: Ազգային միությունը կանխատեսելով եղբայրասպան կոիվի մը ահաւորութեանը, հարմար դատեց նահանջել: Մասնավորաբար Հարություն Գասապյան, որ վերապրող հայրենակիցներեն ամենեն իրատես մարդն էր, շատ աշխատեցավ այդ վեճերուն վերջ տալու համար: 1921 հունվարի 15-ին, վեց երիտասարդներ, Միքայել Տինկիշյանի ղեկավարութեամբ, կխորհին, առանց Ազգային միութեան լուր տալու՝ ձգել իրենց ընտանիքները և անցնիլ Ատանա: Սակայն ճանապարհին Հասան Պեյլի մոտ թուրք շեթներու հետ կոիվի կըռնվին և իրենցմե ամենահանդուգն ընկերը՝ Քեմիսիզյանը կորսնցնելե ետք կստիպվին վերադառնալ: Ահա Ձեյթունի ներքին ու արտաքին կացութեանը: Թշվառութենէն վերջ՝ ահա՛ և ներքին երկպառակութեանը:

1921 հունվարի 25-ին թուրք կառավարութեանը պաշտոնական գրութեամբ մը 280 հոգի կկանչեր զինվորական ծառայութեան համար՝

1894—1900 թվականներու ծնունդը: Ազգային միությունը գումարեց բացատրիկ ընդհանուր ժողով մը և որոշեց երկգիմի պատասխան մը տալ, առարկելով, որ «Այժմ երիտասարդները հոս չեն, պիտի ջանանք մոտ օրեն ձեզ գոհացնել»: 1921 փետրվարի 20-ին երկրորդ անգամ 250 հոգինոց ցանկ մը ևս ղրկվեցավ՝ 1890—94 թվականներուն ծնունդները պահանջող: Գարձյալ միևնույն պատասխանը տրվեցավ: Կառավարութեանը երբ իր այդ պահանջներով շիրքավ արդունքի մը հասնիլ, ուղարկեց երրորդ գրութեան մը, ուր կըսվեր. «Ձեյթունցիք իրենց սահմաններուն մեջ, ինչպես նաև հետուն՝ Սեկի Գաֆղըթի կիրճերուն մեջ թուրքեր, մանավանդ զինվորական փախստականներ կսպանեն. կպահանջվի սույն ոճրագործները հանձնել կառավարութեան»:

Ժողովը ստիպված հիշեցուց, թե «Ձեյթունցիք իր 1920-ին կնքած դաշնագրին հավատարիմ մնացած է, մինչդեռ կառավարութեանը, նույնիսկ իր պատասխանատու պաշտոնյային և ոստիկաններու ներկայութեամբ, Խետ աղբյուրի սահմաններուն մեջ երեք սպանութեան կատարած է: Երկրորդ՝ կառավարութեանը արգելք եղած է մեր թուրք դրացիներուն Ձեյթուն երթնելը, մինչդեռ մեր կնքած դաշնագրին համաձայն անոնք պարտավորված էին ապահովել մեզ անհրաժեշտ պետքերով: Մեր ժողովուրդը, խաղաղ աշխատանքի լծված, իր սահմաններեն երբեք դուրս չէ ելած: Պիտի խնդրեինք, որ նման զրպարտութեաններ մեզ չվերագրվին: Մենք միշտ հավատարիմ եղած ենք և պիտի ըլլանք մեր խոստումին»: Մեր միակ նպատակն էր՝ կարելի եղածին չափ ջանալ, որ մեր հարաբերութեանները պաշտոնապես չխզվին: Դեռ եղանակը ցուրտ էր, ճամփաները ձյունով ծածկված: Կարելի եղածին չափ ամեն միջոց պարտ էինք ի գործ դնել՝ ժողովուրդը կարենալ ապրեցնելու համար, մինչև նոր հունձքի ժամանակը:

1921 մարտին կառավարութեանը ուզեց ոչխարներու և այծերու տուրքը: Սիրով գոհացում տվինք, որովհետև չէինք ուզեր խնդիր ունենալ իրենց հետ: Անոթութեան անողոք ճիրանները մեզ կաշկանդած, աքցանի մեջ առած էին, ճգնաժամային վայրկյաններ կանցնեինք, աղի պակասը շատ զգալի էր, բանջարն ու բաղեղը առանց աղի ուտել կարելի չէր:

Կառավարութեանը բոլոր թուրք գյուղերը պահականոցներ հաստատած, զինվոր լեցուցած էր, որպեսզի մեր մուտքը արգիլեն: Բայց մեր տղաքը առանց հուսահատելու ու տատամսելու, խումբերով, գիշերները կհաջողեին մտնել գյուղերը և աղ, արմտիք ու ռազմամթերք հայթայթել, անշուշտ, դրամով և վերադառնալ: Սակայն 10—20 երիտասարդ

ինչպէ՞ս կրնային այդ ձյունին ու բուքին իրենց շարակով ապահովել 1059 հոգիի պահանջը:

1921 մարտի 25-ին սկսած էր ձյունհալը: Ճամփաները բացված էին, որով Աղզային միությունը որոշեց շերքեղ գյուղերու հետ համաձայնութեան գալ և հարկ եղածները ապահովել: Առաջին կարավանը 10 ջորիով և 25 երիտասարդներով՝ ղեկավարութեամբ Կարապետ Թաշճյանի և Մանուկ Ճելլատյանի— որոնք ծանոթ էին այդ կողմի թուրք բնակչության—Սյուզբեքի Կյուլ թրքաբնակ գյուղը ուղղվեցան: Վերադարձին, Ասատուր Չաքրյանը, որ կարավանին բաժնված պահակի դեր կատարեր, կոխիկ կրճովի թուրք շեթեններու հետ: Ան քաջաբար կմարտնչի և վանոնք փախուստի կմատնե:

Երկրորդ կարավանը Ֆրնտրգ կերթա՝ Փարթուս և Համբարձում Մուշուգյաններու ղեկավարութեամբ: Վերադարձին, երկու առաջնորդները բաժնված կերթան իրենց թուրք դրացի խընըճաբնակ Նըտըր Ալիին քով: Թուրքերը ի տես Համբարձումին և Փարթուսին, կստիպեն, որ առանց ճաշելու շնորհիւ անոնք, որովհետև Մուճուգյան ընտանիքը, որ Քյոմեսուկյուտ կբնակեր, մեծ տանուտեր, հյուրասեր ընտանիք մըն էր՝ ամբողջ Զեյթունի և շրջակա հայ և թուրք գյուղացիներին սիրված: Փարթուս և Համբարձում, հազիվ քառասուն գարուններ բոլորած երիտասարդներ էին: Առաջինը՝ իբրև ճարպիկ առևտրական և տանուտեր, իսկ երկրորդը՝ պատերազմի ամբողջ շրջանին Ամանուսի հայ խումբին էր մասնակցած և գործուն դեր ունեցած: Մուճուգյանները դրացիներու խնդրանքին տեղի կուտան, մանավանդ որ մեր սահմաններուն մեջ վախնալու որոշ պատճառ մը չունեին: Հազիվ Ալաշայիը՝ Նեստ աղբյուրը կհասնին, աղբյուրին ետևը դարանակալ թուրք շեթեններ կրակ կբանան իրենց վրա: Երկուքը միասին շնչասպառ գետին կտապալին: Կարավանը իրիկնամուտին Զեյթուն հասած էր արմտիքով բեռնավորված, միայն Մուճուգյանները կպակսեին: Ուշացած էին, արդեն պետք էր վերադարձած ըլլային: Կասկածները սկսան ծնունդ առնել: Անմիջապես, իրենց Նղիա եղբոր առաջնորդութեամբ, խումբ մը երիտասարդներ ճամփա կելլեն, և երբ կհասնին եղեռնավայրը կտեսնեն Մուճուգյան եղբայրներու կողք կողքի ինկած դիակները:

Երբ գուշոը Զեյթուն հասավ, ամբողջ բնակչությունը խորապես ցնցվեցավ ու Զեյթունի երկնակամարեն երկու աստղ ևս մարեցավ...

1921 ապրիլի 4-ին զոհերուն դիակները կենդանիներու վրա բեռցուցած բերին Զեյթուն: Ամբողջ ժողովուրդը սուգով համակված դիմավորեց զիրենք գերեզմանատունը: Երկու անման երիտասարդներու

մարմինները հանձնվեցան անկուշտ հողին, ուր իրենց հերոս նախնիքը կհանգչեին: Հարություն Յաղուպյան, արտասովաթոր աչքերով իր և ամբողջ ժողովուրդին կողմն վերջին հարգանքը տվավ սույն նահատակներուն: Բնաբան ունենալով «Մահ իմացյալ անմահություն է» խոսքը, ան ըսավ. «Մուճուգյան եղբարք ոչ շահու, ոչ դիրքի և ոչ ալ աթոռի համար էր որ զոհվեցան: Ժողովուրդին օգտակար ըլլալու համար անոնք նույնիսկ նախընտրեցին մահը, որովհետև անոնք քաջ դիտեին, թե իրենց հետեած ճամփան կենաց և մահու ճամփան է, ուր մահացու իժեք կվիտան...»:

Մեր կողմն կառավարության ներկայացված բողոքը գրեթե անլսելի մնաց, որովհետև նույն օրերուն մեզ ազդարարված էր դուրս շեղել: Ամբողջ շրջակա գյուղերը և լեռները շեթեններով և զինվորական փախըստականներով լեցված էին: Եթե առանձին դուրս ելլեինք և որևէ վնասի ենթարկվեինք կառավարությունը ինքզինքը պատասխանատու չէր նկատեր: Մեր առջև բաց էր միայն կառավարական կենտրոնի՝ Գըրլավուգի ճամփան, ուստի ավելի լավ էր որ մեր հարաբերությունները պահպանեինք ուղղակի կառավարության հետ:

Այլևս մեզ համար գաղտնիք մը չէր կառավարության ծրագիրը: Պարզապես ժամավաճառություն էր հարաբերություն մշակել այդպիսի իշխանության մը հետ: Բայց ի՞նչ ընեինք... հարկադրված էինք մեր հարաբերությունները չխզել, որպեսզի կարենայինք մեր հունձքերը ներս փոխադրել: Այդ տարի բերքն առատ էր. պետք եղածն ավելի գետնախնձոր ցանած էինք, որով, եթե հաջողեինք հեղ մը ատոնք փոխադրել, ժամանակ մը ևս ապահոված կըլլայինք մեր գոյությունը: Ատկե զատ որևէ հուսատու կուվան չունեինք:

Մանրակշիռ կացությունը նկատի ունենալով, Աղզային միությունը ամեն ինչ մեկդի թողած, համերաշխաբար գործի լծվեցավ այս անելեն ազատվելու համար: Հոս տեղին է հիշել Լեոն Եղեկիլյանի մարդասիրական գործունեությունը: Ան իր նյութական կարելի միջոցները ի սպաս դրավ ժողովուրդին բարօրությանը, բավարարելու համար շունեղները և ամոքելու համար անոնց թշվառությունը:

1921 ապրիլի 10-ին էմանվել Մելիտոնյան և Փանոս Ճերահյան Պեշեն երթալու ճանապարհին, որը կառավարական ճամփան էր, վատաբար կգնդակահարվին Ախվախի խորունկ ձորին մեջ: Էմանվել կմեռնի, իսկ Փանոս՝ ծանրորեն վիրավորված, կհասնի զորանոց:

1921 ապրիլի 21-ին Ամերիկյան նպաստամատուցի ներկայացուցիչ մատրը Լայմընը, իր շրջապատույտի ընթացքին, հանդիպեցավ նաև

Զեյթուն: Ազգային միութիւնը, նկատի ունենալով ժողովուրդին ծանր վիճակը, խորհեցավ անկարներն ու որբեայրիները Մարաշ փոխադրել: Մասըր կայմընը տեղի տալով ժողովի խնդրանքին՝ համակերպվեցավ, բայց երբ կառավարութենէն արտոնութիւն ուղեց, մերժվեցավ, որով այդ ծրագիրը ևս օդը ցնդեցավ:

1921 մայիսի 5-ին կյուճուկաբնակ շերքեզ Չոճո Յուսուֆը երկտողով մը փափաք կհայտնեք տեսակցիլ Զեյթունի Ազգային իշխանութեան հետ, ավելցնելով թե Ատանային նամակ մը բերած է: Ազգային միութիւնը իր բացառիկ նիստին մեջ որոշեց իր անդամներէն Արամ Չոլագյանը, Նազարեթ Զեյթունցյանը, Հարութիւն Յաղուպյանը, Վարդան Գասապյանը, Սեդրակ Մարկանյանը և Վարդալառ Պալճյանը 40 զինակիցներով ուղարկել Կյուճուկի կիրճը, Յուսուֆի հետ տեսակցութեան համար: Խնդրո առարկա նամակը բնիկ զեյթունցի պատվելի Հ. Նոխուսյանէն էր. «Ժմ պատվական, հերոս հայրենակիցներ,— կրբեր ան,— Ատանա գացի՛ տեղվոյս Հայրենակցական միութեան հետ համախորհուրդ: Հայրենակից և այժմ Ատանայի հայ բողոքականաց հոգևոր հովիվ Կարապետ Հարութիւնյանի հետ ամեն դուռ զարկինք, առ որ անկ է դիմեցինք, դժբախտաբար ոչ մեկ արդունք, ոչ մեկ հաջողութիւն ունեցանք: Նախորդ նամակով գրած էի ձեզի, թե արտաքին օգնութեան մի՛ սպասեք, Եվրոպիո և Թուրքիո քաղաքականութիւնը պոռնիկութիւն է, նյութական շահագործումի միջոց: Ամեն գնով աշխատեցեք ազատ գոտի անցնիլ, իսկ անկարները գրաբերիս՝ շերքեզին հանձնեցեք: Մենք պետք եղած վստահութիւնը ապահոված ենք. Տերը ձեզ ապավեն և օգնական ըլլա: Ձեզ աղոթող, հոգևոր հովիվ Ճիհանի՛ Հ. Նոխուսյան»:

Մեր ժողովին բանազնաց վեց անդամները, այդ լեռան վրա մայրի ծառերուն տակ կ'որոշեն նամակներ ուղղել Կիլիկիո Սահակ կաթողիկոսին, Փրանսական ընդհանուր հրամանատարութեան և Ազգային պատվիրակութեան լիազոր ներկայացուցիչին: Նամակները կհանձնվին Յուսուֆին:

Չոճո Յուսուֆ, շերքեզ ավատապետը, այդ լեռան վրա մայրի ծառերուն տակ երկու օր կհարասիրեն զեյթունցիները՝ գառնուկներով և խորտիկներով: Ապա սիրալիր ողջագուրումներով կբաժնվին իրարմ: Մեր ընկերները իրենց առաքելութեան մեջ հաջող վերադարձան: Նամակները պատրաստված էին Ն. Զեյթունցյանի, Հ. Յաղուպյանի, Վ. Գասապյանի կողմէ՝ շատ սրտահույզ խոսքերով: Պարզված էր ժողովուրդին սրտակեղեք դրութիւնը, խնդրված էր մեզ ներկա անելէն ազատելու մի-

ջոց, այլապես անխուսափելի էր մեր կործանումը: Իսկ եթե ցամաքային փոխադրութեան կարելիութիւնը կպակսեր, գոնե ռազմամթերք փութացնելին մեզի օդային ճամփով:

1921 մայիսի 18-ին Գըրլավուզի պետական կենտրոնէն ոստիկան մը զորանոց եկավ նամակ մը ձեռքին: Նամակին մեջ մյուսուր Սատեթիին գրած էր. «Հաղարապետ Հազգը բեյ Զեյթունի պատասխանատու իշխանութեան հետ կփափաքի անձամբ տեսակցիլ»:

Ժողովը ակամա ընդառաջեց նամակին, որ ժամանակ շահելու քաղաքականութիւն մըն էր: 1921 մայիսի 19-ին Հազգը բեյ, առանց ուղեկիցի, ժամը 9-ին եկավ մեզ մոտ և հյուրասիրվեցավ հեռագրատունը (զորանոցը արգիլյալ գոտի հռչակած ըլլալուս համար չէինք կրնար զինքը հոն ընդունիլ):

Իսմայիլ Հազգը վաթսունամյա, միջահասակ, կայտառ, լրջախոհ, հմուտ և փորձառու զինվորական մըն էր: Ան Մարաշի զինվորական ատյանի նախագահն էր: Բնիկ պրուսացի, ան կարծես լավատեղյակ էր ամեն բանի և կուզեր մեզ տեղյակ պահել այդ մասին: Օրինակ՝ ան հաղորդեց մեզի Մուսթաֆա Քեմալի հաջողութիւններուն, եվրոպական պետութիւններու երկդիմի քաղաքականութեան մասին:

Ան կ'երևի դիտումնավոր կերպով նման ակնարկութիւններ կընէր՝ մեզ սարսափեցնելու համար: Բայց մենք միշտ վերապահորեն մտիկ կընէինք զինքը. ավելին՝ օղիի դավաթներուն շնորհիվ կուզէինք առավել բան լսել իրադրութեան մասին: Մթնոլորտը տակալ կտաքանար և մեր տեսակցութիւնը ավելի մտերմիկ բնույթ կստանար: Ուղեցինք անդրադառնալ 1920-ի դաշնագրին և Գըրլավուզի դաշմագամին այդ դաշնագրի հանդեպ ցուցաբերած խոստումնազանցութեան: Իսմայիլ Հազգը քրքիջով մը պատասխանեց մեզի. «Հարգելի քաղաքացիներ, սիրելի եղբայրներ, ձեր վիճակը տեսնելով շատ զգացվեցա: Ընտանիքներով հանդերձ այս զորանոցին շորս պատերոն մեջ բնակվելու պարտավորված եք: Անշուշտ որ այս երկու տարվան տնտեսական վիճակը վատթար էր: Լոկ ձեր կյանքին, պատիվին պաշտպանութեանը համար զենք եք վերցուցած, որովհետեւ աչքը իր տեսածէն կվախնա: Մեր անպատիվ նախորդ կառավարութիւնը ձեզ նման աշխատունակ և հավաքատիր ժողովուրդ մը չէ կարողացած կառավարել: Դժբախտաբար հիմա ձեր վիճակը անհույս է, որովհետեւ այսօր մեր հերոս հրամանատարը Մուսթաֆա Քեմալ փաշան, նյութապաշտ Եվրոպայի քաջալերանքով, օրըստօրե մեծ հաջողութիւններ կունենա: Հիմա, սիրելի եղբայրներ, ձեզ ի սրտե կհանձնարարեմ, որ օտարներու խոստումներուն չհավա-

տաք. մեզի ալ, ճիշտը ըսելով, վստահիլը բավական դժվար է: Միայն մեր և ձեր միջև տարբերությունը ա՛յն է, որ մենք մեծամասնություն ըլլալնուս համար դուք ստիպված եք մեզ ենթարկվելու: Մեծ ձուկերը, կրսն միշտ, կուլ կուտան պղտիկ ձուկերը...»:

Արդեն մեզի գաղտնիք չէր իր առաքելության նպատակը: Այնքան խորամանկ աղվես մըն էր ան, որ դարձդարձիկ ճանապարհներով ուզեց մեզի հասկցնել, թե պե՛տք է ենթարկվինք, ուրիշ ճար չկար: Ժողովը, առ ի ձևակերպություն, գնահատեց հյուրին «անկեղծ արտահայտությունները» և երկար կյանք մաղթեց իրեն նման «ազնիվ մարդոց»: Ժողովը շեշտեց, սակայն, թե Գըրլավուզի պաշտոնները չի հարգեր մեր և քեմալական կառավարության ներկայացուցիչներու միջև կնքված գինյալ դաշինքը: Ան հիշեցուց պահականոցին առջև քանի մը օր առաջ գործված ոճիրը, ինչպես անկե առաջ գործվածները, հակառակ անոր, որ մենք դրացի թուրքերուն հանդեպ միշտ բարյացակամ վերաբերմունք ցույց տված էին, մեր բարի դրացնության վայել հարգանքն ու պատիվը չէինք խնայած: Ապա ավելցուցինք. «Համաձայն ձեր խոստովանության ներկա կառավարությունը թեև ոչ կազմակերպյալ մարմին մըն է, սակայն զինված է մինչև ժանիքները. ինչպե՛ս կարելի է, ուրեմն, այս լեռներուն մեջ առանց զենքի պաշտպանվիլ: Մենք միշտ պատրաստ ենք կառավարության հրահանգներուն անսալ և զանոնք իրագործել: Բայց ազնի՛վ հաղարպետ, պիտի խնդրեինք, որ դո՛ւք ևս մեր կացությունը ճշգրիտ ըմբռնեիք»:

Սակայն այդ նենգամիտ թուրքը, որ մարմնացումն էր կեղծավորության, լոկեց և փափագեցավ մեկնիլ, առարկելով որ՝ ժամանակը շատ ուշ է: Նախքան իր մեկնումը ան հեզսորեն փափագ հայտնեց «հերոս Զեյթունը» տեսնելու...: Ծածուկ բան չէր մնացած, այլևս, ամեն ինչ հայտնի էր. բայց ի՛նչ օգուտ... Հարկադրված էինք սիրահոժար համակերպիլ, միմիայն ժամանակ շահելու, մեր հունձքերը ներս տեղափոխելու և նավաբեկյալ մեր ժողովուրդը փրկության գոտի մը հասցնելու ակնկալությամբ:

Իսմայիլ Հազզը վեց ժամ մնացած էր մեզ մոտ, որուն ընթացքին սիրալիր ընդունելություն եղած էր իրեն: Մեկնումի պահուն ան ձիուն վրայն տեսավ Զեյթունի մոխրակույտը և կեղծելով ըսավ. «Անե՛ժք ավերի հեղինակներուն...»:

Ժամը երեքն էր, հրք քանի մը առաջնորդներով ճամփու գրինք զինքը՝ «նորեն կտեսնվինք»-ի փոխադարձ մաղթանքներով: Իրեն ուղեկցողները հետո մեզի պատմեցին, թե խումբը երբ կհասնի Գայմազամի

աղբյուրը, գորանոցի հանդիպակաց բլուրին ետին, «Անհրաժեշտ պետք մը ունիմ» ըսելով, ան ձիեն վար կիջնե և կանցնի քարի մը ետևը: Այնտեղ, «պետք» տեսնելու պատրվակով, դիտակը ձեռքին կսկսի զննել Զեյթունի շրջակա լեռները, ձորերը, դիրքերը:

Հասկաքաղը մոտենալու վրա էր, գարիները սկսած էին դեզնիլ: Ժողովուրդին մեջ ապրելու հավատքը կսկսեր զորանալ, որովհետև այն հաստատ համոզումը ուներ ան, թե զոնե արմտիքի կարիքը պահանջված է: Խեղճ զեյթունցին լոկ հույսերով, երազներով կօրորվե՛ր՝ անձկությամբ վաղվան սպասելով:

Հունիս ամիսն էր: Զեյթունցին հույս ուներ իր հունձքը ներս առնել և «մամա՛, կտոր մը հաց» աղերսող իր մանուկին գոհացում տալ: 1050 հոգի, մինչ այդ, 3—4 կիլո ընդեղենով խառն՝ բաղեղով-բանջարով կգոհանար. կենդանիները մորթված, վերջացած էին: Ժողովուրդը պարտեզները իջած, օրն ի բուն տհաս պտուղ՝ ծիրան, թուփ, սալոր ուտելով ստամոքսը կիաբեր: Շատ հուսահատական էր կյանքը: Թրքական գյուղերեն որևէ բան ապահովել կարելի չէր: Բացի թուրք շեթեններն, սահմանները բռնած զինվորական ջոկատները ամեն կողմ կվիստային՝ արգիլելու համար մեզ, որ թուրք գյուղերեն որևէ բան հայթայթեինք: Բացի ատկե, երկպառակության կործանարար և տնաքանդ որոմը սկսած էր իր սուր, զիշատիչ ժանիքները ցույց տալ: Քանի մը երիտասարդներ իրենց ընտանիքներով քաղաքամեջ հաստատված էին և Ազգային միության հակառակ կշարժեին: Անոնք կսպառնային ժողովուրդին, եթե իրենց գոհացում չտրվեր: Դրացիին կաթնտու կովը կտանեին՝ հորթը կձգեին, այծը կտանեին՝ ուլը կձգեին և այսպես՝ անհամար վատություններ կգործեին, որով ժողովուրդը կտառապեր երկու սուրի մեջ: Ազգային միությունը ամեն ջանք կթափեր այդ մի քանի ավազակները դգաստության հրավերելու համար, բայց իզուր. անոնք ավելի շփացած ու քաջալերված կզգային: Այն ատեն Ազգային միությունը որոշեց հրապարակավ գնդակահարել զանոնք, բայց նման ճգնաժամային պահերու ինչպե՛ս կարելի էր նման որոշում մը ի գործ դնել՝ վերջ տալով հինգ կենսունակ ուժերու: Միությունը ուզեց վերջին փորձ մը ևս կատարել. ան պաշտոն տվավ բժիշկ Ծ. էլմաճյանին և Հովհաննես Սիմոնյանին, որ աշխատին կարգի բերել խռովարարները: 1921 թ. հունիսի 10-ին Ավետիս Մանվելյանի առաջնորդությամբ, այս վերջինները, առանց Ազգային միության լուր տալու, կերթան Ֆոնուզի կողմերը որևէ ուտելիք ապահովելու համար: Հասնելով Ֆոնուզի վերի կողմերը գտնվող ջրազացը, անոնք կփափագին այդտեղ բարձրացող թթենիի ծառերեն իրենց

պարապ ստամոքսը լեցնելու: Բայց թուրք հետախույզ չեթեներ վրա կհասնին և տեղվույն վրա կգնդակահարեն զանոնք:

Այն պահուն, երբ Ազգային միութիւնը խորհրդակցութեան մեջ էր, թե ինչպէս լուծեր օրվան հրատապ հարցերը՝ հունձքը ներս առնելու և ժողովուրդը անոթութեան ճիրաններեն ազատելու մտահոգութեամբ, սահմանապահ խումբ մը տեղեկացուց կենտրոն, թե ճերմակ դրոշակիր մը սահմանին վրա կսպասե, ձեռքը նամակով մը:

Նամակը ստորագրված էր գայմագամ Խալիլ Շեհապեն և Մարաշի ընդհանուր ոստիկանապետ Թեվֆիգեն, ուղղված մեզի՝ Ազգային միութեան: Այդ նամակով կխնդրվեր, որ անհապաղ պատվիրակութիւն մը ուղարկվեր Գրըլավուզ, բանակցութեան համար: Ժողովը միաձայնութեամբ որոշեց Ասատուր Կյուվանեսյանն և Սեդրակ Մարկանյանն բազկացյալ պատվիրակութիւն մը ղրկել: Ուղարկված գրութեան եղանակը շատ խիստ էր և ստիպողական, որով վայրկյանները ճակատագրական էին: Պատվիրակութիւնը հազիվ սահմանը անցած, մշուտուր Սատեթղինի կողմն ներկայացվեցավ հետևյալ անձնավորութեանց. գայմագամ Խալիլ Շեհապ, Մարաշի ընդհանուր ոստիկանապետ Ահմետ Թեվֆիգ, որ պատվիրակութեան նախագահն ու բանակի այդ ճակատի հրամանատարն էր, երկրագործական տնօրեն Գատը Զատե Իհսան և Անգարային՝ սպայակույտի անդամ հարյուրապետ Ահմետ Էտիպ:

Ընդհանուր հրամանատար Ահմետ Թեվֆիգ խոժոռ դեմքով, հիսունը անց, երկայնահասակ թուրք մըն էր: Ան խրոխտ շեշտով մը կըսէ.—

«Թրքական հողերուն մեջ գտնվող բոլոր մահմետականներն ու ոչ մահմետականները թուրք հպատակներ են և ժողովիս որոշած օրենքներուն ենթակա: Դո՛ւք, զեյթունցիներդ ալ, քանի որ այս հողերուն վրա կապրիք և այս հողերու ծնունդ եք, ստիպված եք հնազանդելու Մեծ Ժողովիս հրահանգներուն: Ուրեմն կառավարութեան հրամանն է.

Առ այժմ ձեր բնակած գորանոցը պարպել և Զեյթուն տեղափոխվել: Եվ կամ՝ կառավարութիւնը բնակչութիւնը իր միջոցներով կտեղափոխե Մարաշ: Զեր ձեռքը գտնվող բոլոր զենքերը, առանց բացառութեան, պետք է հանձնեք: Հակառակ պարագային, կառավարութիւնը իր բոլոր կապերը պիտի խզե ձեզի հետ»:

Մեր պատվիրակութիւնը այս սահմուկեցուցիչ հայտարարութեան հետևյալ ձևով կպատասխանէ. «Նման կենսական հարցի մը պատասխանելու լիազորութիւնը չունինք, բայց պատրաստ ենք ձեր վերջնա-

գիրը հաղորդելու մեր պատասխանատու վարչութեան և արդյունքը փոխանցելու ձեզի»:

Նույն պահուն սպայակույտի անդամ հարյուրապետ Ահմետ Էտիպ մեր պատվիրակութեան և ընդհանուր հրամանատարին դիմելով կըսէ. «Եթե երկուստեք համաձայն եք և թույլ կուտաք, ես ևս կփափաքիմ մեր պատվական հայրենակիցներուն ընկերակցիլ՝ երթալ տեսնելու համար ժողովուրդը և անձամբ հայտնելու անոր վարիչներուն մեր կառավարութեան հրահանգները, այսպիսով կատարելու համար մարդկային պարտականութիւն մը»:

Հաջորդ օրը ժամը 10-ին սահմանագլուխ հասած էր Ահմետ Էտիպ՝ շորս դրոշակակիր հեծյալներով, որոնց դիմավորեցին Կյուվանեսյանն ու Մարկանյանը:

Շքերթը դանդաղորեն կդիմեր դեպի գորանոց: Առջևէն՝ մեր երկու առաջնորդները՝ հեծյալ, իրենց թիկնապահներով, ետևէն՝ տեղավոր կարմիր դրոշներով հեծյալ զինվորներ, որոնց մեջտեղը կհառաջանար Ահմետ Էտիպ: Պատերազմական օրենքի համաձայն թուրք սպան պատիվներով ընդունվեցավ և առաջնորդվեցավ հեռագրատուն՝ գորանոցի արևելյան բաժինը: ձորակին եզերքը բարձունքին շինված տունը, ուր կբնակեր մեր Ազգային միութեան փոխատենապետ Հովհաննես Միմոնյանը:

Ահմետ Էտիպ կարգ մը նենգ և կեղծ ձևակերպութիւններն վերջ պարզեց զինվորական ընդհանուր հրամանատար Սալահեդտին բեյի հրամանագիրը, զոր իր պատվիրակութիւնը իրավասու չէր փոփոխութեան ենթարկելու: Մեր խղճալի, տագնապալի կացութիւնը և մանուկներու ճիշերը մեծ տպավորութիւն թողեցին իր վրա: Ան խոստացավ կարելի աջակցութիւնը ընծայել մեզի. հայտնեց՝ թե ինք կողմնակից չէր մեր անձնատվութեան, քանի որ ներկա թուրք կառավարութիւնը անկազմակերպ շրջանի մը մեջ էր, բայց խորհուրդ տվավ մեզի, որ պատվիրակութիւն մը ղրկենք Մարաշ՝ ընդհանուր հրամանատարութեան մոտ, տրված վերջնագրի պայմանները մասամբ մեղմացնելու հույսով: Ան ըսավ, որ Ամերիկյան միսիոնարութեան, Ազգային առաջնորդարանին թուրք անձնավորութեանց միջնորդութիւնները հավանաբար ունենան իրենց բարերար ազդեցութիւնը: Ապա նորեն խոստացավ հարկ եղած աշխատանքը շինայիլ՝ իր ընկերներուն հավանութիւնը առնելու համար: Այդ օրը, այդտեղ, Ահմետ Էտիպ թուրք հարյուրապետը մեզի աեղանակից եղավ և ստեղծեց զվարթ մթնոլորտ մը:

Հաջորդ օրը, հունիսի 17-ին, թղթատար մը եկավ մեզի հաղորդե-

լու, թե հաջորդ առավոտ ոստիկաններու ընկերակցութեամբ պատվիրակութիւն մը թույլատրված է մեկնել Մարաշ: Մենք քաջ համոզված էինք, թե այդ բարբարոսներուն ճիրաններեն ազատելու ելք չկար, բայց ամեն միջոց չէինք խնայեր, որպէսզի ժամանակ շահեինք, կարենալ մեր հունձքերը ներս ամբարելու և սովահար ժողովուրդը մի քիչ վերակենդանացնելու և կազդուրելու համար:

1921 հունիս 17-ի շորեքշաբթի երեկոյան, Ազգային միութիւնը ժողովի կանչեց վերապրող գիտակից և փորձառու հայրենակիցները ու նաև Զեյթուն բնակող ընդդիմադիր ղեկավարները, քննելու համար կացութիւնը: Խառն ժողովը միաձայնութեամբ տվալ հետեւյալ որոշումները.

Թուրք կառավարութեան թելադրանքին ընդառաջել և պատվիրակութիւն մը դրկել Մարաշ: Կարելին ի գործ դնել՝ ժամանակ շահելու համար: Համոզել Ամերիկյան միախոնարութիւնը, որ ծերերը, որբերն ու որբակայրիները, ինչպես նաև անկարները՝ Մարաշ փոխադրվին: Հանրային շահուն դավաճանող, ժողովուրդին հանգիստը խանգարող, իրենց հակաօրինական արարքներով օրվա իշխանութեան ընդդիմացող և զորանոցն դուրս Զեյթուն բնակող խմբակը անմիջապէս զորանոց փոխադրել, որպէսզի, ի շարս այլ հայրենակիցներու, անոնք ևս կատարեն իրենց պարտականութիւնները: Պատվիրակութեան մինչև Մարաշն վերադարձը, ոչ մեկ անհատ պետք չէր մեր սահմաններն դուրս ելլեր առանց իր խմբապետին գիտակցութեան: Զեն ի ձեռին պետք էր սպասել որևէ անակնկալի: Ազգային միութեան լիազորութիւն տրված էր հարմարագոյնը կատարելու:

Հետ խառն ժողովի, Արամի ատենապետութեամբ Միութիւնը իր լիակատար նիստը գումարեց, նշանակելու համար Մարաշ երթալիք պատվիրակութիւնը: Ժամերը արագորեն կսահեին, կանցնեին անզգալաբար, բայց որոշում տալը կոճվարանար, ընտրելիներեն ոչ մեկը վըստահութիւն չունէր թրքական նենգ ու խարդախ դիվանագիտութեանը վրա: Վերջապէս ընտրվեցավ իրենց քաղաքական գործունեութեամբ և կյանքի փորձառութեամբ ծանոթ հինգ անձերն բաղկացալ պատվիրակութիւն մը. անոնցմէ միայն Ասատուր Կյուլվանեսյանը, հանուն ժողովուրդի փրկութեան, ընդունեց այդ դառն բաժակը, Բայց պետք էր գոնե երկու հոգի ևս՝ Կյուլվանեսյանին ընկերակցելու համար: Բայց՝ խնդրանք, վիճակ ձգել և այլն, ապարդշուն կըլլային: Ամբողջ գիշերը, զորանոցին առջև, մարգարանի մարմանդին վրա, պլպլացող աստղերով երկնակամարին տակ, անձնվեր տասը ժողովականները, երկունքի

տաղնապներու մեջ, կցանկանային վերջ մը տալ այս անստույգ կացութեան: Կուզեին տառապակոծ ժողովուրդին փրկութեան լաստ մը գտնել: Բոլորը սիրահոծար կերպով տրամադրված էին այդ ժողովուրդի ազատութեան, բայց ինչպե՞ս վտահիլ այդ խենեշ թուրքին, երբ տակալին թարմ էին անոր գործած նախճիրները, գոյացուցած արցան ժովը:

Արեւելյան հորիզոնը սկսած էր շառագունիլ, երբ մեր անձնազոհ ընկերներն Հարութիւն Գասապյանն ու Վարդան Պալճյանը, նույնպէս մահն արհամարհելով, հոժարեցան Կյուլվանեսյանի բաժակին մասնակից ըլլալ: Հարութիւն Գասապյան, իր նախորդ Մարաշ այցելութեան ատեն ունեցած իր խիզախ արտահայտութիւններուն համար սպառնալիքներ ստացած էր թուրք պետական պաշտոնյաներին, որուն պատճառով ան ենթարկված էր ջղային վիճակի: Որոշումը տրված էր սակայն: Երեք անձնորդ հայրենասերները, վասն իրենց բազմաշարժար հայրենակիցներու փրկութեան, սիրահոծար հանձն առած էին ներկայանալու գահիճներուն: Խորհրդակցութիւններ, կարգադրութիւններ, հանձնարարութիւններ կատարվեցան: Պետք կար նաև երկու խիզախ երիտասարդի, որ ընկերանային մեր անձնվեր պատվիրակներուն: Ժողովի կոչին ընդառաջեցին երկու ինքնազոհ հայրենակիցներ՝ Հարութիւն Տ. Գրիգորյանն ու Հարութիւն Խաչատուրյանը:

Առավոտյան արեւածագին, զորանոցի հրապարակին վրա, փայտաշեն նորակերտ եկեղեցիին առջև դուրս թափած ժողովուրդը, մեծամեծ հույսերով, երազներով տոգորված մաղթանքներ կտեղացներ: Քահանայից դասը հայր Բարթողիմեոսի «պահպանիչով» ու «բարի ճանապարհով» հանդես կուգար: Սրտածմլիկ տեսարան մը պարզված էր, որովհետև պատվիրակները գիտակցաբար կառաջնորդվեին դեպի սպանդանոց: Հրաժեշտի պահուն, համբույրներու ողորումին մեջ, անոնց միակ խնդրանքն էր իրենց սիրելի գործակիցներին, որ համեմայն դեպս հարգվեին մինչև իրենց վերադարձը խառն ժողովին բոլոր որոշումները, որպէսզի կարենային իրենք հարկ եղածին նման բանակցել:

Պատվիրակութիւնը խոստացավ, իր կարելի միջոցներով, բանակցութեան մասին մեղ տեղյակ պահել, իսկ որևէ վտանգի պահուն, իրենց ընկերակցող երիտասարդները պիտի շանային գիշերանց փախուստ տալով հասնիլ Զեյթուն: Պատվիրակները մշակված ծրագիրներով ելան ճամփա: Դեռ Գրըլավուզ չհասած, զեյթունցի քանի մը շարագործներ, հակառակ Ազգային ընդհանուր խառն ժողովի որոշումին և իրենց տված խոստումներուն և զիջումներուն, դարձյալ սկսան իրենց եղբայրատայաց անհաճո պայքարը շարունակել և նույնիսկ Մարաշի պատվիրակութեան

առաքելութունը ձախողեցնելու մասին մտածել: Անոնց կյանքը վտանգելու համար, անոնք սկսան թրքական գյուղերը երթալ, գողութուն և սպանութուններ կատարել: Ազգային միութիւնը փութաց ներկայացուցիչներ (գոկտոր էլմաճյանն ու Հովհաննէս Սիմոնյանը) դրկել, որպէսզի զգաստութեան հրավիրելին շարագործները: Անոնք թելադրեցին անոնց, որ հանրային շահը ամեն բանն վեր նկատեն: Մեծամեծ խոստումներ ըրին և խնդրեցին, որ մինչև պատմիրակութեան Մարաշեն վերադարձը քաղաքեն չհեռանան: Եթէ հազարեն ավելի մարդոց գոյութեան հարցը իրենց համար արժեք չէր ներկայացնէր, գոնե՛ր էրենց ընտանիքներուն, իրենց զավակներուն մեղքնային: Բայց ամեն խնդրանք, զիջողութուն և սպառնալիք իզուր անցան: Անոնք նույնիսկ սպառնացին Ազգային միութիւնը լուծել և նոր իշխանութիւն մը մեջտեղ բերել:

Ազգային միութիւնը, ի լուր այդ հայտարարութիւններուն, հանուն ժողովրդի փրկութեան և Մարաշ դրկված հայրենակիցներու ապահովութեան, ցավ ի սիրտ, ստիպվեցավ իր նախկին որոշումը գործադրել: Ան որոշեց՝ փոխան հինգի, գնդակահարել հելուզակներուն զեկավարը՝ Միքայել Տինկիշյանը, այն հաստատ համոզումով, որ Միքայելի անհետացումով ընկերները զգաստութեան կուգային:

1921 հունիսի 19-ին, ուրբաթ օրը, ատենապետ Արամ Չոլագյանի նախագահութեամբ ժողով մը տեղի ունեցավ եկեղեցիին մեջ: Գլխավոր օրակարգն էր՝ ընդդիմադիրներու անուղղելի ընթացքը: Ժողովի միահամուռ համաձայնութեամբ անմիջապէս գրավոր հրահանգ տրվեցավ հաշեր Միքայել Նորաշխարհյանին, որ զորանոցին դուռն առջև, ամբողջ ժողովուրդին ներկա եղած մեկ պահուն, հելուզակներու զեկավար Միքայել Տինկիշյանը գնդակահարել իբրև դավաճան, իբրև հանրային շահուն և Զեյթունի փրկութեան դեմ գործող շարագործ: Տրված հրամանագիրը խիստ վճռական էր. որևէ մերժում, ընկրկում արդարանալի չէր:

1921 հունիսի 20-ի շաբաթ առավոտյան կանուխ, Միքայել իր երկու ընկերներով զորանոց կելլե և կհանդգնի հայտարարել, թէ Ազգային միութեան տված հրահանգին հակառակ ինք թրքական սահմանները պիտի մեկնի և իր կարելին չպիտի խնայե Մարաշ գացող պատմիրակութեան առաքելութիւնը ձախողեցնելու: Ան կաշխատե՛ր նաև գտնել մի քանի գործակիցներ, անոնց տալով շուշլ խոստումներ: Ազգային միութիւնը, ի տես Միքայելի այդ հախուռն հայտարարութեան, անմիջապէս նոր նիստ կգումարե, և հակառակ իր արդեն արձակած ազդու և վճռական հրամանագիրին, դարձյա՛լ կորոշե վերջին փորձ մըն ալ կատարել, որովհետև նման ճակատագրական պահի մը նույնիսկ մեկ հատիկ երի-

տասարդի մը կյանքը կարևոր էր: Ան պաշտոն տվավ գոկտոր Ե. էլմաճյանին և Վարդան Գասապյանին, որ երթային Միքայելի քով և համոզեին: Բայց, դժբախտաբար, վերջինս իր որոշման մեջ անխախտ մնաց և նույնիսկ սպառնաց Ազգային միութեան, անպատկառորեն հայտարարելով:

«Ես պիտի երթա՛մ, զիս իմ նպատակես շեղեցնող ո՛չ մեկ ուժ գոյութիւն ունի, որոշումս որոշում է, ժամանակ չունիմ, ընկերներս պատրաստ ինձ կսպասեն»: Երկու պատմիրակները, չկարենալով համոզել այդ ընչաքաղց, եսասեր, ժողովրդի արդար իրավունքին յուրացման վարժ ստահակը՝ հուսահատ և ընկճված վերադարձան: Ազգային միութիւնը, այդտեղ նույն վայրկյանին, երկրորդ պաշտոնական հրամանագրով մը, գոկտորին միջոցով հաղորդեց խաշերին, որ առանց ժամանակ կորսընցընելու գործադրե տրված վճիռը. հակառակ պարագային ի՛ր կյանքն էր որ պիտի վտանգվեր:

Միքայել, զորանոցին մեծ դուռն առջև, հրացանը ձեռքին, փամփրջտակալները կրծքին, դաշույնը մեջքին, ամբարտավան կեցվածքով մը, հոժ բազմութեան մը ներկայութեան, ծաղրական ակնարկներ կուղղեր Ազգային միութեան հասցեին, երբ խաշեր, հրացանը ձեռքին, իր բնական հարկարածի սանդուխներեն վար կիջնէր՝ տխուր և մտածկոտ: Ան ներքնապես գալարումներ, հուզումներ, ալեկոծումներ կունենար: Իսկապէս շատ լեղի էր իրեն մատուցված բաժակը: Բայց կարելի՞ էր միթէ չհարգել իր հարազատ զեկավարութեան հրահանգները, զեկավարութիւն՝ որուն միա՛կ սկզբունքը եղած էր վերապրող հայրենակիցները ստույգ նավաբեկումն ազատել և դանոնք առաջնորդել փրկութեան գոտի մը: Խաշեր լսեց Միքայելի սպառնացայտ լուսանքները՝ դուռն սեմին կայնած: Ան քայլերը՝ արագացուց և առնական ձայնով մը գոռաց. «Դավաճա՛ն, աղտո՛տ արարած, քաջութիւնը խեղճ հավն ու կովը գողնալը չէ, եթէ քաջութիւն ունիս և տղամարդ ես, դիմադրե, կոնակեդ դաշունահարելը՝ ինձի վայել չէ»: Միքայել գետին տապալված էր, երբ խաշեր երկրորդ գնդակով մը անշնչացուց զայն: Խաշեր Միքայելի զենքն առած կվերադառնար տուն, երբ Ազգային միութիւնը, իր ամբողջ կազմով զորանոցի բակը ելած խմբապետներուն կհրահանգե՛ր, որ այդ ուղղութեամբ որևէ խոսակցութիւն չըլլա և երբ քննադատող մը գտնվի, իսկույն զայն զինաթափ ընելով բանտ առաջնորդեն: Միքայելի ընկերները կամ համախոհները շատոնց ծակամուտ եղած էին: Ամբողջ բնակչութիւնը օրհնութիւն կկարգար Ազգային միութեան, որ նման վարակիչ մանրեհ մը ազատած էր-ժողովուրդը:

Միքայելին դիակը այդտեղ երեք ժամ անթաղ մնաց: Քանի մը ծանոթ անհատներու խնդրանքով, Ազգային միութիւնը հրաման տվով Չորու Խաչերին՝ որ մեռնողի բեռայրն էր, գերեզմանոցէն հեռու, առանց քահանայի՝ տանի և թաղե զայն: Շուտով Միքայելի ընկերները քաղաքը լքեցին և զորանոց եկան, հայտնելով իրենց զոջումը:

Ներքին մասնագութիւնները մասամբ փարատած էին: Ազգային միութիւնը նոր ծրագիրներ կործար ժողովուրդին պարենավորման համար: Ան կկտրհեր բոլոր անկարները՝ ծեր, պառավ, մանուկ, աղջիկ՝ ազատել սպառնացող արհաւիրքէն: Այդ մասին շերքեզ Չոճո Յուսուֆի միջոցով հաղորդված էր Ատանա՝ Հայ ազգային մարմիններուն: Մարաշ գացող պատվիրակները և այդ մասին կարելի եղած աշխատանքը պիտի թափեին, ամերիկյան ներկայացուցչութիւն հետ համախորհուրդ: Մարաշէն եկած լուրերը շատ հուսատու էին՝ ըստ դրացի թուրք աղբյուրներու, բայց մերիներէն ոչ մէկ լուր կար պաշտոնապես, եթէ քանի մը օր ևս խաղաղ անցներ, հունձքերէն բավական պիտի կարենայինք օգտվիլ:

1921 հունիսի 22-ին, երկուշաբթի առտուն կանուխ, արեւելյան սահմանապահները տեղեկացուցին, թէ շորս ձիավորներ սահմանն անցած սրարշավ կուգային դեպի մեզ: Մեր պատվիրակներն էին: Իրենց հետ էր Խրլագյան Ռաֆայելը, որ կներկայացներ կառավարութիւնն ու ամերիկյան միսիոնարութիւնը: Ան միջահասակ, նիհարակազմ, հազիվ քառասուն տարիներ բոլորած, հասուն և փորձված մեկու մը տպավորութիւնը կթողուր: Մարաշի ընդհանուր հրամանատարութիւնը իրեն հանձնած էր այս փափուկ գործը՝ Զեյթուն երթալու և համոզելու ժողովուրդը, որ անձնատուր ըլլա: Իբրև այդ աշխատանքին վարձատրութիւն, ան իր եղբոր հետ՝ որ մեզ մոտ էր՝ Մարաշ կրնար վերադառնալ:

Մեր անձնագոհ պատվիրակներուն տխուր և ընկճված երևույթը շատ բան կարտացոլեցներ: Բացահայտ կերևեր անոնց ներքին տազնապը: Ո՞վ գիտե, անոնք ի՞նչ դժնդակ փուլերե անցած էին...: Ռաֆայել իր ինքնութիւնն ու կառավարութիւն կողմն իրեն տրված լիազորագիրը ներկայացնելի ետք, Ազգային միութիւն ատենապետէն արտոնութիւն խնդրեց, որ իրեն հանձնված գրութիւնը ժողովուրդին կարդա:

Ատենապետին արտոնութիւնը ստանալի վերջ ան կարդաց.

«Զեյթունցի հարգելի հայրենակիցներուս. բանակի հրամանատարութիւնէն հասած հրամանին համաձայն,

1. Զեյթունի զորանոցը բնակող բոլոր ժողովուրդը զորանոցը պարպելով պետք է որ երթա և բնակի քաղաքին մեջ գտնվող տուները և

կամ կառավարութիւն միջոցով ապահով կերպով Մարաշ տեղափոխվի:

2. Ժողովուրդին քով գտնված զենքերը առանց բացառութիւն հարկ է որ Գրըլավուզի շրջանի ռազմական կենտրոնին հանձնվին:

Սույն գործողութիւնց համար ձեզի կուտամ վեց ժամ պայմանաժամ:

Անմեղ և անձնատուր ժողովուրդին ոչ մէկ պատիժ:

Թրքական բանակի ընդհանուր հրամանատար՝ Սաատեթդին»:

Մեր պատվիրակները ուղղակի բանտ առաջնորդված էին: Իրենց բողոքը անլսելի մնացած էր: Միայն Հասան Գատը Զատե էֆենդիի միջնորդութիւնը Ասատուր Կյուվանեսյանը կրցած էր բանտէն դուրս ելլել և պետք եղած տեղերը դիմել:

Հունիսի 21-ի կիրակի օրը բոլորը բանտէն դուրս հանված էին: Հայրենիք վերադարձին՝ իրենց կրնկերանար՝ կազմ ու պատրաստ, մինչև ժանիքները զինված, զնդացիներով, թնդանոթներով 5000 հոգինոց բանակ մը, և նաև ինչպես գիտենք՝ Ռաֆայել Խրլագյանը, որ իրենց հայտնած էր իր առաքելութիւնն և պատակը: Իրիկնամուտին բոլորը միասին կհասնին Գրըլավուզ, ուրկե զինվորական հրամանատարութիւնը չէր թույլատրած, որ նույն գիշերը զորանոց գային:

Հրամանատարը, մերիներուն ներկայութիւն, հարկ եղած կարգադրութիւնները ըրած էր: Ան ամեն կողմ, տեղացի թուրքերու առաջնորդութիւնը կարևոր դիրքերու վրա զինվոր զրկած էր: Զեյթունը և զորանոցը պաշարված էին 8—10 հազար կանոնավոր զինվորներով, որոնք զինված էին արդիական զենքերով:

Բացի ընդհանուր հրամանատար Սաատեթդին բեյի գրութիւնէն, նամակներ ստացված էին նաև ամերիկյան ներկայացուցիչ մատրը Լայմընէն, Հասան Գատը Զատե Հաճի էֆենդիէն և Մարաշի հոգևոր պետերէն: Ստացված նամակները բոլորն ալ միեւնույն իմաստն ունեին. անոնք կյանքի ապահովութիւն կերաշխավորեին և կթելադրեին, որ Մարաշ փոխադրվինք:

Հրապարակին վրա ոչ մէկ շարժում, ոչ մէկ մարդկային հետք. բոլորը պատնէշներու ետին, զեն ի ձեռին որոշած էին իրենց կյանքը աժան շժախել: Ազգային միութիւնը ժողով գումարեց և հետևյալ եզրակացութիւն եկավ. «Պետք է ժողովուրդը ազատ ձգել, ամեն ոք իր ճակատագիրը թող ինք որոշե», ապագա պատմութիւն ատշև պատասխանատու շրջալու համար»:

Փողի ազդարարութիւնը բոլոր ժողովուրդը զորանոցի արեւելյան մեծ բակին առջև եկեղեցի փութաց: Հարութիւն Գասապյան բեմ բարձրա-

ցամ իրենց առաքելութեան արդշունքը և Ազգային միութեան որոշումը հաղորդելու համար համախմբված հանրութեան.

— Իմ սիրելի, իմ պատվական հայրենակիցներ, ահա այսօր ճիշտ երկու տարի եղավ, որ յաթաղանեն մազապուրծ եկանք մեր պապենական քարուքանդ օջախը վերաշինելու, բայց, դժբախտաբար, մեր դարավոր թշնամին անհանգստացած մեր խաղաղ վիճակեն, մեր ապրելու բուռն տենչեն, որոշեց անգամ մըն ալ լախտը իջեցնել մեր զլխուն: Երկու տարի ե ի վեր, մենք՝ անոթի, ծարավ, մերկ, բոպիկ, համանդամ խորտիկի փոխարեն ընտրելով բաղեղն ու բանջարը, առանց հացի և աղի, ապագա մեծ հույսերով, մեծ երազներով կօրորվեինք: Սակայն այսօր բեմեն, արյունը սրտիս և արցունքը աչքերուս ձեզ պիտի հաղորդեմ, թե այս դժնակ կյանքն անգամ մեզմե պիտի խլվի: Անհագ թշնամին մեր դռները ափ առած, կուգե մեր աղատութունը, կյանքը, պատիվն ու ինչքը բեռնագրավել: Մարաշ գացինք, ամեն դուռ դարկինք, լաց ու կոծով մեր խնդրանքը ներկայացուցինք, տառապեցանք, հինգ օր բանտի խոնավ նկուղին մեջ շարշարվեցանք, բայց որևէ հույսի նշույլ չկրցանք տեսնել: Ամեն կողմ խավար ու մութ է: Ահա հիմա ան եկեր մեր դռները ափ է առեր, պղծելով մեր պապերուն հույսն ու ապավիճը եղող լեռները: Իմ սիրելի գործակիցներուս հետ երկու տարի, զիշեր-ցերեկ, մեծ զոհողութեամբ ամեն դժվարութեան կուրծք տվինք, մեր հայրենիքի վերապարող բոլոր բեկորները փրկութեան գոտի մը հասցնելու համար, բայց ցավով պիտի ըսեմ, թե մեր աշխատանքը կիսատ մնաց: Որով Ազգային միութեանը, իր վերջին նիստով, հետ երկար խորհրդակցութեան և բուռն վիճաբանութեանն ետ, ճարահատ, երկու ելք գտավ: Առաջինը՝ մնալ գորանոց, զենքը ձեռքին, պապենական հողին վրա և հայրենիքի տուրքի բաժինը լիուլի վճարել, ի հարկին նահատակվելով: Երկրորդը՝ թշնամիին հանձնվիլ՝ թուրք ընդհանուր հրամանատարութեան, ամերիկյան ներկայացուցչութեան և ազգային հոգևոր իշխանութեանց կրկնակի՝ երաշխիքներուն անսալով: Ամեն ոք իր ճակատագիրը ի՛նք թող վճռե: Գալով ինձի, ես կնախընտրեմ իմ պապենական հողին վրա իմ պապերու աճյունով շաղախել իմ արյունս: Բայց, ստիպված անձնատուր պիտի ըլլամ, քանի ֆիզիկապես ի վիճակի չեմ կուլելու:

Ապա բեմ ելավ մեր սիրելի առենապետ Արամը, տխուր և հուզված:

— Սիրելի և պաշտելի հայրենակիցներ, մեր պատվական ընկերը Հարություն Գասապյան, իր կուռ խոսքերով կրցավ սգակիր Միութեան թարգմանը հանդիսանալ: Միայն երկու խոսք ավելցնեմ իմ և ընկերներուս կողմե: Նախ՝ շնորհակալութուն կհայտնեմ մեր Միութեան հան-

դեպ ցուց տրված ձեր համակրանքին և կարգապահութեան համար: Երկրորդը՝ ընդունեցեք մեր սրտաբուխ մաղթանքները, երբոր մեկնիք այստեղեն ու յուրաքանչյուրը ուղղութեան մը հետևիք: Ամեն մարդ ազատ է մեկնելու, որևէ արգելք չկա, բայց միայն կխնդրեմ, որ իրենց քով գրտնըվող զենքը, փամփուշտները և այլ ռազմական պիտույքները հանձնեն պահակ խմբապետին:

Արևելյան մեծ դուռն հսկողութունը հանձնված էր խմբապետ Սեդրակ Մարկանյանին, որպեսզի որևէ մեկը, հակառակ տրված հրահանգին, չհանդգնի զենք փախցնել: Էմանվել Պարութեանը, հակառակ կանխազգուշութեան, կրցած էր իր զենքը հետը տանիլ: Մարաշ գացող պատվիրակութեան նախագահը՝ Ասատուր Կյուլվանեսյան, առաջին մեկնողը եղավ իր ընտանիքով, իրեն տրված խոստումներուն վստահելով: Հարություն Գասապյան ևս իրեն հետևեցավ: Որով, ժողովուրդը տեսնելով երկու պատվիրակներուն մեկնումը, սկսավ ունեցած-չունեցածը շալակը առնել և մեկնիլ զեպի թշնամի սահմանը:

Տեսարանը շատ սրտաճմլիկ էր: Ինչ-ինչ հույսերով ու երազներով՝ Արաբիս կիզիչ և ամայի անապատներեն, թուրքական դավերեն մազապուրծ, մեր պապենական պաշտելի օջախը վերադարձած էինք, շիջած բոցը վերարծարծելու, մեր երազներն իրականացնելու համար: Ապա, երկու տարի, անպատմելի զոհողութեանն երով, անոթի, ծարավ, մերկ, բոպիկ՝ այդ բռնակալութեան ամբողջին մեջ, մեր սրտահատորներուն, հայրենակիցներուն հետ կողք-կողքի անցուցած էինք, բայց այսօր ակամա կբաժնվեինք իրարմե և նորեն ձեռք կառնեինք պանդխտութեան պիծյալ ցուպը:

Ազգային իշխանութեանը, ականատես ահեղի տեսարանին, անակրեկալի եկավ: Ժողովուրդին երեք քառորդ մասը մեկնած էր, զորանոցը գրեթե պարպված: Շատերը որոշեցին իրենց ընտանիքները խառնել մեծամասնութեան, որովհետև, հանձնվողներուն կյանքը՝ ըստ պատվիրակներու հայտարարութեան՝ ավելի ապահով էր, մինչ մնացորդները դատապարտված էին անխուսափելի մահվան:

Ազգային միութեան անդամները ևս իրենց ընտանիքները ղրկեցին, հակառակ անոր, որ խիստ դժվար էր իրենց համար սրտահատորները հանձնել դարավոր դահիճին: Մյուս կողմե, եթե իրենց քով պահեին զանոնք, ինչպե՞ս լեռ պիտի փոխադրեին: Ո՛ւր պահել և ինչպե՞ս պարենավորել: Սպանե՞լ զանոնք... Միշտ խղճի խայթ պիտի ըլլային մեզի համար... Այսպես, բոլոր զեյթունցի կիներն ու աղջիկները, ծերերն ու երեխաները ուղարկվեցան Մարաշ: Պայմանաժամը լրացած էր ար-

դեն: Թուրք բանակը եկած էր ու մեր դիմացի Կոմանդան Թահսինի գե-
րեզմանին վայրը, ձորակին արևելյան կողմը, մեզմե հազիվ 100 մետր
հեռու դիրք բռնած էր՝ մեկնողներու եռուզեռն օգտվելով: Մայրս՝ Կա-
տար, ի տես մեր հուսահատ և վարանտ կեցվածքին և ժողովուրդին
սրտակեղեք կացութեանը, առնական շեշտով մը իր մոտ կանչեց մեզ
ու ըսավ. «Պետք է Կատարը և Վերժինը ղրկեք պղտիկներով (Կատարը
տողերս գրողի կիսն էր, իսկ Վերժինը՝ եղբորս Ռուբենին): Կատարին
գիրկը կար միամյա Նազարեթը, իսկ Վերժինին՝ եռամյա Նվարդը: «Իսկ
ես և դուք, — շարունակեց մայրս, — չորս տղաքս պիտի պայքարինք թըշ-
նամիին դեմ, մինչև մեր արյան վերջին կաթիլը: Մեր հայրենիքը, մեր
պաշտելի Զեյթունը դարերու ընթացքին նման տագնապալի պահեր շատ
անցուցած է: 1895-ին, պաշտելի ամուսինիս կողքին, ես ականատես
եղա ճակատագրական օրերու, սակայն շնորհիվ մեր ջանքերուն մենք
միշտ հաղթող դուրս ելած ենք: Քաջ եղեք, չլլա որ ժողովուրդին դասա-
լքութունը տեսնելով հուսահատիք: Վատ մի ըլլաք: Ձեր նախնյաց ար-
ժանավոր դավակը եղեք»:

Եղբայրս՝ Ռուբեն մորս խոսքը ընդմիջելով ըսավ. «Մայրիկ, իմ
անուշիկ մայրիկ, մենք երբեք հուսահատած չենք: Հուսահատութիւնը
վատերուն գործն է: Մեր նախնյաց՝ Նորաշխարհյաններուն արյունը եր-
բեք չի թուլատրեր թշնամիին առջև ծունկի գալ: Մենք որոշած ենք
մեր դիակը Զեյթունի նվիրական լեռներուն վրա գիշատիչ գազաննե-
րուն կեր դարձնել, քան հանձնվիլ թշնամիին, իսկ մեր արյունը մեր
նախնյաց խնկելի աճյուններուն հետ խառնելով՝ շողախ պատրաստել
նոր հայրենիքի մը կերտումին համար: Բայց և այնպես, կարելի՞ է եր-
կու դեռատի հարսնեքը՝ Կատարն ու Վերժինը առանձին ղրկել իրենց
պղտիկներով: Ո՞վ պիտի կարենա անոնց պաշտպան ըլլալ: Քանի հարձար
կտեսնես, որ անոնք բաժնվին, լավ չը՛լար, որ դուն ևս ընկերանա
իրենց. թեպետ բացակայութիւնդ մեզ մեծ ցավ պիտի պատճառե»: Մայրս՝
խելահաս, ուշիմ, փորձառու, եղբորս խնդրանքը չուղելով ըն-
դունեց, որովհետև համակ անձնվիրութեան և անձնազոհութեան մարմ-
նացումն էր. ան ամբողջ 40 տարի մեր ընտանիքին ուրախութեան ու
ցավին մասնակից եղած, տանջված ու տառապած կին մըն էր. հան-
գուցյալ հորս ամենափոթորկահուզ օրերուն ան եղած էր անոր խորհրդ-
դատուն և զենքի ընկերը: Ան իսկույն իր խոսքի տպավորութեան անդ-
րադառնալով պատասխանեց. «Հարսներուս երթալը ես առաջարկեցի,
ուստի պետք է որ ընկերանամ իրենց, անոնց պաշտպանութեան և հո-
գածութեան համար, թեպետ քաջ գիտակ թշնամիին դիմացին ծրագրին:

Մի մերժեք միայն երբ առաջարկեմ, որ ձեր պղտիկ եղբայրը՝ Ավետի-
քը իմ քովս մնա, գոնե անոր ներկայութեանը իմ մորմոքայլ սրտիս
սպեղանի մը, մխիթարութեան մը կըլլա»:

Ավետիքը, մեր ամենապղտիկ եղբայրը, հազիվ 15 գարուններ բո-
լորած, կայտառ, ուշիմ, գեղատիպ պատանի մըն էր: Ատրճանակը և
դաշույնը մեջքին, ան կազմ ու պատրաստ մեզ միանալու կպատրաստ-
վեր: Երբ լսեց մորս առաջարկը, սաստիկ վրդովվեցավ և աղբսելով
ըսավ. «Միրելի եղբայրներս, ես ձեզմե չեմ բաժնվիր, ես ձեզի ոչ թե
ծանրութեան, այլ օգտակար կըլլամ (ան Արամին քով զինագործու-
թիւն սորված էր). մի՛ թողուք, որ մարդահոջ գազանին կեր դառնամ»...

Մեկ կողմե պաշտելի մորս առաջարկը, մյուս կողմե թանկագին
եղբորս թախանձանքը, մեզ անելի մատնեցին: Արդուք ո՞ր մեկ կենդանի
արարածը նման ճակատագրական պահերու կարող է բնականոն որոշ-
ման մը գալ: Ինչպե՞ս կարելի էր մոր մը վերջին փափաքը մերժել կամ
եղբոր մը վերջին խնդրանքը անտեսել: Փոթորկահուզ մեր ուղեղը ան-
կարող էր իր հավասարակշռութիւնը պահել. երկու եղբայր դեմ դիմաց
քարացած մնացած էինք: Այդ միջոցին երրորդ եղբայրս՝ Մարկոս, 18
գարուններ բոլորած երիտասարդ մը, պարթև հասակով, վայելչակազմ,
մոսին հրացանը ձեռքին և երկսայրի դաշույնը մեջքին, պատնեշը ձգե-
լով եկավ պահ մը մեզ մոտ, իր մոր համբույրը առնելու և վերջին հրա-
ժեշտը տալու համար: Այդ պահուն մեզ մտահոգող խնդրույն տեղեկա-
նալով ան ըսավ. «Թե՛ պաշտելի մայրս և թե՛ պատվական սիրելի եղ-
բայրս երկուքն ալ իրավունք ունին: Թրքական կառավարողներուն վըս-
տահիլը կատարյալ հիմարութեան է: Անցյալը՝ ոչ այս ազգին և ոչ ալ
մանավանդ մեր գերդաստանին դաս չէ եղած, ես ոչ թե մորս և եղբորս,
այլ նույնիսկ հարսներուն՝ Կատարին և Վերժինին ալ երթալուն կողմ-
նակից չեմ, նախընտրելի է մեր պատիվը մեր ձեռքով մաքրագործել,
բայց քանի որ մորս հավանութեամբ այդ որոշման եկած եք, պիտի
խնդրեմ ձեզմե, որ եղբորս Ավետիքին թուլատրեք, որ մորս հետ երթա:
Կխնդրեմ նաև թանկագին եղբորմես՝ Ավետիքին, որ մորս փափաքը
չմերժե, ընկերանա իրեն և ճակատագրին համակերպի»:

Ժամանակը կսահեր և տրված պայմանաժամը կլրանար: Թրքական
բանակը ժողովուրդին խառնիճաղանճ կացութեանն օգտվելով բավա-
կան հառաջացած էր, պետք էր աճապարել: Ավետիք, մեր թանկագին
եղբայրը, իմ և եղբայրներուս վիզերուն փաթթված, սկսավ անհագորեն
համբուրել մեզ՝ ըսելով. «Ես կերթամ մորս և ձեր խոսքերը ինձ համար
նվիրական են»:

Մայրս, առնականորեն, առանց հուզումի, առանց զգացվելու, կարգավ բոլորս իր կուրծքին վրա սեղմելով համբուրեց և ըսավ. «Իմ անգին զավակներս, իմ աննման ձագուկներս, իմ աչքիս լույսը և սրտիս հույսը, իմ միակ պատվերը ձեզի հետևյալն է. ձեր պարտականություն մեզ մի թերանաք, քաջ եղեք, մի խնայեք թշնամիին և երբեք խտրություն մի դնեք: Աստված պահե և խնայե բոլորիդ, կաթս հալալ ձեզի»:

Չորանոցին մեջ մեր բոլոր զինակիրներուն համար բաժանումի նույն սրտածմբիկ արարողություններն էին որ տեղի կունենային: Բաժանումը վերջ գտած, մեր սիրելիները հանդիպակաց բլուրը անցնելով անհայտացած էին: Միայն հորեղբորորդույս Խաչերին կինը և Լևոն Եգեկիելյանի քույրը մնացած էին մեզ հետ, երկուքն ալ մահը ավելի նախընտրելով, չէին ուզած բաժնվիլ իրենց սիրելիներեն:

Խմբապետները, բոլորն ալ կազմ ու պատրաստ, իրենց պարտականություն գլուխն էին: Բուն զորանոցեն դուրս երկու կարևոր դիրք ունեինք իրարու միացած: Չորս խումբ՝ զորանոցին, իսկ երկու խումբ ալ՝ հեռագրատան պաշտպանության համար հատկացված էր:

Ինչպես մեր, նույնպես ալ թշնամիին կողմը տեղափոխություններ, շարժումներ կտեսնվեին: Արևմտյան կողմեն թշնամին հասած էր Զեյթուն, հյուսիսեն՝ վանք և Փիսիր, իսկ արևելքեն՝ Կոմանդան Թահսինի գերեզմանը: Հայտնի էր, որ ուժեր կհասնեին և դիրքերը կամրացվեին: Թրքական մահիկը կծածաներ Տեր Կարապետենց այգետան վրա. հոն էր բանակատեղին, մեզմե հազիվ կես ժամ հեռու: Ամեն կողմ լուսթյուն, ամայություն: Ազդարարված էր խմբապետներուն նախահարձակ չլլալ, որովհետև մեր ռազմամթերքը սակավ էր, և զուր տեղ պետք չէր վատնիլ այն: Մերիներուն մեկնումեն մեկ ժամ ետք, Տեր Կարապետենց այգիի տան առջևի ճամփային ճերմակ դրոշակակիր մը երևցավ, որ դեպի մեզ կուգար: Մերոնք դրոշակակիրին ձեռքեն գրություն մը առին, որ գրված էր հրամանատարին կողմե.

Գրության բովանդակությունը հետևյալն էր.

«Զեյթունի գլխավորներուն,

Չորանոցը գտնվող և շհանձնվող անձերը պիտի բնաջնջեմ և զորանոցը ռմբակոծելով երեք ժամվան մեջ պիտի քանդեմ: Կամ զորանոցը անմիջապես պարպելով կհանձնվիք և կամ սահմանեն դուրս կելլեք: Վերջին պարագային հարձակման շպիտի ենթարկվիք, վստահ եղեք:

Զեյթունի ճակատի հրամանատար
Անմետ Թեվֆիգ:

Մեր պատասխանը եղավ.

«Ճակատի հրամանատարության,

Չորանոցը հավաքված բոլոր հայրենակիցները թրքական արյունարբու ճիրաններեն ազատած, մեր հայրենիքը վերադարձած էինք: Ձեր տված խոստումը մեզ մահե չի փրկեր: Երկրորդ՝ մեր ընտանիքներուն ոչնչացումին հետ հաշտված ենք:

Զեյթունի պատերազմական հրամանատարություն»:

Հազիվ պատվիրակները բլուրը անցած էին, երբ հրամանատարը, քանի մը վատագիներու ցուցմունքով կատարած և մուկեզած, 150 կին և մանուկ կվերադարձնե: Մայրս՝ փորձառու կին, կրցած էր այդ վատագի հայերու և նաև շրջակա թուրքերու ուշադրութենեն խուսափիլ և Ավետիքի, Կատարի ու պզտիկ Նազարեթի հետ հաջողած էր մնալ Մարաշ գացող կարավանին մեջ. բայց եղբորս՝ Ռուբենին հարսը՝ Վերծինը իր պզտիկ Նվարդիկին և մորը հետ վերադարձված էր. անոնք հիշյալ 150 հոգիին մեջ էին: Վերադարձողները հազիվ զորանոց հասած կրակի ազդանշանը արվեցավ թշնամիին կողմ՝ թնդանոթի հարվածով մը: Թուրք զինվորները, առիթն օգտվելով, եկած և արևելյան կողմը, ձոթակին եղերքը դիրք բռնած էին:

Կռիվը երկուստեք ահռելի էր: Թշնամին երեք թնդանոթ բերեք ու զետեղեր էր արևելյան և հյուսիսային դիրքերը: Թնդանոթները և զրնդացիները անդադար կգոռային, ռումբերն ու զնդակները կարկուտի պես կտեղային:

Չորանոցին հաստ պատերը կսարսուային գերմանական թնդանոթներեն, անկյունաքարերը սկսած էին ձեղքրտիլ և ճաթոտիլ: Մանավանդ հյուսիս-արևելյան մասը, «Ալեքսանենց բարդիին» վարի կողմը «Գաթըն աղբյուր» ըսված վայրը՝ մոտ 5 կիլոմետր հեռու զետեղված թնդանոթին ռումբերը մեծ ավերներ կգործեին. անոնք թե կքանդեին և թե կայրեին: Մարտիկները ծուխեն ու մուխեն խանձած, անձանաչելի դարձած էին: Հեռագրատան վերի պահականոցը անգործածելի դարձած էր և զայն պաշտպանելը համազոր էր հիմարության: Բայց զորանոցը հանձնել կարելի չէր, որով մեր մարտիկները մահը արհամարհելով, իրենց կարելին կնեին թշնամիին զգացնելու, որ ան պաշտպանված է:

Չորեղբորս որդին՝ Խաչոն և Նազարեթ Աշուկյանը, երկու ռազմիկներ, առանց խմբապետին գիտակցության կփութան առաջ, այդ վստահ գալի վայրը իրենց պարտականությունը կատարելու համար: Հաջող իրենց առաքելության մեջ, վերադարձին, հեռագրատան խրամի անցքի

պահակը՝ Ֆոնուզցի Մինասը, ի տես իսաղոյին և Նազարեթին, թուրք զինվոր կարծելով զանոնք կահաբեկե և հրացանին բլթակը կբաշե. այդպիսով իսաղոն եղբայրական անողոք գնդակին զոհ կերթա: Ան հազիվ 35 գարուններ բոլորած, հաղթանդամ և փորձառու, Սարգիս հորեղբորս անդրանիկ զավակն էր: Մեծ հույսերով և երազներով վերադարձած էր հայրենիք, կորսնցնելի ետք ծնողքը, կինը, զավակները, եղբայրը և քույրը: Իր միակ երազն էր այդ անգին կորուստները դարմանել, բայց ավաղ... Անոր մահը մեզ սահմակեցուց, անկարելի էր չփոխարինել, բայց... Իր ինկած տեղը՝ հեռագրատան հյուսիս-արևմտյան անկյունը մեր վերջին համբույրը դնելով իր անարատ ճակատին, հանձնեցինք զինքը հողին: Օրը սկսած էր տարածամիլ, արևը իր հրաժեշտը կուտար: Մարտիկները մարտկոցե մարտկոց, պատնեշե պատնեշ, ռումբերու և գնդակներու տեղատարափին տակ՝ նոթի, ծարավ, նույնիսկ բնության պարզեած ամենօրյա բաղեղեն և բանջարեն ալ զրկված, անճանաչելի դարձած էին: Թեև թնդանոթի որոտը այլևս դադրած էր, բայց թուրք զինվորը իր պաշարումը ավելի խտացուցած էր: Պետք էր անպայման ճար մը, միջոց մը գտնել դուրս գալու համար:

Հորանոցին շորս դռներեն երկուքը բոլորովին գոցված էին, մնացած երկուքն ալ արևմտյանեն հազիվ անցք մը ձգված էր, որով միայն արեւիկյան մեծ դուռն էր, որ կամարին տակ գոցված, ամբողջութեամբ բաց կամար և որուն հակողութունը հանձնված էր Ռուբենին և իսաղոյին: Արեւմտյանը՝ Սեդրակ Մարկանյանին, իսկ հեռագրատունը՝ Հովհաննես Միմոնյանին:

Հորանոցը ուներ 375 մարտկոց, իսկ հեռագրատունն ու շրջակա պատնեշները՝ 100, ընդամենը 475 մարտկոց: Ամբողջ մեր ունեցած մավղեր հրացանները 104 հատ էին: Տեղական չազմազը հրացաններեն ունեինք 145 հատ, որով հազիվ երկու մարտկոցին մեկ զենք բաժին կիշնար: Խստիվ հրահանգված էր ռազմամթերքը խնայողութեամբ գործածել: Ազգային միութունը, ի տես այս ահուկի հարձակումներուն և մեր քաջերուն գերմարդկային դիմադրության, ժողովի կանչեց բոլոր խմբապետները, ռազմիկները, փորձառու անհատները: Ան կացութիւնը պարզելի հետո դիմեց անոնց կարծիքին: Երկու բանաձև անցավ օրակարգին մեջ.

ա) Հաշտ կառավարութեան անբաղձալի և միաժամանակ վարժ մարզիկներ, ընդամենը 45—50 երիտասարդ, պետք է անմիջապես դուրս ելլեն և իրենց պապենական լեռներուն վրա շարունակեն կռիւլը:

բ) Առանց խտրութեան, բոլորը միասին պետք է գրոհ տան, զորա-

նոցեն դուրս ելլեն և լեռները ապաստանին: Վիճաբանութիւնները այնքան սուր դարձան, որ կարելի չեղավ եղրակացութեան մը հանգիլ, որովհետև դուրսը, զորանոցին բակը բոլորը համախմբված կպաղատեին. «Ձեզ հետ միասին տարեք, վատ թշնամիին մի հանձնեք, սպանեցեք»: Թուրք զինվորը, շատ հայմանական է, ներքին խառնակ կացութիւնը զգացած և կամ հրացանաձգութեան լուրթենեն օգտված, եկած, հասած էր արևմտյան պատերուն: Անմիջապես որ իմացվեցավ թշնամիին հառաջխաղացքը, վերջ տրվեցավ խորհրդակցութեան, ամեն ոք փութաց իր դիրքը պաշտպանելու, իսկ խումբ մը կտրիճներ, Սեդրակ Մարկանյանի ղեկավարութեամբ, դաշույնները մերկացուցած դուրս խոյացան և հաջողեցան թշնամին հեռացնել մեր պատերեն:

Արեւիկյան խմբապետներուն հրահանգվեցավ, որ զորանոցի մեծ դռան մոտ, մարզարանին վարի կողմը, ավազկալցիներու բնակութեան համար շինված տունները հրկիզվին: Կարգադրվեցավ այրել նաև բակին առջև հրապարակին վրա՝ Հ. Բ. Ը. Միութեան Զեյթունի մասնաճյուղին կողմի շինված փայտաշեն եկեղեցին ու վարժարանը: Հրահանգը անմիջապես գործադրված էր, և այնքան զոհողութիւններով մեջտեղ բերված շինութիւնները մի քանի ժամվան մեջ հրո ճարակ դարձած, մոխրի վերածված էին:

Արշալույս էր, Պերդնկայի կատարեն արևը կզփկամակեր իր գլուխը դուրս ցցել: Թուրք խուժանը ամեն կողմի խումբ-խումբ կփութար «ափ մը կշաւտները» փշաջնելու, ոչնչացնելու: Հանդիպակաց կողմը, Սուլազ Տետեյի լանջին, Ցաղուպյան թաղի գերեզմանատան մոտ ստվարաթիվ շերքեղ հեծյալներ համախմբված էին: Պահը ճակատագրական էր, վայրկյանները՝ հղի: Թշնամին կարող էր սպանվող մեկին տեղ հարցուրներ բերել, իսկ մենք՝ այդ շորս պատերուն՝ բռնակալութեան բերդին մեջ, խմելու ջուրն անգամ չգտնելու վախն ունեինք. դուրսեն եկող առվակը կտրված էր, իսկ ներսի ջրհորը հոտած (թեպետ նախապես մաքրել տված էինք): Մեռնողին տեղը և ռազմամթերքի պակասը չէինք կրնար լեցնել: Ոչ մեկ հույս, ոչ մեկ օգնութիւն, բայց գեթունցիին համար հուսահատութիւն բառը գոյութիւն չէր ունեցած. որքան որ շրջանակը նեղնար, որքան փրկութեան հույսերը պակասին, այնքան իր խանդավառութիւնը, իր կորույրը կավելնար կարծես. յուրաքանչյուր մարտիկ աչքերուն՝ արյուն, սրտին՝ վրեժ, խմբապետին հրամանին կսպասեր, որպեսզի դուրս խոյանալով բռնաբեր զինքը շրջապատողները:

Արեւածագին թնդանոթները սկսան դարձյալ գոռալ: Ռումբերը ուղղակի դորանոցին անկյունաքարերը կփշրեին և հրդեհ կառաջացնեին:

Հեռագրատան վերի պահականոցը գրեթե անգործածելի դարձած էր. միայն մարդու գոյութիւնը զգացնելու համար, ամեն կես ժամը անգամ մը, անձնվեր քաջերեն ոմանք կհանդգնեին սողոսկելով ելլել, քանի մը գնդակ պարպել և վերադառնալ: Ամբողջ հեռագրատունը և զորանոցի վերի հարկերը սկսած էին խարխիլ, փլիլ: Սպասելը ստույգ մահ էր, բայց գերբնական ուժ մը շէր ձգեր, որ բաժնվեինք ու հեռանայինք: Ժամը 10-ին լուսթիւն տիրեց: Հունիսյան արևը սկսած էր իր փայլը զգացնել, մութ մատախուղը ցրվել, երբ արևելյան բլուրեն՝ Գայմագամի աղբյուրին կողմե, ճերմակ դրոշակ մը ձեռքին, ձիուն վրա նստած հայտնվեցավ հայր Բարթողիմեոսը:

Յուրքերը Ճիհանի կամուրջեն, կարավանեն զատելով վերագարձուցած էին զինքը՝ ընդհանուր հրամանատարին պաշտոնական հրամանագրով, թելադրելով իրեն, որ զար մեր քով և մեզ անձնատվութեան հրավիրեր: Իր բերած գրութեան պարունակութիւնը հետեւյալն էր. «Զեյթունի վարչական նախագահութեան. Առաջին օրը ճակատի հրամանատար Ահմետ Թելֆիզ բեյի ձեզի դրկած գրութիւնը կհաստատեմ. ձեր երիտասարդութեան և անմեղ ժողովուրդին բնաջնջումին պատճառ չգառնալու համար զինվորականի պատիվովս կխոստանամ, եթէ ձեր ընտանիքներով սահմանեն դուրս ելլեք ունէ հարձակումի շարժումի ենթարկվիք. այս մասին ճակատի հրամանատարութեան հրաման տրված է:

Յորքական բանակի ընդհանուր հրամանատար
Սաաեթդին»

Հայր Բարթողիմեոս կփափաքի նախ զորանոց մտնել և օրհնել ժողովուրդը մեկ անգամ մը ևս, բայց Ազգային միութիւնը արգելք կհանդիսանա: Գոան պահակը, ծերունի կղերականին ստիպումին տեղի տալով կպատասխանե, բողարկելով ճշմարտութիւնը. «Հայր սուրբ, բոլոր անկարները, կին, ծեր, պառավ, մանուկ՝ սպանած ենք. շենք փափաքիր, որ այս ալեհեր տարիքիդ ականատես ըլլաս այս մեծ սպանդին, արյունը՝ թուրքին և քրիստոնյա պետութիւններուն վիղը. մենք ոճրագործ չենք»: Բայց և այնպէս Հայր Բարթողիմեոսին կհաջողի տեսակցիլ զեկավարներուն հետ:

Վարդապետին տված տեղեկութեանց համաձայն, Զեյթունեն գաղթողները առաջին գիշերը իջևանած են Պելեն գյուղին առջև: Զինվորականութիւնը աշխուրջ հսկողութիւն կատարեր է և աշխատեր, որ անձնատուր եղողները ապահով և գոհացուցիչ պայմաններու մեջ հաս-

նին Մարաշ: Երբ իրենք Գլըլավուզի առջև հասած են, տեսած են՝ կենդանիներու վրա բեռցված զենքեր, որոնք հավաստի աղբյուրներու համաձայն մեր սպանվածներուն և վիրավորվածներուն կպատկանեին:

Հայր Բարթողիմեոսին հետ ուղարկեցինք մեր հետեւյալ պատասխանը.

«Հրամանատար բեյ, կյանքը սուրբ է, բայց դարերի ի վեր փորձվածը կրկին փորձել, ըստ մեզի, անիմաստ է: Թափված արյունը տակալին չէ շորցած:

Զեյթունի պատերազմական նախագահութիւն»:

Հազիվ հայր Բարթողիմեոս՝ մաղթանքներ ընելէ հետո՝ բուրբ անցած էր, երբ թնդանոթները դարձյալ սկսան գոռալ: Խմբապետները ի մի գալով որոշեցին ուսմբերու տեղատարափը դադրեցնելու միջոց մը գտնել: Անոնք հրահանգեցին մի քանի լավ նշանաու երիտասարդներու, որ զորանոցի հյուսիսային մասի վերի հարկաբաժինը բարձրանան և լավ մը քննելէ վերջ աշխատին դադրեցնել թնդանոթը: Մեր քաջերը հաջողեցան առաջին իսկ համազարկով լոցնել թնդանոթը, սպանելով ուսմբաձիգ սպան և փշրելով թնդանոթը: Գոտեմարտը սոսկալի էր. ոչ մեկ գրիչ կարող է նկարագրել այդ ճգնաժամային պահերը: Զորանոցին բոլոր անկյունները ջախջախված, անճանաչելի դարձած էին: Մարտիկբոլոր անկյունները մարտկոց իրենց ձագուկները պաշտպանելու համար ոչ մեկ ջանք կխնայեին: Հրաշեկ ձուլարան մը՝ որուն մեջ ոչ մեկ նյութ կրնար տոկալ, բոլորը պիտի հալեին, պիտի ոչնչանային: Մանուկը մորը քղանցքին կառչած կճշար. «Մամա՛, անոթի եմ... ձգե ինձի, որ դուրս ելլեմ, գոնե քիչ մը խոտ գտնեմ, ուտեմ...»: Կինը իր ամուսինին կողքին կայնած աղիողորմ ճիշերով կբարբառեր. «Կա՛մ սպանե, կա՛մ հետատար, զիս թուրքին մի հանձնե, կանիժեմ քեզ»: Մայրը որդվույն վիզին փաթթված՝ «Հորդ վրեժը եթէ չառնես, կաթս հալալ չեմ ընեք»: Զորանոցին մեջ գտնվող անբան կենդանիներն անգամ իրենց տերերուն ոտքերուն փաթթված օգնութիւն կխնդրեին: Ի՛չ տեսարան, ի՛նչ ահռելի պատկեր, որուն ոչ ոք կրնա թարգման հանդիսանալ: Օրը տարածամած էր, արևը Սուլաք Տետեի ամպածրար կատարեն կարծեք իր վերջին հրաժեշտը, պատգամը կուտար. «Եղեք քաջ և արի, ձեր նախնայաց արժանի զավակը, մի թողուք, որ ձեր պապենական սուրբ հողը պղծվի»:

Նույն պահուն, Տեր Հովսեփ քահանա խովմունցյան, հիսուսը անց, Զեյթունի անցյալ կոիվներուն մասնակցած, փորձաու և հմուտ քա-

հանա մը, մեկ ձեռքին խաչը, մյուսին՝ հաղորդութեան տուփը, մարտկոցե մարտկոց անցնելով կքաջալերեր, կխրախուսեր և հաղորդութուն կուտար, որպէս իրական Անտոն Երեց մը, որ ուխտած էր զոհել իր կյանքը իր սիրելի ժողովուրդին:

Ջորանոցին արևմտյան կողմը, թնդանոթի ռումբերեն զերծ մնացած մութ անկյուն մը՝ Ազգային միութիւնը ժողովի նստած էր: Ան հրավիրած էր խմբապետները և գիտակից մարդոց խումբ մը, ելք մը գտնելու հուշով այս անել կացութեան: Դարձյալ նախորդ օրվա միևնույն օրակարգն էր— Կամ ամբողջովին, կամ մասնակի պարպում: Ամբողջ ժողովուրդը՝ ծեր, պառավ, կին, մանուկ, դուրսը՝ ժողովատեղիին խցիկին դուռը ափ առած, աղեխարշ ճիշերով կպաղատեին. «Սպանեցե՛ք մեզ, կամ տարե՛ք հետերնիդ և թուրքին մի հանձնեք»:

Հաշարը Փանոսի երեց որդին Հովհաննես Գարագուշյանը, որ հազիվ 25 տարեկան էր, կաշխատեր օձիքը ազատել իր կնոջ՝ Մարգրիտի ձեռքեն: Այս վերջինը 20 տարեկան, իսկական գեղուհի մը, իր ամուսինին ոտքերուն պլլված կաղերսեր, որ սպանե՛ր զինքը և անգութ, անաստված թշնամիին ձեռքը չձգեր: Բայց Հովհաննեսին համար նման ոճրագործութիւն մը կարելի չէր: Ան սկսավ ահուկի նոպաներ, գալարումներ ունենալ. ինչպե՞ս կարելի էր իր աննման Մարգրիտեն և անոր արգանդին մեջ գտնված ութ ամսվան էակեն զրկվիլ. ի՞նչ հակամարդկային, դիվային ոճիր կըլլար ատիկա: Բայց Մարգրիտ կշարունակեր պաղատիլ, բողոքել. «Մի՛ թողուր թուրքին, հալալ չեմ ընեք իմ անկեղծ սերս, սպանե՛ք, դաշունահարե՛ք զիս»: Պահ մը ետք տեսանք թե ան խոյացավ Հովհաննեսին վրա, անոր մեջքեն կախված երկսայրի դաշույնը ձեռք անցնելու համար: Հովհաննես ակամայորեն քաշեց բլթակը և Մարգրիտ արջան ճապաղիքներու մեջ անկենդան ինկավ Հովհաննեսի ոտքերուն տակ:

Մարգրիտի նման շատ շատեր իրենց կյանքը զոհեցին նման պայմաններու տակ: Զանոնք մի առ մի թվել կարելի չէ. հարգա՛նք բոլորին:

Ազգային միութիւնը դարձյալ ձախողած էր, տրված որոշումները արդյունք չէին ունենար: Ժամը 10-ին դռնփակ նիստ մը գումարվեցավ և որդեգրվեցավ բանաձև մը. հրավիրել բոլոր պատերազմիկ երիտասարդները, որ առանց ժողովուրդին զգացնելու, արևելյան ձորակեն, Մուխալ աղբյուրի վրայեն հարձակում գործեն և դուրս ելլեն: Ուրիշ ելք չկար, կորուստը անխուսափելի էր: Գիշերը՝ կիներ-երեխաներ դուրս թափելը խոհեմութիւն չէր: Հավանականութիւն ալ կար, որ կառավարութիւնը անմեղ, անզեն ժողովուրդը պաշտպանե: Կարևորը՝ ռազմիկ ուժը

դուրս հանելն էր: Քանի մը երիտասարդի հանձնարարվեցավ, որ առանց շշուկի, առանց որևէ մեկուն զգացնելու, ժամը 1-ին համախմբվին հեռագրատուն՝ խմբապետ Սիմոնյանի բնակարանը, ուրկից Մուխալ աղբյուրին վրայեն երկու ճակատով հարձակում պիտի գործեին թշնամիին վրա:

Վերջին որոշումը այս էր: Ամբողջ ժողովուրդը անխտիր զորանոցին բակը, մեծ դռան քով հավաքված էր. պզտիկ շարժում մը, փսփսուք մը կրնար կասկածներ արթնցնել. անքուն պահակի պես կհսկեին:

Ռուբեն և Խաչեր, որոնք հիշյալ մեծ դռան հսկողութիւնը հանձն առած էին, ի տես ժողովուրդի սրտակեղծք տագնապին և գիտակ Ազգային միութեան տված որոշումին— որ ըստ իրենց պատվաբեր չէր և կրնար հետագային խժեժանքի նյութ դառնալ— միասնաբար կորոշեն ուրիշ հղացում մը. «Բոլորս միասին մնալ, կամ բոլորս միասին ելլել»: Եվ այսպէս անոնք, իրենց զինակիցներով, դաշույնները մերկացուցած դուրս կխոյանան: Այս սողերը գրողը և իր երկու գործակիցները՝ Արամ և Վարդան, զորանոցին բակը, ավազանին շուրջ բարձրացած ուռնիներուն տակ, ոտքի վրա լրաբերին կսպասեին, որ իրենք ևս վերջին պահուն այդ կողմի պատենշներուն տակ գտնվող ռազմիկներուն միացած փութային հեռագրատուն, այնտեղեն ծրագրված հարձակումը գործելու համար: Առանց մեղ խմայնելու՝ զորանոցին դուռը բացված էր և վայրկենապես այդտեղ համախմբված ժողովուրդը անհայտացած էր. զորանոցը պարպված էր: Հեղձուցիչ և սարսափելի ամայութիւն մը կտիրեր: Ստիպված էինք մենք ևս այդ մեռելային ամայութեան խուսափիլ, բայց ինչպե՞ս կարելի էր առանց հեռագրատունեն լուր առնելու մեկնիլ: Վարդանը փութաց հեռագրատուն, իսկ մենք երկուքս մեր վերջին հրաժեշտը տալե ետք զորանոցին՝ մեր երկու տարվա նեղութեան, տառապանքին, թշվառութեան, ամեն զրկանքի վայր հանդիսացող այդ ամբողջին, հետևեցանք հառաջապահ խումբին, առանց հեռագրատուն գրտնրվող մեր զինակիրներուն սպասելու:

1921 հունիսի 23: Երկնակամարը կապույտ, ջինջ, պայծառ էր. աստղերը կպլպլային, իսկ տասնհինգօրյա լուսինը կտիրապետեր շրջակա լեռներուն ու ձորերուն: Անխոհեմ շարժում մը կրնար մեզ մատնել թըշնամիին, որ չորս կողմը դարանակալ կսպասեր: Մեր հառաջապահ խումբը հարավային զառիթափեն դեպի Բասիլոսյան ագարակը հառաջացավ և հարձակում գործեց: Գետինը մարմանդով ծածկված ըլլալուն, մարտիկներուն ոտքերը կսահեին, որով կրնակալու կհառաջանայինք: Կռիվը սոսկալի էր և ճակատագրական: Թշնամիի գնդացիները ամեն

կողմէ կորոտային: Թրքական բանակը, լուսնի լույսին տակ մեր խոյանքը տեսնելով կսարսափի և կստիպվի ճամփա տալ, նահանջել. ոչ մեկ ուժ կրնար կասեցնել կտրիճները, որոնք թշնամի պաշարման երեք օղակ ճեղքելով հաշոդած էին դուրս ելլել: Մենք ևս ապահով միացած էինք անոնց:

Այդ ճգնաժամին, Սեդրակ Մարկանյան ու Հովհաննես Սիմոնյան խմբապետները կորոշեն արևմտյան դռնակեն դուրս ելլել և շարժիլ դեպի հարավ՝ Զեյթունի գետակը, ուր իրենց առջև թշնամի չկար: Գետին արևմտյան կողմը թուրք զինվորներ դիրք բռնած կսպասեն: Մեր մարտիկները կհաջողին նահանջի մատնել թուրք պահակները և ապահով անցնիլ գետը: Կարապետ Տեմիրճյան և Թորոս Մարկանյան իրենց խիզախ շարժումով կզգետնեն պահակ զինվորները:

Արևածագին բոլորս հասած էինք մեր ժամադրավայրը՝ Ճանավարենց բլուրը՝ Գայաճըզ հայաբնակ գյուղին ետևի լեռը, որ անառիկ դիրք ուներ, անտառապատ, սառնորակ պղտիկ աղբյուրով մը: Այդտեղ, այդ բլուրին վրա հաշվեցինք, որ ազատվածներու ընդհանուր թիվը բաղկացած է 312 անձե, որոնցմե՝ 88 կին և մանուկ, 45-ը՝ անզեն, իսկ մնացյալը՝ զինված մավզեր հրացանով և կամ տեղական չազմազրով: Ունեինք 86 արդիական մավզեր հրացան: Այսպես, 312 հոգի լեռ ապաստանողներս էինք: 594 հոգի՝ Մարաշ ուղևորված էին, 140 հոգի զորանոցը մնացած էին, 8-ը Ֆոնուզի ջաղացքին մոտ սպանված էին, Տինկիշյանը սպանված էր, մեկ հոգի՝ Գրիգոր Տուրնայանը կիրակի օրը այգի էր գացեր և չէր կրցած վերադառնալ, Միքայել Տինկիշյանի զինակիցներեն Հովսեփ Ֆապրիզաճյան և Մանուկ Օհանյան, իրենց կիները ձգելով, զորանոցեն դուրս ելած էին:

Ավետիք Քիթիշյան՝ քառասունամյա, գիտակից, փորձառու զեյթունցի մը, պաշարման շղթան ճեղքելով ազատ սահման հասնելե վերջ հիմարություն կունենա վերադառնալու և պահակատուն անձնատուր ըլլալու, այն հավատքով թե «պետությունը աստծո մեկ փոխանորդն» է, որուն պետք է հնազանդիլ: Ան գիշերը Գըրլավուզ կհասնի և պահակներուն կհանձնվի, որոնք կորոշեն զինքը տեղվույն վրա զնդակահարել: Բայց Ավետիքի խնդրանքին համաձայն անոնք կարտոնեն, որ աղոթե. ծունկի եկած, աղոթքի պահուն Ավետիք կհիշե Ավետարանի այն նախադասությունը, որուն համաձայն «Անձնասպանությունը աններելի մեղքերեն է»: Ան անմիջապես կուշաթափվի, կիշնա մացառներուն մեջ. արձակած զնդակները իրեն չեն հասնիր և Ավետիք այդպիսով կազատի: Որով լեռ բարձրացողները՝ 317, իսկ զորանոցը մնացողները 139 հոգի էին:

Մինաս Կյուվանեսյան իր միակ որդվույն՝ Գևորգի սպանությունը տեսնելով, կխորհի երթալ Քերթմեն թրքարնակ գյուղը՝ իր բարեկամ Սըրըմ Տուրտուի մոտ, որ զինք ազատե, բայց ապերախտ թուրքը դայն ձերբակալելով կբերե զորանոց և Մուխալ աղբյուր՝ մյուստու Յահյայի սպանված տեղը կդաշույնահարե: Ճանավարենց բլուրը, բարձունքին վրա, ամեն խումբ իրեն համար դիրքեր գրավելով կսպասեր դժխեմ ճակատագրին, երբ մեր շրջուն զենքակերները ձերբակալվելով մեր քով բերին հազիվ 25 տարեկան թուրք երիտասարդ մը: Երբ ան մեզ տեսավ, կարծելով որ կրոնակիցներ ենք, խանդավառությամբ ըսավ. «Քանի մը օր է Մարաշեն եկած ենք այդ Զեյթուն ըսված անիծյալ «կյավուրները» բնաջնջելու: Ես Այտընի գյուղերեն եմ, այնտեղ հաջողեցանք հույն «կյավուրներեն» մեծ ավարներ հափշտակել և զիրենք ծովը թափել. մեծ Մարգարենն կխնդրենք, որ այս «կյավուրները» ևս անոնց բախտին արժանացնե: Բայց ասոնք լավ նշանառուներ են, հազիվ տեղեզ շարժիս կփակցնեն կոր, պարապ զնդակ չեն վատներ, մեր շատ մը հավատացյալներուն կյանքին վերջ տվին, ես վախնալով անոնց մահացու զնդակներեն այս գիշեր փախա, ինձ ընդունեցեք որպես ձեր զինակից ընկերը»: Մահվան վճիռը տրված էր:

Արևը՝ աղոտ և տխուր, իր գլուխը ակամա դուրս ցցած էր սեզ Պերզնկայի կատարեն: Զորանոցին ուժակոծումը ավելի զորավոր թափով մը կշարունակվեր, զնդացիները անդադար կորոտային: Թուրք խուժանը, բանակին հետ միասին, համախմբված էր մոտակա բլուրները. դեռ որևէ հառաջխաղացում չկար, միայն թնդանոթներն ու զնդացիները կորոտային, իսկ զորանոցին մարտկոցները լրած էին: Հոն՝ կմնային տակավին հարյուրակ մը անզեն հայրենակիցներ: Բայց վախկոտ թուրքը, զեյթունցիներու զորավոր բռունցքներեն ու աննկուն կամքեն սարսափած, չէր հանդգնեք անոր ավերակներուն իսկ մոտենալ: Ներսեն պարզված ճերմակ դրոշակներուն, «անձնատուր ենք, անզեն կին արարածներ ենք» սրտաղեք ու հուզիչ գոռում-գոշումներուն ալ հավատ չէին ընծայեր: Թնդանոթները անդադար կգոռային, բանակը կվարաներ հառաջանալ՝ կազմակերպված դավադրության մը զոհ չերթալու համար: Ժամը 9-ն էր, այլևս քաջ համոզվելով, որ զորանոցը պարապ է, ջոկատ մը զինվոր, սվիններով ներս խոյացավ և գրավեց շենքը:

Մենք, զորանոցեն հեռու, երեք ժամ անդին գտնվող Ճանավարենց լեռան կատարեն, դիտակը մեր ձեռքին, ականատես վկաները եղանք ահաբեկի սպանդի մը: Զորանոց մնացած մեր սիրելիները մարգարանի ընդարձակ հրապարակը տարվեցան և պիղծ գարշապարներու տակ

տրորվեցան: Վալաշտո մարդիկ իսկույն շրջապատեցին յիրենք և ճամբա հանեցին դեպի արևելք, անշուշտ դեպի Գրբլավուզ՝ կառավարական կենտրոնը: Ըստ մեր ստացած վերջին տեղեկություններուն, անշուշտ թրքական աղբյուրե, անոնք զինվորներու հսկողութեան տակ կտարվեին Մարաշ: Երբ անոնք կհասնին Պեշենի հարավակողմը Ճիհան գետին եզերքը, Գրբլավուզ Տերեի բերանը, անոնց հրահանգ կտրվի, որ այդտեղ զիշերեն հսկա ծառի մը տակ: Կես զիշերին, ամեն կողմի հըրդեհ կծագի և այդտեղ, այդ հսկա ծառին տակ մեր սրտահատորները կոչնչանան: Հետ սպանութեան, մացառներու դեղերուն մեջ, բոլորը մոխիր կդառնան: Իսկ որոշ թվով մանուկներ՝ բանակի զորանոց մուտքի պահուն կփախին և կապաստանին գետնափոր խրամներու մեջ, զորս մենք նախապես պատրաստած էինք: Երեք օր հոն, այդ մութ խրամներուն մեջ անթի, ծարավ մնալի հետո, թուրք հրեշներու կողմե երևան կհանվին և ողջ ողջ կայրվին:

Ճանավարենց լեռան վրա կորոշվի 4 հոգի զրկել մինչև Անի ձոր և փնտրել որևէ հայրենակից, որ կրնար մացառներուն տակ պահված ըլլալ: Ավագակալ գյուղեն Պապա Գատեմյանը, որ այդ շրջանին քաջ ծանոթ էր, իր ընկերներով կմեկնի, բայց մեկ ժամ շանցած հեիճև կվերադառնա խումբը, ըսելով. 7—8 հարյուր զինվոր, հետիոտն և հեծյալ, ջորիներու վրա ուղամթերք բեռցած կհառաջանան դեպի մեր կողմը: Այդ պատճառով անոնք չէին կրցած գետեզրը իջնել և հետախուզութեան կատարել:

Խմբապետները անմիջապես ի մի գալով որոշեցին դիրքերը ամրացնել, իսկ կին, տղա և անզեն մարդիկ Սիմոնյանի առաջնորդութեամբ և 13 զինյալ երիտասարդներով անմիջապես ճամփա հանվեցան դեպի Ֆոնուզ: Այդ ճամփաներուն ծանոթ ֆոնուզցի քաջ երիտասարդներ առաջնորդեցին զանոնք, արհամարհելով ամեն վտանգ: 1921 հուլիսի 2-ին, ամբողջ ժողովուրդը՝ ընդամենը 317 հոգի, Ֆոնուզի արևմտյան կողմը գտնվող լեռան կործքին, հսկա մայրի ծառերու տակ, սառնորակ աղբյուրներու քով խորհրդակցութեան սկսավ:

Երկու առաջարկ բերվեցավ: ա) Մեր լեռներուն կառչիլ և մարտնչիլ թշնամիին դեմ: բ) Այդքան կին ու երեխաներով լեռները սպասել, անոնց պարենավորումը ապահովել և թշնամիին դիմադրել խիստ զրծվար էր, պետք էր ուրեմն զանոնք ապահով վայր մը հասցնել և ապա միայն նման ծրագիր մը իրականացնել: Անոնց գոյութեանը մնացյալներուն համար ալ մեծ վտանգ կրնար հասցնել: Մեր ոտքերը կապված էին, ազատ որևէ քայլ չէինք կարող առնել:

Չայներու մեծամասնութեամբ ընդունված էր երկրորդ որոշումը: Դժբախտաբար սակայն լավ ուղեցույցներ չունեինք, միայն մի քանի ջորեպաններ նախքան պատերազմը այդ կողմերը ճամփորդած էին: Որոշվեցավ Ճիհան գետը հասնիլ և ապա անցնիլ Ատաբլար թրքաբնակ գյուղեն:

Տեր Հովսեփ քահանան, ծառերու շուքին տակ սկսավ խրատուել ժողովուրդը, պատմելով անոնց խժողով դրվագներ թրքական բարբարոսութուններին և ապա «Տեր, ողորմյա զճանապարհս մեզ» շարականը երգելով, մեկ ձեռքը խաչը, մյուսը՝ դաշույնը մերկացուցած, հառաչացավ գոռալով. «Ազատութեանը մոտ է, քաջ և արի եղեք, քալեցեք դավակներս»: Քահանային այս սրտառու խոսքերեն տկարները նոր ուժ ստացան: Խմբապետները կարևոր հրահանգներ տված էին իրենց զինակիցներուն և կհետևեին քահանային: Աղալըի սարահարթը ճեղքած, հասած էին Սեկ կիրճը: Արդեն օրը տարածամած, արևը իր ոսկեզօծ գլուխը ներս քաշած, ասպարեզը կթողուր լուսնին և աստղերու փայլին: Սեկի փեշին, պայծառ երկնակամարին տակ, ամառվա զով սյուզին, պող քարերու վրա մեր խոնջած զուխները կհանգչեցնեինք, սպասելով հառաջապահ խումբին տալիք տեղեկութեանց: Հառաջապահներու խումբապետ Սեզրակ Մարկանյանը շրջակա ձորերը, բլուրները խուզարկած, որևէ թշնամիի պետք չէր գտած:

«Հառաջ» հրամանը տրված էր: Անդենները և անկարները հավասարապես խումբերու բաժնված էին: Ս. Մարկանյանի ազդարարութեամբ սկսանք հառաջանալ: Իջած էինք դաշտավայր և մտած Չեքիրճիկի ձորը, երբ երկու կողմեն տեղատարափ գնդակ սկսավ թափիլ մեր վրա: Կռիվը սոսկալի էր, թշնամի գնդացիները անդադար կգործեին, ամեն մարդ իր գտնված տեղեն սկսավ գերմարդկային պայքարի: Ժամ մը վերջ ամեն ինչ լուծ էր, թշնամին շատ մը դիակներ ձգած, փախած էր:

Մենք ալ ունեցանք երկու կին վիրավորներ, որոնք հառաջապահ գունդին կողմի սպանվեցան՝ զանոնք թշնամիին չձգելու և գաղտնիք չհանձնելու համար: Մեր մարտիկները այս առաջին հաղթանակեն ոգևորված, ավելի մեծ կորովով և հույսով շարունակեցին ճամփան՝ Շիվիլիկի և Պոնտուզ հայկական գյուղերու կողքին: Երբ Սուպաթան կոչված անցքեն կանցնեինք, երկրորդ հարձակում մը կրեցինք թշնամիին: Այդտեղ ևս սոսկալի ընդհարում մը տեղի ունեցավ. մեր ռազմիկները սվիններով հարձակում գործեցին թշնամիներուն վրա, որոնք այս հանդուգն քայլին ահաբեկած, փախուստ տվին: Հազիվ քանի մը վայրկյան հառաչացած էինք, երբ նկատեցինք մեր առաջնորդին՝ Տեր Հովսեփ քահա-

նա խուլմունյանի և այլ 6 ընկերներու բացակայութիւնը: Անոնցմէ Կարապետ և Վարդան Հաճի Կարապետյանները գտանք հետագային, Զեյթունի լեռները վերադառնալու ատեն, իսկ մյուս շորսը՝ շատ հավանաբար մնացեր էին տեղւոյն վրա:

Առտուն արեւածագին խումբը հասած էր Պունտուզի և Շիվիլիի մեջտեղը՝ էլ մատաղ կոչված լեռը, որուն արեւմտյան կողմը կտարածվեին հարյուրավոր վրաններ: Հաղիվ մի քիչ հանգչած և մեր դիրքերը ճըշտած էինք, քանի մը հրացանի ձայներ լսվեցան հեռուէն:

Ամեն կողմէ հեծյալ զինվորներ սկսան խուժել: Բոլոր վրանները՝ ցիցերը քաշած՝ գետնի վրա էին: Խուճապ մըն էր, որ սկսավ: Մենք մեր պատնէշներու ետին՝ մեր աչքին պարզված տեսարանին վկաններն էինք. լուռ ու մունջ, ելքի կսպասեինք, երբ վրաններու երիտասարդութիւնը խումբեր կազմած, հեծյալ զինվորներու առաջնորդութեամբ սկսան հառաչանալ դեպի մեր կողմը: Անոնք զորավոր գրոհի մը ձեռնարկեցին: Երբ բավական մտտեցած էին մեր դիրքերուն և սպառնագին լողուններ կարձակեին, մեր մարտիկներուն համազարկը խուճապի մատնեց զիրենք՝ բավական դիակներ փռելով տեղւոյն վրա: Ամբողջ դաշտը պարպված էր. ոչ մեկ շարժում, ոչ մեկ մարդկային հետք, միայն շրջակա լեռներէն հաճախակի կլսվեին հրացանի ձայներ: Իսկ գետին ինկած վրաններու տակէն կհասնէին մանուկներու ճիչեր. լեղապատառ մայրեր չէին կրցած զանոնք տանիլ իրենց հետ: Բայց մենք ևս ստիպված կմնայինք կառչած մեր դիրքերուն, չէինք կրնար տեղափոխութիւն կատարել, որովհետեւ շրջակա բարձր դիրքերը իրենք գրաված էին ու կրնային վտանգավոր կացութիւն մը ստեղծել: Ամբողջ օրը ժայռերու ետին, կիզիչ արևուն տակ, անոթի ու ծարավ, մեր զենքերը գրկած՝ կսպասեինք:

Իրիկնամուտին որոշվեցավ ճամփան շարունակել: Բոլոր խումբերը իրենց դիրքերէն եկած, համախմբված էին մեր գտնված բարձունքի լանջքին՝ պաղ ու սառնորակ աղբյուրի մը քով, որուն գոյութիւնը ցերեկվա այդ կիզիչ օդին դեռ չէինք զգացած, որ կարենայինք մեր հրատուշոր պապակը զովացնել: Աղբյուրին գոյութիւնը մեզ բոլորս կազդուրեց, նոր եռանդ տվավ:

Հաղիվ մեկ երկու ժամ հառաջացած՝ ինկանք ճահիճի մը մեջ, որ մեր մասամբ կազդուրված մարմինը ավելի ընկճեց, ավելի հոգնեցուց: Գրեթէ 3 ժամ այդ ճահիճին մեջ թավալվեցանք: Ապա տաժանակիր շարչարանքներէ վերջ դուրս ելանք անկէ: Ամբողջ գիշերը գրեթէ ոչ մեկ հառաջխաղացում չէինք ունեցած:

Առտուն ինքզինքնիս գտանք պզտիկ բարձունքի մը վրա, անտա-

ռապատ լեռան մը կողքը, որուն շորս բոլորը անհամար վրաններ կային: Որոշեցինք ամեն գնով այդ օրը մնալ այդ անտառակին մեջ և կարելի եղածին չափ չզգացնել մեր գոյութիւնը: Բայց մեր զինակիրներէն Արթին Հարմանտյանը, որ արեւմտյան կողմը պահակ դրված էր, երբ կտեսնէ մոտակա վրան մը, կուզէ առիթէն օգտվելով իր պարսպ ստամոքսը լեցնել: Կհաջողի վրանին մոտենալ իր այդ պահանջքին գոհացում տալու հույսով, բայց ի՞նչ անակնկալ... Ներսը գտնվող դարանակալ թշնամիները «հանձնվիր» կպոռան. բայց մեր Ավագկալ գյուղացի հիսնամյա Արթինը, որ շատ արկածներ անցուցած, փորձառու կովող մըն էր, համազարկով մը կուտա իր պատասխանը: Հաղիվ հրացանի ձայնը լսած մեր տղաքը սկսան գրոհի: Քանի մը ժամվան մեջ ամբողջ հովիտը պարպված էր: Աներևակայելի խուճապ մը սկսավ. մայրը իր մանուկը, փեսան՝ իր հարսը, ամուսինը՝ իր կինը ձգած, փախուստի կդիմեին, երիտասարդները թաքստոցներ կփնտրեին զէթունցիի մահացու զնդակներէն խուսափելու համար, երբ մեր երիտասարդներէն մաս մը հաջողած էր լեռան բարձրութեան վրա դիրքեր բռնելու և քաշվելու հովիտէն:

Երկու տիկիներ՝ Արամին քույրը Մարիցա և Քացախյան Եզեկիելի կինը Աղավնի, գիշերվա այդ հոգնեցուցիչ ճամփորդութենէն ջլատված և քայքայված՝ չէին կրցած խումբին ընկերանալ և բավական հեռու կմնային տակավին թշնամիէն բռնվելու վտանգ կար, ամբողջ շրջակայքը թուրքերով կվխտար: Եզեկիել մի քանի ընկերներով հառաջ խոյացավ ու Մարիցան և Աղավնին փրկեցին ստույգ մահէ:

Մեր դիրքերը ապահով էին: Բայց մեր գտնված լեռը այնքան ժլատ էր, որ այնտեղ ոչ ջուր, ոչ խոտ կգտնվեր: Կես ժամ հեռավորութեան վրա գտնվող առվակի մը մակերեսը արևի ճառագայթներուն տակ պրիսմակի նման կշողարձակեր, բայց ոչ ոք կհամարձակեր մոտենալ այդ կենսատու առվակին: Թրքական կանոնավոր զորքը և անկանոն կովողներ դիրք բռնած կսպասեին:


1921 հուլիսի 5-ի իրիկնամուտ. արևը այլևս իր փայլը քաշած էր լեռան կատարներէն, երբ ազդարարութեամբ մը բոլոր խումբերը համախմբվեցան լեռան լանջին գտնվող հարթավայրի մը վրա՝ խորհրդրակցութեան համար: Լեռան վերի գլուխը դիրք բռնած մեր տղաքը կըրցած էին խոռոչի մը մեջ գտնել ձյունակույտ մը. ի՞նչ մեծ բախտավորութիւն էր հուլիս ամսվան մեջ այդպիսի երևույթի հանդիպելը: Մերիները հաջողեցան բավական ձյուն վերցնել և այդպիսով զովացուցին իրենց պապակը:

Ղեկավարներու որոշումով պետք էր որ ետ դառնայինք հայրենի լեռները և այնտեղ շարունակեինք մեր նվիրական գործը: Որովհետև մենք մեր լեռներուն ծանոթ էինք, և հետևաբար շատ դժվարութիւն չէինք ունենար: Եղիա Մուճուզյանը՝ Զեյթունի Քյոմեսկյուտ գլուղեն, որուն երկու եղբայրները թուրքերու կողմէ սպանված էին, հազիվ 30 տարեկան, կարճահասակ, թիկնեղ, կյանքի դառնութիւնը ճաշակած, հանդուգն երիտասարդ մըն էր. ան հանկարծ նախատական խոսքերով երիտասարդներուն արժանապատւութիւնը վիրավորեց ըսելով. «Միթէ ձեր քաջութիւնը զորանոցի հրապարակը՝ տիկիներուն համար էր»: Անշուշտ այդ խոսքը շատ վիրավորական էր հուր ու բոց մարտիկներուն համար: Քիչ ետք՝ «հառաջ» հրամանը տրված էր ու խորհրդակցութիւնները վերջ գտած էին:


Ժամը 7-ին Մուճուզյանի առաջնորդութեամբ ճամփա ելանք: Հասանք առվակի մը եզերքը, կարկաշուն ջուրի մը քովը, որուն կարոտը այնքան սաստկութեամբ քաշած էինք ցերեկվա ընթացքին: Մեր հոգնած մարմինները կազդուրված, բոլորովին նոր ուժ ստացած էին: Սիմոնյանի աղոթքի մրմունջներուն տակ խումբը դարձյալ ճամփա ելավ: Սկսանք մագլցիլ մացառապատ սեպ զառիվեր մը, ուրկէ եթէ սայթաքեինք, կզլորվեինք առվակի ափերուն գտնվող ժայռերուն վրա: Ծիշտ երեք ժամ տաժանակիր մագլցելէ հետո, հասանք գագաթը: Արյուն քրտինքի մեջ կլողայինք, քիչ մը հանգստանալու պետք ունեինք: Անոթութիւնը, արեւվահարութիւնը, ծարավը, ապա առվակի ջուրին անհագաբար խմելը, հետո՛ երեք ժամ աներևակայելի տաժանքով ձեռք ձեռքի բռնելով մագլցելը, մեզ քրտինքով ողողված խխունջներու վերածած էր:

Ըստ պահանջներու հայտնութեան գիշերը տարածամած էր. պետք էր որոշ ժամադրավայր մը հասնեինք, մեր հաջորդ օրվա գոյութիւնը կարենալ պաշտպանելու համար որևէ պատահականութեան դեմ: Ժամը 12-ը անցած էր, երբ լուսնի արտացոլումով աղբերակ մը նշմարեցինք անտառին մեջ: Գիշերվա տոթեն այրած մեր պապակը անցուցինք շատ դժվար պայմաններու տակ: Ակը այնքան նիհար էր, որ ժամանակի մեծ կորուստ կպատճառեր բոլորիս անկէ ջուր խմելը: Քիչ մը հանգստանալու, ինչպէս նաև խոտ ճարելու կարիքը ունեինք՝ մեր ստամոքսները խաբելու համար: Ժամը 3-ը անցած էր, երբ բաժնվեցանք այդ անմոռանալի աղբերակին:


Աքաղաղներու կուկուրիկուն մեզ սթափեցուց: Անգիտակցաբար մոտեցած էինք Անտրուն կոչված թրքաբնակ գյուղաքաղաքին: Պետք էր ճամփան շեղել և ընտրել ապահով վայր մը: Ժամանակը շատ կարճ էր:



1. Պայտնի բնակավայր (1914 թ.):



2. Տիսարան Զեյթունից (1914 թ.):



3. Զեյթունի բերդ (1914 թ.):



4. Երազիսարհյան բնամեկի անջամներ (կենտրոնում նազարեք Չափուշ):

Հորիզոնը սկսած էր շառագունիլ: Եթե կարենայինք հանդիպակաց թուխ լեռը հասնիլ, մեզ պահանջով կարող էինք զգալ: Ամենահարմարագույն ամրոցն էր ան. ամեն գնով պետք էր որ հոն հասնեինք: Մեր հառաջապահ ջոկատը ուղղվեցավ դեպի հանդիպակաց մոայլ լեռը: Հաղիվ քանի մը քայլ հառաջացած, կլսվի խոստո ձայն մը, գիշերվա լուսթյունը խզելով թուրքերեն լեզվով՝ «կարգախոսը»... պատասխան չկար, միայն արագաքայլ հառաջացում... Չայնը երկրորդեց. «Ո՞վ եք»: Երրորդեց և երբ դարձյալ պատասխան չտվինք, այլ զենքի հարված մը միայն, բուռն հրացանածգություն մը սկսավ մոտակա բլուրներեն, որոնք նախապես իրենց կողմե գրավված էին: Սկսանք հակադարձել բուռն կերպով: Կռիվը սոսկալի էր:

Մոտ երեք ժամ անընդհատ կռվեցանք: Մեր դիրքերը խիստ աննպաստ էին, մանավանդ խիտ ու մացառուտ թուփերը մեր շարժումները կկասեցնեին: Երկու ընկեր, թուփի մը երկու կողմը դիրք բռնած, չէին կրնար իրար մոտենալ: Հրացան, սվին, բուռնցք, ահուս անկարող էին իրենց ուժը ցուցադրել: Թշնամին վերջապես ստիպվեցավ ճամփա բանալ մեզի, բայց ավաղ, մենք այդտեղ կորսնցուցած էինք զիրար. ամբողջ անտառը «խորող, խորող» կանչերով լեցված էր, որովհետև մեր կարգախոսը «խորող» էր: Միայն ամեն կողմե, ձորին մեջեն, ծառերուն տակեն հրացանի ձայներ կլսվեին:

1921 հուլիսի 6: Արևը կզժկամակեր իր գլուխը հորիզոնեն դուրս ցցելու՝ ի տես մարդկային այդ սրտաճմլիկ սպանդին: Անտառին մեջ, մայրի ծառի մը տակ, միս մինակ, շվարած ու ցնորած՝ ծրագիրներ կմշակեի, տեղվույն բոլորովին անծանոթ. ինչպե՞ս պիտի փրկության ճամփա մը գտնեի և կամ կյանքս արժեցնեի: Ինձի համար, երկինք երկիր խավարած, սև պատանք մը իջած էր. կորսնցուցած էի երկու եղբայրներս, հորեղբորորդիներս և բոլոր զինակիցներս: Նույն օրը, ժամը 10-ին, անտառին մեջ կոցած էի գտնել եղբայրս՝ Ռուբենը, իր երեք զինակիցներով՝ Հայկ Պաշալյան, Նշան Սուրազյան և ջոկատի անդամ Սերոբ: Հրճվանքով ողջագործվեցանք: Հրացանները տակավին չէին լուծ: Ժամը 12-ին, Հայկ Պաշալյանի առաջնորդությամբ հաջողած էինք արևմուտյան բլուրը բարձրանալ և այնտեղ, մայրի ծառերուն տակ, ժայռերու ետևը, Շիվիկի հալաբնակ գյուղին կոնակը գտնել Արամ Չոլագյանը, ութ զինակից ընկերներով: Մինչև իրիկնամուտ, անտառին մեջ, հոս ու հոն գտանք նաև ուրիշներ: Մեր թիվը բարձրացավ 28 հոգիի, որոնց չորսը կին և չորսը անդեն էին: Ժամը 1-ին, Արշակ Շովորողույանը՝ Արամին քեռայրը, մեզ գտավ և հայտնեց Մարկոս եղբորս, Կարապետ

Տեմբրեյանի, Մանուկ Գավազյանի, իր տիկնոջ Մարիցայի և այլ 30 տղաներու տեղը: Ան խոստացաւ երթալ և մեզ մոտ բերել զիրենք, բայց, դժբախտաբար, անոնցմե ոչ մեկը չտեսանք: Արշակ ևս չվերադարձաւ: Անտառին մեջ, մինչև իրիկնամուտ, բավական թափառեցանք, բայց ոչ մեկուն հետքը չգտանք: Իրիկնամուտին, լուռ ու մունջ, հրաժեշտ տվինք բոլորին և իջանք դեպի վար: Հասանք Շիվիլիի հայաբնակ գյուղը բարձրաբերձ, անտառապատ ու ընդարձակ լեռնահովիտի մը մեջ: Այնտեղ գտնվող առվակեն մեր շորցած շրթները թրջեցինք և հորի մը մեջ հոտած խոզի մը դիակը կտրտելով լեցուցինք մեր պաշուսակները, քիչ մըն ալ դեղնած ցորեն քաղեցինք և շարունակեցինք մեր ճամփան, անորոշ ուղղութեամբ:

Յանկապատված ճամփայի մը լուռ ու մունջ կբալէինք: Ոչ մեկ միջադեպ: Ամեն կողմ ամայութիւն էր: Մեկ երկու ժամ հետո հասած էինք ընդարձակ դաշտագետին մը, որ ցորենի հասկերով կծփար: Խոշոր կաղնիի մը տակ ուզեցինք քիչ մը հանգստանալ, երբ զենքի հարվածով մը «ո՞վ եք» պոռաց մեկը: Ստիպված փոխադարձեցինք: Անխուսափելի էր վտանգը: Թշնամին իր պատնեշի ետին ամեն կողմէ պաշտպանված էր, իսկ մենք՝ բացօդայ, պաշտպանված չէինք: Երկու ժամ գնդակներու սուլոցին տակ, անպատսպար, երբ հասկցանք, թե մեր ճամփան շարունակելու կարելիութիւն չկար, ստիպվեցանք ետ դառնալ, բայց ավազ, մեր ընկերներեն շորս հոգի կբացակայեին. չկային Նազարեթ Աշուկյանը, Լեոն Սեթյանը, Արմենակ Գուլիկյանը և Եսայի Սումպաղյանը: Հուսահատ և վշտահար՝ վերադարձանք Շիվիլիի, կարկաշատն առվակին եզերքը: Ժամանակին, Շիվիլիին մոտ հարցուր հայկական օձախ կհաշվեր, ունէր շենշող ժողովուրդ մը, 150 աշակերտութիւն ունեցող դպրոցով, եկեղեցիով, որուն զանգակատունը տակավին կիսափուլ կմնար. երիտասարդները՝ ժիր ու կայտառ՝ թրքական բարբարոսութեան զոհ գացած էին: Լոսած էր զանգակին ղողանջը, դեռատի աշակերտութեան եռուզեռը, սիրահար սրտերու տրոփշունը: Երբ խոր մտածումներու մեջ ընկղմած նոր ծրագիրներ կործայինք, հանկարծ, ավերակ, կիսախարխուլ տուներու մեջեն շշուկ մը, ոտնաձայն մը լսվեցաւ: Ամեն ոք զենքին փարած՝ անակնկալի կսպասեր: Ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ հոգեկան հրճվանք ունեցանք, երբ տեսանք թե մեր սիրելի զինակիցներն էին անոնք, որոնք մեզ նման մոլորած, հոս հոն կղեգերեին՝ իրենց հարազատներեն մեկը գտնելու հուշով: Երեք հոգի էին անոնք— Հարութիւն Յաղուպյանը, Եղիա Մոճուպյանը և Նազարեթ Ճոճուպյանը: Գիշերը բավական առաջացած էր: Հորիզոնը սկսած էր շառագունիլ: Պե՞տք էր ապահով վայր

մը գտնելիք գալիք պատահականութիւնները դիմագրավելու համար: Անհրաժեշտ էր որ Շիվիլիի արևելյան կողմը բարձրացող անտառապատ լեռը քաշվեինք: Հասանք գյուղին մոտեն արագասուլը վազող և մոնջող Քյոր-Սուլու վտակը. նախորդ օրը իր ափերուն վրա պատահած նախճիրը կարծեք մոլեգնեցուցած էր զինքը և ան կուզեր ամեն ինչ կու տալ իր մեջ...: Նազարեթ Աշուկյանի կինը՝ Եղսան, երբ զգաց իր ամուսնունջ բացակայութիւնը, խոր սուգով համակվեցաւ և լաց ու կոծով անիծեց երկիւնքն ու երկիրը, իր դժխեմ ճակատագիրը: Բոլորս ապահով կերպով գետն անցանք և վերը, լեռան վրա, կերանք մեր տոպրակներուն մեջ գտնված խոզի հոտած միսը: Զուրի պակասը կրկին զգալի էր: Մեր դիմացը, քանի մը վայրկյան հեռավորութեան վրա, լեռան կողքին կանաչ բացատ մը կերեմէր: Զուր կա խորհելով՝ ամենքս ալ հոն փութացինք, բայց, դժբախտաբար, քանի մը եղիճի թուփերու հանդիպեցանք, որով ստիպվեցանք մեր թաքստոցը լքելով դեպի արևելք հառաջանալ: Հետախույզ հեծյալ խումբեր մեր հետքին վրայեն մինչև գետը եկած էին՝ մեծ խանդավառութեամբ, բայց հետո մեր հետքը կորսնցնելով վերադարձած էին: Ճամփու ընթացքին, լեռներու արահետեն, ամառի և անմարդաբնակ տեղերի անցնելով, Պունտուգ հայաբնակ գյուղին մեջ գտանք քարերու մեջ փարված ջրհոր մը, որուն ջուրեն անհագաբար խմեցինք: Իրիկնամուտին հասած էինք Կյոշ-Յուլի կիրճին բերանը, ուր նշմարեցինք թշնամիին գոյութիւնը: Ամեն կողմ անանցանելի ժայռեր, մացառներ կային. կա՛մ ետ պետք է դառնայինք և կա՛մ ամեն գնով պետք է շարունակեինք ճամփան: Ստիպվեցանք սվիններով և դաշույններով հարձակում գործել թշնամիին վրա: Ան՝ հանկարծակի գալով՝ խուճապահար փախուստ տվաւ: Մենք հաջողած էինք կիրճը անցնիլ առանց որևէ վնասի: Գիշերը հասած էինք Քյոշյուրկե թրքաբնակ գյուղին զիմացը գտնվող լեռան կատարը: Անտանելի ցուրտ մը, մեր մարմինները կկճեր: Այդտեղ հանգչեցանք մայրի ոստերով մեր կողմէ պատրաստված մահիճներու վրա:

1921 հուլիսի 9-ի առտուն, հորիզոնը հազիվ բոսորած էր, երբ հասանք Աղալըի լանջքը: Մեզմէ վար, հազիվ մեկ կիլոմետր հեռու, ձորակի մը մեջ նշմարեցինք 10—15 հյուղակներ, ուր հավանաբար թուրքեր կային: Անմիջապես որոշեցինք հարձակում գործել անոնց վրա: Շարժում մը և տեղափոխութիւններ նշմարեցինք: Արամը, դիտակով ստուգելէ հետո պարզեց, որ թուրք զինվորներ էին անոնք, մոտ 15 հոգի, բոլորն ալ զինված արդիական զենքերով: Մեր նախորդ որոշումը վիժած էր: Հարկ էր վայրկյան առաջ հեռանալ, բախումն մը խուսափելու

համար, որովհետև թե՛ պարտավոր էինք ուղղամթերքի սպառումը հաշ-
վի առնել, թե՛ մեր ուտելիքը: Այդպիսի երկընտրանքի մեջ էինք, երբ
տեսանք, թե վարեն զինվորներու խումբ մը դեպի մեր կողմը կամազցեր:
Այլևս բախումը անխուսափելի էր, պետք էր որոշեինք մեր ընելիքը:
հարմարագույն կարգադրություն Աղալըի լեռան անառիկ դիրքը գրա-
վելն էր:

Ժամը 9-ն էր: Աղալըի լեռան կատարը, երեքի բաժնված, կսպա-
սեինք թշնամիին: Դիմացի լեռներեն, ձորերեն հրացանի ձայներ կլվեին
անդադար, գլուղացիները իրարու ազդարարություն կուտային: Թուր-
քերու հրացանն էր, որ կգործեր: Հյուսիս-արևելքը բռնած էր Արամը,
իր հեռ ունենալով Մանուկ Ճեղաղյանն ու Քիրեճցի Տյովլեթը, արևել-
յան կողմը՝ Ռուբենն ու Հայկ Պաշալյանը՝ իրենց հինգ զինակիցներով,
իսկ հարավ-արևելքը Հարություն Յաղուպյանն ու այս տողերը գրողը՝
իրենց շորս զինակիցներով: Բոլորս 24 հոգի մնացած էինք, 16 զենքով՝
13 մավզեր և 3 շագմազլը:

Զինվորական ջոկատներ եկած մոտեցած էին մեր պատնեշներուն.
կռիվը անխուսափելի էր և մահը՝ ստույգ: Արամ դիրքերը խախտա-
կարծելով, առանց երկորոգ դիրքին լուր տալու, ուսումնասիրության
համար կհեռանա իր պատնեշեն, որով, զինակից մարտիկները տեսնելով
իրենց հյուսիս-արևելակողմի պարապությունը, իրենք զիրենք վտանգ-
ված կնկատեն և կստիպվին փոխել առաջին դիրքը, միանալով Արամին:
Մենք ևս ստիպվեցանք մեր տեղը փոխել: Ժամը 11-ին՝ կռիվը իր զե-
նիթին հասած էր: Ամեն կողմն զնդակներ կտեղային մեր դիրքերուն վրա,
բայց անոնք այնքան անառիկ էին, որ երբեք վտանգ չէր սպառնար մեզի:
Հյուսիս-արևելքը կտրտաված սեպ ժայռ մըն էր, հարյուրյակ մը մետր
բարձրությամբ, որուն լանջքին, վարը դաշտին մեջ հեծյալ զինվորներ
բանակած էին, բայց անոնք երբեք չէին կրնար մեզի վնասել: Կռիվը
ահեղ էր. հազարավոր զնդակներ միայն քարի կտորներ կրնային խլել:
Միայն հրացանի ձայնն էր, որ կզգացներ ընկերներուն գոյությունը:
Իրարու այնքան մոտեցած էինք, որ կրնայինք իրենց խոսակցությունը
լսել:

Թուրքերը «անձնատուր եղեր» կպոռային: Նույն պահուն մեր խան-
դըն ու եռանդը գովելի էր: Նղիա Մուճուզյանը, որ Ռուբենի կողքին էր,
մեզմե օգնություն կուզեր: Սեպ ժայռի մը կտրծքին գամված կկռվեինք,
շարժելու հնարավորություն ամենևին չկար, մեզ մոտ գտնվող երկու
անգն պատանիներ (հազիվ 13—14 տարեկան՝ Նշան Ալապաշյանն ու
Տյովլեթ Պուշուրլույանը) հաջողեցան սեպ ժայռեն մագլցելով վեր ել-

լել և զնդակներու տեղատարափին տակ հասնիլ Մուճուզյանի քով և
խմացնել անոր մեր գոյությունը: Առտուն, մեր տեղափոխության պահուն,
կին և անգն՝ 8 հոգի, վարը քարայրի մը մեջ պահված պահերնուն
կձեռքակալվին ու տեղվույն վրա կզնդակահարվին: Անոնք էին՝ Փարթոս
և Տիգրան Պուտազյանները, Սարգիս Փայրիկյանը, Արթին Ավանյանը և
չորս կիներ: Մեր կողքին կովոգ՝ Աբրահամ Աբասխանյանը՝ 40-ը անց,
թիկնեղ, միջահասակ, վայելչակազմ երիտասարդը, որ ժայռի մը ետև
ոտքի կեցած աջ ու ձախ ուժգնորեն կհարվածեր թշնամիին, ճակատեն
ստացած մահացու զնդակով մը անշնչացած գետին ինկավ:

Այդ օրը մեր «համադամ» ուտելիքն ու զովացուցիչ ըմպելին՝ «պո-
զո» ըսված խոտն էր, ասկե զատ որևէ բուսականություն չէր բուսներ
այդ ժայռերուն վրա: Իրիկուն էր, սև պատանքը սփռված էր ամենուրեք:
Թշնամին բոլոր անցքերը խարույկներ վառած՝ արթուն կհսկեր: Նլքը
անկարելի էր, իսկ մենք՝ ափ մը անձնվերներ, անոթի, ծարավ, այդ
վիթխարի լեռան գագաթը քով քովի եկած, լուռ ու մունջ կխորհեինք
պաշարումեն ազատվելու մասին: Եթե չկարենայինք դուրս գալ, քաղցեն
ու ծարավեն սովամահ պիտի ըլլայինք: Մանուկ Ճեղաղյանը որպես
փրկության ելք գտած էր հետևյալ միջոցը. պարաններով, ժայռերու խո-
ռոչներուն կառչած աստիճանաբար վար իջնել: Հավանական էր, որ այդ
կերպով ազատեինք մեր օձիքը: Ժամերը արագորեն կսահեին: Խումբը
շափազանց զգուշությամբ կհառաջանար, չզգացնելու համար իր գոյու-
թյունը: Թշնամին քաջ գիտեր, թե դուրս ելլելու ճամփա չկար և թե ուշ
կամ կանուխ անձնատուր պիտի ըլլայինք անպայման: Ճեղաղյան Մա-
նուկի առաջնորդությամբ կհառաջանայինք հասնելու համար որոշված
վայրը, երբ եղբայրս՝ Ռուբենը սայթաքելով ինկավ ժայռի մը ճեղքված-
քին մեջ: Ժամերով աշխատեցանք մինչև որ հաջողեցանք եղբայրս այդ
խոռոչեն դուրս հանել: Պրավինիկ ատրճանակը և արծաթապատ դա-
շույնը մնացած էին հոն: Ճեղաղյանի ծրագիրը շատ հաջող և ապահով
կերպով իրագործվեցավ: Գիշերվան ժամը 1-ին բոլորս ալ լեռան արե-
վելյան ստորոտն էինք, զինվորական վրաններուն մոտիկ: Վտանգը իր
ահավորությունը կորսնցուցած էր այլևս, ազատված էինք: Հյուսիսային
մեզմ քամին սկսած էր մեր թմրած ու խոնջած մարմինները կազդու-
րել: Բնությունը կարծես խղճահարած, օգնության կփութար մեզի: Թուրք
զինվորներուն վառած խարույկները հետզհետե իրենց ազդեցությունը
կորսնցուցած էին և լույս չէին տար գրեթե: Պահակ զինվորները, այդ
տաքուկ կրակին քով, իրենց զենքերը գրկած, հուշիկ-հուշիկ կմրափեին:
Առիթեն օգտվելով մեր խումբը կազմ ու պատրաստ, մերկ սվինները

հրացաններուն ծայրը անցուցած, առանց թշնամիին որևէ բան զգացնելու ճեղքեց պաշարման օղակը: Ապահովված էինք և հիմա պետք է շտապեինք հեռանալու այդ վտանգավոր վայրերեն:

1921 թ. հուլիսի 10-ի շորեքշաբթի օրը հասած էինք Ֆոնուզի այգիները: Մեր աչքերուն առջև կպարզվեին գյուղաքաղաքի ավերակները: Ամեն կողմ ջինջ ու սառնորակ ափեր կային և հոս-հոն կանգուն քանի մը պտղատու ծառեր, բեռնավորված՝ թուփի, խնձորի, սալորի պտուղներով: Լիուլի վայելեցինք և մեզի անհրաժեշտ օրվա ուտելիքի պաշարն ալ վերցնելով տարինք մեզի հետ մեր անառիկ դիրքերը: Մինչև երեկո մեր ջլատած մարմինները քիչ մը կազդուրվեցան: Զեյթունեն հեռանալեն ի վեր նման լավ հանգիստ չէինք ունեցած: Հետո, երբ դարձայ իջանք, տեսանք թե պարտեզներուն մեջ տակնուվրայություն մը կար: հայտնի էր, թե նախորդ օրերուն այդ կողմերը մարդիկ հանդիպած էին. արդյո՞ք մեր ընկերներն էին անոնք:

Գարշահոտություն մը զգալի էր: Հետաքրքրվեցանք, որևէ հետք չկրցանք գտնել, բայց ամբողջ մթնոլորտը ապականած էր: Մեր պայուսակները կարելի եղածին շափ լեցուցինք զանազան պտուղներով և իրիկնամուտին ճամփա ելանք դեպի արևելք՝ Զեյթուն, մեր սիրելիները գտնելու հույսով: Ակնհայտ էր, որ այդ ճամփով մեզմե առաջ անցնողներ եղած էին: Ֆոնուզի ջաղացքին մոտ տեսանք արյունոտ շապիկ մը և ձիերու հետքեր:

1921 թ. հուլիսի 11-ի առտուն վասապենց Գըշլան էինք, հոն, ուր կձմեռեին կենդանիները, Ֆոնուզի զետակին եզերքը: Ամեն կողմ ամայություն էր, ավերակ. հայ շունչը դադրած էր բոլորովին: Օր ցերեկով անտառներու մեջեն, ամառվա կիզիչ օդին քալեցինք դարձդարձիկ արահետներ՝ փուշերով ու տատասկներով լեցուն: Հասած էինք Գուրարա գյուղին մոխրակույտը: Ժամանակին երիտասարդությունը խանդ ու եռանդ դարձած՝ Աղասիներուն ասպնջականություն կուտար այդ վայրերուն մեջ:

Անակնկալի եկանք երբ գետեզրը՝ անտառակի մը թուփերուն վրա նշմարեցինք փուված ճերմակեղեններ: Հայտնի՞ էր, որ մեր տղաներն էին, որոնք մեր ոտնաձայնները լսելով հանկարծակի դիրքեր կգրավեին, որևէ պատահականություն դիմազրավելու համար. «Հանձնվեցե՛ք, մի՛ շարժիք».— պոռացին անոնք: Զայնը մեզի օտար չէր: Մերիններն էին: Սրտաճմրիկ էր հանդիպումը: Ութը հոգի էին.— Հովհաննես Սիմոնյան, Եզեկիելյան Մանուկ, Լևոն և Հարություն Գևորգյան և Ֆոնուզցի Սերոբ: Ըստ իրենց տված տեղեկությանց, անոնք 125 հոգիով վերադարձած էին

Ժանոթ եղեռնավայրեն: Երբ Աղալը հասած են, Սեդրակ Մարկանյան, քանի մը երիտասարդներու հետ կհաջողի թրքական Սյուսյուտի գյուղեն կովեր ձեռք անցնել և դանոնք մորթելով բազմությունը կերակրել: Բայց ան օրվա հոգնութենեն կազդուրվելու համար կհեռանա խումբեն: Սեդրակ Չոլագյանը մյուս կողմե, երբ կտեսնե խառնիճաղանճ բազմությունը, կորոշե քանի մը զինակիրներով հեռանալ՝ ժողովուրդը անպաշտպան ձգելով: Ամեն խնդրանք, պաղատանք անզոր կանցնի քարացած սիրտերը մեղմացնելու համար: Նույնիսկ Վարդան Գասապյանը՝ Ազգային միության փոխ-ատենապետը՝ Չոլագյանի խումբին ընկերանալու համառություն համար, կգնդակահարվի: Արշակ Պալճյան, երբ սույն անմարդկային ընթացքին համար սաստիկ բողոք կբարձրացնե, ի՞նք ևս կենթարկվի Վարդանի վիճակին: Արշակ հազիվ 20 տարեկան, Պալճյան մեծ ընտանիքի արժանավորագույն մեկ զավակն էր և Զեյթունի նոր սերունդի ներկայացուցիչներեն: Իսկույն անդրադարձանք որ քիչ առաջ մեր զգացած գարշահոտությունը այդ երկու աննման զեյթունցիներու դիակներեն կուգար: Սույն նողկալի դեպքին վրա ոմանք կորոշեն մաս առ մաս հեռանալ խումբեն, եղբայրասպան աղետի մը ծնունդ շտալու համար: Սիմոնյան, ընկերներուն ընթացքը անհաճո նկատելով, նախօրոք բաժնված էր, եթե ոչ նման վարկաբեկիչ վարմունք մը չէր կրնար տեղի ունենալ:

Ժողովուրդին պաղատանքը, լացն ու կոծը անզոր կըլլան Սեդրակ Չոլագյանի բարկությունը ամոքելու, որով 87 հոգի՞ կին, մանուկ, անգեն Հակոբ Ազատյանի առաջնորդությամբ կնախընտրեն երթալ և թուրքին հանձնվի: Քյուրթյուլ թրքաբնակ գյուղին առջև անոնք բոլորն ալ անխտիր կխոշտանգվին թուրքերու կողմե՝ քարերով և բիրերով: Իրենց կարգին, Արշակ Պալճյանի հորեղբայրը՝ Վարդավառ, Ազգային միության գիտակից անդամներեն և Մարաշի պատվիրակներեն, եղբայրը՝ Անդրանիկ, 30 գարուններ բոլորած հմուտ և խելացի երիտասարդ մը, մյուս հորեղբայրը՝ Լևոն, Ժանոթ առևտրական մը 45-ը անց, Վարդավառի կինը Մարիցա և էմանվել Գուլայանը՝ ընդամենը հինգ հոգի, կերթան Զեյթունի զորանոցը և իրենց զենքերով անձնատուր կըլլան ռիսերիմ թուրքին: Զորանոցին հրամանատարը զիրենք կտեղավորե հեռագրատան կից նորաշեն հյուղակ մը. այդտեղ քանի մը օր հանգստանալե հետո, հրամանատարը կխոստանա զիրենք Մարաշ ուղարկել: Լևոն Պալճյան, իրիկնամուտին, իր բնական պետքը տեսնելու համար կզիմե պահակին, որուն ընկերակցությամբ, մարզարանին առջև, պատին տակ կնստի, իր բնական պետքը կատարելու համար: Այդտեղ, այդ

գործողութեան պահուն, ան կորոշե փախչիլ: Նստած տեղը հարկ եղած պատրաստութիւնները տեսնելով կհանդգնի ինքզինքը Մուխալ աղբջուրի կողմը նետել. պահակ զինվորին հրացանը անզոր կըլլա և կոնը զգետնելու: Ան կազատի: Հաջորդ առտու, մյուս շորսը՝ Վարդավառը, կինը Մարիցան, Արշակը և էմանվելը դուրս կհանեն զորանոցին արևմտյան դռնակէն, սպանելու համար: Արևածագին էմանվելը պահակներուն առջև կհաջողի փախչիլ, իսկ մյուս երեքը Մուրատենց պարտեզին մեջ կխոշտանգվին: Փոստուղի և Արեգինի վերապրողները ևս ի տես Ս. Չուլագյանի տմարդի արարքին, ակամա կբաժնվին խումբէն և կբաշվին իրենց անառիկ լեռները:

Սեդրակ Չուլագյան 30 տարեկան, երկայնահասակ, թիկնեղ, արծվաքիթ երիտասարդ մըն էր: Հայրը՝ Փանոս Չուլագյանը իսկական զեյթունցիի տիպար մըն էր, որ իր կյանքի ամբողջ տևողութեան ընթացքին պայքարած էր թրքական բռնակալութեան դեմ: Ան իր համեստ, պարկեշտ նկարագրին շնորհիվ ամբողջ ժողովուրդին համակրանքին արժանացած էր: 1914-ին, հորս հետ ան Մարաշ տարված էր իր զավակներով՝ Հովսեփին և Արբահամին հետ և գնդակահարված՝ Մարաշի Քիրեճ օճաղը ըսված տեղը, իր 60 ընկերներով: Սեդրակը, հորը մահէն ետք անուպա կյանք մը ունեցած էր: Տարագրութեան շրջանին մտրը ընկերակցած է և հասած մինչև Պապ. հոն իր մայրն ու ազգականները կորսնցնելէ յետո հաջողած է Հալեպ գալ և մաս կազմել սասունցիներու Յիկիտ խումբին: Ապա 6 ընկերներով հասած է Զեյթուն: Ժամանակ մը Զեյթունի լեռները թափառելէ վերջ ան միացած է Եղիայի խումբին: Անկէ հետո հաջողած է Հալեպ վերադառնալ և զինադադարին քանի մը զինակիրներով կրկին Զեյթուն գալ:

Ազգային միութեանը, իր կազմը լրացնելու և զայն ավելի հաստատ հիմերու վրա դնելու համար, որոշած էր Հարութեան Յաղուպանը, Հարութեան Գասապանը և Սեդրակ Չուլագյանը միութեան անդամ ընդունիլ: Քաղաքականութեան հարափոփոխ վիճակը և տնտեսական պայմանները Սեդրակին առջև նոր ասպարեզ բացած էին: Ան հովանավորած էր Միքայել Տինկիշյանի խումբը, անկէ կարենալ օգտվելու հուշատով: Իր հորեղբորորդին՝ Արամը, մտադրած էր, վասն հանրութեան օգտին, գնդակահարել Սեդրակը, երբ այս վերջինը, Տինկիշյանի սպանութենէն հետո, զգաստութեան շարք տակավին:

Երկու Սեդրակներ՝ Մարկանյան և Չուլագյան, Անտրոնէն ազատագրված և Աղալը վերադարձող 125 հայրենակիցներէն միայն 22 երիտասարդով, հասած էին Զեյթունի դիմացը Տոզ ըսված վայրը, Սուլագուն-

տեյի հարակից, ուր գտած էին Հովսեփ Յապրիգաճյանը, Լեոն Խուլմունյանը, Գրիգոր Տուրնայանը, Մանուկ Օհանյանը և Ավետիք Բեթելյանը: Առաջինը՝ Զեյթունի պաշարման օրը այգին մնացած էր, իսկ երկրորդը փախած էր Գրըլավուզի սպանդէն: Որով անոնք այժմ ընդամենը 27 հոգի եղած էին:

1921 հուլիսի 11-ին գիշերեցինք Գուրա հայաբնակ գյուղի հյուսիսարևելքը, Զեյթունի և Փոստուղի գետակներուն միացած տեղը: Գյուղի թթենիներէն բավական օգտվեցանք: Արշալույսին ճամփա ելանք դեպի արևելք, ապա անցանք Կյուրեատինի կիրճէն և արևածագին հասանք Արեգինի գյուղերէն: Պեհիսնի հայաբնակ գյուղը՝ Տուշենց տունները: Ան կիշխեր Արեգինի բոլոր գյուղերուն վրա. իր առջև կպարզվեր Ճիհան գետը, որ օճապատույտ գալարումներով, դաշտերն ու լեռները ճեղքելով, կերթար միանալու Միջերկրական ծովին: Ան իր մեջ, իր սրտի խորը ամփոփած էր հայ Եղեռնէն բազմաթիվ զրկագներ ու անհագաբար կուտոված էր անթիվ, անհամար անմեղ արարածներ... Անոր արևելյան կուրծքին տարածված էին Բերդիզի թրքաբնակ գյուղերը, Կիլիկիո իշխաններէն Գող Վասիլի ապօրեն ժառանգորդները, որոնք բազմաթիվ անգամներ Զեյթունի արդար բռունցքն էին ճաշակած: Անդին, հազիվ մեկ ժամ հեռավորութեան վրա, հարավակողմը կգտնվեր Քյուրթլու թրքաբնակ գյուղը:

Գյուղին եզերքը քանի մը հոգի ալ կկամենին: Մանուկ Ճելլատյան և Փոստուղի Սերոբ հոն գացին ուսումնասիրութեան համար: Գյուղացիք այդ տարի տակավին ամառանոց ելած չէին: Գյուղին մոտ նոր պահականոց մը հաստատված էր, հետևաբար, ցերեկային հարձակում մը նպաստավոր արդունք չէր կրնար տալ: Արևը սկսած էր այլևս դեպի արևմուտք հակիլ, երբ զիտակով մեկը տեսանք, որ ճիշտ մեր հետքին վրայն կուգար: Թուրք հետախույզ մը կարծելով զայն, հրահանգվեցավ մեր պահակներուն, որ ողջ-ողջ ձերբակալեն, առանց որեւէ գնդակ պարուելու, անաղմուկ: Եկողը մեր զինակիրներէն Կարապետ Թաշճյանն էր՝ Անտրոնի վերապրողներէն: Ան, 60 տարեկան, շատ արկածներ անցուցած, կոխմներու մասնակցած, գաղթականութեանը իր ամբողջ դառնութեամբ ճաշակած, իր բոլոր ազգականները մահվան անգութ ճիրաններուն հանձնած, միայն իր 18-ամյա որդուցն՝ Վարդավառին հետ վերադարձած էր հայրենիք իր մոխրակույտի վերածված բուշըր վերաշինելու նպատակով: Զորանոցին մեջ, պաշարման առեւն, ան կրցած էր իր փափաքին գոհացում տալ իր միակ հույսն ու լույսը հանդիսացող Վարդավառը ամուսնացնելով: Ան ունեցած էր նաև անուշիկ թոռնիկ մը,

որ իր միակ հոգեկան հաճույքն ու մխիթարանքը կկազմեր: Զորանուցեն ելլելու պահուն, Վարդավառ, իր սիրած ու պաշտած կնոջ՝ Մարթային խնդրանքը շկարենալով մերժել, մայր ու մանուկ միասնաբար անշնչացուցած էր: Ան հիմա դարձած էր իր հորը անբաժան ընկերը իր զինակիրներուն կողքին, վրեժը սրտին և արյունը աչքերուն, ամեն տեղ, ամեն բախումի ժամանակ գերմարդկային հանդգնություններ ցույց տալով: Անտրունի մեծ աղետի ատեն հայր ու տղա զիրար կկորսնցնեն: Որդեկորույս հայրը, խելագարած, կսկսի անտառին մեջ թափառիլ իր սրտահատորը գտնելու հույսով: Հանկարծ թուփերու ետին խշրտոց մը, շշուկ մը կլսես: Կարծելով թե թշնամի պահված է հոն, ուշի ուշով հրացանին բլթակը կբաշե: Աղիողորմ ճիչ մը կլսվի հանկարծ... Կփութադեպքին վայրը, բայց ի՞նչ տեսնես... իր որդին՝ Վարդավա՛ռը, արյան ճապաղիքներու մեջ անկենդան ինկած... Ահաբեկած և կիսախելագար, ասդին անդին թափառելե հետո, ան մեր հետքերը հետապնդելով կուգա մեղ կգտնես:

Հուլիսի 12-ի իրիկնամուտին, Քյուրթյուլի կողմը հարձակելու մեր ծրագրի ձախողությունեն ետք, որոշեցինք վարք, Յունկյութի ճամփան բռնել և այդտեղի երթևեկողները հետապնդել, օգտվելու համար անոնց ունեցածներեն: Հասանք Զեյթունի գետակին եզերքը, Յեկենենց գյուղը, մեր որոշումները իրագործելու համար: Բայց մեր ընկերներուն մեջ փրսփրսուք մը սկսած էր: Ոմանք կփափաքեին փոխանակ Զեյթունի լեռները վերադառնալու, ձիհան գետը անցնիլ ու հասնիլ Այնթապ կամ Օսմանի՜յե՝ ազատ գոտի: Շատ լավ ծրագիր էր, բայց ինչպե՞ս դասալիքներու նման թողուլ մեր բոլոր սրտահատորները:

Այդտեղ, այդ մոխրացած գյուղին մոտիկ, գետեզրի պուրակին մեջ, մեր մարտիկները միաձայնությամբ մերժեցին նման տմարդի և ոչ ասպետական առաջարկ մը: Անոնք նույնիսկ հանդգնեցան զինաթափել այն ընկերները, որոնք համարձակած էին իրենց անձնվեր զինակիրները դասալքության մղել: Որոշվեցավ երթալ դեպի Զեյթունի պատմական լեռները, մեր ընկերները գտնելու հույսով: Զենքերը վերադարձուցած էինք դասալիքներուն, որովհետև թե՛ զանոնք կրելու տաղտուկը կար, և թե՛ ամեն վայրկյան անակնկալներու առջև կգտնվեինք: Մեր հանգրստավայրեն հազիվ կես ժամ հեռացած էինք, երբ նշմարեցինք մեր մեջեն 8 հոգիի պակասը: Թուփերու մեջ պահված էին խոստումնադրուժները, որոնք հետո խույս տալով ապահով կերպով կհասնեն Այնթապ:

Գիշերը հասած էինք Գապա-Պոլուն, Գայափախենց հայաբնակ գյուղը, որ բոլորովին ամայի և ավերակ էր: Թուրքական բարբարոսություն

նը այդտե՛ղ ևս կատարած էր իր գործը: 1921 թ. հուլիսի 13-ի արևածագին, Ալապողանենց հայաբնակ գյուղի աղբյուրին մոտիկ, խոր մտածումի մեջ թաղված էինք ի տես այդ շրջանի քար ու քանդ վիճակին: Նախքան պատերազմը, այդ գյուղին տանուտերը՝ Փանոս աղան իր քաջագործությամբ և իր ասպնջականությամբ ինչպիսի՛ մեծ հարգանք կվայելեր:

Արեգին եղած էր ազատագրական շարժումի մեծ կենտրոն՝ տերը դառնալով փայլուն անցյալի մը: Հիմա բուերը ավերակներու ծերպերուն մեջ բույն դրած, իրենց վու-վուով անվերջ կողբային: Տակավին հոս ու հոն, պարտեզներուն մեջ, կտեսնվեին մի քանի պտղատու ծառեր, բեռնավորված խնձորի և ծիրանի պտուղներով: Ոտնահետքերու գոյությունը և ծառերու ոստերուն գետին թափված ըլլալը ցույց կուտային, որ նախորդող օրերուն մարդիկ անցած էին այդտեղեն: Շատ հավանական էր, որ անցնողները մերինները եղած ըլլային:

Այդ օրը, մինչև իրիկուն, պարտեզներուն մեջ, ավերակներուն առջև, աղբյուրին քովիկը, հանգիստ ու խաղաղ բնության բարիքները վայելելով, որոշեցինք մարդկային այդ հետքերը հետապնդել: Եթե անոնք մեր սրտակիցներն էին, մեծ բախտավորություն մը պիտի ըլլար, իսկ եթե թշնամիներ էին, ծարավն ունեինք մեր պապենական հողին վրա անոնց հետ շափվելու: Խորհուրդորդ-ճամփաներ, տեսակ տեսակ ծառերով լեցուն անտառներ գլած, անցած էինք առանց զգալու: Մեր առջև երկու ուղի կբացվեր. կամ միանալ մեր ընկերներուն և կամ արժանի դաս մը տալ այդ կողմերը գալ հանդգնող թշնամիին: Մոտեցած էինք 75 տնվոր ունեցող հայաբնակ Խեպի (Ֆենկ) գյուղին, որ բարձրաբերձ բլուրներով շրջապատված Շեմպե լեռան հարավ-արևմուտքը կգտնվեր: Զեյթունի այգեստանն էր ան, որուն արևելյան կողմը կգտնվեր Սոխտալուր ըսված պաղ և առատաբուխ աղբյուրը: Խեպին մաս կկազմեր Արեգինին, բարեկեցիկ գյուղ մըն էր, բայց տեղահանությունը բոլորովին բնաջնջած էր անոր բնակչությունը. միայն կին մը, Թագուհի անունով, ողջ էր մնացեր:

Բլուրի մայրիներուն մեջ դիրք բռնած շրջանը կզննեինք, երբ վարը՝ ձորակին մեջ, աղբյուրին մոտիկ, մարդկային ձայներ սկսան լսվիլ: Անմիջապես մեր մարտիկները մերձակա բլուրները ամրացան և պատրաստվեցան հարձակումի: Բարեբախտաբար մեր հարադատներն էին անոնք, ընդամենը 14 հոգի, Նազարեթ Պոյամյանի և Նազարեթ Կեմիքսիգյանի ղեկավարությամբ: Ողջագործումներն ու համբույրները վերջ չունեին: Անոնք ևս Անտրունի աղետալներն էին: Նազարեթ Պոյամյանը

և Խաչեր Նորաշխարհչանը Անտրունեն վերադարձին էլմատաղի կողմերը իրար կկորսնցնեն: Հետո Նազարեթը, Կեմիքսիդյանի ղեկավարած խումբը կհաջողի գտնել, որուն մաս կկազմեին նաև իր հորեղբորորդիներ Սահակը, Հարությունը, Փանոսը: Էլմատաղի հարավային լանջքին, Կեմիքսիդյանի առաջնորդած խումբը շատ ապահով կերպով կհասնի Խեպի՝ ճանապարհին քանի մը անգամ հետախույզ թրքական ջոկատներու հետ բախումներ ունենալի հետո: Նախորդ բախումի ընթացքին անոնք կորսնցուցած էին 18-ամյա պատանի մը՝ Լեոն Նոխուտյանի տղան: Եկողները անմիջապես մեր առջև թափեցին իրենց ամբարած պարենը՝ թուփ, խանձված ցորեն: Ըստ իրենց տված տեղեկությանց, Սեդրակ Մարկանյանն ու Սեդրակ Չոլագյանը իրենց ղինակիցներով՝ Զեյթունի դիմաց, Սոլագ Տետեյի հարակից՝ Տոզ կգտնվեին:

Նույն գիշերը Արամ հինգ ղինակիցներով մեկնեցավ Տոզ, այն հաստատ հույսով, թե հաջորդ օրը ան մեզի պիտի դիմավորե Ավագ-Կալի առջև, Բլուր կոչված վայրը: Տարբեր ուղղությամբ խումբը ճամփա ելած էր: Խեպի գտնվողներու որոշ մեկ մասը չհափազեցավ մեզի միանալ:

1921 հուլիսի 14-ին խումբը ապահով կերպով հասավ Ավագ-Կալի առջևի Բլուր ժամադրավայրը: Ցած թուփերոյ ծածկված քարքարոտ բլուր մըն էր ան՝ Ղոչախի, Խանոսի, Սոլագ Տետեյի լեռներուն խորը: Վարը, ձորին մեջ, Անտուլ կոչված հայաբնակ գյուղը կար, դիմացը՝ Ավագ-Կալը, որ 75 տուննոց գյուղ մըն էր՝ դպրոցով և եկեղեցիով: Բլուրին առջևեն կանցներ Թանր-Տյունկել թրքաբնակ գյուղերը առաջնորդող ճամփան: Այդ բլրակին վրա, ցածրիկ թուփերուն տակ, քարերուն հտին հուլիսի կիզիչ արևը կխանձեր, ջուրի պակասը խիստ զգալի էր, շարժիլը հարմար չէր, մեր թաքստոցը նպաստավոր դիրք մը չուներ: Ժամը 10-ին, մեր դիմացը, արևելյան կողմեն, Զեյթունեն Տրդ-տրդ կոչված բլուրեն վար կիջնեին մոտ 150 թուրք զինվոր, ջորիներու վրա ուղմամթերք բեռուցած: Անշուշտ մեր առջևեն պիտի անցնեին անոնք. առիթեն պետք է օգտվեինք, ամեն ատեն այդպիսի առիթ չէր ներկայանար: Բայց երկու պարագա կար, զոր կարելի չէր անտեսել. առաջինը ա՛յն էր, որ անհաջողության պարագային Արամը և իր ընկերները նույն գիշերը չէին կրնար մեզ գտնել, քանի որ այդտեղ էր մեր ժամադրավայրը և բախումն մը վերջ մենք պարտավոր էինք հողեկան անպայման հեռանալ. երկրորդ՝ եթե առաջին իսկ համազարկով չհարենայինք

զիրենք մաքրագործել, հեծյալ գունդեր անմիջապես զորանոցեն: Կարող էին օգնության հասնիլ: Թրքական ջոկատները մեծ զգուշությամբ մեր առջևեն անցնելով հասան Ավագ-Կալ: Այնտեղ՝ աղբյուրին մոտ, դարավոր սոսիի մը կուրծքեն վազող առատ և սառնորակ ջուրին առջև լավեցան հրացանի քանի մը պայթյուններ և խանդավառության բացականչություններ: Ապա լուծյուն տիրեց: Արևը իր հրածեշար տված էր, պետք էր այցելություն մը տայինք մեր աղբյուրին, մեր հրատաշոր սրտերը զվացնելու և այցելելու նաև ավերակ եկեղեցին՝ մեր հոգեկան պահանջքին գոհացում տալու համար: Աղբյուրին մոտ, մացառներու մեջ արյան ճապաղիքներու մեջ ինկած գտանք երեք անդեն, անմեղ դիակները Գալուստ Գասնաբջյանի, Հայաստան Սոլաբջյանի և Անդրանիկ Պապութուրյանի: Մեր ընկերոջ՝ Սիմոնյանի «Հայր մերով» բաժնվեցանք մեր սիրելի հայրենակիցներեն՝ արցունքը մեր աչքերուն: Գյուղին ավերակներուն մեջ մեզի միացան Գրիգոր Չոլագյանը, Լեոն Նոխուտյանը և Հովհաննես Չյոչեկյանը: Ժամը 8-ն էր, երբ հառաջացանք զեպի Խանոսի կիրճը, անկե Սոլագ Տետեյի բարձունքը հասնելու համար: Հագիվ Զազըրը հասած մեզ դիմավորեցին մեր երկու ընկերներեն՝ Վարդան և Կարապետ Հաճի Կարապետյանները, որոնք Ազալրեն մեկնած առաջին գիշերվա երկրորդ բախումին անհայտացած էին: Արամը զրկած էր զանոնք Տոզեն, մեղ առաջնորդելու համար: Ժամը 12-ն էր: Զեյթունեն 11 ժամ հեռու եղող Սոլագ Տետեյի լանջքին վրա Խանոսի դիմացի Հաճի Տերե գյուղը կգտնվեինք, որը բոլորովին ավերակ դարձած էր, միայն քանի մը տուններու պատերը կանգուն մնացած էին: Գյուղը ջրաբքի էր, ուներ պարտեղներ, մանավանդ շրջապատված էր հսկա ընկուղենիներով:

1921 հուլիսի 15-ի արշալույսին հասանք Ծովք — Տոզի և Սոլագ Տետեյի գրկին մեջ բացված կանաչազարդ և ջրաբքի հովիտը, որ գույնը գուլյն ծաղիկներով և բարձր ուռիներով ծածկված էր: Յաղուպյան իշխանական տոհմին ամառանոցն էր ան, որուն բլուր կողմերեն ակեր գուրս կժայթքեին՝ ջինջ և սառնորակ: Վերհիշումներ, հոգեխոտով մտածումներ մարդ արարածը կսահմուկեցնեն, կըմբեցնեն: Միթե՞ հնարավոր էր մոռնալ այն ուրախալի օրերը, երբ ամեն գարնանամուտի կանաչ կիրակիին Զեյթունի չափահաս ամբողջ աշակերտությունը և ջիվան երիտասարդությունը, մինչև ակառները ղինված կփութար այդտեղ, այդ անմահական աղբյուրներուն քով, գեղեցկատես ուռիներուն տակ, այդ զգլխիչ և երփներանգ ծաղիկներու դաշտին մեջ իր ավանդական ղինա-

փորձերն ու նշանառութեան վարժութիւնները կատարելու համար: Յաղուպայան թաղի մեծ տանտներն են: Անդրեասյանը, Հաճի Կարապետյանը, Զոպայանը, Վարդանյանը իրենց հյուրասիրութեամբ մրցակցութեան կելլեին. գառնուկներու ճենճերը, կարագի, պանիրի, մածունի առատութիւնը հիացում կազդեր բոլոր այցելուներուն:

Իսկ այդ օրը, 1921 հուլիսի 15-ին, Զեյթունի ժողովուրդին բեկորները, մերկ ու նոթի, հոգնած ու վշտաբեկ եկած էին միևնույն դրախտավայրը, թշնամի հալածանքեն խուսափելով, այդ կենսատու և անմահական աղբյուրներուն քով փոխան գառնուկներու խորովածին՝ ուտելու առանց աղի բանջարեղենե պատրաստված անհամ կերակուր մը:

Խումբը կղժկամակեր դեպի վեր՝ Տոզ ելլել, որովհետև Աղալըի եղեռնը տակավին թարմ էր. ոչ ոք կփափաքեր Սեդրակ Զոգաքչանը տեսնել. ան մոտ հարյուր հոգիի կորստյան պատճառ դարձած էր: Արամ, վեհոգի զեյթունցին, իր հորեղբորորդւոյն արարքը այպանելով հանդերձ, աշխատեցավ ողբերգութիւնը անթեղել, քաջ դիտնալով, որ երկպառակութիւնը կրնար բոլորովին կորստյան մատնել մեզ:

1921 հուլիսի 15-ին ճիշտ 70 հոգիով Տոզ հասած էինք, որը Զեյթունի հյուսիս-արևմուտքը՝ Օզգայասը կիրճին վերը, միակտուր սեպ ժայռ մըն էր, անառիկ լեռ մը, բոլորովին մերկ, հարակից Սուլազ Տետեյի լեռան: Հյուսիսեն ան թեպետ կցված էր Կարմիր լեռան, բայց իրական ամբողջուն մըն էր: Միայն արևմտյան կողմը քիչ մը խոցելի էր, որով տեսակ մը բերդ էր ան: Անոր ամենամեծ անպատեհութիւնը ջուրի պակասն էր, ջուրը պետք էր բերել կես ժամ հեռուէն:

Այդտեղ, այդ լերկ ու ժլատ լեռան գագաթը, երեք օր հանգիստ քրինք: Ամեն իրիկուն, մթնշաղին, բոլորս միասին Յաղուպայաններու պարտեզները կիջնեինք և հասկաքաղ ընելով կվերադառնայինք: Անթութիւնը, ծարավը, ամեն ինչ վերջ գտած էր, մեր հոգնաբեկ մարմինները ևս բավական կազդուրված էին: Օրն ի բուն մեր աչքին առջև կտեսնեինք զորանոցը և մեր ամբողջ հույսը եղող ցանքերը, զորս կհնձվեին թուրք գյուղացիներու կողմէ: Ի՞նչ դժխեմ ճակատագիր. մեր քրտնաթոր աշխատանքի արդունքը պիտի երթար թշնամու որկորը... Միթե՞ նախախնամական արդար կարգադրութիւն էր ասիկա...

1921 հուլիսի 17-ին ընդհանուրին համաձայնութեամբ խումբը ուղղվեցավ դեպի արևմուտք՝ Սյուլյուքի Կյուլ, Ահմետճիք թրքաբնակ գյուղերը: Այդ օրը, Պալենց գերեզմանեն, Կարմիր լեռան լանջքը ճեղքելով հասած էինք Գոչ Թարը անվակին եզերքը՝ սոսիներուն տակ, ապահով և հանգիստ վայր մը: Այնտեղ որոշվեցավ Մանուկ ձեւաւտ-

յանի ղեկավարութեամբ 12 հոգինոց խումբ մը ղրկել Սյուլյուքի Կյուլ, ուր բուրդեր կապրեին, աղ և պարեն բերելու համար: Թեև հասկաքաղ քրած, մեր պայուսակները լեցուցած էինք խանձված ցորենով և թութով, բայց հացի և աղի պակասը շատ զգալի էր: Իսկ Տյովլեթ Քիրեճյանը, որ Աղալըի կոնվին թեևն վերավորված էր, պիտի երթար Կյուլյուք, շերքեզ Ձոճո Յուսուֆին մոտ, միասին Ատանա երթալու համար. ապա ան պիտի խնդրեր վերոհիշյալեն, որ գար Քասաղը Փունարի մոտ գտնվող Մելքիսեղ լեռան ստորոտը մեզ հետ տեսակցելու:

Շաբաթ օրը, ամսույն 18-ին, Մելքիսեղ լեռան ստորոտը, կարկաչուն առվակի մը եզերքը, պարտեզներուն մեջ անհամբեր կսպասեինք ձեւաւտ Մանուկի խումբին, ինչպես նաև Ձոճո Յուսուֆի գալստյան: Ճիշտ կեսօրին խումբը աղով բեռնավորված ապահով կերպով հասած էր, բայց Յուսուֆը տակավին չէր վերադարձած Ատանային: Ետքեն ստացված տեղեկութեանց համաձայն, կառավարութիւնը տենդոտ կերպով ձեռնարկած էր կամավորներու խումբերու կազմութեանը՝ «Զեյթունի շեթեները» հետապնդելու և ոչնչացնելու համար: Զորանոցին մեջ մնացող ծեր, կին, մանուկ՝ կառավարութեան կողմէ հավաքվելով Մաքաշ փոխադրված և հանձնված էին ամերիկյան միսիոնարութեան հոգածութեան, որը Անտրունի աղետահարները ևս կենտրոն բերելով իր խնամքին տակ առած էր: Թրքական կառավարութիւնը միևնույն ժամանակ Զեյթունի շրջակայքը զինվորական կայաններ հաստատած և ինքնապաշտպանութեան համար զենք բաշխած էր: Այդ օրերուն հույն-թրքական պատերազմը հասած էր իր զենիթին: Հունական բանակը մինչև Սաքարիա գետը հասած՝ կսպառնար Անկարային: Հայ կամավորական խումբեր մաս կկազմեին այդ արշավախումբին: Յրանսացիք որոշած էին Կիլիկիային քաշվիլ: 1921 թ. հուլիսի 20-ին Արամը և մեզմե 7 հոգի Գարսի կամուրջը անցնելով և Անդի առուի եզերքեն քալելով հաջողեցանք Զեյթուն մտնել: Մարդ մարդասանք չկար: Ամեն կողմ ամալութիւն: Քանի մը տուներ այցելեցինք, մտանք Արամի բնակած բողոքականաց շենքը: Բոլոր տուները տակնուվրա եղած էին, գիրքերը դարակներեն գետին թափած, դռները՝ կոնակի վրա: Ընկերները առաջարկեցին բոլոր տուները կրակի տալ, բայց շթուպարվեցավ, որովհետև հայուն քործը ոչ թե քանդել, այլ միշտ շինել եղած է:

Բարձրացանք Զեյթունի հյուսիսը՝ Զեյթը լեռան լանջքին, զառիթափի մը վրա տարածված Այդեստանը՝ Արաֆա և էյոճ (այրած) կոչված բուրի այգիներուն մեջ քարի մը վրա նստած, սկսանք դիտել Ս. Աստվածածնա վանքը, ապա մեր մեկ-երկու տարվան ապաստանարանը՝ զո-

րանհոցը, մեր կանաչազարդ պարտեզները և մեր ամբողջ մեկ տարվա քրտինքով հասած ցորենի ցանքերը:

Թուրք զինվորները զորանոցին շորս կողմը վրաններ լարած, տեղավորված էին, իսկ գյուղացիք մեր շեն պարտեզները գրաված ծառերու տակ հյուղակներ շինած էին: Ողբացինք մեր սիրելիները, անիծեցինք մեր սև ճակատագիրը և նախատեցինք քաղաքակիրթ մարդկությունը...

Ժամը 12-ին ապահով կերպով խումբին միացանք Գարսի մեջ: Գետաբերանը, ժայռերու ստորոտը գտնվող բաց տարածություն մը բանակատեղիի կերպարանքը ստացած էր: Մի քանիներ կլոգնային, անդին ոմանք վագր կընեին, ուրիշներ նստած բանջարեղեն կստեկին. սիսեռ, լուբիա, սոխ, սխտոր, դդում, բակլա լեցնելով կաթսաներու մեջ կխաշեին: Իրիկնամուտին որոշված էր տեղափոխություն ընել: Նման կըզգիացած վայրերու մեջ երկար բնակությունը վտանգավոր էր. եթե պաշարվեինք, դուրս ելլելու հնարավորություն գրեթե պիտի չունենայինք:

Մեր բնակատեղիեն հեռանալե հետո, հաջորդ օրվա ուտելիք ճարելու և մեր նոր երթալիք կայանը ճշտելու համար խորհրդակցության մեջ էինք, երբ պահակները տեղեկացուցին, թե ոչ շատ հեռուն կերևային երկու մարդ: Քիչ հետո հայտնի եղավ, որ մեր Անտրունի ընկերներեն Գևորգ Ղազարյանն ու Սեդրակ Տեր Մովսեսյանն էին: Խաչեր Միքայելի նորաշխարհյան, Անտրունի աղետեն ազատած խումբ մը մարտիկներով, կհաջողի անցնիլ Կապանի լեռները և հոն՝ իր ընկերները կերակրելն վերջ ապահով միջոցներով կվերադառնա Ջեյթունի լեռները: Խաչեր, Հովհաննես Պուղոտույանի հետ, Չուգուրհիսարեն քանի մը մսացու կով բերելով լավ մը կկշտացնե ժողովուրդը: Ան, Ֆոնուզի մոտերը, 9 թուրք փախըստական զինվորներ կբռնե և բավական լուրեր կբաղե անոնցմե: Ապա Խաչեր իր երեսունհինգ հոգինոց խումբը շատ ապահով կերպով կհասցնե Ավազ-Կալի ետևը գտնվող Գոշագ լեռը: Տարագրության ամբողջ շրջանին ան Ջեյթունի լեռները ապաստանած ըլլալուն քաջածանոթ էր շրջակա լեռներուն, ձորերուն, բոլոր ճամփաներուն: Իր խումբը Գոշագ լեռը տեղավորելով, ինք քանի մը զինակիրներով կմեկնի դեպի Սյուլլուբլիյ Կյոլ թե՛ այդտեղի քուրդերեն մեր մասին տեղեկություն առնելու և թե՛ խումբին պարեն հայթայթելու համար: Ան Ջեյթունի և Արեգինի կողմերը ևս սուրհանգակներ կդրկե վերապրողներեն լուր մը կարենալ առնելու համար: Ահա՛ Գևորգ և Սեդրակ այդ սուրհանգակներն էին, որ եկան մեզ գտան: Խաչեր անոնց հետ ժամադրված էր Սուլագ Տետե՛ Մովք: Գևորգ և Սեդրակ ուրախ տրամադրությամբ գիշերով վերադարձան Գոշագ, գիշերը իրար հանդիպելու համար Մովքի մեջ: Մեր խումբը իր թաքստոցեն ժա-

մը հինգին դուրս ելլելով կաշխատեր պարեն ամբարել և ժամ առաջ Մովք երթալ, Խաչերի խումբին միանալու համար: Ժամը 10-ին, կազմ ու պատրաստ, մեր հավաքած մրգերն ու բանջարեղենները մեր պայուսակներուն մեջ լեցուցած ու մեր շալակն առած, սկսանք մագլցիլ Սուլագ Տետեյի բարձունքը:

Հագիվ Գարահը՝ Չուլագյաններու այգին հասած, աղբյուրին մոտ գտանք Միսակ Գապուշյանը՝ կաղ, բայց խիզախ երիտասարդը, որ քանի մը ընկերուհիներով Ֆոնուզեն վերադարձած էր: Սեդրակ Չուլագյան, իր կինը Հայկուհին և ընկերուհիները տեղավորելու համար, քանի մը ընկերներով բաժնված էր մեզմե: Գիշերվա ժամը 12-ին ամբողջ խումբը, Սուլագ Տետեյի բարձունքը համախմբված, ուղեց հանգստանալ: Անոնք վայելեցին բնության հրաշալիքը այդ մթության մեջ, տեսան զորանոցին շուրջ ու Կարմատիբի պարտեզներուն մեջ պլպլացող աղոտ լույսերը. և դառնորեն ողբացին իրենց դժխեմ ճակատագիրը: Հյուսիսային սյուլքը սկսած էր անուշ փշել և մեր քրտնած ու խոնջած մարմինը մրափի կհրավիրեր: Արամ և Սիմոնյան, ավելի փորձառու, առաջարկեցին միայն որոշված վայրը հասնելե հետո հանգչիլ: Անոնց ընկերացած էր նաև եղբայրս՝ Ռուբենը: Երեքը միասին հառաջացան դեպի կիրճ մը, որ նեղ շավիղներով բացված էր երկու ցցվածքներու մեջտեղը: Բոլորն ալ համամիտ էին սույն առաջարկին և սիրահոժար հետևեցան երեք առաջնորդներուն: Հագիվ կիրճ մտած էին անոնք, երբ երկու կողմեն սոսկալի հրացանաձգություն մը սկսավ: Կրակի բոցեր իրար խառնված, փայլ կուտային շորս կողմը: Գիմադրությունը կարելի չէր: Կիրճին ճիշտ մեջտեղը մնացած էինք: Տեղացող զնդակները ահաբեկիչ և մահացու էին: Միայն երկու հոգի, կիրճին արևմտակողմը, քարի մը ետևը կողք կողքի նստած, կնայեինք աչ ու ձախ, մանավանդ ձայնի մը ուղղությունը, որ կըսեր. «Հասա՛ն չավուշ, աջեն ձախ»: Ատեն մը վերջ հրացաններու ձայները դադրած էին, երբ մեզի մոտեցավ պատանի Նշան Աղպաշյանը, և հայտնեց, թե խումբը ողջ առողջ վերադարձած էր Գարապո: Այլևս անհնար էր հետևիլ, որով բնիկ Հաջի Տեքեցի Նշանի առաջնորդությամբ իջանք դեպի Խանոս և այդ ճանապարհով գացինք Գոշագ, Խաչերի քով: Գոշագը կգտնվեր Ավազ-Կալ գյուղին կոնակը, արևմտյան կողմը, որ մոտ մեկերկու ժամ հեռու էր Ջեյթունեն: Խոժոռ և անտառապատ լեռ մըն էր ան: Յից ու սեպածև գագաթեն քիչ մը վար, հագիվ քանի մը տասնյակ քայլ հեռու՝ կհոսեր աղբյուր մը, զոր մեր հայրերը կոչած էին Սովի աղբյուր: Իսկապես շատ ժլատ ջուր ունեւր ան, բայց պաղ ու վճիտ էր: Գոշագը բոլորովին անջատ լեռ մըն էր, շորս կողմեն ազատ՝ ան բնական բերդի

մը հարմարութիւններն ունենալ: Նման վայրի մը գոյութիւնը հազվագոյն ապաստանարան էր փախստականներու համար: Ոչ ոք կրնար երևակայել, որ այդ բարձունքին վրա կարելի էր ջուր գտնել:

Խաչեր, մեր սիրելի հորեղբորդին, ողջագուրումներով դիմավորեց մեզ:

Մեր խումբեն որևէ լուր չկար սակայն: Երեք հառաջապահներուն՝ Արամի, Ռուբենի և Սիմոնյանի կենդանի ըլլալը կասկածելի էր. ճիշտ կիրճին մեջտեղը հասած, անոնց վրա կրակ բացած էին թուրքերը: Հոգեկան տագնապի մեջ էինք: Խաչերը գտանք, սակայն Ռուբենն ու ընկերները կորսնցուցինք:

Բարեբախտաբար, շատ շանցած, երևացին անոնք: Մեր ուրախութեան շափ-սահման չկար այլևս: Զերմորեն ողջագուրվեցանք: 1921 հուլիսի 23-ի կիրակի առտուն, Գոշագի բարձունքին վրա, բացի Խեպեն վերադարձած կիներեն և անկարներեն (որոնք ապաստանած էին Պապիկ փառայի քարայրը), 66 հոգի կազմ ու պատրաստ էինք, բոլորս ալ զինված՝ մավզեր և շագմազը հրացաններով:

1921 թ. հուլիսի 24-ին, իրիկնամուտին, 66 հոգինոց խումբը իջավ Գուրա գետեզրը: Ողջագուրումներով ու փոխադարձ մաղթանքներով բաժնվեցանք իրարմե ան հաստատ հուշով, որ երբորդ օրը Ֆոնուզի Ս. Կարապետ վանքին կոնակը զիրար պիտի գտնենք:

1921 թ. հուլիսի 27-ի առտուն, երկարատե թափառումներէ ետք, հասած էինք Ֆոնուզի Գարատու ճաշարանակ գյուղի հանդիպակաց սարահարթը, որ ծածկված էր բարձրաբերձ սարերով: Մայրիներուն տակ գումարված խմբապետական մեր ժողովը որոշեց երկու հոգի զրկել Գասապենց Գշլան, հոն բերված և պահված հագուստեղենները բերելու: Այդ սարահարթին վրա ներկա էինք զինյալ և ոչ զինյալ՝ ընդամենը 99 հոգի: Ֆոնուզիք ևս, իրենց կիներն ու անկարները թողուցին էին քարայրի մը մեջ: Հուլիսի 27-ին Գարատու ճաշարանի վրա համախմբվելով, բաժնեցինք բերված հագուստները, որոնք բոլորն ալ զինվորականի համազգեստներ էին:

Անկե վերջ արշավախումբը սկսավ համրաբայլ հառաջանալ դեպի Աղալը, իր հետ անհրաժեշտ պարենը վերցնելով: Առտու կանուխ հասած էինք մեր ժամադրավայրը՝ ուր ամառվան այդ կիզիչ օրերուն ձյունակույտեր մեզ կըրջապատեին: Հոն արևը իր ազդեցութիւնը կորսնցուցած էր, եղանակը իրապես ցուրտ էր: Խումբերը անմիջապէս գործի սկըսան: Գրավված կենդանիներուն մեծ մասը մորթվեցավ: Քանի մը օր

այդ լեռան կոնակին վրա, ձյունակույտերուն մոտիկ կըցած էինք մեր առողջութիւնը վերագտնել և կազդուրվել: Պարենի առատ պատրաստութիւն տեսանք և զայն պահեցինք ապահով վայրեր:

Մեր տեղը թշնամիին չզգացնելու համար պետք է հեռանայինք: Աղալըի դիմացը, Ս. Կարապետ վանքին կոնակը փոխադրվելը հարմարագոյնն էր, որովհետև տակավին մեր քով ողջ կենդանիներ կային, որոնք չէինք կրնար հեռուները տանիլ: Հասանք Գրախտոկ: Այստեղ բարձրաբերձ, սեպ ժայռերու կողքին կային նաև երփներանգ ծաղիկներով և կանաչութեամբ ծածկված հիանալի հարթավայրեր: Ամեն անկուն կարծես մասնակի շինված ամրոց մըն էր: Գրախտոկը շատ անառիկ դիրքեր ուներ:

1921 օգոստոսի 4-ին, մեր ավելորդ պարենը ապահով վայրեր պահելէ վերջ, հրաժեշտ տվինք իսկապես դրախտի նմանող Գրախտոկ սքանչելի լեռան: Սկսանք դառիթափեն, խորդուբորդ արահետներն վար իջնել: Արշալույսին արդեն հասած էինք Ֆոնուզի դիմացը՝ Վերի թաղ, ուր ժողվեցինք տանձ, խնձոր, խաղող: Այդ օրը լիովին ճաշակեցիք սույն կենսատու պտուղներն անմահական աղբյուրներու մոտ: Ֆոնուզիք իրենց մոտ գտնվող կիները ապահով վայրեր տեղավորեցին՝ պարեններով միասին, վերավոր Խաչոյի և Թորոս Ամոյի հսկողութեան տակ:

Արևը նոր մուտք կգործեր Աղալըի հորիզոնեն, երբ խումբը նոր հուշներով ու երազներով ճամփա ելավ: Ժամը 4-ին Ֆոնուզ հասած էինք արդեն ու կողբայինք ի տես ավերակներուն, երբ Աղալըի կողմեն քանի մը հրացանի ձայներ լսվեցան: Ամեն ոք դիրք բռնած անակնկալի մը կսպասեր. բավական էր որ անգամ մը տեսնեինք թշնամին, սակայն ոչ ոք հայտնվեցավ:

Ֆոնուզը, երեք հարյուր տուներ բաղկացած զուտ լուսավորչական հայերե բնակված գյուղաքաղաք մըն էր և կգտնվեր Գրախտոկ լեռան հարավ-արևմուտքը: Անոր ետին կգտնվեր Գըսըզ կիրճը: Գրախտոկի և Աղալըի հսկա լեռները իրարմե բաժնված էին անդնդախոր ձորակով մը, ուրկե կվազեր Շուղուր գետակը: Ֆոնուզը ուներ իր եկեղեցին և դպրոցը: Այնտեղ կնստեր մշտապես մը: Նախքան պատերազմը Ֆոնուզի կառավարիչն էր Գևորգ Պլտրյանը, որ շատ հմուտ, փորձառու մեկը եղած էր: Ֆոնուզի տանուտերերն էին Ալաճաճյաններն ու Մարգարյանները: Բնակիչներու զբաղումն էր ատաղձագործութիւնը, անասնապահութիւնը, հողագործութիւնն ու այգեմշակութիւնը: Ժամը 7-ին հոգեկան ներքին տվայտանքով մը բաժնվեցանք սույն նվիրական վայրերն: Հազիվ քանի մը կիլոմետր դեպի վար՝ ջաղացք, իջած էինք: Երբ տեսանք արյունաթա-

Քախ շապիկ մը և ձիու հետքեր: Սպանվողները մեզմե պետք էր ըլլային: Ժամը 8-ին կամուրջն անցանք, 9-ին՝ Թեքիրի ջուրը, իսկ արշալույսին՝ Թաթար Տերե էինք արդեն: Պահակները հաստատվեցան հարմարագույն գիրքերու վրա, իսկ խումբը ջուրին եզերքը պատրաստվեցավ ճաշի: Ամեն ինչ առատ էր:

Օգոստոսի 7-ին Յեր Ալթը էինք, Զեյթունի գետեզրը, ուրկե երեք տղա ղրկեցինք Խեպի (Յենկ), որ այնքան հեռու չէր: Մեր փափաքն էր այդտեղ գտնվող Պոյամյան—Կեմիքսիզյան խումբերը մեր քով կանչել կարևոր խորհրդակցութեան մը համար: Կեսօրին Խեպին մեկ քանի հրացանի ձայներ լսեցինք, բայց չկրցանք ստուգել իրողութիւնը: Ամսույն 8-ին մնացինք Զեյթունի հարավը, գորանոցեն հազիվ մեկ ժամ հեռու, Գագմա՝ Նոխուտյաններու այգիներեն վեր Բլուր ըսված տեղը: Նույն գիշերը Սեդրակ Չուրգյանն ու Հովսեփ Յապրիգաճյանը մի քանի ընկերներով Զելեկ գացած էին, ուր կգտնվեր Պապիկ փաշայի քարայրը, հոն պահված կիները տեսնելու և կերակրելու համար: Այդ օրը այգիներուն մեջ գտանք մեր ընկերներեն Հովհաննես Զյոշեկյանը, Հովհաննես Ազալյանը, Արթին Ալմանուկյանը և Լեոն Կեյիկյանը: Իսկ գետին արևմտյան կողմը, Ավազ-Կալի հարավ-արևելքը, Թափթըփենց այգիներուն մեջ հանդիպեցանք Վահե Խուլմուճյան (Ճեթոճ) ծերուկին:

Նույն գիշերը, Զեյթունի գետակեն անցնելու ատեն, բնիկ ավագ-կալցի Մարգրիտ Չամսարյանը անհայտացած էր: Մարգրիտ, քանի մը օր առաջ Ավագ-Կալի մոտ կորսնցուցած էր ամուսինը՝ Խաչերը: Ան հաճախակի կխնդրեր, որ իր ամուսինը փնտրելու երթա: Ինչպե՞ս կարելի էր սակայն կին մը առանձին թողուլ, որ երթա ամուսինը փնտրելու: Ան կրնար թշնամիեն ձերբակալվիլ և նույնիսկ գաղտնիքներ տալ անոր: Այդ պատճառով հսկողութեան տակ առած էինք զինքը: Բայց այդ գիշեր, ջուրը անցնելու ատեն ան հաջողած էր պահվտիլ գետեզրի մացաններուն մեջ: Մեր գիշերային փնտրտուքը որևէ արդյունք չտվավ:

Մարգրիտ գետեզրեն իրենց գյուղը՝ Ավագ Կալ կբարձրանա և այնտեղ այլ և այլ տեղեր նշաններ կդնեն. այդտեղեն Գուզագ, Խանոս այցելելով, վերջապես ութ օրվա տագնապալի թափառումներե հետո ան կհաջողի իր սիրելի ամուսինը գտնել, որը իր առաջը ձգած, եկավ միանալու մեզի: Երևակայեցե՞ք, ութ օր առանձին, միս մինակ, լեռներ, ձորեր, անտառներ դեզերիլ, ամեն վտանգ, ամեն զրկանք հանձն առնել՝ վասն հավատարմութեան, վասն անկեղծ սրտակցութեան: Ինչպիսի՞ հիանալի օրինակ սիրո և անձնազոհութեան...

1921 օգոստոսի 9-ի հինգշաբթի օրը, Զեյթունի դիմացի արևմտյան

կողմը, Սուլազ Տետեի հարակից վայրը՝ Տոզ հասանք: Այն Տոզը, որ քանի մը շաբաթ առաջ իր ծոցին մեջ հյուրընկալած էր մեզ՝ ափ մը վերապրող զեյթունցիներս: Տոզի հարակից ժայռ ուներ անառիկ դիրք մը, որուն վրա բարձրանալով ծուղակի մեջ իյնալու վտանգն զերծ մնացինք:

Սուլազ Տետեյի ամենաբարձր սեպ ժայռին վրա բնականն փորված խոր քարանձավ մը կա, որ մուլթ և խոնավ է և որուն մեջ առանց ճրագի կարելի չէ մտնել: Ան ամեն այցելուի սարսափ կազդե: Ըստ ավանդութեան, այդ քարանձավին մեջն ուղևորողները ժամանակ մը ետք ուղղակի Երուսաղեմ կհասնին...

Կպատմվի, թե Վառ-Վառ անունով ճգնավոր մը, իր ամբողջ կյանքը հոն անցուցած է և ա՛յդ պատճառով ալ քարայրը կոչված էր՝ Սուրբ Վառ-Վառ: Զատիկին հաջորդող կիրակին, ս. Վառ-Վառի հիշատակութեան օրը, զեյթունցի մայրեր և երիտասարդներ կայցելեն հոն՝ իրենց հարգանքի բաժինը մատուցանելու: Ահա այդ լեռան արևելյան ստորոտը, Շուշու գետակին եզերքը Զեյթունի մոխրակույտը կտարածվի՝ մեր աչքերուն առջև և մենք, ի տես այդ ավերակներուն, անգամ մը ևս կուխտենք հավատարիմ մնալ մեր պաշտելի և սրբազան նահատակներուն:

1921 օգոստոսի 10-ի առավոտյան ժամը 5-ին Հովհաննես Սատանիկյանը, Փանոս Պոյամյանը և Վարդան Հաճի Կարապետյանը Խեպին գալով մեզի հայտնեցին, թե իրենց խումբը Գարա Պոյունի մեջ մեզ կսպասե: Անոնք ըսին, թե երկու օր առաջ իրենք բախում ունեցած են թրքական ավազակախումբի մը հետ: Հակոբ Միքայելյանը 9 ընկերներով մեկնած էր դեպի ազատ գոտի: Թրքական ավազակախումբեր այդ կողմերը կվիտային: Նույն օրը Հաճի Կարապետյանը իր ընկերներով վերադարձավ Սյուլյուբլի Կյուին: Ըստ իր տեղեկութեան, Չերքեզ Չոճո Յուսուֆ Ատանայեն վերադարձած էր և իրեն հետ բերած էր պաշտոնական նամակ մը՝ Ատանայի ազգային իշխանութենեն: Ան եկած էր ձիահանի գծով, զեյթունցի պատվելի Հարություն Նոխուտյանի օգնութեամբ: Չոճո Յուսուֆ Սյուլյուբլի Կյուի քուրդերուն պատվիրած էր, որ մեզի լուր ձգեն, եթե կարելիութիւն ունենան: Պապա Գատեմյանը Անտուպ ղրկված էր այնտեղ գտնվող ավագկալցիները բերելու համար: Ամսույն 11-ին անպայման պետք էր Պալենց գերեզմանը պատրաստ ըլլայինք: Օրերը կանցնեին. արդե՛ն երեք օր անցած էր:

Խեպի լրաբերները անմիջապես դարձալ ետ ղրկվեցան, որպեսզի Կյուրետիին բերդին շրջակայքը հավաքվինք: Յուսուֆի հետ տեսակցութենեն ետք որոշած էինք բերդ այցելել, եթե ձախողանքի մը չհանդի-

պեհներ: Հոն, բոլոր մարտիկներու ներկայութեամբ, անհրաժեշտ էր հասկացողութեան մը գալ: Մեր միակ նպատակն էր Զեյթունի լեռներուն վրա հոն ու հոն ցրված մեր բոլոր զինյալ թե անզեն հայրենակիցները համախմբել և հետո եզրակացութեան մը հանգիլ մեր հետագա գործունեութեան համար: Երկու գլխավոր խնդիր կը բարդեցնէր բոլորին մտքերը՝ առաջինը՝ ոչ մեկ զեյթունցի չձգել Զեյթունի լեռները՝ ազատ գոտի մեկնելէ առաջ. երկրորդը՝ զինյալ երիտասարդութիւնը, իր ետին ձգելով կին, տղա, անկար՝ հեռանար առանձին: Մեծամասնութիւնը հարեցավ առաջին կետին:

Վերջապէս ամսույն 10-ին, այդտեղ, Սուլաք Տետեյի գագաթը, Սպանդանոց կողմէ սարահարթին վրա, ժայռերուն մեջ որոշվեցավ նախ երթալ Սյուլլուքի Կյուլ, առնել Ատանայէն եկած նամակը և ապա՝ Հաճըլար թրքական գյուղը: Հաճըլար կամ Մեհմետճիք Զեյթունէն 5 ժամ հեռու գյուղ մըն էր, 70—75 անվոր թուրքերով: Նախ քան 1895-ի պատերազմը անոնք կընակեին Յաղուսայան թաղը, որոշ քաղաքացիական իրավասութիւններով: Ունեին իրենց ուրույն սեփական կալվածները ու քաջ գիտեին Զեյթունի մեր բարբառը: Վերջապէս Զեյթունի հացով ու աղով սնված ու մեծցած թուրքեր էին անոնք: 1895-ի պատերազմի վերջավորութեան, անոնք Զեյթունի արևմտակողմը, հինգ ժամ հեռու, կառավարութեան հրահանգով գացեր հաստատվեր էին: Գյուղը կողմէ էր Հաճըլար կամ Մեհմետճիք: Զեյթունի տեղահանութենէն ետք անոնք եկած և իրենց հին թաղի կալվածները գրավելով նստած էին: Շատ ապերախտ վերաբերմունք մը ցույց տված էին: Բայց զեյթունցիք, իրենց վերադարձէն ետք, վասն հին և բարի դրացնութեան, ազատ թողեր էին զանոնք: Իրենց ղեկավարը՝ Հաճի աղան, նախընտրած էր չբաժնորդիլ Զեյթունէն: Զեյթունցիք Հաճի աղայի ընտանիքը մեծ հոգածութեամբ պահեցին զորանոցին մեջ և Մարաշէն եկած Գատը Զատե Հաճիի պատվիրակութեան հետ ապահով կերպով իրենց գյուղը դրկեցին, բայց անոր տղան՝ Մուսթաֆան, երախտագիտութեան փոխարեն, թուրք հրոսակախումբերու գլուխն անցած. մեկ կ'հետապնդեր: Քանի մը օր առաջ, գիշերով, ան բախում կունենա Սեղրակ Մարկանյանի խումբին հետ, բայց, դժբախտաբար, չի գտներ իր արդար պատիժը:

Ամսույն 11-ին մեր լրատու պահակները հաղորդեցին, թե Պերզընկայի ստորոտէն, Չաթալ Աղբլուրէն, Քերթմենի կողմէն 150—200 զինյալ խումբ մը հասեր է զորանոց: Սույն խումբը, զինվորներուն միացած, ընդամենը 400 հոգի, Զեյթուն իջան և սկսան հառաջանալ դեպի Գարսի կամուրջը՝ մեր կողմը: Հասկցանք որ մեկ հետապնդող խումբ մըն է:

Հրաման տրվեցավ թշնամիին շարժումները լավապէս քննել, բայց օրը տարածամած ըլլալուն կարելի չէր շուրջին մեջ նշմարել զանոնք: Անոնք երեք ժամ հեռու էին մեզմէ. մենք՝ լեռան գագաթը, անոնք՝ ստորոտն էին, որով կարելի չէր անոնց ուղղութիւնը ճշտել:

Ռազմիկները պահանջեցին, որ մենք կանխենք զիրենք և բոլորը ջարդենք: Դեպի մեզ եկող մեկ ճամփա կար միայն, Գարսպոզի ծառաստաններուն և այգիներուն մեջէն անցնող զառիվեր և զիկզակ ճամփան: Զախողանքի մը մտավախութիւնը պաշարեց մեզ: Գուցե մեր բոլոր ծրագիրները ջուրը իյնային: Մեզի համար կենսական հարց էր Ատանայէն եկած նամակը, որով պետք էր մեր նախկին ծրագիրը գործադրելինք: Արդէն հասած էր նաև Չուլագյանի խումբը: Պետք էր խուսափիլ ընդհարումէ, մինչև որ կարելի ըլլար շերքեզ Յուսուֆին հետ տեսակցիլ և ապա՝ հոս ու հոն ցիրուցան մեր անզեն հայրենակիցները համախմբել:

Նույն օրը երեկոյան ժամը 7-ին հրաժեշտ տվինք մեր առժամյա ապաստանարանին՝ Սուլաք Տետեյի բարձունքին Սպանդանոց կողմէ վայրին և սկսանք հառաջանալ դեպի արևմուտք՝ մայրի և թնրպի ծառերու մեջէն: Իջանք Քյոմեսյոյկյուտի, մտանք Սյուլլուքի Կյուլի մեծ ճամփան և ժամը 9-ին հասանք Պալենց գերեզմանը: Ավագկալցիներու հետ մեր որոշած ժամադրավայրը տակավին հեռու էր մեզմէ, պետք էր բավական ճամփա կտրելինք և հեռանայինք մեկ շրջապատող թշնամիին: Ժամանակը շատ սուղ էր, պետք էր հառաջանալ, քանի որ շատ որոշ էր, թե հաջորդ առտու գործ պիտի ունենայինք թշնամիին հետ: Գարսի կամուրջը հասնող զինվորական ջոկատը մեկ հետ չափվելու կուգար: Բայց ինչպե՞ս կարելի էր հառաջանալ, երբ մենք Պալենց գերեզմանը հանդիպելու համար ժամադրված էինք ավագկալցիներուն հետ: Այդ անզեն խումբը անխուսափելիորեն վտանգի պիտի ենթարկվէր հաջորդ առտու. թրքական ջոկատը զայն անկասկած պիտի ոչնչացնէր: Ստիպված էինք մեր անզեն հայրենակիցներու փրկութեան սիրույն և վասն ամեն զոհութեան սպասել իրենց և հոն գիշերել: Այդ գիշերվա երկու ժամվան տաժանակիր ճամփորդութիւնն ու անքնութիւնը մեր մարմինը ջլատած էր, ուժերը՝ սպառած: Կազդուրման կարիքը կզգայինք, ուստի այդ մայրի ծառերուն տակ ամեն ոք իրեն համար հանգչելու տեղ մը պատրաստեց և պառկեցավ:

1921 թ. օգոստոսի 12-ի արշալույսին, մեր արթուն պահակը՝ Մանուկ Օհանյանը լուր բերավ մեզի, թե հյուսիսային կողմը, լեռան գագաթը, հսկա ծառի մը տակ մարդկային երկու ստվեր տեսած էր՝ արշալույսի լույսին տակ: Խմբապետները փութացին ճշտել լուրը, բայց չկրցան

որևէ բան եզրակացնել: Ծնթադրեցին միայն թե վայրի գազաններ կրնա-
լին ըլլալ: Քիչ վերջ, սակայն, Մանուկն ու իր զինակիրները փաստեցին,
թե ծառին տակ մարդկային խլրտում կար. ստվերները հետզհետե սկսած
էին բազմանալ. բայց շատ ուշ էր, ընելիք բան չկար այլևս, մանավանդ
Ավագ-Կալի անզեն բեկորները տակավին չէին հասած, պետք էր սպա-
սել և հաշտվիլ ճակատագրին:

Արևը սկսած էր իր լուսափայլ ճաճանչները ցույց տալ Սուրբ Տե-
տեցի մեր առջի օրվան Սպանդանոցի ապաստանարանի կատարեն
գուրս, երբ նույն տեղը՝ պաշարումի ենթակա՝ հրացանաձուլության վայր
կհանդիսանար: Թափուր դիրքեր հարձակումի թիրախ կհանդիսանային
և չէին թուլատրեր, որ արևը իր բնական ընթացքը շարունակեր: Մեր
հյուսիսը՝ լեռան գագաթը ևս թշնամի համախմբումները բացահայտ
կդառնային: Որոշ էր, որ ամեն կողմե պաշարված էինք: Նախորդ իրի-
կունը Գարսի կամուրջը հասնող ջոկատին տասնապատիկը զորք հա-
վաքված էր: Կռիվը անխուսափելի էր, իսկ մեր դիրքը շատ աննպաստ
ու խոցելի: Անմիջապես որոշվեցավ, ի զին ամեն զոհողության, գրավել
հարավային կողմի Զանգակ լեռը, որովհետև մեր փրկությունը հոն էր.
ուրիշ էլք, ուրիշ ճամփա ոչ կար, ոչ ալ կրնար ըլլալ: Արամը երեք
խումբով պիտի պաշտպաներ Պալենց գերեզմանը, իսկ երկու խումբ՝
Սիմոնյանի և Նորաշխարհյանի խումբերը՝ հարավային ճակատը՝ Զան-
գակի լեռը: Արևը բավական բարձրացած էր հորիզոնին զենիթը, բոլոր
մարտիկները աշխատանքի լծված էին, պատնեշներ կշինվեին: Նույն
պահուն ավագակալիցները ևս հասած էին: Մեզի համար այդ օրը հար-
սանեկան տոնախմբության օր մը դարձավ, մեր լեռներուն վրա դարա-
վոր թշնամիին հետ շափվիլը մեզ կոզկտրեր: Հրահանգված էր ամենևին
պարապ գնդակ չարձակել: Պետք էր թշնամիին բավական մոտենալ:

Երկու խումբ հրաժեշտի ողջուններով հառաջացան դեպի հարավ,
իրենց հանձնարարված դիրքերը գրավելու համար: Անոնք շտապ քայ-
լերով անտառին մեջեն կքալեին վայրկյան առաջ հասնելու համար. կրո-
նար ըլլալ, որ թշնամին զիրենք կանխեր: Անտառին մեջ, հրացաններու
և սվիններու փայլը՝ արևի ճառագայթներուն տակ, կշլացներ լեռան գա-
գաթը համախմբված թուրք ավազակախումբերուն աչքերը: Թուրքերը,
խորհելով որ զեթթունցիք կփախչին, վերեն բոլորը միասին գրոհ տվին.
«Մի՛ փախչիք, վախկո՛տ կյավորներ», — կպոռային անոնք: Այդ ըն-
թացքով անոնք բավական հառաջացած էին, առանց կռահելու, թե Պա-
լենց գերեզմանատունը իրենց սպառնացող կա:

Արամ, ի տես թուրքերու արձակ համարձակ առաջանալուն և ի լուր

անոնց ամբարտավան արտահայտություններուն, շկարենալով ինքզինքը
զսպել, առաջին հարվածը կուտա: Բախումը սկսած էր արդեն, հրա-
ցաններու որոտին կխառնվեին հուռուհներ և գոռում-գոշումներ: Հարա-
վային՝ Զանգակի լեռան երկու կողմերը Սիմոնյան և Նորաշխարհյան
երկու խումբերը, իրենց մարտիկներով, գրաված էին նախապես որոշ-
ված դիրքերը: Արևելյան ճակատը բռնած էր Սիմոնյանի, իսկ արևմուտ-
յանը՝ Նորաշխարհյանի խումբը:

Հաղթանակը ապահովված էր, թեպետ թշնամին ամեն կողմե շատ
մոտեցած ըլլար մեր դիրքերուն: Սիմոնյանի խումբը արևելյան ճակա-
տը ճեղքելով հաջողած էր քանի մը զոհեր խլել: Անոր զինակիցներեն
Ֆանուզցի Գրիգոր Պլաքոյանը կրցած էր կրակին մեջ խոյանալ և սպան-
ված թուրքերու զենքերը առնել բերել: Ան մեկուն գլխարկը ևս բերած էր,
որուն մեջ պահված գտանք քանի մը թղթիկներ, որոնք կփաստեին, թե
անոր տերը քերթմենցի և մեր ընթերցողներուն ծանոթ հռչակավոր Գրվ-
թագ Իպրահիմն է, որ արյան ճապաղիքներու մեջ ինկած էր զետին:
Ժամը երեքին թշնամին խուճապի մատնված՝ նահանջած էր. միայն հան-
գեպակաց բլուրներեն պատահական հրացանի ձայներ կլսվեին, իսկ
կռիվը դադրած էր. հաղթանակը տարած էինք:

Խիզախ մարտիկներ, կրակ ու բոց կտրած, պատրաստ էին թշնա-
մին մինչև գորանոց՝ իրենց որջը հալածելու: Ամեն կողմ խանդավառու-
թյուն կտիրեր: Իրիկնամուտին, խումբը իր դիրքերը ձգած, այլևս կփու-
թային իրար միանալ, ավետելու համար օրվան հաղթանակը: Բայց
ավաղ, այդ ուրախությունը իսկույն տխրության փոխվեցավ, երբ հաս-
տատեցինք, որ մեր անզուգական զինակիցը և Ազգային միության ատե-
նապետ Արամ Չոլագյանը բացակա էր: Ան թշնամիի մը անողորմ գնդա-
կին զոհ գացած էր՝ դեռ կռիվի սկզբնավորության, երբ դիտակը ձեռքին
թշնամի դիրքերը կուտումնասիրեր:

Արամին ընկերները մի առ մի այցելեցին հերոսին անշունչ դիակին,
իրենց հարգանքի վերջին տուրքը մատուցելու, ապա որոշեցին անոր
դիակը անճանաչելի, անգտանելի դարձնելու համար խոռոչի մը մեջ
զլխիվայր ձգել, և վրան ոստերով ծածկել:

Արամ Չոլագյան միջակին քիչ մը բարձր հասակով, սև ու խոշոր
աչքերով, երկար, ցից և սև բեղերով երիտասարդ մըն էր: Լավ զինա-
գործ, ան բնավորության մը շատ հեղ և պարկեշտ էր. ավելի համակերպող
էր քան նախաձեռնող: Իրեն համար ազգին շահը ամեն բանն գերիվեր
էր: Ատենապետությանը շրջանին եթե ան սայթաքում ունեցավ, լուկ
բժիշկ էլ մաճյանի թելադրանքին ազդեցության տակ եղավ. ան շուտով

անդրադարձավ իր սխալին և շարունակեց կատարել իր նվիրական պարտականությունները: Հարգա՛նք իր հիշատակին և համբու՛յր՝ անուշ ու անբիժ ճակատին:

1921 թ. օգոստոսի 12-ին, միաձայնությամբ որոշվեցավ հրաժարիլ Չոճո Յուսուֆին այցելելու մտքին. փոխարենը՝ երթալու Գարա Պոլուն և Պոյամյան—Կեմիքսիզյան խումբին միանալու համար: Մեր նպատակն էր կորսնցնել մեր հետքը դեթ որոշ ատեն մը, ապա միայն հանդիպիլ մեր բարեկամ շերքեղ Յուսուֆին, որմե ետք երթալ Հաճըլար թրքաբնակ գյուղը, իրագործելու համար մեր նախկին ծրագիրը:

1921 օգոստոսի 13-ի երկուշաբթի առտուն Չաղարը էինք, Զեյթունեն երկու ժամ հեռու՝ դեպի հարավ-արևմուտք, Խանոսի դիմացը: Մեր դիրքերը ամեն կողմե շատ ապահով էին: Լուսնուն էր և ոչ մեկ մարդկային հետք կնշմարվեր: Թրքական զինվորական խումբերը վաղուց հեռացեր էին այդ կողմերեն և զորանոց հասել:

Օգոստոսի 14-ին, բոլոր վերապրող բեկորներս, Կյուրետինի պատմական բերդին արևմտյան կողմը, առվակին եզերքը, կանաչազարդ ծառերուն տակ կանգ առինք մեր հոգնած մարմինները հանգչեցնելու համար: Պալենց գեղեղմանի ճակատամարտեն ի վեր թե հոգեկան և թե ֆիզիքական մեծ տաղնապ և նեղություններ կրած էինք: Մեր մարմինները պետք էր հանգստանալին: Ռազմամթերքն ու ուտեստեղենը առատ էր, որևէ բանի նեղություն չէինք զգար: Նույն օրը Պոյամյան—Կեմիքսիզյան խումբը ևս եկած միացած էր մեզի: Այդ օրը ամեն ոք տենդոտ գործունեության լծված էր: Լվացք, կարկտան, ոտնամանի նորոգություն, զենքերու մաքրություն: Զուրն ու փայտը շատ առատ էր. մեր հագուստները քրտինքեն, փոշիեն, աղտեն կոշկոռ կապած էին, պետք էր, որ լավ մը հոացվեին: Մեր հետ ունեինք պզտիկ կաթսաներ՝ Քյոշկերկե թուրք գյուղեն առնված: Մեր աչքին առջև կպարզվեին Արեգինի ավերակ տուները, այգիները, ընդարձակածավալ պարտեզները և անոր արեվելյան եզերքին՝ օձապտույտ գալարումներով սուրացող ձիհան գետը, որ մեր մեջ կարթնցներ հին հիշատակներ:

Նույն օրը, իրիկնամուտին, բերդին վրա տեղի ունեցավ խորհրդակցություն մը: Այլևս բաժնվելու հարց գոյություն չունի: Միաձայնությամբ, առանց որևէ առարկություն, որոշվեցավ պատրաստություն տեսնել և անցնիլ ազատ գոտի:

Որոշվեցավ նաև ներկա երիտասարդությունը խումբերու բաժնել և այլ տեղեր ուղարկել որոշ պարտականություններով: Երկու խումբ պիտի երթար Արեգինի դաշտերեն, այգիներեն, պարտեզներեն ուտեստեղեն

հայթայթելու: Զեյթունցիներուն ցանած հունձքերը նույնությամբ կմնային, թուրքը չէր հանդգնած անոնց ձեռք երկարելու: Խումբ մը տղաքներ՝ Զեյթուն, Պապիկ փաշայի քարայրը գտնվող կիները բերելու, երկրորդ խումբ մը՝ Ֆոնուզի կիները և միևնույն ատեն Աղալլայի և Դրախտոկի խումբ մը՝ լեռները պահված միսն ու զավուրման բերելու, երրորդ խումբ մըն ալ լեռները պահված միսն ու զավուրման բերելու պիտի երթային: Զորս Գավզըրթի կողմը պահված ռազմամթերքը բերելու պիտի երթային: Զորս երիտասարդներ՝ Միքայել Կյոքճյանը, Գևորգ Մելիտոնյանը, Հակոբ Սատանիկյանն ու Մովսես Մաբաշլյանը պարտավորվեցան երթալ Յունկյութի կամուրջեն մեկ ժամ հեռու, ձիհան գետի վրայի Տերին Կեչիտի անցքը քննելու: Իսկ շատ քիչ թիվով կիներ, մանուկներ, ծեբեր՝ քանի մը պահակներով պիտի մնային բերդը՝ ճամփորդութենեն առաջ անհրաժեշտ պակասները լրացնելու համար: Հաջորդ առավոտ, թե Տերին Կեչիտ քննություն կատարելու գացող և թե շրջակա գյուղերեն ուտելիք բերողները ապահով վերադարձած էին: Ըստ ձիհանի կողմը քննության գացողներուն, գետի հունին արևելյան եզերքը, քանի մը տասնյակ մետր հեռավորությամբ, տեսնված էին քանի մը աշխատավորներ. ուրիշ մարդահեռավորությամբ, տեսնված էին քանի մը աշխատավորներ. ուրիշ մարդահեռավորությամբ, տեսնված էին: Թուրքերը, այդ տարին շատ տեղեր չէին հանդգնած մտտենալու:

Բերդին վրա մեղվաջան աշխատանք մը կար: Մեկը լվացք կըներ, մյուսը կարկտան, ուրիշ մը սալաքարի վրա ցորենի հատիկները կջարդեր, անդին ուրիշներ՝ այդ ցորենի հատիկները կխարկեին և կտեղավորեին պայուսակներու մեջ: Սրտաճմլիկ տեսարան մըն էր այդ դժնդակ օրերեն: Քանի մը օր, հաջորդաբար, խումբերը այցելություն կուտային մեր ավերակ հայ գյուղերուն և բնության բարիքներեն առատորեն կօգտվեին: Բերդը շտեմարան մը դարձած էր:

Մեր պատրաստության վերջին օրը դժբախտությունն ունեցանք բնական մահով կորսնցնելու խեղճեղեցի Սեդրակ Սաղաթյան անունով երիտասարդը: Ան, զորանոցի մեր կոիվը սկսելուն օրը, առտուն կանուխ այգի գացած էր աշխատելու: Օրվան եղելութենեն բոլորովին անզիտակ, ճամփան կըռնվի և սվինահար կիչնա: Այդ օրը արևի կիզիչ ճառագայթներուն տակ կպալքարի իր կյանքին համար, անոթի և հրատոչոր՝ ջուրի պակասեն: Իրիկնամուտին, գերմարդկային ձիգով կհաջողի խուսափիլ պահակներու ուղարկութենեն և կապաստանի զորանոց: Ան կարճ ատեն մը վերջ առողջացած էր, բայց վերքի հետքերը դեռ կկրեր իր վրա:

Բերդին մեջ նույն օրը լույս աշխարհ եկավ նորածին մանուկ մը:

Տիկին Նվարդ Բրդլյան, անլուր տառապանքներով իր արգանդին մեջ սնուցած էր այդ մարդ էակը: Ան սիրահոգ մեր հետ շրջած էր լեռները, սարեր, ձորեր: Նորածինը հազիվ երկու օր ապրեցավ:

1921 թ. օգոստոսի 19-ին Զեյթունի լեռները ապաստանող բոլոր հայրենակիցները վերադարձած էին՝ բեռնավորված ուտեստեղենով, ռազմամթերքով, կաշիե հագուստեղենով: Օգոստոսի 20-ին բերդին վրա ներկա էին ընդամենը 153 հոգի: Ունեինք 51 մավզեր հրացան, 60 շազմագլը, 32 անվեն՝ կին և մանուկ: Բոլորին համաձայնությամբ խումբերը վերակազմվեցան: Ամեն խումբ 25 հոգիե կբաղկանար, որով կունենայինք 6 խումբ, որոնցմե՝ յուրաքանչյուրը ուներ 8—9 մավզեր և 10 շազմագլը:

Յուրաքանչյուր խումբ պատասխանատու էր 24 ժամվան համար: Ան ստիպված էր բոլորը առաջնորդել և հանգիստի վայր մը գտնել: Մեր առջև շորս օրվա ճամփա ունեինք՝ Օսմանիյե հասնելու համար, մինչդեռ ամեն ոք իր հետ առած էր 2 օրվա ուտելիք, քանի որ ավելի բեռ տանիչ անհնարին էր: Ուտելիք, զենք, փամփուշտ՝ առնվազն 30 կիլո կիշռեին, որով շափազանց դժվար էր այդպիսի ծանրություն տակ հառաջանալ, մանավանդ գիշերները, երբ արահետներն ալ անծանոթ էին:

Յնուպես Մինաս Մարգարյանի և Եղիա Ալաճաճյանի առաջնորդությամբ, որոնք այդ կողմերու ճամփաները լավ գիտեին, բերդի արևելյան կողմեն դանդաղաբայ սկսանք հառաջանալ, որովհետև սեպ ժայռերու կոփքքին երկաթ ցիցերով կառուցված արահետեն հազիվ մեկ հոգի միայն կարող էր անցնիլ: Իրիկվան ժամը 8-ին Պեհլիսիլի հասանք, որը Արձգիկի մեծագույն գյուղերեն մեկն էր, բերդին հարավային կողմը, անկե 2 ժամ հեռու:

Բերդեն հազիվ դուրս ելած, տեղատարափ անձրևի մը բռնվեցանք, այնպես որ հազիվ-հազ մեծ դժվարությամբ կրցանք հասնիլ գյուղը: Կարծես բնությունը ևս որոշած ըլլար մեզ հարվածել: Բոլորս սաստիկ թրջված, ապաստանելու տեղ կփնտրեինք. գյուղը ամբողջովին քանդված, ավերակ դարձած էր: Միայն եկեղեցիին մեկ անկյունը, զանգակատան տակը և խորանին կից կրցանք պատսպարվելու տեղ մը գտնել և հոն իրարու վրա խոնվիլ:

Այդ գիշեր խումբը հանգստացավ Պեհլիսիլի ավերակներուն մեջ, թրջված հագուստներով, պաղ գետնին վրա, բաց երկնակամարին տակ. թշնամիեն չըտեսվելու համար չէինք կրնար կրակ վառել, մանավանդ որ գիշեր էր: Միայն, ցերեկը, արևու լույսին տակ, անհրաժեշտությամբ պարագային միայն շատ զգուշությամբ կրնայինք շորքած ցախեր վառել:

1921 թ. օգոստոսի 27-ին հասած էինք Չազըր-օղլու գյուղը: Երբ

անտառին մեջ կհանգստանայինք, հանկարծ ծառերուն մեջեն երկու անգլեն երիտասարդներ, իրենց ձեռքերու մեջ մեկ մեկ գավազան և մեջքերնին դաշույն կախած, մեր դեմ ցցվելով հարցուցին. «Ո՞վ եք դուք»: Մեր պատասխանը եղավ. «Պետական զինվորներ ենք՝ փախստական հետապնդող. ձեր աշակցությանը կկարոտինք այս ամայի անտառին մեջ»: Անոնք պատասխանեցին. «Այտեղ, այս անտառին մեջ ո՛չ փախստական կա, ո՛չ ալ հետապնդելիք մարդ»: Մեր գիրենք բռնելու և համազարկով հարվածելու փորձը ապարդյուն եղավ: Անոնք վայրկենաբար անհայտացան անտառին մեջ: Սկսան հրացանները խոսիլ: Որոշ էր, որ պաշարված էինք: Կոփվը անխուսափելի էր: Մեր մարտիկներուն սվինավոր հարձակումները թշնամին փախուստի մատնեց, կրցած էինք միանալ մայր խումբին:

Յուրաքանչյուր մարտիկ, զենքը ձեռքին, որոշած էր իր կյանքը աժան գնով շծախել: Կիներ ու մանուկներ քար ու հող հայթայթելով կամբարացնեին մարտիկներուն դիրքերը: Կոփվը ահեղ էր, ամեն կողմե պաշարված էինք, վայրկյանները ճակատագրական էին: Թշնամին, կանոնավոր և անկանոն զինվորներով, մինչև ժանիքները սպառազինված, անտառին բոլոր կարևոր դիրքերը գրաված էր ու կսպառնար մեզի: Իսկ մենք, անտառի մեկ բլուրին վրա, կիներու ձեռքով շինված պատնեշներու ետին, նոթի ու ծարավ, շատ սահմանափակ ռազմամթերքով, մեր օրհասական գոյությունը կբաշկոտեինք: Աջ ու ձախ զնդակներ կարձակեինք, առանց որևէ մեկը զգեստել կարենալու: Անկարելի էր հիսուն զենքով դիմադրել բազմաթիվ սպառազինված զինվորներու:

Օրը տարածամած էր, ամեն կողմ մուլթն ու խավաքը կտիրապետեին: Խումբը իր այդ օրհասական, ճգնաժամային և լինել-չլինելու պահուն ոչ մեկ կորուստ տված էր:

1921 թ. օգոստոս 28-ի կիրակի իրիկունը, այդտեղեն դուրս ելլելու ամեն փորձ անհաջող անցավ: Թշնամին, անտառին շուրջը բոլոր անցքերը գրաված՝ դարանակալ կսպասեր: Ամեն զնով այդ անկեն փրկվելու համար միջոցներ պետք է որոնեինք: Մեր դուրս գալիք կողմը թըշնամին այնքան ամբարցուցած էր, որ թռչունն անգամ չէր կրնար փախչիլ և աղատիլ: Որոշեցինք արևմտյան կողմեն դուրս ելլել և լեռան կոնակեն մեր ճամփան շարունակել, թեև անորոշ ուղղությամբ:

Հովհաննես Սիմոնյան սրտակեղեք արտահայտությամբ մը «Տե՛ր, ուղղա զճանապարհս մեր» մըմնջելով հորդորեց, որ բոլոր տղաքը, այդ մայրիկներուն տակ, այդ քարե բլուրին վրա, վերջին համբույրը, վերջին հրաժեշտը տալե հտք, սվինահար հարձակում գործեն: 10 մարտիկներ,

Հովհաննէս Միմոնյանի և եղբորս՝ Ռուբենի առաջնորդութեամբ հառաջ խոյացան, արևմտյան ճակատը ճեղքելու համար: Թշնամի գնդացիներն ու հրացանները սկսած էին անդադար խոսիլ: Մերինները առանց ընկերակելու հաջողած էին առաջին ճակատը ճեղքել և անցնիլ՝ շատ մը շունչեր դիտապատ լոնցնելով, բայց երկրորդ շղթան, որ կազմված էր հսկա ժայռերու ետին, անկարելի էր փշրել անցնիլ, պետք էր բնութեան դեմ մաքառիլ: Ամենասուկալին ոչ թե թուրք զինվորն էր՝ ապաստանած իր գնդացիներն, ոչ թե անոր մահացու գնդակն էր, այլ՝ սեպ և անդրզվելի ժայռը, անշունչ քարակույտը, զոր փշրելու կարելիութունը շունեինք: Այսպիսով, հառաջընթաց խումբը մնացած էր կրակի մեջ. առջևն՝ թըշնամին, իսկ ետևն՝ մեր մայր խումբը կհարվածեր, առանց անդադառնալու կամ ճշտորոշել կարենալու, թե մեջտեղը մաքառողները որո՞նք էին:

Թշնամին, իր անառիկ դիրքերուն մեջ, իրեն օգնութեան փութացող ստվարաթիվ ուժերուն հետ բուռն հարձակումի անցած էր: Երկինք երկիր կզղրդային, մայրիներու ոստեր գնդակի հարվածներն կխորտակվէին և գետին կիյնային՝ անցքերը խափանելով: Բոլորս ստիպված կհահանջեինք և որպէս ուղղութիւն ընտրած էինք արևմուտքը: Մեր եկած կողմը՝ արևմտյան ճամփան բաց էր, այնտեղ ոչ ոք կար: Թուրք զորքը դեպի հյուսիս օգնութեան փութացած էր, որով մեր խումբը իր առջևը ազատ դտավ: Կրակը այլևս իր թափը կորսնցուցած էր և մենք պաշարման գոտին անցած էինք: Եղբայրս՝ Ռուբենը սակայն չէր երևար: Իմ հարցումներուս փոխարեն կստանայի հետևյալ պատասխանը. «Առաջ գնաց»: Շտապեցի խումբին առջևն անցնիլ: Ճամփան երկուքի կճշուղափորվեր: Ճիշտ մեջտեղը կայնած՝ «Եղբայրս ո՞ւր է» հարցումիս գոհացուցիչ պատասխան մը չկրցա առնել: Այլևս ինձ համար գաղտնիք մը չէր, որ իմ պաշտելի, հոգեհատոր եղբայրս Ռուբենը ոչ ևս էր:

Ռուբենը, Նորաշխարհյան իշխանական գերդաստանեն, Պապիկ փառայի եղբոր՝ Նազարեթ Զավուշի երրորդ որդին էր: Ծնած էր 1895-ին, Զեյթունի մեծ պատերազմին, զորանոցին գրավման գիշերը: Ռուբենի ծննդյան ի լուր, Զեյթունի ապստամբութեան կազմակերպիչներն Աղասին, զորանոցն շնորհավորութեան տոմս մը կուղարկէ հորս և անկէ կինդրե, որ կնքահայրութեան պատիվը իրեն տրվի, և նորածինին անունն ալ Ռուբեն դրվի, ի պատիվ Կիլիկյան Ռուբինյան հարստութեան: Հայրս սիրով կընդառաջե անոր խնդրանքին:

Մանուկ Ռուբեն վայելակազմ ու գեղատիպ, իր ծնողքին հոգածութեան տակ որքան կմեծնար, այնքան իր մեջ կարմատանար իր նախնիքներու հերոսական կերպարը: Ան իրեն որպէս սկզբունք կընտրե ծառայել և

օգտակար հանդիսանալ միայն զրկյալներուն և թշվառներուն: 1914-ին, օսմանյան պետութեան ընդհանուր զորաշարժ հռչակելու նախօրյակին, հորս անլուր խժոժութիւններու ենթարկված օրերուն, պատանի Ռուբեն ևս նույն ճակատագրին կենթարկվի, բայց Կիլիկիո Սահակ կաթողիկոսի միջնորդութեամբ, ի շարս այլոց, ան ևս կազատի Մաքաշի բանտին:

Ռուբեն Զեյթունի մեջ վերաշինական աչքառու գործունեութիւն ցուցց կուտա: Վերակազմյալ հնչակյան կուսակցութեան ծանոթ դեմքերն Պետրոս Ախիկյանի Զեյթուն այցելութեամբ, նորակազմ Վերաշինական միութեան ատենապետութիւնը կհանձնվի իրեն: Ան Զեյթունի կազմակերպչական գործերուն իր կարևոր բաժինն ու մասնակցութիւնը կբերե և կհանդիսանա նահանջի ղեկավարներն մին: Ազնիվ, վեհօգի, ձեռներեց երիտասարդ մըն էր ան, որ 26 տարեկանին ավանդեց իր հոգին, Զազրօղլուի կոնակը, մայրիներու անտառին մեջ, հայրենի հողեն հեռու, օտար հորիզոնի տակ, անմխիթար թողնելով իր միակ եղբայրը...

Նույն կռիվին կորսնցուցած էինք նաև մեր սիրելի զինակիցներն Լևոն Պալճյանը, որ Զեյթունի Շորվօղլույան թաղեն էր: Պալճյան ծանոթ ընտանիքն, 40 տարեկան, կարճահասակ, վայելչակազմ, վարպետ ձիավարիկ և աչքառու առևտրական մըն էր ան: Տարագրութեան տառապանքը ճաշակած, Զեյթուն վերադարձած էր իր եղբոր՝ Վարդավառի և եղբորդ՝ դիներուն՝ Անդրանիկի ու Արշակի հետ, իրենց պապենական քարուքանդ օջախը վերաշինելու և խոպանացած արտերն ու այգիները շենցնելու համար:

Այս կռիվին աչ թեկն վիրավորված էր նաև Հարութիւն Պոյամյանը, 25 տարեկան, վայելչակազմ, միջահասակ, հանդուգն երիտասարդը, որ Հալեպի մեջ դարմանվեցավ և հետագային մեկնեցավ Հարավային Ամերիկա:

Նույն գիշերը, ժամը 1-ին, հասած էինք Զազրօղլուի արևելյան հովիտը, աղբերակի մը մոտ, որուն առջև կտաքածվեր եգիպտացորենի արտ մը: Բերքը տակալին չէր հասունացած, դեռ նոր ծաղիկ տված, թարմ վիճակի մեջ էր: Այդ դաշտին մեջ, իբրև սննդեղեն, կրցանք գտնել միայն եգիպտացորենի հունձքը, զոր ամբողջութեամբ լեցուցինք մեր պայուսակները: Շեղած էինք մեր բուն ճամփային: Հանդիպեցանք Զաթալ-Փոննար, անցանք էսեն-Տերեյեն և հասանք Շեքիթ Օպա թրքաբնակ գյուղը, ուրկէ շուները հաշելով սկսան մեր կողմը վազել: Լեռան կատարը սկսած էր այլևս շառագունիլ, պետք էր մտածեինք անառիկ դիրք մը գրավելու մասին: Սկսանք մագլցիլ գյուղին արևմտյան կոնակը գտնվող բարձրաբերձ քարն բլուրները: Արևածագին հասած էինք մեր որոշած

վայրը: Բարձր քարե բլուր մը՝ արևմուտքեն, հարավէն կտրատված ձոր մը, անտառապատ, հյուսիսեն՝ ապառաժ լեռներ, արևելքեն՝ վարը Շեքիր Օպա թրքաբնակ գյուղը և ընդարձակ դաշտագետին մը:

Խումբը հազիվ ինքզինքը բլրագագաթին, անտառակի մը կողքին գտած էր, երբ նոր զգաց իր անգին կորուստը՝ հանձին Ռուբենի: Բոլորը համախմբված նույն թավուտքին մեջ կսգային անոր մահը և արցունքի կաթիլներ կնվիրեին անոր թանկագին հիշատակին: Այդ միջոցին մեր պահակները լուր բերին, թե մեր հետքին վրա՝ թրքական մահիկը բարձրացուցած, հեծյալ և հետիոտն բազմութուն մը կուգար:

Մարտիկները հոգնած, քնատ, նոթի էին. անոնց ջիղերը թուլցած, ընդարմացած՝ բողոք կբարձրացնեին, որով Հովհաննես Սիմոնյան՝ որ այդ շրջանին քաջածանոթ էր և մեզ կառաջնորդեր, առաջարկ բերավ, որ միակ հանգստանալու միջոցը Իսլահիեի մեծ եղեգնուտը հասնիլն էր, որը մեր գտնված տեղեն 6 ժամ հեռու էր: Մարտիկները ակամա տեղի տվին Սիմոնյանի առաջարկին և որոշեցին երկար և տաժանակիր ճամփան կտրել ցերեկին, թուրք գյուղերու մոտակայքեն, և հասնիլ եղեգնուտին կամ Կյավուր Կյուլին:

Սիմոնյանի առաջնորդութեամբ սկսած էր մեր էջքը հարավային կողմեն: Բայց հազիվ տասը վայրկյան հառաջացած էինք, երբ առաջին խումբը կզգա մեր ճամփուն վրա թշնամիներու դարանակալ սպասումը: Անմիջապես ան կվերադառնա մեր քով, երբ զեռ մայր խումբը իր դիրքերուն վրա էր: 1921 օգոստոսի 28-ին, արևածագին, պատերազմիկ, անգն, կին և մանուկ՝ ընդամենը 149 հոգի, Սարըլար Շեքեր Օպայի կոնակը, բարձունքին վրա, մայրիներու անտառին բլրաբարերուն ետևը դիրք բռնած էինք: Մեր երկու կողմերը՝ արևելք և հարավ, ավելի խոցելի էին: Ստիպված էինք պատնեշներ բարձրացնել: Անգններն ու կիները անդադար քարեր կհայթայթեին մեզի՝ դիրքերը ամրացնելու համար: Թշնամին եկած, մոտեցած էր, իսկ կոհիլը անխուսափելի էր: Ժողովուրդին այդ օրվա սնունդը և ջուրը գիշերվա իրենց քաղած եգիպտացորենի թարմ կոթերն էին եղած, որոնք թե սնունդի, թե ջուրի տեղ անցած էին: Թուրք հեծյալները սրընթաց կհառաջանային: Ժամը 7-ին անոնք արդեն եկած և մեր առաջին պատնեշին հասած էին, որուն մարտիկներեն Մկրյան Արթիկը մեկ գնդակով կրցավ հառաջընթաց երկու ձիավոր զգեստել. այլևս ամեն կողմե գնդակները սկսած էին սուլել: Թուրք հրամանատարը սուրբ ձեռքին «Հառաջ» կպոռար. թշնամին դիակները կոխկրտելով կհառաջանար: Մեր առաջին պատնեշը գնդացիների և կրակոցի գնդակներու հարվածներեն ջարդուփշուր եղած էր և հոն գտնվող հինգ մարտիկներեն

երկուքը ինկած էին, իսկ երրորդը՝ վիրավորված: Մեռնողներն էին Տյովլեթ Չարբգյանն ու Հակոբ Թովմասյանը: Առաջինը հազիվ 20 տարեկան, որդին էր Փանոս Չարբգյան ծանոթ զեյթունցիին, հանդուգն և խոստմնալի պատանի մը, իսկ երկրորդը՝ 50 տարեկան ֆոնուզցի մը, որ նման բազմաթիվ կոհիվներու մասնակցած, փորձառու և հմուտ կըրվող մըն էր: Վիրավորված էին Նազարեթ Կեմիքսիզյանը, Հակոբ Սատանիկյանը և Մանուկ Ճելլատյանը, բոլորն ալ խիզախ ռազմիկներ: Ժամը տասին թշնամին եկած, մեր քիթին տակն էր մտած, կոհիլը ահռելի էր, զենքը ի վիճակի չէր այլևս իր դերը կատարելու, որովհետև թուրքերը բուրիս տակ եղած, դիրք գրավված էին: Հողն ու քարը մեծ դեր կկատարեին. քարերով և հողերով կհարվածեինք և չէինք ձգեր, որ թշնամին իր գլուխը բուրեն դուրս ցցեր: Մարտիկները գերմարդկային ձիգեր կթափեին:

Հորեղբորորդիս Խաչերը (Միքայելի) ինձ կստիպեր, որպեսզի իմ դիրքը ինք գրավեր ան կնախընտրեր իր մահը և կշանար համոզել ինձ, որ այդ վտանգավոր դիրքը իրեն թողում: Հարություն Յաղուպյանը «Կովեցեք տղերք, կովեցեք քաջ, քաջ» կպոռար և իր ոգեշունչ երգերով անվհճեր մարտիկը կխրախուսեր իր զինակիցները: Ան երբ հարավային կողմը գտնվող անտառակեն կպատրաստվեր սվինահար հարձակում գործել թշնամիին վրա, անողոք գնդակ մը եկավ և շնչասպառ դարձուց զինքը:

Հարություն Յաղուպյան, իշխան Մկրտիչ Յաղուպյանի թոռը, 35 տարեկան, նախ Զեյթունի Կեդրոնականը ավարտած, հետո Մարաշի դպրեվանքը հաճախած և ապա Պոլսո Կեդրոնական վարժարանին մեջ ուսումը շարունակած երիտասարդ մըն էր: Ան ուսուցչական պաշտոն վարած էր Զեյթուն, Պոլիս և Ամանոս, ուր ազգային աչքառու գործունեություն ունեցած էր: Տարագրության շրջանին ալ Հալեպ ապաստանած էր, բայց երբ հայ դավադիրներ զինքը կմատնեն, ան ստիպված կփոխե բնակավայրը և կերթա Հալեպի մոտ, Մաարայի կողմերը: Զինադադարին տնօրենության պաշտոնով ան կանչված է Ամանոս, սակայն հայրենիքին կարոտը զինքը ստիպեր է ձգել, թողնել ամեն ինչ և փութալ հայրենիք, իր պապենական օջախը վերականգնելու մեծ հույսերով: Զեյթունի Ազգային միությունը խանդավառությամբ ողջունեց զինքը որպես անդամ: Ապա ան, մասնակցությամբ կարգ մը հայրենակիցներու, դպրոց մը բացավ. առանց վարձատրության կուզեր դաստիարակել մատաղ սերունդը: Զոհաբերող մեծ ոգի ուներ և պատրաստ

չախջախված ջիղերը քիչ մը կազդուրել: Ըստ Սիմոնյանի, եղեգնուտը անձեռնմխելի էր, և թշնամին անկար էր հոն որևէ վճռական քայլ առնելու: Հրահանգված էր բոլոր խումբերուն, որ ճամփու ընթացքին, եթե կարելիություն ունենայինք, իրարմե շղատվեինք և երկրորդ՝ առանց հրահանգի ուտելիք կամ խմելիք հայթայթելու համար որևէ տեղ կանգ չառնեինք:

Խումբը Շեքիր Օպայի առջևն անցնելով սկսավ մագլցիլ Գոզան Ալիի զառիթափեն վեր: Լանջքին հաստատված թուրք գյուղերու շունբու հաշտոցները մարդոց գոյությունը կզգացնեին մեզի: Բարձունքի այգիներուն մեջն էինք, ուր որթատունկերը բեռնավորված էին գունզգույն համեղ խաղողներով: Բոլորիս բերանի ջուրերը կվազեին, ողկույզ մը խաղողը մեծ արժեք կներկայացներ մեզի համար, սակայն, կարգապահ զինվորը պե՛տք է անտեսեր նման վայելքները: Վճռած էինք վայրկյան առաջ հասնիլ եղեգնուտ, որը կխորհեինք թե պիտի ըլլար մեր փրկություն միակ լաստը: Հարավակողմի զառիթափեն, այգիներու ցանկապատներու նեղ անցքերեն արագաքայլ կհառաջանայինք դեպի վար՝ Իսլահիյեի ընդարձակ դաշտագետինը: Իսլահիյեն Մարաշեն 9 ժամ հեռու էր: Ամանոսի և Զիյարեթի լեռնաշարքերով շրջապատված Իսլահիյեի բերրի դաշտագետնի ճիշտ կենտրոնեն կանցներ Մարաշ—Իսլահիյե մեծ ճանապարհը, որուն երկայնքին, 1920-ի Մարաշի աղետին, ֆրանսական ամրափալի նահանջին հետևանքով, հարյուրավոր հայերու սառած դիակները գտնված էին:

Հասած էինք Գոզան Ալիի բլրաշարքին ստորոտը աղբյուրի մը քով: Այդտեղ միայն 45 հոգի կայինք պատրաստ: Ոչ մեկ մարդ կերևար: Ստիպված էինք մեր ճամփան շարունակել: Բլրաշարքի ստորոտի երկայնքին հաստատված էին անթիվ թրքաբնակ գյուղեր, ինչպես նաև պետական պահականոցներ:

1921 օգոստոսի 29-ի կիրակի առտուն, Իսլահիյեի դաշտին մեջ իրարանցում մը, խուճապ մը ծայր տվավ: Մայրը իր ծծկեր մանուկը, աշխատավորը իր բահն ու բրիչը, հովիվը իր հոտը դաշտին վրա ձգած՝ կփախչեին, և հեռուի բլուրներեն հրացանի հարվածներ կլավեին՝ ժողովուրդը զորակոչի հրավիրելով: Մենք, կարելի եղածին շափ, մեր քայլերը արագացուցած էինք և մոտեցած մեր երազած եղեգնուտին: Հեռուեն կնշմարվեր հեծյալներու խումբ մը, որ դեպի մեր կողմը կհառաջանար: Ամբողջ դաշտը կզդրվար հրացաններու որոտեն, արևը իր փայլը կորսնցուցած էր, մեր անմիջական շրջապատին մեջ ոչ ոք կերևար, սակայն, մեզմե մեկ կիլոմետր հեռու, եղեգնուտին հյուսիս-արևմտյան

կողմը, ուրիշ ամբոխ մը ևս կջանար մեզ կանխել և հոն հասնիլ: Մենք զայն թշնամի կարծելով, փութացինք եղեգնուտ մտնել, որը Իսլահիյեի դաշտին արևելյան կողմը, Ամանոս լեռնաշղթային ստորոտը, ընդարձակ տարածություն մը կընդգրկեր: Հոն, երկու երեք մետր բարձրությամբ և 5—6 սանտիմետր տրամագիծով՝ հաստ, փայտացած եղեգներ կային: Այնքան խիտ էր ան, որ այնտեղ մուտքը շատ դժվար էր: Տեղ տեղ ճահիճներ կային, ուր կվխտային տեսակ տեսակ միջատներ: Կային նաև քանի մը մետր տարածությամբ լերկ վայրեր:

Մենք, վայրի խոզերու երամակներու նման, որոնք բարակներեն կհալածվին, մտած էինք արևմտյան եղերքը և մեզ ապաստան ընտրած՝ բարձր եղեգներու մեջ ազատ գետին մը, ուր սակայն ոչ սնունդ կար, ոչ ալ ջուր: Օգոստոսի կիզիչ արևը մեզ կխանձեր և կայրեր: Ըստ Սիմոնյանի թելադրանքին, տղաքը սկսան սվինով գետինը փորել և այնտեղեն բխեցնել լեղի, ցեխոտ և որդնոտ ջուր մը՝ մեր ծարավը հագեցնելու համար:

Կեսօրը անցած էր: Արտաքին աշխարհեն բոլորովին անգիտակ էինք, միայն հաճախ կլսվեին հրացանաձգության արձագանքներ: Ըստ Սիմոնյանի վտանգ չէր սպառնար, սակայն երկու կենսական հարց կտանջեր մեզ. առաջինը՝ ընկերներու կորուստն էր, երկրորդը՝ անթությունը:

Օրը իրիկուն եղած էր, խավարը իր քողը կսփռեր հետզհետե: Ամեն կողմ լուռություն, ամեն կողմ ամայություն, ոչ մեկ մարդ կնշմարվեր մեր շուրջը: Եղեգնուտեն դուրս ելանք խմբովին և ուղղվեցանք արևմտյան եղերքը: Բոլորս այնտեղ դիրք բռնած կսպասեինք: Իսկ երեքական հոգինոց երեք խումբ մեկնեցան իրենց տրված հատուկ պաշտոնով: Սեզրակ Մարկանյանը Հովհաննես Պուշուրլյանի և Ասատուր Չազրբյանի հետ ղրկված էր եղեգնուտի երկայնքեն դեպի հյուսիս՝ ցերեկին մեր տեսած խումբը հետապնդելու. հավանական էր, որ անոնք մեր ընկերներեն եղած ըլլային: Երկրորդ խումբը՝ բաղկացած Սիմոնյանեն, Գրիգոր Պալարյանեն և այս տողերը գրողեն, գնաց դեպի դաշտ, արմտիք գտնելու հույսով: Մենք հանդիպեցանք միայն մանր կորեկի հսկա կալի մը, ուր դեռ կալը սկսած չէր: Սլեկ մականվանյալ Գրիգոր Պալարյանը անմիջապես ետ ղրկեցինք խումբին լուր տալու համար: Սլեկ Գրիգորը վերադարձին հանդիպած էր Մարկանյանին, որը իր կարգին հաջողած էր գտնել մեզմե բաժնված մեր զինակիրները:

Բոլոր խումբերը անխտիր փութացին մեր քովը, ուր դիրք բռնած անհամբեր կսպասեինք: Կես ժամվա մեջ ամբողջ կալի կորեկը տեղավորված էր մեր պայուսակներուն մեջ. հատիկ մը անգամ չէինք թո-

Քիլիսի արեմտյան բլուրը հասած էինք, երբ շերքեղ Տավուտ՝ ֆրանսական բանակին միլիտ հարյուրապետ մը, հեծյալ զինվորներով մեզ դիմավորեց: Ավետիս Ղազյան, առանց իմ երկտողին սպասելու, փութացած էր Քիլիս և տեղեկացուցած Ազգային առաջնորդարանին, որը իր կարգին անմիջապես հեռաձայնած էր ֆրանսական հրամանատարության:

Տավուտի առաջարկով մենք միասին վերադարձանք եղեռնավայրը, ոճրագործները հետապնդելու համար: Դժբախտաբար մեր վերադարձը ապարդյուն եղավ. թշնամին փախած, անհայտացած էր, միայն արյան ճապաղիքներու մեջ գետինը խոշտանգված գտանք մեր սիրելի զինակիրներեն 12 հոգի, որոնցմե երեքը կին: Հովհաննես Սիմոնյան, Հակոբ Եզեկիելյան, Արմենակ Գշպոտյան, Հովհաննես Գարագուշյան, Եղիա Հաճի Թեյեկյան, Մինաս Տանապաշյան, Անդրանիկ և Հակոբ Բրդլյաններ:

Հովհաննես Սիմոնյան Շորվողլույան թաղեն համեստ ընտանիքի մը զավակն էր, արհեստով՝ ոստայնանկ: Երկայնահասակ, նիհարակազմ, Քրիստոսասիրաց ընկերության ապաշխարհող անդամներեն էր ան, 40 տարեկան, մաքուր նկարագրով տիպար զեյթունցի մը:

Հարյուրապետ շերքեղ Տավուտ մեզ առաջնորդեց ուղղակի ֆրանսական ներկայացուցչություն, ուր ֆրանսացի հրամանատարը այսպես արտահայտվեցավ. «Կեղմե՛մ ձեր քաջությունը, որ ձեր քով գտնված զինքերով կրցած եք այսքան երկար ճամփա կտրել, արդիական զենքերով սպառազինված թուրք բանակին դիմադրելով: Ֆրանսական բանակը, իր արդիականացած կազմով Ուրֆայի մեջ իր գոյությունը չկրցավ պահել: Այժմ ձեր ներկա անտեսական կացությունը իբր դարման իմ կողմե ձեզի Ձ հազար ֆրանկ կնվիրեմ և կխոստանամ կարելի աջակցությունը ընել ձեզի»: Ան հրահանգեց նաև, որ բոլոր զինքերը տեղվույն վրա հանձնվին իրեն:

Քիլիսի Ազգային իշխանությունը և բոլոր հայ բնակչությունը շքրջապատած էին ֆրանսացի պատվիրակը և շնորհակալություն կհայտնեին անոր՝ մեզ գրկաբացորեն ընդունած՝ ըլլալուն համար: Ազգային միության որոշումով մեզ առաջնորդեցին տեղվույն դպրոց-եկեղեցին: Այստեղ մեր հանգիստին համար մեր հայրենակիցները ոչինչ չխնայեցին: Հայ կիներ իր հագուստները վեհանձնորեն կբաշխեը մերկերուն, հայ հարուստը իր քսակը բացած կաշխատեը բավարարել Ջեյթունի ազատագրված բեկորներուն նյութական ծով պահանջները: Հաջորդ օրը Քիլիսի բոլոր հայ խանութները գոց էին: Մեր ընկերներուն թաղման առթիվ հուղարկավորության թափոր կազմած կհառաջանայինք դեպի գե-

րեզմանատունը, մեր խնկելի նահատակները հողին հանձնելու համար:

Թաղումը կատարվեցավ մեծ շուքով և ընդհանուր սուգի մեջ: 1921 սեպտեմբերի 5-ի կիրակին է: Առտուն, եկեղեցիին կոչնակը սկսավ ահազանգել: Ամեն ոք, ծեր, պառավ, կին, այր և մանուկ անխտիր եկեղեցի կփութային ընդառաջելով կոչնակի հրավերին: Եկեղեցին խոնված էր, ասեղ ձգելիք տեղ չկար, նույնիսկ Հալիպեն հայրենակիցներ և սրտցավ ազգայիններ փութացած էին Քիլիս, սարքված սգահանդեսին ներկա ըլլալու համար: Իսկ մենք՝ ազատագրված բեկորներս, խորանին առջև, արցունքը մեր աչքերուն և արյունը մեր սրտերուն, կարգավ շարվեցանք: Օրվան բանախոսներն էին՝ Ազգային միության ատենապետ՝ դոկտոր Լ. Միրզա, ատենադպիր՝ Համբարձում Պոյաճյան, դպրոցի տնօրեն՝ Սաքրիս Յենիգոմշույան: Երեքն ալ իրենց կուռ խոսքերով հուզեցին ամբողջ ժողովուրդը:

Հավարտ հանդիսության, մեր խմբապետ ընկերներեն Սեդրակ Մարկանյան երգեց Սասնո եղերերգը. «Ջեյթուն գավառն ծնավ մե՛ մանուկ, անունն էր Ռուբեն...»: Սկսած էի փղձկիլ և արցունքներով գետինը ողողել: Բոլոր մարտիկները և ժողովուրդը հորդահոս արցունքներով թրջեցին դրված դագաղը, իրենց վերջին տուրքը տալով սիրելի և հավետ անմոռանալի նահատակներուն:

Համբու՛յր, բյուր համբույր իրենց պաղ շիրմին: Քահանայից դասը շերմեռանդ և սրտահույզ շարականներով հոգեհանգիստ կատարեց: Քահանային «Օրհնյալ եղերուք»-ով սգահանդեսը վերջացած էր: Ներկաները խոր և տխուր տպավորություններ վեցան սրահեն:

Ամսույն 7-ին Ն. Բ. Ը. Միության ներկայացուցիչ Միքայել Նաթանյանը և Ամերիկյան Նպաստամատուցի տնօրենությունը մեր քոթնական և ուտեստեղենի համար 80 հնչուն ոսկի և հագուստեղեն տվին: Նույն օրը, երեքշաբթի, այս տողերը գրողը, զինակիրներու հավանությունը, վերոհիշյալ պատվիրակության հետ մեկնեցավ Հալիպ, հարկ եղած կարգադրությունները ընելու համար: 1921 սեպտեմբերի 8-ին, «Կիլիկիա» թերթին մեջ մեր 33 ընկերներուն անունները կարդացի, որոնք ձիհանի եզերքը հուլիսի 17-ին դյուցազնաբար ինկած էին: Անոնցմե ազատված էին միայն Թորոս Մարկանյանը, Գևորգ Անապատյանը, Հայկ Ճոթտուրյանը և հուլիսի 20-ին ապաստան գտած Օսմանիյե:

Թորոս Մարկանյան Ջեյթունի Սուրենյան թաղեն, Մարկանյան գերդաստանի արժանավոր գավակ, միջահասակ, թիկնեղ, վայելչակազմ, հանդուգն, երեսունամյա զեյթունցի մըն էր, արհեստով կոշկակապ:

Տարագրութեան նախօրյակին ան զինվորագրված էր և Շամ գացած: Վերադարձին, Մարաշին Զեյթուն գացող Սեդրակ Զուլագյանի արշավախումբին մեջ գործոն դեր կատարած է: Ղեկավարած է 1920-ին Մարաշ գացող խումբը: Անտրոնի մեծ աղետին, իր վերոհիշյալ երկու ընկերներուն հետ, մայր խումբի 33 զինակիրներեն բաժնվելով կհասնի Օսմանիյե:

«Անտրոնի մացառներուն մեջ,— պատմեց հետագային ինձ թորոս Մարկանյանը,— մեծ բախում մը տեղի ունեցավ մեր և թշնամիին մեջ: Բոլորս ցիրուցան, իրարմե հեռու, այդ սև գիշերը 8 զինակիրներով ամրացանք մոտակա բլուրին գագաթը: Եղբայրդ՝ Մարկոսը մեզ հետ էր: Արշալույսին, մեր դիրքը աննպաստ տեսնելով, որոշեցինք անցնիլ հանդիպակաց բլուրը, որով թե՛ մեր դիրքերը ամրացուցած կըլլայինք և թե՛ կարելիությունը կունենայինք մեր կորսնցուցած ընկերները գտնելու: Անտառին մեջ, տեղափոխութեան պահին, հանկարծակի մեր դեմ տնկվեցան երեք զինվորներ: Մեկը զինված էր, իսկ մյուս երկուքը մեկական դուլլ բռնած էին: Ես որ խումբին առջևն զենքը ձեռքիս չորս կողմը զննելով կերթայի, անակնկալորեն զենքի հարվածով մը զինված զինվորը անշնչացուցի: Մյուս երկուքը իրենց ձեռքի դուլլերը ձգելով անհայտացան անտառին մեջ: Դուլլերը, որոնք լեցուն էին լուբիայի ճաշով, շատ հավանական է, որ զինվորներուն կտանեին որպես կերակուր: Աճապարանքով մեր ստամոքսը լեցնելով անցանք դիմացի բլուրը, ուր գտանք Մանուկ Գավագյանը, Արշակ Շորվողլույանը և մի քանի ուրիշ ընկերներ ևս:

Մեր փոքրաթիվ խումբը անտառին մեջ կթափառեր, երբ խիտ մացառներու մեջեն նշմարեցինք զինվորական ջոկատ մը, 100—150 հոգիե բաղկացալ: Հրամանատարը այդ ջոկատը երկուքի բաժնած կհրամայեր, պոռալով. «Շո՛ւտ, մտեք անտառ և այդ կյավորները մեկիկ-մեկիկ հավաքելով անխտիր ջարդեցեք»: Մենք առանց ինքզինքնիս զգացնելու, այդ մացառներուն մեջ լուռ և անշունչ, դիրք բռնեցինք, սպասելով անողոք ճակատագրին: Զորքը մեզ շտեսավ և անցավ գնաց: Իսկ մենք մեր ճամփան շարունակեցինք, հասնելու համար մեր որոշավայրը՝ բլուրին գագաթը: Հոն գտանք Հակոբ Շագյանը, Հովսեփ Քյոնտիլյանը, Անդրանիկ Զագրյանը և ուրիշ քանի մը երիտասարդներ: Անոնք մեզի հաղորդեցին, թե անտառեն քիչ հեռու, արևմտյան կողմը կգտնվի ձեր խումբը: Եղբայրդ՝ Մարկոս, երբ լսեց, որ իր կետն և Ռուբեն եղբայրները այնտեղ են, ստիպեց մեր խումբին, որպեսզի շուտ մը դուրս ելլենք և ձեզ գտնենք: Արդեն բոլորիս ալ փափաքը այդ էր:

Մեր տեղը բավական ապահով էր, բայց քիչ մը դադար ընել պետք էր, որպեսզի հետո կարենայինք մեր դիրքերեն դուրս ելլել:

Սեդրակ Տեմճյանը, որ Արշակ Շորվողլույանի հետ պահակ կեցած էր բարձունքին վրա, կհամոզե Արշակը, որ ձեր գտնված վայրը չհայտնե մեզ: Անիկա ա՛յն մտավախությունը կունենա, թե դուք թերևս կհակառակիք այդ պայմաններուն տակ ճամփան շարունակելու մինչև Ատանա: Բայց մենք վար իջանք՝ ձեզ գտնելու հույսով: Անոնք երկուքով մեզ շվարութեան մատնեցին և մեր փնտրտուքը անօգուտ եղավ: Վար իջանք Անըճըզի լեռան ստորոտը, ուր ալետատան ծովի պես ցորենի հասկերով ողողված ընդարձակ տարածություն մը կար: Զուրի պակասը խիստ զգալի էր: Ամառվան այդ տաքին 24 ժամ առանց ջուրի մնալը մեր ներսը կխանձեր ու կայրեր: Զորին խորը իջանք և հոն ջուր գտանք: Բայց, դժբախտաբար, թշնամին այդպիսի հավանականություն կանխատեսելով, ջուրին ալը արդեն գրաված էր. 30—40 զինվոր ալին մոտ համախմբված, կերակուր կպատրաստեին: Հրատուրը դրութեան մեջ կտառապեինք: Երևակայեցեք, որ ջուրը առջևեղ վազե և դուն պապակեղ շնչատ ու բերանդ շորցած մնաս, հոգեկան ինչպիսի՛ տառապանք կստեղծվի... Որոշեցինք սակայն նույնիսկ կյանքի գնով տիրանալ ալին: Օրը սկսած էր տարածամիլ, արևը գլխիկոր իր բույնը կվերադառնար:

Այդտեղ, ձորին մեջ, անտառին խորը 33 հոգի էինք. 3 կին, 7 տղա՝ 13—14 տարեկան և 23 զինյալ, որոնց 5-ը՝ չազմազը հրացանով: Հինգ մարտիկներ՝ ես, Մարկոսը, Հակոբ Շանլյանը, Հովսեփ Քյոնտիլյանը և Անդրանիկ Զագրյանը գացինք բռնելու թշնամիին հյուսիսային կողմի ելքը, իսկ մնացյալները՝ Կարապետ Տեմիրճյանի և Մանուկ Գավագյանի ղեկավարութեամբ ուղղակի ճակատեն պիտի հարձակեին: Տեմիրճյանն ու Գավագյանը դաշույնները մերկացուցած խումբը կառաջնորդեին դեպի աղբյուրը: Հրացանները սկսած էին պայթիլ: Թշնամին անակնկալի եկած խուճապի մատնվելով սկսավ փախուստ տալ: Մի քանիները տեղվույն վրա անշնչացած էին, իսկ մյուսները անտառին մեջ անհայտացան: Կովի դաշտեն ձեռք անցուցինք չորս մոսին հրացան և 6—700 փամփուշտ: Շարունակելով մեր ճամփան հասանք Քեշիլ գետին եզերքը, Պողոզ կոչված վայրը: Այդտեղ առատ ջուր կար և թշնամիեն բավական ուտելիք ձեռք անցուցած էինք: Սույն գիշերը ժամը 12-ին դարձյալ բախում ունեցանք թշնամիին հետ. Քիրեճցի Գրիգոր գետին ինկավ և թեք կտորեցավ: Հաջորդ օրվա մեր դիրքը շատ ապահով էր, ոչ միայն որևէ բախում չունեցանք, ապա նաև առատ

ուտելիք ունենինք, քանի որ փախուստ տվող զինվորներու պարենը գրաված էինք:

Ամբողջ գիշերը քալած էինք, բայց արշալույսին տեսանք, որ պարզ տեղափոխություն մըն էր մեր կատարածը. մեր նախորդ օրվա տեղեն հազիվ մեկ երկու ժամով կրցած էինք հառաջանալ: Իսկ զինվորական հետախույզ խումբը եկած, գտած էր մեզ: Այլևս կոխվր անխուսափելի էր, փախուստի ճամփա չկար, ամեն կողմե պաշարված էինք: Հրահանգվեցավ իզուր ոչ մեկ զնդակ չվատնել:

Թշնամի հառաջապահ խումբը եկած մոտեցած էր մեր պատնեշներուն. կրակելու ազդարարությունը տրվեցավ: Առաջին համազարկին տասնյակ մը զինվորներ տապալեցան, իսկ մյուսները խուճապահար փախուստ տվին: Մեր ուրախությունը շատ կարճ տևեց, որովհետև ամեն կողմե օգնական ուժեր փութացին և բուռն հարձակումի անցան: Թշնամին պաշարման գիծը այնքան մոտեցուց, որ հակառակորդ կողմերը կհանդգնեին իրարու զենքերու ծայրերը բռնել և նույնիսկ քարերով զիրար հարվածել: Անդրանիկ Չագրյան զենքը ձգած՝ դաշույնով հաջողած էր տապալել հսկա զինվոր մը: Կոխվր ահալոր էր: Արևելյան և հյուսիսային բլուրներեն ստվարաթիվ զինվորներ օգնության կփութային: Մեր կովորներեն Հովհաննես Ալեքսանյանը, որ Ֆրանսական բանակին մեջ ծառայած էր որպես փողահար, իր սրամիտ փողհարությամբ հաջողեցավ թշնամիին ուղղությունը շեղել, և անոնք փոխանակ ապահով ուղիներ փնտրելու, դաշտ իջան ու սկսան խմբովին քալել մեր արևմտյան կողմեն, ուրկե մեզի վտանգ չէր սպառնար: Մեր մարտիկները, առիթեն օգտվելով, համազարկ հարվածով մը կրցան տասնյակ մը զինվոր գետին փռել:

Ժամը 1-ին ուրիշ զինվորական խումբեր եկած, հասած էին մեր դիմացը: Այս ճակատագրական կոխվին մեջ, պաշարող թշնամիին հրամանատարը զայրացած, հարյուրապետին կգոռար. «Ահմե՛տ, հոս պաշարված հայերուն թիվը քանի մը տասնյակ է, անոնց մեկ մասն ալ կիներ ու երեխաներ են. մինչև հիմա կենտրոն հասած մեր վիրավորներուն թիվը 150-ը անցավ, անոնք լավ ալ զինված չեն, փամփուշտ չունին, չեն կրնար անոթի ծարավ դիմադրել. աս ձեր ըրածը ի՞նչ է»: Լսեցինք հետո որ հարյուրապետին ձերբակալեցին և կենտրոն տարին:

Հարյուրապետին ձերբակալութենեն վերջը հրամանատարը քսանապետին դառնալով կըսե. «Օսման, բոլոր այս շրջանը շղթայի տակ առեք, չթողուք որ որևէ մեկը դուրս ելլե. հրամանատարեն մինչև զինվորը՝ անունները չգիտցած դուրս չհանեք. կպահանջեմ, որ մինչև առա-

վոտ, կամ ողջ հանձնվին, կամ մեռած գտնվին»: Պաշարման գոտին լավ մը ամրացված էր, երեք շղթայով հաջորդաբար զնդացիներ զետեղված էին, ելքը անկարելի էր, մահը՝ անխուսափելի:

Կարապետ Տեմիրճյանն ու Մանուկ Գավազյանը, որոնք ռազմական գործերու մեջ հմուտ և փորձառու էին, կղեկավարեին մեր խումբը: Անոնք, Տարագրության շրջանին Ամանոսի լեռներուն վրա Արամի և Միմոնյանի կողքին շատ կոխվներ տեսած և փորձառություն ձեռք բերած մարտիկներ էին: Անոնք հայտարարեցին, թե մահվան զնով պետք է դուրս գալ շղթաներեն. թշնամին կարող էր ամեն ռուպե նոր ու թարմ ուժեր բերել, պաշարման շղթան ալ ավելի սեղմել, իսկ մենք ռազմամթերքի ահագին կորուստ պիտի ունենայինք, որով այդ ճգնաժամային դրութենեն աղատելու միակ ելքը շուտափույթ դուրս ելլելու վճռակամությունն էր:

Որոշվեցավ թշնամի դիրքերը անգամ մը ևս քննել և խոցելի կետե մը հարձակում գործել: Երեք հոգի՝ Կարապետը, Մանուկը և ես՝ սողոսկելով մոտեցանք թշնամի դիրքերուն, ուր երկու թուրք զինվոր զեն ի ձեռին իրարու հետ կխոսակցեին. մեկը կըսեր. «Մարդ արարածը իրական վայրի դաղան մըն է, զիրար բղկտելու, հոշոտելու ամեն միջոց չի խնայեր, աս ի՞նչ անիրավությունն է, եղբա՛յր... սա ափ մը մարդիկը բնաջնջելու համար ինչքա՛ն կորուստ տվինք, կյավուրը միթե աստուծո արարածը չէ՞, ի՞նչ հանցանք գործեք են այս մարդիկը, անոնք ալ իրավունք չունին մի՞թե այս երկրի բարիքները վայելելու»: Երկրորդը կպատասխաներ. «Քանի որ քու խիղճդ և իմ ալ խիղճս կտանջե, եկուք աչքերնիս գոցենք, եթե մեր կողմեն գալու ըլլան և մեզ չղպին, ձգենք որ անցնին, երթան: Հարկավ անոնց մեջ ալ հալալ կաթ ծծած մարդիկ կգտնվին»: Անմիջապես ետ դարձանք, եղելությունը մերոնց հաղորդեցինք: Կազմ ու պատրաստ վիճակով որոշեցինք շատ զգուշությամբ այդտեղեն անցնելու աշխատիլ: Սվինները մերկացուցած, Գավազյանին առաջնորդությամբ անցանք պաշարման գոտին, առանց թշնամիին բան մը զգացնելու:

Այդ օրը մեր տարած հաղթանակին շնորհիվ գրաված էինք 7 զենք, 5—600 փամփուշտ, իսկ կորսնցուցած էինք Սեդրակ Տեմիրճյանը: Ան 45 տարեկան, տարագրության շրջանին իր ընտանիքին ամբողջ անդամները կորսնցուցած թունդ հայրենասեր մըն էր, որ Զեյթուն վերադարձած է իր ավերակ օջախը վերաշինելու ցանկությամբ:

Խումբը, միջավայրին բոլորովին անձանոթ, ստիպված էր ընթանալ Քելեզ գետին եզերքեն, մոտեն կամ հեռուն՝ առանց գետին հունը կոր-

սընցնելու՝ ձիհանը գտնելու հույսով: Մեր ծարավին գոհացում տալի վերջ, վերադարձի ճամփուն վրա տեսանք պզտիկ թրքական գյուղ մը, զոր պաշարեցինք. ներս մտանք, բայց դժբախտաբար բոլորովին ամայի էր, ուտելիք բան չկար, միայն մեղրուի փեթակներ և առատ մեղր կար, բայց ի՛նչ օգուտ. հաց չունեինք:

Խումբը իր ճամփան կշարունակեր գիշերը՝ տեղական պայմաններուն անգիտակ: Հագիվ հորիզոնը շառագունած էր, երբ ինքզինքնիս գտանք թրքական բանակատեղիին խիստ մոտիկը: Կշանանք վեր՝ դեպի լեռը բարձրանալ, ամուր դիրք մը ապահովելու համար: Կսկսինք մագըլցիլ դեպի լեռը, երբ Արշակ Շորվոզլույան սայթաքելով գահավեժ կզլորի և փշուր փշուր կըլլա:

Արշակ Զեյթունի իշխանական շառավիղներեն էր: 40 տարեկան էր, երբ զոհվեցավ ան: Առևտուրի մեջ թրծված ու եփված, լուրջ ու խոհուն, գիտակից հայրենակից մըն էր: Տարագրության շրջանին ան մնացած էր Հալեպ և աներևակայելի պայմաններով կյանքը քաշկոտած ու հետո վերադարձած էր Զեյթուն, մեծ հույսերով:

Թրքական բանակատեղիին բավական հեռացած, լեռան մյուս կողմը բարձունքի մը վրա նոր դիրքեր բռնած էինք: Խասյան Մեսրոպը, զեն ի ձեռին, իբր պահակ կսպասեր, իսկ խումբը հոգնած ու քնատ, կուզեր քիչ մը հանգստանալ: Դանիել Դանիելյանը, որ կոկիստնաբնակ բնիկ մարաշցի մըն էր և որը 1920-ի նախօրյակին, Քյուրեճ-Քաշուրքի ջարդեն մազապուրծ, ապաստանած էր Զեյթուն, կհաջողի Մեսրոպը համոզել, որպեսզի թրքական իր տարագրվը երթա մոտակա վրանները և պարեն ճարե: Բայց Դանիելը տակավին վրաններուն չմոտեցած կրակ կբանան իր վրա: Սակայն ան կհաջողի կովելով հանդերձ գալ և կրկին մեր խումբին միանալ: Թշնամին, Դանիելի հետքին վրայեն եկեր և գտեր էր մեր տեղը:

Մեր դիրքը շատ անառիկ և ապահով էր: Թշնամին շատ կորուստ տված էր և հաղթանակը մերն էր, բայց Դանիել պատնեշեն դուրս գալով՝ սպանված թուրք զինվորներուն զենքերը առնել բերելու պահուն՝ ճակատեն զարնվելով անշունչ գետին ինկավ: Ուրիշ կորուստ չունեցանք: Իրիկնամուտին, մեր գրոհին տեղի տալով, թշնամին սկսավ նահանջել: Իսկ Մեսրոպը, որ չէր հաջողած նախապես մեզի միանալ, պահվտած էր ժայռի մը խոռոչին մեջ: Թշնամիին հեռացումեն հետո ան ալ եկավ մեզ մոտ և բավական կարևոր տեղեկություններ տվավ մեզի: Ան հայտնեց, թե թշնամին ամեն կողմե ամուր դիրքեր գրաված էր, նոր-նոր ուժեր

կհասնեին և ինքը ականատես եղած էր անոնց զինվորական շարժումներուն:

Այդ գիշեր, կարճես թե նախախնամական կարգադրությամբ մը, առանց զգացնելու, հաջողած էինք պաշարման գոտիեն դուրս ելլել: 22-րդ օրը, արևածագին, հաջողած էինք մեզ թաքստոց ընտրել դաշտի մը վրա՝ ճախճախոտ մը: Հստ սովորության, հոն բարձրացած ծառերուն վրա պահակներ տեղավորեցինք և հրահանգեցինք մարտիկներուն, որ քիչ մը հանգստանան, իրենց հոգնաբեկ մարմինները կազդուրելու համար: Պահակներեն Տիգրան Գրզլալյանը՝ 50 տարեկան, տարագրության դառնությունը ճաշակած, բայց ի ծնե անձնասեր ու որկրամոլ, կտեսնե կին մը, որ մոտակա ընդարձակ վարունգի պարտեզին մեջ զբաղած է վարունգ հավաքելով: Ան կհամոզե մյուս երկու պահակները, որոնք իր մոտիկ ազգականներն էին, որպեսզի երթան կնկան մոտ և դրամով վարունգ ուզեն: Իր երկու համախոհներուն՝ Նշան Թուլիկյանին և Մեսրոպ Խասյանին հետ կմոտենան կնոջը, որ սիրահոժար կընդառաջե անոնց փափաքին և կառաջարկե անոնց նստիլ քիչ մը, մինչև որ ինք վարունգները քաղե: Սակայն, խորամանկ թրքուհին մի քիչ անդին գտնվող պահականոցը երթալով եղելությունը կպարզե: Իսկույն մերինները կպաշարվին: Նշան տեղվույն վրա կանշնշանա: Իսկ Մեսրոպ, արյունաթաթախ, կհասնի մեր քով: Անոր վիճակը հուսահատական էր, ի վիճակի չէր խոսելու, միայն ձեռքի շարժումներով կուզեր բաներ մը հայտնել: Թշնամի հրացանները կգոռային, հետախույզ զինվորները մոտեցած էին մեզի: Այդտեղ, բաց դաշտին վրա ու ճահիճին մեջտեղ կըռվիլը անխուսափելիորեն մեր կորուստը կնշանակեր: Եթե կարողանայինք հանդիպակաց բլուրը հասնիլ, հավանաբար կրնայինք դիմադրել: Երիտասարդ մարտիկներեն Անդրանիկը, Մարկոսը և Հակոբը արծվային թռիչքով սլացան դեպի վեր և մեր նպատակադրած լեռը ձեռք անցուցին, իսկ խումբը մարտնչելով, մինչև որ բոլորս հաջողեցանք հասնիլ իրենց: Մեր անձնագոհ դեռահաս զինակիցները ուրախությամբ ավետեցին մեզ, թե ձիհան գետը կերևի: Իսկպես ձիհան գետը լեռան լանջեն շառաչելով կերթար դեպի Միջերկրական: Ա՛յն ձիհանը, որուն հասնելու համար այնքան զոհողություններ քրած և թանկագին զոհեր տված էինք:

Մեր հույսերը իրականացած էին՝ մեր երազած գետը գտնելով: Եթե կարենայինք անկե անցնիլ, այլևս փրկված էինք: Բայց, դժբախտաբար, գետեզրին դիրք բռնած թշնամին գնդացիրով մատաղ կյանքեր կխլեր: Մեր մարտիկներուն մեկ մասը լողալ չէր գիտեր, որը շատ մեծ անպատեհություն էր: Այսպես, գետեզրի ավազուտքին վրա, բացօթյա, անո-

ղոք թշնամիներու՝ գետին և թուրքին միջև ստիպված էինք օրհասական պայքար մղել: Մեր քով գտնված զինամթերքը ևս կսպառեր: Մեր մարտիկներուն միակ հույսը գետն էր, բայց ինչպե՞ս պիտի կարենայինք գետին անցքը կաղմակերպել: Մեր խմբապետը՝ Կարապետ, զիստեն երկու զնդակ ստացած ըլլալով անշարժութեան մատնված էր: Հրահանգվեցավ լավ լուղորդներուն գետը անցնիլ և արևելյան ափին դիրք բռնել, որ նշաններ տալով մեր շարժումները կհաղորդեր հրամանատարութեանը: Ան կհաջողի ծառին վրա գտնվող հիսնապետին մոտենալ և մեկ հարվածով վար գլորել գայն: Դարձյալ ջուրի հոսանքին հանձնված, երկրորդ փորձ մը ըրինք դիմացի ափը հասնելու համար: Անդրանիկ վիրավորվեցավ և կու գնաց ալիքներուն: Իսկ ես, առանձին, ջուրերու հոսանքին հանձնված կերթայի, երբեմն գլուխս ջուրեն բարձրացնելով կտեսնեի գետեզերքի ընկերներս, որոնց փամփուռները սպառած ըլլալով հանդերձ դեռ կմաքառեին և կջանային շեղքացնել պաշարող թըշնամին, որ իրենցմե բավական հեռու, պատնեշներու ետևը, զնդացիներու քով, անընդհատ զնդակ կռիւղացներ: Մեզմե շատեր մեկ երկու հարված ստանալի հետո անշարժութեան դատապարտվեցան: Այլևս ընելիք բան չունեինք, թշնամիին անձնատուր ըլլալու փոխարեն կնախընտրեինք հանձնվիլ գետին ալիքներուն:

Ես հաջողած էի գետի հոսանքն ի վար բավական հառաջանալ և հասնիլ գետափ: Կրցած էի գլուխս դուրս հանել և տեսնել զինվոր մը, որ անդադար կկրակեր լողացողներուս վրա: Զանացի գետեզըրը դիրք գրավել, երբ նույն պահուն տեսա Հայկ Ճոթթուրյանը, որ ինձի կհետեւեր: Դիմացեն թուրք պահակ զինվորը կպոռար. «Ահմետ Չավուշ, ետքաշվե»: Ստիպված դարձյալ խորասուզվեցանք ջուրին մեջ, և ավելի վարը, տեղե մը դուրս ելանք: Ճոթթուրյան 15—16 տարեկան, անդեն պատանի մըն էր, ոտքեն վիրավորված: Երկուքս միասին գետեն հեռու, մացառներուն մեջ պահվորտելով, կդիտեինք եղեռնավայրը, ուր մեր ընկերները ինկած էին, ուր ոչ սք կերևար, որովհետև, վիրավորներեն շատերը սողոսկելով՝ ալիքներուն մեջ նետված էին, թշնամիին չհանձնվելու համար: Կատաղած ու մոլեգնած թշնամին խուժած էր դեպի եղեռնավայրը՝ ավարի տիրանալու հույսով, բայց մեր կովորները իրենց հետ քաշեր, տարեր էին իրենց ունեցածը: Միայն տիկին Երանուհի Չազըրյանը, վիրավոր վիճակի մեջ թշնամիին ձեռքը անցած էր:

Խումբի 33 հոգիեն մնացած էին 17-ը, որոնցմե 14-ը ևս ահա գետամուչն կըլլային: Անոնցմե էր Կարապետ Տեմիրճյանը՝ Գալճըլար գյուղեն, որ տեղահանութեան սկիզբը զինվորագրված էր թուրքական բանակին: 1916-ին որպէս զինվոր Սուեզի ջրանցքը երթալու ատեն ան կփախչի և կմիանա Ամանուսի խումբին, ուր իբրև կարգապահ և կովող զինվոր բոլորեն կսիրվի: Զինադադարին ան խումբին հետ Հալեպ կուգա, ապա կվերադառնա Զեյթուն: Միմոնյանին հետ կմասնակցի մյուստյուր Յահյայի սպանութեանը: Անտրունի եղեռնին վերջ կղեկավարե հիշյալ 33 հոգիեց խումբը: Մանուկ Գավազյանը, նույնպէս Գալճըլար գյուղեն էր. միջահասակ, թիկնեղ, 40 տարեկան մարտիկ մըն էր: Ան Ամանուսի խումբին հետ գործակցած և որոշ գործունեութեան ցույց տված էր: Հայրենիք վերադարձած էր քարուքանդ օջախը շենցնելու համար: Մինչև գետամուչն ըլլալը ան Կարապետին հետ ղեկավարած էր հիշյալ խումբը: Անդրանիկ Չազըրյանը՝ Շորվօղլույաններու թաղի Չազըրյան ընտանիքէն էր: Ան Ֆրնտըճագի մեջ նահատակված Փանոս Չազըրյանի եղբոր՝ Արթինի անդրանիկ որդին էր: Հազիվ 20 տարեկան, միջահասակ, վայելչակազմ, Զեյթունի Կեդրոնական վարժարանի շորորդ դասարանի աշակերտ, ան տարագրութենէն հետո վերադարձած էր Զեյթուն:

Մարկոս Նորաշխարհյանը Նազարեթ Չավուշի շորորդ որդին էր. 18 տարեկան, երկայնահասակ, կտրիճ, գեղանի պատանի մըն էր: Տաղազրութեան պատճառով ընդհատված էր իր ուսումը: Ան մոր եղբայրներուն հետ մասնակցած էր տեղահանութեան առաջին կարավանին, ապա մեծ հույսերով վերադարձած էր հայրենիք: Կարգապահ և հավատարիմ մարտիկ մըն էր ան: Անտրունի մեջ կորսնցնելով իր եղբայրները, միացած էր Տեմիրճյանի խումբին: Իր հանդուգն, խիզախ և անձնդիր գործունեութեան համար ան բոլոր ընկերներեն սիրված էր: Ճիհան գետին եզերքը, իր ընկերներուն հետ, թեւաթափ թռչունի մը նման, անոթի ու ծարավ, ան նախընտրեց գետի ալիքներուն հանձնել իր մատաղ կյանքը: Փառք և պատիվ՝ գետամուչն անձնազոհ նահատակներուն:

Հայկին հետ, երկու դժբախտ արկածահարներս, — կշարունակե թորոս Մարկանյանը, — աղամական մերկութեամբ, թուփերու մեջ պահվտած, կողողողայինք: Վրայի շապիկէս կտոր մը մնացած էր միայն, անով ալ Հայկին վերքը փաթթեցի և ապա սկսանք անորոշ ուղղութեամբ մեր ճամփան շարունակել:

Երկրագործ մը, որ իր դաշտը կհերկեր, մեզ տեսավ և լուր տվավ

հետախուզող ջոկատին, որ երկու բոլորովին մերկ արարածներ թաքնված են դիմացի մացառուտաներուն մեջ: Սակայն զինվորները չկրցան մեր հետքը գտնել: Ծիհան գետեն բավական հեռացած էինք: Գիշերը՝ մերկ, կմսեինք: Անոթի, ծարավ, այդ անծանոթ հորիզոններուն տակ, խոտ ու տերև ուտելով անորոշ ուղղութեամբ կքալեինք: Արևածագին բլուրի մը գագաթը բարձրացած էինք, երբ վարը, աղբյուրի մը մոտ տեսանք իսլամ կրոնավոր մը, որ ոտնամանները և փաթթոցը մեկ կողմ դրած կպատրաստվեր իր հոգեկան տուրքը տալու Մարգարեին: Հայկ, թուփերուն մեջն սողոսկելով, հասավ շերմեռանդ կրոնավորին ազոթավայրը և հաջողեցավ փաթթոցն ու ոտնամանները առնելով ինձ մոտ վերադառնալ: Փաթթոցով մեր վերքերը կպպեցինք, իսկ գլխարկն ու ոտնամանները որպես կոշիկ ծառայեցին: Բավական ճամփա կտրած էինք, երբ մեր առջև պարզվեցավ տարածութուն մը՝ ծածկված զինվորական վրաններով: Հաջողած էինք այդ շրջանն անվտանգ հեռանալ: Գյուղացիները մեզ տեսած էին, սակայն քանի մը հեծյալ զինվորներ հրացանի հարվածներով թուփերու մեջ փնտրտուքներ կատարելով հանդերձ մեզ չկրցան գտնել: Այդ օրը որպես ուտելիք՝ խոտ կամ տերև ալ չունեցանք: Միայն կաղնիի տերև կար: Երրորդ օրը անտառին մեջ տեսանք աղբյուրակ մը և անոր կողքին բարձրացած որթատունկ մը՝ խաղողով բեռնավորված: Լիուլի կերանք. բավական կաղոտրված էինք: Նոր ուժ, նոր կորով ստացած երբ բլուր մը մագլցեցանք, տեսանք գնացք մը, որ բլուրին տակեն կսուրար: Լարված ուշադրութեամբ սկսանք նայիլ: Իսկպպես գնացքը մըն էր ան, որուն գագաթը կծածաներ ֆրանսական եռագույնը: Ժամանակը շատ թանկ էր, փութացինք իջնել ձորը: Զենքերը պահած և մեր մերկութունը մասամբ տերևներով ծածկելով ուղղվեցանք դեպի փշաթելերը, որոնցմով շրջապատված էին այդ կողմերը: Պահակ զինվորը սպառնաց կրակել: Անմիջապես վեր բարձրացուցինք մեր ձեռքերը: Դուռը բացին և մեզ ներս առին: Այդտեղ խոնված էին թուրք զերիներ՝ տաժանակիր աշխատանքի դատապարտված: Անոնք մոտեցան մեզի. երբ հասկցան որ հայ ենք, խոսեցան Միսակ անունով հայ խանութպանի մը մասին: Մերկ ու արգահատելի վիճակով մոտեցանք Միսակին, մեր ինքնութունը հայտնելու համար, բայց ցավալի է ըսել, թե այդ ապաղզայնացած հայը ոչ միայն չհետաքրքրվեցավ մեր վիճակով, այլ նույնիսկ մեզ շտեմնել ձևացուց:

Խանութին առջև աղամական մերկութեամբ կծկված կպասեինք մեր ճակատագրին, երբ անդին տեղվույն ֆրանսական զինվորական հրամանատարը գալով՝ «Քոշոն, քոշոն» («խոզ, խոզ») պոռաց մեր երե-

սին և մտրակով քանի մը հարվածներ տվավ մեր արևակեզ, մերկ մարմնին: Արյունը սկսավ ժայթքիլ: Մահը բյուր անգամ նախընտրելի էր՝ քան քաղաքակիրթ քրիստոնյա պետութեան մը ներկայացուցիչին կողմնեման նողկալի վերաբերմունքը: Քիչ ետք մեզ բանտ ալ տարին՝ մութ և խոնավ նկուղ մը:

Գիշեր էր, որևէ բան կերած չէինք: Ատանացի հայը դժկամակած էր նույնիսկ մեզի ջուր տալ: Այդ նկուղին մեջ, մերկամարմին, մարակի հարվածներեն հառաջացած վերքերնիս կկոտտար և օրհասական տագնապի մատնված էինք: Մեր պաշտելի ընկերները կոզեկոչեինք և երանի կուտայինք անոնց, որ այս աշխարհն բաժնված էին պատվով և փառքով: Ժամը 12-ն էր, երբ շորս սվինավոր զինվորներ եկան, նկուղին դուռը բացին և մեզ առաջնորդեցին ուղղակի հրամանատարին գրասենյակը: Մեր անզեն ընկերներեն 17—18 տարեկան պատանի մը՝ Գևորգ Անապատյան, հաջողած էր ծիհան գետը անցնիլ և ապահով հասնիլ Օսմանիյե, ուր ընդփութ ֆրանսական հրամանատարութեանը կտեղեկացնե ծիհանի ողբերգութեան մասին: Ասոր վրա, ֆրանսական հրամանատարութեանը անմիջապես կհրահանգե սահմանապահ բոլոր պահականոցներու պետերուն, որպեսզի իրենց դռները բանան աղետեն ազատած զեյթունցիներուն առջև և անոնց հարկ եղած օգնութունը շինայեն: Սույն հրահանգը հասած էր նաև մեր դաժան և քարսիրտ հրամանատարին, որուն հետևանքով հաջորդ առտու մեզի տվին զինվորական հագուստներ, ապա մեզ հսկողութեան տակ ղրկեցին Օսմանիյե:

Օսմանիյեի ֆրանսական ընդհանուր հրամանատարութեանը հրահանգեց բոլոր սահմանամերձ ֆրանսական ուժերուն, որպեսզի հառաջանան մինչև ծիհան՝ ափ մը զեյթունցիներս ազատագրելու համար: Բացի մեր երեքեն (Թորոս Մարկանյան, Հայկ Ճոթթուրյան և Գևորգ Անապատյան) ոչ ոք ազատած էր մեր խումբեն: Բոլորը XX դարու քաղաքակիրթ մարդկութեան, ասպետական ֆրանսական բանակին քիթին տակ բնաջնջված էին՝ կուլ երթալով ծիհան գետի հորձանքներուն:

Հոս կվերջանա վերապրող Թորոս Մարկանյանի և իր 33 զինակիցներուն պատմութունը:

Իսկ զորանոցն մեզմե բաժնված և Ռաֆայել Խրլազյանի միջնորդութեամբ թուրք բանակ առաջնորդված հայրենակիցներու մասին հետևյալը պատմեց մեզ Ասատուր Կյուվանեսյանը, զոր ընթերցողը լավ կհիշե. «Զորանոցն բաժնվելով հասած էինք Գայմագամի աղբյուրը և անոր կոնակին տարածված ծառայունենց այգին: Բլուրներու ստորոտը համախմբված էինք բոլորս ալ: Մեր շուրջը սվինավոր պահակներ կհսկեին:

Իրացի թուրք հազարավոր գյուղացիներ, զինված՝ առիթի կսպասեին մեզ կոտորելու համար: Ընդհանուր հրամանատարը խոժոռ դեմքով և սպառնացայտ նայվածքով զիս իր քովը կանչելով ըսավ. «Գնա՛, անոր որուն ամուսինը, զավակը, եղբայրը զորանոցը կգտնվի, անոնց ընտանիքները գատե՛. եթե չերթան և իրենց հարազատները չբերեն, իրենք ալ ետ՝ զորանոց պիտի ղրկվին»: Պատասխանեցի իրեն, որ՝ «Ե՛ս ալ չեմ ճանչնար զիրենք, քանի որ ես միշտ Զեյթունեն դուրս գտնված եմ»: Ան ավելի սպառնաց՝ պոռալով. «Եթե հրամանս չկատարեք, ձեզ հոս բռնորդ ալ պիտի ոչնչացնեմ»: Նույն պահուն՝ Հովնան Սալաթյանը, Գրիգոր Քյուփեղյանը և Միքայել Սեյրեգյանը առաջ նետվեցան և փափաք հայտնեցին, որ այդ պաշտոնը իրենց տրվի: Ես բարեբախտաբար ազատած էի այդ պաշտոնեն, որովհետև ինձ համար նախատինք մըն էր հայրենակիցներս մատնել մեր դարավոր ոսոխին: Տակավին հեռացած չէի հրամանատարին քովեն, երբ դարձյա՛լ ան բարձր ձայնով գոռաց. «Կյուլվանեսյա՛ն, դոկտո՛ր էլմաճյան»: Երկուքս ալ խոնարհաբար իրեն ներկայացանք: «Գացե՛ք շուտ և ըսեք այն հելուզակներուն, որ անձնատուր ըլլան: Անոնց ընտանիքները հոս են, ձեռքիս մեջ: Հակառակ պարագայի պիտի վերադարձնեմ զիրենք, որմե ետք անխտիր կրակի պիտի տամ զորանոցը»: Այս ըսելով, ան գրուվյուն մը հանձնեց մեզի, ձեզի՛ փոխանցելու համար:

Մեր պաշտոնը լիովի կատարեցինք, հրամանատարին պաշտոնական գրուվյունը ձեզ և ձեր պատասխանը իրեն փոխանցեցինք: Երբ ան ձեր պատասխանը կարդաց, վիրավորված արջի մը պես մոնջեց. «Ձատված ընտանիքները անմիջապես զորանոց թող երթան»: Մոտ 150 հոգի՛ կին, այր, ծեր, մանուկ, որոնք զատված էին վերոհիշյալ երեք հայերուն կողմե, պարտադրվեցան զորանոց վերադառնալ:

Մենք ընդամենը 594 հոգի էինք: Զինվորական շվթայի տակ առնըված, սկսանք քալել դեպի առաջ: Կրտսեր եղբայրդ՝ Ավետիքը, մորդ հետ՝ իբրև որբ և այրի՛ ջորի մը պախուրցեն քաշելով շվթայեն դուրս ելան և միացան մայր կարավանին, իսկ տիկինդ՝ Կատարը, իր կարգին, որդիդ՝ Նազարեթը գրկին, իբրև այրի, եղբորը՝ Փանոսին հետ միասին, այժի մը վիզեն բռնած, հետևեցան կարավանին: Շրջակա դրացի թուրքերը հակառակ մորդ, եղբորդ և տիկնոջ ծանոթ ըլլալուն, լոցեցին: Իրիկնամուտին, Գրըրավուզի հարավը, հազիվ կես ժամ հեռու գտնվող Ախվախը կոչված վայրը գիշերեցինք: Թնդանոթի ձայներ կլավեին Զեյթունի կողմեն: Յոթը կենդանիներու վրա բեռցած զենք բերին. իբրև թե ճակատը

սպանվածներուն զենքերն էին: Պաշարման օղակը սեղմած էին և ըստ թուրքերու ըսածին, այդ հարձակումը իրենց բավական սուղի նստած էր: Առտու կանուխ մեր ճամփան շարունակեցինք: Մեզ ընկերակցող թուրք հիսնապետին մարդկային վարմունքը հիշատակության արժանի է: Կեսօրին, ժամը 12-ին հասանք կամուրջը և վրաններու տակ տեղավորվեցանք: Հազիվ այնտեղ հասած, հայր Բարթողիմեոսը մեզմե զատեցին ու տարին: Հաջորդ օրը անոր վերադարձեն վերջ հասկցանք, որ պաշտոնական գրուվյամբ մը զայն զորանոց, այսինքն ձեզ մոտ զրկած են, ժողովուրդը հնազանդության հրավիրելու համար:

Հաջորդ օրը ժամը 8-ին հասած էինք Ախըրտաղի գագաթը, էշեկ մեյտանը ըսված վայրը, ուր իջևանեցինք: Մարաշեն Ամերիկյան նպաստամատուցի ներկայացուցչուհի լույնը ուտելիք փութացած էր մեզի: Առտուն կանուխ իջանք Մարաշ և հանձնվեցանք սույն նպաստամատուցի հոգածության, որ մարդասիրական ոչ մեկ խնամք խնայեց: Քաղաքին մեջ հաստատված էինք ս. Ստեփանոս եկեղեցին: Շնորհիվ միսիոնարության՝ ամեն հանգիստ կվայելեինք, որևէ դժգոհության պատճառ չկար: Միայն հուլիսի 15-ին, Հարուվյուն Գասապյան և իր յոթը ընկերները երբ քաղաքին մեջ կպտտին, անգիտակցաբար կանցնին սրճարանի մը քովեն, որուն սեփականատերը և տնօրենն էր զեյթունցի Թաշճնի մը քովեն, որուն սեփականատերը և տնօրենն էր թուրք ամուսինը: Սրճայան ընտանիքեն Անուշ անունով աղջկան մը թուրք ամուսինը, թե բանապետը ոստիկանության կտեղեկացնե, այն զրպարտությամբ, թե անոնք եկած են զինքը մահափորձի ենթարկելու: Ատոր վրա անմիջապես կձերբակալվին մեր անմեղ հայրենակիցները և քաղաքեն դուրս Ախըրտաղի ստորոտը կգնդակահարվին:

Հարուվյուն Գասապյան համեստ և սիրված ընտանիքի մը սերած, 40 տարեկան, տեղվույն ազգային Կեդրոնական դպրոցի փայլուն շրջանավարտներեն էր: Նախքան պատերազմը ան պետական ելևմտական պաշտոններ վարած է: Տարագրության ատեն ան կկորսնցնե իր բոլոր հարազատները: Պատերազմի վերջին տարիներուն, իր հաշվակալական կարողության շնորհիվ, ան կրցած էր Շամ-Գոնեթրա ճամփուն երկայնքին ընդհանուր հաշվակալության պաշտոն մը ստանձնել: Շատ մը հայրենակիցներ, անոթության ճիրաններեն խլելով, տարած էր Շամեն՝ 9 ժամ հեռու՝ Եվեթիթի-Գոնեթրա ճամփան և անոնց գործ ապահոված էր: Զինադադարին Շամի գաղթականին ընդհանուր մառանապետը եղած էր: 1919-ի վերջերը հայրենիք եկավ իր ուժերը ի սպաս դնելու իր ծննդավայրին: Ազգային միությունը փութաց զինք առնելու իր կազ-

մին մեջ: Ան իր բոլոր ճիգերը ի գործ դրավ այդ միութեան համերաշխութեանն ու հավասարակշռութեանը պահելու համար: Ան երեք անգամ մասնակցած է թրքական կառավարութեան հետ տեղի ունեցած բանակցութեաններուն և միշտ օգտակար եղած է (մեկը Զերմուկի մեջ, մյուս երկուքը՝ Մարաշ): Զորանոցեն բաժանումեն վերջին օրը, իր առողջական վիճակը նկատի առնելով, ան միացավ անձնատուր եղող ժողովուրդին և ինչպես նշվեցավ վերը, իր 7 ընկերներուն հետ դավադրութեան մը զոհ գնաց:

Մեր հայրենակիցներուն մասին շատ անհեթեթ և սարսուղդեցիկ տարածայնութեաններ շրջան կրնեին,— շարունակելով իր պատմութեանը ըստ վստիկանստանի:— Քաղաքին մեջ՝ կառավարութեան և ժողովուրդ սկսած էին ծուռ նայիլ մեզի և մեզ բնաջնջելու ծրագիրներ կործանային: Ի վերջո կառավարութեանը որոշեց մեզ Մարաշեն քշել: Քաղաքին մեջ հաստատվող ժողովուրդը մասնավոր հրամանով մը համախմբվեցավ բերդին ստորոտը, ս. Ստեփանոս եկեղեցին, բժշկական քըննութեան ենթարկվելու պատրվակով: Խնդրանք, աղերսանք, դիմում, միջամտութեան՝ անգոր դարձան անխիղճ բռնակալներուն քարացած սիրտերը մեղմացնելու համար:

Խեղճ մայրդ, իրատես և փորձառու, ամեն դուռ կղարներ, որպեսզի իր սրտահատոր Ավետիքին թաքստոց մը ապահովեր, բայց բոլորը քարսիրտ դարձած խստադեմ կմերժեին ընթացք տալ իր աղեխարշ խընդրանքներուն: Թուրք բժիշկը, անխիղճ և անզգա, քննութեանը լրացուցած, շատ քիչ թիվով ընտանիքներ ձգեց, իսկ մնացյալները՝ ծեր, պառավ, կին, մանուկ՝ մտրակի հարվածներուն տակ քաղաքեն դուրս հանվեցան, համաձայն տրված հրահանգին: Հեծելազորքը սրընթաց ձիերու սմբակներուն տակ կտորեր կարավանեն ետ մնացողները: Տեսարանը շատ սրտահույզ էր: Քալելու կարողութեան շունչները կա՛մ ձիերու ոտքերուն տակ կհիսկրտվեին և կա՛մ ճամփուն վրա առանձին կլքվեին: Անանկ որ մայրը որդին կորսնցուց, ամուսինը իր կնոջը: Խեղճ մայրդ, այլևս տարիքը առած, զառամած և հոգսերու բեռան տակ կքած, չէր կրնար կարավանին հետևիլ, որով Ավետիք եղբայրդ, իր որդիական ազնիվ զգացումով ամեն ջանք ի գործ կդներ մայրը իր քովն չբաժնելու համար: Ան հաջողեցավ օրական մեկ հնչուն ոսկիով կառք մը վարձել և մայրդ հոն նստեցնել: Բայց այդ գարշելի կառապանը ոսկին գանձելի վերջ, հազիվ կես ժամվա ճամփա կտրած, մայրդ և բեռը ճամ-

փուն վրա ձգեց և հեռացավ: Ավետիք գավազանի հարվածներու տակ սակայն կրցավ մայրդ հասցնել նույն օրվան իջևանը:

Պազարճը, Մարաշեն 10 ժամ հեռու, գայմագամանիստ, քրդաբնակ գյուղաքաղաք մըն է, մոտ 2 հազար տնվոր: Անոր բնակիչները խոնվեցան մեր շուրջը և մեզմե կին և աղջիկ կպահանջեին: Իրիկուն էր, երբ մեզ ընկերացող ոստիկանները, ըստ իրենց ընկալյալ սովորութեան, սկսան ցերեկին իրենց աչքին զարկած կիներն ու աղջիկները առնել տանիլ: Այդ օրը անոնք նպատակադրված էին տանիլ տիկին Պաղտատ Եղեկիլյանը՝ Ֆոնուզի նշանավոր Ալաճաճյան ընտանիքին արժանավոր զավակը, որ պարկեշտ և տիպար հայուհի մըն էր: Պաղտատ՝ ծպտված, ցնցոտիներով ծածկված, պահվտած էր հայրենակիցներու հովանավորութեան տակ: Գազան ոստիկանները, մտրակները բռնած, սկսան ժողովուրդը նեղել և շարշրկել. անոնք նույնիսկ կսպառնային բոլորը անխտիր խոշտանգել, եթե Պաղտատը չհանձնեինք: Հայր Բարթողիմեոսի մորուքեն բռնած, մտրակի շառաչներուն տակ, անոնք Պաղտատը կուզեին: Բարթողիմեոս խորամանկութեան դիմելով և աղեկտուր ձայնով մը պոռաց. «Աղջի՛կ Պաղտատ, զիս կսպանեն կոր, խըղճա՛ ինձ, եկու՛ր այս շուները տես ինչ կըսեն... չըլլա՛ որ գաս... ինձի մի՛ հավատար»: Ազնիվ զեյթունցիք սիրահոժար տարին այս խաղը մինչև լույս, և Պաղտատը չհանձնեցին:

Հաջորդ առտու, ոստիկանները կատղած ու մոլեգնած, իրենց բաց երախներով կուզեին կուլ տալ ամբողջ ժողովուրդը: Խժժութեաններն ու բարբարոսութեանները իրենց զենիթին հասած էին, ոչ ոք չէր կարող առարկութեան մ'ընել: Եղբայրդ՝ Ավետիք, դարձյալ մորդ հետ, չէր կրցած միանալ կարավանին: Մտրակի հարվածներով կսպառնային իր կյանքին վերջ տալ: Մայրդ կստիպե եղբորդ, որ ձգե զինքը ու երթա, բայց վեհօգի Ավետիք կնախընտրե մահը քան մայրը ձգել ու հեռանալը: Ան վերջապես կհաջողի իր մայրը միացնել կարավանին: Այդ օրը եղբորդ տրամադրութեանը շատ վատ էր: Ուզեցի քանի մը խրատական խոսքեր ընել, բայց այնքան հուզված էր օրվան անցուդարձերեն, որ հեռացավ քովես: Որոշած է եղեր մահվան գնով փախչիլ, որովհետև ըսեր են իրեն, թե Այնթապը 8—10 ժամ հեռու է մեր գտնված տեղեն:

Տեր Մովսես քահանա Մովսեսյան, բնիկ զեյթունցի, Կոկիսոսի և շրջանի հայութեան համար քահանա ձեռնադրված, Հաճընի պաշարումին կառավարութեան հրամանով Շամ գացած էր: Գիշեր մը, ան փոխանակ ժողովուրդը անձնատվութեան հրավիրելու, ավելի՛ սրտապնդած էր: Ոստիկանութեանը զինքը կհարգեր: Ի տես ժողովուրդին ոչ նախանձելի

գրութեան, արյուն կվազեր սրտեն: Պեշեն—Գրլավուզ գյուղերու թուրքերը, որոնք Ձեյթունեն դժգոհ, հեռացած ու Մարաշեն 8—10 ժամ հեռու Պազարճըզի գավառակին պատկանող Ճապկիչայիր ըսված վայրը հաստատվեր էին, կփութային զեյթունցիներուն տառապանքներուն ականատես ըլլալու: Սրտանց ուրախ, բայց արտաքնապես տխուր և ազդված ձևացնելով, անոնք մոտեցան մեզի ցավակցութիւն հայտնելու: Անոնք մոտեցան նաև Ավետիք եղբորդ, որուն հանդեպ խիստ խանդակաթ վերաբերմունք ցույց տվին: Ժամանակին ձեր գերդաստանին իրենց հանդեպ ցույց տված բարեկամական ոգիեն կճառեին և պատրաստակամութիւն կհայտնեին իրենց օգտակար ըլլալու: Ավետիքը, դեռ շատ անփորձ, կդիմե Տեր Մովսեսի խորհուրդին, որը անձամբ կտեսակցի այդ թուրքերուն հետ և կհամաձայնի, որ անոնք Ավետիքը Այնթապ հասցնեն: Թուրքերը իրենց նպատակին հասած էին: Անոնք Մարաշեն ղերկված էին Ավետիքը սպանելու համար: Ավետիք եղբայրդ ամեն զիշեր հանգչելու համար իրեն տեղ մը կփնտրեր, մորմեն հեռու, որպեսզի անհայտ ըլլա: Անհայտացման գիշերը ևս մորդ ձեռքը համբուրելով բաժնրված էր:

Ամեն ոք հոգնած խոր քունի մեջ կմրափեր, երբ Մովսես քահանա և Ավետիք կամացուկ մը կհեռանան իրենց ծանոթ քուրդի մը հետ: Հագիվ մեր գաղթականներու օթեանն 10 վայրկյան հեռացած, անոնք երկուքն ալ կզնդակահարվին:

Ավետիք նազարեթ Չավուշի հինգերորդ և ամենակրտսեր որդին էր: Ծնողքին և իր եղբայրներուն գուրգուրանքին առարկա, ան շատ գեղեցիկ, ուշիմ և ճարպիկ պատանի մըն էր: Արամին քով զինագործութիւն սորված էր: Վերջին օրը ան փափաքեցավ մեզ հետ գալ, բայց մորս և մեր ստիպումին վրա հետևեցավ մեր մորը, հետո, ինչպես տեսանք, Պազարճըզի մտտ զոհ երթալու համար թուրք դավաճան գնդակին:

Տեր Մովսեսի և Ավետիքի սպանութեան առտուն,— շարունակեց պատմել Ա. Կյուվանեսյանը,— ոստիկանները, որպես թե կատարված ոճիրին անգիտակ, իրենց բարբարոսութիւնները ալ ավելի սաստկացուցին՝ «քահանան և գեղադեմ պատանին կուղենք» պատրվակին տակ: Նույն օրը, այդ բարբարոսութիւնները կրելու անկարող, ճամփու ընթացքին մացառներու մեջ կպահվտին Փանոս Գարագուշյանն ու Մինաս Սաչյանը և այդպիսով ապահով կհասնին Այնթապ: Անոնցմե առաջ հոն փախած էր նաև Սեդրակ Չոճոյանը:

Ճիշտ մեկուկես ամիս մերկ, անոթի, ծարավ, զրկանքի և տառապանքի ենթակա հասանք Տիգրանակերտի կուսակալութեան պատկանող

հարբերդի սահմանին վրա Ջերմուկ ըսված քրդաբնակ գյուղաքաղաքը՝ Տեղվույն քուրդ բնակչութիւնը շատ լավ ընդունելութիւն ըրավ մեզի: Այնտեղ կազմեցինք վարչական մարմին մը, որպեսզի ժողովուրդին ընթացիկ գործերը կառավարե և աշխատանք ապահովե: Խարբերդի Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատուցիչ ներկայացուցչութիւնը քանի մը անգամ իր որոշ օժանդակութիւնը բերավ՝ դրամով, հագուստով և այլ միջոցներով: 13 ամիս այդտեղ մնալե վերջ կառավարութեան հրահանգով Հալեպ եկանք»:

Ահա՛ և մեր Ազգային միութեան գանձապահ և զեյթունցի ծանոթ անձնավորութիւն՝ Ասատուր Կյուվանեսյանի սրտառուչ պատմութիւնը:

Ջերմուկ գտնվող զեյթունցի գաղթականներուն Հալեպ գալը կպարտինք հալեպահայ ծանոթ ազգայիններ Գարեգին Ճիկերճյանի և Արմեն Մալումյանի, որոնք ընթացք տալով այս տողերը գրողի խնդրանքին, բարեխոսած էին Տիգրանակերտի կուսակալին, որ Ճիկերճյանի մոտիկ բարեկամն էր:

1921 թ. հոկտեմբերի 25-ին Ջերմուկի գաղթականները գրեթե ամբողջութեամբ վերադարձած էին. կպակսեին միայն Մովսես քահանան, Ավետիք եղբայրս և մի քանի ուրիշներ:

Սեպտեմբերի 3-ին Քիլիս հասած զեյթունցի ազատագրված բեկորներս, Քիլիսի Ազգային միութեան կարգադրութեամբ Հալեպ եկանք և Պասիթա թաղը տեղավորվեցանք: Կիլիկյան նպաստից միութիւնը իր կարելին շինյաց վերապրող զեյթունցիները պարենավորելու և անոնց գործ ու աշխատանք հայթայթելու համար:

Հալեպաբնակ զեյթունցիները վարդավառ Գարանֆիլյանի (Վարդ-Մելսակ) ատենապետութեամբ Հայրենակցական միութիւն մը կազմած էին, որ իր կարելի միջոցներով վերապրող հայրենակիցներուն ջանացած էր օգտակար ըլլալ: Կազմը ավելի զորացնելու համար, բոլոր հայրենակիցներու հավանութեամբ, վարչութեան մաս կազմեցին նաև Սեդրակ Մարկանյանը, Սեդրակ Չոլագյանը և այս տողերը գրողը (որուն հանձնվեցավ ատենապետութիւնը):

Նորակազմ վարչութիւնը, հայրենակիցներուն ծով կարիքներուն դարման մը գտնելու հույսով, դիմումներ կատարեց ազգային իշխանութեանց, Հ. Բ. Ը. Միութեան և այլ բարեսիրական հաստատութիւններուն: Անկե հետո, զեյթունցիներուն կյանքն ալ պիտի կազմեր Սփյուռքահայութեան դժբախտ գոյավիճակին օղակներէն մին:

Խմբագրի կողմից	5
Առաջին մաս (1914—1919 թվականներ)	8
Երկրորդ մաս (1919—1921 թվականներ)	133

ԼԵՎՈՆ ՆԱԶԱՐԵԹԻ ՆՈՐԱՇԽԱՐՀՅԱՆ

Զ Ե Յ Թ Ո Ւ Ն Ը (1914—1921 Թ Թ.)

(Հուշեր)

Հրատ. խմբագիր՝ Ժ. Մ. ԱԳՈՆՑ
 Նկարչական ձևավորումը՝ Յ. Հ. ՂԱՆԿԻՅԱՆԻ
 Գեղ. խմբագիր՝ Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
 Տեխ. խմբագիր՝ Հ. Մ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
 Սրբագրիչ՝ Ա. Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ИБ № 824

Հանձնված է շարվածքի 15.12.1983 թ.: Ստորագրված է տպագրության 24.05.1984 թ.:
 ՎՖ 04616: Չափը 60×84¹/₁₆: Թուղթ № 1: Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր
 տպագրություն: Պայմ. 16.05 + ներկ. օտ., տպագր. 17,0 + 2 ներդ. մամուլ: Հրատ.-հաշ-
 վարկ. 15,23 մամուլ: Տպաքանակ 15000: Պատվեր 2797: Հրատ. 6077: Գինը 1 ու. 80 կ.:
 ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24 գ:
 Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.
 Հայկական ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
 պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան, Երևան—82, Աղմիրալ Իսակովի
 պող. 48:

Типография цветной печати Госкомитета Арм. ССР по делам издательств,
 полиграфии и книжной торговли. Ереван-82, пр. Адмирала Исакова, 48.